ՋՈՐԵՔՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
1
MERCREDI
1er JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՀԱՅԱԾ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: (1) 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 500 Ֆ. - Վեցամսեայ : 260 Ֆ.
Արտասահման : Տար. 550 Ֆ. - Հատը : 3,00 Ֆ.

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.128 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.128

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

Ան որ գնաց

Ան որ կու գայ

Տարի մը եւս կը թաղենք, ու միշտ նոր յոյսերով կ'աղջունենք նորը: Մաղթանք - ներ կը փոխանակենք, անկեղծութեամբ, սրտանց եւ ամէն բանէ առաջ՝ խաղաղութիւն կը ցանկանք:

Եւ սակայն: Աւելի քան քառասուն տարի է արդէն, որ աշխարհամարտ չկայ: Հիւլէական ռումբը այն սարսափազդու զէնքն է, որ մարդոց կ'արգիլէ ռազմադաշտ իջնել: Ուրեմն պատերազմը կը փոխարինուի տեղական անցողակի կռիւներով եւ մանաւանդ ահաբեկչութեամբ: Մեհեաններու անօտհման տարողութիւնն ալ ջիրենք, դռնէ մասամբ, մեղսակից կը դարձնէ, քանի աչինչ թաքուն կրնայ մնալ, պահ մ'իսկ, աշխարհի որ ծայրն ալ պատահի:

*Տարին զոր թաղեցինք քաղաքերիչ նորութիւններ չբերաւ: Մարդը մնաց գայլ մը մարդուն համար: Պատանդները չատացան, Լիբանան եւ այլուր, օդանաւերէն եւս, նաեւ գրօսանաւի մէջ: Աշխարհի մեծերը ոչ մէկ հիմնական հարց լուծեցին: Պաղեստինցին մնաց իր հայրենիքին կարօտով, Լիբանանցին մեհեանաներգործ ժամուն լուծումի մը յոյսը ատացաւ որպէս կաղանդչէջ, Հայն ալ ժողովէ ժողով քուէներ մուրաց իր ցեղասպանութեան ճանաչման համար: ՄԱԿ-ի մարդկային իրաւանց ենթայանձնախումբը մէ՛ծ զիջումն ըրաւ քանի մը տողով արձանագրելով, թէ այո՛, ինչ որ կատարուեցաւ 1915-ին ցեղասպանութիւն էր: Բայց, ճշդեց, թէ ուրիշները չիմանան, այս արձանագրութիւնը հո՛ս գրուեցաւ, հո՛ս ալ թող մնայ: Կը բաւէր, սակայն, Հայերը ուրախացան: Ճակատամարտի մը յաղթած էին, պատերազմը չահեցանք բացատրելու: Ուաշինկթընի մէջ, ցարդ այդքանն ալ չընորհուեցաւ ու թիւ 192 բանաձեւը դնաց - եկաւ, նորէն դնաց, կըրկին պիտի գա՞յ: Սիրտը պէտք չէ կտրել Ամանտեան Ուխտի այս թանկագին զինակիցին, ի վերջոյ պէտք է իրաւես ըլլալ, ի՞նչ կրնան կշռել մէկուկէս միլիոն հայ նահատակները այն ռազմավիտական դիրքին քով զոր Թուրքիա ունի: Մենք մեր ձայնը լսելի դարձնելու համար, չարունակեցինք, Ժընեւէ ու Ուաշինկթընէն զատ, դուռը բախել նաեւ Եւրոպայի Խորհրդարանին: Հոն ալ տեղքայլի մէջ ենք, հակառակ անոր որ ուղուածն ալ զուտ բարոյական բնոյթ ունի, այլուծ սրտեր մխիթարելու կոչուած: Օթաուայէն Փարիզ, քանի մը հայ երիտասարդ եւս զացին լեցնել բանտերու խուցերը: Ցիրուցան, նման այն ժողովուրդին, որու զոհեցին իրենց կեանքին արեւը, այսօր Լոս - Անճըլըսէն Պելկրատ եւ դեռ Ժընեւէն Պոլիս, մեր երիտասարդները կը սպասեն որ իրենց դատին արդարութիւնը հռչակուի: Ճիշդ է, առանձին չենք այդ սպասման սրահին մէջ, քանի - քանիներ նոյն յոյսերով կ'սպրին, ոմանք՝ անհայրենիք, ոմանք անազատ հայրենիքներու զիրկը:

Դա՞ն խորհրդածութիւններ: Անկասկած: Բայց, լաւ է որ մենք մեզ չխաբենք: Թէեւ հայկական ճակատէն անդին, միւս ճակատներն ալ չատ խրախուսիչ պատկեր մը չպարզեցին: Ֆրանսա, եթէ յաջողեցաւ առաջքն առնել ղրամահոսութեան ու մրցանիւ իսկ կոտրել, նուազդոյնի իջեցնելով գայն 1967-էն ի վեր, չկրցաւ սակայն յաղթել գործազրկութեան եւ անապահովութեան, որոնք Ափրիկէի կրունկն եղան ընկերվարականներ - րուն, այլեւս առանձին՝ որպէս մեծամասնութիւն համայնավարներու հեռացումով: Եւ ինչպէս իր աւանդութիւնն է, Ֆրանսա ժամավաճառ կ'ըլլայ իր ընտրապայքարներով, բարձի թող ընելով հիմնական հարցերը: Ընդդիմութիւնը կ'ուզէ համոզել որ պիտի կարենայ դարմանել ամէն ցաւ, վաղը, երբ չկրցաւ ընել՝ երէկ:

Ժընեւի մէջ, լեռը մուկ մը ծնաւ: Արեւելեան կողմն աշխարհի նոր մարզ մը զրկեց հին բաներ ըսելու համար՝ արեւմտեան կողմն աշխարհի հին մարդուն, որ նոր բաներ չունէր ըսելիք:

Բայց եւ այնպէս, պէտք չէ յոռետեսութիւնը կրծէ մեր հոգին: Կարեւորը՝ երէկը չէ, այլ՝ վաղը: Պէտք է զլմաւորենք Ամանորը, այն խոր հաւատքով, թէ ինչ որ չբերաւ՝ ան որ գնաց, պիտի բերէ՝ ան որ կուգայ:

«ՅԱՌԱՋ»

ԵՐԵՒԱՆ ⇔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՑՈՒՅՑ

ԵՐԵՒԱՆ
(ԱՐՄԷՆՓՐԷՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 24 / 26)

ԳԱՐԻ ԳԱՍՊԱՐՈՎ
ԵՒ ԵՈՒՐԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ԼԱԻԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ԿԱՐԳԻՆ

Խորհ. Միութեան ազգային ոլիմպիական խոյեանը մինչեւ Յունուար 6 կրնայ ըսել բամա» հանդէսի խմբագրութեան կազմակերպած մրցումին արդիւնքները հրապարակուած են, նչելու համար խորհրդային հանրապետութիւններու տարուան լաւագոյն մարզիկները: Դափնեկիրներն - րու կարգին են Գարի Գասպարով (Ազըրբէյճան), ճատրակի աշխարհի ախոյեան, եւ Եուրի Վարդանեան (Հայաստան), ծանրաբարձութեան աշխարհի ախոյեան:

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՊԻՈՆԻՆ
ԱՅՍ ՏԱՐԻ ԱԼ ԱՐՏՕՆՈՒԱԾ ՉԷ
ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԸՆԴՈՒՆԻԼ

Վեցերորդ տարին ըլլալով Սպահանի համալսարանի հայերէն լեզուի ու գրականութեան ամպիոնին արտօնուած չէ նոր ուսանողներ ընդունիլ: Պատասխանատուները վարչական պատճառներ ցոյց կուտան, յոյս յայտնելով որ մօտիկ ապագային կրնայ վերաբացուիլ ճիւղը: Ուսումնական անցեալ տարեշրջանի աւարտին երեք ուսանողներ ալ չրջանաւարտ ըլլալով, ներկայիս ամպիոնը ունի միայն եօթը հայ ուսանողները, որոնք երկու տարիէն կ'աւարտեն ընթացքը:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԿԱՂԱՆԴԻ ՆՈՒԷՐ

Կորսնցուցած հաւատքներուս շղթային առաջին ու ինձի ամէնէն աւելի յուսախաբութիւն պատճառած օղակն է Կաղանդ Պապան: Այսօր այդ յուսախաբութիւնն ալ հեռուն թողած, իրեն կը սեւեռին երբեմն աչքերս որպէս մանկութեան ընկեր մը կամ սիրելի կատակ մը: Տարեվերջի այս օրերուն երբ հերոսը նորէն ինծի է, չեմ գիտեր ինչո՛ւ իրեն հետ յիշողութեանս մէջ կ'ուրուագծուի պատկերը ուրիշ հերոսուհիի մը: Այն անձնասէր, ինքնահաւան ու այլամերժ գեղեցկուհիին որ ամէն առաւօտ իր կախարդական հայելիին հարց կուտար թէ ո՞վ է աշխարհի ամէնէն գեղեցիկը: «Դո՛ւն» կը պատասխանէր անկեղծ հայելին, մինչեւ այն օրը երբ յայտնեց թէ կար զինք գերազանցող մը: Այն ատեն չար հոգի գեղուհին ատելութեամբ լեցուած, կոտրեց հայելին ու հալածեց իր մրցակիցը:

Եթէ պահու մը համար ետ գար հաւատքներուս շղթան, Ամանորի խնդրանքս պիտի ըլլար Կաղանդ Պապային որ հէքեաթին այդ ճշմարտախօս ու անկեղծ հայելիներէն բերէր մեզի, ինծի, ձեզի, բոլորիս· մեծ ու փոքր հայելիներ՝ մեզմէ ամէն մէկուն համար, մեծին, պզտիկին, ղեկավարին, ղեկավարել կարծողին, ղեկավարուողին, բոլորի՛ն որպէսզի դառնայիք վերջապէս իրատես, իրալուր, իրապաշտ:

Բերէր այդ հայելիները Կաղանդ Պապան ու անոնց հետ նաեւ անհրաժեշտ լայնախոհութիւնը՝ անքաղաքալի պատասխանութիւններու պարագային զանոնք չկոտրելու:

ԱՐՓԻ

ԱՄԱՆՈՐԻ առթիւ «Յառաջ» լոյս չի տեսներ (Յունուար 2-ի թիւ): Մեր յաջորդ թիւը՝ Ուրբաթ, Յունուար 3:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳԱՐԲՈՎ - ԳԱՍՊԱՐՈՎ փոխ - վերջի հանդիպումը միշտ խնդրոյ առարկայ է: Սկզբունքով տեղի պէտք է ունենար Փետրուար 10-ին, բայց Գասպարով լուրջ առարկութիւններ մէջտեղ կը դնէր եւ կը մերժէր («Յառաջ», Դեկտեմբեր 27): «Ֆիկառօ»էն ետք, ախոյեանը յայտարարութիւններ ըրած է նաեւ արեւմտեան - Գերմանիոյ «Վելթ ամ Զոնթակ» շաբաթաթերթին, ապա աւելի պաշտօնական ձեւով ԹԱՍ գործակալութեան, ուր կը ճշդէ թէ իր դիրքը ընդդիմութեան յուցադրութիւն մը չէ՝ «Ոչ ճատրակի խորհրդային դաշնակցութեան, ոչ ալ ընկերվարական մեր Պետութեան դէմ: Սրեւմուտքի մէջ, չանք կը թափուի զիս այլախոհ ներկայացնելու համար: Վճռապէս կը մերժեմ նման հնարքներ: Ինչ որ կ'ընեմ մեր հայրենիքին կը ձօնեմ»: Միջազգային դաշնակցութեան ընդհ. քարտուղարը չատ լրաբ չէ անցած Գասպարովի «նիէթ»էն եւ կ'ըսէ թէ աշխարհի ախոյեանը մինչեւ Յունուար 6 կրնայ ըսել թէ պիտի մրցի՞ թէ ոչ, Փետրուար 10-ին, այլապէս իր տիտղոսը կը կորսնցնէ:

ԻՍՐԱՑԼԻԷՆ զատ, Միացեալ - Նահանգներն ալ կրնան հակազդեցութեան դիմել: Այլեւս ամէն ինչ կը կեդրոնանայ Ապու Նիտալի վրայ, որու ճեռքը զինողն ալ ուրիշ մէկը չէ եթէ ոչ՝ Քատաֆի: Եբեւան եղած է նաեւ թէ Վիէննայի ահաբեկիչներուն Թունուզեան անցագրերը կը պատկանէին այն Թունուզցիներուն, զորս Լիբիա արտաքսած էր ու անցագրերը վար դրած: Ապու Նիտալի բուն անունն է Մասրի Ալ - Պաննա, խլած է Ֆաթահին հետ 1974-ին եւ հիմնած է «Ֆաթահ - յեղափոխական խորհուրդ»ը: Կը կարծուի որ Լիբիա կ'ապրի: Ատեն մը իր մահուան լուրը հաղորդուեցաւ Պաղտատ, բայց յետագային մէջտեղ եկաւ: ՊԱԿ-ը զինքը մահուան դատապարտած է, Արաֆաթի դէմ դաւ մը կազմակերպած ըլլալու յանցանքով: Ծնած է 1943-ին Եաֆֆա:

ՓԱՐԻԶի ամէնէն սուղ պանդոկը՝ Նովա Փարք տարւոյն հետ փակեց իր դռները, անհանգութեան պատճառաւ: Արար իշխաններու համար չինուած այս ապարանքը սենեակներ ունէր 1100 ֆրանքէն մինչեւ 35·000 ֆրանք (մէկ գիշերը):

ԻԶՄԻՐի մէջ 20 հազար Թուրքեր ցոյց մը կատարած են բողոքելու համար Պուլկարիոյ դէմ, որ կը կեղեքէ Թուրք փոքրամասնութիւնը: «Պատմութիւնը վճարել պիտի տայ Պուլկարիոյ, իր արարքներուն համար» պոռացած են ցուցարարները:

ՏՈԼԱՐԸ տարին վերջացուց իր անկումը չարունակելով: Երեքշաբթի, Դեկտեմբեր 31-ին, Փարիզի մէջ 7 Ֆ. 55-ի իջած էր:

1986
ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ՅԱՌԱՋ
Կը շնորհաւորէ իր ընթերցողներուն
Ամանորը

«ՅԱՌԱՋ»Ի ԸՆԴՄԵՋԷՆ

1985-ԸՆ ԴԷՊՔԵՐ, ԴԷՄՔԵՐ, ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Պատրաստեց՝ ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ

1։- Ըստ աւանդութեան, 1985-ը սկսաւ Ֆրանսայի մէջ Հանրապետութեան Նախագահին «Շնորհաւոր Նոր Տարի»ովը։ Համակամութիւն, միամնակականութիւն, հանդուրժողութիւն, յաջողութիւն եւ խաղաղութիւն եղան Ֆ. Միթերանի մաղթանքները Ֆրանսային եւ Ֆրանսացիներուն։

Հռոմէն, Յովհ.- Պօղոս Բ. Պապը, Յունուար 1-ը հռչակեց «Խաղաղութեան Համաշխարհային Օր» եւ պատգամ մը ուղղեց երիտասարդներուն, բանալով երիտասարդութեան նուիրուած միջազգային տարին։

1985-ի Ամանորին հետ ծնունդ առաւ նաեւ եւրոպական Անցագիրը։ Տոլարը, առանց անցագրի կ'երթայ մրցանիշէ մըրցանիշ եւ տարին կը սկսի, Փարիզի սակարանը 9,73 Ֆ.ով։

5։- Հին կտակարանի օրինակով, Հրեաններուն նոր օրերու «Մովսէս»ը 25 հազար սեւ Հրեաներ կ'առաջնորդէ Եթովպիայէն Իսրայէլ։

6։- Բովանդակ Ֆրանսայի մէջ «պատմական» ցուրտ։ Ցուրտ մը որ նիւթական աւերներէն անդին կ'ընէ մարդկային զոհեր։ Փարիզի մեթրոյի կայարանները բաց կը մնան զիշերները ընդունելու համար երդիք չունեցողներն ու զժբախտները։ Նոյնքան սաստիկ ցուրտ Եւրոպայի վերայ։ Եւ Մոսկուայի հռչակաւոր կարմիր հրապարակին վրայ սառն ու ձիւնը յատուկ մեքենական պիտի ըլլան քանի ծխելը, միակ միջոց ջերմութիւն ստեղծելու, այլեւս արգիլուած է։ Լենինի դամբարանը, այս որոշումով, կը նուիրագործուի եւ իրեն հետ նաեւ կարմիր Հրապարակը։

8։- Սակայն, սառած քաղաքի մը մէջ, ժընեւ, կարելի կ'ըլլայ երկար ամիսներու սառոյց մը հալեցնել Խորհ. Միութեան եւ Միացեալ Նահանգներու միջեւ քանի Գրոմիկօ եւ Շուլց կ'որոշեն վերսկսիլ բանակցութիւններ՝ անջրպետի եւ հիւլէական զէնքերու չուրջ։

9։- Առանց իմանալու ընելու, որ պիտի ըլլար սեւ իմանալ, Կրավիլիէի (Ուազ Նահանգ) ծերանոցի պատասպարեալները կը յաղթեն ցուրտին, ժամանակի մը համար։ Ծանր հրդեհ մը հրոյ ճարակ կ'ընէ գրեթէ ամբողջ չէնքը։ Կը հաշուուի 24 մեռեալ եւ տասնեակ մը վիրաւորներ։ Այս ցաւալի դէպքը ընդհանուր յուզում կը յառաջացնէ ամբողջ երկրին մէջ։

11։- Փիէռ Ժիւքէն եւս կը պաղի... իր կուսակցութենէն, յարձակողականի անցնելով Համաշխարհային կուսակցութեան 25րդ համագումարի նախօրեակին։

13։- Նուվել - Քալետոնի դարձեալ պաշարման վիճակի մէջ։ Իսկար Փիքանիի ծրագրէն յետոյ -Ֆրանսա եւ անկախութիւն, անկախութիւն եւ Ֆրանսա- յանկարծ մթնոլորտը կը վատթարանայ անկախապաշտ պարագլուխ էլուա Մաշորոյի մահով, որուն պայմանները կը մնան պղտոր։ Այս ծանրակշիռ դէպքէն յետոյ նախագահ Միթերան կը մեկնի Նումէա կացութիւնը քննելու համար, անձնապէս։ Ատկէ եւեթ, Փարիզ կը ժամանեն կղզիին երկու զեկավարները՝ Ժան - Մարի Ճիպաու եւ Տիք Ուքէուէ արժանանալով, իւրաքանչիւրը իր կողմնակիցներէն, պաշտօնական «նկատումներու»։

13։- Ծանր արկած։ Ճիպութի - Ատախս Ապապա ճեպընթացը դիծէն կլլելով կ'ընէ հարիւրաւոր զոհեր՝ 450 մեռեալ եւ 500 վիրաւոր։

14։- Պէյրութի մէջ, մթնոլորտը միշտ լարուած է։ Ոճրափորձերու չարքը կը չարունակուի։ Երկու Ֆրանսացի դէմքեր կը սպաննուին կառքով անցած ատեն Պուրճ - էլ - Պրաժնէի կայանը։ Հ. Յ. Դ. ակումբի պատասխանատու Ջաւէն Գարակէօզեանի կառքը կը թակարդուի եւ ենթական ծանրօրէն կը վիրաւորուի։

15։- Պրազիլ դուրս կու գայ 20 տարուան մենաւորական, զինուորական վարչակարգէ մը։ Նոր նախագահն է՝ Թանքրեդօ Նեվէս։

17։- Նիւ Եորքի մէջ հանդիպում Տէնըթաչ - Կիսրիանու։ Սակայն ոչ մէկ արդիւնք։ Կիպրոս կը մնայ ուր որ էր 1974-ին, Թրքական յարձակումէն յետոյ։

22։- Ռեժի Ռրնօն տագնապի մէջ։ Ժորժ Պէս կը յայտարէ Պեռնար Հանոնի։

23։- Պարսկահայ երիտասարդ՝ Վահէ Խոտավերեան 14 տարի բանտարկութեան կը դատապարտուի Աթէնքի քրէական յանձնաժողով Ատեանին կողմէ, 1982, Դեկտեմբեր 8-ին, ուժանակ մը նետած ըլլալուն համար քուէյթեան օդանաւային դրասենեակին վրայ։

24։- Պուլկարիա կը փակէ իր սահմանները Թուրքերուն, ի պատասխան Թրքական մամուլի բուռն յարձակումներուն։ Աւելորդ է, ըսել թէ Թուրք մամուլը կը չարունակէ իր մաղձը թափել Հայերուն վրայ, ամէն բան իրար խառնելով, խեղաթիւրելով եւ չմոռնալով Ֆրանսան։

25։- Լոս Անճըլըսի դատարանը կու տայ հետեւեալ վճիռները՝ Վիդէն Յովսէփեան՝ 6 տարի բանտարկութիւն, Գառնիկ Սարգիսեան՝ 5 տարի, Սթիվ Տէտէեան՝ 4 տարի։ Կը յետաձգէ Վիդէն Եպոպեանի պարագան։ Այս 4 երիտասարդները ձերբակալուած էին 1982, Հոկտեմբեր 22-ին, ահաբեկչական կազմակերպութեան մը մաս կազմելու մեղադրանքին եւ ամբաստանութեան տակ։

27։- Ս. Ղազարի ծանօթ անտեսական տագնապը իտալական թերթերէն եւ հեռատեսիլէն յետոյ, կ'անցնի Ֆրանսական թերթերու (լը Մոնտ) սիւնակներուն մէջ։

Ամանորի սովորութիւններ

—×—

Հայաստանի բոլոր ջրհաններուն մէջ հինէն ընդունուած էր ամանորի օրուան առթիւ կերակուրի տեսակներով առատ ու այլազան սեղաններ բանալ։ Հակառակ անոր, որ հայ աշխատաւորը միշտ սակաւապէտ եղած է ու չափաւոր, բայց եւ այնպէս այդ օրը ընդունուած էր մատուցանել այն բոլոր բարիքները, զորս կը պարգեւէր առատաբաշխ հողը։

×

Կեսարիոյ մէջ կը հաւատային, որ ամանորի գիշերը ազրիւրէն ջուրի փոխարէն ամբողջ ժամ մը ոսկի կը հոսի, իսկ Լոռիի մէջ՝ տարեմուտի կէս գիշերին, վեր-ը պահ մը կանգ կ'առնեն եւ այդ պահուն ով որ գիտէն ջուր առնէ, կուժը ոսկի կը դառնայ։

×

Բասենի մէջ տուներու առաստաղներուն եւ գերաններուն վրայ կանայք ալիւրով ընտանի կենդանիներ կը նկարէին, որպէսզի նոր տարուան կենդանիներու ծնունդը առատ ըլլար։

×

Շատ մը ջրհաններու մէջ ամանորի առթիւ կը թխէին հայկ հօրերու, անասուններու պճեղներու, աղջկան հիւսերու ձեւերով խմորեղէն, որ առատութիւն եւ արգասաբերութիւն կը խորհրդանշէր։ Այդ օրը սովորութիւն էր նաեւ օճախի մոխիրը շաղ տալ արտերու մէջ՝ գալիք հարուստ բերքի ակնկալութեամբ։

ՀԱՅՈՑ ԱՄԱՆՈՐԸ

Ամանորը՝ նոր ակնկալութիւններու, յոյսերու, խոհերու եւ բարեմաղթութիւններու խորհրդանիշը, մեր համազգային ամէնէն գաղտրիկ ուրախութիւնն է։ Ազգագրական փաստերը կը վկայեն, որ ամանորի ամբողջ ծիսակարգը համընդհանուր եղած է ամբողջ պատմական Հայաստանի համար։ Ամանորին ուղեկցող ծէսերն ու արարողութիւնները, որոնք ըստ կիզը կ'առնեն հնագոյն ժամանակներէն, յարատեւած են երկար դարեր, հեթանոսական չեշտուած երանգ հաղորդելով քրիստոնէական նոր տարիին։ Նոյնիսկ ԺԲ. դարէն եաք ալ, երբ մեր տոմարին մէջ նոր տարի - տարեմուտ կը հռչակուի Յունուարի սկիզբը, ժողովուրդը կը շարունակէր պահպանել իր գարաւոր բնապաշտական ընկալումները՝ կապուած երկրագործական տարուան զարկերակի հետ, երբ ամանորը կը զուգադիպէր բնութեան զարթօնքին՝ գարնան սկիզբին, եւ ապա՝ աշնանային բերքահաւաքին։

ԺԹ. դարուն ժողովուրդին մէջ աւելի տարածուած եւ սովորական անուանումը Նոր տարին էր, թէպէտ որոշ պարագաներ մէջ գործածական էին նաեւ Ամանոր, Նաւասարդ, ինչպէս նաեւ երեմնի՝ Տարեգլուխ, Տարեհոր, Տարինգլուխ, Նորատարի եւ Ամանորաբեր անուանումները։ Մեր օրերուն հաւասարապէս կենսունակ են Նոր Տարին եւ Ամանորը։

Նոր Տարուան համար գործածուած է նաեւ կազանդ անուանումը։ Նոր տարուան օրը գիրար շնորհաւորելու սովորութիւնը կը կոչէին կազնդել, այդ օրը իրարու տրուող նուէրը՝ կազնդէջ, իսկ երգուող երգը՝ կալանդոս։

Միսական - աւանդական սովորութիւնները, որոնք կը ցոլացնեն ամանորի նուիրականութիւնը, անոր հետ կապուող ակնկալութիւններու բազմակողմանի բնոյթը՝ իրենց ծագումով կը հասնին առաջին տարուան, առաջին պտուղի, առաջին հանդիպումի, առհասարակ առաջինի նկատմամբ ունեցած հին հաւատալիքին, երբ կը կարծէին, թէ առաջինը ունի իրմէ հետ եկող նման առարկաներու եւ երեւոյթներու վրայ ազդելու հմայական յատկութիւն։ Առաջին օրուան դիւթական խորհրդաւորութիւն վերագրելու միտումն էր, որ հանդիսաւոր կը դարձնէր ամանորի ծէսակատարութիւնը։ Ներման ըմբռնումի խօսուն արտայայտութիւնն է նոր տարուան սեղանի պարտադիր առատութիւնը՝ լեցուն, ճոխ եւ համապարփակ, ծիսական եւ ոչ ծիսական խորտիկներով, որ սկսող տարուան բարեկեցութեան գրաւական համարուած է։

Հայկական հին տոմարի առանձնայատկութեան պատճառով ամանորը հաստատուն տեղ չունէր, կը թափառէր մէկ ամիսէն միւսը։ Տիեզերքի վերաբերեալ առաջին դիտելիքներէն էր գարնանային եւ աշնանային օրհասատարմը։ Անոնց հետ կը զուգադիպէին երկրագործական աշխատանքներու ամէնէն կարեւոր հանգրուանները։ Գարնանային օրհասատարով կը սկսէր ամբողջ տարուան բարեկեցութիւնը պայմանաւորող անտեսական նոր տարին՝ երկրագործական-անասնապահական աշխատանքներու սկիզբը։ Աշնանային օրհասատարով՝ բերքահաւաքով կը փակուէր ան։

Հայկական ամիսներու հերթական յանկին մէջ առաջին ամիսը կը կոչուէր Նաւասարդ։ Նաւասարդ ամսուան հետ կապուած են հին Հայերու նոր տարուան եւ ամանորին նուիրուած սովորութիւնները։ Մեր չարժական տոմարով Նաւասարդը միշտ չէ, որ զուգադիպած է դարնանային ամիսներու հետ, սակայն ժողովրդական պատկերացումներու մէջ այնքան խորունկ արմատացած էր ամանորը գարնան նչելու սովորութիւնը, որ անիկա, իբրեւ տարեմուտի անունը կրող ամիս, ժողովրդական ընկալման մէջ դարձաւ ամանորի համարժէքը։ Արտաշէս Ա. Թագաւորին վերադրուող երգը շատ յիշատակուած է հայագիտութեան մէջ։ Յատկանշական է, որ Նաւասարդեան այս երգը դարձեալ ուրախ, առատ, չէնց ու հարուստ օճախի, որսորդութեան, խնջոյքի, երգի ու երաժշտութեան նոյն պատկերն է, որ այնքան բնորոշ է առհասարակ ամանորեայ հմայական երգերուն։

Ո՛տայր ինձ զծուխ ծխանի...

Նոր տարին աչուն տեղափոխուելէ եւեթ մինչ այդ անոր ուղեկցող ծիսական երգերը եւս տեղաշարժ ունեցան։ Այդ միեւնոյն ձեւով անոնք յետագային միացան նաեւ քրիստոնէական ամանորին։

Եւ այսպէս, ամանոր - Նաւասարդը ժողովրդական ոճնացոյցի միւս՝ բարեկենդան, վարդավառ, տեառնընդառաջ եւ այլ ոճներու համակարգին մէջ կը յիշուէր եւ կը ոճուէր ժողովուրդին կողմէ։ Նաւասարդեան ոճնախմբութիւններու հետ կապուած էին կարգ մը վերապրուկներ, որոնք ընդհանուր էին պատմական Հայաստանի ազգագրական բոլոր ջրհաններու համար։ Այդ օրը ամէնուրեք կարկոտ (տրիխա) կ'եփէին, իբրեւ նոր սկսող տարուան դաշտային անտեսութեան առատութիւնը ապահովող խորհրդանշան։ Ընդհանուր սովորութիւն էր նաեւ նոր խնամիներու երդիքէն չարոց կախելը։ Կանոյք սրբատան նկատուող ծառերու վրայ կարմիր կտորներ կը զնէին եւ կարմիր թելեր կը կապէին՝ ի նշան ուրախութեան եւ այն բանի, որ գալիք տարին առատ, ուրախ ըլլայ եւ կարմիր (ուրախ) օրեր չատ ըլլան։

Նոր տարուան երգերուն մէջ այսպիսի տողեր կան.

Լիքը հարեր շատ ունեենաք,
Կարմիր օրեր շատ ունեենաք...

Տոմարական տեղաշարժերու հետեւանքով նաւասարդի ոճնախմբութեան ժամանակը մոռցուեցաւ եւ տեղափոխուեցաւ Օգոստոս, իսկ աւելի ուշ՝ Դեկտեմբեր 21-ին, աշնանային օրհասատարի օրը։ Եւ դիպուածի արդիւնք չէ, որ այդ ճամբուն վրայ կորնգնելով չատ մը յատկանիշներ, նաւասարդը պահպանած է այն ծիսական սովորութիւնները, որոնք կ'ակնարկեն անտեսական տարուան ատարի, բերքահաւաքի հետ ունեցած առնչութեան։

Նաւասարդը թէ՛ ժամանակի, թէ՛ բովանդակութեան տեսակէտէն եկաւ, մօտեցաւ քրիստոնէական ամանորին՝ Յունուար 1-ին եւ իր յատկանիշները հաղորդելով վերջնոյս, ձուլուեցաւ անոր մէջ։

Հայ ազգագրական ուսումնասիրութիւններու մէջ զարնանային նոր տարին նչանաւորող ոճներէն կը համարուի նաեւ բարեկենդանը։ Տօնի անունին մէջ յատակ կերպով կ'արտայայտուի անոր կապը պտղաբերութեան, բերքի - արդասիքի, պտուղի - բարիքի եւ կեանքի պաշտպանի հետ։

Բարեկենդանի միջոցով արտայայտուող դաշտիարները ամէնէն առաջ ի յայտ կու գային առատ կերուխումի միջոցով, որ առհասարակ բնորոշ չէր սակաւապէտ հայ գիւղացիին։ Բարեկենդանի սեղան - զոհաբերութենէն օգտուելը կը նչանակէր ապակսիլ նոր տնտեսական տարուան յաջողութիւնը ապահովելուն։

Բարեկենդանի հետ ուղղակի կը կապուի նոր տարուան ոճնի այլ յատկանիշ մը եւս։ Ինչպէս այլ ժողովուրդներու, այնպէս ալ Հայերու մէջ մեռնող եւ յարութիւն առնող բնութեան խորհրդանիշը հանդիսացող ոճնակատարութիւնները արտայայտուած են խենթ ու բուռն ուրախութիւններով, պարի - կատակի ծիսական արարողութիւններով, որոնց գլխաւոր յատկանիշը դիմակաւորուելն էր։ Պատմական Հայաստանի գրեթէ բոլոր ազգագրական ջրհաններուն մէջ մինչեւ ԺԹ. դարը պահպանուած են Բարեկենդանի դիմակահանդէսները։ Սկիզբը անոնք ծիսական լուրջ արարողութիւն էին, որոնք յետոյ դարձան զուարճախաղեր։

Ամանորը կը համարուէր ազգային մեծ ոճն մը, որ երջանկութիւն պիտի բերէր։ Եւ յետոյ՝ այդ ոճնը կոչ կ'ընէր անհոգ հրաժեշտ տալու հինին եւ ընդունելու նորը՝ գալիքը, որ իրեն հետ պիտի բերէ նոր յաջողութիւններ։

Այս խօսքը աւարտենք Մկրտիչ Նաղաշի տողերով.

Թասերն չինի,
կարմրիկ գինի,
Ձեզ աճոյշ լինի։

Տպերն կանչէմ,
Սազերն ածէմ,
Ծափ տուէմ, պարէմ։

ՆՈՒԱՐԴ ԵՐՆՋԱԿԵԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԱՁՆ ՕՐԵՐՈՒՆ...

Տասնեակ տարիներ են անցեր այն օրերէն երբ Լիոնի հայ գաղութը կ'ապրէր ամփոփ կերպով, կեդրոն ունենալով Ռապըէ փողոցը իր ջրջաններով։ Հոն էին հացագործն ու նպարավաճառը, դերձակը ու կօշկակարը, ածխավաճառն ու արքայարանաւէրը։ Բոլորն ալ Հայեր էին։ Ամէն ինչ այդ օրերուն «հայկական կնիքով

դովրդական ոճնացոյցի միւս՝ բարեկենդան, վարդավառ, տեառնընդառաջ եւ այլ ոճներու համակարգին մէջ կը յիշուէր եւ կը ոճուէր ժողովուրդին կողմէ։ Նաւասարդեան ոճնախմբութիւններու հետ կապուած էին կարգ մը վերապրուկներ, որոնք ընդհանուր էին պատմական Հայաստանի ազգագրական բոլոր ջրհաններու համար։ Այդ օրը ամէնուրեք կարկոտ (տրիխա) կ'եփէին, իբրեւ նոր սկսող տարուան դաշտային անտեսութեան առատութիւնը ապահովող խորհրդանշան։ Ընդհանուր սովորութիւն էր նաեւ նոր խնամիներու երդիքէն չարոց կախելը։ Կանոյք սրբատան նկատուող ծառերու վրայ կարմիր կտորներ կը զնէին եւ կարմիր թելեր կը կապէին՝ ի նշան ուրախութեան եւ այն բանի, որ գալիք տարին առատ, ուրախ ըլլայ եւ կարմիր (ուրախ) օրեր չատ ըլլան։

Նոր տարուան երգերուն մէջ այսպիսի տողեր կան.

Լիքը հարեր շատ ունեենաք,
Կարմիր օրեր շատ ունեենաք...

Տոմարական տեղաշարժերու հետեւանքով նաւասարդի ոճնախմբութեան ժամանակը մոռցուեցաւ եւ տեղափոխուեցաւ Օգոստոս, իսկ աւելի ուշ՝ Դեկտեմբեր 21-ին, աշնանային օրհասատարի օրը։ Եւ դիպուածի արդիւնք չէ, որ այդ ճամբուն վրայ կորնգնելով չատ մը յատկանիշներ, նաւասարդը պահպանած է այն ծիսական սովորութիւնները, որոնք կ'ակնարկեն անտեսական տարուան ատարի, բերքահաւաքի հետ ունեցած առնչութեան։

Նաւասարդը թէ՛ ժամանակի, թէ՛ բովանդակութեան տեսակէտէն եկաւ, մօտեցաւ քրիստոնէական ամանորին՝ Յունուար 1-ին եւ իր յատկանիշները հաղորդելով վերջնոյս, ձուլուեցաւ անոր մէջ։

Հայ ազգագրական ուսումնասիրութիւններու մէջ զարնանային նոր տարին նչանաւորող ոճներէն կը համարուի նաեւ բարեկենդանը։ Տօնի անունին մէջ յատակ կերպով կ'արտայայտուի անոր կապը պտղաբերութեան, բերքի - արդասիքի, պտուղի - բարիքի եւ կեանքի պաշտպանի հետ։

Բարեկենդանի միջոցով արտայայտուող դաշտիարները ամէնէն առաջ ի յայտ կու գային առատ կերուխումի միջոցով, որ առհասարակ բնորոշ չէր սակաւապէտ հայ գիւղացիին։ Բարեկենդանի սեղան - զոհաբերութենէն օգտուելը կը նչանակէր ապակսիլ նոր տնտեսական տարուան յաջողութիւնը ապահովելուն։

Բարեկենդանի հետ ուղղակի կը կապուի նոր տարուան ոճնի այլ յատկանիշ մը եւս։ Ինչպէս այլ ժողովուրդներու, այնպէս ալ Հայերու մէջ մեռնող եւ յարութիւն առնող բնութեան խորհրդանիշը հանդիսացող ոճնակատարութիւնները արտայայտուած են խենթ ու բուռն ուրախութիւններով, պարի - կատակի ծիսական արարողութիւններով, որոնց գլխաւոր յատկանիշը դիմակաւորուելն էր։ Պատմական Հայաստանի գրեթէ բոլոր ազգագրական ջրհաններուն մէջ մինչեւ ԺԹ. դարը պահպանուած են Բարեկենդանի դիմակահանդէսները։ Սկիզբը անոնք ծիսական լուրջ արարողութիւն էին, որոնք յետոյ դարձան զուարճախաղեր։

Ամանորը կը համարուէր ազգային մեծ ոճն մը, որ երջանկութիւն պիտի բերէր։ Եւ յետոյ՝ այդ ոճնը կոչ կ'ընէր անհոգ հրաժեշտ տալու հինին եւ ընդունելու նորը՝ գալիքը, որ իրեն հետ պիտի բերէ նոր յաջողութիւններ։

Այս խօսքը աւարտենք Մկրտիչ Նաղաշի տողերով.

Թասերն չինի,
կարմրիկ գինի,
Ձեզ աճոյշ լինի։

Տպերն կանչէմ,
Սազերն ածէմ,
Ծափ տուէմ, պարէմ։

ՆՈՒԱՐԴ ԵՐՆՋԱԿԵԱՆ

բեւանները, լակ Թանկապին հիւրերին՝ իր անմիջական ու ոչ անմիջական գեկավարներին եւ բոլոր նրանց, ումից թէկուզ եւ աննշան կախում ունէր, հրաւիրելու էր յաջորդ օրը: Այդ էր պակաս, որ այդ յարգելի մարդկանց ականջներն առաջին օրը ցաւեցնէին կլարնեակի զիլ նուագով ու անհամ բաժակաճառերով: Թող բոլորն էլ իմանան, որ ինքը գիտէ յարգել վերադասին: Եւ յետոյ նա ամաչում էր սրանց ցոյց տալ իր չարքային խնամիներին:

Այո, երկրորդ օրը կը հաւաքուին մի քառասուն - յիսուն հոգով ու կարգին քէֆ կ'անեն:

Չէ, ամէն ինչ լաւ էր նախապատրաստուած, ոչինչ չէր խանգարելու, որ ենոք Ամզուչեանը, ինչպէս ինքը մի չիգեարով հարթանիք անէր եւ չարակամ ու նախանձ մարդկանց սիրտը ճաքեցնէր: Բայց միշտ ինչ - որ բան պակաս էր թուում: Ինչ - որ բան իր սրտովը չէր: Աչքի էր անցկացնում ուտեստների, կերակուրների, մրգերի ու խմորեղէնի, թէկլի սեղանին զրուելիք մուրաբաների ու քաղցրեղէնի տուցակները, ճղռում, թէ այդ օրն ինչ ծապիկներ են զրուելու սեղանին: Թուում էր ամէն ինչ տեղը տեղին է, սակայն էլի մի բան պակաս էր մնում:

Ու երբ արդէն հարթանիքի օրուան հագիւ հինգ օր էր մնում, նա անակնկալ լմբրընեց, թէ ինչն էր պակաս: Հեռագրերը: Ցիշում էր՝ մի տարի առաջ մի հարթանիքի էր ներկայ եղել, ուր թէժ պահին, երբ խմում էին տղայի ծնողների կենացը, հեռագրեր էին ընթերցել, եւ ամէն մի հեռագիր ընդունուել էր ծափերով ու նուագով: Ինչո՞ւ իրենք էլ այդպէս չանեն: Ումի՞ց է պակասը: Բայց ովքե՞ր են հեռագրեր տալու: Հայաստանից դուրս բարեկամներ, ինչքան գիտէ, չունեն, իսկ գիւղից էլ հօ մարդ չի՞ կանչելու: Այդ էր պակաս, դան ու խայտառակ անեն իրեն: Կամ գրանք ո՞վ են, որ հեռագիր տան: Թէ դան էլ, ո՞վ է գրանց ճանաչում: Չէ, պէտք է անուանի մարդիկ հեռագրեն, որ սեղանակիցները ճանաչեն ու զարմանան: Իսկ ինչո՞ւ չեն տայ որ: Ի՞նչ մեծ բան է գրուղ լինելը: Ցիշում է, գպրոցում դանազան տողեր իրար էր կցել - կպցել, ոտանաւոր ըստեղծել ու ջոկատավարն էլ պատի թերթում գրեց ու դեռ գովեց: Թէ չարունակէր, հիմա էդ գրողներից աւելի լաւ էր գրելու: Դերասան էլ կարող էր դառնալ: Մի անգամ լինչ - որ թատրոն էին խաղում գպրոցում ու իրեն էլ կանդնեցրին բեմի վրայ: Իսկի էլ գժուար չէր: Ցիշղ է, չէր խօսում, հէնց այնպէս մի քանի տղաների հետ կանգնել էր, բայց դա ի՞նչ կարեւոր է: Թէ ասէին, կր խօսէր էլ, ումի՞ց պակաս: Կամ նկարելն ի՞նչ մեծ բան է, որ այդպէս երեւակայում են իրենց: Կամ երգիչները. չահել ժամանակ ընկերական շրջապատում շատ լաւ էլ երգում էր. Թէ հետեւէր՝ երգիչ կը դառնար: Այնպէս որ ինքը կ'ունենար անուանի ընկերներ, ու հիմա սրանք էլ հեռագրեր կը տային որդու հարթանիքին: Աւենք, ինքն ինչո՞վ է պակաս նրանցից: Փառք աստծոյ, մի ամբողջ արտադրութիւն է ղեկավարում, ուր զանազան յուշանուէրներ, կանացի գօտիներ ու պայուսակներ են պատրաստում: Դրանք աւելի շատ են պէտք մարդկանց, քան թեմի երկու նկարն ու երգը: Հիմա, այնքան երգիչ ու նկարիչ կայ, որոնց ոչ ոք էլ չի ճանաչում: Իսկ ինքը յարգուած մարդ է իր շրջապատում: Ինչքան մա՛րդ է իրենից գործ խնդրում: Եւ թեկուզ այդ նկարիչներից:

Ու հիմա եթէ գրողները կամ նկարիչերգիչները չգիտեն, որ ինքը որդի է ամուսնացնում, թէ հեռագրերն, ինքը մեղա՞ւը է: Ի հարկէ, եթէ իրեն լաւ ճանաչէին, հարթանիքի մասին էլ իմանային, երեւի հեռագիր տային: Բայց ինչո՞ւ ի զուր փող ու ժամանակ ծախսէին: Նրանք էլ են զբաղուած մարդիկ, չէ՞: Իսկ ինքն այնքա՞ն պարապ - սարապ բանեկամներ ունի: Դրանցից ամէն մէկին էլ մի գործի գրել է: Էլ ո՞ր օրուայ համար են, որ հիմա չօգնեն: Դժուա՞ր է, որ նրանցից մէկն ու մէկն էլ այդ գործը կազմակերպի, գնայ փոստից հեռագրերի: Բայց ի՞նչ կարիք կայ ի զուր փոստ հասնելու: Կարելի է բլանկները բերել, վրան գրել ինչ ուզում ես եւ ում անունից ու յետոյ հարթանիքի ժամանակ մի հաւաատարիմ մարդու տուր, որ կարդայ: Սեղանակիցները հօ չե՞ն սուզելու՝ հեռագրի վրայ կնիք կայ, թէ չէ:

(Մնացեալը յաջորդով)

ԶԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ԼԻՈՆ

ԱՄԷՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԸ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԵՇՏՈՒԻ

Լիոնի Հայ Մշակութային Ընկերակցութիւնը 1985-ի իր վերջին ձեռնարկը նուիրած էր երախաներուն, ընդհանրապէս ամակերտներ միօրեայ վարժարանին: Շարժանկար, պատարագ, կերուխում, երգ ու նուէրներու բաշխում, մանչ ու աղջիկ հաճելի եւ, թերեւս, ալ տպաւորիչ օր մը ապրեցան հայկական մթնոլորտի մէջ, Դեկտեմբեր 22-ին:

Շուրջ հարիւր երախաներ ներկայ եղան կիրակնօրեայ պատարագին՝ զոր կը մատուցանէր Զատիկ արեղայ: Շրջապատուած իրենց ուսուցչուհիներով, բոլորն ալ հագուրդուեցան, ոմանք ծիծաղը իրենց երեսին, ուրիշներ՝ լուրջ դէմքով: Ամէնքն ալ, տարիներ վերջ, պիտի յիշեն թերեւս այս հաւաքական արարողութիւնը՝ որ առաջինը չէ Լիոնի մէջ, բայց ամէն անգամուն ալ կրնայ յուզել ներկաները, ծնողները՝ ամէնէն առաջ: Նորվան Եպիսկոպոս առաւ օրուան քարոզը: Շեշտը դրաւ ծնողաց պարտականութեան վրայ այս սերունդը հայ պահելու սուրբ գործին մէջ:

Կէս օրին, երախաները առաջնորդուեցան Հայ Տան սրահը, ճաշի: Սրահը ու սեղանները զարդարուած էին տօնականօրէն: Բեմին վրայի կազանդի ծառը են - թադրել կուտար թէ «Կազանդ Պապան» շատ հեռու չէր: Եկաւ արդարեւ, բայց ուշ եկաւ: Ըսաւ որ Հայաստանէն կուգար, յոգնած էր ... Ցոգնած կամ ոչ, երախաները կը սպասէին իր պարկին մէջի քաղցրեղէններուն: Ստացան:

Մինչ այդ, կերուխում եւ երգ հաճելի մթնոլորտ մը ստեղծած էին: Քառասունի մօտ պզտիկներ 6-էն 12 տարեկան, Խաղակ խաչակիր քահանային ղեկավարութեան տակ, երգեցին - ոմանք հետեւելով ժամագիրքին - քանի մը աղօթքներ: Տէր Հօր ձեռք բերած յաջողութիւնը դնահատելի է: Արդիւնք, անկասկած, յամառ աշխատանքի մը:

Մշակութային ընկերակցութիւնը այս հաւաքոյթին մասնակցելու հրաւիրած էր Լիոնի բոլոր հայ միութիւններու ներկայացուցիչները: Գրեթէ բոլորն ալ պատասխանած էին: Սրահին մէջտեղը, երկու երկար սեղաններու շուրջ տեղ բռնած էին: Ուրիշներու կողքին, հոն էր Պ. Ճիպրայէլ Պահատուրեան՝ միշտ պատրաստ քաշալերելու երիտասարդները: Նորվան Եպիսկոպոսին հետ, Պ. Փօլ Ա-

ԳՈՂՈՒԹԷ ԳՈՂՈՒԹ

Ա.ԹԼԻՆԲի Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան վարժարանի սրահին մէջ, Դեկ. 1-ին, դումարուած է Համազդայինի պատգամաւորական Ա. ժողովը: Բացումը կատարած է յանուն նշանակեալ Շրջանային առաջնորդ Վարչութեան Սահակ Շեմմաս: Կարդացուած են Շրջ. Վարչութեան, Ա.թլինքի եւ Սէլանիկի մասնաճիւղերու միամեայ գործունէութեան տեղեկագիրները: Ա.թլինք ունի 106 անդամ, Սէլանիկ՝ 75 անդամ: Ժողովը վաւերացուցած է մշակուած ծրագիրը - կանոնագիրը եւ ընտրած անդրանիկ Շրջ. Վարչութիւնը:

×

ՀԱԼԷՊ գացած է (Դեկ. 7-ին) երեւանի «Գրական Թերթ»ի խմբագրապետ Նորայր Ադալեան, հրաւէրով Թէքէեան Մշակութային Միութեան: «Պարոն» պանդոկին մէջ տեղի ունեցած է ընդունելութիւն մը, իսկ իրիկունը՝ Թէքէեան Տան մէջ, տրուած է ճաշ մը, ի պատիւ հիւրին: Նորայր Ադալեան Հալէպ կեցութեան օրերուն այցելած է զանազան միութիւնները եւ վարժարանները, ապա նաեւ՝ Դամասկոս եւ Լաթաքիա:

×

ԱՆԹԻԼԻԱՍԻ Կաթողիկոսարանի «Կիլպէնկեան» սրահին մէջ, Նոյ. 24-էն Դեկ. 10, տեղի ունեցած է նկարիչ Զօհրապի ցուցահանդէսը: Ներկայացուած են 100 գործեր՝ իւզանկար, ջրանկար, չինական մելան եւայլն:

քըլեան, փոխ-նախագահ, կը ներկայացնէր Ազգային Միութեան վարչութիւնը:

Ուղղելով իր խօսքը մանաւանդ Լիոնի հայ միութիւններուն եւ յորդորելով համագործակցութիւն, Գեղամ Կանանեան, նախագահ՝ Մշակութային Ընկերակցութեան, ըսաւ. - «Այս հաւաքոյթին պատճառն է՝ 1986-ին բանալ, Լիոնի մէջ, ամենօրեայ հայ դպրոց մը»: Նորվան Եպիսկոպոս, նոյնպէս, ընդգծեց անհրաժեշտութիւնը հայերէն լեզուի պահպանման: «Սփիւռքի մէջ պէտք է անպայման ըլլանք երկլեզու, տեղականը եւ հայերէնը»:

Երբ եկան ծնողները, իրիկուան մօտ, տէր ըլլալու իրենց զաւակներուն, անոնք ալ հիւրասիրուեցան: Ամբողջ օրը, Մշակութային ընկերակցութեան անդամուհիները ու անդամները եւ վարժարանին ուսուցչուհիները ջանք չխնայեցին ապահովելու համար ձեռնարկին յաջողութիւնը եւ ապահովեցին: Ուսուցչուհիներու կազմէն, բացակայ էր, դժբախտաբար, Տիկին Գայթանճեան՝ որ տեղեկացանք թէ վիրաբուժական գործողութեան մը ենթարկուած է վերջերս: Կատարեալ ապաքինում կը մաղթենք Հայկազեան վարժարանի այս անխոնջ նուիրեալին:

ՎԱՂԻՆԱԿ ՄԻՍՔՃԵԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Շրջ. Վարչութիւնը իսր հրճուանքով կը յայտնէ թէ իր ժրաջան ընկերուհիներէն՝ Թանէք Մատոյեան պրոնզէ մէտալի արժանացաւ այս վերջերս երիտասարդութեան եւ մարմնամարզի նախարարութենէն իր մատուցած ծառայութեան համար այս մարզին մէջ:

Այս առթիւ Շրջ. Վարչութիւնը տեղին կը համարի յիշեցնելու թէ վերոյիշեալ մէտալին արժանացած էին նաեւ անցեալին մեր վաստակաւոր ընկերուհիներէն՝ Հրանոյշ Գազազեան եւ Մատլէն Իւլիւպէյեան:

ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ

×

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ «ԷԼԻԶ ԳԱԻՈՒՔՃԵԱՆ - ԱՅՎԱԶԵԱՆ» ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Գրական դատական կազմը, 1985-ի իրեն ներկայացուած գիրքերէն Ա. Մրցանակի արժանի նկատեց նիւ - եորքաբնակ արձակագիրը՝ Յակոբ ԿԱՐԱՊԵՆՑԻ «Ադամի Գիրքը» վէպը եւ պոլսահայ բանաստեղծ՝ Զարեհ Խրախունիի «Դիւցազնահանդէս» բանաստեղծութիւններու հատորները:

Ա. Մրցանակի արժանացողները կր ըստանան 1500-ական Ֆրանք:

1986 տարուոյ, Ֆրանսահայ Գրողներու Ընկերակցութեան «Էլիզ Գաւուքճեան-Այվազեան» գրական մրցումին կրնան մասնակցիլ Սփիւռքի բոլոր հայ գրողները, ներկայացնելով այս վերջին երեք տարիներու իրենց հրատարակած գրական ստեղծագործութիւնները՝ արձակ կամ բանաստեղծութիւն:

Մրցումին ներկայացուած գիրքերը, երկուական օրինակ, պէտք է մեր ձեռքը հասած ըլլան, ամենաուշը՝ մինչեւ 1986 Օգոստոսի վերջը:

Մրցանակին (երեք հազար Ֆրանք) արժանացող երկը եւ հեղինակին անունը, տարեվերջին կը յայտարարուին մամուլով: Իսկ մրցանակի յանձնումը՝ գրողներու աւանդական ճաշին:

Գրական դատական կազմի անդամներն են. - Այվազեան Եղիշէ, Կէնճեան Պատրիկ, Գալֆեան - Փանոսեան Հիլտա, Զանգու Ս. Ֆ., Պալեան Տիգրան:

Թղթակցութեան հասցէ. -

SOCIETE DES GENS DE LETTRES
ARMENIENS DE FRANCE
BP. 98 / 09 75421 Paris Cedex 09 — FRANCE

Արտասահմանի թերթերէն կը խնդրուի արտատպել:

ՁԷՄԻԼԱ

ՃԷՆԿԻԶ ԱՑԹՄԱԹՈՎ

Ձէմիլա հրայրքոտ, կը փսփսար.

- Կարելի՞ բան է որ քեզ բաղդատեմ ա-նոր հետ. ան քու տեղդ չի կրնար բռնել, երբե՛ք, երբե՛ք: Զիս չսիրեց բնաւ: Նամակներուն վերջաւորութեան փոքր բարեւ մը կը գրէը ինձի, այդքան: Ձեմ ուզեր այլեւս, եթէ նոյնիսկ գիս սիրէ: Ո՛վ ինչ այլեւս, եթէ նոյնիսկ գիս սիրէ: Ո՛վ ինչ ալ կ'ուզէ թող ըսէ: Սիրելի՛ս, իմ առանձին սէրս, քեզ ոչ ոքի կը ձգեմ: Ես քեզ սիրեր եմ առանց դիտնալու, քեզի սպասեր եմ, ու դուն կարծես թէ դիտնալով թէ քեզի կը սպասեմ, եակ՛ը:

Ցաջորդական կապոյտ կայծակներ, ընդհատ գծիկներ ձեւացնելով երկնակամարին վրայ, սեպ ժայռերու կատարէն կը սուզուէին դէպի առուակը: Անձրեւի կաթիլները չեզոքի կ'իյնային յարդի դէզերուն վրայ, ու անկէ ալ գետին:

Տանիյար Ձէմիլային կուտար մեր լուսնեերու ամենագեղեցիկ, ամենաքաղցր անունները.

- Ձէմիլա, սէրս, մէկ հատիկս ... ես ալ երկար առեւնէ ի վեր քեզ կը սիրեմ, ռազմադաշտին վրայ խրամներուն մէջ քեզ կ'ապրեցնէի երեւակայութեանս մէջ գիտէի որ իմ նախկին երկիրս կը գտնէիր: Այս սէրը գո՛ւն ես Ձէմիլա:

- Դարձիր ինծի, դարձիր որ դիտեմ աչքերուդ խորքը:

Փոթորիկը պայթեցաւ:

Վրանին փրթած, առկախ թաղիքը կը թեւաբախէր յոգնարեկ, ուժասպառ թըռչնիկի մը նման: Փոթորկախառն անձրեւը հովէն մարակուած կ'իջնէը սաստկօրէն ու կը համբուրէր հողը: Կայծակներու չողդողուն բոցերը կակաչներու հրդեհ մը կը վառէին գաղաթներուն վերեւ: Հովը կը շաչէր ու կատաղօրէն կը դառնար փոսին մէջ:

Երբ կ'անձրեւէր, յարդերուն մէջ թագուեր, պառկեր էի, ձեռքիս տակ կը զգայի սրտիս տրոփիւնը: Երջանիկ էի: Ապաքինումէ ետք առաջին անգամ արեւը վայելդ մէկուն ապրումը ունէի: Ցարդին տակ թէ՛ կը թրջէի անձրեւէն, եւ թէ կայծակներու բոցը կը տեսնէի, սակայն լաւ էր տրամադրութիւնս: Տանիյարն ու Ձէմիլա՞ն կը փսփսային, թէ յարդին վրայ իջնող անձրեւին մրմունջն էր. առանց հասկնալու, ժպտելով կը մրափէի:

Հիմա անձրեւներն ու անոնցմէ ետք ալ չուտով աշունը կուգան: Աշնան ու թաց յարդարերուն խոնաւ բոյրը արդէն կը ծփան օդին մէջ: Ի՞նչեր կը բերէ մեզի աշունը. չեմ գիտեր ինչո՞ւ, սակայն երբեք չէի մտածեր այս մասին:

×

Երկու տարուան ընդհատումէ մը ետք այդ աշնան վերադարձայ գպրոց: Դասերէն ետք յաճախ կ'երթայի առուակին եզերքը, այդ ցից ժայռին վրայ ու կը նըստէի այն վայրը, որ նախապէս կալն էր իսկ հիմա անխնամ, խոպան կը մնար: Հո՛ղ ցծած էի առաջին նկարներս, գըպրոցականի ներկերովս: Եւ այդ ժամանակուան գատումովս չէի յաջողած այս մարդին մէջ...:

«Ա՛խ, եթէ իրական ներկեր ունենայի» կ'ըսէի ես ինծի, սակայն չէի գիտեր ալ թէ ինչ տեսակ բան էր իրական ներկը:

Իրական իւզաներկեր տեսնելու բախտը շատ աւելի ուշ պիտի ունենայի:

Ներկով կամ ուրիշ նիւթով, - ինչպէս անկասկած իրաւացի կերպով կը կրկնէին մեր ուսուցիչները, - այս գործին համար կարեւորը աշխատանքն էր: Մինչդեռ ինծի համար աշխատանքի մասին մտածելու ժամը չէր հնչած տակաւին: Շրջան մը ուր եղրայրներէս յաճախ լուր չէինք ըստանար ու մայրս որպէս «երկու տան կարիճն ու տէրը» գիս ազատ չէր թողուր երբեք, չէի կրնար մտածել այս մասին: Մինչդեռ աշունը կարծես կ'ուզէր խեղթեցնել գիս. այնպէ՛ս զեղեցիկ էր որ չէի կրնար մնալ առանց նկարելու...:

(Շար. 25)

Ի ՑԻՇԱՏԱԿ

Մկրտիչ Հաճեանի յիշատակին, Տիկին Վ. Պայրամեան 500 Ֆ. կը նուիրէ «Ծառաջ»ին:

«ԾԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՏԷՍԻՆ.- Գուրգէն Պօյաճեան 200 Ֆ.:
ՄԱՐՍԷՅԼ.- Ճակոբ Էսքիճեան 200 Ֆ.:

ՆՈՒԷՐ

ՍԷՆ - ՍԱԹԻՒՐՆԷՆ.- Պ. Մինասեան 200 ֆրանք կը նուիրէ Կապոյտ Աչքին (ատենալ «Ծառաջ»էն):

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ալֆորվիլլ Ս. Մեսրոպ կրթարանը ընդհարկալութեամբ ստացած է 200 Ֆ. Տիգրան Թորոսեանէ Տիկին Եզեկէլեանի մահուան առթիւ:

Irma fourrures

SUR MESURE
— REPARATIONS —
TRANSFORMATIONS

Ժամ առաջ զննեցէք ձեր մուշտակէ վերարկուն վտահելով՝

ՀԱՅԿ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ

ՁԱԿԻ ՎՐԱՑ - ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

ԲԱՑ Է ԱՄԷՆ ՕՐ
ԲԱՑԻ ԿԻՐԱԿԻԷ

44, avenue du Général de Gaulle
94700 Maisons-Alfort
tél. : 43 - 68 - 55 - 99

Métro: École Vétérinaire-Alfort (direction CRÉTEIL)

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Պօմոնի մանաճիւղը կարեւոր ժողովի կը հրաւիրէ Ցունուար 6-ին, ժամը 14·30-ին, տեղւոյն եկեղեցւոյ կից սրահին մէջ: Բաժակ մը թէյի շուրջ:

YAN'S

SEJOUR DE SKI

à

TIGNES

— Du 2 au 8 Mars —

— Pension complète
— Matériel
— Forfait
— Assurance
— Transport
F. 2000

Réservation jusqu'au 8 Janvier :

Tél. : 45 - 89 - 20 - 48
48 - 61 - 29 - 49

ՏՕՆԱԾԱՌ

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ցունուար 5, ժամը 13-էն սկսեալ Վարժարանին հանդիսասրահին մէջ՝ 1, Պուլվար տիւ Նոռ, Լը Ռէնսի ձոխ պիւֆէ եւ յատկապէս հայկական Հերիսա:

Աչակերտներուն ելոյթը կը սկսի ժամը 16-ին, պարեր, երգեր, արտասանութիւններ:

Երգչախումբը կը ղեկավարէ՝
Գ. ԵԱՆՊԻԿԵԱՆ

Պարախումբը՝
ՕՐ. Մ. ԱՍԼԱՆԵԱՆ

Կաղանդ Պապուկը նուէր կը բերէ բոլոր փոքրիկներուն:

Մուտքը ազատ է:

imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
վարիզեան իր 8 մանաճիւղերով կը կազմակերպէ՝
ԱԻԱՆԴԱԿԱՆ

ԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Կիրակի, Ցունուար 12, ժամը 14·30–ին
Salle LEOPOLD BELLAN
rue Léopold Bellan — 75002 PARIS

— Գեղարուեստական յայտագիր մասնակցութեամբ կապոյտ խաչի դպրոցներու աչակերտութեան:
— Մանկական ժապաւէնի ցուցադրութիւն:
— Կաղանդ Պապան ծրարիկներ կը բաժնէ սրահի ներկայ բոլոր մանուկներուն:
— Ճոխ պիւֆէ պատրաստուած կապոյտ Խաչուհիներու կողմէ:

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է — ՍԻՐՈՎ ՀՐԱՒԻՐՈՒԱԾ ԵՆ ԲՈԼՈՐԸ

A. S. HOMENETMEN - FRANCE

NOUVEL AN ARMENIEN

— Samedi, 4 Janvier —
de 20h.30 à l'aube

à l'*ORÉE du BOIS (Porte Maillot)*

animé par

ADIS HARMANDIAN

et l'orchestre HORIZON de PADOVA

— Réservation : 45 23 27 82 —

ԾՆՈՒՆԴ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Կիրակի, (Ցուն. 5) Ճրագալոյց Ծննդեան եւ աստուածայայտնութեան Ցիսուսի Քրիստոսի.-

Առաւօտեան պատարագ չի մատուցուիր:

Ժամը 9-ին՝ ՄԻՍՑՆ առաւօտեան ժամերգութիւնները կը կատարուին:

Ժամը 4-ին՝ սկիզբ երեկոյեան ժամերգութեանց:

Ժամը 5·15-ին՝ Ճրագալոյցի պատարագ կը մատուցուի: Կը պատարագէ՝ Աստղիկ աբեղ. Արիստակէսեան:

Երկուշաբթի.- Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն Մերոյ Ցիսուսի Քրիստոսի:

Սկիզբ ժամերգութեանց՝ ժամը 8·30-ին:

Ծննդեան հանդիսաւոր պատարագ՝ ժամը 10·15-ին:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԳԱՇԵԱՆ
(Առաջնորդ Հայոց Փարիզի)

Պատարագը կ'երգուի Քառաձայն՝ եկմալեան եղանակով, Մայր Եկեղեցւոյ երգչախումբին կողմէ:

Պատարագի աւարտին՝ Ջրօրհնէք կը կատարուի:

Մեր ժողովուրդի ուշադրութեան կը յանձնենք Թէ.-

«Պետական տնօրինութեամբ, բոլոր Հայերը - դպրոցական, աշակերտ, պաշտօնեայ, աշխատաւոր կամ ուրիշներ - կրնան այսօր բացակայիլ՝ իրենց կրօնական պարտաւորութիւններուն համար: Արձակուրդի օր է այսօրը մեզի համար»:

Երեքշաբթի.- Բ. օր Ծննդեան: Ցիշատակ է Մեռելոց:

Ժամը 10-ին պատարագ կը մատուցուի, որու աւարտին՝ Հոգեհանգիստ կը կատարուի «Վասն Համօրէն Նիջեցելոց»:

Ս. ՊՕՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԱԼՖՈՐՎԻԼ

Կիրակի.- Ժամը 10-ին ժամերգութիւն: Առաւօտեան պատարագ չի մատուցուիր:

Ժամը 16-ին ժամերգութիւն:

Ժամը 17-ին ձրագալոյց եւ պատարագ:

Երկուշաբթի.- Ժամը 9-ին ժամերգութիւն: Ժամը 10·30-ին Պատարագ: Ցաւարտ պատարագի կարգ Ջրօրհնեաց:

Երեքշաբթի.- Մեռելոց: Ժամը 9-ին ժամերգութիւն: Ժամը 10-ին պատարագ: Ցաւարտ պատարագի հոգեհանգիստ վասն Համօրէն Նիջեցելոց:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՇԱՒԻԼ

Կիրակի.- Ճրագալոյց 16·30, պատարագ 17·30-ին:

Երկուշաբթի.- Ժամերգութիւն՝ ժամը 9-ին: Պատարագ՝ ժամը 10·30-ին: Ցաւարտ պատարագի Ջրօրհնէք:

ՎԱՐԱԳԱՑ Ս. ԽԱՉ ԱՐՆՈՒՎԻԼ

Կիրակի.- Սկիզբ երեկոյեան ժամերգութեան ժամը՝ 16·30-ին: Պատարագ՝ 17·15-ին:

Երկուշաբթի, Ցունուար 6.- Սկիզբ ժամերգութեան 9·30-ին: Պատարագ ժամը՝ 11-ին:

Պատարագի աւարտին Ջրօրհնէք կը կատարուի:

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Կիրակի.- Ժամը՝ 15-ին սկիզբ ժամերգութեան, 15·30՝ Ընթերցուածներու ընթերցում, 16·30՝ պատարագ. կը պատարագէ՝

ԳԱՐԵԳԻՆ վրդ. ՊԵՐՃԵԱՆ

17·30՝ Փոխ այցելութիւն եկեղեցւոյս մէջ Մարսէյլի Կաթողիկէ նոր Արքեպիսկոպոս ԴՈՒՖՖԻ:, 18·30՝ Տօնածառ եւ հանդէս եկեղեցւոյս հայկական դպրոցի աշակերտներու:

Երկուշաբթի.- Ժամը 8-ին՝ սկիզբ ժամերգութեան, 9·30՝ հանդիսաւոր պատարագ, կը պատարագէ՝

ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

11·15՝ Ընթերցում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.-ի Ս. Ծննդեան կոնդակին եւ քարոզ, 11·30՝ Ջրօրհնէք ի յիշատակ Քրիստոսի մկրտութեան:

ՊՕՄՈՆԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Կիրակի.- Ժամերգութիւն ժամը 16, պատարագ 17:

Երկուշաբթի.- Ժամերգութիւն 9, պատարագ 10, քարոզ 11, Ջրօրհնէք 11·30:

Երեքշաբթի.- Մեռելոց: Ժամերգութիւն 9: Պատարագ՝ 10: Հոգեհանգիստ՝ 11·30: Կէսօրէ վերջ Գերեզմանօրհնէք ժամը 14-էն սկսեալ:

ՊՈՒԼՎ. OSSO — Ս. ՅԱԿՈԲ

Կիրակի.- Ժամերգութիւն 16·30, պատարագ 18:

Երկուշաբթի.- Ժամերգութիւն 8·30, պատարագ 10, քարոզ 11·30, Ջրօրհնէք 12:

ՍԷՆ-ԺԵՐՄԱՆ Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ

Կիրակի.- Ժամերգութիւն 9, պատարագ 10, երեկոյեան ժամերգութիւն 17, ընթերցուածներ 18, պատարագ 18·30:

Երկուշաբթի.- Ժամերգութիւն 8·30, պատարագ 10, հոգեհանգիստ մանուկներու 11·30, պատարագի աւարտին Ջրօրհնէք:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԵՂԻՇԷ ԽՉԿ. Ա. ՔՀՆ. ՓԱՆՈՍԵԱՆ

Երեքշաբթի, ժամերգութիւն 9-ին, պատարագ 10-ին, յաւարտ պատարագի հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց: Տէր Հայրը կէսօրէ ետք ներկայ կըլլայ գերեզմանատունը:

ՍԷՆ-ԼՈՒ — Ս. ԳԷՈՐԳ

Կիրակի, Ցունուար 5.- ժամը 17-ին, ժամերգութիւն եւ ընթերցուածք:

- Երկուշաբթի, Ցունուար 6.- ժամը 9-ին ժամերգութիւն, ժամը 10-ին պատարագ, եւ յաւարտ պատարագի՝ Ջրօրհնէք:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՇԱՀԱՆ ԽՁԿՐ. ՔՀՆՑ. ՏԻՏԻԵԱՆ

ՍԷՆԹ ՄԱՐԿՐԻԹ

Կիրակի, Ցունուար 5.- Պատարագ ժամը 10-ին: Ցաւարտ պատարագի՝ Ջրօրհնէք:

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

Կիրակի.- ժամերգութիւն 16·30-ին, ընթերցուածք 17-ին: Կը պատարագէ եւ կը քարոզէ ԻՍԱՀԱԿ խչկ. քհն. ՀԷՔԻՄԵԱՆ:

Երկուշաբթի.- ժամերգութիւն 8·30, պատարագ 9·45: Կը պատարագէ եւ կը քարոզէ.- ՆՈՐՎԱՆ եպիսկ. ՋԱՔԱՐԵԱՆ:

Ցաւարտ պատարագի Ջրօրհնէք:

Երգեցողութիւն՝ Կոմիտաս երգչախումբ ղեկավարութեամբ՝ Ցովհ. Պէրպէրեանի:

Երկուշաբթի Մեռելոց, հոգեհանգիստ ժամը 11-ին:

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ — ՏԷՍԻՆ

Ցունուար 4, Շաբաթ, կէսօրէ ետք ժամը 4·30-ին Ճրագալոյց:

Ցունուար 5, Կիրակի, առաւօտեան հանդիսաւոր Ս. Պատարագ եւ Ջրօրհնէք:

Սկիզբ ժամերգութեան ժամը 9·30-ին:

Մենեզդ եւ երգէոն՝ Տիկին Անժել Սաժ - Կարապետեանի կողմէ:

ՍԷՆ - Թ'ԷԹԻԷՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Կիրակի.- Պատարագ ժամը 10·30-ին:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՒԵՏԻՔԵԱՆ

ԿՈՆՑՈՊԻ

Կիրակի.- Առաւօտեան ժամը 10-ին, Կոնկոպլի Նոքթ-տամ-տը-լա-Տէլիվրանս Ֆրանսական եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցուի:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՄՕՎՍԷՍ Ա. քհնյ. ԳԱԼԷՆՏԷՐԵԱՆ

ՇԱԲԱԹ
ՅՈՒՆՈՒԱՐ
4
SAMEDI
4 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՀԱՐԱՉ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.130 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.130

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
ՀԵԹԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ
(ԱՐՄԷՆՓՐԷՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 24 - 27)

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ
ԶԲՕՍԱՇՐՋԻԿՈՒԹԵԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Երեւանի մէջ դումարուած է արտասահմանեան զբօսաշրջիկութեան զբաղուող վարչութեան նիստը, որուն մասնակցած են նաեւ զանազան նախարարութիւններու եւ գերատեսչութիւններու ներկայացուցիչները: Քննութեան նիւթ եղած են Հայաստանի մէջ արտասահմանեան զբօսաշրջիկութեան զարգացման հարցերը: Զեկուցում մը կարդացած է վարչութեան նախագահը՝ Հենրիկ Լիլոյեան: Ներկայ գրուած է Հայաստանի մէջ զբօսաշրջիկութեան աշխարհագրութեան ընդլայնումին վրայ: «Ինտուրիստ»ի պատասխանատուները կը պատրաստուին զբօսաշրջիկութեան յառաջիկայ տարեշրջանին օտար երկիրներէ սպասուող զբօսաշրջիկներու ընդունման, տեղաբաշխումի, երթեւեկութեան սպասարկման ապահովութեան համար: 1986-ին Հայաստանի «Ինտուրիստ»ի պանդոկներու չարքը կ'երկարի: Կը սկսի գործածուիլ «Արմենիա» պանդոկի 450 տեղնոց նոր շէնքը: Կ'իրագործուին խորհրդային եւ արտասահմանեան զբօսաշրջիկներու ուղղակի թռիչքներ Երեւանէն Փրակա, Սոֆիա եւ Պեռլին: Քննութեան կ'առնուի նաեւ դէպի այլ երկիրներ Այերոֆլոթի նոր գիծեր հաստատելու հարցը:

×

ԱԿԱԴ· ԼԵՒՈՆ ԽԱՉԻԿԵԱՆԻ ՏԱՆ
ՅՈՒՇԱՏԱԽՏԱԿ ՓԱԿՑՈՒԱԾ

Յուշատախտակ մը փակցուած է Երեւանի Սայաթ Նովա պողոտայի թիւ 29 տան ճակատին, ուր 1975 – 1982 թուականներուն ապրած է ակադ· Լեւոն Խաչիկեան: Կարեւոր վաստակ ունի ակադեմականը միջնադարեան Հայաստանի պատմութեան, անտեսական ու բնակերային կեանքի ուսումնասիրութեան ասպարէզին մէջ: Գրած է աւելի քան 150 մենագրութիւններ, յօդուածներ, միջնադարու հայ մշակոյթի ներկայացուցիչներուն նուիրուած աշխատութիւններ: Ողբացեալը 28 տարի եղած է Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանին տնօրէնը: Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Մեսրոպ Մաշտոց մրցանակի առաջին դափնեկիրը պիտնականը «Բանբեր Մատենադարանի» տարեգիրքի խմբագիրն էր, հայկական սովետական հանրագիտարանի, «Հայ ժողովրդի պատմութիւն» ակադեմական հրատարակութեան խմբագրական կազմերու անդամ: Այս վերջին աշխատութեան իրագործման մասնակցելուն համար էր, որ Լեւոն Խաչիկեանի չնորհուեցաւ (յետմահու) Հայաստանի 1985-ի պետական մրցանակը: Յուշատախտակը գործն է ճարտ· Միքայէլ Միսաքեանի:

×

ԵՐԳՉՈՒՀԻ
ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ
ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆԸ

Երեւանի օփերային մէջ ներկայացուած է «Ծոն կարլոս»ը, ուր Էլիզապէթ Վալտայի դերը մարմնաւորած է Սուսաննա Մարտիրոսեան, որ վերջերս Միլանօ գացած էր եւ վեց ամիս իր արուեստը կատարելագործած «Սքալա»ի մէջ, աշակերտելով երգչուհի Ճուլիէթթա Սիմիոնատոյի եւ ղեկավար Լուչիանօ Սիլվէսթրի: Սուսաննա Մարտիրոսեան աւարտած է Երեւանի Կոմիտաս երաժշտանոցը, աշակերտելով փրոֆ· Թամար Շահնազարեանի, ապա՝ Տաթեւիկ Սազանդարեանի: Անդրկովկասի մրցումի դափնեկիրը է: Արուեստագիտուհին մեծ յաջողութիւն արձանագրեց 1985-ին, մասնակցելով Թուլուզ տեղի ունեցած երգիչներու միջազգային մրցումին, նուաճելով երկրորդ մեծ մրցանակը: Մրցումին կը մասնակցէին զանազան երկիրներէ 70 երգիչներ: Սուսաննա Մարտիրոսեան իր արուեստը կատարելագործելու նպատակով դարձեալ վեց ամսով գացած է Միլանօ:

×

14-ԱՄԵԱՅ ՎԼԱԴԻՄԻՐ ՅԱԿՈԲԵԱՆ
ՃԱՏՐԱԿԻ ՎԱՐՊԵՏ

14-ամեայ աշակերտ Վլադիմիր Յակոբեան (Պաքուէն) դարձած է Խորհրդային Միութեան մարզանքի պատմութեան մէջ ճատրակի ամէնէն երիտասարդ վարպետը, որ այդ տարիքին ամրողջացուցած է վարպետի կոչման կանոնը: Վլադիմիր Յակոբեան այդ յաջողութեան հասած է Պաքու տեղի ունեցած ճատրակի Անդրկովկասի ախոյենութեան ընթացքին, ուր՝ 15 կարելիութենէ չահելով 10 կէտ, բաժնած է 4 - 5-րդ տեղերը: Կ'աշակերտէ աշխարհի նախկին ախոյեան Վասիլի Սմիսլովի:

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

1986 Ը՝ ԹՐՔԱԿԱՆ ԱՐՇԱԻԱՆՔԻ ՏԱՐԻ

ԸՆԴԴԷՄ ՀԱՅԵՐՈՒ ԵՒ ՊՈՒԼԿԱՐՆԵՐՈՒ

Յունուար 3-ի «Թէրճիման»ն է որ կը հաղորդէ այս արշաւանքին լուրը: Պատմութեան Թրքական Հիմնարկը որոշած է միջազգային հրապարակը ողողել այնպիսի «փաստաթուղթերով» որոնք ցոյց տան թէ Հայոց եւ Պուլկարներու բոլոր ըրածները սուտ են···: Արդէն իսկ 20 հատորներ պատրաստուեր են «պիտնականներու» կողմէ եւ ղրկուեր աշխարհի 375 մատենադարաններու, ճեմիոնէն համալսարան - Ամերիկա:

Հիմնարկին նախագահը Փրոֆէսէօր Եաշար Եուճէլ յայտարարած է թէ այս բոլոր գործերը անպլերէնի թարգմանուած են եւ կը տարածուին, որպէսզի հանրային կարծիքին ուշադրութիւնը գրաւեն: Թուրք «պիտնականները» ուրեմն նստած ու իրենց խօսքով «արդարութեան» օսմանեան դիւանները կը թարգմանեն: Առնոց կարգին հինգ հատորնոց «Ռումելիի եւ արեւելեան չրջանի թղթակցութեան տետրակները», Ֆրանսական «Հայկ· հարցերու դիւանագիտական փաստաթուղթերը», ինչպէս նաեւ Նազըմ փաշայի Հայերու վերաբերող տեղեկագիրը, երուսաղէմի Հայոց պատրիարքին տըրուած առանձնաչնորհները օսմանեան կառավարութեան կողմէ եւայլն, եւայլն: Ասօք չէ՛, փա՛սա կը ղրկ «Թէրճիման», ենթախորագրով մը, թերթը, ըստ երեւոյթին իւմուռէ զուրկ չէ···:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԻՍՐԱՑԻԼ լուրջ կ'առնէ Քաւաֆիի սպառնալիքները, ըստ որում վրայ դնուող դէտերու, եթէ նոյնիսկ պաչտօնական յայտարարութիւն մը չէ եղած: Ծանօթ է որ, Քաւաֆի յայտարարած է որ Լիբիա պատերազմ կը հռչակէ Միջերկրականի եւ ամբողջ Մերձաւոր - Արեւելքի մէջ, եթէ որեւէ յարձակում ըլլայ իր վրայ: Իսրայէլ կը պահանջէ որ դատապարտուին այն երկիրները, որոնք զօրավիգ են ահաբեկչութեան, այսինքն Լիբիա, Սուրիա, Իրաք եւ Վիէննայի ու Հռոմի ռմբահարձերու ամբողջական պատասխանատուութիւնը կը թողու ՊԱԿ-ի վրայ, Ազահովութեան Խորհուրդին ղրկած իր մէկ նամակին մէջ: Աթաֆաթ ալ «կարգ մը արաբական երկիրներ» (որոնց չի թուեր) եւ Մոսատը (իսրայէլեան Գաղտնի սպասարկութիւն) կը մեղադրէ որպէս դրդիչները այդ ռմբահարձերուն:

ԺԻՍՔԱՐ Տ'ԷՍԹԻՆ կոմմնակից է համակեցութեան: Այդպէս կ'արտայայտուի «Ֆիկառօ - Մակազին»ի տուած իր հարցազրոյցին մէջ: Եթէ ընդդիմութիւնը յաղթէ, պատճառ չկայ որ Միթերան մեկնի, բայց չատ իրաւասութիւն չունենար, կ'ըսէ:

ՓԱՐԻԶԻ Սուրիոյ դեսպանը ճգդումի նամակ մը ղրկած է «Քոթիտիէն տը Փարի»ի, ի պատասխան Արաֆաթի տուած հարցազրոյցին, ուր ՊԱԿ-ի ղեկավարը բացէ ի բաց Սուրիան կը մեղադրէր Աբքիլէ Լաուրոյի («Յառաջ», Դեկտեմբեր 21 / 22) ծովահէնութեան համար: Դեսպանը բացարձակապէս կը մերժէ նման ամբաստանութիւն մը, աւելցնելով թէ Արաֆաթի այն յայտարարութիւնը որ ոչ մէկ պատասխանատուութիւն ունի այդ գործին մէջ, պատճառ պէտք չէ ըլլայ որ Սուրիոյ վիզը փաթթուի մեղքը:

ԺԱՔ ՓԵՐՈՑԻ, սպաննուած փաստաբանը, որ ամուսինն էր Տարի Պութպուլի (կին ժոքէն) յուղարկաւորութիւնը կատարուեցաւ *Հինգշաբթի օր, ի ներկայութեան նաեւ նախարարապետ՝* Ժապիւսի, որու դասընկերն էր: Ոստիկանութիւնը բաւական կը քրքրէ փաստաբանին թղթածրարներն ու անձնական կեանքը դրդապատճառը դտնելու համար: Կը թուի որ *փէրօ վերջերս բաւական յայտնութիւններու դէմ առ դէմ գտնուած է, մասնաւորաբար իր գտնքանչին մասին,* երբ չանք կը թափէր դատական կարգադրութիւններով ստիպել կինը որ, 3 տարու մանչուկը տեսնելու արտօնութիւնը դրծադրէ: Մէջտեղ ելած է, որ կնոջը մայրը փաստաբան եղած է եւ ջնջուած է փաստաբանական կարգէն, ինչ որ չատ հազուադիպ պարադայ մըն է եւ կը պատահի, երբ մեծ յանցանք մը դործուած է: Զոքանչին անբնական հարստութիւնն ալ դարմացուցած է փերօն, երբ լսած է թէ անհերհայրը չէր մեռած օդանաւի արկածի մը մէջ, ինչպէս ըսուած էր իրեն «այրին» կողմէ, այլ կ'ապրէր եւ համակերպած էր «ողբացեալ»ի դերը խաղալու կարեւոր հաստատման մը փոխարէն: Փաստաբաններու կարդին որոշումը հետեւանք եղած է «Փարիզի օտար առաքելութեանց» տեսուչ վարդապետին բողոքին, խարդախութեան եւ առու - փախաստութեան՝ ընդդէմ տիկին Պութպուլի, որ իրենց փաստաբանն եղած էր եւ դիրենք խաբելով, չինծու վճիռներ ներկայացնելով, 14 միլիոն ներկայ ֆրանք իւրացուցած է: Այս «Օտար առաքելութեանց» նիւթական հարցերն ալ բաւական բարդ են եւ իրենց բուն գործունէութիւնն ալ չատ ծանօթ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԻՔԱՅԷԼ ՇԱԹԻՐԵԱՆԻ ՄԱՀԸ

«Գրական Թերթ»ի Դեկտեմբեր 13-ի թիւէն կ'իմանանք, թէ Երեւանի մէջ իր մահկանացուն կնքած է արձակագիր Միքայէլ Ալեքսանդրի Շաթիրեան: Ծնած էր 1916-ին՝ Թիֆլիս: 1939-ին, աւարտելով Մոսկուայի գրագարանային հիմնարկը, նուիրուած է գրականութեան եւ լրագրութեան: Բ· Աշխարհամարտին եղած է զինուորական թղթակից Լենինգրադի ճակատին վրայ: Պատերազմէն ետք վերադառնալով Երեւան, Շաթիրեան գրական աշխատանքներու առընթեր վարած է գանազան պաչտօններ: Եղած է Գ· Սունդուկեան թատրոնի տնօրէն, չարժարուեստի գլխաւոր վարչութեան պետ, Գրքոզներու Միութեան քարտուղար, «Գրական Թերթ»ի եւ «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի խմբագրապետ: Իր գործերէն ծանօթ են՝ «Զինուորները», «Աւազ արմաւենու մասին», «Յեղափոխութեան գեներալը» վէպերը, «Գարունը նորից եկաւ» վիպակը, որու հիման վրայ պատրաստուած «Նուագախմբի տղաները» չարժանկարը չուրջ քսան տարի է կը ցուցադրուի պատառներու վրայ: Մեծ ընդունելութիւն գտած է իր «Արծաթէ դար» վէպը:

ՎԱՂԸ՝ «ՅԱՌԱՋ - ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ»

Վաղը լոյս կը տեսնէ «Յառաջ միտք եւ արուեստ»ի նոր (101) թիւը, հետեւեալ բովանդակութեամբ·-

Կաւցնի (Գէորգը յիշելով)
ԱՐՓՆ ԹՈՓՈՑԵԱՆ
Թղթեղէն երանգապնակ
ՄԱՐԿ· ՆՇԱՆԵԱՆ
Ո՞ւր է Տէրեան ՎԱՐԱՆ ՈՑԻ
Ժամանակի ետեւէն
ԼԵՒՈՆ ՍՈՓՈԿԼԵԱՆ

չէ այլեւս, քանի որ իրենց մէկ անդամին իսկ խոստովանութեամբ, իրենց պաչտօնը (եկեղեցիներ հիմնել ծանրագոյն – Արեւելք) աւելորդ գործած է: Ինչպէս կ'երեւի չուրը բաւական պղտոր է եւ փաստաբանին թոյլ չէր տրուեր «լողալ»: Զոյգին չրջապատն ալ սկսած է խօսիլ եւ յայտնել այն փոթորկալից յարաբերութիւնները, զորս ունէին այր ու կին, մանաւանդ կընոջը նախանձի եւլոյթները ամուսնոյն դէմ:

«ՓԻԿԱՌՕ» Յունուար 3-էն ի վեր, իր տիպարին տակ աւելցուցած է «Ֆրանսական ազգային առաջին օրաթերթ»: Տէրը՝ Հէրսան, կը յայտարարէ նոյն թիւին մէջ, թէ ժամանակի մը համար որոշած է այդ ենթախորագիրը, քանի թերթը դլուխը կը հաւնի ազգային բոլոր օրաթերթերու տարածման, օրական 460 հազարով, մինչ չարաթ օր, Փիկառօ – Մակազին 700 հազարը անցած է:

ՀՈՆՔ ԿՈՆԿի մէկ բնակիչը իրրեւ խենթ յիմարանոց փոխադրուած է Ամանորի օրն իսկ, որովհետեւ փողոց իջած, առաւօրչէն իր զրամը կը բաժնէր···: Ցաջողած էր մինչեւ 5000 տոլար ցրուել, երբ ոստիկանութիւնը միջամտած է եւ յիմարանոց փոխադրած մտային քննութիւններ կատարելու համար···:

«ՅԱՌԱՋ»Ի ԸՆԴՄԷՋԷՆ

1985-ԷՆ
ԴԷՊՔԵՐ, ԴԷՄՔԵՐ, ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Պատրաստեց՝ ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ա Պ Ր Ի Լ

Հայկական Ցեղասպանութեան 70-ամեակ։ Հայապատկան ամիս մը։

× *Սուրբ Էջմիածինէն Վազգէն Ա. Կաթողիկոս կը պատգամէ.-*

«Մեր ազգի պատմութիւնը մի կենդանի յուշարձան է աշխարհի հոգիզոնի վրայ բարձրացող, մարմին ու կեանք առած նահատակների արիւնով, քարուն ու գեղեցիկին ծառայելու ստեղծագործ հանճարով, սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազան կիրքով...»։

× *Հռոմէն, Ս. Քահանայապետը Յովհ. Պօղոս Բ., կը ձայնակցի ոգեկոչելով Ապրիլեան նահատակները եւ հրաւիրելով աղօթքի որպէսզի բնաւ երբեք չկրկնուին նման սխալ դէպքեր։*

× *Եւ համայն հայ աշխարհը, երեւանէն՝ ժողովուրդի տպաւորիչ երթով դէպի Ծիծեռնակաբերդ մինչեւ լիբանանեան մայրաքաղաքը, երկու Ամերիկանները, Պարսկաստան, Եւրոպա, մինչեւ Պոլիս՝ ուր Շիշլի թաղին կարգ մը վարժարանները, որոնց կարգին Նոթր Տամ տը Սիօն Ֆրանսական լիսէն, կէս պարզած են իրենց դրօշակները. Ի լուսաբանութիւն, Պոլսոյ կուսակալը յայտարարած է թէ, այս դէպքը կապ չունի հայկական օրուան հետ, այլ սուգի նշան մըն է Պրազիլիոյ նախագահին մահուան պատճառով, ոգեկոչումներով, ցոյցերով, տոպանցքներով, թափօրներով, հանրաժողովներով, հաւաքոյթներով, համախմբումներով, պատարագներով, ծաղկեպսակներու զետեղումներով, հոգեհանգստեան արարողութիւններով նչեց 70-ամեակը Ապրիլեան Եղեռնին։*

× *Ֆրանսայի մէջ, հակառակ եղած կոչերուն, Ապրիլ 24-ը մէկ ճակատով չնշուեցաւ բոլոր հայկեղբօր քաղաքներուն մէջ։ Փարիզ՝ Պատարագ՝ Նոթր Տամ եւ Ս. Յովհաննէս - Մկրտիչ Եկեղեցւոյ մէջ. հաւաքոյթ Փլաս տիւ Թռաւատա. բոցի արձարծում Անծանօթ Զինուորի Ցուշարձանին 4000 Հայերու ներկայութեամբ. ապա երկու յոյցեր Հ. Ց. Դ.ական եւ Հ. Ա. Շ.ի կողմէ կազմակերպուած դէպի Թրքական հիւպատոսարանը։ Մարսէյլ՝ երեք յարանուանութեանց հովանաւորութեամբ Սբբոց Թարգմանչաց Եկեղեցւոյ մէջ հանդէս, պատարագ եւ ծաղկեպսակի զետեղում նահատակաց յուշարձանին ու հոգեհանգստեան արարողութիւն. ապա զանազան եւ այլազան ձեռնարկներ տարբեր տարբեր կազմակերպութիւններու կողմէ, ինչպէս յոյց, կլոր սեղան...։ Լիոն՝ երկու տպաւորիչ հանդիսութիւններ. պատարագ Լիոնի Սէն - Ժան Մայր Տաճարին մէջ, եւ հըլկում ու ապա հաւաքոյթ Պելքուռի հրապարակը 3000 Հայերու մասնակցութեամբ։ Նիս՝ հանդէս եւ պատարագ Ս. Աստուածածին Եկեղեցին. ապա տոպանցք դէպի Մեռելներու Ցուշարձանը, 400 հոգիի մասնակցութեամբ։ Վալանս՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ պատարագ եւ հոգեհանգիստ, ապա հաւաքոյթ Փարք Ժուվէ եւ թափօր դէպի Ռիւ Տ'Աբմէնի. ու ոգեկոչման հանդիսութիւն, Սալ ան Փէթ։ Զենք մոռնար նաեւ Վիէնի, Սէն - Մօրիսի, Տէսինի, Սէն - Թիթիէնի, Սէն - Շամոնի մէջ տեղի ունեցած ձեռնարկները։*

70ամեակի առընչութեամբ յիշենք նաեւ՝

× «Յառաջ»ի անօրէնուհիին տեսակցութիւնը, Պրիւսէլ, Եւրոպական Խորհուրդի կեդրոնին մէջ, քաղաքական յանձնախումբի անդամ՝ Ժաք Վանտէմէօլպուրքի հետ, որուն յանձնուած է Հայերու ցեղասպանութեան վերաբերող տեղեկագրի պատրաստութիւնը։

× «Վան» գործօղութեան մասնակցողներէն՝ Արամ Պամճեան անձնասպան կ'ըլլայ բանտին մէջ։

× *Սիմֆոզիամ Նիւ - Եորքի մէջ նուիրուած Ապրիլեան Ցեղասպանութեան։*

× *Ուրուկուէյի Ազգ. Ժողովը միաձայնութեամբ կը քուէարկէ բանաձեւ մը որով կը դատապարտէ հայկական ցեղասպանութիւնը եւ կը յայտնէ իր համակրանքը հայ ժողովուրդի պայքարին։*

Ֆրանսայի եւ Աշխարհի մէջ, Ապրիլին, կը պատահին կարգ մը կարեւոր դէպքեր՝

4.- Միշէլ Ռոքար կը հրաժարի Գիւղատնտեսութեան նախարարի պաշտօնէն։

11.- Քառասուն տարուան մենաիրութենէ մը յետոյ, կը մեռնի Ալպանիոյ դիկտատորը՝ Ինվէր Հոճա։

21.- Պրազիլի նորընտիր նախագահը՝ Թանքրետօ Նեվէշ կը մեռնի։

Այս հայկական ամիսը վերջացնենք երկու հայկական լուրերով։

× *Զատիկը Ս. Ղազարի մէջ կը բերէ ցնծութիւն ձեռնադրութեամբ մը երկու նորընծաներու։ Քիչ մը յոյս եւ արեւ այս դժուար չրջանին մէջ։*

× *Պէյրութ։ Հ. Ց. Դ.ական պատասխանատու՝ Սարգիս Ազնաւուրեան կ'առեւանգուի եւ ապա կը սպաննուի։*

×

Մ Ա Յ Ի Ս

1.- Մռայլ Մայիս Մկկ մը Ֆրանսայի մէջ, ինչ որ կը թարգմանէ Սենտիքանեռու ազգեցութեան ակարացումը։

2.- Պոնի մէջ, Համաշխարհային ատենադպրութեան Ժողովը արդիւնքի մը չի հասնիր։ Ամէնէն կարեւոր դէպքը Միացեալ - Նահանգներու Նախագահ Ռեյկընի այցելութիւնն է Պիթթսպուրկի գերեզմանատունը։

7.- Նոր - Քալետոնիա։ Դարձեալ ներքին ծանր բախումներ, երկու համայնքներու միջեւ՝ 1 մեռեալ, 100 վիրաւոր։

8.- Ցաղթանակի քառասնամեակի ոգեկոչումներ Փարիզէն Մոսկուա, ուր Կորբաչով ծափահարել կուտայ Սթալինի անունը։

9.- Գարեգին Բ. Կաթողիկոս, Ապրիլեան Եղեռնի 70-ամեակի առթիւ ուխտագնացութիւն մը կը կատարէ Հալէպ, Տէր - Զօր, Ճէզիրէի անապատը, հոն ուր հարիւր հազարաւոր Հայեր ջարդուեցան Ա. աշխարհամարտին։

12.- Փարիզ, Լիոն, Մարսէյլ բացառիկ ոգեկոչման հանդիսութիւններ Հ. Օ. Մ.ի 75-ամեակի եւ Կապոյտ Խաչի Կայանի, 50-ամեակի առթիւ։

13.- Յովհ. Պօղոս Բ. Պապին չրջապտոյտը Հոլանտա, կը կատարուի անախորժ, ծանր եւ չափազանց մթնոլորտի մը մէջ։ Փընքերը, միասեռականները, բնութենապաշտները, բայց նաեւ այլասիրտ կաթոլիկները բուռն եւ լիբը ցոյցերու կը դիմեն։ Յետոյ անցնելով Լիւքսանպուրկ եւ ապա Պրիւսէլ, Պապը կ'արժանանայ չատ խանդավառ ընդունելութեան մը, քիչ մը մոռցնել տալով հոլանտական անհամութիւնները։

20.- Պէյրութի մէջ, կռիւները չեն դադրիր եւ զոհերու թիւը միշտ կը բարձրանայ։ Բոլոր կողմերն ալ կը սեւեռեն, դէպի Դամասկոս, իրենց հայեացքը եւ կը սպասեն փրկութեան։ Տասը տարին անցաւ։

21.- Է. Փիզանի կը նշանակուի նախաբար Նոր - Քալետոնիոյ, Հանրապետութեան նախագահին կողմէ եւ իրեն կը յանձնարարէ որպէս կառավարիչ՝ Ֆ. Վիլօ։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ՅՈՒՐՀԱՒՈՐԱՆՔ

ԳԷՈՐԳ ԴԵՒՐԻԿԵԱՆ

(Բ. եւ վերջին մաս)

Նա այդ անակնկալ պիւտից մէկէն պայծառացաւ։ Սակայն Նինէլին ոչինչ էլ չասաց. կնիկ է, բերանբացութիւն կ'անի, քրոջը կ'ասի. սա էլ ամուսնուն կամ հարսին, ու զաղտնիքը կը բացուի։ Չէ, զաղտնիքը միայն երկու հոգի պիտի իմանան, մէկ հեռագրեր զրազը, մէկ էլ կարզացողը։ Բայց ո՞վ կազմի անուանի մարզկանց ցուցակն ու նրանց անունից զրի հեռագրերը։ Գրելը դժուար չէ, մօտաւորապէս նման մի բան է լինելու. «Թանկագին Ենոք Սամսոնովիչ, ի սրտէ չնորհաւորում ենք Ձեզ սիրելի Սամսոնի ամուսնութեան առթիւ»։ Այո, այն հարսանիքի ժամանակ այդպիսի հեռագրեր էին կարգում։ Այդպէս էլ կը գրեն, միայն թէ վերջում կը լինի աւելի ճանաչուած մարզու անուն - ազգանունը։ Հեռագրերն էլ անպայման կը լինեն ծաղիկներով բըլանկի վրայ։

Այս պայծառ մտքերը քանի որ Ենոք Սամսոնովիչի գլուխը մտան ուշ երեկոյեան, նա ողջ պիշեր երազում հեռագրեր տեսաւ եւ յաջորդ օրը աշխատանքի վայրում, երբ մտածում էր, թէ ցուցակ կազմելն ու հեռագրեր զրելն ո՞ւմ յանձնարարի, անակնկալ եկաւ մօրաքրոջ տղան՝ Վովան, որը առաքիչ էր աշխատում Խամդուչեանի մօտ։

Եւ Ենոքն ասաց մտքինը։ Վովան արագօրէն լմնցրեց ատուածը եւ խոստացաւ գործը հրաշալի ձեւով կազմակերպել։

- Իսկ ո՞վ կը գրի անուանի մարզկանց ցուցակը, - ցանկացաւ ամէն ինչ ճշդած լինել դիմացինը։

- Տղաս, - անմիջապէս վրայ բերեց Վովան, ցանկանալով նրա տեղը նաեւ ապահովել Խամդուչեանի արտաղրութիւնում։ - Տաններորդում է սովորում ու չատ խելացի է։

- Դա լաւ է, - ուրախացաւ Խամդուչեանը, կ'ասես անուանի մարզկանց ցուցակ կազմի։ Թող լինեն կոմպոզիտորներ, նկարիչներ, դրողներ, ճարտարապետներ, դերասաններ։ Ու նրանց անունից էլ կը գրէք հեռագրերը։ Միայն դու ուշադիր իմանաս, ոչ մէկին ոչ մի խօսք։

- Դա ասելո՞ւ բան է, Ենոք Սամսոնովիչ, - զարմացաւ դիմացինը։ - Ինպիսի ցուցակ կազմենք, որ չուզողները նախանձից ճաքեն, իսկ խնամիներն էլ մատ լինեն, իմանան ինչ մարդու հետ գործ ունեն։

Հէնց երեկոյեան էլ Վովան գործի անցաւ, որդուն յանձնարարելով (ի հարկէ, չասելով, թէ ինչ նպատակով) անուանի

Պատո՞ւ թէ չնորհազրկում։ Մէկ ապահովութիւն սակայն, է. Փիզանիի մեկնումը կը զոհացնէ բոլորը։

22.- Ճիշդ հարիւր տարի առաջ կը մեռնի Վիքթոր Հիւկօ։

23.- Միչա Պէյրութ, այս անգամ արեւելեան կողմը ուր թակարդուած կտաքի մը ահաւոր պայթումը կը պատճառէ տասնեակ մեռելներ եւ հարիւրաւոր վիրաւոր։ Քաղաքը կատարեալ դժոխք մըն է։ Սուգ եւ ընդվզում միայն եւ սակայն...։

27.- Հռոմ։ Կը բացուի Պապին դէմ կատարուած մահափորձի մեղադիչներուն դատավարութիւնը։ «Յիսուս եմ եւ աչխարհի վերջը կ'ուեւեմ» կը յայտարարէ Ալի Աղճա, ոճրագործը։

29.- Դժոխք մը ևս, և այս անգամ Փութպոլի աշխարհին մէջ, Պրիւսէլ, «Հէյզէլ» մարզադաշտին վրայ։ Եւրոպական բաժակի աւարտական խաղին կը պատահի անեղեւակայելի ողբերգութիւն մը։ Հուլիկանները (Լիվըրփուլ) կը խուժեն ու կը յարձակին Թիֆոզիներուն (Թորինօ) վրայ անորակելի վայրագութեամբ մը։ Արդիւնքը՝ 40 մեռեալ, 250 վիրաւոր. մըրցումին արդիւնքը այլեւս կարեւոր չէ։

մարզկանց ցուցակ կազմելը։ Տղան պրծի անցաւ ու սկսեց քրքրել հայ ժողովրդի պատմութեան ու հայ գրականութեան դասագրքերը։ Ինչ եւ է, յաջորդ օրը ցուցակը պատրաստ էր։

Հայրն ուրախացաւ ու դովեց որդուն։

- Էս ցուցակից չատ բան է կախուած։ Եթէ Ենոք Սամսոնովիչը հաւանեց, ապա պղպ պատրաստ է, քեզ համար մի լաւ տեղ կը ճարի։

Զանգեց Սամսոնովիչին, որ ցուցակը համաձայնեցրի, սակայն չատ էր զբաղած վերջին պատրաստութիւններով եւ ասաց. Թէ ժամանակ չունի, Թող գրեն հեռագրերը, ինքը յետոյ կը նայի։

Հայր ու որդի Սամսոնովիչի տուած չնորհաւորական պատրաստի տեքստն արտագրում էին փոստից վերցրած բլանկների վրայ եւ տակը գնում ցուցակի ա-նուն - ազգանուններից մէկը։

Ուրբաթ երեկոյեան Վովան զանգեց Ենոք Սամսոնովիչին ու զեկուցեց առաջադրանքի վազլուն կատարման մասին։

- Ապրես, - եղաւ պատասխանը։

Հեռախօսափողը դնելուց յետոյ Ենոքը ձեռքերն ինքնագոհ չփեց եւ պատկերացրեց այն պահը, երբ սեղանակիցները եւ յատկապէս այդ խնամիները չչման բրար են նայում։ Դէ, Թող հիմա գնան ու իմանան, Թէ ով է Ենոք Խամդուչեանը, ինչ յարգանքի ու չրջապատի տէր։ Իսկ Վովան քիչ է ասել, Թէ գնծութեան մէջ էր։ Նա խիստ պայծառ էր տեսնում որդու ապագան։

Ահա եկաւ եւ հարսանիքի օրը։ Մի կէս ժամի չափ նստելով աղջկայ տանը բացած համեստ սեղանի չուրջը, վերջապէս Ենոք Խամդուչեանը նչան արեց երաժիչտներին, ու սրանք երաժչտանման բան նուագելով՝ վեր կացան։ Խնամիներն էլ եկան տասը հոգով, բաւական համեստ պահուածքով, կամ բժիշկներ էին, կամ ուսուցիչներ։

Աւելորդ է ասել, Թէ ինչպիսի ճոխութիւն ազգանուններ էին արձակում հարսանեկան Թափօրի աւտոմեքենաները՝ ի լուր աշխարհի ազդարարելով, Թէ Ենոք Սամսոնի Խամդուչեանը որդի է ամուսնացնում։ Աւելորդ է ասել նաեւ, Թէ Թղթատրամների ինչպիսի տարափ էր տեղում, երբ պարում էին հարսն ու փեսան, Թէ ինչպիսի ինքնագոհութեամբ էր Ենոք Սամսոնովիչը «փիզուլի»ի ու կարաժի բանալիները յանձնում որդուն կամ սկեսուրը՝ զարդեղէնի տուփը հարսին։ Այս ամէնը, բնականաբար, բուռն հասկանալի է։ Աւելորդ է ասել նաեւ, որ խնամիները համեստօրէն նստել էին պատի տակ, սեղանի ոչ վերին մասում։ Նստել էին համեստօրէն, բայց արժանապատուութեամբ։

Իսկ հարսանիքը փոթորկում էր։ Ոչ միայն բնակարանը, այլեւ չէնքը դղրդում էր ուժեղացուցիչների միջոցով հնչող երգ ու նուագի զիլ ձայներից։ Ու երբ լմնրուել էին ըստ արարողակարգի կարեւոր կենացներից չատերը, սեղանապետը վեր կացաւ ու կէս ժամ տեւող բաժակաճառից յետոյ բոլորին ոտքի կանգնեցրեց՝ խմելու ոչ միայն որպէս օջախի մեծի, այլեւ մեծ ճանաչում ու յարգանք վայելող Խամդուչեանի կենացը։ Ու երբ չատերն էին իրենց սրտի խօսքն ասել օջախի գլխաւորին, չռայլելով իրենց ոչ այնքան հարուստ բառապաչարի ամենապեղեցիկ բառերը եւ թւում էր այլեւս բան չի մնացել ասելու, տանտիրոջ անկրկնակ ակնարկից յետոյ ոտքի կանգնեց մէկը, որը պրպտէ մարդու համբաւ ունէր բարեկամների չրջանում եւ որին Ենոքը վստահել էր հեռագրերը կարգալու պատիւն ու պատասխանատուութիւնը։ Սա, դնելով ակնոցները, պրպտելով հանեց հեռագրերի մի կապ։ Եւ հանդիսաւոր լռութեան մէջ հնչեց նրա ձայնը. «Թանկագին Ենոք Սամսոնովիչ, բարժանում ենք Ձեր երջանկութիւնը սիրելի Սամսոնի ամուսնութեան առթիւ։ Միչտ Ձեր Կարա-Մուրզա»։ Սեղանակիցները ծափ տուեցին, իսկ երաժիչտները կարճառօտ տուչ նուագեցին։ Յաջորդ հեռագիրը Յարութիւն Ալամդարեանից էր։ Տուչը կրկնուեց, իսկ Ենոքը հպարտ ժպտում էր։ Յետոյ ընթերցուեցին Գէորգ Ամչիեանի, Վարդգես Սուրէնեանցի, Պետրոս Ադամեանի, Նիկողայոս Տիգրանեանի, Գէորգ Դոդոխեանի, Սմբատ Շահազիզի եւ էլի չատերի հեռագրերը։

Սեղանակիցները ցնցուած էին ու ինքնամոռաց ծափ էին տալիս նուագի հետ։ Վերջին հեռագիրը Ղեւոնդ Ալիչանից էր։ Երբ հեռագրերի ընթերցանութիւնն աւարտուեց, պէտք էր տեսնել տանտիրոջ ինքնագոհ ժպիտը։ Նա ուղղակի փայլում էր երջանկութիւնից, իսկ մօրաքրոջ որդի Վովան զուր էր ձգտում նրա հայ-

եացքը որսալ: Յետոյ նրա հայեացքը կանգ առաւ խնամիների վրայ: Երեւի նախանձից հարսի հայրը ճակատն էր սրբում ու հայեացքն ուղղել էր ներքեւ, իսկ միւսները ինչ-որ բան էին քչփչում:

Պարզ է, նոր էլ հասկացել, թէ ինչ մասչաարի մարդու հետ են խնամի դարձել: Եւ ենոք Սամսոնովիչը բաժակ բարձրեց ու չնորհակալական խօսք ուղղեց բոլոր հեռագրողներին, յանկանալով նրանց երկար տարիների կեանք ու մեծ երջանկութիւն: Նրա հետ ոտքի կանգնեցին եւ միւսները ու խմեցին ցմրուր: Նստած մնացին միայն խնամիները:

Ենոք Սամսոնովիչը հաղիւ էր զսպում իրեն. այսքա՞ն էլ նախանձ լինեն մարդիկ: Ու երբ իրեն մի կերպ զսպելով՝ նստեց, վեր կացաւ նրանցից մէկը, երիտասարդ մի մարդ.

–Սիրելի բարեկամներ, մենք այժմ վկան եղանք մի զարմանալի պահի: Հայկական տօներից չատերի անուններից չնորհաւորական հեռագրեր ընթերցուեցին, որոնք ուղղուած էին մեր սիրելի խնամուն: Սամսոնովիչն ինքնագոհ վեր կացաւ, մաքում ներելով նրանց նախանձը: Ա՛յ, այդպէս կը պարտուէք, մաքում ասում էր նա: Իսկ Վռնան ցնծութեան մէջ էր, նա իր տղայի աշխատանքի հարցն արդէն լուծուած էր համարում:

– Ես ցանկանում եմ խմել այն մեծերի առողջ յիշատակին, որոնց անուններից հեռագրեր ընթերցուեցին այստեղ. – եզրափակեց իր խօսքը կենաց խմողը:

– Ինչպէ՞ս թէ յիշատակին, – որոտաց ենոքը, – ջահել ջան, թէ խնամի չլինէիր, չէի ների: – Նա հեռում էր զայրոյթից: – Ո՞նց թէ յիշատակին, հեռու մեր տնից, հօ տխրութեան տեղան չի՞:

– Իսկ ո՞վ է հակառակն ասում, – զարմացաւ երիտասարդը, – ի հարկէ, ուրախութեան տեղան է, սակայն նրանք, ում անունից ընթերցւում էին հեռագրերը, չատ վաղուց կնքել են իրենց մահկանացուն:

– Ինչն են կնքե՞լ, – այլայլեց Սամսոնովիչը:

– Վախճանուել են, – կարճ կտրեց երիտասարդը:

Եւ ասես նրա ասածը նոր տեղ հասաւ տեղանակիցներին, ու մի ուրախ քրքիջ պայթեց:

Իսկ ենոքն էլ նոր ըմբռնեց ասուածն ու փլուեց աթոռին:

Այժմ նրա դէմքը յուսահատութիւն ու կատաղութիւն էր արտայայտում: Նա աչքերով դուր էր որոնում մօրաքրոջ որդի Վռնային: Սա, խնամու վերջին բառերը լսելով, ինչ-որ բան կռահել էր ու արագօրէն դուրս ծլկել, մաքում հրաժեշտ տալով ոչ միայն տղայի ապագայ աշխատանքին, այլեւ իր ներկայ եկամտաբեր պաշտօնին: Իսկ տեղանակիցների ծիծաղը չարունակւում էր...:

Սուրբ Ծնունդեան խորհրդածութիւն

—o—o—o—o—o—o—o—o—o—o—o—o—

ԾԱՆՕԹ. -

1940-ին երբ ժամ - Փոլ Սարթրը գերի ինկած էր Գերմանիոյ մէջ, բանտին մէջ, հանդիպեցաւ բարեկամ Քահանայ հայրերուն, որոնք իրմէ խնդրեցին գրել թատերական գրութիւն մը Սուրբ Ծնունդեան հսկումին համար:

×

ՍՈՒՐԲ ԿՈՅՍԸ ԳՈՒՆԱԹԱՓ՝
ԿԸ ԴԻՏԷ ԻՐ ՋԱՒԱԿԸ

Պէտք է նկատել անոր դէմքը, որ արտակարգօրէն մտատանջ է, որ մարդկային դէմքին վրայ միմիայն անգամ մը յայտնուած է: Որովհետեւ Քրիստոս իր զաւակն է, Անոր մարմինը՝ իր մարմինն է, Անոր մարմինը՝ իր մարմնէն, եւ իր որովայնի պտուղն է: Կոյսը կրեց զինք ինը ամիս եւ պիտի դիտնայ զԱյն, եւ այս կաթը Աստուծոյ արիւնը պիտի դառնայ:

Կան առեններ, ուր փորձութիւնը աւելի զօրաւոր ըլլալով՝ Կոյսը կը մոռնայ որ Ան Աստուած է: Զայն կը սեղմէ իր սրտին վրայ եւ կ'ըսէ. - «Իմ Զաւակս»: Բայց ուրիշ առեններ, ան չփոթած կը մնայ եւ կը մտածէ. Աստուած այստեղ է, և կրօնական երկիւղ կ'ունենայ այս լրիկ - մնջիկ Աստուծոյ համար, այս զարհուրեցնող Զաւկին համար: Բոլոր մայրերը, նոյնպէս՝ պահ մը կանգ կ'առնեն իրենց մարմինէն ծնածին առջեւ, որ իրենց զաւակն է եւ կը զգան օտարացած այս նոր կեանքին հանդէպ որ իրենց կեանքէն սեռած է եւ չաղուած օտար մտածումներով: Բայց ոեւէ զաւակ աւելի անգութօրէն եւ աւելի արագօրէն փրցուած չէ իր մօրմէն, որովհետեւ Ան Աստուած է կ'անցնի բոլոր սահմանները որ Կոյսը կրնայ երեւակայել...:

Բայց ես կը խորհիմ որ կան ուրիշ առեններ, արագ եւ սահուն, ուր Կոյսը կը զգայ նոյն առէն որ Քրիստոս իր Որդին է, այս պզտիկը՝ իրենն է, եւ որ Աստուած է: Ան կը դիտէ զինք եւ կը մտածէ. «Այս Աստուածը իմ զաւակս է: Այս աստուածային մարմինը՝ իմ մարմինս է: Ան ինձմէ եղած է, Ան իմ աչքերս ունի եւ բերանին ձեւը քերնիս ձեւը ունի, Ան ինծի կը նմանի: Ան Աստուած է եւ ինծի կը նմանի»:

Եւ ոեւէ կին այս կերպով իր Աստուածը միայն իրեն համար չէ ունեցած, Աստուած մը՝ որ չատ պզտիկ է, որ կրնայ իր գիրկը առնել եւ համբուրել, Աստուած մը՝ այնքան տաք է որ կը ժպտի եւ կը շնչէ, Աստուած մը՝ որուն կարելի է դպչիլ եւ որ կը խնդայ: Եւ այսպիսի պահերէն մէկուն մէջ է որ ես պիտի նկարէի կոյս Մարիամը եթէ արուեստագէտ նկարիչ մը ըլլայի:

Թարգմանեց՝
ՎԱՉԷ Ծ. ՎՐԴ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ժառանգաւորաց Վարժարանի սրահէն ներս, վերջերս, նչուած է տօքթ. Կարօ Կարապետեանի (Անել) պրական գործունէութեան քառասնամեայ յոբելեանը, նախաձեռնութեամբ Հայ Երիտասարդաց Միութեան: Բացումը կատարած է Յակոբ Անդրէասեան: Յոբելեարին կեանքը ներկայացուցած է Սահակ Գալայճեան: Ծնած 1922-ին Երուսաղէմ. նախակրթութիւնը ստացած է Ս. Թարգմանչաց Վարժարանը, ապա՝ Ֆրէրներու Գոլէժը: 1940-ին մեկնած է Պէյրութ՝ իբրեւ բժշկական ուսանող: Տօքթ. Կարապետեանի քերթուածներու առաջին հատորը՝ «Մութ ցաւեր», հրատարակուած է Անել գրչանունով, 1945ին՝ Երուսաղէմ: 1949-ին լոյս տեսած է «Տեսիլք գինովի» բանաստեղծութիւններու հատորիկը, իսկ 1955-ին՝ երրորդ հատոր մը՝ ««Պարը յոյսին» խորագրով: Նոյն տարին անցած է Միացեալ - Նահանգներ՝ Պոսթընի Հարվարտ համալսարանին մէջ սրտի մասնագիտութիւնը կատարելագործելու համար, որու ատարձին հաստատուած է Պոսթըն: 1975-ին լոյս տեսած է Անելի «Որդի մարդոյ» վէպը (Երուսաղէմ), որուն յաջորդած են բազմաթիւ քերթուածներ ու պատմուածքներ: Ներկայիս կ'աշխատի վէպի մը վրայ: Բանախօսած է Թորգոմ Արք. Մանուկեան, անդրադառնալով այն պայմաններուն, ուրկէ անցած է Անելի կեանքը, անոր ուսումնական տարիներուն, ապա պիտական աշխարհի հետ անոր չփումին եւայլն, ապա նաեւ վերլուծելով յոբելեարին վաստակը: Շնորհակալութեան խօսք արտասանած է տօքթ. Կարապետեան: Թորգոմ Արք. Մանուկեան յոբելեարին յանձնած է Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհած Ս. Մեսրոպ - Մաշտոց Ս. Սահակ Պարթեւ ոսկի մետալը: Փակման խօսքը արտասանած է Գարեգին Արք. Գազանճեան, գնահատելով Անելի դերը՝ Սիփւռքի հայ գրականութեան մէջ:

×

ԼՈՍ ԱՆՃԼԼԷՍԻ մէջ, Դեկ. 13–ին, իր մահկանացուն կնքած է Ֆերահեան վարժարանի հոգարարձութեան անեն-պետ Պաչիկ Շահիկեան, 59 տարիքանին: Եղած է գործունեայ եւ նուիրեալ դէմք մը գաղութին մէջ: Առաջնորդարանը իբրեւ գնահատութիւն ողբացեալի ծառայութեանց, կատարած է ազգային յուղարկաւորութիւն, Դեկ. 18–ին: Այդ օր փակ մնացած է նաեւ Ֆերահեան վարժարանը:

×

ԼՈՍ ԱՆՃԼԼԷՍԻ «Պոնավանթիւր» պանդոկին մէջ, Դեկ. 16–ին, տեղի ունեցած է ճաշ մը, ի պատիւ Քալիֆորնիոյ նահանգապետ Ճորճ Տէօքմէճեանի: Ճաշին նպատակը եղած է 1986ի ընտրապայքարին համար նահանգապետին վերընտրութեան ծախքերուն նիւթականը ապահովել: Երեկոյթը վարած է ամերիկեան ձայն – հեռատեսիլի ծանօթ դէմքերէն Մորի Ամսթերտամ: Ներկայ եղած են 2600 հոգի, մեծ մասամբ՝ Հայեր: Նահանգապետի ընտրապայքարի յանձնախումբին առենապետը Քարլ Սամուէլեան հաշուետուութեամբ մը բաց է, թէ 1980ի ընտրապայքարը արժած է 8 միլիոն տոլար, հետեւաբար 1986–ի համար ալ առնուազն նոյնքան դրամ անհրաժեշտ է: Ասոնց առնելով Ճորճ Տէօքմէճեան թուած է այն իրագործումները, զորս կատարած է իր նահանգապետութեան շրջանին, անդրադառնալով նաեւ ապագայ ծրագիրներուն:

×

ՄՈՆԹԵԳԼԼՈՑԻ «Բազրամեան» սրահին մէջ, Նոյեմբեր 23-ին, տեղի ունեցած է Համազգայինի տարեկան ճաշ - պարահանդէսը: Բացումը կատարելով հանդիսավարը՝ Գէորգ Պետիկեան, անդրադարձած է Համազգայինի առաքելութեան: Հ. Ց. Դ. Դրօ Կոմիտէութեան կողմէ խօսք առած է Նշան Սարաֆեան: Համազգայինի վարչութեան առենապետը՝ Անդրանիկ Գասպարեան, անդրադարձած է մասնաճիւղի իրագործումներուն: Շրջ. Վարչութեան խօսքը փոխանցած է Նշան Յովհաննիսեան: Հանդէս եկած են «Սեւան» պարախումբը, երգիչ Անդրանիկ Մաթոսեան եւ «Հայ Սթարզ» նուագախումբը:

×

ԹԵՀՐԱՆԻ «Արարատ» կազմակերպութեան սրահին մէջ, Դեկտեմբեր 9-ին, նչուած է Դանիէլ Վարուժանի ծննդեան հարիւրամեակը: Բացումը կատարած է Թորգոմ Տէր - Ցակոբեան: Վարդգէս Բաշեան ներկայացուցած է Դանիէլ Վարուժանի կեանքն ու գործը: Արտասանուած են բանաստեղծէն գործեր: Լարաւոր հնդեակ մը մեկնաբանած է հատուածներ Լուդվիկ Բաղիլի «Հային երգը» գործէն: Փակման խօսքը արտասանած է Թեմին առաջնորդը՝ Արտակ Արք. Մանուկեան:

×

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ «Արմէն» Վարժարանի հիմնադրութեան 105-ամեակի հանդիսութեանց շրջագիծին մէջ, Նոյեմբեր 23-ին եւ 24-ին, ներկայացուած են Հ. Վահան Յովհաննիսեանի «Լեզուն որ կը մեռնի» թատերախաղը, բեմադրութեամբ Տիգրան Տէր - Մարտիրոսեանի: Դեկտեմբեր 5-ին եւ 6-ին հանդէս եկած են Ս. Մեսրոպեան վանքի եւ հայ մարզա - մշակութային միութեան ««Կռունկ» երգչախումբերը,ղեկավարութեամբ Վրէժ Մելիքեանի:

ՃԷՄԻԱ

ՃԷՆԿԻԶ ԱՑԹՄԱԹՈՎ

Առուակը մնաց աւազներու տակ. տեղ տեղ աւազակոյտերու վրայ մութ կանանչ ու դեղին մամուռներ բուսան: Ազազուն, մերկացած ուռենի մը չիկացաւ անժամանակ ցուրտէն: Մինչդեռ բարտիներու դեղնած, թաւ տերեւները թափած չէին տակաւին:

Ձիապաններու ծուխէն սեւցած, անձրեւներով լուացուած վրաններն կը ցցուէին ողողուած հողերուն վրայ, չոգիի վերածուած ջուրը անոնց բերնէն կ'ելլէր կապոյտ ծուխի նուրբ երիզներով: Վախ ձիեր կը խրխնջէին աչնան ցաւերով: Նժոյգները ցրուած էին, հիմակուընէ յայտնի կ'ըլլար թէ զարնան դիւրին պիտի չըլլար անոնք երամակէն հեռու պահել: Հօտը որ իջած էր սարերէն, կը չրջէր արտերուն մէջ: Ցաւ ունէր տափաստանը ու գունատեր էր թախիծով. անասուններու ոտնահետքը անհամար ճամբաներ գծեր էր անոր լանջքին վրայ:

Շուտով սկսաւ փչել տափաստաններու հովը, երկինքը մռայլեցաւ, ցուրտ անձրեւներ աւետեցին ձիւնը:

Օր մը երբ օդը լաւ էր բաւական, պետափ դացի. աւազաթլուրին վրայ վայրի մացառուտ մը նչմարեցի: Նստայ ուռենիներու պուրակին եզրին, որ չատ հեռու չէր առուակին անցքէն: Օրը կը մթնար: Երկու հոգի տեսայ, որոնց ամէկ մէկ չարժումէն յայտնի կ'ըլլար որ առուակին անցքէն կը դիմէին հանդիպակաց ափը: Տանիլարն ուձիմիլան էին ասոնք: Չէի յաջողեր ակարկս հեռացընել իրենց լուրջ ու մտահոգ դէմքերէն: Տանիլար չալկած էր տոպրակ մը ու կը յառաջանար ամրաքայլ, վերարկուին փէշերը ամէն քայլին կը բախէին իր մոյկերուն: Ձիմիլա փաթթուած էր ճերմակ վրանոցի մը մէջ, որ սահեր էր ծոծրակէն վար: Հագած էր ամենալաւ զգեստը. այն զոր կը սիրէր միշտ հագուիլ ու չորորալով քալել. իսկ անոր վրայէն ալ բամպակեղէն թաւիշէ բաճկոն մը ունէր: Մէկ ճեռքը բռնած էր փոքր կապոց մը, իսկ միւսով կառչած էր Տանիլարին տոպրակին փոկին: Թէ՛ կը քալէին, եւ թէ կը խօսակցէին:

Հիմա, ահա ձորակին մէջ արահետ մը, մացառներուն մէջէն կը յառաջանային: Ակնարկովս կը հետեւէի իրենց առանց գիտնալու թէ ինչ պէտք է ընեմ: Արդեօք հեռուէն ձայնէի՞. սակայն լեզուս կպած էր կարծես քիմքիս:

Արեւուն յետին չողերը կը սահէին լեռներու երկայնքին չարուած սեւ ու ճերմակ ամպերն ի վար: Օդը մթնեց մէկէն: Տանիլար ու ձիմիլա առանց աչ ու ձախ նայելու կը դիմէին դէպի երկաթուղին: Իրենց գլուխները երկու անգամ եւս ճօճեցան մացառուտին մէջէն յետոյ անեղութեան:

Ամբողջ ուժովս.

- Ձիմիլաաա՛, պոռացի:

Մենաւոր արձագանգ մը պատասխանեց կանչիս. աաա՛:

- Ձիմիլաաա՛, ճչացի դարձեալ:

Յետոյ ինքզինքս կորնչուցի. մտայ առուակին ջուրերուն մէջ ու սկսայ վազել իրենց ետեւէն:

Սառած ջուրին փրփուրը կը զարնուէր դէմքիս, զգեստս թրջած էր. սակայն կը չարունակէի վազել առանձ անցքի տեղը գտնելու: Ոտքս կառչեցաւ բանի մը ու այդ արագութեանս մէջ ինկայ մէկէն: Ուռանց գլուխս վերցնելու երկարած մնացի այդպէս: Այտերէս վար արցունքս հեղեղմանի կը հոսէր: Կարծես խաւարը բովանդակ ծանրութեամբը իջեր էր ուսերուս: Գահաճ ծառերու խիտ ճիւղերը թախիծով կը հեծէին:

Հեծկլտալով.

- Ձիմիլա՛, ձիմիլա՛ ազազակեցի:

Բաժնուեր էի ամէնէն աւելի սիրածէս, ինծի ամենամօտիկ անձերէն: Գետինը երկարած այդ պահուս յանկարծ անդրադարձայ թէ կը սիրէի ձիմիլան: Այո՛, պատանի տակաւին, առաջին սէրս էր այս:

Դէմքս թաց թեւերուս մէջ թաղուած, երկար առեն մնացի այդպէս: Ես միայն ձիմիլայէն ու Տանիլարէն չէր որ կը բաժնուէի, բաժնուած էի իմ պատանեկութենէս:

Մութին, երբ յոգնասպառ տուն դարձայ, իրարանցում մը կար բակը: Ապահանդակներ կը չփորտային, մէկը ձիերը կը թամբէր: Գինով մը կոկորդին ամբողջ ուժովը կը պոռար.

- Այդ փողոցի չունը, այդ սրիկա՛ն աւելի առաջ վռնտելու էր զիւղէն: Ցեղին ճակատի մուրը: Չե՛ոքս չանցնի: Անցած տեղը ես սպաննեմ զայն ու յետոյ թող կախեն զիս եթէ ուզեն: Դատարկապորտն ալ մէկը գայ ու մեր կիները առեւանգէ հէ՞, չկա՛յ առանկ բան: Կարիճներ, չո՛ւտ ձեր ձիերը. ո՞ւր պիտի փախչի. կայարանը կը ձերբակալենք:

Սառեցայ մէկէն: Ո՞ւր պիտի երթային առանց քառասմբակ: Սակայն երբ տեսայ թէ ոչ թէ միւսներուն ուղղութեամբ, այլ դէպի կայարան սլացան, առանց մէկուն երեւելու տուն մտայ. հօրս մուշտակ վերարկուն քաշեցի գլխուս որպէսզի արցունքներս տեսնող չըլլար:

(Շար. 26)

ԻՍԻ
Ս· ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Կիրակի *Ճրագալոյց*: *Ժամը 10-ին ժամերգութիւն, 16·30-ին ժամերգութիւն եւ ընթերցում*: *Ժամը 17-ին պատարագ, 19-ին նախատօնակ*:

Երկուշաբթի *Ծնունդ*: 9·30-ին *ժամերգութիւն*, 10·30-ին *պատարագ*:

Ս· ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՌԻՋ

Երեքշաբթի, Յունուար 14, Տօն Ծնընդեան Սրբոյն Յովհաննու Կարապետի: Այսօր Սուրբ Յովհաննէս - Մկրտիչ Մայր եկեղեցւոյ անուան տօնն է:

Ժամը 10-ին պատարագ կը մատուցուի:

Պատարագի ատարին՝ հոգեհանգիստ կը կատարուի եկեղեցաչէն բարերար՝

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

եւ

ՄԱՆԹԱՇԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ

բոլոր ննջեցեալներուն համար:

YAN'S

SEJOUR DE SKI

à

TIGNES

— Du 2 au 8 Mars —

— *Pension complète*
— *Matériel*
— *Forfait*
— *Assurance*
— *Transport*
F. 2000

Réservation jusqu'au 8 Janvier :

Tél. : 45 - 89 - 20 - 48
48 - 61 - 29 - 49

ՏՕՆԱԲԱՌ

Սէն - Ժէռոմի Ս· Սահակ - Ս· Մեսրոպ եկեղեցւոյ թաղականութեան եւ Հ· Բ· Ը· Միութեան հովանաւորութիւնը վայելող երկօրեայ դպրոցին Ամանորի հանդէսը տեղի կ'ունենայ Յունուար 11-ին, Շաբաթ, ժամը 21-ին եկեղեցւոյ վերի սրբատը, դեկավարութեամբ, ուսուցիչներ՝ Տիկին Մայոտ Կարապետեանի եւ Պ· Խաչիկ Եըմմազեանի:

Ամբերդ· արտասանութիւններ փոքրիկներուն կողմէ:

Կը ներկայացուի արամախօսութիւն մը եւ գաւեշտ մը աշակերտներուն կողմէ:

Կը հրաւիրուին Թաղին եւ շրջակայքի բոլոր հայրենակիցները վայելելու համար հայկական օր մը եւ քաջալերելու համար մեր փոքրիկները:

Կաղանդ Պապային այցելութենէն վերջ հիւրասիրութիւն Թաղիս Կապոյտ Խաչի մասնաճիւղին կողմէ:

Imprimé sur les Presses
du Journal «Haratch»
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

MCA PARIS

GERARD CHALIAND

— spécialiste des mouvements révolutionnaires du Tiers Monde (du Kurdistan, d'Afghanistan)
— co-auteur du célèbre Atlas Stratégique
— fondateur du Groupement pour les Droits des Minorités (fondé en 1978 sur le modèle des Minority Rights Group)
— membre de la rédaction de la revue Esprit
— directeur de la collection Géopolitiques et Stratégies chez Fayard
— principal artisan de la session du Tribunal Permanent des Peuples sur le génocide arménien et responsable de la publication du Crime du Silence collection Champs chez Flammarion.

Présente

«*LE SEL DE LA VENGEANCE*»

de James T. HASHIAN

Vendredi 10 Janvie
à 20 heures 30

MAISON DE LA CULTURE ARMENIENNE
17, rue Bleue, 75009 Paris

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

վարիզեան իր 8 մասնաճիւղերով կը կազմակերպէ՝

ԱԻԱՆԴԱԿԱՆ

Ա Ն Ո Ւ Կ Ն Ե Ր Ո Ւ Ի Օ Ր Ը

Կիրակի, Յունուար 12, ժամը 14·30-ին
Salle LEOPOLD BELLAN
rue Léopold Bellan — 75002 PARIS

— *Գեղարուեստական յայտագիր մասնակցութեամբ* Կապոյտ Խաչի *դպրոցներու աշակերտութեան*:
— *Մանկական ժապաւէնի ցուցադրութիւն*:
— *Կաղանդ Պապան ծրարիկներ կը բաժնէ սրահի ներկայ բոլոր մանուկներուն*:
— *Ճոխ պիւֆէ պատրաստուած Կապոյտ Խաչուհիներու կողմէ*:

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է ՍԻՐՈՎ ՀՐԱՒԻՐՈՒԱԾ ԵՆ ԲՈԼՈՐԸ

A. S. HOMENETMEN - FRANCE

NOUVEL AN ARMENIEN

— Samedi, 4 Janvier —
de 20h.30 à l'aube

à l'*ORÉE du BOIS* (*Porte Maillot*)

animé par

ADIS HARMANDIAN

et l'orchestre HORIZON de PADOVA

— Réservation : 45 23 27 82 —

CRÉATIONS





Prix : 1800 F. TTC.

Gaby

Prix : 1400 F. TTC.

BIJOUTIER FABRICANT

G. AVEDISSIAN

Tél. 48 24 86 85
Mo Cadet, Montmartre

42, rue du Fg. Montmartre
Esc. 8, 2ème droite— 75009 PARIS

4.000 m² de mobiliers présentés en ambiance

Meubles Ghazarian

Z.I. Vitrolles
à 20km de Marseille

tél. 42. 89.27.47



"Բացառիկ զեղչ «Բառաչ»ի բաժանորդներուն"

OPTIMA Tours

ARMENIE

-- 1986 --

Pâques en Arménie

— Du 29 Mars au 12 Avril (via Kiev) ..... 6.050 F

Spécial Cérémonie du 24 Avril en Arménie

— Du 19 Avril au 3 Mai

(Prix et conditions de ce voyage nous consulter).

(Nos prix comprennent — le transoprt aérien, tous les transferts, la pension complète, le logement dans des hôtels de 1ère classe A en chambre double / bain, les excursions et visites mentionnées dans notre programme, l'ASSURANCE).

(Nos prix ne comprennent pas — la chambre individuelle, les boissons et les frais de nature personnelle, frais de visa 100 F.)

(Groupe minimum 20 inscriptions accompagnateur assuré par notre agence).

Renseignements et Inscriptions:

PARIS

Madame COUMRYANTZ Sonia

OPTIMA TOURS
12, rue Vignon — 75009 PARIS
Tél. : 47 - 42 - 10 - 35

LIC A 130

ԿԻՐԱԿԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
5
DIMANCHE
5 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՄԻՏՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԹԻՒ 101

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: (1) 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 500 Ֆ. - Վեցամսեայ : 260 Ֆ.
Արտասահման : Տար. 550 Ֆ. - Հատը : 3,00 Ֆ.

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.131 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.131

Կ'ԱՆՑՆԻ...

Գէորգը յիշելով

Ո՞վ պիտի կրնար առողջ պատասխան մը բանաձեւել այն հարցումին թէ ինչո՞ւ կը գրենք, պահանջը կը զգանք գրելու անկարելի, անցանկալի հեռուներու ճամբորդ սիրելիներու մասին: Անոնք հասցէ չեն այլեւս ու մեր խօսքը անոնց չի հասնիր: Թուղթին վրայ թափուած մեր նախասութիւն մը ի՞նչ կ'ըսէ եւ որո՞ւ: Թարմ կամ հինցած, լքուած հողակոյտի մը վրայ կանգնէ ոտ մը, փունջ մը ծաղիկ զետեղելու զործողութեան չի՞ նմանիր այս մէկն ալ: Ծաղիկները, որոնք պիտի դնէինք, գրին այնքան ուրիշներ իր ալ հողակոյտին վրայ: Հողակոյտ՝ որմէ ոչ իսկ հանգստարան կ'ըլլայ: Ի՞նչ հանդիսա ուրիշին, օտար հողին մէջ. հող՝ որ տառապանք, կսկիծ տալու ատակ էր միայն ու տուեր էր այդ ալ առատօրէն, չոայլօրէն: Այլեւս չատ ուշ է գրել մեղմելու համար իր այդ ցաւը. ան ոչ իսկ ցաւ ունի այլեւս. իսկ հոս՝ ամէն մարդ իրը. միշտ նոյն առատութեամբ բաշխըւած: Ու առաւել՝ իր մեկնումին պատճառածը հիմա:

Ցաւ՝ կայքի մը որոնումին ճամբուն կոտրած երիտասարդութե՞ն համար, իր կարօտի՞ն, թէ մեր քիչ մը եւս թանձրացած առանձնութեան: «Այս աշխարքը չարերունն է. անոնք կը մնան. բարիները չուտ կ'երթան» պիտի ըսէր մամիկս, որ բարի էր ու ապրեցաւ լման դար մը: Իսկ մեր առանձնութի՞ւնը. խեղկատակ, ծաղրածու հայելիներու սրահն է ան, այլանդակ հայելի մը կ'աւելնայ հոն ամէն օր, ամէն մեկնումով:

Հողակոյտի վրայ ծաղիկ զետեղելու պէս, ցաւին արտայայտութեան, առանձնութեան տուած անզօրութեան դէմ բողոքի համա՛ր թող ըլլայ, կ'ուզեմ գրել:

Գրել այն տղուն մասին որուն մանկութեան թաղը ցից զառիվարներէ չինուած էր. սակայն բոլորն ալ դէպի ծովը կ'իջնէին: Զառիթափերուն պահակ՝ փայտաչէն հին ու մին տուները պէտք է բարութեան աւետարանը կարդացած ըլլային հոն, անոր հոգիին, թէ ան արդեօք ծովի՞ն սորված էր այդքան բարի մնալուն գաղտնիքը:

Զառիթափին ի վեր անցած տարիներ քէր էին զայն ծովէն հեռու, դէպի քաղաքին սիրտը: Իր մանկութեան թաղին անչուք եկեղեցիին խորանէն գիւրին ոստումով մը անցած չէր լոյսերու բեմը: Ինք ծով լինող ցից, ծուռ ու մուռ զառիթափներուն տգեղ էր միշտ. նոյն «հայր մեր» երգողն էր որ հիմա անոր քով կ'երգէր Սէվիլեան սափրիչ, Մանօն, Լա Պոհեմ կամ Գարմինա Պուրանա:

×

«- Քահանա՞յ. այո՛, կը ձեռնադրուիմ, պայմանաւ որ արտօնուի որ երգեմ, չարունակեմ երգիչի աստպարէգս. եկէ՛ք անդամ մը, տեսնելու թէ ինչ կ'ընեմ բեմին վրայ, յետոյ կու տաք ձեր որոշումը» ըսեր էր ան երբ օր մը առաջարկուեր էր քահանայ ձեռնադրուիլ: Հայ առաքելական եկեղեցիին մէկ քահանան պիտի երգէր նաեւ օփերաներու բեմէն: Որքա՜ն դարեր անցեր էին Կոմիտասի հալածուած օրերէն, որ բարի հովիւը գացեր էր դիտելու զայն բեմին վրայ:

Սակայն ո՛չ լուսաւոր մօտիկ ու հեռու բեմերու յաջողութիւնը, ոչ ալ գինքը հոն տանող յամառ կամքն ու աչխատանքը այդ տղան սիրելի դարձուցին այնքան, որքան իր սիրտը: Ոչոր, ծովուն չափ խոշոր իր սիրտը: Հին ու մին տուներուն դասը չէր մոռցած ան. երբե՛ք:

×

Օր մը -իրեն ու իրեններուն համար տրխուր, դժուար շրջանի մը- գացեր էի քաղաքի իրենց բնակարանը. պատին վրայ շրջանակուած ասեղնագործուած պատառ մը դրաւեց ուշադրութիւնս. ծակոտկէն, ճերմակ կերպասի մը վրայ կանանչ թելով բանուած էր «Կ'անցնի» բառը: Կը դիտէի առանց կարենալ իմաստ մը տալու, քիչ մըն ալ զարմացած, երբ ան փիլիսոփայի ժպիտով մը բացատրեց թէ կը սիրէր այդ ձեռագործը, որովհետեւ այդ միակ բառին մէջ կ'ամփոփուէր կեանքի ամէնէն պարզ իրականութիւնը: Ինծի այնպէս թուեցաւ որ այդ խօսքը իրեն համար համարժէք էր մխիթարութեան մը. անոր մէջ ամփոփուած կը տեսնէր ամբողջ կեանքի փիլիսոփայութիւն մը:

Ուրախ էի որ այդպէս էր. հետեւեալ օրերուն յաճախ խորհեցայ այն անձին մասին որ այդ բառը ընտրեր ու ասեղնագործեր էր զայն համբերութեամբ: «Կ'անցնի» այդքան պա՞րզ էր իրապէս ամէն բան:

×

Ցետոյ օր մը ինք եւս ելաւ պանդուխտի խաղը խաղալու: Զգիտցայ բնաւ թէ ուր հիմնուած է մեր գաղափարներու մերձակցութեան եւ ոչ թէ նկարչական որոշ ոճի մը վրայ՝ կիւրակուած խումբի անդամներուն կողմէ» (2): Ամբողջ՝ հոս՝ արտանկարչական դրդում մըն է բացայայտ կերպով: Մէկ խօսքով՝ Սփիւռքի մէջ հայ արուեստագէտի գոյութեան հարցն է: Այդ հարցը կը խոստովանիմ որ իմ հասկութենէս անդին կ'իյնայ:

Բայց ուզեցի ցոյց տալ, որ տուեալ հարցը անդին կ'իյնայ նաեւ զուտ նկարչական մտահոգութիւններէն: Այդ է, մահը կը նշէր նկարչական տեսարանութեան ու տեսողութեան ձգտումը՝ դէպի ինքնիշխան, «ինքնաւար» (օբինա)վիճակ մը: Ամբողջ տարբը «գաղափար»ն էր թերեւս, բայց խմբումին բուն զրդապատճառը՝ զուտ նկարչական «գաղափար»ի մը հետապնդումը: Մինչդեռ «Ակ» խմբաւորումը իր հանգանակաձեւ յայտարարութեան մէջ կը գրէ հետեւեալը. «Մեր խումբին կազմութեան մէջ գոյութիւն ունի հասարակաց առաջնակարգ կէտ մը, որ կ'ըսէ Ռուբէն Նաճարեան հարցազրոյցի մը մէջ. «Հայ նկարիչի մը գործը կրնայ զանազանուիլ ընդհանուր նկարչութեան մէջ, բայց ինծի համար գոնէ, չատ դժուար է ճշդել զայն զատորոշող եզրերը» (3):

Ինչո՞ւ այն ատեն՝ այսքան երկար յառաջաբան մը խմբաւորումի հարցին չուրջ: Որովհետեւ բացատրել պէտք էր, որ այսօր՝ Ռուբէն իր նոր ու անձնական ցուցահանդէսով՝ իր նկարչական անհատականութեամբ է որ կու գայ երեւան: Ինքնահաստատ քայլ մըն է կատարուածը. էականը նկարչութիւնն է, մնացեալը երկրորդական է: Բայց երկրորդ պատճառ մըն ալ կայ: Նկարչութիւնը ընդհանրապէս՝ մարտահրաւէր մըն է, «խօսք»ին ուղղուած: Ինչպէ՞ս կարելի է խօսիլ նկարչութեան մասին: Վերանորոգ մտատանջութիւն մըն է այս՝ «խօսող»ին համար: Ինչպէ՞ս կարելի է խօսիլ, երբ ամէն խօսք նկարչութենէն դուրս կը սահի, այլ մարզերու եւ այլ մտահոգութիւններու մէջ կը գտնէ իր հիմնաւորումը՝ ընկերային, հաւաքական թէ «էնթակայական»: Քանի որ պարզաբանումի «էնթակայական» կերպն ալ ի վերջոյ՝ արտանկարչական է: Ինչպէ՞ս խօսիլ նկարչութեան մասին: Պատմական գիտելիքներո՞ւ տպաւինելով, թեքնիք հարցե՞ր հետապընդելով – ինչ որ ամէնէն խեղամիտը պիտի ըլլար, տպաւորութիննե՞ր արձանագրելով – ինչ որ ամէնէն սովորական վարմունքն է: Կամ ալ՝ նկարիչներու ըսածի՞ն վստահելով, երբ գիտենք թէ նկարիչը որ կը սկսի խօսիլ՝ նոյն գժուարութեան, նոյն անկարելիութեան մատնուած է ինքն ալ, նոյն տատանումին, աւելի վտանգաւոր ձեւով մը թերեւս: Եւ սակայն պէտք է խօսիլ: Ինչ որ չի նշանակեր ենթակայական ապրումներ արտաբերել, անհատական ու անհատապաշտ բնազանցութիւն մը միամտաբար վերատպրել, տպաւորութիւններու չարք մը հրամցնել, տեսնուածը խօսքի թարգմանել: Պէտք է խօսիլ, նկարչութեան դիմաւոր հրամայականն է թերեւս, որովհետեւ նկարչութիւնը նայուածքին ուղղուելով՝ պարապ մը կը ստեղծէ խօսքին մէջ: Այս պատճառով իսկ՝ հոս կատարածս տեղեկատուական կամ նկարագրական զեկուցում մը չէր կրնար ըլլալ, այդ կէտը դոնէ յստակ է: Խօսիլ, այսինքն նաեւ թափառիլ տուեալ մը նկարչութեան մը չուրջ, ամէն նկարչութեան չուրջ: Փորձել հաւասարիլ անոր գործած տպաւորութեան:

Մատնանչուած գժուարութիւնն ու անկարելիութիւնը ա՛լ աւելի բացայայտ է Ռուբէնի նկարչութեան պարագային, որովհետեւ ան թէեւ կերպարանաւոր նկարչութիւն է, այսուհանդերձ բացառիկ դուրկ է «գրական» պատկերացումներէ, որոնց չուրջ կարելի ըլլար ճառել: Այդ իմաստով՝ զուտ նկարչութիւն: Եւ զուտ առաջին հերթին՝ որովհետեւ Ռուբէնի կիրքը գոյն է:

×

Փարիզի այս ցուցահանդէսը Ռուբէն Նաճարեանի առաջին անձնական ցուցահանդէսը չէր. սակէ առաջ անձնական ցուցահանդէս մը տուած էր ան Մատրիտի մէջ 1981-ին, ու անոր «նիւթ»ին մասին ինքը կ'ըսէ հետեւեալը՝ «կ'ուզէի, նկարչութեան ընդմէջէն, տալ ներքին լռութիւնը, ներքին առանձնութիւնը...: Երաժիշտներ կան, որոնք փորձած են ոչ թէ առանձնանալ, այլ զատուիլ, ինքնամփոփուիլ, ուզած են լռել: Տարբեր բաներ են: Առանձնութիւնը, մեկուսացումը հըպարտ կեցուածք է առհասարակ, իսկ ինքզինք զատել, ամփոփուելու, խորհելու պէս ներսուզուիլ՝ լուսաւոր կեցուածք, տեսակ մը երանութիւն» (4): Լուսաւոր կեցուածք, տեսակ մը երանութիւն, այդ բառերը, իրմէ փոխ կ'առնեմ յատկանշելու համար իր նկարչութեան ընդհանուր ձգտումը, որ բացայայտ է նոր ցուցահանդէսին մէջ: Լոյսը խորհրդաւոր տարր մըն է, որովհետեւ չի պատկերացուիր ան, այլ պատկերը կարելի կը դարձնէ. չի տեսնուիր ան, այլ ինչ որ տեսանելի է՝ տեսանելի կը դարձնէ: Ինչպէ՞ս խօսիլ նկարչութեան մասին, երբ նկարչութիւնը պարապ մը կը ստեղծէ խօսքին մէջ, ինչպէ՞ս «պատկերել» լոյսը, երբ լոյսը կը նախորդէ ամէն պատկեր եւ ամէն պատկերացում: Նոյն հարցումն է թերեւս, երկու տարբեր ձեւերով դրուած:

(Շար.ը Դ. էջ)



Ձրաճկար (27×31) – 1984

ԹՂԹԵՂԷՆ ԵՐԱՆԳԱՊՆԱԿ

ROUPEN
AQUARELLES

Galerie Colette Bletel,
Décembre 1985.

Գրեց՝
ՄԱՐԿ. ՆԵԱՆԵԱՆ

Նոյեմբեր 28-էն մինչեւ Դեկտեմբեր 21՝ Ռուբէն Նաճարեան իր ջրանկարները կը ցուցադրէր Քոլէթ Պլէթել կալըրիին մէջ, Փարիզ, Շերչ-Միտի փողոցը: Ցուցահանդէսին առիթով է որ կը գրուին այս տողերը:

Փարիզի մէջ ասկէ առաջ՝ Ռուբէն խմբային ելոյթներ ունեցած էր, ի միջի այլոց՝ երբ «Ակ» խմբաւորումը, որուն մաս կը կազմէր ինք, ցուցահանդէս մը տուաւ, ի հարկէ հաւաքական ցուցահանդէս մը, Բարեզործականի սրահներուն մէջ, 1983ի վերջաւորութեան: Այդ առիթով՝ Միտք եւ Արուեստը էջ մը նուիրած էր յիշեալ խմբաւորումին (1): Ասկէ պիտի օգտուիմ անդրադառնալու համար պահ մը, ներածական նկատողութեամբ մը, նկարիչներու խմբաւորման ընդհանուր երեւոյթին: Խմբաւորումներու գոյութիւնը նկարչութեան մարզին մէջ գլխաւոր յատկանիշն է դարասկիզբի չրջանին: Խմբաւորումներ այդտեղ կը կազմուէին ու կը կազմալուծուէին տարագի մը ու տեսարանութեան մը չուրջ: Աւտր պատճառը հասկնալի է, երբ նկարիչը նոր կը գադրէր իր ինքնութեան եւ կազմաւորման ըկզբնաւորութիւնը կաճառի մը կամ դըպրոցի մը մէջ գտնելէ, ու կը փնտռէր հետեւաբար հաւաքական խարսխումի նոր ձեւեր: Բայց առկէ անդին՝ խմբաւորումներու գոյութիւնը, որ ամբողջովին ժամանակակից երեւոյթ մըն է, կը ցայտուրուի անով, որ նկարչութեան տեսարանութիւնը հետզհետէ դերակշիռ կարեւորութիւն կը ստանար: Տեսարանութեան մը հիման վրայ կը խմբուէին ու կը բաժնուէին արուեստագէտները: Տեսարանութեան սա մուտքն է կիրառումի մարզին ներս, որ կը յատկանշէ արդիական արուեստի ծնունդը, մասնաւորաբար՝ նկարչութեան պարագային: Տպաւորապաշտներէն ի վեր՝ նկարիչներու նայուածքը նկարչութեան վրայ զադրած է «միամիտ» ըլլալէ, ու նկարչութեան ապրումեան աւանդութիւնը սկսած է այդտեղ՝ հարցադրումի ենթարկուիլ: Ինչ որ կը նշանակէ, թէ այդ թուականէն սկսեալ՝ նկարիչներուն կողմէ զուտ նկարչական տեսարանութիւն մը կը փնտռուի, եւ ուրեմն՝ զուտ նկարչական տեսողութիւն մը: Խմբաւորումներու ծնունդն ու գոյութիւնը հետեւանք են այս ձգտումին, որովհետեւ այդ միակ բառին մէջ կ'ամփոփուէր կեանքի ամէնէն պարզ իրականութիւնը: Ինծի այնպէս թուեցաւ որ այդ խօսքը իրեն համար համարժէք էր մխիթարութեան մը. անոր մէջ ամփոփուած կը տեսնէր ամբողջ կեանքի փիլիսոփայութիւն մը:

Ուրախ էի որ այդպէս էր. հետեւեալ օրերուն յաճախ խորհեցայ այն անձին մասին որ այդ բառը ընտրեր ու ասեղնագործեր էր զայն համբերութեամբ: «Կ'անցնի» այդքան պա՞րզ էր իրապէս ամէն բան:

×

Ցետոյ օր մը ինք եւս ելաւ պանդուխտի խաղը խաղալու: Զգիտցայ բնաւ թէ ուր հիմնուած է մեր գաղափարներու մերձակցութեան եւ ոչ թէ նկարչական որոշ ոճի մը վրայ՝ կիւրակուած խումբի անդամներուն կողմէ» (2): Ամբողջ՝ հոս՝ արտանկարչական դրդում մըն է բացայայտ կերպով: Մէկ խօսքով՝ Սփիւռքի մէջ հայ արուեստագէտի գոյութեան հարցն է: Այդ հարցը կը խոստովանիմ որ իմ հասկութենէս անդին կ'իյնայ:

Բայց ուզեցի ցոյց տալ, որ տուեալ հարցը անդին կ'իյնայ նաեւ զուտ նկարչական մտահոգութիւններէն: Այդ է, մահը կը նշէր նկարչական տեսարանութեան ու տեսողութեան ձգտումը՝ դէպի ինքնիշխան, «ինքնաւար» (օբինա)վիճակ մը: Ամբողջ տարբը «գաղափար»ն էր թերեւս, բայց խմբումին բուն զրդապատճառը՝ զուտ նկարչական «գաղափար»ի մը հետապնդումը: Մինչդեռ «Ակ» խմբաւորումը իր հանգանակաձեւ յայտարարութեան մէջ կը գրէ հետեւեալը. «Մեր խումբին կազմութեան մէջ գոյութիւն ունի հասարակաց առաջնակարգ կէտ մը, որ կ'ըսէ Ռուբէն Նաճարեան հարցազրոյցի մը մէջ. «Հայ նկարիչի մը գործը կրնայ զանազանուիլ ընդհանուր նկարչութեան մէջ, բայց ինծի համար գոնէ, չատ դժուար է ճշդել զայն զատորոշող եզրերը» (3):

Ինչո՞ւ այն ատեն՝ այսքան երկար յառաջաբան մը խմբաւորումի հարցին չուրջ: Որովհետեւ բացատրել պէտք էր, որ այսօր՝ Ռուբէն իր նոր ու անձնական ցուցահանդէսով՝ իր նկարչական անհատականութեամբ է որ կու գայ երեւան: Ինքնահաստատ քայլ մըն է կատարուածը. էականը նկարչութիւնն է, մնացեալը երկրորդական է: Բայց երկրորդ պատճառ մըն ալ կայ: Նկարչութիւնը ընդհանրապէս՝ մարտահրաւէր մըն է, «խօսք»ին ուղղուած: Ինչպէ՞ս կարելի է խօսիլ նկարչութեան մասին: Վերանորոգ մտատանջութիւն մըն է այս՝ «խօսող»ին համար: Ինչպէ՞ս կարելի է խօսիլ, երբ ամէն խօսք նկարչութենէն դուրս կը սահի, այլ մարզերու եւ այլ մտահոգութիւններու մէջ կը գտնէ իր հիմնաւորումը՝ ընկերային, հաւաքական թէ «էնթակայական»: Քանի որ պարզաբանումի «էնթակայական» կերպն ալ ի վերջոյ՝ արտանկարչական է: Ինչպէ՞ս խօսիլ նկարչութեան մասին: Պատմական գիտելիքներո՞ւ տպաւինելով, թեքնիք հարցե՞ր հետապընդելով – ինչ որ ամէնէն խեղամիտը պիտի ըլլար, տպաւորութիննե՞ր արձանագրելով – ինչ որ ամէնէն սովորական վարմունքն է: Կամ ալ՝ նկարիչներու ըսածի՞ն վստահելով, երբ գիտենք թէ նկարիչը որ կը սկսի խօսիլ՝ նոյն գժուարութեան, նոյն անկարելիութեան մատնուած է ինքն ալ, նոյն տատանումին, աւելի վտանգաւոր ձեւով մը թերեւս: Եւ սակայն պէտք է խօսիլ: Ինչ որ չի նշանակեր ենթակայական ապրումներ արտաբերել, անհատական ու անհատապաշտ բնազանցութիւն մը միամտաբար վերատպրել, տպաւորութիններու չարք մը հրամցնել, տեսնուածը խօսքի թարգմանել: Պէտք է խօսիլ, նկարչութեան դիմաւոր հրամայականն է թերեւս, որովհետեւ նկարչութիւնը նայուածքին ուղղուելով՝ պարապ մը կը ստեղծէ խօսքին մէջ: Այս պատճառով իսկ՝ հոս կատարածս տեղեկատուական կամ նկարագրական զեկուցում մը չէր կրնար ըլլալ, այդ կէտը դոնէ յստակ է: Խօսիլ, այսինքն նաեւ թափառիլ տուեալ մը նկարչութեան մը չուրջ, ամէն նկարչութեան չուրջ: Փորձել հաւասարիլ անոր գործած տպաւորութեան:

Մատնանչուած գժուարութիւնն ու անկարելիութիւնը ա՛լ աւելի բացայայտ է Ռուբէնի նկարչութեան պարագային, որովհետեւ ան թէեւ կերպարանաւոր նկարչութիւն է, այսուհանդերձ բացառիկ դուրկ է «գրական» պատկերացումներէ, որոնց չուրջ կարելի ըլլար ճառել: Այդ իմաստով՝ զուտ նկարչութիւն: Եւ զուտ առաջին հերթին՝ որովհետեւ Ռուբէնի կիրքը գոյն է:

×

Փարիզի այս ցուցահանդէսը Ռուբէն Նաճարեանի առաջին անձնական ցուցահանդէսը չէր. սակէ առաջ անձնական ցուցահանդէս մը տուած էր ան Մատրիտի մէջ 1981-ին, ու անոր «նիւթ»ին մասին ինքը կ'ըսէ հետեւեալը՝ «կ'ուզէի, նկարչութեան ընդմէջէն, տալ ներքին լռութիւնը, ներքին առանձնութիւնը...: Երաժիշտներ կան, որոնք փորձած են ոչ թէ առանձնանալ, այլ զատուիլ, ինքնամփոփուիլ, ուզած են լռել: Տարբեր բաներ են: Առանձնութիւնը, մեկուսացումը հըպարտ կեցուածք է առհասարակ, իսկ ինքզինք զատել, ամփոփուելու, խորհելու պէս ներսուզուիլ՝ լուսաւոր կեցուածք, տեսակ մը երանութիւն» (4): Լուսաւոր կեցուածք, տեսակ մը երանութիւն, այդ բառերը, իրմէ փոխ կ'առնեմ յատկանշելու համար իր նկարչութեան ընդհանուր ձգտումը, որ բացայայտ է նոր ցուցահանդէսին մէջ: Լոյսը խորհրդաւոր տարր մըն է, որովհետեւ չի պատկերացուիր ան, այլ պատկերը կարելի կը դարձնէ. չի տեսնուիր ան, այլ ինչ որ տեսանելի է՝ տեսանելի կը դարձնէ: Ինչպէ՞ս խօսիլ նկարչութեան մասին, երբ նկարչութիւնը պարապ մը կը ստեղծէ խօսքին մէջ, ինչպէ՞ս «պատկերել» լոյսը, երբ լոյսը կը նախորդէ ամէն պատկեր եւ ամէն պատկերացում: Նոյն հարցումն է թերեւս, երկու տարբեր ձեւերով դրուած:

Ձեռքիս առջեւ կը յայտնուի մուխի չրջանակով մը պատէն կախուած այդ «Կ'անցնի»ն: Հիմա չար է սակայն ան ու չունի մխիթարողի իր փիլիսոփայ ժպիտը: Ցուրտ, խոժոռադէմ պատգամախօս մըն է այսօր, որ անտարբեր ցաւին, կարօտին, կը բեւեռէ չոր վերջակէտ մը. «Կ'անցնի»:

Ան չի գիտեր սակայն արեւելեան առածը որ կ'ըսէ. «Քաղցր ձայն մը միայն անմահ է այս կամարին տակ»: Ու այսօր կը բաւէ որ կոխեմ գործիքիս կոճակին, լսելու համար այդ ձայնը.

«Լռեց: Ամպերը եկան...»:

ԱՐՓԻ ԹՈՒԹՈՑԵԱՆ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՏԵՒԷՆ

- Նաւի՛ն... Նաւի՛ն...

Ամէն առաւօտ, մինչեւ երկրորդ յարկ երկարող մանկական կանչ եւ միշտ նոյն պատասխանը.

- Վայրկեա՛ն մը... կու գա՛մ:

Աստիճանները որոտացնող կօշիկներու վազքը կը հաստատէ իրօք թէ՝ վայրկեան մը եւս վար կ'իջնէ աղջնակը, կը բռնէ տղեկի ձեռքէն ու վազքը կը շարունակուի միասին:

«Ամէ՛ն». «ա՛լ չեմ ուզեր» կաթին առջեւ մղուող կռիւով կորսուած ժամանակը պիտի չահուի վազքի արագութեամբ:

Գիրք ունին պայուսակներու մէջ. թուղթ ու դունաւոր մատիտներ: Հեզել պիտի սկսին. թուանշաններ պիտի սորվին: Ծառ ու նապաստակ պիտի գծեն: Մազեր պիտի քաշեն. գողնոց պիտի պատռեն: Պիտի խնդան. պիտի լան: Չէրօներու պիտի արժանանան, բայց պիտի սորվին... պիտի սորվին անցեալ ու ներկայ. թագաւորներու անուն. նախագահներու կենսագրութիւն. ճերմակներու ու սեւերու տարբերութիւն. թուաբանական կանոններ. ազգային հպարտութիւն:

Կեանքը պայմանաւորուած է ա՛յդ օրէնքներով. յարաբերութիւնները ա՛յդ լծակներով կը հաստատուին. երկրագունդը կը թաւալի նո՛յն կանոններու դիտութեամբ:

Ուրեմն՝ պէտք է վազել. ոքնիլ. սորվիլ. մշակուիլ, որպէսզի վազը զազրին վազելէ, տառապանքէ եւ ապրին խոհուն մարդոց՝ խաղաղ ու երջանիկ կեանք...:

Այդպէս կը հաւատացնեն ծնողքները: Բարոյախօսներ ալ կը հաստատեն ու երախան կը հաւատայ իմաստուն խօսքերու, ինչպէս պիտի հաւատար ուրուականներու ու առասպելներու:

×

- Նաւի՛ն... Նաւի՛ն...

Վերջ գտած են կանչերը: Քանի տարի է անցեր: Մեծցած են աղջիկն ու տղան: Իրարու ձեռքերը օրօրելէն զատ, վազող Արման եւ Նաւին, հիմա իրարու մէջքերը կ'օղակեն՝ կաղնիի բունին փաթթուած բազեղի նման:

Կ'ապրին միասին՝ նախնական սարքաւորումով սենեակի մը շրջագիծին մէջ: Կօշիկ ու գուլպայ իրար խառնուած, տափաս ու փէշ զիրար գրկած, բարձ ու սաւան իրար պլլուած:

Արման եւ Նաւին չարաճճիներ ու ամխաներ հնչեցուցած էին պաշտօնատուներու, դրասենեակներու, առեւտրական ձեռնարկներու զանգակները: Շրջազգեստ՝ ոստայնի պէս հիւսուած, ծանօթ ու անծանօթ փողոցներ: Դիմած՝ անհատնում, անսպառ հասցէներու: Պոբվէյ, պաշօ, մեթրիզ կանգ առած էին Սամառիթէնի վաճառորդի եւ սրճարանի սպասարկուի պաշտօններու առջեւ:

Ա՛յս է եղեր աւետուած «խաղաղ ու երջանիկ ապրիլը»: Մինչդեռ, ամէն ոք կը խօսէր միայն դժուարութիւններու, պայքարներու, տագնապի, մղձաւանջի, անյուսութեան, մահուան մասին: Ցերիւրածոյ հէքեաթ էր ուրեմն պատմուածը. երեւակայութեան արտադրութիւն՝ Սանտրիօն, փօ տ'ան, Շա պօթէ: Դպրոցը սորվեցուցած էր բացասականը, ցնորականը եւ ո՛չ թէ դրականը: Զէ՛ր ուսուցած թէ՝ ինչո՛ւ կային կուշտեր ու անօթիներ. ինչո՛ւ ցոյցեր կը կատարուին, գլուխներ կը ջարդուին. պատերազմներ տեղի կ'ունենան: Ի՛նչ կը նշանակէր յառաջդիմական կամ ի՛նչն էր անոր հակիմաստը:

Մշակոյթի կաճառները ինտէէսի մէջ առած, արդիլած էին «վտանգաւոր գիտութեան» ուսուցումը:

Արման խեղկատակութիւն, մարդկային կատակերգութիւն կ'որակէր անօրինուած սարքաւորումը, մինչ ճակատագրապաշտ Նաւին, զոհ էր եղածովն իսկ:

- Երկնային մանանան չէ՛ անուեռած մեզ...:

Արման կը զայրանար կնոջ դիւրահաճութեան ու յիմարներու տեղ կը դնէր անհատներու անյաջողութիւնը «բախտի» ու «ճակատագրի» կապող թեթեւամիտները: Ճակատագիրն ու բախտը կը տանէին զինք «վտանգաւոր գիտութեան» ուսման պահանջին: Կը սերտէր նոր գիտելիքներ. նոր դպրոցի տեսութիւններ, կ'աղաչ, սուզակէ կ'անցընէր եւ կը դնէր Նաւինի բերնին մէջ, բայց ան կը դժուարանար մարսել եւ կ'ըսէր.

- Ապրուելիքը կեանք մըն է, սիրելիս: Ինչո՞ւ կ'ուզես ա՛լ աւելի բարդացնել երեւոյթները: Առաքինութիւն եւ խոհեմութիւն կը դիմադրեն դժուարութեանց:

Բարոյախօսի ստեղծած այդ բառերը ե՛ւ ծիծաղը կը չարժէին, ե՛ւ կը ջղայնացնէին Արմանը:

- Անոնց ամբողջ բովանդակութիւնը ենթարկուելու յորդորանք են միայն: Հլու հպատակ՝ հրամաններու: Զարթուցիչը խոհե՞մ է, երբ կը ստիպէ քեզ, քնատ ու յոգնած ոտքի կպնիլ չսպիկ ու վարտիկ ծախելու, երբ դուն զանոնք գնելու իսկ կարողութիւն չունիս:

- Ես առանց վարտիկի չեմ պարտիր, կը խնդար Նաւին, ծիծաղեցնելով ամուսինն ալ:

Մնդուք, ծիծաղ, ժպիտ ներքին հըրճուանքի ցոլացումներ չեն: Դէմքդ խաղ մը. կեղծիքի ու սուտի աքօղում: Գործատիրոջ ժպիտ. վաճառորդի ժպիտ. ապրանք վաճառելու կեղծիք. հաճելի երեւալու խարկանք:

Սուտի ու խաբեբայութեան կախարդանք մըն է ստեղծուած ու ամէն ոք կ'ապրի հմայական այդ կախարդանքին ներքեւ՝ կուլ տալով անոր կաթիլները, սուրճի կամ ալքոլի վայելքով:

«Վտանգաւոր գիտութիւն», «վազել՝ չվազելու համար», «խոհեմութիւն», «առաքինութիւն», «ճակատագիր», «բախտ»: Սուտերու հիւսք. իրար չաղկապուած օղակներու խաբեբայութեանց շղթայ: Հեռաւոր ժամանակներու մէջ կռանուած խարդախութիւն:

Աարդախութիւնը կը սկսի մօր կաթին հետ: Աարկանք է քեթինը. խարկանք՝ խաղալիկները: Աարեբայ լակոտներ չե՞ն ընկերները, ուսուցիչները, տնօրէնները, թերթերը, գիրքերը՝ գունաւոր կամ անդոյն կողքերով, խորհրդածութիւններու զրաւած տարածքով:

- Խոհեմութիւնը, անուշիկս, ուրիշներու հաշուոյն բանող լեզուամեքենայ է. նահապետական առողանութիւն՝ պարզամիտներու սահմանուած:

Նաւին կը զարմանար թէ ամուսինը ո՞ւր եւ ե՞րբ կրցած էր ա՛յդքան հնազանդուած գիտութիւն ամբարել: Դիւրութեամբ կը բացատրէր ան քաղաքական բարդութիւններու իմաստը. կը լուծէր կնճռոտ ընկերային «պաղտնիքներ»: Կարծես ամուսնոյն հանդէպ ունեցած հիացումը աւելի խորացնելու համար, կը դիմէր հակափաստերու: Կը վիճէին, կը գրկուէին եւ երբ իրարու ըսելիք ու ընելիք չունենային, դիւերուան չէին սպասեր իրարու եռանդը փոխադրելու՝ զիրար փնտռող մարմիններու միաձուլումի կատարութեան, ու սենեակը կը լեցուէր՝ թէյամանի եռացող ջուրի սուլոցներով, չնչահեղձ եղող կուրծքերու յաւիտենապէս կրկնուող երգի հնչիւններով.

- Կը սիրեմ քեզ...

×

- Թաթերը վա՛ր... նեղացաւ Նաւին: Սամառիթէնի ապրանք չէ՛ մարմինս:

Երեւի, վերակացուն, յաճախորդներու ցանցառութեան սպասած էր աղջկան յետոյքը ափերուն մէջ ճզմելու:

- Սամառիթէնի մեռաքսէն աւելի մեռաքսային է այս ապրանքը, յամառեցաւ մարդը, չոյանքը բարձրացնելով անոր կուրծքը:

Կուշտը խթանուած անասունի նման փրփրեցաւ աղջիկը եւ կոպիտ հարուածով մը հեռացուց հսկիչին բազուկը:

- Լաւ կ'ընես եթէ ակնոց գործածես. չիլ է տեսողութիւնդ... Ապրանքի նմանութիւն չունի այդ մարմինը:

Թունաւոր ծաղկի վրայ թառած էր մեղուն. մեղր քաղելիք ծաղիկը այս չէր...:

- Ցետամնաց գիւղացիի վարմունք ունիս: Իրա՛ւ որ, մօտեռն աղջիկ չէս, Նաւի՛ն:

Եւ բոլորովին անտարբեր հեռացաւ, քիչ մըն ալ հսկելու ուրիշ վաճառորդներու աշխուժութեան, տարբեր յետոյքներ...:

Մօտէ՛ռն ըլլալ... իւրացնել փորի եւ հակափորի մատուցման ազատական դասարախօսութիւն: Ընդունիլ՝ առաջարկուած բաժակը. չմերժել՝ պնակ մը կերակուրը: Գտնուիլ՝ կնամեծարութեան տրամադրութեան տակ: Հրամցնել՝ չըրթունքները: Պատրաստ ըլլալ տափանքի կոչին:

Նաւին, փոքր հասակին սորված էր մօտէռն ըլլալու նշանակութիւնը: Ստեղծել վէճ ու կռիւ վերակացուի եւ իր կնոջ միջեւ. թշնամացնել զանոնք իրարու. խանգարել զաւակներու ու ընտանեկան անդորրութիւնը: Անջրպետ բանալ Նաւինի եւ Արմանի միջեւ. արհամարհել սէր եւ դգացում. հռչակել անհատի անկախութիւն. թքնել ամուսնի երեսին եւ պոռնկութիւն. պոռնկացնել... քաղաքակրթական նոր սկզբունքներ. ձեւուած կերպա՝ անասուններու բնական վարմունքի վրայ:

Ա՛յդքան քաղաքակրթուած չէր Նաւինին: Կը նախընտրէր յետամնաց պիւղացի ըլլալ եւ ապրիլ Արմանի բազուկներուն մէջ, քան փէշը յանձնել՝ փչող առաջին հովի քմայքին:

Սամառիթէնն, փռէնթան, կալըրիներ վաճառատուներ չեն միայն: Գուլպայ, կերպաս, մեռաքս, պնակ, չերեփ, արտաքնոցի թուղթ ու տաչտ ծախող չուկաներ չեն միայն. այլեւ կուրծքերու, սըրտնքներու, յետոյքներու ցուցահանդէս: Ձեմելու, հիանալու, աչքեր յագեցնելու վայր: Ժամանակ վատնելու հանրային գրօսայգի: Գողութիւն զարգացնելու դըպրոց: Հսկիչներու ձանձրոյթը հաճոյքի վերածելու հանդիսասրահ:

Հանդիսասրահի դիմանկար, ցուցադրութեան դրուած առարկայ ըլլար կարծես Նաւին, որ ամէն ոք իրաւունք ունէր դպչելու, չոչելու, գնելու...:

Անբնական էր արգելք հանդիսանալ այդ գործառնութեան եւ Նաւին իրաւունք չունէր նեղանալու: Առաջին անգամ չէ՛, որ կը չօշափուէր իր մարմինը: Զինք լըւալու, լոգցնելու, հագցնելու պատրուակին տակ, մայրը տեւապէս չոչած էր մարմինը: Դպրոցի լակոտները ստեղծած էին կամիթէ, ճմրթկումի դրութիւն՝ մարմին չոչելու նպատակով: Արման ալ անհաշիւ դրամ չէ՞ր ծախսած զինք զգուեցնելու համար: Բայց հիմա, կերպասի տոկունութիւն հաստատելու ձեւով կը վարուէին իրեն հետ. խաղողի համը նայելու պէս, հատիկ մը բերան տանելով խածնել կը փորձէին...:

Շունի հոտառութեամբ, բայց քծնող ու յարձակող կատու մըն է արուն: Իր չուրջը գտնուղ իւրաքանչիւր առարկայ իր սեփականութիւնը կը կարծէ: Կը շրջի ուզած տեղը. կը նետուի բազմոցին. ուզած պահուն կը գդուէ կամ կը յանձնուի էդի գգուանքին: Թաթերուն մէջ կը խաղցընէ ճախարակ, գնդակ, քուրջի կտոր: Կը նետուի կնոջ բազուկներուն կամ կուրծքին վրայ:

Նաւինի միջադէպը կատակ մըն էր լոկ. չա՛տ հասարակ կատակ՝ հսկողին վարմունքը: Բայց ուրկէ՞ ստացած էր այդ համարձակութիւնը. ո՞վ տուած էր յետոյք ճմրթկելու արտօնութիւնը: Մեծաւոր եղած ըլլալու յանդգնութի՞ւնը թէ սրիկայի սրիկայ ախորժակը:

Արման իրաւունք չունէ՞ր երբ կ'ըսէր թէ «մարդ էակը անհատականութիւնը կը չփոթէ բռնութեան հետ»:

×

Արման դեղարան կը հոտէր: Շապիկը արիւնով ներկուած. թեւին մէկը փաթթուած:

Նաւին սարսափով, տեսած էր ամուսինը, երբ ան վերարկուն հանած, տեղաւորած էր աթոռին:

- Կոուեցա՞ր:

- Ճակատամարտէ կը վերադառնամ...:

- Պատահածը ի՞նչ է:

- Պատահականութիւն...:

- Պատահականութիւնը անուն ունի՞:

- Անխուսափելիութիւն... ո՛ւր ալ գըտնուիս, միջամտել իսկ չուզես, պատուհասը կու գայ, կը գտնէ քեզ:

Ցաւի ու տառապանքի կծկում չունէր բան պահուն, այլ դժգոհութիւն, բարկութիւն, բողոք եւ Նաւինի կը թուէր թէ՝ ամուսինը կ'ակնարկէ ի՛ր միջադէպին. կը պաշտպանէր ի՛ր գործը: Ինք, վաճառորդի հասարակ ժպիտ անգամ չէր չնորհած հսկիչին, սակայն «պատուհաս»էն չէր խուսափած: Եւ ահա՛, Արման «անխուսափելի պատահականութեան» իրողութիւն մը միջամեղ կը հանէր:

- Ցետո՞յ...

«Ցետոյ»ն այն էր որ՝ ճաչած պահուն, գաւաթներու առջեւ կատակող երիտասարդներէն մին տապալած էր իր վրայ՝ տապալելով սեղանն ու զինք, պնակներն ու չիրը: Փշրուած ապակիներ վիրաւորած էին թեւը, բայց ցաւի ճիչ արձակողը ինք չէր: Անկարելի է ըսել թէ՝ ի՛նչպէս ձեռքի պատառաքաղը մխրճած էր իր վրայ լինկող երիտասարդին վիզը:

«Ցետոյ»ն այն էր, որ չուտով փոխադրուած էին դրացի գլինիքը: Ինք՝ խնամուելէ ետք, վերադարձած էր դործին: Լուր չունէր միւսէն:

Նաւին հանդարտեցաւ: Մակերեսային էր Արմանի վէրքը եւ յանցաւոր չէար:

- Յանցաւորը զուարճութիւնն է. ապո՛ւշ կատակը. չարժո՛ւմը. հրմշտո՛ւքը. ճախատեսութի՛ւնը:

Իւրաքանչիւր բառ ծաղրանքով ու արհամարհանքով դուրս կը չպրտուէր՝ եղանակի մը երկարող խազերով: Աչխարհի վրայ չիւղ ձգելու տեղ չէ մնացած՝ պայթուցիկներու ու լուցկիի արտադրութեան առանդէն, երկինքի բոլոր աստղերը վար թափելու եւ ափոքալիփս ստեղծելու տենդային ջերմէ բռնուած են տղէտ եւ անբան գիտնականներ, մարդը՝ խելագարի խնդուքով կը խայտայ: Համաճարա՛կ խեղկատակութիւն: Ինջոյք ու արբեցում. կատակ ու ծիծաղ. հարսանիք ու կենաց. սեռ ու պոռնկացում. ամենապէսի յաւակնութիւն. Մերսեէսի ամբարտաւանութիւն:

Ցաւագարութեան միքրոպ մը կը չրջի ուղեղներու մէջ. արագավազութեան միքրոպ. ճիչդ ինչպէս՝ մանկութիւնը կը վազ երիտասարդութեան եռեւէն. երիտասարդութիւնը՝ ծերութեան եռեւէն. ծերութիւնը՝ մահուան եռեւէն. մահը՝ ժամանակի եռեւէն, մարդն ալ կը վազէ այդ բոլորին եռեւէն:

Վազք՝ դէպի դրամ. վազք՝ զօրաւոր կամ զօրավար նշանակուելու. վազք՝ քաղաքապլուխ, խորհրդական ընտրուելու. վազք՝ երեսփոխան, նախարար, նախագահ ըլլալու:

Թշուառական մահ. անմիտ մարդ. չեն դիտեր որ ժամանակ գոյութիւն չունի: Կ'անդիտանան որ արեւը կը ստեղծէ ժամանակի հասկացողութիւն: Ցերեկն ու գիշերը կու տան ժամանակի հոտառութիւն: Տարուան եղանակները կը վերածուին ժամանակ բացատրութեան, եւ խենթի պէս կը վազեն անդոյ ունայնութեան եռեւէն:

- Աչխարհի ծանրութիւնը քու վրա՞յ բեռցուած է: Դո՞ւն պիտի յեզաչրջես մըտայնութիւնները: Ո՛չ կախարդ ես, ո՛չ Կոլտորաք: Ապրէ՛ քեզի սահմանուած կեանքը:

- Կ'ուզես որ խոյնջի՞ վերածուինք, երբ իմացականութիւն ունինք եւ պոռալու ձայն:

Ինքն ալ վազեց ժողովի ու ցոյցի. տեսաւ ընկեր ու ժողովուրդ. բան չփոխուեցաւ: Վիճելով, սիրելով, պնակ լուալով ապրեցաւ իր կեանքը Նաւինի ըսածին պէս, մինչեւ որ արգանդէ եկած, կինը գընաց հողի արգանդ եւ ինք՝ լուռ, միայնակ, յուսահատ՝ փոթորիկի յանձնուած չիւղ:

Ծռուայոյզ տենչեր, խաւարի մէջ երերտրկող տեսիլքներ, երդիքէ կախուած երազներ սառուցակոյտերու պէս մնացին քարացած:

×

Մաշած, սպառած մարմին մը կը տքայ հանրային պարտէզի նստարանին վրայ: Դողդոջուն ձեռքերու մէջ, ծխամորճը կը միայ տարիներու հեւքը: Թուփեր, ծառեր, արեւ ու չուք կ'օրօրուին աչքերուն առջեւ: Մօր դիմաստուերներ հակած են փոքրիկ կառքերու մէջ ննջող մանկիկներու վրայ: Ուրիշ մանկիկներ՝ աւազի մէջ տապլտկած: Փափաճօլորիկը երկինք կը բարձրանայ, երկիր կ'իջնէ: Սահնակի գպգաթը կը մագլցին ու կը գահավիժին յանկարծ՝ իրարու եռեւէ:

Քաղքենիին տակէն, Արմանի մանկական ամբողջ աչխարհն է որ կը պարզուի: Ե՞րբ էր այդ. տա՞նը, քա՞ն, հարի՞ւր տարի առաջ: Հա՛, կը յիչէր... կա՛ր Նաւինը. իր ձեռքէն չբաժնուող չարաճճի աղջիկը: Կայի՛ն կռուազան ընկերները. նախանճոտ ժիւլին. ամբարտաւան Ժանը: Կա՛ր նաեւ միւս Նաւինը՝ գրաւիչ դիցուհին. մահիճը արբեցնող, կեանքը երանգաւորող կինը. խոհանոցի ծառան. իր մարմնի մէկ մասնիկը: Կային նաեւ միւս ընկերները. ցոյցի ու պայքարի հաւատարիմները գազափարի ու իտէալներու հաւատացողները. խումբը: Ո՞ւր են. ի՞նչ եղան այդ բո-

ՈՒՐ Է ՏԷՐԵԱՆ

Ո՞ւր է Տէրեան. իր աչխարհը քաղա՞քն է, թէ դիւղը: Տարօրինակ կրնայ թուիլ նման պարզ հարցադրում մը՝ բանաստեղծի ծննդեան հարիւրամեակին, իր մասին ամբողջ վաթսունըհինգ տարիներ ետք: Սակայն երկու պատասխաններ կը ներկայանան: «Տէրեանը քաղաքային բանաստեղծ է». «ոչ, հայրենի դիւղն է իր աչխարհը»: Ընդունուած են ու տարածուած՝ այս երկու հակադիր կարծիքները: Արդ, առաջին, ինչպէ՞ս գոյատած է իւրաքանչիւր կարծիք, եւ երկրորդ, ո՞ւր կը գաղթի վէճը:

Առաջին պատասխանը ներկայացուցինք որպէս հաստատում մը, իսկ երկրորդը՝ որպէս ժխտումը այս հաստատման, որովհետեւ այդպէս եղած է իրենց թէ՛ կարդն ու թէ՛ ձեւը: Երկար ժամանակ Տէրեանի քաղաքի բանաստեղծ ըլլալը չփաստուած ճշմարտութիւն մըն էր, որ յետոյ ժխտուեցաւ «փաստ»երով:

. . . . .

Փնտռենք այն եղրերը որոնք թերեւս յանգեցան առաջին կարծիքին: 1908–ին հրատարակած իր «Մթնշաղի Անուրջներ» հատորով, բանաստեղծը կը ներկայանար լեզուով մը, գոնուած այն բոլոր տարրերէն որ կը դերիչխէին Ցուվհաննէս Թումանեանի լեզուին մէջ: Ժողովրդական, բարբառային տարրերու բացառումով, գրական հայերէնն էր որ կը յայտնուէր, «քաղաքակիրթ» հայերէնը, եւ, իմաստի ձգձգմամբ, «քաղաք»ի հայերէնը: Առաջին այս երգին ապագային կը միանար երկրորդ մը. բանաստեղծը իր կեանքի մեծամասնութիւնը անցուցած է քաղաքներու մէջ՝ Մոսկուա, Թիֆլիս, Պաքու...: Առաջին եղրը թերի տրամաբանութիւն մըն է, իսկ երկրորդը՝ վրիպում մը, որովհետեւ փաստերը, եթէ կան, պէտք է տրամադրէ ինքը՝ բանաստեղծութիւնը:

Սակայն «փաստ»երը կը ներկայացուին հակադրուող խումբին կողմէ: Քաղաքը միայն քանի մը քերթուածներու մէջ կը ներկայանայ, մինչ դիւղական բնանկարը, այլեւայլ իր մանրամասնութիւններով՝ բազմաթիւ: Իսկ այդ քանի մը քերթուածները բնաւ չեն յայտներ բանաստեղծին սէրը:

«Քաղաք» վերնագրուած երկու քերթուածներու մէջ բացայայտ է ատելութիւնն ու պժգանքը.

Ձեր շքեղ շէնքերի ծանրութեամբ
սրտմաշուկ,
Ձեր ահեղ բերդերի համրութեամբ
վերամբարձ,
Քաղաքնե՛ր, ձեր մէջ կայ դժոխքի մի
շշուկ,
Քաղաքնե՛ր, ձեր բանտից արդեօք կա՞յ
վերադարձ:

իսկ երկրորդին մէջ իր իսկ անկումն է որ կը պատրաստէ քաղաքը.

. . . Ես դղեակներում
Ուր օրգիաների կոշմարն է խօսում,
Ես խնճոյքների լպիրշ հառոսում –
Ալ–ուրուականն իր դաշոյնն է սրում:

«Ձմռան Գիշեր» քերթուածին մէջ, քաղաքը կը կամազրկէ, կը մտազրկէ բանաստեղծը ու կը մղէ զայն աննպատակ քալելու.

Երկար, անդադար մայթերն եմ
մաշում.
Շրջում եմ անվերջ, երբեմ չեմ
յոգնում,
Ոչինչ չեմ յիշում, ոչինչ չեմ յիշում:

Հոգիին ամլացումը դրեթէ բացարձակ է. կարելի է լալ միայն.

Ես լուռ անցնում եմ փողոցից փողոց
Ու մեղմ լալիս եմ ցուրտ մշուշի մէջ:

Նման ամլացումէ մը բանաստեղծը կրնայ փրկուիլ իր երեւակայութեան ուժով: «Թափառական» քերթուածին մէջ, որ «Ձմռան Գիշեր»ին չարունակութիւնն է, կամ սկիզբը, կը կարդանք.

Նորից կը թողնեմ բաղաքն աղմկոտ
Ու ճամբայ կ'ընկնեմ յաւէտ միայնակ.
Անխօս կը մարի երեկոն աղօտ,
Կը պառկիմ դաշտում կանաչ ծառի
տակ:

Քաղաքին պարտադրած պատերուն քանդումէն ետք, ղգացումներու յորդառատ, անարգել բխումն է ապատելին, ու մինչ ներքինը կ'արտարխի, արտաքինը կը հոսի ներս.

Հեռուստր մարդոց ցաւերը կը զգամ,
կարկաչուն ջրի լացը կը լսեմ.
Հողը կը գրկեմ, ջերմ կը հեկեկամ,
Վառ աստղերի հետ անուշ կ'երազեմ:

Դաշտ, աղբիւր եւ աստղ, – այստեղ է բանաստեղծի փրկութիւնը: Եւ հակադրուող խումբը այժմ կրնայ ներկայացնել գիւղական բնապատկերներու երկար չարք մը:

Սակայն դժուար է փաստերով համոզում մը քանդել: Առաջին խումբը կը պատճառաբանէ. «Արտաքին երեւոյթները հակառակը կը ստորագծեն, սակայն, պէտք է ըլլայ թաքուն երակ մը, հիմնաթելը թերեւս համոզումիս, զոր պէտք է փնտռել ու գտնել»:

Վիճաբանութիւնը ծառայած է իր նպատակին: Յօդուածագիրը կը ձեռնարկէ հիմնաթելի բացայայտման:

. . . . .

Քնքուշաբոյր ծաղիկների թերթերում,
Լոյս դաշտերի խաղաղ նիրհող
ովկիանում,
Ու աստղազարդ, խորհրդաւոր
գիշերում,
Ու ջրերի արծաթաճօճ օրրանում:

Տէրեանի սիրած գիշերային աչխարհն է: Այստեղ կը շրջի իր աներեւոյթ սէրը, կը համայէ, կը կանչէ ու կը լռէ:

Կը հետեւինք պատկերներուն եւ պատկերէ պատկեր անցումներուն: Անծայրածիր դաշտերու համայնապատկեր մըն է որ կրնայ աւարտիլ միայն երկինքով, երկինքով որ ջուրերու մէջ կը հայի: Դաշտերը «ովկիան» են որովհետեւ կ'երկրին հորիզոնէ հորիզոն: Այս ովկիանին հետ բաղդատած, ջուրերը լճակ կրնան ըլլալ միայն, կամ առու: Աստղազարդ երկինքը լոյս կու տայ «խաղաղ նիրհող», դրեթէ անշարժ դաշտերուն, կը ցոլանայ նաեւ ջուրերուն մէջ, որոնց չարժումը՝ ալիքումը, հոսքը, ճօճման պատրանքը կը ստեղծէ: «Օրրան», – այս վերջին բառը կ'ուղարկէ մեզ ետ, կը ճօճէ մեզ ետ, կրկին կը մօտենանք տողերուն: Սակայն «օրրան»ի յայտնութիւնը առաջնորդած է յայտնատեսութեան. պատկերները յաջորդաբար չեն երգեր իրենց մեղեդիները, եռաճայն երաժչտութիւն մըն է զոր կը նուագեն: Դաշտերը կը նիրհեն առուներէ հիւսուած օրրանին մէջ զոր աստղերը կ'օրօրեն:

«Դու Շրջում ես...» քերթուածին լայնածիր այս համայնապատկերը կարելի է իր ամբողջութեան մէջ ընկալել մեծ հեռանկարով մը միայն: Այստեղ է որ կը դառնանք մեր մէջբերած քառեակի առաջին տողին: Եւ պէտք է մօտենանք, չատ մօտենանք, որպէսզի կարողանանք տեսնել «քնքուշաբոյր ծաղիկների թերթեր»ը:

Հետեւեալ հետաքրքրական երեւոյթը կը պարզուի: Ծաղիկներու թերթերուն խիստ սահմանափակ տեսադաչտը ակընթարթային արագութեամբ կ'ընդարձակուի, եւ բանաստեղծական ոսպնեակները կ'ընդգրկեն դաշտերու եւ երկնքի տիեզերական համապատկերը: Ինչո՞ւ այս մեծ անցումը. ի՞նչն է որ այս կերպով զանց կ'առնուի: Կենցաղային հեռանկարութիւնը:

Նման անկումի մէկ ուրիչ օրինակ. «Լեղիա»: Դարձեալ, բանաստեղծի սիրած աչխարհն է, այն գիչերը ուր կարելի է տեսնել.

Պարզ ջրի վրայ եղեգը հանդարտ
Անդողդոջ կանգնած էլ չի շշնջում.
Լռին խոկում են երկինք, գետ ու արտ,
Ու ոչ մի շարժում, ու ոչ մի հնչիւն...

Այս անգամ, եղեգի մտերմութենէն է որ կը տարածուինք մինչեւ արտ ու երկինք:

Լռութիւնն է այստեղ նախընտրեալ: Լռութեան կը մասնակցի նոյնիսկ եղեգը՝ ապագայի օրինդը դեղեցկանուագ: Եւ անչարժութիւնն է նախընտրեալ, որ մահ չի թելադրեր սակայն, այլ՝ խոհ ու անդրադարձ: Բնութիւնն է, բնանկարն է որ կը խոկայ, իսկ անդրադարձը բանաստեղծէն է.

Ես կանգնած եմ լուռ, անչար է հոգիս,
Թախիծս խաղաղ անուրջի նման.
Էլ չեմ անիծում ցաւերը կեանքիս,
Էլ չեմ տրտնջում վիճակիցս ուևայն...

Մէկ այլ օրինակ. «Շիրակի Դաչտերից»: Ոչինչ կայ այս քերթուածին մէջ Շիրակի դաչտերէն: Ոչ մէկայն վերբերուած չէ որեւէ բնորոչ տարր, այլեւ ընդհանրապէս չկայ որեւէ մանրամասնում: Ոչինչ կայ այս քերթուածին մէջ որեւէ դաչտէ:

Աստղերն են ժպտում լուսեղէն նազով,
Խաղաղ դաշտերը մութն է համբուրում,
եւ յետոյ
Մօտեցած երկնից աստղերը պայծառ
ժպտում են խաղաղ ճո աչքերի պէս...

Աստղ – աչք նմանութիւնը, աստղէ–աչք անցումը բանաստեղծական հնադոյն պատկերներէն է, հնադոյն հնարքներէն: Հետաքրքրականը այլ բան է այստեղ: Բանաստեղծը Շիրակի դաչտերուն մէկ է աստղերը ընկալած ժամանակ, եւ իր խօսքը կ'աւարտէ այսպէս.

– Իմ լճուած սրտի կարօտը անծայր
Ամէն ինչի մէջ որոնում է ինձ...

Սակայն ոչինչ կու տայ մեզ այս «ամէն ինչ»էն:

. . . . .

Անցումը արդէն իսկ զանցում մըն է: Անցումը կը մատնէ զանցումը: Այս վերջինը ընդհանուր երեւոյթ է սակայն Տէրեանի բանաստեղծութեան մէջ: Զանցումը կայ երբ նոյնիսկ չկայ զանցում: Օրինակ. «Սարի Ետեւում...».

Խորհրդաւոր է երկինքն երազուն.
Վարսաթափ ուռի, դողդոջուն եղեգ,
Արծաթ խօսքերով աղբիւրն է խօսում:

Այստեղ, բանաստեղծական ոսպնեակը երկինքէն կ'իջնէ մինչեւ հորիզոն, մինչեւ ուռի, կը մօտենայ եղեգին: Այս մօտեցման ընթացքին արծաթ մըն էր փալփլած: Աղբիւրի ջուրն է, առուն, ուր եղեգը կը դողդողայ, որուն վրայ է հակած ուռին: Եւ այս պահուն է որ

– Սիրտս կարօտով կանչում է ինձ՝ ե՛կ:

Սակայն ան չի դար: Ու բանաստեղծին սիրտը կը մնայ «մենաւոր», որպէս «մոլորուած թռչուն»: Եւ իսկապէս, ո՞ւր է թռչուններու երամը:

. . . . . .

Տէրեանական բնապատկերներու հիմնաքարը զանցումն է կենդանական աշխարհին: Քանի մանրամասնենք, աւելի տարօրինակ պիտի թուի այս իրողութիւնը: Տէրեանի դաչտերուն ու արտերուն մէջ չկան կովեր ու եղներ, ծառերուն վրայ չկան ճնճղուկներ, եւ դեռ չկան եղնիկներ՝ անտառներուն մէջ, չկան աղաւնիներ՝ կապոյտին մէջ, չկան նոյնիսկ թիթեռնիկներ՝ ծաղիկներուն վրայ եւ ճպուռներ՝ եղեգնուտներուն մէջ: Եւ այս հիմնաթելն է թերեւս, թէեւ թաքուն, որ յանդած է առաջին կարծիքին: Գիւղը, դիւղաչխարհը մեր ենթագիտակիցին մէջ կը ներկայանայ ոչ միայն բնութեան պատկերներով, այլ՝ կենդանիներու ալ գոյութեամբ:

Իսկ ինչո՞ւ այս զանցումը: Որովհետեւ, բանաստեղծին ըմբռնումով, կենդանական կեանքին ներկայութեամբ պիտի խանգարուէր բնապատկերներուն ներդործութիւնը, պիտի խոտորէր ընթերցողին միտքը ու խղուէր կապը՝ իր եւ բանաստեղծութեան միջեւ:

Տէրեանական բնապատկերը քիչ կը «դործածուի», միշտ «գեղեցիկ» է, բայց մասնաւորաբար կը յատկանիչուի իր ոգեշընչած յուզական մթնոլորտով: Բանաստեղծը կը դիտէ այդ, ու կը չրջի այդ տեղ, բայց սերտ չփում մը չունի. իսկ գեղեցկութիւնը չի ընկալուիր որպէս դուտ գեղարուեստական արժէք, յուզական ալիքներն են որ կը համակեն բանաստեղծը: Զկան բնութիւնը իրական դարձնող մանրամասնութիւններ. կան բնութիւնը ոգեկանացնող նրբութիւնները: Հետեւաբար, աւելի բնապատկեր, քան թէ բնութիւն:

. . . . . .

Զենք վերադառնար մեր նչած օրինակներուն: Բնապատկերի յուզական վերաձագանդներու մէկ ուրիչ օրինակ. «Կարօտ»: Բանաստեղծը, իր «անվերջ ճամբի տանջանքից յոգնած», պահ մը կ'երջանկանայ ննջելով «ոսկեդէն» արտին մէջ, սակայն երբ կ'արթննայ, ոսկին չքացած է, ու փոխարէնը

Մութ հեռաստանն էր դժկամ նայում ինձ:

Տեսարան – յուզական մթնոլորտ այս առընչութիւնը չեչտուած է ընդհանրապէս չարժումով: Իր նիւթին մէջ մէկու մը տրտում կանչը լսելով, բանաստեղծը կ'արթննայ յեղակարծ, անսպասելի վայելքէն, իսկոյն անդրադառնալով որ մինայն

Գիշերուայ հովն էր լալիս դաշտերում:

Բանաստեղծը կարօտ է մարդկային ձայնի, ընկերութեան, զի առանձին կ'ընթանայ իր կեանքի ճանապարհէն: Եւ իր լռած կանչին «տրտում» բնոյթը ցոյց կու տայ որ կանչողն ալ կարօտ է մարդկային հոգեկցութեան, կարօտ է բանաստեղծին: Եւ այսպէս, երկու տենչերը կ'իրականան իրար մէջ: (Ոսկեդէն արտ – փափաքի իրականացում): Սակայն այս դաղափարը, գոյատման իսկ պահուն, կը ժխտէ, կ'ոչնչացնէ ինքզինքը, եւ բանաստեղծը կ'արթննայ իր մենակութեան: «Գիշերասոյզ, անկերպարան դաշտեր – հիասթափում»: Յատկանչականօրէն, այդ մենակութիւնը կը ներկայանայ երբ նուիրեան մէկ բաղկացուցիչին՝ քարի կերպարանքով: Ամուլ քարի որ հակադրուած է բերքառատ արտին: Քարը իր բացասական ազդեցութիւնը կը սփռէ բանաստեղծի ներկային վրայ, իսկ ապագային

Մութ հեռաստանն էր դժկամ նայում ինձ:

Հետաստանին, բանաստեղծի փնտռած վերջին կայանին բնորոչ գիծերը կորսուած են գիչերային մթութեան մէջ: Թերեւս կայ այնտեղ իր ըղձացած ճշմարիտը, թերեւս ալ մեծ հիասթափում մը պահուած է այնտեղ, – սակայն երկու պարագային ալ անհիւրընկալ է ան, վանողական, թերեւս պահելու համար իր դանձերը, կամ պաչտպանելու համար բանաստեղծը: Եւ այսպէս, ապագան կը մերժէ ընդունիլ բանաստեղծը, մինչ ներկան իր ամբողջութիւնը կը ներկայացնէ մեզի:

Տէրեանի սիրած հնարքներէն է բնապատկերներու տակաւ լուսաձրկումը, անոնց պատրանային անհետացումը: «Ինձ թողէք...» քերթուածին մէջ, բանաստեղծին թաղումը պիտի կատարեն երիկնամուտին

Երբ մբռնում կորչում են ծով ու հող...
Երբ մբռնում կորչում են լեռ ու արտ:

Տեսողական վայելքին կողքին, նոյնիսկ հզօրագոյններու անխուսափելի անձնատուութեան դաղափարը անզօրութեան յոյզ մը կ'ալիքէ ամէնուրեք:

Տէրեանի բնութիւնը կրնայ նոյնքան յուզուիլ, որքան յուզել: «Տխրութիւն» քերթուածին մէջ, «նիրհող» եւ «արձակ» դաչտերը կը ներկայանան երազայնութեան՝ դրական եւ ամայութեան՝ բացասական ալիքումներով: Եւ ահա, Տէրեանի բանաստեղծութեան «կայ ու չկայ» կինը, «կ'անցնի ծաղիկ ու կանաչ մեղմիկ չոլելով» եւ «սիրոյ քնքուչ խօսք» կ'ըսէ: Ամայութիւնը կ'անհետանայ, երազայնութիւնը նոր, թանկագին տարրով մը կը հարստանայ, կը ծաւալի: Եւ ծաղիկները որ նախապէս կորսուած էին դաչտի կանաչութեան մէջ, կու գան առաջ.

Ծաղիկների մէջ այդ անուրջ կոյսի
շշուկը մնաց,
Եւ ծաղիկները այդ սուրբ շշուկով
իմ սիրտը լցրին...

Բնութեան սուրբ շշուկով կը տրտիէ սիրտը բաղաքացի Տէրեանի:

ՎԱՐԱՆ ՈՁԺ

լորը. կը չարունակե՞ն դեռ հաւատալ թէ անոնք ալ իրեն պէս հիմա դարձած են անպիտան. անուժ. մի՛չտ դժգոհ. մի՛չտ պահանջկոտ:

- Բայց ինչո՞ւ կը խնդան այս երախանեը. ժամանակները փոխուած, երջանիկ ապրումի՞ է վերածուած կեանքը: Բայց ինչո՞ւ կու լան սա միւսները... ինչո՞ւ ա՛յսքան ճիչ ու կռիւ: Ուրեմն կը չարունակուի՞ հինը: Ապագան դեռ չէ՞ ըստեղծուած:

- Անոնց համար ապագայ գոյութիւն չունի: Ա՛յսօրն է անոնց ապագան: Կէսօրուան խաղը, իրիկուան լացը...:

Քովը տեղ դրաւած, իրեն պէս մէկին է պատասխանողը: Ծուռ – վիզ մարդ մը: Կը փորձէ չակել վիզը: Արման կը նչմարէ, հաւասար հեռաւորութեան, վզի երեք սպիացած փոսիկները: Կը յիչէ պատառաքաղին գործած աւերը:

«Ցարճակողն» ու «հակառակորդը» նոյն նստարանին վրայ տեղ դրաւած էին՝ կողք կողքի:

- Անիրաւ մարդ, չճղեցիր, որ պատառս անգամ հանգիստ կլլեմ...:

ԼԵՒՈՆ ՍՈՓՈԿԼԵԱՆ

ԹՂԹԵՂԷՆ ԵՐԱՆԳԱՊՆԱԿ

(Շար. Ա էջէն)


Ռուբէն նախասիրութիւն մը ունի ջրաներկին հանդէպ: Ներկայ ցուցահանդէսը միայն ջրաներկներէ կը բաղկանայ, քսանեակ մը միջին ծաւալով գործեր: Զըզտումնաւոր ու դիտումնաւոր կեցուածք մը: Իւղաներկ պաստառներ ցոյց տուած է ասկէ առաջ նկարիչը, օրինակ՝ Մատրիտի ցուցահանդէսին, ուր կէսը իւղաներկ էր, բայց ասոնք ալ՝ ջրաներկի թեքնիքէն ու մասնաւորաբար՝ արդիւնքէն ազդուած: Ինքը կ'ըսէ թէ վերջին երկու երեք տարիներուն՝ ուզած է աւելի ծանրանալ ջրաներկին վրայ, յաղթահարելու համար անոր թեքնիք դժուարութիւնները, բայց մանաւանդ՝ հասնելու համար իր ուզած «արդիւնք»ին «էֆէ»յին: Տպաւորիչ է Ռուբէնի մօտ արհեստի մը եւ արուեստի մը տիրապետելու խոր, խրատապահանջ եւ հետեւողական կամեցողութիւնը: Ինքը կ'ըսէր 1982–ին՝ «մինչեւ հիմա նկարչութիւնը ինծի համար եղած էր սորվելու, արտայայտութեան միջոցներուն ծանօթանալու, նկարել գիտնալո՛ւ չրջան մը» (5): Ու այսօր նոյն ձեւով կ'արտայայտուի ջրաներկի մասնայատուկ թեքնիքին ու արդիւնքներուն նկատմամբ: Ջրաներկին վրայ դրուած չեշտը կապ մը ունի անշուշտ «լուսաւոր կեցուածք»ին հետ, որ Ռուբէնի մօտ սկզբնական վիճակը չէ այնքան հաւանարար, որքան՝ հետապնդուած նպատակակէտը:

Քանի մը տեղեկութիւններ անհրաժեշտ են ջրաներկի յատկութիւններուն մասին, հասկնալու համար այս կապը՝ «լուսաւոր կեցուածք»ին եւ ջրաներկի ընձեռած կարելիութիւններուն միջեւ, ու գաղափար մը կազմելու համար թեքնիքին յատուկ դժուարութիւններուն վրայ: Ջրաներկի առաջին յատկանիշը այն է, որ ե-րանգապնակը նոյն դերը չի խաղար, ինչ որ իրն է իւղաներկի պարագային: Երանգապնակը հոս՝ թուղթն իսկ է: Գոյներու տարբեր խառները թուղթի յեռնամասին հետ կը խաղան, ու թուղթին վրայ է որ կը կազմուի գոյնի վերջնական երանգաւորումը, ինչ որ կ'ենթադրէ գունաւոր խառներու բացարձակ թափանցկութիւնը ու երբեմն՝ երանգներու թոյլատրակութիւնը, հասնելու համար գոյներանգի ուզուած թարմութեան եւ մանաւանդ՝ պայծառութեան: Այդ ձեւով է, որ գոյները լոյսով կը թափանցուին, կը «լուսանդրըւին», այսինքն՝ իրենց թափանցկութեամբ ու թեթեւութեամբ՝ ներսոյղ պայծառութիւն մը կը թելադրեն: Ռուբէնի արուեստագէտ բարեկամներէն մէկը իր նկարները տեսնելէ յետոյ՝ կը յիշէր Նովալիսի հռչակաւոր խօսքը՝ «Գոյնը նիւթին մէկ ձգտումն է ղէպի լոյսը», ու կ'աւելցնէր՝ «Ռուբէնին մօտ՝ հակառակն է»: Կ'ենթադրեմ, որ կ'ուզէր ըսել՝ լոյսին ձգտումը նիւթանալու: Թղթեղէն թափանցիկ երանգապնակով՝ կը փորձուի հոս գոյներու լուսանդրութիւնը: Բան մը որ իւղաներկը նոյն ձեւով պիտի չթոյլատրէր:

Ջրաներկի երկրորդ յատկանիշը, որ յատուկ է նաեւ որմնանկարչութեան հին թեքնիքներուն, իրագործումի արագութիւնն է: Բայց մինչդեռ որմնանկարչութեան (ֆրեսքոյի) պարագային՝ նիւթեղէնին կողմէ պարտադրուած անհրաժեշտութիւն մըն է արագութիւնը, ուրեմն՝ յաղթահարելիք արգելք մը, հոս ընդհակառակն՝ նիւթեղէնին կողմէ ընծայուած դիւրութիւն մըն է: Արագութիւնը պատճառ եղած է, որ ջրաներկը գործածուի աւանդաբար՝ պահ մը սեւեռելու համար, ջուրերու մէջ նշոյլ մը, լոյսի ե-րանգ մը, օդի պայծառութեան մէկ ո-րակը: Նոյն պատճառով ալ՝ ջրաներկը կը գործածուի յաճախ դաշտանկարային նկարչութեան մէջ: Արագութեան յատկանիշը կ'ենթադրէ կատարեալ տիրապետութիւնը գոյներանգներու խառնուրդման ու մակարդման գործողութեան, հասնելու համար հետապնդուած պարզութեան: Նպատակը Ռուբէնի մօտ՝ միջոցներու եւ եղանակաւորման բարդութիւնը ձուլել ու անհետացնել է այդ թափանցիկ պարզութեան մէջ: Ռուբէնի աշխատանքը առարկայէն չէ թելադրուած, այն իմաստով որ ինքը օրինակ՝ դաշտանկարային, գործնականապէս պահը սեւեռող նկարչութիւն մը չընէր: Փոխադրած է ինք ջրաներկի աւանդական միջոցները այլ մակարդակի մը վրայ, ու պահած է գոյնին ու պատկերուածին ընդմէջէն՝ լուսանդրութեան ձգտումը:

Պէտք է նաեւ գիտնալ, որ մասնաւորաբար երկրորդ յատկանիշին պատճառու՝ ջրաներկը նկարչութեան մէջ կը գործածուի յաճախ դաշտանկարային նկարչութեան մէջ: Արագութեան յատկանիշը կ'ենթադրէ կատարեալ տիրապետութիւնը գոյներանգներու խառնուրդման ու մակարդման գործողութեան, հասնելու համար հետապնդուած պարզութեան: Նպատակը Ռուբէնի մօտ՝ միջոցներու եւ եղանակաւորման բարդութիւնը ձուլել ու անհետացնել է այդ թափանցիկ պարզութեան մէջ: Ռուբէնի աշխատանքը առարկային չէ թելադրուած, այն իմաստով որ ինքը օրինակ՝ դաշտանկարային, գործնականապէս պահը սեւեռող նկարչութիւն մը չընէր: Փոխադրած է ինք ջրաներկի աւանդական միջոցները այլ մակարդակի մը վրայ, ու պահած է գոյնին ու պատկերուածին ընդմէջէն՝ լուսանդրութեան ձգտումը:

Պէտք է նաեւ գիտնալ, որ մասնաւորաբար երկրորդ յատկանիշին պատճառու՝ ջրաներկը նկարչութեան մէջ կը գործածուի յաճախ իբր օժանդակ թեքնիք մը: Ռուբէնն այդ օժանդակ թեքնիքը դարձուցած է ինքնանպատակ, այսինքն՝ ոչ թէ չիջանուտ պահ մը արագօրէն սեւեռելու անցողակի միջոց, որ յետոյ արհեստանոցին մէջ կը փոխարինուի արտայայտչական այլ միջոցներով, այլ ինքն իր մէջ ու ինքն իրմով՝ վերջնական արտայայտութիւն մը: Բան մը որ կ'ենթադրէ փնտռտուքի եզակի հետեւողականութիւն մը: Այս մարզին մէջ սակայն՝ Ռուբէն մեծ նախորդներ՝ վարպետներ ունի: Մինչեւ 18–րդ դար՝ ջրաներկը կը դրծածուէր ինչպէս ըսի՝ աւելի ծաւալուն յօրինումներ պատրաստելու գծով, ու նկարիչին որոշ ազատութիւն մը կ'ընծայէր բնութեան առջեւ նստելու: 18–րդ դարուն՝ վենետիկցի Թիէփոլոն է, եւ իրմէ յետոյ՝ 19–րդ դարու սկիզբը՝ անգլիական դպրոցը, որ ջրաներկը անկախացուցած են օժանդակի իր դերէն, ու զայն դարձուցած՝ ինքնանպատակ սեռ մը: Առաջին Անգլիացին որ այդ անկախութեան հասցուցած է ջրաներկը՝ Թ. Կըրթինն է (1775 – 1802), բայց սեռը կատարելագործումի հասցնողներն են իրմէ ետք՝ Պոնինկթոնը (1802 – 1828), Քոնսթէպլը (1776 – 1837) եւ մանաւանդ՝ Թըրնըը (1775 – 1851): Պէտք է նշմարել, որ ասոնք նոյն սերունդին մարդիկն են ու կը զեռեղուին վիպապաշտ չարժումի սկզբնաւորութեան: Վիպապաշտ ճաշակին կը համաձայնէին բնութեան ընծայուած ուշադրութիւնը, արտաքինի արտած մեծ նաչնորհը, գոյնին տիրապետութիւնը: Եւ ի վերջոյ՝ Նովալիսի վերոյիշեալ խօսքը (գոյնը՝ իրրեւ նիւթին մէկ ձգտումը դէպի լոյսը) ճիշդ նոյն չրջանին է որ արտասանուած է, վիպապաշտ հեղինակի մը կողմէ, որ հաւանաբար ալ՝ տեղեկութիւն չունէր անգլիական նկարչութեան



Ջրանկար (38×46) – 1985

մէջ նոր ծաւալի մը հասնող ջրաներկին եւ հոն կատարուած աշխատանքին մասին՝ զուտ գոյներանգներու օգտագործումով: Անգլիացիներէն եռք՝ Տըլաքրուա, Սեզան չարունակեցին նոյն թեքնիքը օգտագործել, առաջինը ուղղակի՝ Պոնինկթոնի ազդեցութեամբ:

Անկախացած ու ինքնանպատակ ջրաներկի աւանդութիւն մը կայ ուրեմն: Ինչպէս ամէն աւանդութիւն սակայն՝ պէտք ունէր ան յայտնապէս՝ վերանորոգուելու, վերստեղծուելու: Ժամանակակից նկարչութեան մէջ՝ ջրաներկի տուեալ աւանդութեան վրայ վերստեղծումի նման աշխատանք ծանօթ չէր մեզի: Աշխատանք մը, որ առարկային անկախ՝ կը փորձէ ծայրագոյն թափանցկութիւն մը, գոյներանգներու «վերապահութիւն» մը ապահովել: Ռուբէնի նկարչութիւնը «թեմա»ներ ունի անշուշտ. սխտորի այլակերպած փունջեր, կնոջական դիմանկարներ, փրուած լաթերու գունաւոր ծիծեր, չուկայէն վերադարձող առանձին մամիկներ: Թեմաները եւ լուսանդրութեան ձգտումը առընչուած են իրարու: «Թեմա»ներէն առաջ՝ գունաւոր ծիծերու վրայ կատարուած իւրայատուկ աշխատանքն է սակայն, որ կը դրաւէ հանդիսատեսին աչքը: Գոյներանգներու «վերապահութեան» հետ, կայ ի հարկէ երկրորդ թեքնիք մը Ռուբէնի մօտ, ու թերեւս թեքնիք բառն ալ հոս՝ տեղին չէ: Ռուբէնի գործին առջեւ մէկը կ'ըսէր՝ c'est un fana du fondu, ու այս խօսքը տպաւորեց զիս: «Ֆոնտիւ» ըսուածը այն արդիւնքն է, զոր կ'ունենաք երբ գոյն մը հետզհետէ կը կորսընցնէ իր ուժգնութիւնը, խառնուելով թուղթի ճերմակութեան հետ, վերածուելով ճերմակի, կամ ալ՝ այլ գոյնի մը: Գոյներու աստիճանաւոր անզգայտացումն անվերածնելի լոյսին, անսեւեռելի, զրեթէ անգոյ, եւ սակայն ներկայ՝ գոյատեւներէն անդին. «լուսաւոր կեցուածք մը, տեսակ մը երանութիւն»: Ռուբէն դիտմամբ անուն չի տար իր ջրաներկներուն: Պատճառը այն է, որ իր փնտռտուքը երբեք չի կենար «թեմա»յին վրայ, այլ կ'անցնի միշտ անկէ անդին, դէպի անկէ թելադրուող «լուսութիւն»ը: Ռուբէն կը պատկերէ լուսանդրուած լուսութիւնը թեմաներուն ընդմէջէն: Չի «զրականացներ» իր պատկերածը: Շուկայէն վերադարձող իր կիներուն առջեւ սակայն՝ ընդհանուր վերադիր մը եկաւ օր մը կատակով մեր բերնին՝ Մամիկին բնաւորութիւնը:

×

«Մեծցած եմ Արեւելքի մէջ, Պէյրութ, ուր ծնած եմ 1951–ին: Ստացած եմ զուտ հայկական կրթութիւն...: Երկրորդական ուսումէս ետք, երբ ուզեցի նկարչութեան հետեւիլ, անցայ Լիբանանի Գեղարուեստից Ակադեմիան: Ներկայացուած ճիւղերուն մէջ, որպէս գեղագիտական ամբողջական պատրաստութիւն, ընտրեցի ներքին ճարտարապետութիւնը...: Բաւական չէր անշուշտ զուտ նկարչական մտահոգութիւններուս համար: ... Ակադեմիան աւարտեցի 1975–ին եւ եկայ Փարիզ: Հոս մասնագիտացայ նկարչութեան եւ որմնանկարչութեան ճիւղերուն մէջ՝ Փարիզի պետական բարձրագոյն Գեղարուեստներու Հաստատութեան մէջ (Ա.Բ.Տ.Ը.Փ.): Աւարտեցի 1977–ին»:

1982–ին դրի առնուած այս կենսագրական ընդհանուր գիծերը մէկ բան կայ որ չեն ըսեր: Ռուբէն գործունեայ արուեստագէտ մըն է, «զուտ նկարչական մտահոգութիւններու» մարզէն դուրս: Երփնապակիի եւ խճանկարի մասնագէտներու հետ դիւրաւորաբար՝ կ'իրագործէ միասնական ծրագիրներ, ներքին ճարտարապետութեան եւ «որմնանկարչութեան» իր մասնագիտութիւններու գիծով, ծրագիրներ՝ ուր յղացումի պարտականութիւնը իրեն վերապահուած է: «Զուտ նկարչութիւն»ը իր պարագային՝ կիրառական արուեստներու մարզին մէջ իր աչխատանքներուն quintessenceն է: Կարեւորը, ու ամէն պարագայի՝ գիս տպաւորողը, այն է, որ երկուքը զուգահեռաբար կ'ընթանան: Պիտի ուզէի աւելի երկար խօսիլ երփնապակիի եւ խճանկարի մասնագէտներուն հետ այս գործակցութեան մասին, պատմել, թէ ինչպէ՞ս կը ծնի, ինչ փուլերէ կ'անցնի երփնապակիի մը յօրինումը, թէ ի՛նչ հսկայ աչխատանք կը պահանջէ խճանկարի մը վերջնական արդիւնքին ձեռքբերումը, երկու պարագաներուն ալ՝ ջրաներկի մը սկզբնական թելադրանքով, այդ թելադրանքին մեկնաբանութեամբ:

Պիտի վերջացնեմ սակայն տարբեր հարցով մը, ու ստիպուած եմ հոս ալ՝ համաոատելու: Վերը՝ quintessence բառը գործածեցի, ու ան է որ գիս այս յաւելեալ անդրադարձին կը մղէ: Գիտենք, կը տեսնենք, որ Միջնադարէն մնացած հին հայկրութիւնը Art majeur եւ Art mineurի միջեւ ի գօրու է տակաւին այսօր: Երփնապակին, խճանկարը «մինէօր» արուեստներ են մեր օրերուն, ինչպէս՝ ասեղնօք: Ու պատճառը այն չէ, թէ կիրառական արուեստներու մասնագէտները նկարիչի յղացումին կը հետեւին: Միջնադարեան տարբերակումը բանական հանգամանք ունէր, ու չէր բնաւ ամէն պարագայի՝ «ստեղծագործութեան բնագաւառ» մը: Միջնադարեան նկարիչը նոյն յարաբերութիւնները ունէր խճանկարիչին հետ, ինչպէս այսօր: Փոխուածը ուրեմն ընկերային (հետեւաբար՝ գեղագիտական) ըմբռնումն է, որ զանազան փուլերէ անցնելով՝ ծնունդ տուած է ժամանակակից զուտ «արուեստագէտ»ին: Միջնադարեան նկարիչը «արուեստագէտ» չէր արդիական իմաստով: Անկախ չէր նախ պինք հովանաւորող տիրութիւններէն, անկախ չէր նկարչութեան պարտադիր օրինաչափակերպ մը, վնտռտուքներու մարզը չէր, ցուցահանդէս չէր կազմակերպեր: Ասոնք ժամանակակից երեւոյթներ են: «Մաժէօր» եւ «մինէօր»ի տարբերակումն ալ բացարձակ նչանակութիւն չէր վերապրեր արուեստագէտին: Արդիական ժամանակաչրջանին է, որ «ենթակայութիւն»ը կը ստանայ դերակչիռ նչանակութիւն: Վերածնունդէն ու մասնաւորապէս՝ վիպապաշտ չրջանէն ի վեր, նկարիչը կը ստանայ այսպէս հետզհետէ ոչ թէ բանական, այլ՝ բացարձակ «առաջնութիւն» մը երկրորդական կոչուած յարակից արուեստներու նկատմամբ: Բացարձակ կ'ըսեմ, որովհետեւ «ստեղծագործ ենթակայութիւն» մը գործի վրայ է այդտեղ: Նոյն չրջանին է, որ փիլիսոփայութիւնը «ենթակայ»ին վրայ կը դնտեղէ իր հիմքը:

Այս երեւոյթներն ու եղելութիւնները ծանօթ են բոլորիս: Փախուստ չկայ ընդհանրապէս ենթակայութեան պաչտամունքէն: Ինծի այնպէս կը թուի, որ Ռուբէն արուեստի, արուեստագէտի արդիական ըմբռնումները կրցած է մարսել, իր եռին ձգել, չկլանուիլ անոնցմէ: Ինչպէ՞ս: Պարզապէս՝ աչխատելով: Զուտ նկարչութիւնը եւ «կիրարկուած» նկարչութիւնը մէկը միւսին փորձաքար դարձնելով: Իր ջրաներկներուն առջեւ կեցողը սոխլուած չէ այս ամբողջը գիտնալու: Բայց կը տեսնէ արդիւնքը երանգապնակին վրայ: Փոխադարձ փորձաքարի դաղափարը, զոր կ'առաջարկեմ հոս, չի վերաբերիր միայն թեքնիք յղացումին: Կ'առաջարկեմ զայն, բացատրելու համար արուեստագէտի ամբողջական տիպարը, զոր կը տեսնեմ Ռուբէնին մօտ: Իր զուգահեռ գործունէութիւնները կիրար կ'ենթադրեն, գիրար կ'երկարաձգեն ու կ'ամբողջացնեն: Անյղանալի պիտի ըլլային մէկը միւսէն անջատ: Ռուբէն կը ստանձնէ այս ձեւով (իբրեւ յատուկ ձեւով մը, համեստութեամբ ստզորուն) նկարչութեան պատմական հոլովոյթը: Այդ է կարծեմ՝ որ կը տպաւորէ զիս:

ՄԱՐԿ. ՆՇԱՆԵԱՆ

---

(1) Տե՛ս «Յառաջ, Միտք եւ Արուեստ» Հոկ. 1982, էջ 3՝, «Նկարիչ Ռուբէն Նաճառեանի հետ»:

(2) Տե՛ս «Յառաջ, Միտք եւ Արուեստ» Փետր. 1984, «Մեր խօսքը», «Ակ, խըմբագրում» ստորագրութեամբ:

(3) «Միտք եւ Արուեստ», Հոկ. 1982:

(4) Ա.Նդ:

(5) Ա.Նդ:

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris Commission Paritaire: N° 55935

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
7

MARDI
7 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.132 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.132

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԾՆՆԴԵԱՆ ՔԱՐՈԶԸ

ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ՅՈՒՆՈՒԱՐ 6-ԻՆ

Յաւուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ· ամէն:

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵԻ ՅԱՅՏՆԵՑԱՒ»

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ,

Աստուածադիր մեծասքանչ կարգով, մեր երկրագունդը մի անգամ եւս իր պըտոյտը կատարեց արեւի չուրջ: Ու ահա այս պահին, Նոր Տարւոյ լուսարացին, մենք տօնախմբում ենք յիշատակը սուրբ ծննդեան մեր Փրկչի Յիսուսի Քրիստոսի, որ չատ տարիներ առաջ երկիր իջաւ ու ծնուեց Բեթղեհէմ կոչուած չատ փոքրիկ գիւղում, մի մսուրի մէջ, կոյս Մարիամից: Նրա ծննդեան գիշերը աշխարհը լցուել էր հրաշքներով բազում: Բեթղեհէմի երկնակամարի վրայ մի աստղ էր չողափայլել, բացուել էին դռները երկընքի, ու հրեշտակները չեփորել էին համայն աշխարհին աւետիսը մեծ, աշխարհասաստ՝ «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Եւ յուսացեալ մարդիկ, փրկարար մի լոյս որոնց հոգիներ, ծարաւի խաղաղութեան եւ արդարութեան, տեսել էին այդ լուսափայլ աստղը եւ լսել քաղցր երգը հրեշտակների: Այդ գիշեր երկինքը արձագանգել էր խոնարհ ու տառապող մարդկանց դարաւոր սպասումին: Ծնուող Յիսուս նրանց սպասած Փրկիչն էր, Մեսիան:

Այդ օրուանից սկսուեց մարքը լոյսի եւ խաւարի մէջեւ, սիրոյ եւատելութեան մէջեւ, խաղաղութեան եւ քաոսի մէջեւ, արդարութեան եւ բռնակալութեան միջեւ: Մարդու կեանքում եւ աշխարհի պատմութեան մէջ Յիսուս եղաւ ու երկու հազար տարիներից ի վեր մնաց առաքեալը սիրոյ եւ խաղաղութեան, մնաց «ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը» բոլոր յուսացեալ հոգիների:

Յիսուս ծնուեց խաղաղութեան աւետիսի չեփորոսմով: Յիսուս խաչափայտի վրայ իր հոգին աւանդեց՝ մարդկութեանը թողնելով իր խաղաղութիւնը: Նրա վերջին պատգամը եղաւ՝ «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ» (Յովհ. ԺԴ. 27):

Խաղաղութիւնը որ Յիսուս թողեց մեզ, մանաւանդ հոգու խաղաղութիւնն է, որը հանդիսանում է հոգեբանական հիմքը բոլոր տեսակի խաղաղ դրսեւորումների մարդկային կեանքում: Մարդ, նախ պիտի ունենայ ներքին խաղաղ հոգեվիճակ, որպէսզի կարողանայ խաղաղ ու հաւասարակշռուած մնալ իր զգացումներով, իր մտածումներով եւ իր ձեռաց գործերով: Այսպիսի հոգեվիճակով է միայն, որ նա կը կարողանայ խաղաղութիւն ներշնչել ու տարածել իր ընտանեկան յարկի տակ, իր ընկերային յարաբերութեանց մէջ, իր եկեղեցական համայնքային կեանքում, իր աշխատանքի վայրում, իր քաղաքացիական պարտականութեանց ճանապարհին:

Մեր երկրային կեանքում Յիսուսի հոգու խաղաղութիւնը արտայայտում է՝ հոգու ներքին ներդաշնակութեամբ, սիրով, գութով եւ ներողամտութեան ոգով ղէպի մեր նմանները, հոգատար արդար վերաբերումով ղէպի զրկեալներն ու հալածեալները: Յիշեցէք Յիսուսի վերջին խօսքերից՝ «Հաստատուն կացէք ի սէր իմ» (Յովհ. ԺԵ. 9): Այդպէս է, որ մեր սեփական խաղաղ հոգուց կարող է ճառագայթել մեր չուրջը՝ սէր եւ խաղաղարար լոյս մեր նմանների հետ մեր յարաբերութեանց ճամբին: Իրօք, խաղաղ ու հաւասարակշիռ հոգեվիճակը, խաղաղարար գործը ինչքան չինարար, ինչքան փրկարար գործօններ են հանդիսանում ընտանեկան, ընկերային եւ եկեղեցական կեանքում: Ինչքան յաւուր հարցեր բարուոք պիտի լուծուէին մեր Եկեղեցու ծոցում, մեր թեմերում ու համայնքներում, եթէ բոլորս, բոլոր պատասխանատու հոգեւորական ու աշխարհական պաշտօնատարները մտածէին ու գործէին խաղաղ հոգեվիճակով, համերաշխութեան ոգով, սիրով եւ ներողամտութեամբ ղէպի իրենց գործակիցները, ղէպի հաւատացեալ մեր ժողովուրդը, ամէն բանից վեր դասելով եկեղեցու շահը, եկեղեցու հեղինակութիւնը: Մեր ջերմագին լղճն է բարի հըբաւէր ուղղել մեր մայր Եկեղեցու բոլոր եկեղեցական սպասաւորներին եւ բոլոր մեր հոգեւոր զաւակներին, խաղաղ հոգով ու մտքով գործել եկեղեցու կամարների ներքեւ եւ այդ հոգեվիճակով լուծել իրենց առաջ դրուած հարցերը, զի այնտեղ, ուր սիրում է խաղաղ գործակցութիւն եղբայրների միջեւ, այնտեղ իջնում է Տիրոջ օրհնութիւնը:

Սուրբ ծննդեան խորհուրդով օծուն այս հանդիսաւոր պահին, մեր մտածումը, մեր քրիստոնէական խիղճը մեզ մղում են վերստին ազօթելու, որ քրիստոսաւանդ խաղաղութեան պատգամը լսելի դառնայ մեր օրերի համայն մարդկութեանը, յատկապէս մեծ ազգերի պատասխանատու ղեկավարներին, որպէսզի գործեն խաղաղարար ոգով եւ ազգամիջեան անհամաձայնութիւնները լուծեն խաղաղ ճանապարհներով, համբերատար համերաշխ գործակցութեամբ, երբեք զէնքի ուժերի չդիմելու վճռականութեամբ:

Միջազգային իրաւունքի եւ բարոյականի հրամայականն է՝ յարգել տառացի կերպով քառասուն տարիներ առաջ Սան Ֆրանսիսկոյում Միացեալ Ազգերի կնքած մեծ ուխտագիրը, որի առաջին յօդուածում ասուած է· «Մենք միաւորուած ազգերի ժողովուրդներս, վճռել ենք պահպանել ապագայ սերունդների կեանքը պատերազմի աղէտից, որը մի մարդու կեանքի տեւողութեան ընթացքում երկու անգամ անպատմելի տառապանքներ պատճառեց մարդկութեանը»: Ապա ուխտագիրը աւելացնում է· «Այդ նպատակով ուխտում ենք ցուցաբերել հանդուրժողութիւն, ապրել խաղաղութեամբ մէկս միւսի հետ բարիդրացիական ոգով, միաւորել մեր ուժերը՝ պահպանելու համար միջազգային խաղաղութիւնն ու անվտանգութիւնը»:

Ահա Միաւորուած Ազգերի պատմական ուխտը՝ կնքուած քառասուն տարի առաջ: Ահա իրաւական ու բարոյական սկզբունքները, որով պարտաւորուած են առաջնորդուելու մեր օրերի պետութեանց ղեկավարները:

Միացեալ ազգութիւնների այս ուխտը առաւել այժմէական է մեր օրերին, երբ հանդիսատես ենք ատոմական ահռելի ռումբերի եւ հրթիռների պատրաստութեան ու տեղադրման, որոնք սպառնում են ողջ աշխարհի կործանման եւ մարդկութեան բնաջնջման: Աշխարհի բոլոր ազգերի խոնարհ զանգուածների սրտառուչ աղաղակն է՝ խաղաղութիւն, համերաշխութիւն, զինաթափում:

Ու երբ մտահոգուած ենք ծանրօրէն մեր օրերի միջազգային ալեկոծ կացութեամբ, ատոմական ռումբերի սարսափի ներքոյ, չենք կարող չմտահոգուել նաեւ մեր Եկեղեցու, մեր ժողովրդի ճակատագրով ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: 1915-ի ցեղասպանութիւնը տեսած մեր ազգի ու Եկեղեցու արդար երազանքն է այլեւս երբեք ու երբեք չտեսնել որեւէ պատերազմ, որեւէ ցեղասպանութիւն, այլ ապրել խաղաղ ու անվտանգ այս արեւի տակ Աստուծոյ օրհնութեան ներքոյ, բուժելով մեր հին վէրքերը եւ չարունակելով կառուցել, չէնացնել մեր նոր կեանքը, վերածնուած մեր մայր հայրենիքի տարածքի վրայ:

Մեր մայր երկրի ու ժողովրդի բախտը, գոյատեւումն իսկ պայմանաւորուած են աշխարհի խաղաղութեան պահպանումով եւ մեր ազգային դատի արդար լուծումով՝ խաղաղ ճանապարհներով:

Մեր մշտական ազօթքը պիտի մնայ՝ Քրիստոս Աստուած մեր, տուր Քո խաղաղութիւնը եւ Քո խաչի զօրութեամբ խորտակիր հրէշածին զօրքերը պատերազմի, խափանիր որոգայթը չարի, ցրիր խաւարը ու լոյս տուր հոգիներին իրրեւ արեգակ արդարութեան ու փրկիր մարդկային աշխարհը մահուան սարսափից:

Թող բարձր ու հզօր հնչի մեծ առաքեալի պատգամը· «Գիշերն մերժեցաւ եւ տիւն մերձեցաւ· ի բաց արասցուք այսուհետեւ զգործսն խաւարի եւ զգեցցուք զզէնն լուսոյ» (Հռոմ. ԺԳ. 12) եւ «Ապա այսուհետեւ զհետ երթիցուք զխաղաղութեան եւ զշինութեան որ առ միմեանս» (Հռոմ. ԺԴ. 19):

Եւ թող մեր հրաշատեղծ երկրագունդը յետ այսու չտեսնի արհաւիրք ու կործանում եւ տառապանք մարդկային կեանքում, ու աստուածադիր իր ընթացքը շարունակի արեւի չուրջ խաղաղ, անվրդով ցկատարած աշխարհի:

Սիրեցեալ ժողովուրդ Մեր, այս յոյզերով ու խոհերով, Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինից բերում ենք ձեզ մեծ աւետիսը մեր Փրկչի Յիսուս Քրիստոսի լոյս ծննդեան եւ մաղթում, որ նրա շնորհներով չէն ու պայծառ մնան ձեր աղօթքի տները, խաղաղ ու չինարար յաջողութիւններով պսակուեն ձեր եկեղեցանուէր աշխատանքները, նոր եռանդով ու լաւատեսութեամբ լծուէք ազգապահպանման նուիրական ձեր առաքելութեան, կենդանի պահելով մեր նախնեաց լոյս հաւատքը, մեր մայրենի լեզուն, մեր ազգային մշակոյթի արժէքները եւ հայրենասիրական ոգին, մանաւանդ նոր սերունդների հոգիներում:

Թող մարդագեալն Աստուած հեռու պահի մեր ազգն ու եկեղեցին նոր փորձութիւններից, նոր աղէտներից եւ իր պահպան ձեռքով յաւէտ պահի պահպանի նրանց խաղաղ ու անվտանգ այս արեւի տակ միշտ երգ ու լոյսով:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ»· ամէն:

ՓԱՌՔ ԾՆՆԴԵԱՆ ՔՈ, ՔՐԻՍՏՈՍ ՓՐԿԻՉ ՄԵՐ:

ՎԱԶԳԷՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀԵՐՍԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՍՊԱՐԷԶ ԿԱՐԴԱԼ

ԿԸ ԽԱՆԳԱՐԷ ԶԱԽԸ
ԲԱՅՑ ՆԱԵԻ ... ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ

Մեախաներու չարաթավերջի դլխաւոր հարցը՝ մեախայի հարց մըն էր, Հերսանի մէկ նոր գնումը, որ քիչ մը աւելի կը տարածէ իր տիրապետութիւնը ազգային մամուլին վրայ: Արդարև, Հերսան «կայսրութիւնը» ձեռք առաւ նաեւ Ֆրանսայի մէկ կարեւոր օրաթերթը՝ «Փրոկրէ տը Լիոն»ը:

Առաջին առթիւ, կարելի է հաստատել թէ Հերսան ասպարէզ կը կարդայ կառավարութեան, քանի որ իր այս նոր քայլով դէմ կը դարձէ օրէնքին, այն օրէնքին զոր ձախը մէջտեղ դրաւ պայքարելու համար մամուլի մենաշնորհին - այսինքն՝ Հերսանի դէմ: Հերսան, ուրեմն ապօրինի վիճակի մէջ է: Բայց օրէնքը կը ճղճէ, որ մամուլի այն սեփականատէրերը, որոնք օրէնքին համապատասխան վիճակի մէջ չեն, մինչեւ 1986 Սեպտեմբեր պայմանաժամ ունին կանոնաւորելու համար իրենց կացութիւնը: Հերսանի գրաւն այն է, որ ընդդիմութիւնը կը յաղթէ Մարտին, օրէնքը կը ջնջուի եւ ինք ալ օրինաւոր վիճակի մէջ կ'ըլլայ: Բայց, այս բոլորին մէջ, միակ չահագուրկը Հերսանը չէ: Մարդը, հարկ է ընդունիլ, եւ Սէ - Ժէ - Թի-ն ալ համաձայն է գործի մարդ է: Աւելի քան 20 տարի է ջուրին երեսը կը բերէ ընկղմած թերթեր: Ուրիշներէ առաջ մըտածած ու իրագործած է մամուլի արդիականացումը, գիտէ մատակարարել եւ այսօր երբ Լիոնի Փրոկրէին տէրը՝ Ժ. Շ. Լինեէլ, որ դեռ 6 ամիս առաջ, կ'ըսէր թէ երբեք Հերսանի պիտի չծախէ թերթը, 6 ամիս ետք կը ծախէ, որովհետեւ ուրիշ չահախորդ ալ չէ գտած:

Բայց Հերսան, որ ձախի իշխանութեան գլուխ գալէն ի վեր կրկնապատկեց իր կայսրութիւնը - ինչ որ բաւական հակասական է- միայն ձախը չէ, զոր կը խանդարէ, այլեւ ընդդիմութիւնը: Այդ առընչութեամբ, չատ յատկանշական է Փրոկրէի գնումը, որ կը գանուի Ռեմոն Պառի բերդին մէջ եւ Հերսան պառխթ չէ: Ուրեմն, Հերսան իր մամուլով, բոլորովին կը կզզիացնէ Պառը, 1988-ի նախագահական ընտրութիւններուն համար: Յետոյ, Հերսան, ծանօթ է, «բարեկամութիւններ» ունի մինչեւ Էլիզէ, իր օրաթերթերուն գլուխը ունի նոյնիսկ ընկերվարականներ կամ համայնավարներ, ըստ այդ օրաթերթերու քաղաքական մթնոլորտին: Եւ ինչպէս, ընդդիմութեան ընդդիմադիր բազմաթիւ լրագրողներ հաստատեցին, առարկայօրէն, Փօլաքի հեռատեսիլի «Պատասխանի իրաւունք»ի յայտագրին ընթացքին, ձախի մեախաներու քաղաքականութիւնը - հեռատեսիլ, գրաւոր թէ բերանացի մամուլ - իսկական Պեռեզինա մըն է, վերջին օրինակը՝ 5-րդ կայանը:

Վերջացնելէ առաջ, յիշենք Հերսան կայսրութեան ծաւալը· -

Ունի 19 օրաթերթ, 20 պարբերական: 1982-ի տարեկան գործառնութիւնն էր 4 միլիառ Ֆրանք: Տասը հազար հոգի կ'աշխատի լրիւ ժամանակով:

Ազգ· Ժողովի երեսփոխան մըն է, որ կ'ըսէ· - «Հարկ է արդար ըլլալ ձախի կառավարութեան նկատմամբ, ընդունելով որ գոնէ մէկ մարզի մէջ յաջողած է՝ Հերսան կայսրութեան ամրապնդումը»:

×

Կիրակի իրիկուն, Ռոպէր Պաէնթէօ կը յայտարարէր թէ պէտք է դատական հետապնդումի դիմում կատարուի Հերսանի դէմ (հեռատեսիլ, Ա· կայան), մինչ Ծերակուտական Քայավէ, որ նախագահն է իր անունը կրող յանձնախումբին եւ որու պաշտօնն է գործադրել տալ մամուլի 84-ի օրէնքը, չէր կրնար որոշ դատնութիւն մը չարտայայտել, ինք ալ հաստատելով թէ 81-էն ի վեր Հերսանի կայսրութիւնը տարածուած է: Ինք կողմնակից է դատական հետապնդումի դիմելու, ոչ միայն Հերսանի այլեւ Լինեէլի դէմ, քանի որ երկուքն ալ չեն յարգած օրէնքը: Արդարեւ նախքան համաձայնութիւն կնքելը, պէտք է յանձնախումբին հաւանութիւնը առնէին: Հերսան, սակայն, Եւրոպայի Խորհրդարանի անդամ ըլլալով չի կրնար դատուել, եթէ չջնջուի խորհրդարանական իր անձեռնմխելիութիւնը: Երկուշաբթի ալ, ուրեմն, մեախաները կը չարունակէին այս հարցով զբաղիլ: Մաքէն, Լիպերասիոն, Քոթիտիէն եւ Հիւմանիթէ չարաթէն ետք, կրկին իրենց առաջին էջի խորագիրը կը նուիրէին Հերսանի: Բոլորն ալ սրամտութիւններէ չէին խու-

(Շար·ը Դ· էջ)

«ՑԱՌԱԶ»Ի ԸՆԴՄԷՋԷՆ

1985-ԷՆ ԴԷՊՔԵՐ, ԴԷՄՔԵՐ, ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Պատրաստեց՝ ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Ց Ո Ւ Ն Ի Ս

- Հայկական լուրերով հարուստ ամիս մը -

× Ցուսախաբութիւն մը։ Ուաշինկթընի մէջ, Ներկայացուցչական ժողովը կը մերժէ Հայերուն ցեղասպանութեան վերաբերող թիւ 192 բանաձեւը այսինքն Ապրիլ 24-ը դարձնել «Ազգ· Օր Մարդկութեան դէմ մարդուն վայրագութեանց, ի յիշատակ բոլոր զոհերուն եւ ի մասնաւորի 1915-ի այն հայ զոհերուն, որոնք ջարդուեցան Թուրքերու կողմէ»։ Ուստի ամերիկեան չափերը ամէն բանէ վեր։ Գոհ է Թուրքիան։

× Թուրքիան գոհ կ'ըլլայ կրկնապէս երբ Ժագլին Փաթընոթրի նման անձեր, եւրոպական Խորհուրդի անդամ, կը ստորագրեն յօդուածներ, ուր կը գրուի· - «Հայկական հարցը, Թուրքիոյ նկատմամբ, արտաքին ֆէնոմէն մըն է»։ Յօդուածը լոյս կը տեսնէ «Ֆիկարօ» թերթի Յունիս 27-ի թիւին մէջ։ Միայն ուելցընենք որ, յօդուածը գրելէ առաջ Ժագլին Փաթընոթր այցելութիւն մը կատարած էր Թուրքիա։

× Միշտ հայկական հարցի հետ առընչուած, համայնավար երեսփոխան եւ Ազգ· Ժողովի փոխ - նախագահ՝ կի Տիւքոլոնէ Ազգ· Ժողովի մէկ սրահին մէջ Ժողովի կը հրաւիրէ մամուլի եւ կազմակերպութեանց ներկայացուցիչներ, ծանօթացնելու համար իր ծրագիրը հայկական ցեղասպանութեան ճանաչման ի նպաստ։

× Նաեւ, Ֆրանսական մամուլէն կ'իմանանք թէ 216 Ֆրանսացիներ անցապիրի կը սպասեն դուրս ելլելու համար Խորհրդային Միութենէն։ Լուրը հոս չի վերջնաար։ Դիմում կատարողներէն 130-ը Հայ են։ Երեւոյթ մը եւս մեր նոր օրերու պատմութենէն։

× Հայկական թերթ մը։ Նիւթ՝ հայկական ձեռագիրները, վայր՝ Երուսաղէմ եւ Պոլիս, դերակատար՝ Եղիշէ եւ Շնորհք Պատրիարք։ Վերջին տեսարան՝ Պոլսոյ կրօնական Ժողովը, նախագահութեամբ՝ Շնորհք Պատրիարքին, կ'արգիլէ անուան յիշատակումը Եղիշէ Պատրիարքին Պատարագի ընթացքին։

× Երեւանի մէջ, իր մահկանացուն կը կնքէ Հայաստանի Արտաքին նախարար՝ Ջոն Կիրակոսեան։

× Փեշտայի մէջ, կոմիտասի Եւրոպայի 26-րդ ախոյենութեան փեսուր ծանրութեան ախոյեանն է՝ Ս· Խաչատրեան։

× Քելեան, հայկական առաջին հաստատութիւնն է որ տակարան կը մանէ։

Յունիս ամսուան միջազգային կարեւոր լուրերէն նշենք· -

12·- Պատմական թուական Եւրոպայի համար։ Մաորիտ եւ Լիզպոն կը ստորագրեն իրենց պաշտօնական մուտքը Եւրոպայի Հասարակապետութեան մէջ որ 10-էն կ'անցնի 12-ի։

14·- Կատարեալ ոդիսական մը։ Թի - Տըպըլեու - էյ ամերիկեան ընկերութեան մէկ Պոյինկ 727-ը Ալժէ - Պէյրութ դիծին վրայ կը մնայ պատանդ Պէյրութի օդակայանը չիներու հակակշռին տակ, որոնք կը պահանջեն ազատ արձակումը 700 չիի բանտարկեալներու Իրաւէլի մէջ։ Ամբողջ ամիս մը պէտք եղաւ Ռեկընի կառավարութեան ազատելու համար 39-ը վերջին պատանդները։ Հոլորովին մոլորուած երկրի մը մէջ, այլեւս չեն հաշուուիր առեւանգումներն ու պատանդները։

23·- Օդանաւային եղերական արկած· Իռ Ինթիայի 747 Պոյինկի մը պայթումը Իռլանտայի հարաւ արեւմուտք ջրջանի վրայ կը պատճառէ 329 մեռեալ։ Ոչ մէկ վերապրող։

24·- Իտալիա ունի Հանրապետութեան նոր նախագահ մը՝ Ֆրանչեսքօ Քոսիկա։

27·- Փարիզի մէջ կը մեռնի Լիբանանի նախկին նախագահը՝ Էլիաս Սարկիս։

Յ Ո Ւ Լ Ի Ս

1·- Կորբաչով կ'ամրապնդէ իր դիրքը։ Արտաքին նախարարութիւնը կը յանձնուի Խոսուր Շեւարդնաձէի եւ Անդրէյ Գրոմիկօ «կ'ընտրուի» նախագահ Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդի Պրեզիտիումին։ Կորբաչով իր հակառակորդներն ու մրցակիցները «պատիւնե - րու» կ'արժանացնէ։

2·- Մանուչեան թերթօն։ Աւելի քան ամիս մը՝ ազմուկ, բանավէճ, մեղադրանքներ, հաշուեյարդարներ, սպառնալիքներ դրաւոր մամուլի էջերուն թէ ձայնասփիւռի եւ հեռատեսիլի կայաններուն վրայ։ Եւ եկաւ «հանգստեան կոչուած ահաբեկիչներ» ֆիլմը, հասատաւելու համար թէ ուրիշ բան չէ եթէ ոչ փառերզը հրէական դիմադրութեան։ Համայնավար կուսակցութիւնը լնգզինքը պաշտպանեց եւ փրկեց։ Մանուչեան յիշեցուց՝ «Առլէզիէն»ը։

8·- Սպանիոյ թագաւորը Խուան - Գարլոս պաշտօնական հիւրը կ'ըլլայ Ֆրանսային, Յուլիս 8-էն 11։ Նպատակ՝ աւելի սիրալիր գարձնել կապերը երկու երկիր - ներու միջեւ եւ մոռցնել տալ կարգ մը կնճռոտ հարցեր։

8·- Ձեպընթացի ծանր արկած էր Հավը - Փարիզ գիծին վրայ։ 8 մեռեալ եւ 67 վիրաւոր։

9·- Լիբանան, ոճրափորձ մը եւս։ Թագաւորուած կառքի մը պայթում՝ տասնեւինը մեռեալ։

12·- Թուրքիա, ազատական քաղաքականութիւն կամ ոչ, երկրի անտեսական ծանր տագնապը կը չարունակուի։ Արտաքին պարտքը կը հասնի 20 միլիառ տոլարի։ Հակառակ այս կացութեան, Թուրքիա միշտ նոր ապառնալիքներ կը տեղացընէ Արեւմուտքին։ Եւ իրաւունք ալ ունի, քանի Հելմութ Քոհլ կը յայտարարէ·- «Եւրոպացին չհեռացնել Թուրքիան»։ Հելմութ Քոհլ առաջին Արեւմտեան վարկավարն է որ Թուրքիա կ'այցելէ, 1980-ի դինուորական պետական հարուածէն ի վեր։

13·- Սեւրի մէջ, տեղի ունեցաւ հայկական «Համաշխարհային» երրորդ հանդումարը։

19·- Իտալիա։ Տոլոմիթներու փոքրիկ դիւղի մը մէջ, թէղէոօ, արուեստական լիճի մը ամբարտակին փլուզումը կը պատճառէ ահաւոր աղէտ մը։ Վեց քիլոմեթրի վրայ չուր ու ցեխ հեղեղի նման կը կործանեն ամէն բան։ Հաշուեկշիռ՝ 214 մեռեալ, անհետացողներ եւ բազմաթիւ վիրաւորներ։

21·- Հեծելանիւ։ Պեռնար Ինօ կը տանի Ֆրանսայի ջրջանի իր 5-րդ յաղթանակը։

21·- Համակամութիւն «Դրամական եւրոպական դրութեան» անդամ 8 պետութեանց ժողովին։ Իտալական լիրը կ'արժեզրկուի 6 առ հարիւր, իսկ միւս 7 տարադրամները կը վերարժեւորուին 2 առ հարիւր։

22·- Քուիընհակի մէջ, Իսլամական ճիհատը երկու ոճրափորձեր կը գործէ՝ սինագոկի մը եւ օդանաւային ամերիկեան ընկերութեան մը դէմ։ Այս զոյգ արարքները կ'ընեն, 27 վիրաւոր։

23·- Մանր կացութիւն հարաւ - Ափրիկէի մէջ։ Ձերբակալութիւններ, ցոյցեր, բախումներ, սպանութիւններ իրարու կը յաջորդեն։ Փրէթորիա ցեղային խորհրդանութեան ախոյեան վարչակարգը կը քննադատուի եւ կը դատապարտուի, սակայն առանց հետեւանքի։ Հոս ալ առեւտրական չահերը ամէն բանէ վեր են։

24·- Գալիֆորնիոյ կառավարիչ՝ Ճորճ Տէօքմէճեան կը նշանակուի Ամերիկեան Ողջակիզումի Խորհուրդին անդամ, Նախագահ Ռոնալտ Ռեկընի կողմէ։

29·- «Լիպերասիոն»ի մէջ «Փափիէ տ'Արմենի» խորագրով յօդուածի մը մէջ վերոնիք Պրոքար «հրաժարականի հըրաշք» կ'որակէ 60-ամեայ «Յառաջ»ը։

29·- Նայրոպիի մէջ կը գումարուի կանոյ համագումար ՄԱԿ-ի կազմակերպութեամբ։

29·- Միշէլ Օտիառ, Ֆրանսայի ամէնէն սրամիտ, խմուռի ախոյեան զրացուցիրը, կը լռէ յաւիտենապէս։

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

1985 Օգոստոս 29-ին, ժընեւի մէջ, ՄԱԿ-ի Մարդկային Իրաւանց Ենթայանձնախումբը 15 օր քննարկելէ եաք կը վաւերացնէ Պէնիամին Ուիթրըքըրի տեղեկագիրը իր ամբողջութեանը մէջ։ Բանաձեւին թեր կը քուէարկեն 14 անդամներ, ձեռնպահ կը մնան 4 անդամներ (Պանկլատէշ, Յորդանան, Մարոք եւ Քուպա), դէմ 1 ձայն՝ խորհրդային մասնագէտը Սոֆինակի։ Տեղեկագիրը իր 24-րդ պարբերութեամբ կ'անդրադառնայ հայկական ցեղասպանութեան, թուելով մասնագիտական ապրիւրներ յիշելով Թոզովուրդներու Մնայուն Դատարանի վճիռը (Փարիզ) 1984)։

Հարկ եղաւ աւելի քան տասնեակ մը տարիներու յարատեւ աշխատանք հասնելու համար այս արդիւնքին։ Անկասկած անկիւնադարձ մը, հանդրուան մը դէպի հայ դատի լուծումը։

1985-ը եւ յատկապէս Օգոստոս ամիսը համերկրային օդանաւորդութեան ամէնէն սեւ տարին է։

2·- Տալլասի օդակայանը ձըմպօ - ճէթ մը կը ճգմուի՝ 131 մեռեալ։

12·- Թոքիոյէն Օզաքա պացող, ճափընյո Լայնզի Պօյինկ 747 մը կը ջախջախուի, թռիչք առնելէն մի քանի վայրկեան յետոյ՝ 520 մեռեալ։

22·- Մանչէսթըրի օդակայանը Պօյինկ 737 մը, թռիչք չառած կրակ կ'առնէ, 55 մեռեալ եւ 80 վիրաւոր։

Արկածներու այս սեւ չարքին աւելցընենք երկաթուղիի արկած մըն ալ։

3·- Ֆլօժաքի մօտ, մարդկային թերացումի մը հետեւանքով, Քորայլ մը եւ Միչլըին մը ուղղակի իրարու կը զարնուին՝ 35 մեռեալ, 48 վիրաւոր։

Այս Օգոստոս ամսոյն զոհեր եւս։ Այս անգամ, Լիբանան։ Թիւերը ահաւոր են։ Առաջին երկու չաբաթներու ընթացքին 264 մեռեալ, 775 վիրաւոր, 2500 քանդուած տուն եւ ... հազարաւոր քիլօ պայթուցիկ։

Օր մը արեւելեան Պէյրութ, Անթիլիաս, միւս օրը արեւմտեան չրջանը քաղաքին, ուրիշ օր մը Տրիպոլիս, Սայտա...։ Անդամ մը սեւ չոկատները, միւս անգամ կարմիր չոկատները եւ միշտ թակարդ - կառքեր լեցուած պայթուցիկներով։ Եւ Լիբանանը կը չարունակէ ապրիլ։

Արձակուրդի այս օրերուն Ֆրանսական քաղաքական աշխարհը եռուն է։ Կրինիթիս չարժումին պատկանող նաւը, որ Յուլիս 10-ին, ընկղմեցաւ Օքլէնտի նաւահանգիստը (Նոր - Զելանտա) զոհը եղած է Ֆրանսական գաղտնի սպասարկութեանց ոճրափորձի մը։ Բարդ հարց եւ չարունակ - կելի։

Վերջացնենք այս ամիսը, այլ յիշատակելի լուրերով· -

1·- 1925 - 1985 վաթսունամեակ Եւրոպայի առաջին հայ օրաթերթին «Յառաջ»ի։

2·- Կը մեռնի Գ· եւ Դ· Հանրապետութեանց կարկառուն դէմքերէն՝ Ժիւլ Մոք։

8·- Յովհ· Պօղոս Բ· Պապը կը կատարէ չրջապտոյտ մը Ափրիկէ։ 12 օրուան ընթացքին կ'արտասանէ 40 ճառ թէ քարոզ։

18·- Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ (վեր) ընտրուեցաւ Ալի Խամէնի։

21·- Կը մեռնի Անրի Ֆլամարիոն, Ֆրանսական հրատարակչական աշխարհի մեծ դէմքերէն։

28·- Լոյս կը տեսնէ, Լաֆոն հրատարակչականէն Հանրի Վէրնէօյլ (Աչոտ Մալաքեան) «Մայրիկ» գիրքը։

ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՀՈՒԱՆ ՅԻՕՆԱՄԵԱԿԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Կոմիտաս Վարդապետի մահուան յիսնամեակը վառաւոր հանդիսութեամբ մը նչուած է Պոլսոյ մէջ, Դեկ· 22-ին, նախաձեռնութեամբ «Կոմիտաս» երգչախումբի եւ մասնակցութեամբ տասը երգչախումբերու։ Հանդիսութեան նախապահած է Շնորհք Պատրիարք։

Պէյօղլուի Ս· Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ պատարագած է Շահան եպիսկ. Սվաճեան։ Կոմիտասեան պատարագի երգեցողութիւնը կատարած է հարիւր հոգինոց երգչախումբ մը, ղեկավարութեամբ Նուպար Սիմոնեանի։ Պատարագիչը իր քարոզով անդրադարձած է Կոմիտասի կեանքին ու գործին։

Յաւարտ պատարագի հոգեհանգստեան պաշտօն կատարուած է, որմէ եաք Պէյօղլուի Մատենադարանի սրահին մէջ տրուած է ճաշ մը, որու ընթացքին գործակցուած է յայտագիրը մը, նուիրուած Կոմիտասի։ Հանդիսութիւնը վարած է Արմէն Զրաքեան։ Ուղերձ մը արտասանած է «Կոմիտաս» երգչախումբի վարչութեան ատենապետ Պերճ Տէր - Մարտիրոսեան։ Նպարէթ Պալ ներկայացուցած է Կոմիտասի կենսագրականը։ Երջանիկ Բարսեղեան երգած է «Կռունկ»ը, իսկ պարիթոն Տիրան Լոքմակէօզեան՝ «Տըլէ Եաման»։ Սիլվա Կոմիկեան արտասանած է Կոմիտասի նուիրուած երեք գործեր՝ Վարդ Շիկահերէ, Զարեհ Սրապեանի եւ Ռոպէր Համամճեանէ։ Ասոք առնելով «Մարմարա»ի խմբագրապետը՝ Ռ· Համամճեան, ի մէջ այլոց ըսած է· «Կոմիտաս ապրած է երկու մեծ Գողգոթաներ, տեսած է պատերազմը եւ կորնչուցած է իր մարքի լոյսը։ Բայց չենք կրնար մեր ձեռքերը լուալ, ըսելով որ ան միայն այդ 2 տառապանքները ապրած է։ Մեր ժողովուրդին որոչ խաւերն ալ տառապեցուցած են պինդը, իր սքանչելի աշխատանքը դիմաւորած են կասկածով, անհամակցողութեամբ, հալածանքով ու նախանձով։ Կոմիտաս առանձինն եւ ժողովուրդին դանձերուն հանդէպ իր խանգաղատանքին չնորհիւ, դեղջուկին ու հոդագործին կոխած հողին տակէն պեղած է անտագիտ դանձերը ու գանձանք փայլեցնելով տեղաւորած է այն ամէնէն իրաւ թանգարանին մէջ, որ ժողովուրդի մը սիրտն է»։

Գեղարուեստական յայտագիրը չարունակուած է Վահէ Օհանեանի երգերով եւ Նուպար Պետրոսեանի արտասանութեամբ։ Բոլոր երգչախումբերու անունով խօսք առնելով տոքթ· Զաւէն Մէնկուճեան դրաւատած է միանձնական ոգին եւ երիտասարդ սերունդը հրաւիրած չարունակելու մեծերուն գործը, միանձնական նոյն ոգիով ու նուիրումով։ Երջանիկ Բարսեղեան երգած է «Ով Մեծասքանչ»ը, որուն ընկերացած է ամբողջ սրահը, խանդավառ մթնոլորտի մը մէջ։

Հանդիսութեան հուսկ բանքը արտասանած է Շնորհք Պատրիարք, որուն խօսքէն կու տանք հատուածներ· «...Դէմքեր կան մեր մէջ, որոնք այլեւս համապղպային յարգանքի, համակրանքի եւ ընդունելութեան արժանացած են, հոգ չէ թէ մեզմէ ամէն մէկը ինչ հոսանքի պատկանինք կամ ինչ գաղափարի ծառայենք։ Ու եթէ միեւնոյն իսկ դանուած ըլլան անհատներ, որոնք տարաձայն ըլլան համազգային այս համանուագին, այս վերջինը տակաւին այնքան ուժեղ ու համատարած է, որ այդ ձայները խեղդուած ու մարած են անոր մէջ։ Անտարակոյս կոմիտաս մեր ժողովուրդի մեծագոյն դէմքն է 20-րդ դարուն, եթէ մեծութիւն բաելով հասկնանք մարդու մը ժողովրդային նուիրման չափ ու մանաւանդ իր ժողովուրդին համար ձգած արդասիքին ընդարձակութիւնը, կարեւորութիւնը եւ մնայուն հանգամանքը։

«...Ազգեր երբեմն կը ծնին դաւակներ, որոնք օժտուած կ'ըլլան անոր ոգեղէն աշխարհի Սրբութիւն արբոյէն ներս մըտնելու առանձնաշնորհով եւ դուրս բերելու անկէ՝ ծածկեալ գանձեր։ Կոմիտաս իր ժողովուրդի ծածկեալ գանձերը դասաւորեց երգին մէջ, որ ամէնէն հարազատ միջոցն է անոր ներաշխարհը դրսեւորելու։ Հաւաքեց այդ երգերը անյագօրէն, գանձ մը գանդի հոգեբանութեամբ։ Անցուց գանձը իր տաղանդի զտարանէն, մէկդի նետեց «խոտան»ը եւ «գրաբի բարին» վերադարձուց իր ժողովուրդին «գոյ՝ ի գոյոյ՝ քեզ մատուցանեմ» բանաձեւով։ Այս մարգի մէջ իր հաւաքիչի եւ զտիչի նա-

Պատկեր մտքով

Նրբատիպ Շուշ գիրքերէն

«Ծիտուկ տատիկս» գիրքը ինձ համար ոչ միայն հետաքրքրական ընթերցանություն է, այլև ինքնատիպ ուսումնասիրություն՝ հայ ժողովրդի կենցաղի, սովորությունների, հավատալիքների, ավանդությունների, ասացվածքների, առածների, հանելուկների, խաղերի, զվարճանքների, ծիսական երգերի, ժողովրդական բժշկության, ժողովրդական մանկավարժության, ժողովրդական իմաստության մասին։ Հեղինակը՝ Ռուզան Մելիքյանը, ինչպես ինքն է ասում, ձգտել է գրքում ներկայացնել հայ ժողովրդի կյանքի ամենաբնորոշ կողմերը, ամենաէական գծերը։ Եվ նա հաջողությամբ է կատարել իր նպատակը։

Գրքի հերոսուհին՝ Ծիտուկ տատիկը, ինչպես ասում է հեղինակը, ոչ թե մի կոնկրետ անձնավորություն է, այլ ամբողջ սերունդների կուտակած իմաստության, ժողովրդական ստեղծագործության, ավանդական կենցաղի, սովորությունների, հավատալիքների, ծեսերի, խաղերի, զվարճանքների, ասացվածքների, առածների, հանելուկների

(Շար· Ա· Էջէճ)

սափիր եւ «Իմանիքէ»ն է որ կը յաջողի խորագիր մը, երկդիմի որ բնաւ անմեղ չէ, երբ կը գրէ՝

«Hérsant : Je suis partout»

Պարզ է, որ եթէ՝ ամէն տեղ եմ կը նշանակէ, կ'ոգեկոչէ նաեւ այ հոսանքի ծանօթ շաբաթաթերթ մը։

Հուսկ՝ «ամբաստանեալը», կը սորբագրէ «Ֆիկարօ»ի խմբագրականը, զայն խորագրելով «Վէվլուկ»։ Կը բացատրէ եւ օրինակներ կը բերէ։ Նախ կը ճշդէ որ 40 տարի է Պեռութիւնը իրեն մենաշնորհ ըրած է լրատուութիւնը, հեռատեսիլով ձայնասփիւռով։ Երբ, պէտք ունի կը դիմէ օտարներու՝ Մաքուէլ (Անգլիացի), Մըրտոք (Ամերիկացի), Շփրինկէր (Գերմանացի), Հուսկ՝ Պերլեսքոնի (Իտալացի)։ Ինչո՞ւ լնք պէտի համակերպի։ Եւ իր՞նչ վէվլուկ Փրոկրէի առթիւ, որ հազիւ քանի մը տողի պիտի արժանանար անգլեամերիկեան մամուլին մէջ։ Ու յայտնելէ ետք թէ ինք կը փրկէ Ֆրանսական մամուլը, կ'եզրակացնէ «այսպէս, մէկ պատերազմէ ետք չմնալու համար, հարկ է մէկ օրէնք կանխել»։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՔԱՏԱՖԻ ամերիկեան էն - Պի - Սի հեռատեսիլէն չտուաւ այն հարցազրոյցը, զոր խոստացած էր՝ «Հանդիպում մամուլի հետ» կիրակնօրեայ յայտագրին մասնակցելով։ Պատասխանելով սակայն ամերիկացի լրագրողներու, Քատաֆի ըսած է թէ Ապու Նիտալ Լիբիա չի բնակիր, երբեմն կ'այցելէ։ Լիբիա ահաբեկչութեան հետ ոչ մէկ կապ ունի, մարզուելու կայան չկայ Պաղեստինցիներուն համար։ Կարելի է արգելացնել Պաղեստինցիները, ըստ Քատաֆիի, երբ Հռոմի կամ Վիէննայի նման ոճրափորձերու կը դիմեն։

Թեհրանի մէջ, Թուրքիա եւ Իրան տնտեսական գործակցութեան համաձայնագիր մը ստորագրած են եւ այս առընչութեամբ է որ, Իզալ յայտարարած է թէ իսլամական ճիհատին սպառնալիքը Թուրքիոյ դէմ (տես «Ցառաջ», Յունուար 3) կը ձգտի վատթարացնելու երկու երկիրներու յարաբերութիւնները։ Իզալ, որ կը պնդէ որ 150 հոգինոց թրքական պատուիրակութիւնը, ըսած է նաեւ՝ «Ըսի Պարսիկ ղեկավարներուն՝ քանի որ սպառնալիքը մեր ժամանումէն 24 ժամ առաջ սրփռուած է, պէտք է դրդապատճառը փընտռենք։ Ոմանք կապ մը կը տեսնեն իսլամական ճիհատին եւ Իրանի միջեւ»։

«ԵՐԿՐՈՐԴ ՀՐԵԱՆ ԵՄ, որ յարութիւն կ'առնէ» ըսած է Տաւիթ Պութպուլի «Հանդուցեալ» հայրը, որ նման եղերական պարագաներու մէջ, անպատեհ չի գտներ՝ կատակել։ Փաստարան Փերոյի ըսպանութեան առթիւ, կնոջը ընտանիքին պատմութիւնը, եթէ բոլոր ծալքերը քակուին - կրնայ նախանձը չարժել Տալլասի (հեռատեսիլի թերթօն) հեղինակներուն։ Ուրեմն, 20 տարի է մեռած հայրը մէջ - տեղ ելաւ, պարզուած է նաեւ որ հայր, մայր ու աղջիկ իրարմէ հազիւ 100 մէթր հեռաւորութեան վրայ կ'ապրէին, թէ «Հանդուցեալը» կանոնաւորաբար կը տեսնէր թոռը, մինչ Տարի Պութպուլ լուր չունէր թէ հայրը ողջ է...։ Գալով փաստաբանին զոքանչին, ըսած է թէ փեսան շատ հեռաքրքիր էր եւ քրքրած է իր եւ այդ «առաքելութեանց» թղթածրարը, որու պէտք չէ դպչիլ, որովհետեւ «պայթուցիկ» է։ Ուրիշ բան պիտի չըսեմ կ'ըսէ, մինչ տիրող կարծիքն այն է որ կամ՝ պէտք եղածէն աւելին ըսած է, կամ՝ պէտք եղածէն պակաս։

ՎՐԻՊԱԿ

«Ցառաջ միտք եւ արուեստ»ի Ա· Էջի «Թղթեղէն երանգապնակ» յօդուածին Բ· սիւնակի սկիզբի երկու պարբերութիւնները սխալ գետեղուած ըլլալով, անհասկընալի դարձած են։ Ներողամտութեանը ապաւինելով յօդուածագրին եւ մեր ընթերցողներուն, կը վերահրատարակենք այդ մասը, Ա· սիւնակի վերջին տողերէն սկսեալ··

×

...Ինչ որ կը նշանակէ, թէ այդ թուականէն սկսեալ՝ նկարիչներուն կողմէ զուտ ընկարչական տեսաբանութիւն մը կը փընտռուի, եւ ուրեմն՝ զուտ նկարչական տեսողութիւն մը։ Խմբաւորումներու ծննդեան ու մահը կը նշէր նկարչական տեսաբանութեան ու տեսողութեան ձգտումը՝ դէպի ինքնիշխան, «ինքնաւար» (օբինա)վիճակ մը։ Խմբող տարրը «գաղափար»ն էր թերեւս, բայց խմբումին բուն դրդապատճառը՝ զուտ նկարչական «գաղափար»ի մը հետապնդումը։ Մինչդեռ «Ակ» խմբաւորումը իր հանդանակաձեւ յայտարարութեան մէջ կը գրէ հետեւեալը· «Մեր խումբին կազմութեան մէջ գոյութիւն ունի հասարակաց առաջնակարգ կէտ մը, որ հիմնուած է մեր գաղափարներու մերձակցութեան եւ ոչ թէ նկարչական որոշ ոճի մը վրայ՝ կիրարկուած խումբի անդամներուն կողմէ» (2)։ Խմբողը՝ հոս՝ արտանկարչական դրդում մըն է բացայայտ կերպով։ Մէկ խօսքով՝ Սփիւռքի մէջ հայ արուեստագէտի գոյութեան հարցն է։ Այդ հարցը կը խոստովանիմ որ իմ հասողութենէս անդին կ'իյնայ։

Բայց ուզեցի ցոյց տալ, որ տուեալ հարցը անդին կ'իյնայ նաեւ զուտ նկարչական մտահոգութիւններէն։ Այդ է, որ կ'ըսէ Ռուբէն Նաճառեան հարցազրոյցի մը մէջ· «Հայ նկարիչի մը գործը կրնայ դանազանուիլ ընդհանուր նկարչութեան մէջ, բայց ինծի համար գոնէ, շատ դժուար է ճշդել զայն զատորոշող եզրերը» (3)։

YAN'S

SEJOUR DE SKI

à

TIGNES

— Du 2 au 8 Mars —

— Pension complète
— Matériel
— Forfait
— Assurance
— Transport

F. 2000

Réservation jusqu'au 8 Janvier :

Tél. : 45 - 89 - 20 - 48
48 - 61 - 29 - 49

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՏԻԿԻՆ ԱԶՆԻՒ ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ

զաւակներն ու թոռները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց սուգին, ծաղկեպատկով, փոխան ծաղկեպատկի նուէրներով թէ անձամբ։

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՓԱՐԻԶ·· Օր· Խոսրովեան 500 Ֆ·։

ԻՍԻ·· Տէր եւ Տիկին Գարեգին Յովսէփեան 500 Ֆ·։

ՓԱՐԻԶ· - Տէր եւ Տիկին Փիէր Թերճանեան 300 Ֆ·։

ՓԱՐԻԶ·· Արամ Պետրոսեան 100 Ֆ·։

ՇԱՒԻԼ·· Տէր եւ Տիկին Շմաւոն Պալեան 200 Ֆ·։

ՄԱՐՍԷՅԼ·· Տէր եւ Տիկին Ասոիկ Աճեան 200 Ֆ·։

Ի ՅԻՇԱՏԱԿ

Րաֆֆի Սոլաքեան 200 Ֆ· կը նուիրէ «Ցառաջ»ին իր մեծ - հօր՝ Խորէն Համբարձումեանի մահուան Բ· տարելիցին ի յիշատակ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Իսիի մասնաճիւղը ընդհ· ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերուհիները, Շաբաթ, Յունուար 11, ժամը 15-ին Իսիի Մշակոյթի Տունը, 45 ռիւ տը լա Տէֆանս։ Ներկայ կ'ըլլայ Շրջ· Վարչութեան ներկայացուցիչը։ Կարեւոր օրակարգ։ Պատգամաւորի ընտրութիւն։

ԿԵՍԱՐԻՈՑ ՀԱՅՐ· ՄԻՈՒԹԻՒՆ

ՄՈՄԱՎԱՌՈՒԹԵԱՆ ՏՕՆԱՀԱՆԴԷՍ

ԿԵՍԱՐԱԿԱՆ ՀԱՄԲԱՒԱՒՈՐ ՔԷԹԼՃՈՎ ԵՒ ԹԼՃՈՎ

Յունուար 12, Կիրակի ժամը 15-ին, Հ· Բ· Ը· Մխիթեան «Ալեք Մանուկեան» մշակոյթի մեծ սրահին մէջ։

118, rue de Courcelles — 75017 Paris
M° Courcelles ou Péreire

Նախագահութեամբ՝
ՏԻԿԻՆ ՍՈՆԻԱ ՇԱՒՈՒԿԵԱՆԻ

Պ· ԵՓՐԵՄԵԱՆ վերջերս լոյս ընծայած «Ցաւիտենական Պայքար» պիրք - ալպոմը ստորագրելով պիտի նուիրէ ներկաներուն։

Գեղարուեստական բաժնին սիրայօժար կը մասնակցին·· Տէր եւ Տիկին Նիկոլեան, Պ· Մխիթարեան էմմայեան, Օրիորդներ՝ Աբրաքսի Գմբէթեան, Անահիտ Սվաճեան եւ ուրիշներ, երգերով, արտասանութիւններով, նուագով եւ զանազան անակընկալներով։

Բոլոր Հայերը, մասնաւորաբար կեսարացիները, անխտիր կը հրաւիրուին, անոնք իրենց մահացած սիրելիներուն հոգւոյն համար մոմ մը վառելով պիտի յաւերժացնեն դարերէ ի վեր մեզի հասած հայկական աւանդութիւնը։

Ծախքերու մասնակցութիւն՝ 50 Ֆ·։

MCA PARIS

GERARD CHALIAND

— spécialiste des mouvements révolutionnaires du Tiers Monde (du Kurdistan, d'Afghanistan)
— co-auteur du célèbre Atlas Stratégique
— fondateur du Groupement pour les Droits des Minorités (fondé en 1978 sur le modèle des Minority Rights Group)
— membre de la rédaction de la revue Esprit
— directeur de la collection Géopolitiques et Stratégies chez Fayard
— principal artisan de la session du Tribunal Permanent des Peuples sur le génocide arménien et responsable de la publication du Crime du Silence collection Champs chez Flammarion.

Présente
«*LE SEL DE LA VENGEANCE*»
de James T. HASHIAN

Vendredi 10 Janvie
à 20 heures 30

MAISON DE LA CULTURE ARMENIENNE
17, rue Bleue, 75009 Paris

POUR LA SAUVEGARDE
DU PATRIMOINE ARMENIEN

à Alfortville
le Vendredi 10 Janvier à 21 heures
MAISON DE LA CULTURE ARMENIENNE
9, rue de Madrid — 94140 Alfortville

PROJECTION - DEBAT

Bilan des campagnes d'exploration et des travaux menés par l'Organisation Terre et Culture.
Iran du Nord, Arménie Occidentale, Région de Kessab.
Et présentation des projets en cours.

Ներկայացում՝ երկիր եւ Մշակոյթ կազմակերպութեան աշխատանքներու - Ատրպատականի, Արեւմտեան Հայաստանի եւ Քեսապի շրջանի մէջ։ եւ իր ներկայ ծրագիրներուն

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԼՈՒՍԱՐՁԱԿՈՒՄ

ՏՕՆԱԾԱՌ

Սէն - Ժէռօմի Ս· Սահակ - Ս· Մեսրոպ Եկեղեցւոյ Թաղականութեան եւ Հ· Բ· Ը· Մխիթեան Հովանաւորութիւնը վայելող երկօրեայ դպրոցին Ամանորի հանդէսը տեղի կ'ունենայ Յունուար 11-ին, Շաբաթ, ժամը 21-ին Եկեղեցւոյ կից սրբատեղը, ղեկավարութեամբ, ուսուցիչներ՝ Տիկին Մայտա Կարապետեանի եւ Պ· Խաչիկ Եըլմազեանի։

Խմբերգ· արտասանութիւններ փոքրիկներուն կողմէ։

Կը ներկայացուի տրամախօսութիւն մը եւ գաւեշտ մը աշակերտներուն կողմէ։

Կը հրաւիրուին Թաղին եւ շրջակայքի բոլոր հայրենակիցները վայելելու համար հայկական օր մը եւ քաջալերելու համար մեր փոքրիկները։

Կաղանդ Պապային այցելութենէն վերջ հիւրասիրութիւն Թաղիս Կապոյտ Խաչի մասնաճիւղին կողմէ։

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
փարիզեան իր 8 մասնաճիւղերով կը կազմակերպէ՝
ԱԽԱՆԴԱԿԱՆ

ԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Կիրակի, Յունուար 12, ժամը 14·30–ին
Salle LEOPOLD BELLAN
rue Léopold Bellan — 75002 PARIS

— *Գեղարուեստական յայտագիր մասնակցութեամբ Կապոյտ Խաչի դպրոցներու աշակերտութեան։*
— *Մանկական ժապաւէնի ցուցադրութիւն։*
— *Կաղանդ Պապան ծրարիկներ կը բաժնէ սրահի ներկայ բոլոր մանուկներուն։*
— *Ճոխ պիւֆէ պատրաստուած Կապոյտ Խաչուհիներու կողմէ։*

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է — ՍԻՐՈՎ ՀՐԱՒԻՐՈՒԱԾ ԵՆ ԲՈԼՈՐԸ

HAY DISC
35, rue Lamartine - 75009 Paris
présente ses meilleurs voeux pour l'année 1986 et souhaite un joyeux Noël
ՀԱՅ ՏԻՍՔ
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ ԶԻՐ ՆՈՐ ՏԱՐԻՆ
ԵՒ Ս· ԾՆՈՒՆԴԸ
ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՂԹԱՆՔՆԵՐՈՎ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
8

MERCREDI
8 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՀԱՐԱՉ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.133 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.133

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

ԾԱԽՈՒ Է...

ՎՐԱՑԻ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐՈՒ ՊՈՄՈՆԹԻԻ ԵԿԵՂԵՑԻՆ

ՎԱԳԸՖՆԵՐԸ «SOLDE»Ի ՀԱՆԱԾ ԵՆ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻՆ ԿԱՌՈՒՑԱԾ ՊԱՏՄԱԿԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԸ

Դեկտեմբեր 25-ի «Ճումհուրիյէթ»ն է որ կ'արձագանգէ այս պատմութեան, որ կրնար անհաւատալի թուիլ եթէ թրքական չըլլար: Յօդուածագիրը՝ Սեմրա Սոմերսան բաւական «հետաքրքրական» ծալքեր կը բանայ այս տարօրինակ վաճառքին մասին: Կը պարզուի որ յաճախորդն ալ շատոնց պատրաստ է··· : Կայ նաեւ գինը: Բուն արժէքը կը գնահատուի 300-էն 500 միլիոն լիրա եւ ծախու կը հանուի 140 միլիոնի··· : Ճիշդ է որ *սոլտի* շրջան է···

×

«Ճումհուրիյէթ»ի Դեկտեմբեր 25-ի թիւին առաջին էջին վրայ, Սեմրա Սոմերսանի ստորագրութեամբ լոյս տեսած է անհաւատալի լուր մը, Պոմոնթիի կաթողիկէ Վրացիներուն պատկանող ու բոլորին ծանօթ Լուրտերու եկեղեցիին մուտքի դրան լուսանկարով: Թերթը կը տեղեկացնէ, թէ Պոլսոյ Վագըֆներու Շերջանային Տնօրէնութիւնը, հակառակ Վագըֆներու Օրէնքին բացարձակ արգելքին, միայն Նախարարաց Խորհուրդին վերապահուած իրաւասութիւն մը գործածելով կը ծանուցանէ, թէ ծախու է Պոմոնթիի կաթողիկէ Վրացիներու եկեղեցին, իր յարակից մասերով՝ վանքովը, վարժարանի շէնքով եւ չորսուկէս արտավար հողամասով:

Աղօթատեղին կառուցուած է 1861 թուականին եւ ներկայիս բաց է պաշտամունքի՝ իր համայնքին եւ հաւատացեալներու առջեւ:

Պատմական շէնքերու եւ հին կառոյցներու մասնագէտ չրջանակներ զարմանքով կը դիմաւորեն այս երեւոյթը ու կ'ըսեն յայտնեն, թէ օրինական բացորոշ արգելքներ գոյութիւն ունին այդ վաճառին դէմ, իսկ իրաւագէտներ անկարելի կը նկատեն նման բան մը, օրինական անառարկելի սահմանումներու վրայ կռթնած, յիշեցնելով որ Պոլսոյ Վագըֆներու Շերջանային Տնօրէնութեան Վարչութիւնը լիազօրուած չէ նման կարգադրութիւն մը ընելու եւ միայն Նախարարաց Խորհուրդի որոշմամբ կարելի է ընել այդպիսի որեւէ վաճառում: Իրաւագիտական չրջանակներու համաձայն, որեւէ պատմական անչարժ կալուած կամ բարեսիրական հնութիւն՝ կարելի չէ նման կամայական որոշմամբ մը ծախու հանել:

Շրջանային Տնօրէնութեան Վարչական Խորհուրդին կողմէ Վրացի Կաթողիկէ Եկեղեցւոյ Մատակարարութեան ուղարկուած է պաշտօնական գրութիւն մը, ուր կը գտնուի Շրջանային Տնօրէնի օգնական Քէմալ Գահրամանի ստորագրութիւնը եւ ուր ի մէջ այլոց հետեւեալը գրուած է, - «Վերոյիշեալ անչարժ կալուածին իրրեւ գին՝ նախատեսուած է 140 միլիոն 661 հազար լիրա: Գնահատուած այս արժէքէն պակաս չվճառուելու պայմանաւ, փոխանցման գործողութիւնները կատարուելէ առաջ՝ հարկ է որ փոխարժէքը յանուն Մատակար Մարմնին դրուի Վագըֆներու Դրամատան Անգարայի Ինճէսու Թաղամասի մասնաճիւղը եւ վարչութիւնս արդիւնքէն տեղեակ պահուի այդ մասին»:

Մինչդեռ, մասնագէտներուն կարծիքով այդ կալուածներուն իսկական արժէքն է նուազագոյն կրկնապատիկը կամ եռապատիկը ատոր՝ 300 - 500 միլիոն լիրա եւ հարց կը տրուի այս առթիւ նաեւ թէ ինչո՞ւ փոխարժէքը ի պահ պիտի դրուի եղեր Վագըֆներու Դրամատան Անգարայի մասնաճիւղերէն մէկուն մօտ: Այս պարագան անբացատրելի կը թուի եւ կարգ մը տարակոյսներ կ'արթնցնէ չահագրգիռներուն մօտ:

Կաթողիկէ Վրացիներու Եկեղեցւոյ Մատակարարութեան դրուած այդ դրութեան մէջ, արձանագրուած է նաեւ ծանօթութիւն մը, ուր կ'ըսուի թէ վարչական Խորհուրդէն երեք անդամներ հակառակած են վաճառքին, անոր համար որ «Վագըֆներու Օրէնքին Տաններորդ յօդուածին համաձայն՝ Նախարարաց Խորհուրդին կարծիքը չէ առնուած այդ մասին»: Ընդդիմադիր անդամները պահանջած են, որ այս ծանօթագրութիւնը արձանագրուի յղուած նամակին ներքեւ, բայց հակառակ ատոր՝ Շրջանային Վարչութեան Տնօրէնին օգնականը՝ Քէմալ Գահրաման պնդած է որ այդ նամակը գրուի եւ ուղարկուի վրացի Կաթողիկէներու յիշեալ Եկեղեցւոյ վարչութեան:

Ինդրոյ առարկայ անչարժ կալուածը, որ կը գտնուի Պոմոնթի, Սիլահչօր պողոտային վրայ, կ'ըսուի թէ գնել կ'ուզեն յարակից Պիլկի Լիսէի տէրերը, այդ նպատակաւ ալ վաճառումը իրականացնելու համար միջոցի մը ի վեր կ'աշխատի Էսին Աասլ անունով կին մը, որուն յուցարերած եռանդ գործունէութիւնը այդ մասին՝ ուշադրութիւնը գրաւած է բոլորին: Այս առթիւ կը պնդուի նաեւ, որ յիշեալ կինը շատ մտերիմ բարեկամուհին է Պետական Գործավար Քեազըմ Օզասլի, որուն Գործակալութեան կապուած են Վագըֆներու վերաբերեալ հարցերը:

Ինդրոյ առարկայ անչարժ կալուածներուն գնահատումը կատարուած է Մայիսին եւ այդ օրէն ասդին այլազան աշխատանքներ կը տարուին՝ նպատակադրուած վաճառումը իրականացնելու համար: Այդ կապակցութեամբ, Անգարայի Վագըֆներու Ընդհանուր Տնօրէնութեան հետ թղթակցութիւններ կը կատարուին: Կեդրոնի Ընդհանուր Տնօրէնի Օգնականը՝ Էրոլ Ճերրահօղլու եւ Կալուածոց Բաժնի Նախագահը՝ Ալի Թահա Խօզայըն կը հակառակին ատոր, յիշեցնելով որ նման կարգադրութեան մը համար Նախարարաց Խորհուրդին կողմէ որուելիք որոշում մը անհրաժեշտ պայման է: Հակառակ այս առարկութեան, սակայն, Պետական Գործավար Քեազըմ Օզասլ հրահանգած է յառաջ տանիլ աշխատանքները եւ մեր ժամ է նկատի ունենալ կատարուած այդ առարկութիւնները: Այս կացութեան պիտաց, կը հաղորդուի թէ Խօզայըն հեռացուած է Անգարայէ եւ պաշտօնի կոչուած՝ Քիւթահիայի կամ Աֆիոնի համար, իսկ Ճերրահօղլու ալ հրաժարած է իր պաշտօնէն»:

«Ճումհուրիյէթ»ի այս յօդուածին կից, «Մարմարա» հետեւեալ տեղեկութիւնները կուտայ՝ -

Պոմոնթիի պատմական այս եկեղեցին, 1861-ին կառուցուած է հայ ճարտարապետի մը՝ Կիւրեղեանի կողմէ: Սատարողներուն ու ծառայողներուն մէջ գտնուած են մեծ թիւով Հայեր, անցնող այս 125 տարիներու ընթացքին: Ոմանց անուններ արձանագրուած է աղօթատեղիին մէջ զետեղուած մասնաւոր տախտակներու վրայ եւ այդ պատճառաւ Հայերուն որոշ կարգ մը իրաւունքներ տրուած են՝ հոն պաշտամունք կատարելու, հայածէս Պատարագ մատուցանելու համար: Անցեալին, բազմաթիւ անգամներ Հայեր զանգան առիթներով օգտուած են այդ սրբավայրէն, որ սիրուն ու ճարտարապետական դեղեցիկ ոճով, տպաւորիչ աղօթատեղի մըն է:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻՄԸ ՏՈՂՈՎ

ԼՕՐԱՆ ՖԱՊԻՒՍ հարցազրոյց մը տուած է «Մոնտ»ի, ուր կ'ըսէ, ի մէջ այլոց թէ երբ՝ համակեցութիւն կը լսէ, կը պատասխանէ՝ Սահմանադրութիւն: Ինչ ալ ըլլան արդիւնքները, Մարտին, պէտք է Սահմանադրութիւնը գործադրել: Երբ նախարարապետ նշանակուեցայ, կ'ըսէ Ֆապիուս, ձիս համոյքով ներկայացուցին ոչպէս բարի ուրուական մը եւ պատասխանեցի բանաձեւով մը, այսօր կըրնամ զայն ամբողջացնել «ինք՝ ինք է, ես՝ ես եմ, ինք եւ ես՝ մենք ենք»:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Նախագահը արտակարգ նիստի հրաւիրեց Խորհրդարանը (Ապր· Ժողով եւ Ծերակոյտ) աշխատանքի ժամանակացոյցի ճկունութեան օրինագիծին համար: Ծանօթ է որ գլխաւոր բաներ համաչափօրէն կուսակցութիւնը կատարի թշնամի է եւ կը կրկնէ թէ վարչակարգին նուէրն է աջին եւ գործատիրութեան: Այս օրինագիծին կողմնակից է ՍԷ - ԷՖ - ՏԷ - Թէ: Գլխաւոր կէտն այն է որ հասատատութեանց տնօրէնները բանակցին ժամանակացոյցերը սենտիքանէրուն հետ: Օրինակ, եթէ օրէնքը անցնի, շաբաթական 39 ժամերու կողքին, կարելի կ'ըլլայ փոփոխութիւններ ընել 37-էն 41 ժամի միջեւ, առանց վճարումի՝ յաւելեալ ժամերուն համար, պայմանաւ որ տարեկան հաշիւը շաբաթական 38 ժամէն աւելի չըլլայ: Այս տեւողութենէն աւելի աշխատելու պարագային, յաւելեալ ժամերը կը վճարուին տարուան վերջ եւ իրաւունք կուտան հանգիստի մը որու տեւողութիւնը կը համապատասխանէ յաւելեալ ժամերուն 50%ին: Երեսփոխանները արդէն իսկ 288 փոփոխութիւններ պատրաստած են:

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՁԻՀԱՏԸ Թէհրանի թէ Պէյրութի մէջ, բացարձակապէս կը հերքէ թէ որեւէ սպառնալիք ըրած ըլլայ Թուրքիոյ դէմ: Իր անունով, չինծու յայտարարութիւն մըն է կ'ըսէ, որու նպատակն է վատթարացնել Իրանի եւ Թուրքիոյ յարաբերութիւնները:

ԼԻՊԵՐԱՏԻՈՆ, Ճունուար 7-ի իր թիւին մէջ յաւելուած մը հրատարակած է, երեւակայելով 1987-ի Ճունուար 7-ի իր թիւը: Շիրաք օգնութեան կը կանչէ «Թոնթոն»ը, քանի Պորա Պորայի մէջ փոլինեզիի անջատողականները պատանդ բռնած են Քլէօպ Մեթիթեռանէի արձակուրդի գացողները, որոնց մէջ Լը Փէն եւ Սիմոնն Վէյլ, Քանաքները ձեռք առած են Լուսոյ-թէէի եւ Կուատըլուպի կղզիները:

ԴԱՍՊԱՐՈՎ կը կրկնէ (այս անգամ՝ Տէտ Շեփիկըլի) որ բացարձակապէս չուզեր փոխվրէժի մրցում: Հարցը այն է որ եթէ յամառի իր մերժումին մէջ, տիտղոսը կրնայ կորսնցնել:

ՓԱՍՏԱՒԱՆ ՓԷՐՈՑԻ սպանութեան դրդապատճառը եթէ գայն լռեցնել էր, այդ պաղափարը ունեցողը բաւական սխալ հաշիւ մը տեսած է, քանի որ ամէն օր նոր ծալքեր կը բացուին եւ տպեղ երեւոյթներն ալ չեն պակսիր: Մեռիանները միշտ խնդրոյ առարկայ են: Հարկ է՞ր ցոյց տալ Քոլոմպիոյ այդ տղեկին հոգեվարքը, հարկ է՞ր նկարել Նանթի դատարանին ոճրագործը, հարկ է՞ր Պուէպուէլ ընտանիքի «սրտաճմլիկ» դիրկընդխառնումը ցոյց տալ: Այս վերջինը մանաւանդ, առնուազն քիչ մը անտեղի էր, երբ դեռ կը պարզուի որ այդ «ինքնաբուխ» դիրկընդխառնումը, համրոյրներն ու լացուկոծը յաջող կերպով ներկայացնելու համար, նախապէս քանի մը փորձեր եղած են···:

ՔԱՍՏԱՖԻ յայտարարած է թէ Ռեկրն «իսրայէլեան չուն մըն է»:

ՓՈՒԹՊՈԼ

«ՁԵՐՆՈՄՈՐԵՑ» ԵՒ «ՆԵՖԹՉԻ» ԿԸ ՊԱՀԵՆ ԻՐԵՆՑ ԴԻՐՔԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԼԻԿԱՅԻՆ ՄԷՋ

Մոսկուայի մէջ վերջ գտած են ոտնադնդակի խորհրդային ախոյեանութեան բարձրագոյն լիկայի երկու տեղերու համար չորս խումբերու միջեւ տեղի ունեցած մրցումները: Միութիւնը թարմացնելու համար յիշենք, որ ըստ նոր կանոնի, Խորհրդային 48-րդ ախոյեանութեան ընդհանուր դասաւորման մէջ 15-րդ եւ 16-րդ հանդիսացող խումբերը անցքի մրցումներ պիտի ունենային Ա· դասակարգի խումբերու մրցաշարքի ընդհանուր դասաւորման առաջին երկու տեղերը գրաւող խումբերու հետ եւ չորսէն երկու յաղթականները մաս պիտի կազմէին բարձրագոյն լիկային: Ծանօթ է, որ բարձրագոյն լիկայի 15-րդ եւ 16-րդ տեղերը գրաւած էին «Ձերնոմորեց»ը եւ «Նեֆթչի»ն, իսկ Ա· դասակարգի մրցաշարքի առաջին երկու տեղերը՝ ԲԿՄԱ եւ «Դաուգավա»:

Արդ, անցքի մրցաշարքը աւարտած է եւ «Ձերնոմորեց» (9 կէտով) ու «Նեֆթչի» (7 կէտով) պահած են իրենց դիրքերը բարձրագոյն լիկայի մէջ, հետեւաբար յառաջիկայ ախոյեանութեան (49-րդ) այս երկու խումբերը հանդէս կուգան բարձրագոյն լիկային:

ԵՐԵՒԱՆ ⇔ ՓԱՐԻԶ ՀԵՌԱՑԻՊ

ԵՐԵՒԱՆ
(ԱՐՄԷՆՓՐԷՍ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 24 - 27)

ԴԱՇՆԱԿԱՀԱՐ ՍԵԴՐԱԿ ԵՐԿԱՆԵԱՆԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երեւանի Կամերային Երաժշտութեան Տան մէջ տեղի ունեցած է Սեդրակ Երկանեանի դաշնակի նուագահանդէսը: Համամիութենական փառատօնի եւ Անդրկովկասի մրցումի դափնեկիրը մեկնաբանած է Շոփէնէն, Տրպիւսիէն, Նիկոլայ Մէթնէրէն եւ Եդուարդ Աբրահամեանէն գործեր: Ճայտարէ դուրս դաշնակահարը մեկնարանած է նաեւ Ալեքսանդր Ճարութիւնեանի «Երաժշտական պատկերներ»ը, Սքարլաթիէն, Սքրիապինէն եւ Լիադովէն գործեր: Սեդրակ Երկանեան աւարտած է Լենինականի Ն· Տիգրանեան երաժշտական դպրոցը, Երեւանի Զայքովսքի եւ Կոմիտաս երաժշտանոցները եւ 1978-ին դարձած Հայաստանի պետական ակադեմական երգչախումբին դաշնակահարը, խումբին հետ շրջելով զանազան քաղաքներ:

×

ԿԷՕԹԷի ԴԻՄԱՔԱՆԴԱԿԸ ԲՐԻՆՁԻ ՀԱՏԻԿԻ ԿԷՍԻՆ ՎՐԱՑ

Միայն խոշորացոյցով կարելի է տեսնել Կէօթէի դիմաքանդակը, զոր ստեղծած է Երեւանցի արուեստագէտ Արամ Ճարութիւնեան: Որպէս կտաւ վարպետը գործածած է բրինձի հատիկի կէսի չափ մեծութիւն ունեցող արոյրի կտոր մը: Պատկերին տակ գրուած են Կէօթէի ծննդեան եւ մահուան թուականները՝ 1749 - 1832: Արամ Ճարութիւնեանի հատաքածոյին մէջ կան աւելի քան 300 մանրաքանդակներ: Մարդու մազին վրայ, սատափի, ալիւմինիումի մանր կտորներու վրայ ան փորագրած է գրականութեան եւ արուեստի անուանի դէմքերու՝ Պուշկինի, Վէբերի, Շէքսփիրի, Պէթհովէնի, Հայնէի, Շիլլէրի, Սայաթ Նովայի, Կոմիտաս դիմաքանդակները:

«ԾԱՌԱՋ»Ի ԸՆԴՄԷՋԷՆ

1985-ԷՆ ԴԷՊՔԵՐ, ԴԷՄՔԵՐ, ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Պատրաստեց՝ ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1- Հայ մարզիկները ի պատուի: Ծանրաբարձութեան աշխարհի ախոյեանութեան Եուրի Վարդանեան կը ստանայ ոսկէ մետալ, իսկ Օգսէն Միրզոյեան եւ Եուրի Սարգսեան կ'արժանանան արծաթէ մետալներու:

2- Թուրքիա կը փնտռէ բայց չի գտներ ժողովրդավարութեան ճամբան: 1980 Սեպտեմբերի Պեւռական զինուորական հարուածէն ի վեր ձերբակալուած 77 հազար հոգի դեռ կը մնան բանտ: Վերոյիշեալ թուականէն ի վեր 412 մահապատիժ արձակուած է եւ 27-ը գործադրուած: Եւ Էվրէն մէյտ կը շարունակէ յայտարարել «Պեւռութեան դէմ ոճիր գործողներու հանդէպ ներում չի կրնար ըլլալ»: Թուրքիոյ համար ըստ ժամանակներու ոճիր բառը մէյտ նոյն նշանակութիւնը չունի· չմոռնանք այս մէկը:

6- Վենետիկի չարժանկարի 42-րդ փառատօնին եթէ Ալլէն Մկրտչեանի «մեր մանկութեան թանկօն» ֆիլմը մասնաւոր ուշադրութիւնը չի գրաւեր ժիւրին, սակայն գերասանուհի Կալիա Նովենց կ'արժանանայ «յառուկ յիշատակութեան»:

9- Ֆրանսայի բոլոր դպրոցները իրենց դռները կը բանան «որակ»ի եւ «արդիականացման» նշանաբանին ներքեւ: Այս է յայտարարութիւնը, վերամուտի նախօրեակին, Լուսաւորութեան նախարար Ժ. Փ. Շեվէնմանի:

10- Շնորհք Աբք. Գալուստեան՝ Պատրիարք Թուրքիոյ, կատարեց չրջապատոյտ մը Թուրքիոյ արեւելեան նահանգները: Յատկանշական էր Թուրք Թերթի մը փնտռած «յեսոյ միտքերը» այս չրջապտոյտին առընչութեամբ...:

11- Ֆրանսայէն յետոյ Փորթուկալ, երկաթուղիի արկածներու սեւ չարքը կը շարունակուի: Այսպէս երկու կառախումբերուն բախումը նոյն գիծին վրայ կը պատճառէ աւելի քան 50 մեռեալ:

14- «Իմանիթէ» համայնավար պաշտօնաթերթին տարեկան ոճին խորհրդայինը տաղաւարը յանձնուած էր, այս տարի, Հայաստանի:

17- Կրնփիս: Գլուխներ կ'իյնան, գլուխներ կ'աղատին: Նոր յայտարարութիւններ ծանր կացութիւն մը կը ստեղծեն Էլիզէէն Մաթիւնիոն, անցնելով պաշտպանութեան նախարարութենէն: Խռնիւ կը հրաժարի, գաղտնի սպասարկութեան տնօրէնը Լաքոսթ կը պաշտօնազրկուի: Պաշտպանութեան նոր նախարար՝ Փօլ Ռիլէս: Եւ դեռ այլ մեղաւորներ, մեղսակիցներ կան: Ընդդիմութիւնը, մոռնալով երկիրը կը չահագործէ կացութիւնը: Արդէն, ընտրապայքարը սկսած է:

19- Մեքսիքօ: Ահաւոր երկրաշարժ մը աւերներ կը գործէ, կործանելով մայրաքաղաքին մէկ երրորդը: Շուրջ 5000 մեռեալ եւ 10·000 վիրաւոր:

25- Վանուհմէօլպուքի տեղեկագիրը, հայկական ցեղասպանութեան վերաբերեալ, ներկայացուեցաւ Եւրոպական Խորհրդարանի քաղաքական յանձնախումբի անդամներուն: Եղան թեր ու դէմ, աւելի դէմ քան թեր կարծիքներ եւ արտայայտութիւններ: Շարունակութիւնը յաջորդիւ:

28- Ադամ Մաչատրեանի կիսանդրիի դեռեզում Մարեէլլի երաժշտանոցը ներկայութեամբ Նախարար Կաթրին Տրֆէռի եւ Եղուարդ Միրզոյեանի ու Ալեքսանդր Յարութիւնեանի:

29- Նոր - Քալետոնիա: Երջանային ընտրութիւնները տեղի ունեցան հանդարտութեան մէջ եւ 80 առ հարիւրի մասնակցութեամբ: 4-ի վրայ 3 չրջանի մէջ կը յաղթեն անկախապաշտները, բայց ժողովին մէջ մեծամասնութիւնը կը մնայ հականկախապաշտներուն: Երկուստեք զոհ են ընչացէս միշտ ընտրութիւններու վազորդային: Սպասենք յաջորդ չրթիներուն եւ ամիսներուն:

30- Կը մեռնի մեծատաղանդ դերասանուհի՝ Սիմոնն Սինիորէ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1- Իսրայէլեան օդանաւերը կը ռմբակոծեն Թունուզի մօտ, ՊԱԿ-ի կեդրոնատեղին, հակազդելով պաղեստինցի ահաբեկիչներուն: 154 զոհ, որոնցմէ 50 մեռեալ, թէ պաղեստինցի թէ Թունուզցի: Բոլոր երկիրները, բացի Ամերիկայէն, կը պախարակեն այս արարքը:

3- Կորբաչովի առաջին այցելութիւնը արեւմտեան երկրի մը, Ֆրանսայի համար է: Թէ Մէկը Խորհրդային Միութեան կ'ընդունուի բացառիկ պատիւներով: Միթերան կը յիշեցնէ Մարգկային Իրաւունքները, իսկ Կորբաչով կը խօսի ապազինումի մասին եւ չի մոռնար ձագկել Ուաչինկթընի ռազմապաշտ քաղաքականութիւնը:

4- Մարեէլլի մէջ, պաշտօնական բացում «Հայ դիրքը դարերու ընդմէջէն» ցուցահանդէսին, Հայ Մշակոյթի Տան կազմակերպութեամբ:

5- Էջմիածնի մէջ, Սեպտեմբեր 25-էն ի վեր տեղի կ'ունենան Վազգէն Ա. Կաթողիկոսի պահակալութեան 30-րդ յոբելենական տարեդարձի հանդիսութիւնները:

6- Ալէն Փրոսթ, առաջին Ֆրանսացին է, որ կը տիրանար «Ֆորմիւլ 1»ի աշխարհի ախոյենական տիտղոսին:

6- Փորթուկալ, մեքենակներու յեղափոխութենէն 11 տարի ետք, կը պտնուի արնտեսական եւ ընկերային ծանր կացութեան մը առջեւ: Կանխահաս ընտրութիւնները մեծամասնութիւն մը զուրս չեն բերեր եւ Մարիօ Սոարէսի ընկերվարական կառավարութիւնը ծանր պարտութիւն մը կ'արձանագրէ:

7- Նոր տեսակի պատանդ· իտալական Աքիլլէ Լաուրօ զբօսանաւը, Եգիպտոսի բացը, միջազգային ջուրերու մէջ կ'իյնայ Պաղեստինի Ազատագրական ճակատի (Աբուլ Աբպաս) ահաբեկիչներու ձեռքը 413 ճամբորդներով: Եասէր Արաֆաթի միջամտութիւնը վճռական կ'ըլլայ կացութիւնը փրկելու համար: Մէկ մեռեալ սակայն, Ամերիկացի մը: Իտալական կառավարութիւնը կը չնչէ բայց նաեւ կը պատակուի:

9- Սթրազպուրկի մէջ, Սոլիտարիթէ Ֆրանքօ Ամէնիէնը, եւրոպական Խորհրդարանի չրջազիծին մէջ, կը կազմակերպէ հաւաքոյթ մը, եւ ժ. վանակմէօլպուքի տեղեկագիրը Հայերու ցեղասպանութեան վերաբերեալ, կը ներկայացնէ ու կը լուսաբանէ Եւրոպայի խորհրդարանականներուն:

13- Թունուզի համագումարին ընկերվարականները Հականը կը փրկեն: Ու այսպէս, եւ եղեւ միութիւն, եւ եղեւ համագրում:

13- Պելժիոյ երեսփոխանական ընտրութիւններուն յաղթական դուրս կուգայ Լչխանութեան զլուխը պտնուող Համամբրամը (կեդրոն - աջ):

14- Մամաքի բանտին մէջ, կը մեռնի Պէքիր Զելենք: Ալի Ազճայի համաձայն ինքն է Պապին մահափորձին դրդիչը:

15- Սի - ժի - Թի-ն առենէ մը ի վեր դժուարութիւններու մէջ է: Ռընոյի գործադուլին առթիւ իր նահանջը առաւել զգալի կը դառնայ: Եւ Հոկտեմբեր 24-ի գործադուլը կը հասաւատէ երեւոյթը:

15- Փարիզի մէջ, Հայ Դատի Յանձնախումբը կը կազմակերպէ հանրաժողով ՄԱԿ-ի Իրաւանց Ենթայանձնախումբի տեսակցութեան չուրջ, Հայերու դէմ կատարուած ցեղասպանութեան ճանաչումին (1985, Օգոստոս 29):

16- Փարիզի մէջ կը սկսի հայկական չարժանկարի փառատօնը:

16- Լը Փէնի «Ճշմարտութեան ժամը» եղաւ կատարեալ «չօ» մը:

18- Հարաւ - Ափրիկէ: Պենճամին Մոլոյիսէ կախազան կը հանուի ու կը դառնայ սեւերուն մարտիրոսը:

19- Միթերան եւ իր չքախումբը երկու Քոնքորտով կ'այցելեն Պրազիլ եւ Քոլոմպիա: Բայց իր չքախումբէն Ֆրանսուազ Սական կը վերադառնայ հիւանդատար յատուկ օդանաւով:

20- Վենետիկի մէջ, «Հայերը ժողովուրդի մը դիմագիծը» նիւթին չուրջ տեղի կ'ունենայ պիտական ժողով մը:

25- Ֆրանսայի մէջ, վերջին նորութիւնը, հեռաճայնը՝ ութ թիւի կը վերածուի:

26- Լիբանան: Նախագահ Ամին Ճեմայէլ բացումը կը կատարէ Պիբլոսայի դրամատան նոր չէնքին, զոր Գարեգին Բ. Կաթողիկոս կը մկրտէ «Զարեհեան»:

27- Շիրաք - Ֆապիուս հանդիպում հեռատեսիլէն: Տժպոյն զրոյց մը: Սեւ չարք մը միջազգային չարժանկարի աշխարհին մէջ: Յաջորդաբար կը մեռնին Ծանօթ եւ մեծատաղանդ դերասանները՝ Ռոք Հիւսսըն, Եուլ Պրայներ, Օրսըն Ուելս:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ՇԱՀԵԿԱՆ ԵԼՈՒԹԸ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԷՋ

ԽՄԲ. - Արուեստագէտներու պատուիրակութեամբ մը Սիլվա Կապուտիկեան Նոյեմբեր 11-ին գացած էր Պուէնոս - Այրէս, բանի մը շաբթուան շրջապտոյտ մը կատարելու Հարաւային - Ամերիկայի հայկական գաղութներու մէջ: Բանաստեղծուհին այցելած է Ուրուկուէյ եւ Պրազիլ, Պուէնոս - Այրէսի հայկական հաստատութիւններն ու վարժարանները: Դեկտեմբեր 1-ին, այցելած է Գորտոպայի Հ. Յ. Դ. Անդրանիկ ակումբը եւ Արամ երկանեանի շիրիմը:

Պուէնոս - Այրէսի մէջ, Նոյեմբեր 24-ին, գրական երեկոյթ մը կազմակերպուած է, նուիրուած Սիլվա Կապուտիկեանի: Արշամ Ա. բհիյ. Պոզոյեան ներկայացուցած է բանաստեղծուհիին վաստակը: Երեկոյթի ընթացքին խօսք առած է Սիլվա Կապուտիկեան եւ յայտնած շահեկան միտքեր: Ստորեւ՝ բանաստեղծուհիին արտասանած ճառէն հատուածներ, քաղուած՝ «Սարզարապատ» շաբաթաթերթի Դեկտեմբեր 4-ի եւ 11-ի թիւերէն:

×

Ինչքան որ անցնում են տարիները, այնքան մենք աւելի ենք հսկում մեր ժողովուրդին, այնքան աւելի խորքից ենք համակւում դրա ուրախութիւններով եւ տրտմութիւններով, յուզւում, երազում, ժպտում, տագնապում: Ամէն մէկը իւրովի է հասնում այս հասունացմանը: Հայրենաբնակ ժողովուրդը անցաւ իր ճանապարհով, Սփիւռքի ժողովուրդը՝ իր ճանապարհով: Հայրենաբնակ ժողովուրդը կրեց դժուարին տարիներ, որովհետեւ մեզ ժառանգութիւն մնաց աւերակուած մի երկիր, լի որբերով ու զաղթականներով, հիւանդութիւններով ու մահերով: Եւ սակայն, այն երկիրը կարողացաւ ոտքի կանգնել եւ դառնալ Հայաստան, դառնալ հայրենիք: Ես կարող եմ ժամերով, անդամ օրերով պատմել այն դեղեցիկ ձեռքբերումների մասին, որ ունեցաւ մեր ժողովուրդը այս մի փոքրիկ հողակտորի վրայ: Եւ որքան այն պատմութիւնների մէջ տեղ կը գտնի իրապաշտական թիւեր ու փաստերը, այնուամենայնիւ չի կարելի վերածնման այն հրաչքը վերապրել միմիայն կոնկրետ փաստերին: Այնտեղ դեր ունեցաւ ոգին, Հային ստեղծագործ ոգին:

... Այդ ոգին էր որ կեսաքաղց ու կիսամերկ որբերին տուեց կառուցելու կամք, տուեց հայրենիք ստեղծելու նպատակութիւն եւ կառուցուեց այդ հայրենիքը ի տես աշխարհի, ի տես մեր տեղաբնակ ժողովրդի, ի տես Սփիւռքահայութեան: Մենք կառուցեցինք այս հայրենիքը կարծես թէ բնազդով, զգալով որ ան կառուցւում է ոչ միայն տեղի ժողովրդի համար, այլ՝ հեռուներից մեզ նայող հայրենակարօտ աչքերով ու մեր կեանքին հետեւող մեր պանդուխտ եղբայրների եւ քոյրերի համար:

... Ով ձեզանից աշնանը զալիս է Հայաստան, տեսնում է որ հայրենակարօտ սփիւռքահայ այցելուների, ուխտաւորների հետ միասին մեր Երեւանի փողոցներում չրջում են նաեւ օտարախօս այլազգիներ Եւրոպայից, Ամերիկայից, Ռուսաստանից, որոնք չափչփում են մեր վաղոցները, այցելում են մեր հնամայրերը, հիանում են մեր նորակառոյցներով եւ աչխատում են հասկանալ մեր գոյութեան խորհուրդը եւ պարմանալիօրէն հասկանում են նրանք:

...Մենք եղանք Մոնթէվիդէոյում, եղանք Պրազիլիայում, և նորից ու նորից մեր զմայլանքով տեսանք հայ զարմանքի պատկառելի պատկերը: Մենք այցելեցինք այդ բոլոր պատկառելի պատկերները կազմող կէտերը, խոնարհումով եւ երկիւղածութեամբ մուտք գործեցինք հայ եկեղեցիներից ներս, հիացումով եւ յուզմունքով ներկայ եղանք վարժարանների հայ մանուկների հանդէսների, նոյնպէս հիացումով խօսեցինք մեծահասակների հետ, պատմեցինք նրանց Հայաստանի մասին, եղանք զանազան չրջանակների ակումբներում եւ կրկին ու կրկին մեր մէջ նորոգուեց նոյն զգացումները հանդէպ սփիւռքը, նոյն մեծագոյն զուրգուրանքը դէպի ձեր չանքերը, ձեր զոհողութիւնները, ձեր ապրելու յամառութիւնը, որովհետեւ յիրաւի հարկաւոր է մեծ կամք, մեծ յամառութիւն, մեծ հետեւողականութիւն որպէսզի այս չախուռն ալիքի վրայ կարողանանք պահպանել, թանկագին հայրենակիցներ, ձեր ինքնութիւնը, ձեր հայեցիութիւնը, ձեր հաւատարմութիւնը ժողովուրդին եւ նրա աւանդոյթներին, նրա արմատներին:

... կեանքում լինում են տարրեր չաղթանակներ, լինում է չաղթանակ ռազմական զրաւումների, ռազմական արչաւանքների, լինում է չաղթանակ փառքի ասպարէզում, անձնական, փառքի իրեն սեփական ճանապարհը հարթելու եւ նպատակին հասնելու չաղթանակ եւ լինում է չաղթանակ ինքն իր մէջ, այսինքն ներքին ակարութիւնների դէմ տարած, չաղթանակ ներքին հիասթափութիւններին, ներքին նաւարեկութեան դէմ տարուող չաղթանակ, վշտի դէմ չաղթանակ, անկումի դէմ չաղթանակ: Ահա իմ կարծիքով Սփիւռքի չաղթանակը նման է այդ ներքին չաղթանակին:

... Թոյլ տուէք հայ գրողիս, Հայաստանեան ժողովուրդի ներկայացուցիչս բերել ձեզ այդ մեծ չաղթանակի համար մեր սրտագին չնորհակալութիւնները, թանկագին բարեկամներ, որովհետեւ ոչ միայն մենք, ոչ միայն հայրենիքը, ոչ միայն հայրենաբնակ ժողովուրդն է ձեզ հարկաւոր, այլ դուք՝ նոյնպէս մեզ չատ հարկաւոր էք, դուք մեզ ներչնչում էք նախ եւ առաջ, մեծ հպարտութիւն եւ պատասխանատուութիւն, որպէսզի մենք մեր երկիրը գարձնենք կատարեալ երկիր, որպէսզի մենք վերացնենք թերիները, որովհետեւ մենք դեռ թերիներ ունենք եւ ամէնօրեայ մեր աչխատանքում զգում ենք, աչխատում ենք չաղթահարել եւ դուք մեզ պէտք էք որպէսզի մենք զգանք որ մեր կատարած գործը լինչ որ արձագանգներ է ունենում, հասնում է հեռուները եւ մեզ լեցնում է եւ հպարտութեան եւ յեւտագայ կառուցումները չարունակելու յարութեան զգացումներով: Դուք մեզ պէտք էք որպէս ապրելու հաւաքականութիւն, որպէսզի մենք այնտեղ գրանք՝ 6 – 7 միլիոն, որպէսզի դուք էլ լինչ որ ձեւով, ձեր հոգեկանութեամբ, ձեր տատասպանքներով, ձեր ուրախութիւններով, ձեր հայրենասիրութեամբ եւ Հայրենիքից եկող տատասպանքներով, ուրախութիւններով, հայրենասիրութեամբ, վարքով, կրակով լեցրնէք այդ ովկիանոսները, մեզ բաժանող լեռները ու ծովերը, լեցնէք ձեր սիրով եւ մեզ գրանք ամբողջական ժողովուրդ, միասնական ժողովուրդ:

Ահա այս մեծ հաչուով, համազգային ասրողութիւն ունեցող այս մեծ հաչուեյարդարով, ես կ'ասէի, պէտք է մենք նայենք այսօրուայ է՛ւ մեր Հայաստանի կեանքին, է՛ւ Սփիւռքի կեանքին: Ես չեմ թաքցնում, կան բաներ որ մեզ տխրեցնում են, որ լինչ որ ձեւով երբեմն երկմտելու

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻ

Հրատարակվում է 1990 թվականի հունվարի 1-ից

Հրատարակվում է շաբաթական մեկ անգամ

Հրատարակության հասցեն՝ 375010, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 26

Հեռախոս՝ 52-42-10

Տպագրված է «Հայկական սովետական հանրագիտարան» հրատարակչության տպագրական միավորման տպարանում

Պատվեր՝ 1990

Տպաքանակ՝ 1000

Գինը՝ 1 ռուբլի

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻ

Հրատարակվում է 1990 թվականի հունվարի 1-ից

Հրատարակվում է շաբաթական մեկ անգամ

Հրատարակության հասցեն՝ 375010, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 26

Հեռախոս՝ 52-42-10

Տպագրված է «Հայկական սովետական հանրագիտարան» հրատարակչության տպագրական միավորման տպարանում

Պատվեր՝ 1990

Տպաքանակ՝ 1000

Գինը՝ 1 ռուբլի

ՍՈՒՏԱՆԱՑՈՒՔ

Production et distribution exclusive
HAY DISC, 35, rue Lamartine
75009 PARIS

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻ

Հրատարակվում է 1990 թվականի հունվարի 1-ից

Հրատարակվում է շաբաթական մեկ անգամ

Հրատարակության հասցեն՝ 375010, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 26

Հեռախոս՝ 52-42-10

Տպագրված է «Հայկական սովետական հանրագիտարան» հրատարակչության տպագրական միավորման տպարանում

Պատվեր՝ 1990

Տպաքանակ՝ 1000

Գինը՝ 1 ռուբլի

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Օր. Եւա Մկրտիչեան կը ծանուցանէ թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի, կիրակի, Յունուար 12, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Եկեղեցին իր մօր՝

ՏԻԿԻՆ ԱՆՆԱ ԳԱԼՖԱՅԵԱՆԻ

մահուան Բ. տարելիցին եւ իր հարազատներուն՝

ԱՐԱՔՍԻ եւ ԵՐՈՒԱՆԴ
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ

յիշատակին:

Ի գիտութիւն ողբացեալներուն յիշատակը յարգողներուն:

Այս առթիւ, Օր. Եւա Մկրտիչեան 500 ֆրանք կը նուիրէ «Յառաջ»ին:

COLLECTE

POUR LES PRISONNIERS ARMENIENS D'EUROPE

A l'occasion des fêtes de Noël, une collecte au profit de tous les prisonniers arméniens d'Europe a lieu à l'Eglise Arménienne Catholique d'Arnouville
69, ave. Henri Barbusse - 95400 Arnouville lès Gonesse

Cet argent sera adressé directement aux prisonniers pour leurs besoins personnels, cela avec l'accord des trois comités siégeant à Paris.

Encouragée par le succés de cette initiative et devant les nombreuses demandes, la paroisse arménienne catholique d'Arnouville lès Gonesse, informe que la collecte sera prolongée jusqu'au 31 janvier.

Cet appel s'adresse à tous les Arméniens et aux organisations arméniennes.

— Libellez vos chèques à l'ordre de :
Paroisse Arménienne Catholique
CCP 1844 93. *S. Paris*
— Les adresser à :
Eglise Arménienne Catholique
69, *ave. Henri Barbusse*
95400 *Arnouville lès Gonesse*
— *préciser pour les prisonniers arméniens*

A ce jour les dons s'élevent à : 5170 Frs Mr. Mesropian 1500 Frs, Paroisse d'Arnouville 1170 Frs., Mme. Nazarethian 1100 Frs, Mr. Léblébidjian 1000 Frs., Mme. Bédian 200 Frs., Mr. Jamgotchian 200 Frs.

imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

MCA PARIS

GERARD CHALIAND

— spécialiste des mouvements révolutionnaires du Tiers Monde (du Kurdistan, d'Afghanistan)
— co-auteur du célèbre Atlas Stratégique
— fondateur du Groupement pour les Droits des Minorités (fondé en 1978 sur le modèle des Minority Rights Group)
— membre de la rédaction de la revue Esprit
— directeur de la collection Géopolitiques et Stratégies chez Fayard
— principal artisan de la session du Tribunal Permanent des Peuples sur le génocide arménien et responsable de la publication du Crime du Silence collection Champs chez Flammarion.

Présente

«LE SEL DE LA VENGEANCE»

de James T. HASHIAN

Vendredi 10 Janvier
à 20 heures 30

MAISON DE LA CULTURE ARMENIENNE
17, rue Bleue, 75009 Paris

POUR LA SAUVEGARDE DU PATRIMOINE ARMENIEN

à Alfortville
le Vendredi 10 *Janvier à* 21 *heures*
MAISON DE LA CULTURE ARMENIENNE
9, rue de Madrid — 94140 Alfortville

PROJECTION - DEBAT

Bilan des campagnes d'exploration et des travaux menés par l'Organisation Terre et Culture.
Iran du Nord, Arménie Occidentale, Région de Kessab.
Et présentation des projets en cours.

Ներկայացում՝ երկիր եւ Մշակոյթ կազմակերպութեան աշխատանքներու *- Ատրպատականի, Արեւմտեան Հայաստանի եւ Քեսապի շրջանի մէջ:* եւ իր ներկայ ծրագիրներուն

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԼՈՒՍԱՐՁԱԿՈՒՄ

Cabinet TERZIYAN

TOUTES ASSURANCES — TOUTES COMPAGNIES

21, rue Lamartine, 75009 Paris
tél. 42 82 01 41 +

Ապահովագրական Ձեր հարցերուն համար մի՛ վարանիր դիմելու մեզի

VIENT DE PARAITRE

H. PASDERMADJIAN

HISTOIRE DE L'ARMÉNIE

4e Edition

1 vol gr.in - 8e, 437 pages avec 1 carte se dépliant

120 Frs. + 20 Frs. de frais d'envoi

Pour les commandes adresser un chèque à la

LIBRAIRIE ORIENTALE H. SAMUELIAN
51, *rue Monsieur le Prince* — 75006 *PARIS*

où le livre est en vente.

Ի ՅԻՇԱՏԱԿ

Մասլէն եւ Ժաք Քարփանթիէ 600 Ֆ. կը նուիրեն «Յառաջ»ին իրենց անմոռանալի՝ Ալիճ Մատթէոսեան - Փիճժերայի *մահուան 4-րդ տարելիցին ի յիշատակ:*

ԿԵՍԱՐԻՈՑ ՀԱՅՐ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՄՈՄԱՎԱՌՈՒԹԵԱՆ ՏՕՆԱՀԱՆԴԷՍ

ԿԵՍԱՐԱԿԱՆ
ՀԱՄԲԱՒԱՒՈՐ ՔԷԹՑՈՎ ԵՒ ԹՂՑՈՎ

Յունուար 12, կիրակի ժամը 15-ին, Հ. Բ. Ը. Միութեան «Ալեք Մանուկեան» մշակոյթի մեծ սրահին մէջ:
118, rue de Courcelles — 75017 Paris
M° Courcelles ou Péreire

Նախագահութեամբ՝
ՏԻԿԻՆ ՍՈՆԻԱ ՇԱՌՈՒԿԵԱՆԻ

Պ. ԵՓՐԵՄԵԱՆ վերջերս լոյս ընծայած «Յաւիտենական Պայքար» վիրք - ալպոմը ստորագրելով պիտի նուիրէ ներկաներուն:

Գեղարուեստական բաժինին սիրայօժար կը մասնակցին.. Տէր եւ Տիկին Նիկոլեան, Պ. Մխիթար Էմմայեան, Օրիորդներ՝ Ա. Բաքալ Գամբէթեան, Անահիտ Սվաճեան եւ ուրիշներ, երգերով, արտասանութիւններով, նուագով եւ զանազան անակնկալներով:

Բոլոր Հայերը, մասնաւորաբար կեսարացիները, անխտիր կը հրաւիրուին, առնոնք իրենց մահացած սիրելիներուն հոգւոյն համար մոմ մը վառելով պիտի յաւերժացնեն զարերէ ի վեր մեզի հասած հայկական աւանդութիւնը:

Մուտքերու մասնակցութիւն՝ 50 Ֆ:

ՏՕՆԱՑԱՆՔ

Սէն - Ժէռմէն Ս. Սահակ - Ս. Մեսրոպ եկեղեցւոյ թաղականութեան եւ Հ. Բ. Ը. Միութեան հովանաւորութիւնը վայելող երկօրեայ դպրոցին Ամանորի հանդէսը տեղի կ'ունենայ Յունուար 11-ին, Շաբաթ, ժամը 21-ին եկեղեցւոյ կից սրահը, ղեկավարութեամբ, ուսուցչուհիներ՝ Տիկին Մայոտ Կարապետեանի եւ Պ. Յակիկ Երզմազեանի:

Խմբերգ· արտասանութիւններ փոքրիկներուն կողմէ:

Կը ներկայացուի տրամախօսութիւն մը եւ զաւեշտ մը աշակերտներուն կողմէ:

Կը հրաւիրուին թաղին եւ շրջակայքի բոլոր հայրենակիցները վայելելու համար հայկական օր մը եւ քաջալերելու համար մեր փոքրիկները:

Կազմող Պապային այցելութենէն վերջ հիւրասիրութիւն թաղիս կապոյտ Խաչի մասնաճիւղին կողմէ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑ ԽԱՉԻ Իսիի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերուհիները, Շաբաթ, Յունուար 11, ժամը 15-ին Իսիի Մշակոյթի Տունը, 45 rue de la Տէփանս: Ներկայ կ'ըլլայ Շրջ· Վարչութեան ներկայացուիչը: Կարեւոր օրակարգ: Պատգամաւորի ընտրութիւն:

CONCERT A L'OPERA DE MARSEILLE

Samedi 25 Janvier à 20 heures 45

par

SIPAN - KOMITAS

(Chœur mixte Arménien de Paris)

et

l'ORCHESTRE PHILHARMONIQUE DE MARSEILLE

Direction

GARBIS APRIKIAN

avec le concours de
SONIA NIGOGHOSSIAN (Mezzo-Soprano)

« Solistes de Chœur »
Thérèse DEYRMENDJIAN (Alto)
Meguerditch BOGHOSSIAN (Tenor)
René MARTAYAN (Tenor)

Au programme les œuvres de
K. ALEMSHAH, P. GANATCHIAN, G. APRIKIAN, A. TIGRANIAN

Concert organisé par la Croix Bleue des Arméniens de France
— MARSEILLE VILLE —

Pour réservation, contacter les numéros suivants :

91 93 89 83
42 45 05 36
91 91 48 85
91 41 74 89
91 90 21 60
91 66 09 06
91 50 68 71

PERMANENCE
Maison de la Jeunesse et de la Culture Arménienne
12 - 14, rue Saint Bazile — 13001 MARSEILLE
LUNDI - VENDREDI de 17h00 à 19h30 — JEUDI de 15h00 à 19h30
TELEPHONE : 91 50 15 09
Et à partir du 20 Janvier location Opéra de Marseille

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ վարիզեան իր 8 մասնաճիւղերով կը կազմակերպէ՝

ԱԽԱՆԴԱԿԱՆ

ԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Կիրակի, Յունուար 12, ժամը 14·30–ին
Salle LEOPOLD BELLAN
rue Léopold Bellan — 75002 PARIS

— *Գեղարուեստական յայտագիր մասնակցութեամբ կապոյտ Խաչի դպրոցներու աշակերտութեան:*
— *Մանկական ժապաւէնի ցուցադրութիւն:*
— *Կաղանդ Պապան ծրարիկներ կը բաժնէ սրահի ներկայ բոլոր մանուկներուն:*
— *Ճոխ պիւֆէ պատրաստուած կապոյտ Խաչուհիներու կողմէ:*

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է — ՍԻՐՈՎ ՀՐԱՒԻՐՈՒԱԾ ԵՆ ԲՈԼՈՐԸ

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
9

JEUDI
9 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.134 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.134

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱԽՕՍ

ԵՐԵՒԱՆ
(ԱՐՄԷՆՓՐԵՍ ԴԵԿՏ· 30 - ՅՈՒՆՈՒԱՐ 6)

ՓՐՈՖ· Վ· ՍԱՐԳՍԵԱՆ
ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ

Պրաթիսլաւլոյ (Չեխոսլովաքիա) Կոմենսկի համալսարանի պետական խորհուրդը յիշատակի մեդալով պարգեւատրած է բնագէտ - ուսոզագէտ փրոֆ· Վլադիմիր Սարգսեանը, Խորհ· Միութեան եւ Չեխոսլովաքիոյ մեքենագէտ պետնականներու արդասաւոր համագործակցութեան ամրապնդման ու զարգացման, ինչպէս նաեւ Չեխոսլովաքիոյ պետական կեդրոններու համար որակեալ վարիչներու պատրաստութեան գործին մէջ իր ունեցած վաստակին ի պնահատութիւն: Փրոֆ· Սարգսեան պարգեւատրուած է նաեւ Կոմենսկի համալսարանի ուսոզագիտութեան ու բնագիտութեան լսարանի ոսկէ մեդալով եւ ընտրուած ակադեմիայի մեքենագէտներու ընկերութեան պատուոյ անդամ: Փրոֆ· Վլադիմիր Սարգսեան վարիչն է Երեւանի Համալսարանի մեքենագիտութեան ամպիոնին:

×

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀՆԱԴԱՐԵԱՆ ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ
ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի Գեղամայ լեռներու մէջ յայտնաբերուած ժայռապատկերներու քանի մը խումբեր ամբողջացուցած են այդ ինքնատիպ բացօթեայ պատկերասրահը: Ծովու մակերեսէն աւելի քան 2500 մեթր բարձրութեան վրայ հնադարեան նկարիչները պատկերացուցած են կրօնական ծիսակատարութիւններ, ծիսական պարեր, զոհաբերութիւններու եւ որսորդական տեսարաններ, կենդանական ու բուսական աշխարհը, որոնք իրենց թեքնիքով հիացում կը պատճառեն: Մանանդեաններու կարծիքով, նախնադարեան մարդիկ ամառը հոն բարձրացած են իրենց հօտերով ու նախիրներով: Հոն ստեղծած են պաշտամունքի ու կրօնքի յուշարձանները, երկրպագելով անոնց, զոհեր մատուցած են ենթադրելով, թէ երջանկութիւն պիտի գոնեն: Ժայռապատկերներու ուսումնասիրութիւնը դիտնականներուն կարելիութիւն կ'ընծայէ հայկական լեռնաշխարհի հին բնակիչներու կեանքին վերաբերեալ նոր տուեալներ բացայայտելու:

×

ՀԱՅ ԱՐԱԲԱԳԷՏՆԵՐՈՒ
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայաստանի ակադեմիայի արեւելագիտութեան հիմնարկի մասնագէտները աւարտած են «Մերձաւոր ու Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ» մատենաշարի յատուկ հատորի մը վրայ տարուող աշխատանքները: «Արաբական երկրներ» ընդհանուր խորագրով խմբական աշխատութիւնը կը բովանդակէ մասնագէտներու հետազօտութիւնները Եգիպտոսի, Սուրիոյ, Իրաքի եւ Լիբանանի արդի զարգացման հարցերու եւ անցեալի պատմութեան չուրջ: Այս առթիւ, հիմնարկի տեսուչի տեղակալ փրոֆ· Նիկոլայ Ծովհաննիսեան նշած է, թէ աշխատութիւնը համախմբած է վերջերս մասնագէտներու կատարած արժէքաւոր բազմաթիւ հետազօտութիւնները: Արաբական երկիրներու պատմութեան, տնտեսութեան եւ միջազգային յարաբերութիւններու վերլուծումը հետաքրքրութիւն կը ներկայացնէ անոնց համար, որոնք կը զբաղին այդ մարզի հետազօտութեամբ՝ Խորհ· Միութեան

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱԿ ԱՐՔ·Ի ՀԱՆԴԻՊՈՒՄԸ
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒՍՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

Թեհրանի Հայոց առաջնորդ Արտակ Արք· Մանուկեան, ընկերակցութեամբ երեսփոխան Վարդան Վարդանեանի եւ Թեմական Խորհուրդի ատենապետ Լեւոն Ահարոնեանի, Յունուար 2-ին հանդիպում մը ունեցած է Իրանի բարձրագոյն ուսման նախարար տոքթ· Ֆարհատի հետ: Արտակ Արք· նախ շնորհաւորած է նախարարը իր նոր պաշտօնին համար, ապա նկատի ունենալով այն՝ որ տոքթ· Ֆարհատի, Մշակութային Յեղափոխութեան Գերագոյն Խորհուրդի կողմէ կազմուած՝ հայկական վարժարաններու հարցերը քննարկող յանձնախումբի անդամներէն է, հարկ եղած բացատրութիւնները տալէ ետք նախարարին յանձնած է հայկական վարժարաններու հարցերու լուծման համար Թեմական Խորհուրդի ներկայացուցած առաջարկները բովանդակող թղթածրար մը:

Ապա արծարծուած է Սպահանի համալսարանի հայագիտական ամպիոնի վերբացման հարցը: Տոքթ· Ֆարհատի բացատրած է, թէ ընդառաջելով հայ երեսփոխաններու դիմումին, իր կարգադրութեամբ յիշեալ ամպիոնի վերաբացման հարցը արդէն դրական լուծում ստացած է: Խօսուած է նաեւ Թեհրանի համալսարանի հայագիտական ճիւղի վերաբացման կարեւորութեան մասին: Նախարարը խոստացած է այդ ուղղութեամբ եւս հարկ եղածը ընել:

մէջ եւ անոր սահմաններէն դուրս: Երեւանի արեւելագիտութեան հիմնարկը վերջին տարիները հրատարակած է կարգ մը աշխատութիւններ արաբական արեւելքի վերաբերեալ: Փրոֆ· Նիկոլայ Ծովհաննիսեանի «Իրաքի Հանրապետութեան յարաբերութիւնները արաբական արեւելքի երկրների հետ» գիրքը կը վերլուծէ Լիբանանի, Սուրիոյ, Յորդանանի հետ Իրաքի ունեցած քաղաքական ու տնտեսական յարաբերութիւնները: Հեղինակը կը յենու բազմաթիւ փաստաթուղթերու ուսումնասիրութեան, այդ երկիրները կատարած իր ճամբորդութիւններէն ստացած տպաւորութիւններու, արաբական աշխարհի մէջ տիրող ընդհանուր կացութեան վերլուծումին վրայ:

×

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆԻ
70-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ
ԱՄԲՈՂՋ ԲԱԺԻՆ ՄԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԷՋ

Սերօ Խանզադեան բոլորած է իր 70-ամեակը: Այս առթիւ, Մոսկուա լոյս տեսնող «Լիտերատուրնայա Գազետա» թերթը ամբողջ բաժին մը նուիրած է արձակագրին, ներկայացնելով անոր կեանքն ու գործը: Հրատարակուած է Խորհ· Միութեան Գրողներու Միութեան Վարչութեան ողջոյնի խօսքը: Բանաստեղծ Միխայիլ Դուդին ստորագրած է յօդուած մը, ուր կ'ըսէ թէ իր սերնդակիցներէն չատերու նման Սերօ Խանզադեան իբրեւ դրող ձեւաւորուեցաւ պատերազմի հրաշունչ տարիներուն· անոր առաջին պատմուածքները գրուած են այդ նոյն տարիներուն: Պատերազմէն ետք Հայաստան վերադառնալով Սերօ Խանզադեան հրատարակեց «Մեր գնդի մարդիկ» վէպը, ապա լոյս տեսան իր «Հողը», «Մխիթար Սպարապետ», «Քաջարան», «Լուսաբացը Սեւանի վրայ», «Թագուհին Հայոց» վէպերը, բազմաթիւ վիպակներ ու պատմուածքներ: Այնուհետեւ յօդուածագիրը անդրադարձած է կարդ մը յուշերու եւ Զանգեզուր կատարած իր այցելութեան:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻՄԸ ՏՈՂԱՎ

ՆԱԽԱԳԱՀ ՌԵԿԱՆ, մամուլի ասուլիսի մը ընթացքին յատարարեց թէ անժխտելի փաստերն ունի այն դերին մասին, զոր Քաաաֆի կը խաղայ ահաբեկչութեան մէջ: Իրրեւ հետեւանք, Միացեալ - Նահանգներու Նախագահը յայտնեց թէ պէտք է խզել տնտեսական կապերը Լիբիոյ հետ եւ հրաւիրեց այն 1500 ամերիկահպատակներուն, որոնք հոն կ'աշխատին տուն վերադառնալ: Հրաւիրեց նաեւ արեւմտեան եւ այլ երկիրները, որ նոյնն ընեն, ինչ որ չատ հաւանական չէ, տրուած ըլլալով տնտեսական հարցերը, որոնք կը ստեղծուին:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ որոշեցին դատական հետապնդումի դիմել Հերսանի դէմ եւ պահանջեցին դատական մատակարարի մը նշանակումը Փրոկրէյին համար: Դատական հետապնդումը բացուած է Ֆ·ի դէմ եւ եթէ, առ այժմ Հերսանի չի' վերաբերիր, քանի որ իրրեւ խորհրդարանական անձեռնմխելիութիւն կը վայելէ, Լինեէլ նոյն պարագային մէջ չէ: Այս է պատճառը, որ հետապնդումը Ֆ·ի դէմ կ'ըլլայ, որպէսզի կարելի ըլլայ լայն չրջանակի մէջ տանիլ աշխատանքները, առանց սահմանափակումի արգելքն ունենալու Հերսանի պատճառաւ: Եթէ դատարանը, որու կը դիմուի ստիպողական դրութեամբ (ռեֆէռէ) անմիջապէս ընթացք տայ բողոքներէն մէկուն, այսինքն՝ վարչական մատակարար մը նշանակէ, հարցը կը բարդանայ: Սրգրաբեր, այդ մատակարարը ձեռք կ'առնէ՞ Լիոնի օրաթերթին վարչութիւնը թէ ոչ կը թողու այդ գործը Հերսանի, որ դոնէ խոստացած է պաշտօնէութեան Դեկտեմբերի չվճարուած աշխատավարձերը վճարել Շաբաթ, Յունուար 11-ին:

Լը Փէնի մուտքը արգելուեցաւ Ջուլիերիա, ուր հրաւիրուած էր ռամանտ հեռատեսիլի կողմէ «Լը տէֆի» յայտագրին մասնակցելու համար: Յայտագիրը տեղի պիտի ունենայ, բայց տիւփլէքս դրութեամբ: Ժրնեւի իշխանութիւնները այդ արգելքը կ'արդարացնեն ապահովութեան պատճառաբանութեամբ:

ԹՈՒՐՔԻԱ միաք ունի պատերազմական 40 Թոռնատօ օդանաւեր գնելու: Ընդհ· արժէքը՝ 1,6 միլիառ տոլար է: Լուրը հաղորդեց եւրոպական Փանավիա (Գերմանիա, Մեծն - Բրիտանիա, Իտալիա) շինարարական ընկերութեան բանբերը, ճըշդելով սակայն թէ այս վաճառքին վերջնական որոշումը կախում ունի այն բանակցութիւններէն, որոնք կը տարուին ներկայիս Ատլանտեան կազմակերպութեան մէկ նոր կայանի մը հաստատման համար, Թուրքիոյ մէջ:

«ՀՐԻՒԹԵԱՆ ԱՄԻՍ»ԻՆ առթիւ, հըրեայ մշակոյթի զանազան ձեռնարկներ տեղի պիտի ունենան Փարիզի մէջ Յունուար 8-էն Փետրուար 8 ընդհանուր հովանաւորութեան ներքեւ՝ Ժաք Լանկի, Շիրաքի, Ֆրանսուազ Սականի, Մարկրիթ Տիւրասի, Քաթրին Տընէօվի եւայլն, եւայլն:

ԼԻԲԱՆԱՆԻ մէջ, քրիստոնեաները պառակտուած են եւ լիբանանեան ուժերու հերձուածին պլուին անցած է սպայակոյտին պետը՝ Ժաժա, որ համակրութիւնը կը վայելէ Իսրայէլացիներուն: Այս պառակտումը հետեւանք է Դամասկոսի համաձայնագրին:

ՖՐԱՆՔԵՒԻՐԱՆԵԱՆ դրամական առկախ հարցին բանակցութիւնը կը չարունակուի: Ֆրանսական տնտեսական պատուիրակութիւնը մեկնեցաւ Թեհրանէն կարգ մը խորհրդակցութիւններէ ետք, ինչ կը վերաբերի Ֆրանսական պարտքին: Իրանի մամուլի գործակալութիւնը յայտնեց թէ ամիսէ մը, խօսակցութիւնները պիտի վերսկսին: Այս պարտքը հին հարցի մը հետեւանքն է: Շահին օրով, Իրան որոշած էր մասնակցիլ էօրոտիֆ ծրագրին, այդ դրամն է, զոր Իրան ետ կ'ուզէ: Ըստ մանց այս հարցին կարգադրութենէն կախում ունի Պէյրութի Ֆրանսացի պատանդներու ճակատագիրը:

ՌԸՆՕ ԵՒ «ՆԵՆԳԱՄԻՏ» ԱԼՊԻՈՆԸ...
կամ
ԵՐԳ՝ ԵՐԳԻ ԴԷՄ ՓՐԱՆՔՓԵՒԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ՄԸ

Ռընօ, ծանօթ երգիչ մըն է եւ յաճախ պրդռիչ երգեր կը գրէ: Վերջիններէն մէկն է՝ «Մի'ս Մակի» ուր իր ոճով - որ անշուշտ Ֆրանսական Ակադեմիայի անմահներուն ոճը չէ - կը խօսի Տիկին Թաչէրի մասին, կ'ըսէ ի մէջ այլոց··

«Moi, je me changerai en chien
«Si je peux rester sur la terre
«Et comme réverbère quotidien
«Je m'offrirai Mme Thatcher».

Ինք կը բացատրէ, որ չատ վրդոված էր Հէյդէլի խուլիկաններէն (Պելժիոյ Ֆութպոլի մրցումը) եւ իր երգը օտարատեաց չէ, այլ հակազդեցութեան մը պատուղն է եւ իր նպատակն եղած է Ֆրանսացիները խնդացնել տալ քաղաքական կնոջ մը վրայ, որու վարուելակերպը աւելի առնական է քան՝ այր մարդոցն իսկ:

Բայց Անգլիացիները կատղած են եւ կորնչացնելով իրենց իւմուրը վճռած են վրէժ լուծել ու ՍԸՆ ժողովրդական օրաթերթը կոչ բրած է երգիչներուն որ պատասխանեն Ռընոյի: Պատասխանը չէ ուշացած: Ճերեմի Նիքըլս չէ խնայած Ֆըրանսացիներուն, զորս կը ձաղկէ, որով - հետեւ «խմունջ եւ գորտի գիտ կ'ուտեն, երբեք մէկ հատիկ պատերազմ չեն չահած, որոնց կիները՝ չեն ածիլուիր, եւ անկարող են նաեւ մ'իսկ ընկղմելու երբեք «գորտ - մարդով»: Դեռ աւելին՝

«Certes les Français ont donné au monde leur mauvaise haleine, le cancan et les bidets, mais les Britanniques n'ont pas besoin de chansons de corps de garde pour insulter les Français. Pour embêter un Français, il suffit de lui sussurer : Waterloo»...:

Բրիտանական այս պատասխանը անթարգմանելի մասեր ունի, քանի հեղինակը կարգ մը բառախաղերու ալ դիմած է Պոնափարթի, փրիքՓներու եւ նախարգելիչներու մասին (փրէզերվաթիֆ) :

Ռընոյի երգը մէկ չուրով կը լուայ նաեւ «էմ - էմ»ները, Իսրայէլացիները եւ Թուրքերը ու նոյն զոհերը կը նկատէ Հըրեաներն, Պաղեստինցիք ու Հայերը:

Կը մնայ ուրեմն, որ ամէն ոք - նաեւ Թուրքը - պատասխան - երգ մը գրէն Ռընոյի ··· որ դժգոհ ըլլալու ոչ մէկ պատճառ ունի: Կրնա՞ր աւելի փիւպլիսիթէ երազել իր վերջին սալը հացի պէս ծախելու համար ··· կեցցէ՛ Մակին:

«ՅԱՌԱՋ»Ի ԸՆԴՄԷՋԷՆ

1985-ԷՆ ԴԷՊՔԵՐ, ԴԷՄՔԵՐ, ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

Պատրաստեց՝ ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՆՈՑԵՄԲԵՐ

5- Ֆրանսական Ռիթա դրուքիւնը կը յաղթէ: Ամերիկացիք զայն կ'ընտրեն իրենց ցամաքային բանակին համար:

11- Ձատրակ: Համաշխարհային 13-րդ եւ ամէնէն երիտասարդ ախոյեանը՝ Կարի Գասպարով:

12- Լիբանան: Երբ յոյսեր կը ծագին, յանկարծ ոճրային արարք մը կը մթագնէ հորիզոնը: Երբ Դամասկոսի հովանաւորութեամբ «բան մը» մէջտեղ գալու վրայ էր, արեւելեան - Պէյրութի մէկ մերձաւոր արուարձանին մէջ ռումբով լեցուն բեռնակառքի մը պայթումը կը պատճառէ 4 մեռեալ եւ 18 վիրաւոր, որոնց մէջ նախկին նախագահ՝ Քամիլ Շամուն: Այս բարքին որպէս հակազդեցութիւն՝ ընդհանուր գործադուլ ամբողջ քաղաքին մէջ:

13- Ֆրանսա գաղթած օտար բնակչութեան թիւն է 1984-ին՝ 4·485·715, եթէ աւելցնենք անկանոն վիճակի մէջ գտնուողները հաւանաբար ընդհանուր թիւը հասնի 5 միլիոնի:

14- Քոլոմպիա ահաւոր ողբերգութիւն մը: Նեվատա Տէլ Ռուիս հրաբուխը կ'արթննայ եւ կը խորտակէ ամբողջ քաղաք մը՝ Արմէրօ: Ահռելի հասուկիչիւ՝ 25 հազար մեռեալ, 25 հազար վիրաւոր եւ տասնեակ հազարներով անապաստան բնակիչներ:

15- Թուրքիոյ նախարարապետը՝ Թուրգութ Էօզալ, Փարիզ եկաւ 24 ժամուան համար: Բողոքի զանազան ցոյցեր տեղի ունեցան Հայերու եւ նաեւ Ֆրանսական կարգ մը հասանքներու կողմէ: Թուրգութ Էօզալ «Լիպերասիոն» թերթին կը յայտարարէ՝ «Ցեղասպանութիւն չէ եղած. բաներ մը անցած դարձած են ... համաճարակ ալ կայ...»:

16- Ֆրանսայի Ֆութպոլի Ազգ. խումբը պիտի մասնակցի Մեքսիքոյի Համաշխարհային ախոյեանութեան, չնորհիւ իր վճռական յաղթանակին Եուկոսլաւիոյ դէմ:

18- Հայութիւնը եւ Հայ Դատը կը կորսնցնեն մեծ բարեկամ մը Ժիւլ Վոլֆ:

19- Ֆրանքեւիտալական համագործակցութիւն. հեռատեսիլի 5-րդ կայան մը, 1986 Փետրուարէն սկսեալ:

22- Պէյրութի մէջ, «դրօշակներու պատերազմը» երեք օրուան մէջ կ'ընէ 53 մեռեալ եւ 225 վիրաւոր: Կացութեան բարելաւման յոյսերը քիչ մը աւելի կը նուազին: Նաեւ երկու ռումբ ինկած Ս. Նշան Եկեղեցւոյ մօտը, նիւթական վնասներ պատճառած են:

23- Կատարեալ ջարդ մը, Մալթայի օդակայանը: Եգիպտական օդանաւի առեւանգումը կը վերջանայ՝ 60 մեռեալով եւ 26 վիրաւորներով:

24- Ֆութպոլ: Ֆրանսայի բաժակի մրցումներու 6-րդ շրջանի խաղերուն Լիոն - Տէսինի Հ. Մ. Ը. Մ.ը կը յաղթէ Օլընպայի խումբին եւ իր տեղը կը չահի 7-րդ շրջանի խաղերուն:

Նոյեմբերի վերջին օրերուն իրենց մահկանացուն կը կնքեն. -

- Կիյոմ Հանոթօ, ծանօթ հրապարակագիր:

- Անորէ Իւնըպէլ, յայտնի բեմադիր:

- Ֆեռնան Պրօտէլ, պատմագէտ եւ Ֆրանսական ակադեմիայի անդամ:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1- Հայ Գաղտնի Բանակ-Ց.Շ.-ը, Մոնթէ Մելքոնեանի եւ իրեն ընկերացողներու ձերբակալութեամբ, նկատի կը հայթայթէ Ֆրանսական մամուլին, դրաւոր թէ լուսատեսողական:

2- Սախարովի կինը՝ Էլենա Պոնէր դուրս կ'ելլէ Խորհրդային Միութենէն, առողջական պատճառներով, եւ Ամերիկայի ճամբուն վրայ կը հանդիպի Հռոմ:

3- Ուաշինկթընի մէջ, օդհնքներու յանձնախումբը կը վաւերացնէ Հ. Ժ. Ր.ս 192 բանաձեւը, որպէսզի Ներկայացուցչական ժողովը դարձեալ քննէ զայն եւ Ապրիլ 24-ը դառնայ «Մարդուն դէմ մարդուն վայրագութեան օրը»:

4- «Յառաջ»ի 60-ամեակի առթիւ չնորհաւորական յատուկ կոնդակ Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսէն:

4- Լեհաստանի թիւ 1-ը կը տեսակցի Միթերանի հետ, Փարիզ: Ցապլիւս կը յայտնէ իր խռովքը:

6- Հայաստանի նոր նախագահ կ'ընտրուի՝ Հրանտ Ոսկանեան: Վ. Համազասպեանը կը փոխարինէ՝ Կ. Դալլաքեան:

7- Փարիզ: Երկու ոճրափորձ կալլոի Լաֆայէթ եւ Փրէնթան՝ 35 վիրաւոր:

12- Օդանաւի ծանր արկած մը եւս: Տի Սէ 8 մը 258 ամերիկացի զինուորականներով Թէհ - Նէօվի մօտերը կ'իյնայ: Ոչ մէկ վերապրող:

12- Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը՝ Գարեգին Բ., կը ժամանէ Պրիւսէլ, կարեւոր հրատարակութեան մը առթիւ:

13- Կոչ Սփիւռքի Հայութեան: Մխիթարեան վարժարաններու միջազգային կոմիտէն կոչ կ'ընէ համազգային հանդանակութեան մը, վերջակէտ մը դնելու համար Մխիթարեան Միաբանութեան տնտեսական տագնապին:

16- Պրիւսէլ: Եւրոպայի Խորհուրդի ժողովը անդամ մը եւս կը յետաձգէ Հայերու ցեղասպանութեան հարցին քննութիւնը: Օրակարգը «ծանրաբեռնուած» է:

18- 1990 - 1991-ին, Տիանէլաոս մը Փարիզի մօտերը, Մառն լա Վալէ:

19- Նանթի ոճրային առեանին մէջ, անհաղորդութեամբ դէպք՝ դատուող, դատական կազմ, փաստաբան, հանդիսատես պատանդ դատապարտեալներու ձեռքը: Սակայն, ամէն ինչ լաւ կը վերջանայ եւ ամէն ոք կը վերագտնէ իր տեղը:

20- Փարիզ: Ֆօչօն մեծ վաճառատուներին մէջ հրդեհ: Երկու մեռեալ եւ վիրաւորներ:

22- Նափոլիի Սան Ձիովանի արուարձանին մէջ, ահաւոր հրդեհ մը Աճիւնատեղիի ընկերութեան գտարանը: Զոհ մեռեալ 250 վիրաւոր:

25- Ալժերական ազգայնական չարժումի մեծ դէմքերէն՝ Ֆերհաթ Ապպաս իր մահկանացուն կը կնքէ:

25- Պապը 49 լեզուներով, որոնց մէջ հայերէնը, ողջունեց Քրիստոսի ծնունդը եւ տուաւ իր ծննդեան պատգամը:

27- Ֆրանսուա Շաթըլէ, պատմաբան եւ փիլիսոփայ կը մեռնի, Փարիզի մէջ:

28- Ահաբեկչութիւն, Հռոմի եւ Վիէննայի օդակայանները իսրայէլեան Էլ - Ալ օդանաւային ընկերութեան դէմ՝ 18 մեռեալ եւ տասնեակ վիրաւորներ: Այս գոյզ ջարդին հեղինակնե՞րը, հաւանաբար Պաղեստինցիներ:

29- Վերջի՞նը թէ ոչ: Լիբանանի մէջ, համաձայնագրի մը ստորագրութիւն քրիստոնեայ, սիւրզի եւ չիի քաղաքագործերու զեկավարութեանց միջեւ, Սուրիոյ հովանաւորութեան ներքեւ: Սուրիական համաձայնագիրը Լիբանանի համար:

«ՈԶՆԻ»Ի ԷՋԵՐԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍՏ ՄԱՐԴԸ

Ոզնին երկար մտածեց, թէ ո՞վ է Հայաստանի ամենահարուստ մարդը: Ի վերջոյ՝ պատ՛ւ: Ամենահարուստ մարդը ոչ թէ նա է, ով դրամ ունի, այլ նա՝ ով ... Մարդ ունի (դրամ բառի հականակը): «Մի՛ ունենար հարիւր ռուբլի, ունեցիր հարիւր բարեկամ», - ասում է ժողովրդական իմաստուն առածը (թէեւ չէր խանգարի՝ երկուսը միասին): Բայց, ինչպէս պիտէք, երանիներն յաճախ միասին չեն լինում: Մարդը, որի մասին ուզում եմ պատմել, Հայաստանի լրո՛ք ամենահարուստ մարդն է: Իր կեանքի 75 տարում նա ընկերութիւն է արել 75 անուանի մարդկանց հետ: Երեք հատը էլ յուշ է դրել նրանց մասին: Պատկերացրէք, մեր կողքին ապրող մեր աւագ բարեկամը մօտիկ է եղել այնպիսի ընկերների հետ, ինչպէս ... Նար - Դոսը, Շերվանզադէն, Բակունցը, Զարենցը, Թումանեանը, Իսահակեանը, Դեմիրճեանը, Զօրեանը, Սեւակը, Կոջոյեանը, Սարեանը, Մինասը, Աչառեանը, Փափազեանը, Արուսը, Յասմիկը, Օրբելին...

Անհնար է թուել բոլորին:

Համեստօրէն ասած՝ մարդը մարդո՛վ է մարդ: Լինել լաւ մարդկանց մօտիկ, մարդը՝ մի՞թէ չի նշանակում լինել ամենահարուստ մարդը: Նշանակո՛ւմ է: Իսկ ո՞վ է նա:

Ռուբէն Զարեհեան է:

Բացի վերոյիշեալից՝ վերոյիշեալ ընկերը միաժամանակ մի քանի համեստ տուեալներ էլ ունի, օրինակ՝ ԳԱ թղթակից անդամ է: Ցիսուն տարի ՍՍՀՄ Գրողների Միութեան անդամ, 25 գրքի հեղինակ, Հայպետհրատում փոխարինել է Զարենցին (պաշտօնով), չեքափիրագիտութեան հայկական կենտրոնի դեկավարն է, Արուեստի հիմնարկի տնօրէնը եւայլն: Բայց այս բոլորը մի կողմ: Ամենակարեւորն այն է, որ ... լենինականցի է: Ըստ ոչ շատ՝ պիտաւորեալ ծնուել է նոր ուսումնական տարուայ առաջին օրը՝ Սեպտեմբերի մէկին: Երեւի դրա համար էլ ուսումնական մարդ է: Բացի եռահատոր «Ցուշապատումից», առանձին գրքեր է գրել նաեւ Աբովեանի, Ազամեանի, Սիրանոյշի, Յասմիկի, Փափազեանի, Իսահակեանի եւ Շեքսփիրի մասին: Վերջինիս մասին լ հարկէ, յուշ չի գրել: Բայց եթէ ուզենայ՝ յուշեր կը գրի նաեւ ... Շեքսփիրի մասին ու, ինչպէս միշտ, համեստօրէն կը նշի որ Շեքսփիրին նոյնպէս լ'ինքն է գրող դարձրել, «Օթելլո»ի եւ «Համլէթ»ի վերնագրերն ինքն է գրել ... Առհասարակ՝ յուշ գրողների մեծ մասն աւելի շատ իր մասին է գրում...

Ահա թէ ինչու Ոզնին ցանկացաւ հանդիպիլ ամենահարուստ յոբելեարին, ճըշդել Շեքսփիրի հարցը, ինչպէս նաեւ մի քանի հարց տալ: Սակայն պարզուեց, որ յոբելեարը ծովափում է: Ոզնու հոգսը ծովացաւ: Ի՞նչ անել: Ու, ինչպէս միշտ, հնարամիտ Ոզնին գտաւ հնարը՝ հարցազրոյց անկացնել ոչ թէ Զարեհանի, այլ նրա գրքերի հետ: Ուստի վերցնելով «Ցուշապատումի» երեք գրքերը, սկսեց հանդիսա գրուցել ... հեռակայ հեղինակի հետ, տալով երեք հարց. -

1- Սրամիտ, տաքօրինակ եւ հետաքրքրիր, ի՞նչ դէպքերի էք առնչուել աւուրաձի մարդկանց հետ շփուելիս:

- Ընդհանրապէս ես լուրջ մարդ եմ եւ իմ յուշերում քիչ եմ անդրադարձել կատակներին: Բայց յիշեմ մի քանիսը: Իմ ներկայութեամբ մի քննադատ մեծամտաբար դիմեց Նար - Դոսին. «Ուզում եմ գիրք գրել ձեր գրական ժառանգութեան մասին»: Նար - Դոսը տարակուսանքով պատասխանեց. «Բայց ես դեռ չեմ վախճանուել...», - հասկացնելով որ ժառանգութիւն թողնում են միայն մահից յետոյ: Զարենցը մի քննադատի ասաց. «Տարօրինակ քննադատ է՝ ինչքան բարդ բաներ ասեմ՝ էիւպիզմ, էեսփրեսիոնիզմ, կը հասկանայ, իսկ պարզ բաները չի հասկանում...»: Դեմիրճեանը մի անգամ իմ ներկայութեամբ ասաց. «Քլասիք դառնալու համար մարդ նախ պէտք է մեռնի...»: Երբ հաւանեցի տիկնոջ կանադրին, Իսահակեանը կատակեց. «Ետա դո՞ւ էլ մի Սոֆիկից, որ գոհ լինեմ երկուսից» ... Այնուհետեւ պատմեց, որ Դեմիրճեանի հետ հիւր են գնացել մի պիզացու, որը կակազում էր (Իսահակեանը եւ Դեմիրճեանը նոյնպէս կակազող են եղել): Ամբողջ օրը Դեմիրճեանը չխօսեց: Հարցրի՝ ինչո՞ւ, պատասխանեց. «Դու կակազող, նա՝ կակազող, եթէ ես էլ կակազեմ, կ'լինմանայ՝ ձեռ ենք առնում իրեն...»: Փափազեանի վերջին ներկայացումներից մէկից յետոյ մի ծերունի մօտեցաւ. «Ինչո՞ւ բեմը չես թողնում, արդէն ծեր ես»: Փափազեանը հարցրեց. «Կինդ ծե՞ր է»: «Այո»: «Ինչո՞ւ կնոջդ չես թողնում...»: Հասկացրեց, որ թատրոնն էլ իր ակրն է: Գիշերուայ կէսին Փափազեանը չատպ կանչեց ինձ. «Աբի խի՛սա կարեւոր բան պիտի ասեմ»: Գլնոյի: Մօտեց դէմքից - դէմքից, իսկ վերջում հարցրեց. «Ի՞նչ պիտի լինի մեր թատրոնի վիճակը...: Ա՛յդ էր նրա «խիստ կարեւոր բանը», որ կարող էր նաեւ յետոյ ասել: Նկարչութեան մէջ տարածուած ձեւապաշտութեան տարիներին ընդարձակ վէճեր չատ կային: Մի թղթակից իմ ներկայութեամբ հարցրեց Սարեանին, թէ ի՞նչ է ձեւապաշտութիւնը, վարպետը պատասխանեց խիստ կարճ. «Արուեստագէտի ճգնաժամը»: Հանդիպեցի Մահտասին: «Վարպետի մօտից եմ գալիս, ասացի: «Ո՞ր վարպետի - դիտմամբ գարմացաւ Մահարին, - հիմա բոլորն էլ վարպետ են...»: Երեւում էր՝ քէֆը լաւ էր: «Ինչո՞ւ ես խմում», - հարցի: «Որովհետեւ ... արգելում են», - պատասխանեց: Յետոյ պատմեց թէ ինչպէս ոստիկանին ասել է՝ ես Մահարին եմ, իսկ սա ձեռ է առել. «Ինձ չես խարի, գազրոցից գիտեմ, որ Մահարին արաբ մեծ բանաստեղծ է եւ մահացել է»: Այն ծանր ժամանակներում մի քննադատի հարց էին քննում, որը ամպլուայից ազատուած խոստովանեց իր «մեղքերը» եւ ասաց. «Ես դէնքերս վայր եմ դնում»: Վահունին գոհլիճից ասաց. «Ուրեմն՝ դու դո՞նք էլ ես ունեցել...»: Բոլորը ծիծաղեցին, եւ հարցը մեղմացաւ:

Արման Կոթիկեանը յուզուած դիմեց ինձ. «Տժվժիկ»ում բաղնիքի տեսարանից յետոյ ինչպէ՞ս երեւամ կանանց...»: Թատերագէտ Վահրամ Թէրզիպաշեանը ուսանողներին «լաւ» ու «գերազանց» էր նշանակում: Որպէս ամպլուայի վարիչ ասացի որ աւելի խիստ լինի: Նա էլ, բացելով քննադատական գուռը, ուսանողներին լրջօրէն յայտարարեց. «Ցայտնում եմ, որ չորսի եւ հինգի միջեւ կատարուած է, մնացել են երեքն ու երկուսը»: Մի օր Արամ Աչառեանը պատմեց ինձ. «Մոսկուայի արուեստանոցս երկու ամսով ոչրամադրել էի երեւանից եկած մի նկարչուհու, որի համար խնդրել էին: Որոշ ժամանակ անց գնացի խնդրոյի մօտ: Ցանկացայ որոշ խորհուրդներ տալ. «Եթէ ձեզ հիւր գան..., - նոր էի սկսել, երբ նա խօսքս կարեց. «Ինձ միայն իմ ամուսինն է հիւր գալիս»: Եթէ ծաղիկներ բերեն...», - չարունակեցի, բայց նա էլի կարեց խօսքս. «Ինձ միայն իմ ամուսինն է ծաղիկներ բերում»: Որոշեցի թեման փոխել. «Ամպեր սիրո՞ւմ էք», - հարցրի ես: «Ես միայն իմ ամուսնուն եմ սիրում», - կարուկ պատասխանեց նա, - եւ ես զգացի թէ ինչ է նշանակում՝ հիւմբրից զուրկ եւ կեղծ բարեպաշտ կինը»: Հիւմբրը մեծ բան է: Մոսկուայում Շոյին մօտեցայ մի գրող. «Ցոյսով ենք որ դուք հեռանում էք՝ որպէս մեր երկրի լաւ բարեկամ»: Շոն պատասխանեց. «Ես այդպիսին կը մնամ մինչեւ մահ: Իսկ թէ գրանից յետոյ ի՞նչ կը լինի, չեմ կարող երաշխաւորել...»: Ու միանգամից գրպարթ մթնոլորտ ստեղծուեց:

Մի օր Թոթովենցը ինձ պատմեց թէ գրի է առնում անեկդոտներ. «Պէտք է գրի առնել ու ապագայ սերունդների համար պահել անեկդոտները: Ոչ մի վէպ, ոչ մի պատմուածք չեն պահի ժամանակի ինչ - ինչ կողմերը այնպիսի արուեստով, ինչպէս անեկդոտը»: Վերջում ասաց. «Հայրըս սիրեցնել է ունեցել, մայրս ներել է: Երբ հայրս մահացաւ, մայրս յառաչեց. «Ախ՛ղճ էն կնիկ՝ ո՛րբ մնաց...»: Ուստի ճիշդ էր ասում իմ դասախօսներից մէկը. «Երջանիկ են այն մարդիկ, որ հիւմբրի

զգացումը չեն կորցնում կեանքի զժուարին պայմաններում անդամ...»:

2.- Անուանի մարդկանց հանդէպ նկատե՞լ էք չկամութեան կամ չգնահատման դէպքեր:

- Շա՛տ: Եւ դա բնական է: Որքան արուեստագէտը մեծ է, այնքան մեծ է նրա հանդէպ նախանձը: Բացի դրանցից՝ կան մեծ արուեստագէտներ, որոնք ուղղակի չեն հասանել որեւէ մեծ արուեստագէտի: Այստեղ, ի հարկէ, դեր են խաղում զբրական նախասիրութիւնները, ճաշակը: Օրինակ՝ Թոլսթոյը չէր հասանում Շեքսպիրին: Շերվանցպէսն աւում էր որ չի հասանում Վարուժանին: Զարենցը սկզբում չէր ընդունում Թումանեանին ու Տէրեանին: Որոշ գերասաններ եւ նկարիչներ չեն գնահատել իրար: Փաստերը շատ են, հիմա էլ կան: Մենք պիտի յիշենք ուրի՛շ կարդի երեւոյթներ, որպէսզի ... չկրկնուեն: Օրինակ՝ Նար - Դոսի պէս գրողը ապրեց ու մեռաւ անչուք: Զարենցի գրական հակառակորդները անընդհատ պղտորում եւ թունաւորում էին նրա հոգին: Դեմիրճեանի «Քաջ Նազար» կատակերգութեան դէմ գրական դատ կազմակերպուեց: Նոյնը՝ Խահակեանի «Արուալա Մահարի» պոէմի դէմ: Նոյնը՝ Տէրեանի: Նոյնն ուզում էին անել Զարենցի «Խիփքական լուսարացի» դէմ: Խահակեանին աշուղ են համարել: Ես միշտ զըզջում եմ, որ երիտասարդական յախուռն եւ տաքարիւն մի յօդուածով ժամանակին ի զուր դառնացրել եմ լաւ բանաստեղծներին: Ճիտիճոյի ցուցահանդէս այցելեցին մի քանի նկարիչներ. «Իս անպէտքութիւնն ինչո՞ւ ես կախել»: Փափազեանի պէս գերասանը ծանր հիւանդ էր, քչերն էին այցելում: Ճիտիճոյի եաեւից գոռացել են. «Սուտ նկարիչ»: Ամեմեանի պէս բեմադրիչին դառնացրին: Ընդհանրապէս տպիտութիւնը միշտ էլ ակրեսիվ է: Սըբանք փաստեր են (լաւ փաստերի մօտ), որոնք խորհելու եւ զգուշանալու տեղիք են տալիս: Եզրակացութիւն՝ իրար նեսմացնելու զազափարը պէտք է մէկընդմիշտ վերանայ աշխարհից...

3.- Ի՞նչ սուր հարցերով էին մտահոգւում ձեր տեսած անուանի մարդիկ:

- Իմ տեսած անուանի մարդիկ իրենց մասին չէին մտածում: Մտածում էին երկրի եւ ժողովրդի մասին: Սա է որ պիտի ականջի օղ դառնայ բոլորիս համար, անկախ նրանից՝ անուանի՞ ենք, թէ՞ անանուն: Հոգեպէս հարուստ ժողովուրդ եւ հարուստ մարդ մնալու առաջին գրաւականը սա՛ է՝ ծառայել երկրին: Ով ծառայում է երկրին՝ նա՛ է երկրի տէրը...

Ոգեւ.- Շնորհակալութիւն հարուստ հարցարոյցի համար: Մաղթում ենք ... եւս 75 տարի:

Ռ. Զաբեան.- Շնորհակալութիւն: Մինչեւ հանդիպում ... 2059 թուին:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ

ԴԱՒԻԹԵԱՆ ՄԻՕՐԵԱՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

ՏՕՆԱԾԱՌԻ ՀԱՆԴԷՍԸ

ՎԱԼԱՆՍ.- Սփիւռքի հայ կեանքը, յաճախ լեցուն է, թէ՛ դրական եւ թէ՛ ժխտական տարօրինակութիւններով: Ահա Վալանս փոքր քաղաքը, մէկն է այն զաղութներէն, ուր, նաեւ յաճախ, կը հանդիպինք հայկական դրական տուեալնե - րու, կարելի է ըսել «տարօրինականութեանց», բաղդատելով զայն այլ մեծ քաղաքներու հետ:

Վալանսի գաղութը, իր քանի հայկական միութիւններու եւ կազմակերպութիւններու բեզուն գործունէութեան առընթեր, ունի նաեւ իր Դաւիթեան Միօրեայ դպրոցը, նախակրթարանի 130, եւ մանկապարտէզի 35 - 40 աշակերտներով, որ արդէն առանճին, փայլուն եւ յուսադրիչ մէկ նկարն է հայկական այս փոքր, 5000 հոգինոց գաղութին:

Մեծամասնութեամբ պատուական, առաքինի եւ հայրենասէր այս գաղութը, իր անցեալէն մինչեւ այսօր, չուրջ 65 տարի, բացառիկ անձնուիրութեամբ գուրգուրացած է Հայաստանեայց Եկեղեցիին, դպրոցին եւ հայապահպանման կարեւոր ազդակներուն վրայ: Այս իրականութեան վերջին տասնամեակին, ահա կը միանայ Արեւելքէն գաղթող Հայոց խանդը եւս, եւ կը ստեղծուի հայկական օրինակելի օճախ մը:

Ի՞նչպէս կարելի է բացառիկ յիշատակութեամբ չգնահատել այս փոքր գաղութին թաղականութիւնը եւ հոգաբարձութիւնը, որոնց հովանաւորած Դաւիթեան Միօրեայ դպրոցը ունի 170 աշակերտ, ամբողջ Փարիզի Միօրեայ Հայկական դպրոցներու աշակերտներու թիւին մէկ երրորդը:

Ահա այս դպրոցին, 1985 - 1986 տարեշրջանի, տօնածառի հանդէսն է որ տեղի ունեցաւ Դեկտեմբեր 29, կիրակի, կէսօրէ ետք ժամը 2·30-էն սկսեալ, Վալանսի Պետական սրահին ներս:

Սրահը ամբողջութեամբ լեցուած էր բազմութեամբ: Եւ ամէն անկիւն, ամէն տեղ կը խօսուէր հայերէն, կը լսուէր հայերէն, թէ՛ «հիներէն», եւ թէ ալ «նորերէն»:

Դպրոցին վարիչ - տեսուչը, Ն. Խչկր. քհնյ. Վարդանեան, իր միայն երեք ուսուցչուհիներով պատրաստած էր գնահատելի յայտագիր մը:

Հոգաբարձութեան կողմէ, Պ. Ա. Քարտուկլեանի բացման խօսքէն ետք, աշակերտներու կողմէ գործադրուեցաւ յայտագիրը:

Յայտագրին մաս կը կազմէին արտասանութիւններ, երգեր, խմբերգներ տրամախօսութիւններ, հայկական պարեր, առակախօսութիւն, բեմադրութիւններ, նուագախումբի (21 երաժիշտ) Արա Մանաչի պղպեղակով մեկնաբանած է կանաչեանի «Կամներգ»ը, «Նարօ Ջան»ը, «Հայրենի կարօտ»ը, «Շուշօ»ն, «Օրօր»ը, «Տալիլօ»ն եւ «Նանոր»ը:

×

ԼՕՍ - ԱՆՃԼԼԷՍԻ Ֆերահեան վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ, Դեկտեմբեր 15-ին, տօնուած է Հ. Ց. Դ.ի 95-րդ տարեդարձը: Ներկայ եղած են 800 հոգի: Հանդիսութիւնը վարած է Շահէ Գասպարեան: Անգլերէն բանախօսած է Յարութիւն Սասունեան, անդրադառնալով Հայ Դատի Յանձնախումբերու իրագործումներուն: Հ. Ց. Դ. Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան կեդր. Վարչութեան խօսքը փոխանցած է Պատրիկ Ազատեան, իսկ Հ. Ց. Դ. կեդր. Կոմիտէի կողմէ խօսք առած է Ռազմիկ Աճէմեան: Համազգայինի Կլենտէյլի մասնաճիւղի «Անոյշ» երգչախումբը, ղեկավարութեամբ Հովիկ Գասպարեանի, մեկնաբանած է հայրենասիրական քանի մը խմբերգներ: Օրուան գլխաւոր բանախօսը՝ Վահէ Օշական, ներկայացուցած է ըմփիւռքի կացութիւնը, յայտնելով թէ հայ մարդը կ'ապրի չորս տագնապներ՝ բարոյական, իմացական, ընկերային եւ քաղաքական, եւ նշած ազգային այն յատկանիշները, որոնց շնորհիւ Սփիւռքի Հայը կրնայ պահել իր ազգային ինքնութիւնը:

×

ԹԵՀՐԱՆԻ «Նայիրի» սրահին մէջ, Դեկտեմբեր 13-ին, նշուած է Բաֆֆիի ծնընդեան 150-ամեակը, կազմակերպութեամբ հայկական վարժարաններու հայ ուսուցիչներու միութեան: Բաֆֆիի կեանքն ու գործը ներկայացուցած է Սերոժ Թիլիմեան: Գործադրուած է դեղարուեստական յայտագիր մը: Բեմադրուած է հատուած մը «Սամուէլ» վէպէն:

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ՊՈԼՍՈՑ «Շան» թատերասրահին մէջ, Դեկտեմբեր 23-ին, Սայաթ - Նովա երգչախումբը համերգ մը տուած է, Կոմիտասի մահուան յիսնամեակին առթիւ: Յայտագիրը համադրութիւն մը եղած է գաշնակի, երգի ու արտասանութեան: Բազմատ խօթուքեան, ամբողջ համերգի ընթացքին, ընտրուած էջեր արտասանելով Պարոյր Սեւակի «Անլռելի զանգակատուն»էն, մեկնաբանուած երգերուն զուգահեռ ներկայացուցած է Կոմիտասի կեանքը: Երգչախումբը ղեկավարած է Պետրոս Գամճեան:

×

ԼՕՍ - ԱՆՃԼԼԷՍԻ «Ուիլշըր Իսկէյ» սրահին մէջ, 1200 հոգիի ներկայութեամբ, Դեկտեմբեր 14-ին, տեղի ունեցած է «Գուսան» երգչախումբին համերգը, նուիրուած Բարսեղ Կանաչեանի ծննդեան 100-ամեակին: Բացումը կատարելով Գուրգէն Գասապեան, չէտած է Կանաչեանի գերը Միջին - Արեւելքի հայ գաղութներու երաժշտական կեանքին մէջ: Թէքէեան Մշակ. Միութեան կողմէ խօսք առնելով Աբրամ Սէֆէթճեան ողջունած է Կանաչեանի հարիւրամեակը, իսկ Նոր Սերունդ Մշակ. Միութեան կողմէ ուղերձ մը կարդացած է Կիւրեղ Մանկրեան: Բանախօսած է Պարգեւ Շէրինեան, ներկայացնելով Բարսեղ Կանաչեան մարդը, երգահանը եւ խմբավարը: Համերգը բազկացած է երեք բաժիններէ. նախ հանդէս եկած է «Ռոզ եւ Ալէք Փելիպոս» վարժարանի աշակերտական երգչախումբը, ղեկավարութեամբ Արա Մանաչի, մեկնաբանած է Կանաչեանի մանկական երգերը: Երկրորդ բաժնին՝ մեներգներով հանդէս եկած են Արա Կիրակոսեան, Հեղինէ Հարպոյեան, Անճելա Աւետեան եւ Արփինէ Փեհլիւանեան: Ապա «Գուսան» երգչախումբը (80 անդամ), ընկերակցութեամբ սենեկային նուագախումբի (21 երաժիշտ), Արա Մանաչի ղեկավարութեամբ մեկնաբանած է Կանաչեանի «Կամներգ»ը, «Նարօ Ջան»ը, «Հայրենի կարօտ»ը, «Շուշօ»ն, «Օրօր»ը, «Տալիլօ»ն եւ «Նանոր»ը:

×

ԼՕՍ - ԱՆՃԼԼԷՍԻ Ֆերահեան վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ, Դեկտեմբեր 15-ին, տօնուած է Հ. Ց. Դ.ի 95-րդ տարեդարձը: Ներկայ եղած են 800 հոգի: Հանդիսութիւնը վարած է Շահէ Գասպարեան: Անգլերէն բանախօսած է Յարութիւն Սասունեան, անդրադառնալով Հայ Դատի Յանձնախումբերու իրագործումներուն: Հ. Ց. Դ. Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան կեդր. Վարչութեան խօսքը փոխանցած է Պատրիկ Ազատեան, իսկ Հ. Ց. Դ. կեդր. Կոմիտէի կողմէ խօսք առած է Ռազմիկ Աճէմեան: Համազգայինի Կլենտէյլի մասնաճիւղի «Անոյշ» երգչախումբը, ղեկավարութեամբ Հովիկ Գասպարեանի, մեկնաբանած է հայրենասիրական քանի մը խմբերգներ: Օրուան գլխաւոր բանախօսը՝ Վահէ Օշական, ներկայացուցած է ըմփիւռքի կացութիւնը, յայտնելով թէ հայ մարդը կ'ապրի չորս տագնապներ՝ բարոյական, իմացական, ընկերային եւ քաղաքական, եւ նշած ազգային այն յատկանիշները, որոնց շնորհիւ Սփիւռքի Հայը կրնայ պահել իր ազգային ինքնութիւնը:

×

ԹԵՀՐԱՆԻ «Նայիրի» սրահին մէջ, Դեկտեմբեր 13-ին, նշուած է Բաֆֆիի ծնընդեան 150-ամեակը, կազմակերպութեամբ հայկական վարժարաններու հայ ուսուցիչներու միութեան: Բաֆֆիի կեանքն ու գործը ներկայացուցած է Սերոժ Թիլիմեան: Գործադրուած է դեղարուեստական յայտագիր մը: Բեմադրուած է հատուած մը «Սամուէլ» վէպէն:

ՁԷՄԻԼԱ

ՃԷՆԿԻԶ ԱՅԹՄԱԹՈՎ

Սաղրք դէմքս ի վեր պոռաց.
- Դաւաճա՛ն:

Նկարը պատռեց, բզիկ բզիկ ըրաւ, դուռը չաչեցնելով մեկնեցաւ:

Երկարատեւ, խեղդող լռութենէ մը ետք մայրս հարցուց.

- Գիտէի՞ր:

- Այո՛, գիտէի:

Մայրս վառարանին կռթնած զարման - քով ու այպանումով այնպէս մը կը դիտէր զիս որ, երբ ըսի թէ կրկին պիտի նկարէի երկուքը, դառնօրէն ու անզօրութեամբ գլուխը օրօրեց:

Իսկ ես, գեհինը տարածուած թուղթի կտորները կը դիտէի կատաղութեամբ: Զիս դաւաճան նկատէին հա՞: Որո՞ւ դաւաճան էի: Ընտանիքի՞ս, ցեղի՞ս: Մինչդեռ ես, իրականութեան, կեանքին իրականութեան, այդ երկու հոգիին իրականութեան չդաւաճանեցի՛: Այս կէտը ոչ ոքի կրնայի բացատրել, մայրս անդամ պիտի չհասկնար զիս:

Աչքերուս առջեւ կը մութնար ամէն բան. ինծի կը թուէր թէ թուղթի կտորները կենդանի արարածներ էին որոնք կը դառնային գետինը: Այդ պահը՝ երբ Տանիէլ ու ձէմիլա թուղթին վրայէն կը նայէին ինծի, այդ պահը այնպէս ուժգին զգոշմուած էր յիշողութեանս մէջ, որ յանկարծ լսել կարծեցի Տանիէլին երգը. ա՛յն երգը զոր երգած էր օգոստոսեան այդ անկրկնելի գիշերուան մէջ: Աչքիս առջեւ կը պատկերանար անոնց մեկնումը. ես ալ անդիմադրելի փափաք մը կը զգայի մեկնելու, անոնց նման վճռակամ հեռանալու դժուարին երջանկութիւնը որոնելու ճամբուն:

Մօրս ըսի.
- Ես ուսանելու պիտի երթամ. հօրս ըսէ՛. ես կ'ուզեմ նկարիչ ըլլալ:

Կը կարծէի թէ մայրս յիշելով ռազմաճակատին վրայ մեռած եղբայրս, պիտի սկսէր արտնջալ ու լալ: Սակայն ի՞նչ կը տեսնէի չլացաւ: Բաւականացաւ թախծոտ ու մեղմ ձայնով մը ինծի ըսելով.

- Լաւ, գնա ... դուք թեւեր ունիք, կը գործածէք ինչպէս որ ուզէք...: Հապա մենք ինչպէ՞ս պիտի գիտնանք թէ բարձունքներու վրայ կը թեւածէք: Թերեւս դուք իրաւունք ունիք: Լաւ, գնա ... թերեւս հոն խելքդ գլուխդ կուգայ: Նկարելը, թուղթը գոյզգոյն ներկելը հնարք մը չէ, երբ ուսանիս կը սորվիս ... դոնէ տունդ մի՛ մոռնար...:

Այդ օրէն ետք փոքր տունը անջատուեցաւ մեզմէ. ես ալ մեկնեցայ ուսանելու:

Ահա՛ ամբողջ պատմութիւնը:

Նկարչութեան վարժարանէն ետք գիս ակադեմիա ղրկեցին ուր պատրաստեցի աւարտական գործս. այդ նկար մըն էր զոր երկար ժամանակէ ի վեր կ'երազէի գծել:

Դժուար չէ գնահատել թէ այս պատառը կը ներկայացնէ ձէմիլան ու Տանիէլը: Աչնան, տափաստանի ճամբէն միասին կը քալեն. իրենց առջեւ պարզուած է անսահման լուսաւոր հեռուն:

Ի՞նչ փոյթ թէ նկարս թերիներ ունենայ: Վարպետութիւնը բան մըն է որ մէկ օրէն ձեռք չի ձգուիր. սակայն ես չատ կը սիրեմ այս գործս, ան ստեղծագործելու դիտակից առաջին խանդավառութեանս վկան է:

Մինչեւ այսօր իսկ կը պատահի որ ձախորդութիւններ ունենամ, դժուարին ու տաժանելի վայրկեաններ անցընեմ. այդ պահերուն ինքնավստահութիւնս կը չքանայ: Նման րոպէներու կը դառնամ այս նկարին, դէպի Տանիէլն ու ձէմիլան: Երկար տարի կը դիտեմ երկուքը, ամէն անգամուն խօսելով իրենց հետ:

«Ո՞ւր էք այսօր, ո՞ր ճամբաներէն կը յառաջանաք: Այսօր հոն, մեր տափաստանին վրայ նոր կառուցուած բազմաթիւ ճամբաներ կ'երկարին Ղազախստանէն Ալթայ ու մինչեւ Սիպերիա: Կամքի տէր չատ մարդիկ կ'աշխատին այդ ճամբաներուն վրան: Թերեւս դուք ալ այդ երկիրները մեկնեցաք: Ձէմիլա, առանց եաիդ դառնալու քալեցիր, հեռացար տափաստանէն: Եթէ յոգնեցար, եթէ կորնցուցիր ինքնավստահութիւնդ, կռթնէ՛ Տանիէլին: Ան թող քեզի երգէ սիրոյ, հողի, կեանքի մասին հիւսուած իր երգը: Թո՛ղ տափաստանը սկսի խլրտիլ, կենդանանալ իր բոլոր գոյներով: Ցիչէ՛ Օգոստոսի այդ գիշերը: Ձէմիլա՛, մի՛ զղջար, երբե՛ք, դուն տիրացար անհատանելի երջանկութեան»:

Կը դիտեմ գիրենք, կը լսեմ Տանիէլին ձայնը: Զիս ալ մեկնելու կը կանչէ, ուրեմն ունեցածս հաւաքելու ժամս հասած է: Տափաստան, գիւղս պիտի երթամ, հոն նորանոր գոյներ գտնելու:

Թո՛ղ Տանիէլի երգը արձագանգէ վըրձինիս ամէն մէկ շարժումին մէջ, ու ձէմիլայի սիրոյ սիրտը տրոփէ:

(Շար. 28 եւ վերջ)

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՑՍԱԿԻ

Լիոն. - Պ. Ճիվըրայէլ Պահատուրեան 500 Ֆ. կը նուիրէ «Յառաջ»ին, փոխան ծաղիկի Հայկ Տէյիրմէնճեանի մահուան առթիւ։

×

Տէր եւ Տիկին Մելիք Ամիրայեան իրենց սիրելի Մարգիտ Մարտիրոսեանի մահուան առթիւ կը նուիրեն 300 Ֆ. Կապոյտ Խաչի Փարիզի մասնաճիւղին, (ստանալ «Յառաջ»էն)։

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ՎԱՐՍՈՒՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

ՆԻՒԹՂՆ.- Տիկին Սիրանույշ Մխիթարեան 60 տոլար։

ԿԱՌՇ.- Խառաբ Տէր - Յակոբեան 200 ֆրանք։

ՍԷՆ- ԹՒԹՒՂՆ.- Պ. Փիլիկեան 100 Ֆ.։

Տիկին Ա. Գըլըճեան 200 Ֆ.։

MCA PARIS

GERARD CHALIAND

— spécialiste des mouvements révolutionnaires du Tiers Monde (du Kurdistan, d'Afghanistan)
— co-auteur du célèbre Atlas Stratégique
— fondateur du Groupement pour les Droits des Minorités (fondé en 1978 sur le modèle des Minority Rights Group)
— membre de la rédaction de la revue Esprit
— directeur de la collection Géopolitiques et Stratégies chez Fayard
— principal artisan de la session du Tribunal Permanent des Peuples sur le génocide arménien et responsable de la publication du Crime du Silence collection Champs chez Flammarion.

Présente
«LE SEL DE LA VENGEANCE»
de James T. HASHIAN

Vendredi 10 Janvie
à 20 heures 30

MAISON DE LA CULTURE ARMENIENNE
17, rue Bleue, 75009 Paris

POUR LA SAUVEGARDE
DU PATRIMOINE ARMENIEN

à Alfortville
le Vendredi 10 Janvier à 21 heures
MAISON DE LA CULTURE ARMENIENNE
9, rue de Madrid — 94140 Alfortville

PROJECTION - DEBAT

Bilan des campagnes d'exploration et des travaux menés par l'Organisation Terre et Culture.
Iran du Nord, Arménie Occidentale, Région de Kessab.
Et présentation des projets en cours.

Ներկայացում՝ երկիր եւ Մշակոյթ կազմակերպութեան աշխատանքներու
- *Ատրպատականի, Արեւմտեան Հայաստանի եւ Քեսապի շրջանի մէջ։*
եւ իր ներկայ ծրագիրներուն
ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԼՈՒՍԱՐՁԱԿՈՒՄ

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՄԱՐՍԷՅԼ.- ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Պուլվառ Օտառյի մասնաճիւղի վարչութիւնը ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները, Շաբաթ, Յունուար 11, ժամը 15-ին, եկեղեցւոյ սրահին մէջ։ Կարեւոր օրակարգ։ Անդամակցութիւնը մեծամասնութիւնը անհրաժեշտ է։

ՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
կը կազմակերպէ
ՄԵԾԱՐԱՆՔ - ՃԱՇ
ի պատիւ
ԳԷՈՐԳ ՊԱԳԸՐՃԵԱՆԻ
հայրենասիրական գործունէութեան առթիւ

Կիրակի, Յունուար 19, ժամը 13-ին
CERCLE REPUBLICAIN
5, avenue de l'Opéra — 75001 Paris

— Գեղարուեստական պատշաճ բաժին —

Տոմսերը ապահովելու համար հեռախօսել ժամը 8-էն 10
42 - 96 - 09 - 82 *թիւին, մինչեւ Յունուար 16*

RESTAURANT
SEVAN

—SPECIALITES ARMENIENNES, ORIENTALES et GRECQUES—

A la demande de sa fidèle clientèle
le restaurant SEVAN est ouvert du

LUNDI AU SAMEDI MIDI ET SOIR

tous les soirs dîner dansant avec l'orchestre
de JOHN PETER
spectacle animé par le chanteur arménien
BEDIK

BOUSOUKI et chanteur grec
YANISS

1, boulevard Carnot / 17, quai Jean-Baptiste-Clément 94140 ALFORTVILLE
TEL. : 43 - 76 - 32 - 19

ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՅՐ. ՄԻՈՒԹԻՒՆ

ՄՈՄԱՎԱՌՈՒԹԵԱՆ ՏՕՆԱՀԱՆԴԷՍ

ԿԵՍԱՐԱԿԱՆ
ՀԱՄԲԱՒԱՒՈՐ ՓՔԻՃՕՎ ԵՒ ԹԻՃՕՎ

Յունուար 12, Կիրակի ժամը 15-ին, Հ. Բ. Ը. Միութեան «Ալեք Մանուկեան» մշակոյթի մեծ սրահին մէջ։
118, rue de Courcelles — 75017 Paris
M° Courcelles ou Péreire

Նախագահութեամբ՝
ՏԻԿԻՆ ՍՈՆԻԱ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ

Պ. ԵՓՐԵՄԵԱՆ վերջերս լոյս ընծայած «Յաւիտենական Պայքար» դիրք - ալպոմը առորպրելով պիտի նուիրէ ներկաներուն։

Գեղարուեստական բաժնին սիրայօժար կը մասնակցին.- Տէր եւ Տիկին Նիկոլեան, Պ. Միհրան Էլմայեան, Օրիորդներ՝ Աբաքսի Գամբէթեան, Անահիտ Սվաճեան եւ ուրիշներ, երգերով, արտասանութիւններով, նուագով եւ զանազան անակնկալներով։

Բոլոր Հայերը, մասնաւորաբար կեսարացիները, անխտիր կը հրաւիրուին, առնելք իրենց մահացած սիրելիներուն հոգւոյն համար մոմ մը վառելով պիտի յաւերժացնեն դարերէ ի վեր մեզի հասած հայկական աւանդութիւնը։

Ծախքերու մասնակցութիւն՝ 50 Ֆ.։

ՏՕՆԱՓԱՌ

Սէն - Ժէռմէն Ս. Սահակ - Ս. Մեսրոպ եկեղեցւոյ թաղականութեան եւ Հ. Բ. Ը. Միութեան հովանաւորութիւնը վայելող երկօրեայ դպրոցին Ամանորի հանդէսը տեղի կ'ունենայ Յունուար 11-ին, Շաբաթ, ժամը 21-ին եկեղեցւոյ կից սրբահը, ղեկավարութեամբ, ուսուցիչներ՝ Տիկին Մայտա Կարապետեանի եւ Պ. Յակիկ Երլմազեանի։

Խմբերգ. արտասանութիւններ փոքրիկներուն կողմէ։

Կը ներկայացուի տրամախօսութիւն մը եւ զաւեշտ մը աշակերտներուն կողմէ։

Կը հրաւիրուին Թաղին եւ շրջակայքի բոլոր հայրենակիցները վայելելու համար հայկական օր մը եւ քաջալերելու համար մեր փոքրիկները։

Կաղանդ Պապային այցելութենէն վերջ հիւրասիրութիւն Թաղիս Կապոյտ Խաչի մասնաճիւղին կողմէ։

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Իսիի մասնաճիւղը ընդհանուր ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերուհիները, Շաբաթ, Յունուար 11, ժամը 15-ին Իսիի Մշակոյթի Տունը, 45 rue du Général Leclerc։ Ներկայ կ'ըլլայ Շրջ. Վարչութեան ներկայացուցիչը։ Կարեւոր օրակարգ։ Պատշամաւորի ընտրութիւն։

ԱԻԱՆԴԱԿԱՆ

ԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ՝
ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
վարիպեան իր 8 մասնաճիւղերուն

Կիրակի, Յունուար 12, ժամը 14·30-ին
Salle LEOPOLD BELLAN
rue Léopold Bellan — 75002 PARIS

—— *Գեղարուեստական յայտագիր մասնակցութեամբ Կապոյտ Խաչի ղպրոցներու աշակերտութեան։*
—— *Մանկական ժապաւէնի ցուցադրութիւն։*
—— *Կաղանդ Պապան ծրարիկներ կը բաժնէ սրահի ներկայ բոլոր մանուկներուն։*
—— *Ճոխ պիւֆէ պատրաստուած Կապոյտ Խաչուհիներու կողմէ։*

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է ՍԻՐՈՎ ՀՐԱՒԻՐՈՒԱԾ ԵՆ ԲՈԼՈՐԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ՝
ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ տեղական վարչութեան
Կիրակի, Յունուար 12, կէս օրէ վերջ ժամը ճիշդ 3-ին
Լիոնի Ազգային Տան սրահը
40, rue d'Arménie — LYON 3e
Ներկայ կ'ըլլայ Կաղանդ Պապան իր բազմաթիւ նուէրներով։
Կը խնդրուի ծնողներէն ճշդապահ ըլլալ։

RESTAURANT
PORTO-HYDRA
SPECIALITÉS d'ASIE MINEURE

M. M. BERDJ et ARMAND auront le plaisir de vous recevoir dans leur nouvel établissement.

TOUS LES SOIRS
AMBIANCE AVEC LE CHANTEUR ARMENIEN
ARMAND
et le nouvel orchestre grec
GRANDE SALLE
Disponible pour banquets, réceptions, mariage, etc., etc...

23, rue du Départ
Passage Montparnasse
75014 PARIS
Métro : Montparnasse
Réservation : 43. 21. 89. 60
Parking assuré
Fermé le Lundi
(Ouvert toute la nuit)

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ՈՒՐԲԱԹ
ՅՈՒՆՈՒԱՐ
10
VENDREDI
10 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.135 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.135

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռս Դիւանը լիազօրուած է յայտարարելու թէ Գերապատիւ Հոգեւոր Խորհուրդս, նախագահութեամբ Տ· Տ· Վազգէն Ա· Ամենայն Հայոց Կաթողիկոսի, իր 24 Դեկտեմբերի նիստում, ընդառաջելով Սբ· Ղազարի Մխիթարեան ուխտի Աթոռակալ Հայր Բարսեղ վարդապետ Զէփիճեանի ու Մխիթարեան Վարժարանների Միջազգային Կոմիտէի՝ Սբ· Էջմիածնին յղած դիմումներին, որոշեց Մայր Աթոռիս համեստ միջոցներից քանեւէհինգ հազար տոլար տրամադրել Մխիթարեան Միաբանութեան օգտին, վերջերս ստեղծուած նրա ծանր կացութեան առթիւ:

Վերոյիշեալ դումարը սիրով տրամադրելով, Վեհափառ Հայրապետը եւ Գերապատիւ Հոգեւոր Խորհուրդը յոյս են յայտնում, որ համայն հայութիւնը կ'ընդառաջի Մխիթարեան Վարժարանների Միջազգային Կոմիտէի կոչին, որպէսզի համազգային ճիգերով ու բարերար անձանց առատաձեռնութեամբ հնարաւոր դառնայ վերկել Սբ· Ղազարում պահպանուող ազգապատկան հոգեւոր մշակութային գանձերը եւ այսպիսով Մխիթարեան պատմական հաստատութիւնը դուրս բերել ստեղծուած ծանր կացութիւնից:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
(– կնիք –)

Դեկտեմբեր 27, 1985
Սուրբ Էջմիածին

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԵՆՔ ԲՈԼՈՐՍ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐ ԵՆՔ

Տարեդարձ մը չէ այսօր Մխիթարեաններուն համար, եւ սակայն «Յառաջ»ի այս թիւը ամբողջովին նուիրուած է անոնց վաստակին: Դրգռապատճառը կարելի է դուշակել: Շրջանէ մը ի վեր զգտնիք չէ, ոչ մեզի համար, ոչ ալ օտար մամուլին, որ Ս· Ղազարու վանքը կ'ապրի տնտեսական ծանր տագնապ մը: Հարկ է խոստովանիլ թէ Մխիթարեան մեր յարգելի հայրերը բաւական յապաղումով դիմեցին աշխարհական իրենց բարեկամներուն՝ պարզելու համար կացութիւնը, դիմեցին այնատեն միայն, երբ այդ կացութիւնը վտանգաւոր բնոյթ ստացած էր եւ դարմանումը՝ անյետաձգելի: Հաւանաբար, միաբանութիւնը տարիներու երկայնքին այն բարեմիտ յոյսն ունեցած էր, թէ պիտի կարենայ ի՛նք լուծել իր հարցերը՝ առանց իրարանցում ստեղծելու զգուշութէ գաղութ: Չէր կրցած, բնական եւ բացատրելի պատճառներով: Հայ մշակոյթի ծառայելու կոչուած նուիրեալ Հայրեր ի՞նչպէս պիտի կարենային դիմագրաւել իրենց անձնանօթ գործառնութեանց աշխարհի մարդոց անբարեխիղճ ընթացքը:

Մնացեալը ծանօթ է: 1984 Յունիսին, Փարիզի մէջ, եւմտական եւ տնտեսական հարցերու ձեռնհաս քանի մը անձեր հիմը կը դնէին «Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէ»ին, որ անմիջապէս գործի լծուելով, կը հետապնդէր բարւոք լուծում մը: Տարուան տքնջան աշխատանքներուն մանրամասնութեանց մէջ ուշադրդ է մխրճուիլ, քանի յաջորդական հաղորդագրութիւններով լուսաբանուեցաւ հանրային կարծիքը:

Վերջին հաղորդագրութիւնը, որ լոյս տեսաւ Փարիզի եւ Սփիւռքի հայ մամուլին մէջ, կը հաստատէր թէ ցարդ տարուած բանակցութիւնները յանգած են նպաստաւոր կարգադրութեան մը, կարեւոր զեղչ մը ձեռք ձգելով ընդհանուր պարտքին վրայ: Այս լուծումը, սակայն, մեզ բոլորս կը դնէ ծանր պարտաւորութեան մը տակ, անհրաժեշտ է վեց ամիսէն փակել մնացած ընդհ· պարտքը՝ որ կը հասնի չուրջ հինգ միլիոն տոլարի: Ժամն է ուրեմն, որ բոլոր անոնք որոնք այնքան ոգեւորութեամբ եւ որոշ անհամբերութեամբ կ'ուզէին համազգային հանդանակութեան ձեռնարկել, խօսքէն՝ անցնին գործի եւ իրենց առատաձեռն օժանդակութիւնը բերեն, որպէսզի դրամատուներու հետ կնքուած համաձայնագրերը յարգուին՝ վերջնապէ՛ս փրկելու համար մշակութային մեր գարաւոր օճախը:

×

Այդ օճախը անփոխարինելի էր երէ՛կ, անփոխարինելի է այսօ՛ր, անհրաժեշտ է վաղուա՛ն համար: Ի՞նչ կարելի է ըսել բացատրելու համար Մխիթարեաններու անգնահատելի նպաստը մեր մշակոյթին: Մեր ներսի էջերուն, սեղմ սիւնակներուն մէջ հրատարակուած հատ ու կենտ վկայութիւնները, որոնք կը կրեն տարբեր հոսանքներու պատկանող մեծ մշակներու ստորագրութիւնը, պիտի բաւէին արդէն, եթէ հարկ է, որ չգիտցողը գիտնայ, այլ մանաւանդ՝ գիտակցի թէ առանց Մխիթարի եւ իր յաջորդներուն տարած աշխատանքին լեզուական, պատմական, հրատարակչական, գրական, բանասիրական մարզերուն մէջ, հայ ժողովուրդը կը մնար այն խաւարին մէջ, ուր էր 18-րդ դարու սկիզբը:

Ինչ որ տուաւ մեզի Մեծն Մխիթար ի՞նչպէս որակել, երբ ամէն - ամէն գործածելով մաշեցուցինք ու արժեզրկեցինք մեր բոլոր ածականները: Բայց, երբ Սփիւռքի տարածքին վրայ, մեր մտահոգութեանց գլխաւորն է Հայ Դատը, չմոռնանք որ այդ դատը ամբողջութիւն մըն է: Միայն ցեղասպանութիւն չէ, միայն հողային պահանջ չէ, այլ է՛ նաեւ մեր արեւմտահայ մշակոյթի ու լեզուի պահպանումն ու ծաղկումը, զոր չենք կրնար տանիլ առանց Մխիթարեաններուն: Ուրեմն, է՛ նաեւ Մխիթարեան դատ, վասնզի, մենք բոլորս Մխիթարեաններ ենք:

«ՅԱՌԱՋ»

ՅԱԽԵՐԺԱԿԱՆ
Ս. ՂԱԶԱՐ

Սուրբ Ղազար:

Լոյսի եւ հաւատքի տաճար: Տունը հայ հանճարին: Երեք դարերէ ի վեր, աւելի քան ուրիշ որեւէ հաստատութիւն, մտքի եւ հոգիի իւղովը կը վառէ մեր ջահը ոսկեդարեան: Կը լուսաւորէ ազգը: Կը պահէ կենդանի մեր բազմադարեան մշակոյթը, նոյնիսկ մեր պատմութեան եղերական շրջաններուն:

Սուրբ Ղազար:

Գիտութեան եւ կրթութեան մեհեան: Աւազանը մեսրոպեան մեծասքանչ բարբառին: Երեք դարերէ ի վեր, Եւրոպային Արեւելք, Ամերիկաներէն մինչեւ Գանդկէսի ափերը, մեծութեան եւ ազնուութեան զաղափարովը, բարիին եւ գեղեցիկին սկզբունքներովը կը սնուցանէ մտազաչ սրտերը: Կը պատրաստէ սերունդները ազգին:

Լուսաւորութեան եւ ազգութեան կեդրոն է Սուրբ Ղազարը: Հայութեան ճգնաժամին յաջորդող յաղթանակը:

Սակայն, ան որ մտազաղթներու ծոցէն հայրենի լոյսը ու կրակը վերարծարծեց, այսօր կաչկանդումի, խոովքի, տագնապի, անճկութեան պահեր կ'ապրի: Տեսակ մը ճգնաժամ: Այդ ճգնաժամը, այսօր, Հայութիւնը իր կարգին պարտաւոր է վերածել յաղթանակի:

Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէի կոչը Սփիւռքի Հայութեան պէտք է ըլլայ՝ ՄԻՈՒԹԵԱՆ, ՍԻՐՈՑ, ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԵԱՆ, ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ԵՐԳ ՄԸ, ՀԱՄԱԿԱՄՈՒԹԵԱՆ ՇՂԹԱՑ ՄԸ՝ ցամաքէ ցամաք: Շղթայ մը որ խարիսխ նետէ հոն ուր Հայութեան համրանք մը կայ: Շղթայ մը որ ծառայի համայն մեր ազգի զաւակներուն հոգիներէն ներս, անմահ պէչիքթաշլեաններու, Վարուժաններու չունչովը արծարծուն:

Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէի կոչը ինչպէս Մեծ - Սեբաստացիի հոգիէն բխող կայծ մը պէտք է թափանցէ յաջորդական սերունդներուն պատկանող եւ բանակներ կազմող նախկին աշակերտներու սրտերուն՝ Մուրատի եւ Ռափայէլի ազգաչունչ յիշատակովը արծարծուն:

Դարեր ապրած, դարերով պայքարներ մղած, տառապանք տեսած բայց միշտ մահուան դէմ կեանքի ծիածանը պարզած հայ ժողովուրդը, այս պայքարը եւս պէտք է չահի: Եւ կը չահի, եթէ միաձնաբար դիմագրաւէ եւ միաձնաբար դարմանէ պատահած տագնապը:

Սփիւռքի Հայութիւնը, Մխիթարեան Միաբանութեան անտեսականօրէն քայքայուած ներկայ կացութիւնը փրկելու համար, ի գործ պէտք է դնէ իր գերադոյն կարելին: Ի՞նչ կ'արժեն մեր ամէն տեսակի հարստութիւնները, երբ զանոնք արժեւորող մէկ հաստուածը ծանր հարուածի մը տակ է: Ինչ որ կը պատահի, հայութեան ոեւէ մէկ հաստատութեան մէկ մասին, պատահած կ'ըլլայ համայն Հայութեան: Այս ազգային հասունութեան եւ իմաստութեան լոյսին տակ պէտք է չարժիլ:

Համազգային միաձնական կամքի, եղբայրական ոգիի գեղեցիկ արտայայտութեան առթիւ մը, ահա:

Մխիթարեան Միաբանութիւնը երեք դարերէ ի վեր կոտայ մեր ժողովուրդին անգնահատելի եւ անփոխարինելի հարցատութիւններ: Մենք ալ տա՛նք այսօր, վաղը դարձեալ ստանալու համար: Տանք այսօր, որպէսզի Հողդարէն ծլարձակուած ջահը չարունակէ իր լոյսին ցոլքերը տարածել մեր ազգային, մշակութային, կրթական կեանքին վրայ:

Թող Սուրբ Ղազարը մնայ մշտավառ բագին մը սրբազան, ուր մաշտոցեան հուրը բորբոքի անվերջ:

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Ֆապիուս «վերաքննութեան» դիմեց Զորեքշաբթի իրիկուն «ճշմարտութեան ժամուն» (Անթէն 2) չանալով յաջողիլ հոն՝ ուր ձախողած էր Շիրաքի հետ «դէմ առ դէմ»ին առեն: Այս անգամ, կացութիւնը տարբեր էր, թէեւ յաճախ ալ անճրկեցաւ երբ լրագրողը, իրմէ պատրաստաբան էր, եւ զինքը նեղը կը դնէր: Բայց բաւական «փորձ» պէտք է ըրած ըլլար, մանաւանդ ձեռքի չարժումներու, որպէսզի աւելի համոզիչ թուի: Իրեն համար, Ֆրանսայի վիճակը լաւ է, դէշն այն է որ՝ չի գիտեր: Գործազրկութիւնը չի ծաւալիր, դրամահոսութիւնը լաւագոյն մրցանիշը կը կոտրէ 1967-էն ի վեր 4,5% (դիտել կը տրուի իրեն թէ արեւմտեան - Գերմանիա 2-էն վար է), չատ խիստ է Հերսանի նկատմամբ, զոր «զոզ» կ'որակէ, որովհետեւ ազգ· մամուլին 20%-ը ձեռքն է, եւ գաւառական մամուլին 40%-ը: Աւելին՝ թեկնածու է ընտրութիւններուն եւ յաջորդ Ազգ· Ժողովին մէջ, իր պաշտօնեաներէն 20-ն ալ երեսփոխան պիտի ըլլան, գրեթէ խորհրդարանական խմբակ մը: Կ'ընդունի որ հարւածներ ստացած է, բայց կ'ուզէ կռուիլ ու չհիլ: Մխիթարի «Հանգստաւէտ ուժ»ին, պէտք է յաջորդէ «Հանգստաւէտ չարունակականութիւնը»: Պէտք է ընկերվարականները չհին, այլապէս՝ խառնակութիւն է: Ամէն պարագայի մէջ, որքան ալ ուզէ դառը պաշտպանել, փաստաբան չէ, «Լիպերասիոն»ի նկատած «Գերսառած ժպիտն» ալ միշտ չօգնեց, որպէսզի տայ այն պատկերը, որ կ'ուզէ տալ՝ պետական անձ մըն է: Այդ ուզղութեամբ, բնաւ համոզիչ չէր եւ հակառակ ջանքերուն, դեռ «սկսնակ» մըն է, որ դեռ տեղի - անտեղի բաներ կ'ըսէ:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐԸ չատ տրամադիր չեն թուիր հետեւելու Ռեկընի թելադրանքներուն Լիբիոյ նկատմամբ: Արեւմտեան - Գերմանիոյ կառավարութեան բանբերը յայտարարած է, այս առընչութեամբ, «Մեր փորձառութիւնը ցոյց տըւաւ, որ ցարդ տնտեսական պատիժները ակնկալուած արդիւնքները չեն տար»: Հետաքրքրական է յիշել թէ 16 տարի է, այն օրէն երբ Իտրիս թագաւորը վար առնուեցաւ (երբ Յունաստան էր) «ազատ սպաներու» կողմէ, Ամերիկա եւ Լիբիա երկդիմի յարաբերութիւններ ունեցած են: Ամերիկացիք, միակ ոչ - արաբ քաղաքացիներն են, որոնք առանց վիզայի մուտք կը գործեն Լիբիա: Քատաֆիի դէ՞նքը՝ քարիւղը: Ամերիկեան ընկերութիւնները հսկայ չահեր կ'ապահովեն, հոն ներդրած են 1·500 միլիոն տոլար, 1969-ի յեղափոխութեան առեն: Հիմա, մբնոլորտը պղտորած է: Բայց Ուաշինկթընի չի մոռնար թէ խորհրդային ազդեցութիւն կայ Լիբիոյ մէջ եւ պէտք չէ ուրեմն բոլորովին «լքել»: 6-էն ութ հազար խորհրդային խորհրդատուներէ զատ, 50 հազար գործակցող կայ: Կացութիւնը փափուկ է եւ ոչ ոք կ'ուզէ «նահատակ - հերոս»ի մը վերածել Քատաֆին: Իր երազն է այդ եւ ինք է որ ըսած է իր մէկ նախարարին՝ «այն օրը, ուր առաջին ռումբը իյնայ Լիբիոյ վրայ, յեղափոխութիւնը յաղթած կ'ըլլայ»:

Ռընոյի երդը, որու անդրադարձած էինք մեր նախորդ թիւով, կը չարունակէ վրդովել Անգլիացիք, որոնք չեն հանդուրժեր որ մէկը - ան ալ ... Ֆրանսացի մը - համարձակի Տիկին Թաչըրին դէմ այդքան դառնալ: Անգլիացի երգիչէն եռք, մամուլն ալ եռ չի մնար մաղձ թափելու համար Ֆրանսայի վրայ: «Տէյլի - Մէյլ»ն է որ կը գրէ· - «Անծանօթ Մեծն - Բրիտանիոյ մէջ («Յառաջ»՝ հիմա այլեւս ծանօթ է...), Ռընօ տեսակ մը հարստացած անիչխանական մըն է, որ իր ժամանակը կ'անցընէ եաֆ-ի մը մէջ, միաժամանակ ոռնալով էսքէլիշմէնթի դէմ»: Նոյնիսկ լրջախոհ «Օպզերվըր»ը չանտեսեր եղածը, զոր «գարշելի նախատինքներ մեր քաղաքագէտներու հասցէին» կ'որակէ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐԱՅԻ ՀՈՒՇԵՐԸ

Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ս. Նահապետյան ... Ես ձեզ ճանաչում եմ ... Ես ձեզ ճանաչում եմ ... Ես ձեզ ճանաչում եմ

Մ Խ Ի Թ Ա Ր
ԵՒ ԻՐ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆ

... Ամէն տեսակէտով ուսումը ճանաչուում է մի անհրաժեշտ եւ վերին աստիճանի կարեւոր բան. ուսումը պէտք է՝ եւրոպացի միաբաններին ըմբերանելու համար, եկեղեցու վարկը բարձրացնելու համար, քաղաքական ազատութեան հասնելու համար, անհատական վիճակը բարելաւելու համար: Բուն երկրում տրուած ուսումը դոհացում չի տալիս չատերին, նրանք ձգտում են աւելի վեր: Այս անյագ ծարաւի մարմնացումն է Մխիթար Սեբաստացին, նոր ժամանակների մեծագոյն Հայը, որ 1701-ին հիմնում է իր նշանաւոր ուխտը բուն երկրից դուրս, բայց նրա լուսաւորութեան գործին ծառայելու համար:

Այդ ուխտի գործունէութիւնը գերազանցապէս կրօնական է եւ ազգային. Մխիթարի գործին նպաստում են կաթոլիկ եկեղեցին եւ հայ առեւտրականը. մէկը պահանջում է հնազանդութեան բերել հայ եկեղեցին, միւսը՝ ծառայել ազգի լուսաւորութեան, զարթեցնել ազգային դիտակցութիւն, ազգասիրութիւն: Մխիթարեան Միաբանութիւնը 150 տարի շարունակ հաւատարմութեամբ ծառայում է իր հովանաւորի եւ իր մեկենասների ներքնընչումներին, պապին եւ հայ առեւտրականներին, կաթոլիկ եկեղեցւոյն եւ Հայոց ազգին:

Մինչեւ ԺԸ. դարի կէսը ոչ մի հիմնարկութիւն այնպիսի մեծ երախտիք չունի հայ մտքի զարգացման վրայ որքան Մխիթարեան Միաբանութիւնը: 150 տարի շարունակ նա էր Հայութեան մտքին ու զգացումին անունդ մատակարարում. Պոլսահայն ու Ռուսահայը նրան էին աչքերում եւ նրան հետեւում: Մխիթարի անձն ու գործը խոչել էին բոլոր ազգասէրների համար եւ նրանց գաղափարները ազգի մասին՝ դաւանանք:

Այդ միաբանութեան լայնածաւալ գործը գերազանցապէս դասական ուղղութիւն ունի: Մխիթարեանի միտքը յածում է Հայի անցեալում, թէեւ նրա նպատակն է ներկան առաջնորդել: Թէ ինքնուրոյն եւ թէ թարգմանական գործերով այդ միաբանութիւնը ամենակարող միջնորդն է հանդիսանում եւրոպական ազդեցութեան: Գրքերի տպագրութիւններից սկսած մինչեւ նրանց յօրինուածքն ու պատրաստութեան եղանակը կրում են եւրոպական քաղաքակրթութեան դրոշմ: Եւրոպական վաստակներով, նա ընդհանրացնում է մըտաւոր աշխատանքի եւրոպական ձեւեր:

Այդ ամբողջ գործունէութիւնը տոգորուած է ազգային արժանապատուութեան զգացումով եւ վերածնութեան բուռն տենչով: Երբ Մխիթարն ու իր աշակերտները մաքրում են Հայոց գրաբար լեզուն յետնադարեան աղաւաղումներից՝ դրանով ազգային ինքնորոշման եւ ինքնաճանաչման մի գործ են կատարում: Երբ Հայկազեան բառգրքի հսկայական հատորներում ցուցադրում են նախնեաց լեզուի հարստութիւնը՝ դրանով գոհացում են տալիս ոչ միայն մի ուսումնական պէտքի, այլ եւ ընթերցողի ուշքը գարձնում են դէպի Հայութեան փառաւոր անցեալը: Նախնեաց գրական վաստակները երեւան հանելով եւ ընտիր տպագրութեամբ ցրելով ազգի մէջ՝ նրանք յայտնագործում են հարուստ գրականութիւն, որի գոյութիւնը չէր իսկ երազել մահմեդական բռնութեան տակ հեծող Հայութիւնը: Այն սէրը, որով պատրաստում էին այդ վաստակների տպագրութիւնը եւ այն հիացումը, որ արտայայտում էին Մխիթարեանները նրանց հանդէպ՝ անտեսանելի ուղիներով թափանցում էր ընթերցողի սիրտը եւ կապում նրան իր ազգի անցեալին: Նորեւնացու առաջին հրատարակութիւնը (Ամստերդամ, 1695) արդէն բացել էր Հայութեան աչքն իր անցեալի վրայ. առանց այդ գրքի անհնարին է Յ. Շահնազարեան երեւակայել: Մխիթարեանները մէկ մէկու ետեւից հրատարակելով հայ պատմագիրների գործերը՝ «վառ եւ բորբոք» էին պահում մի անգամ սկսուած հետաքրքրութիւնը եւ աւելի հրահրում:

Հում նիւթերի հրատարակութեան յաջորդում է նրանց մշակութիւնը եւ հետազօտութիւնը. Ինճիճեան գրում է իր Աշխարհագրութիւնն ու Հնախօսութիւնը, Զամչեանն իր Պատմութիւնը, որ այդ ըրջանի ամենանշանաւոր գիրքն է՝ իր ունեցած ազդեցութեան տեսակէտից: Մի ամբողջ ժողովուրդ յարութիւն էր առնում նրա գրքի մէջ մոռացման գրից եւ սարկացած յետնորդների ապշած աչքերի առջեւ անցնում էին նրանց փառաւոր նախնիները, որոնք աշխարհակալ ու ազգասէր էին, ունէին գահ ու գայլուն, պատերազմում էին հզօր հարեւանների հետ եւ չատ անգամ յաղթում էին նրանց: Եւ այդ ամէնը մոացածին չէին, այլ հայրենի աղբիւրներից քաղած եւ օտար հեղինակների վկայութեամբ հաստատուած: Ոչ մի գիրք մեզանում աւելի մեծ դեր չի խաղացած ազգային ինքնագիտակցութեան զարգացման գործում, որքան Զամչեանի եռահատոր պատմութիւնը, որի ազդեցութիւնը միջնորդաբար չարունակում է մինչեւ այսօր:

Հայոց անցեալի գիւտը վառում է հայ բանաստեղծների հոգին. քնարերգուն Հայոց փառքն է երգում, թատերագիրը հայ պատմական հերոսներին է բեմ հանում եւ նրանց բերանը ազգասիրական ճառեր դնում, փառաբանում հաւատարմին եւ խարանում դաւաճանին, Վանանդեցին հեղինակում է իր լայնածաւալ քերթուածները, ուր երգում է երանաւէտ Հայաստանը եւ Հայոց զարգը: Այս ընդհանուր ուղղութիւնը ըրջանի վերջում արտադրում է իր գլուխ գործոցը. Ա. Բաշրատունին գրում է իր «Հայկ Դիւցազն»ը՝ «քառասուն գարերի վրէժը լուծելով»: Մահմետական լուծի տակ ստրկացած Հայութեան նախահայրն է այդտեղ, որ ազատութեան մոլի սիրահար է, բռնութեան կատաղի թշնամի: Ամբողջ գիրքը լիքն է կռիւների ազմուկով, իսկ լեզուն անհունապէս հարուստ եւ խրոխտ ու ռազմական: Իրաւազուրկ Հայութեան աչքի առաջ նկարւում էր նրա հպարտ ու ազատ նախահայրը, որ չքեղօրէն ապրում էր իր կեանքը՝ կարծես ընդդծելու համար անարժան յետնորդի ստրկութիւնը: «Հայկ Դիւցազն»ը ազգասիրական ուղղութեան եւ գրաբար լեզուի գագաթնակէտն է. այնտեղից գահավէժ ընկնում է ցած թէ այդ ուղղութիւնը եւ թէ՛ մանաւանդ այդ գրական լեզուն:

Մխիթարեան Միաբանութեան գործունէութիւնը դասական ուղղութիւն ունի ոչ միայն այն մտքով, որ ընթերցողի միտքն ու զգացումը կապում է հայ անցեալին, այլեւ այն մտքով, որ նա հայ լեզուով տալիս է հին եւ նոր ազգերի դասական երկերի թարգմանութիւնը. յոյն, լատին, ֆրանսական, անգլիական եւ իտալական գլուխ գործոցները հետզհետէ խօսում են Հայերին նախահարց կորովի եւ կարող լեզուով: Նրանք վարժեցնում են ընթերցողին խորապէս զգալ, պայծառ ու կանոնաւոր յօրինել, վարպետօրէն արտայայտել, խօսք կերտել, կարճ՝ պատեսաստում են յղացումի եւ կատարումի ընտիր ճաշակ եւ այսպիսով քաղաքակրթում են հայ միտքը եւրոպական իմաստով: Անկախ այդ կազմաւորիչ ազդեցութիւնից, նրանք բաց են անում հայ ընթերցողի առաջ նոր ու լայն հորիզոններ եւ տալիս են նրան բազմատեսակ ծանօթութիւններ՝ դրական, պատմական, դիտական, իմաստասիրական, մշակելով մի հարուստ ու ճկուն լեզու՝ ընդունակ հաւատարմութեամբ թարգմանելու բարձր քաղաքակրթութեան մշակած գաղափարները, պատկերներն ու զգացումները:

Գրական պատմութեան այս ըրջանը ընդհանուր առմամբ մի վերապրում է հայ անցեալի: Մտաւորականների մեծ մասը դեռ հոգեւորական է: Հայ հեղինակը անտեսում է ներկայ թշուառութիւնը եւ փարում է անցեալին: Նա յետ է նայում եւ ազգային արժանապատուութեան յենարանները որոնում ազգի անցեալ փառքի մէջ: Նա կտրուած չէ եկեղեցուց՝ բայց տեսնում է ազգը, որ ստեղծել եւ պահպանել է այդ եկեղեցին: Ըրջանի սկզբում ազգի գաղափարը եւ ազգասիրական զգացումը հազիւ երեւալով՝ ժամանակի ընթացքում պայծառանում ու զօրանում են մինչեւ եկեղեցուն եւ ժամանակրութեան զուգապատիւ դառնալու աստիճան, իսկ ըրջանի վերջում ազգի գաղափարը մինչեւ իսկ գերակշռում է եկեղեցու գաղափարին: Այսպիսով ազգ եւ եկեղեցի գաղափարները այն երկու անհիներն են, որոնցմով Հայութիւնը դանդաղ, բայց յամառ եւ յարատեւ բարձրանում է դէպի նորագոյն ժամանակները՝ հոգեպէս ազատուելով թաթար ցեղերի եւ մահմեդական իշխանութեանց մղձաւանջային վերապետութիւնից:

Թէրզեան, Ծերենց, Մամուրեան եւայլն: Անոնք հիմնած են հայ թատրոնը, անոնք գրած են ամէնէն յղկուած ու ներքացած, ամէնէն «արուեստագէտ» ձեւով բանաստեղծութիւնները զոր հայերէն լեզուն ունեցած ըլլար մինչեւ իրենց օրը, զարգացած են վէպն ու լրագրական քրոնիկը, ռոմանթիկ գրականութիւնը ծանօթացուցած են Հայոց՝ զեղեցիկ թարգմանութիւններով: Մխիթարեանց աշակերտներն են դարձեալ որ գլխաւոր նախաձեռնութիւնն ունեցած են Միացեալ Ընկերութեան՝ այսինքն մերօրեայ ամէնէն կարեւոր հայ կազմակերպութիւններէն մէկուն հիմնարկութեանը: Եւ իրենց գերը անհուն է Թրքահայ հասարակութեան բարքերուն եւրոպացման մէջ. Եւրոպացիներէ անջատ ապրող Հայոց զանգուածին մէջ, Եւրոպային հասնող, դաստիարակութեամբ ու հոգւով բոլորովին եւրոպացած այդ երիտասարդները, իրենց կաթոլիկութեանը պատճառովն ալ սերտ յարաբերութեան մէջ՝ եւրոպացի տարրին հետ, մեծապէս նպաստած են, իրենց հանրային գործունէութեամբն ինչպէս անձնական կեանքովը, եւրոպական ձգտումներու, կենցաղավարութեան եւ ճաշակի տարածմանը:

«Արուեստագէտ», ու «եւրոպացի», ահա ինչ որ եղած են Մխիթարեանները ու իրենց աշակերտները: Մեր Թրքահառն բարքերուն - մանաւանդ Պոլսահայոց բարքերուն - թանձր գեհկութեանը մէջ, անոնք ազատութեան ու գեղարուեստի մթնոլորտի մը մէջ զարգացող ազգերու հոգին, ոճը, ձեւերը բերած են: Եւ «դիւցազնական» տարրը մտցուցած են անոնք մեր մէջ: Մեր հին մատենագրութիւնը մեծ մասամբ ողբ մըն է նոր ժամանակներու մէջ, ԺԹ. դարու սկիզբը, Հայերը, Մխիթարեաններէն զատ, գրեթէ ուրիշ բան չէին արտադրած բայց եթէ ծթռած բանաձեւութիւններ, վարնոց ծաղրածութիւններ ու տափակ վիպասանութիւններ. Մխիթարեանք, առաջին անգամ ըլլալով, հնչեցուցին՝ հայ լեզուով՝ այն առնական չեչտերը զոր Հոմերոս, Վիրգիլիոս, Սոփոկլէս արձակած են Արեւմուտքի մէջ. Մխիթարեանք առաջին Հայերը եղած են որ դիւցազներգութիւնն ու ողբերգութիւնը մտցուցած են հայ մատենագրութեան մէջ, այսինքն գրականութեան երկու ազնուագոյն ու վեհագոյն ձեւերը. լրկան հայերէնը իրենց մատներուն տակ չեփորի գոչիւններ, սլաքի չկահիւններ, սուրի չաչիւններ արձակած է. Զամչեան, իր հոյակապ գրքովը, ցոյց տուած է մեր նախահայրերը Հռոմայեցիներու հոգին ու լեզուն զգեցած. Բազրատունին «Հայկ դիւցազն»ով ուզած է մեր նախնիքը մեզի պատկերացնել «Իլիական»ին քաջերուն համանման. Ալիշան Վարդանը, Տրդատը, Աշոտ Երկաթը երգած է պզպզատէ տոզերուն մէջ. Պէշիքթաշլեան, Թէրզեան, Հէքիմեան իրենց դիւցազնական խաղերովը՝ մեր ժողովուրդն ընտելացուցած են այն արի զգացումներուն, այն խրոխտ լեզուին, այն յանդուգն արարքներուն որոնք Ալֆիէրական, Քորնէյլեան կամ Հիւկոյական անձնաւորութիւններուն յատուկ են: Եւ ի՜նչ սիրուն նորութիւն դարձեալ, անկաշկանդ ու բացարձակ գեղեցկամոլութիւնը զոր սիգաբար դրօշած են Բագրատունիներն ու Հիւրմիւզները. մեր պարկեշտամոլ, կրօնամոլ, աւելի ճիշդ կեղծամոլ բարքերուն մէջ, անոնք վերածնութեան արուեստագէտ. կրօնաւորի իրենց հոյակապ տիպարը կանգնեցուցած են: Այդ վեղարաւորները, որ առանց տող մը ընծելու մեզի տուած են Հոմերոսն ու Վիրգիլիոսն ու Միլտոնն ու Ովրատիոսը՝ իրենց խոհական ինչպէս եւ հեշտական էջերովը, որ սէրն ինչպէս հայրենիքը, Աստուած ինչպէս եւ անոր արարածներուն զեղեցկագոյնը՝ կինը՝ երգած են առանց ոեւէ չմար ամօթխածութեան, ըմբռնելով որ Գեղեցկին պաշտամունքը ամէն նիւթ կը սրբագործէ, այդ իրենց սքեմին տակ արեւոտ ու վարդափայլ հոգի մը սնուցանող երդիչները՝ վերանորոգ երիտասարդութիւն, քաջութիւն ու չնորհ են բերած մեր քիչ մը պառուած ու կքած ժողովրդին:

×

Մխիթարեանց գործը չատ մեծ է, բայց ամբողջ գործը չէ, անոնց հետ զուգահեռաբար, Պոլիս - Իզմիրի հայ լուսաւորչական մտաւորականներու գործունէութիւնը, եւ մանաւանդ ռուսահայ գործիչներու դերը, ահագին տեղ ունի արդի Հայութեան բարոյական վերականգման մէջ:

... Բայց Մխիթարի տունը միշտ կը պահէ իր «առաջնութեան» արժանիքը: Ան է որ առաջին ջահը բարձրացուցած է, ԺԸ. դարու սկիզբէն իսկ, հայ ժողովրդին վրայ համաւարած ծաւալող խաւարին մէջ, երբ մեռելութիւն կը տիրէր Մոսկուա ինչպէս Պոլիս, Թիֆլիս ինչպէս Իզմիր:

ՀՈՂԴԱՐԻ ԲԼՐԱԿԻՆ

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Քու համեստ բարձունքիդ վրայ կանգնած կ'ունկնդրեմ անմահութեան երգը չորս հովերուն՝ որոնք ցորեաններու ծովերը յուզելով կու գան մազերուս մէջ նուագել տրտունջը հայրենի աւերումին, եւ փառքը աստղապսակ Մարզուն՝ որուն օրոցքը օրօրուեցաւ քու մէկ բարի հիւղակիդ մէջ:

Կողիդ վրայ հայ տնակները բոյներու պէս ցանուած են նախնիներու չինարար ձեռքերով. տնակներ՝ որոնց պատերը կը ծեփէ ամառնային արեգակը, եւ որոնց երդիքներուն վրայ, գիչերը, աստղերը մայրօրէն կը հսկեն, կ'աղօթեն եւ կու լան իրենց մարգարտազօծ աչքերուն ծորան ծորան արցունքով. տնակներ՝ որոնց դռնակները արշալոյսները կը բանան, եւ լուսնակները կը փակեն:

Քու դորչ հողդ ծոթերին կը բուրէ եւ կաւդ է լուսազանգ՝ որոնց վրայ հայկակները տատրակներու պէս կը պտակին եւ հսկաներու պէս կ'արթննան. քու կաւդ, քու կաւդ կակուղ է, եւ որեւէ արեւէ խորխոլած, հատիկ հատիկ, փոշի առ փոշի, հազարաւոր սերունդներու սիրտերը չաղուեց ու երակներն հոսեցուց, մանուկներուն մէջ վարդեր ծլարձակեց, պարմաններուն մէջ զօրութիւնն առնական, եւ նահապետներուն մէջ անմահութիւն. երախաներու այտերէն եւ ալեզարդ մօրուքներէն ծերերու քու կաւդ է որ կը հոսի վարդերու եւ չուշաններու խոհութեան պէս:

Ես կը սիրեմ աղբիւրներդ, բարբարոս քերթուածներ՝ քանդակուած անտաչ քարերու մէջ՝ որոնց վրայ կ'ապրի մամուռը անդուլ. գուռերու վրայ Կաբիրուհին կը նստի. իր գօղին խաղաղութեան մէջէն երբ ան կը հակի ջուրերուդ վրայ օծելու համար իր աչքերը բոցաժուռ, ակերդ կը վառին. աղբիւրներդ կ'արշալոյսնան եւ անոնց միօրինակ երգը աստղերու պէս կը քաղցրանայ: Ես կը սիրեմ ուռիներդ հովանաւոր՝ որոնք խորախորհուրդ մըրմունջներուն մէջ կը ծրարեն զգեզ, եւ կը խորհիմ անոնց չուքին տակ խաղացող բոպիկ մանուկներուն վրայ:

Քու վրադ ալ, ո՛վ բլրակ, քու վրադ ալ օր մը կանգ առաւ Բեթղեհէմի աստղը, ու իր ճաճանչները քու կտուրներուդ վրայ ալ սլաքուեցան: Ուրճիթի մը դուռը ճռնչեց, եւ դուրս ելաւ Մանուկ մը դեզդեզուն քայլերով, ուժգնօրէն գեղեցիկ, արշալոյսի առաջին համբոյրովը զգաց որ ճակատին վրայ Աստուծոյ չըրթունքը դպաւ: Ամբողջ քու ծոթերինա - բոյր հողդ բեռնաւոր՝ թողուց հովերդ եւ ծառերդ, աղբիւրներդ եւ հիւղակներդ, դնա՜ց. գնաց հեռաւոր ձեռքէ մը առաջնորդուած. բայց իր ոտքերուն հետքերը աստղոտիդ վրայ յաւերժացումը գըրեցին:

Հողդարցի Մխիթարն էր քու մանուկդ եւ հայրենիքի ծերունին: Հայկական դարերու կամարը քու կաւդդ ու չաղախովդ կերտեց. եւ դաղաւարի անմատչելի կատարները քու դրեխներովդ բարձրացաւ: Կնգուղ առաւ բարի ըլլալու համար, եւ վանքերու սպիտակափառ պատերուն խորը երբ գլուխը ձեռքերուն մէջ ուղեղին տրտմիւնը կ'ունկնդրէր՝ հայրենի աւերակները իրենց լուսածրար ընդերքներուն մէջէն անհունօրէն խայտացին, պարիսպներու տակ ցանուած ոսկորները չուչանացան, մարգարտակուռ մազաղաթները լուսադէմի երկնքին պէս տակաւ առ տակաւ առնանալ սկսան: Հողդարի ճրագը Արարատի արեւը եղաւ:

Եւ ես այժմ, ո՛վ բլրակ, համեստ բարձունքիդ վրայ կանգնած կ'ունկնդրեմ Անմահութեան երգը չորս բուրումնաչունչ հովերուն, որոնք մազերուս մէջ կ'երգեն տրտունջը աւերումին, եւ մրմունջը չուրջդ ծովացած ցորեաններուն: Եւ իմ ճամբորդի ցուպիս ծայրով քեզ կը բերեմ ողջոյնը Մխիթարի սերունդին, եւ կը ծորեմ օրհնութիւնը Հիւրմիւզներու, Բագրատունիներու եւ դաշնակաւոր Ալիշանին, եւ ըղեղս՝ հպարտ կը զգայ զինք հպարտութեամբը Մխիթարեան խոչալին, եւ համբոյրովը հողիդ լուսազանգ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Օր· Սիլվա Հարիսպեան, Պ· Յակոբ Հարիսպեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի՝ Կիրակի, Յունուար 12, Փարիզի Մայր Եկեղեցին՝ 15 ժամ - կուժօն փողոց, իրենց մօր՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԱՂԱՒՆԻ ՀԱՐԻՊԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ։

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

«ԾԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՓԱՐԻԶ·· Տէր եւ Տիկին Սուրէն Փափազեան 500 Ֆ·։

ԷՔՍ - ԱՆ - ՓՐՈՎԱՆՍ·· Տիկին Արաքսի Տօնապետեան 100 Ֆ·։

Irma fourrures

SUR MESURE
— REPARATIONS —
TRANSFORMATIONS

Ժամ առաջ գնեցէք ձեր մուշտակէ վերարկուն վստահելով՝

ՀԱՅԿ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ

ՁԱՓԻ ՎՐԱՁ - ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

ԲԱՑ Է ԱՄԷՆ ՕՐ
ԲԱՑԻ ԿԻՐԱԿԻԷ

44, avenue du Général de Gaulle
94700 Maisons-Alfort
tél. : 43 - 68 - 55 - 99

Métro: École Vétérinaire-Alfort (direction CRÉTEIL)

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱՊ· ԽԱՉԻ Անէէա - Պուա - Գոլոմպ եւ Աբժանթէոյի մասնաճիւղը իր ցաւակցութիւնները կը յայտնէ ընկերուհի Տիկին Տիրուհի Քէօլէեանի եւ իր բոլոր պարագաներուն, իր սիրելի քրոջ՝ Տիկին Էպրուհի Դաւիթեանի մահուան առիթով։

Այս տխուր առիթ ընտրհակալութեամբ առացած է ընկերուհի Տիրուհի Քէօլէեանէ 1000 Ֆ· իր քրոջ յիշատակին եւ Օր· Բերկրուհի Ճապուրեանէ 200 Ֆ·։

G. I. A.

GROUPEMENT INTERPROFESSIONNEL ARMENIEN

CONÉFRENCE COCKTAIL

le 24 JANVIER — à 19 heures

Philippe GURDJIAN

un homme de communication

Philippe GURDJIAN, 40 ans, sportif accompli, fondateur du groupe GEMAP : 630 MF de chiffre d'affaires en 1985, 18 agences régionales et 2 à l'étranger. Parmi ses clients BMW, PERNOD - RICARD, LONGINES... Il possède aussi des sociétés parapublicitaires dont NOSCAR spécialisée dans le sponsoring automobile et organisatrice du GP de France de F1 en 1985.

Le GIA se devait de l'inviter. Philippe GURDJIAN président du groupe GEMAP nous présentera : «*l'Importance de la communication dans le futur*» le Vendredi 24 Janvier dans les salons de l'Hôtel GEORGE V à Paris.

Ceux qui sont attentifs aux nouvelles techniques de «management» captivés par ceux qui les appliquent, séduits par une réuissite exemplaire nous retrouveront le 24 Janvier.

Réservation:
GIA: BP 120 - 75763 PARIS CEDEX 16
Tél : 46 - 03 - 52 - 63

ՆՈՒԻԷՐՆԵՐ

ԻՍԻ· - Ամանորի առթիւ, Պ· Զաւիկ Խաչիկեան հետեւեալ նուէրները կ'ընէ· - 400 Ֆ· Որբերու Օգն· Մարմնին, 300 Ֆ· կապ· Խաչի Իսիի մասնաճիւղին, 300 Ֆ· Ս· Մարիամ - Աստուածածին Եկեղեցւոյ, 300 Ֆ· Հայ Կաթողիկէ Ս· Խաչ Եկեղեցւոյ (ստանալ «Ծառաջ»էն) եւ 200 Ֆրանք «Ծառաջ»ին։

ՆՈՒԷՐ

Շաւիլէն՝ Տէր եւ Տիկին Շմաւոն Պալեան 200 Ֆ· կը նուիրեն Խատիս - Ազգ-ին (ստանալ «Ծառաջ»էն)։

imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hautevillle — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ

— C. I. C. A. M. —

ԿՈՉԻՆ ԱՌԹԻԻ

Դեկտեմբեր 12-ի մեր թիւով լոյս կը տեսնէր Մխիթարեան միջազգային կոմիտէի հաղորդագրութիւնը, որու վերջին մասը կոչ մըն էր համազգային հանգանակութեան։ Հոն կ'ըսուէր թէ այդ նպատակաւ հայահոծ գաղութներուն մէջ պիտի կազմուին ՍԻՔԱՄ-ի հովանաւորութեան տակ յանձնախումբեր։ Մինչ այդ դրամական առաքումները կարելի է կատարել հետեւեալ ձեւով եւ հասցէին։-

Libellez vos chèques bancaires à l'ordre de :

C. I. C. A. M.
et les expédier à
C. I. C. A. M.
c/o Crédit Suisse
92, *Champs-Elysées* — 75008 *PARIS*

Հ. Բ. Ը. Մ.

ՎԻՆԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Նախագահութեամբ՝
ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՒԵՏԻՔԵԱՆԻ

Կիրակի, Յունուար 19, ժամը 17-ին, Ս· Աբովեան Մշակոյթի Տան մէջ։

1, Quai Pajot — VIENNE

Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը կը բերեն միօրեայ դպրոցի աշակերտները։

Մուտքը ազատ է։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Ալֆորվիլի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուիրատուութիւնները Նոյեմբեր 10-ին տեղի ունեցած հոգեճաշին առթիւ։

Ուրքաթեան Յակոբ 100, Մուրատեան Սարգիս 150, Շահինեան Գէորգ 100, Պասմաճեան Աբրահամ 100, Փափազեան Մարսէլ 200, Մուքաֆեան Ասաղիկ 100, Նէտէլեան Մարիամ 100, Զապունեան Արտաշ 100, Փափազեան Հռիփսիմէ 100 Ֆ·, Պառաւեան Յովհաննէս 100, Քէշիշեֆ Զարուհի 100, Քէպէլեան Մարի 50, Փափազեան Սիրարփի 100 Ֆ·, Անանեան Անանիկ 100, Զորաբաբէլեան Էմմոն 200, Խաչատուրեան Ազասի 100, Մատլեան Խոսրով 200, Անանեան Բիչար 100, Փափազեան Գրիգոր 200, Պետիկեան Մարիամ 50 Ֆ·, Գրիգորեան Արա 100, Տէր - Պարսամեան Ասաղիկ 100, Զէրչեան Արեգնազ 100 Ֆ·, Ումն՝ 100 Ֆ·։

Ս· ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Երեքշաբթի, Յունուար 14, Տօն Ծնընդեան Սրբոյն Յովհաննու Կարապետի։ Այսօր Սուրբ Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ անուան տօնն է։

Ժամը 10-ին պատարագ կը մատուցուի։ Պատարագի աւարտին՝ հոգեհանգիստ կը կատարուի եկեղեցաչէն բարերար՝

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

եւ

ՄԱՆԹԱՇԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ

բոլոր ննջեցեալներուն համար։

ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՅՐ· ՄԻՈՒԹԻՒՆ

ՄՈՄԱՎԱՌՈՒԹԵԱՆ ՏՕՆԱՀԱՆԴԷՍ

ԿԵՍԱՐԱԿԱՆ
ՀԱՄԲԱՒԱՒՈՐ ՔԷԹԷՑՈՎ ԵՒ ԹԷՑՈՎ

Յունուար 12, Կիրակի ժամը 15-ին, Հ· Բ· Ը· Մխիթեան «Ալեք Մանուկեան» մշակոյթի մեծ սրահին մէջ։

118, rue de Courcelles — 75017 Paris
M° Courcelles ou Péreire

Նախագահութեամբ՝
ՏԻԿԻՆ ՍՈՆԻԱ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ

Պ· ԵՓՐԵՄԵԱՆ վերջերս լոյս ընծայած «Յաւիտենական Պայքար» գիրք - ալպոմը ստորագրելով պիտի նուիրէ ներկաներուն։

Գեղարուեստական բաժնին սիրայօժար կը մասնակցին·· Տէր եւ Տիկին Նիկոլեան, Պ· Մխէրան Էլմայեան, Օրիորդներ՝ Ա· Բաքսի Գմբէթեան, Անահիտ Սվաճեան եւ ուրիշներ, երգերով, արտասանութիւններով, նուագով եւ զանազան անակնկալներով։

Բոլոր Հայերը, մասնաւորաբար կեսրացիները, անխտիր կը հրաւիրուին, անոնք իրենց մահացած սիրելիներուն հոգւոյն համար մոմ մը վառելով պիտի յաւերժացնեն դարերէ ի վեր մեզի հասած հայկական աւանդութիւնը։

Ծախքերու մասնակցութիւն՝ 50 Ֆ·։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑ ԽԱՉԻ Իսիի մասնաճիւղը ընդհ· ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերուհիները, Շաբաթ, Յունուար 11, ժամը 15-ին Իսիի Մշակոյթի Տունը, 45 rue de Տէֆաճս։ Ներկայ կ'ըլլայ Շրջ· Վարչութեան ներկայացուցիչը։ Կարեւոր օրակարգ։ Պատգամաւորի ընտրութիւն։

×

ՄԱՐՍԷՅԼ·· - ԿԱՊՈՑ ԽԱՉԻ Պուլվար Օտտոյի մասնաճիւղի վարչութիւնը ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները, Շաբաթ, Յունուար 11, ժամը 15-ին, Եկեղեցւոյ սրահին մէջ։ Կարեւոր օրակարգ։ Անդամակցութեան մեծամասնութիւնը անհրաժեշտ է։

CONCERT A L'OPERA DE MARSEILLE

Samedi 25 Janvier à 20 heures 45

par

SIPAN - KOMITAS
(Chœur mixte Arménien de Paris)

et

l'ORCHESTRE PHILHARMONIQUE DE MARSEILLE

Direction

GARBIS APRIKIAN

avec le concours de
SONIA NIGOGHOSSIAN (Mezzo-Soprano)

« Solistes de Chœur »
Thérèse DEYRMENDJIAN (Alto)
Meguerditch BOGHOSSIAN (Tenor)
René MARTAYAN (Tenor)

Au programme les œuvres de
K. ALEMSHAH, P. GANATCHIAN, G. APRIKIAN, A. TIGRANIAN

Concert organisé par la Croix Bleue des Arméniens de France
— MARSEILLE VILLE —

Pour réservation, contacter les numéros suivants :

91 93 89 83 — 91 90 21 60
42 45 05 36 — 91 66 09 06
91 91 48 85 — 91 50 68 71
91 41 74 89

PERMANENCE
Maison de la Jeunesse et de la Culture Arménienne
12 - 14, rue Saint Bazile — 13001 MARSEILLE
LUNDI - VENDREDI de 17h00 à 19h30 — JEUDI de 15h00 à 19h30
TELEPHONE : 91 50 15 09
Et à partir du 20 Janvier location Opéra de Marseille

ԱԻԱՆԴԱԿԱՆ

ԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ՝
ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

վարիզեան իր 8 մասնաճիւղերուն

Կիրակի, Յունուար 12, ժամը 14·30-ին
Salle LEOPOLD BELLAN
rue Léopold Bellan — 75002 PARIS

—— Գեղարուեստական յայտագիր մասնակցութեամբ կապոյտ Խաչի դպրոցներու աշակերտուհեան։
—— Մանկական ժապաւէնի ցուցադրութիւն։
—— Կաղանդ Պապան Ծրարիկները կը բաժնէ սրահի ներկայ բոլոր մանուկներուն։
—— Ճոխ պիւֆէ պատրաստուած կապոյտ Խաչուհիներու կողմէ։

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է ՍԻՐՈՎ ՀՐԱՒԻՐՈՒԱԾ ԵՆ ԲՈԼՈՐԸ

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ՝
ԿԱՊՈՑ ԽԱՉԻ տեղական վարչութեան

Կիրակի, Յունուար 12, կէս օրէ վերջ ժամը հինգ 3-ին
Լիոնի Ազգային Տան սրահը
40, rue d'Arménie — LYON 3e

Ներկայ կ'ըլլայ Կաղանդ Պապան իր բազմաթիւ նուէրներով։ Կը խնդրուի ծնողներէն ճշդապահ ըլլալ։

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
11-12
SAMEDI-DIMANCHE
11-12 JANVIER
1986
LE NUMERO : 3,00 F

ՀԱՅՐԱՆԴ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ, ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TEL.: 47. 70. 86. 60 — TELEX: HARATCH 280 868 F
C.C.P. PARIS 15069-82 E — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — Թիւ 16.136 Fondateur: SCHAVARCH MISSAKIAN 61e ANNÉE — No 16.136

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳԱՍՊԱՐՈՎ - ԳԱՐԲՈՎ վոխ - վրէժի հանդիպումը, հաւանաբար, տեղի չունենայ, քանի որ ախոյեանը կը մերժէ, ինչպէս յայտարարեց օտար մամուլին եւ ԹԱՄ-ին: Վերջնական պատասխանի իր պայմանաժամն էր Յունուար 10 եւ այդ պատճառով իսկ, միջազգային դաշնակցութեան նախագահը՝ Քամփոմանէս Մոսկուա զացած է «խօսք հասկցնելու» համար, բայց չատ հաւանական չի թուիր: Գասպարովի համար նման մրցում մը միայն հոլանտացի թիմանի կրնայ ծառայել: Կ'ընդունի որ ինք ալ ստորագրած է պայմանները եւ իր արդարացումն այն է, որ եթէ ստորագրած չըլլար, աշխարհի ախոյեան չէր ըլլար:

ՖՐԱՆՍԱՑԻ Երմաական եւ Տնտեսական նախարարը՝ Փ. Պեռեկովուա չատ գոհ է, արդարօրէն, որ ղրամահոսութիւնը չատցած եղաւ 1985-ին եւ կը խոստանայ որ 1986-ին ալ, աւելի լաւ պիտի ըլլայ եւ 2,5%-ը չանցնի: Ասիկա, գոնէ կը նշանակէ, որ Պեռեկովուա այն վստահութիւնն ունի որ տեղէն պիտի չշարժի (կամ պիտի չշարժեն):

«ՔԱՑԱՎէ յանձնախումբը», մկրտուած իր նախագահին անունով, ապօրինի գտաւ Հերասի դնումը (Փրոկրէ) բայց նաեւ վաճառքը, որու պատասխանատուն կ՝ Լինեէլ: Երեք կարծիք յայտնած է, որու դիմաւորը կը վերաբերի մամուլի բազմատարբերութեան սկզբունքին, որու դէմ կը մեղանչէ Հերասի: Յանձնախումբը կը զբաղի նաեւ Հերասի - որդիով, որ վարձու առած է Ռենոի «Իւնիոն»ը: Ժաք Լանկ, Ուրբաթ առաու ձայնասփիւռէն չարագործ որակեց Հերասին, որու թերթերն ալ իրեն «Պրաւդա»ն կը յիշեցնեն եղեր (կը կարդա՞յ) կամ Թռուցիկներ: Բաւական քրքրեց նաեւ Հերասին անցեալը, գրաման չրջանին, ինչ որ չատ կապ չունի գործառնութեան մը հետ, որու դէմ չի բողոքեր ՍԷ - ԺԷ - ԹԷ-ն, իրատեսութեամբ, քանի բանուոր եւ պաշտօնեայ Դեկտեմբերի աշխատաւարձքին վճարուրսմին կը սպասեն:

ՔԱՏԱՖի, ի պատասխան Ռեկընի որակումներուն, իր հացէին, կ'ըսէ. - Կ'անդիմանայի թէ հոգերոյժ եւ ջղաբոյժ է, կը կարծէի որ միայն ձախողած դերասան մըն է»: Միտք ունի Միջերկրականէն քշել Ամերիկացիները:

ՋԻՆԱՍՏԱՆ չի դիտեր ի՞նչպէս փրկըւիլ առնէտներէն, որոնք կը բազմանան չատ մտահոգիչ կերպով: Երեք միլիառ առնէտ տարին 15 միլիոն թոն արմաիք կը լափեն: Ջանազան լուծումներ կ'առաջարկուին, - մեծաքանակ արտադրել եւ լեզերական կատուներ, որոնք կրնան միաժամանակ 20 առնէտ բռնել, բազմապատկել հակամուկ թոյները: Վերջապէս թերթ մը («Տնտեսական լրատուութիւն») կ'առաջարկէ ուտել: Ցաւալի կը գտնէ որ 200 ուրիչ կենդանիներով պատրաստուած ճաշերու նկարագրութեան կողքին, չի տրուիր նաեւ առնէտով ճաշ պատրաստելու եղանակը: Պէտք է մէկդի դնել այս նախապաշարումները, կը դրէ թերթը:

ՆԻՒ - ԵՈՐՔի սակարանը տասնամեակներէ ի վեր չէր ունեցած արժեթուղթերու այն անկումը, զոր ունեցաւ Հինգշաբթի օր (39 կէտ): Մասնագէտները թէեւ, չատ մտահոգ չեն, անմիջականին համար:

ՀԱՑԵՐԸ ԿԱՄ՝ ՆՈՐ-ՔԱԼԵԶՈՆԻԱ

ԽՄԲ· - Առաջին ակնարկով, ընթերցողը հաւանաբար զարմանայ եւ մտածէ՝ ուրկէ՞ ուր, ի՞նչ կապ կայ: Կը բաւէ սակայն թուրք ըլլալ, արհեստով՝ լրագրող եւ հայկական մղձաւանջով ապրիլ ու կապը անմիջապէս կը գտնուի, հոգ չէ թէ տրամաբանութեան հետ ··· կապ չունենայ: Հիմմէթ Պիլ («Հիւրրիյէթ», Յունուար 9), անգամ մըն ալ գրազած էր Նոր - Քալետոնիայի դատին պաշտպանութեամբ: Եթէ Քանաքները գիտնային թէ նման պաշտպան մը ունին, այլեւս հոգ չէին ըներ···:

×

Ընթերցողներուս միջեւ անպայման պիտի գտնուին յիշողներ: Որովհետեւ անդամ մը եւս գրած էի: Ֆաղաղական Ովկէանոսին մէջտեղի «Նոր Քալետոնիա» կոչուած կղզիները կը չարունակեն Ֆրանսայի գաղթավայրերը մնալ: Անչուշտ հոն կայ բնիկ ժողովուրդ մըն ալ· Ֆրանսացի գաղթատէրերը զանոնք «Քալէտոն»ներ կը կոչեն:

Սակայն Ֆրանսա այդ գաղթավայրին տիրած օրէն ի վեր չարունակ Ֆրանսացի գաղթականներ ղրկած է հոն: Որովհետեւ մտածած է որ օր մը տեղացի ժողովուրդը անպայման պիտի սթափի ու սկսի պայքարիլ իր ազատութեան համար:

Եթէ տեղացին «մեծամասնութիւն»ը ներկայացնէ, գաղթատէր Ֆրանսա ոչինչ պիտի կարենայ ընել: Սակայն եթէ «Նոր Քալէտոնիայի» մէջ «Ֆրանսացի գաղթականներ մեծամասնութիւն կազմեն» հոգ չէ թէ Ֆրանսայէ տասնեակ հազարաւոր մղոն հեռաւորութեան վրայ, Ովկիանոսին մէջտեղը, Ֆրանսա կրնայ միշտ չխզուիլ այդ հողերէն···: Ահա այս պատճառաւ այսօր «Նոր Քալէտոնիա»յի մէջ փոքր տարբերութեամբ մը, այլեւս «մեծամասնութիւն» կը կազմեն Ֆրանսացի գաղթականները:

Վերջապէս, գաղթատէր Ֆրանսա բնաւ նպատակ չունի «Նոր Քալէտոնիա»յէն դուրս ելլելու:

Սակայն վերջերս տեղացի ժողովուրդը արթնցած·

«Ֆրանսացիները դո՛ւրս···» գոչելով սկսած է բողոքի ցոյցեր կազմակերպել:

Ֆրանսա նախ չանացած է տիրել կացութեան, հոն օդային ճամբով Ֆրանսացի զինուորներ ղրկելով: Սակայն հասկըցած է նաեւ թէ որքան սուղ կ'արժէ իրեն այս գործողութիւնը:

Այդ պատճառաւ սկսած է այլեւս, ըսել·

«Պատրաստ եմ ինքնավարութիւն տալու ձեզի»:

«Ինքնավարութիւն»· նոյնիսկ «կատարեալ անկախութիւն» տալու պարագային, «մեծամասնութիւն կազմողը Ֆրանսացի գաղթական տարրն է միշտ», մտածումէն մեկնելով Ֆրանսա կ'երազէ·

«Դարձեալ կրնայ իմս մնալ Նոր Քալէտոնիան»:

Այսօր կը տեղեկանանք նաեւ թէ որպէսզի դիմադրեն «Քալէտոն»ներու, փարիզ գաղտնօրէն ձեռնարկած է Ֆրանսացի գաղթականներու զէնք ու զինամթերք ղրկելու· «Նոր Զէլանտա»յի «Օքլէնտ» նաւահանգիստին մէջ մաքսային պաշտօնեաներ դիպուածով ձեռք անցուցած են այդ զէնքն ու զինամթերքը «Իլ տը Լիւմիէր» անուն նաւու մը մեքենաներու բաժնին մէջ:

«Մեզ ինչո՞վ կը հետաքրքրեն այս բոլորը» պիտի ըսէք· ես ալ կ'ըսեմ թէ այո՛, այս է հայ ոճրագործներու զօրավիգ թիկունք, իբրեւ թէ մարդկային իրաւանց ու ազատութիւններու պաշտպան Ֆրանսայի իրական դէմքը:

Ձիշդ ինչպէս այսօր հազարաւոր մղոն հեռաւորութեան վրայ «խեղճ Քալէտոն - ներու» դէմ իր չահուն համար «կը պատրաստուի այդ վայրերը արեան լիճի մը վերածել», 1915-ին նոյն Ֆրանսան զլխաւոր երկիրն է որ զէնքով ու քաղաքական դեռնի վրայ զօրավիգ կանգնելով, Արեւելեան - Անատոլուի հայ «Փոքրամասնութիւն»ը ջրդած է չարդելու այդ վայրերու խեղճ Թուրքերը, հաւաքական կոտորածներ կատարելու եւ թիկունքէն հարուածելու Թուրք բանակները, որոնք կը պայքարէին թշնամիին դէմ:

Մինչդեռ միշտ անկեղծ, քաղաքակիրթ մենք Թուրքերս, որ հիմնած ենք աշխարհի մեծագոյն իրաւագիտական կարգերով Պետութիւնները, մեր պատմութեան ո՛չ մէկ չրջանին զինած ենք Ֆրանսայի նման խարեբայութիւններու դիմելու···:

Ցուսանք որ «Նոր Քալէտոնիա»յի դէպքերուն պատճառաւ աշխարհ այս անգամուն առիթը ունենայ քիչ մը աւելի մօտէն ճանչնալու Ֆրանսան իր յետին նպատակներով···:

×

«ՄԻԼԼԻՅԷԹ»·· (Յունուար 9)··

Թուրքիոյ հեռատեսիլը սկսած է պատկերափակել նոր յայտագիր մը, «32-րդ Օրը», ուր հրաւիրուած ծանօթ դէմքեր կ'արտայայտուին երկրին արտաքին քաղաքականութեան ու ընդհանուր քաղաքական զարգացումներուն մասին: Այս յայտագրին խօսք առած է նաեւ Արտաքին նախարար Վ· Հալէֆօղլու որ տեղեկութիւն տուած է 1986-ին հետապնդելի արտաքին քաղաքականութեան մայր գիծերուն մասին:

Ան անդրադառնալով հայկական հակաքարոզչութեան, առաջին անգամ խոստովանած է թէ «Եա մնացած են» այս մարդին մէջ ու այս տարի աւելի ազդու քաղաքականութիւն մը պիտի կիրարկուի:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԱՆՏԵՐ ԱՆԴԱՍՏԱՆ ՄԸ՝ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

Ո՛չ հարցնող, ո՛չ փնտռող:

Կ'առնես մկրատը ձեռդ, խանդավառ վերէն վար կը չափես հասած թերթերու էջերը, յետոյ կը սկսիս մկրատել· յօդուած, լուր, թղթակցութիւն, պատկեր, ինչ որ գործիդ կուգայ, ինչ որ չարմար է հու «չուկայ»իդ· կը դնես մէկդի, չարմար առիթով մը շատ շատ թերթիդ կլիմայիկ չարմար նոր գլխարկով մը զայն հրամցնելու համար ընթերցողին:

Մինչեւ հոս, շատ ալ անբնական բան չկայ ըսենք· արտատպում՝ այո, սակայն եթէ չարգուին պատշաճութեան, պատասուոր «առուտուր»ի օրէնքները· եթէ արբարբը չվերածուի բանագողութեան, ինչպէս հետեւեալ մէկ քանի պարագաներուն·

Սփիւռահայ թերթ մը իմքնագիր կամ թարգմանուած յօդուած մը կը հրատարակէ, իր տեսակէտն ալ պարզող քանի մը տողնոց խմբագրական ծանօթութեամբ մը: Քանի մը օր ետք նոյն յօդուածը կը հիւրընկալուի այլ թերթի մը սուղ սիւնակներուն մէջ, առանց խմբագրական ծանօթութեան ու որեւէ աղբիւրի յիշատակութեան, կամ նոր տիրոջը ճաշակին չարմար խմբագրական նոր ծանօթութեամբ մը: Կը պատահի որ նոյն յօդուածը շրջի գաղութէ գաղութ խմբագրական զանազան ծանօթութիւններով:

Կ'արտատպուին միշտ առանց աղբիւր յիշուելու յօդուածներ, որոնք ստորագրուած են հեղինակին անունին սկզբնատառերով միայն· հետաքրքրական է գիտնալ թէ ինչ կը պատասխանեն խմբագիրներ նման պարագաներու, երբ ընթերցող մը հարցնէ իրենց թէ ո՞վ է այս նոր աշխատակիցը:

Ունինք սկզբունքի տէր թերթեր ալ, որոնց սկզբունքը կը կայանայ իրենց էջերուն մէջ սա կամ նա թերթին անունը չյիշելու մէջ···: Այդ թերթերն արտատպում կատարել, նոյնիսկ - ի հարկին - այդ թերթին խմբագրութենէն հեռաձայնով տեղեկութիւն խնդրել տեղական սա կամ նա հարցին մասին, երբեմ չի խախտեր իրենց սկզբունքը:

Այս մասին վերջին օրերու կենդանի օրինակ մը· «Յառաջ Միտ եւ Արուեստ»ի մէջ կը հրատարակուին միայն անտիպ յօդուածներ, որոնք կը գրուին յատկապէս այդ թիւերուն համար: Այս աշխատակիցներէն մէկն է Վահէ Օշականը: Անոր մէկ յօդուածը հրատարակուեցաւ «Միտ եւ Արուեստ»ի Վահան Տէրեանի հարիւրամեակին նուիրուած թիւին մէջ: Երեմ շաբաթ ետք նոյն գրութիւնը արտատպեց ամերիկահայ օրաթերթ մը, անշուշտ առանց յիշելու «Թապու» աղբիւրը: Վահէ Օշականի յօդուածին շրջապտոյտին երրորդ հանգրուանը եղած է - առայժմ - կրկին փարիզեան թերթ մը, որ արտատպած է զայն ամերիկահայ օրաթերթէն:

Ու այսպէսով Վահէ Օշականի գրութիւնը նոյն բաղաքին մէջ ամսուան մը տարբերութեամբ լոյս տեսած կ'ըլլայ երկու անգամ:

Բարի՛ վարուցան, ժիր մկրատները հայ մամուլին:

ԱՐՓԻ

ՎԵՆԵՏԻԿ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Գ· ՏԱՐԻ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ԹԻՒ 1

Բացուած կը յայտարարենք Վենետիկի հայագիտական ամառնային դասընթացքներու արձանագրութիւնները:

Դասընթացքները այս տարի տեղի պիտի ունենան Յուլիս 20 - Օգոստոս 20, Մուրատ Ռափայէլեան վարժարանին մէջ, կազմակերպուած Ս· Ղազարի հայկական Ակադեմիային կողմէ, գործակցութեամբ վարժարանին տեսչութեան:

Դասընթացքները նախատեսուած են երեք մակարդակներու համար· սկսնակ, միջին, բարձրագոյն, զլխաւոր նիւթ ունենալով հայերէն լեզու (աշխարհաբար եւ գրաբար), գրականութիւն, պատմութիւն եւ հայ արուեստ:

Դասաւանդութիւններէն զատ տեղի պիտի ունենան նաեւ հայագիտական նիւթերու չուրջ բանախօսութիւններ, մասնագէտներու կողմէ:

Մասնակցութեան համար անհրաժեշտ է լրացուցած ըլլալ 15 տարեկանը: Տասնըւութը չբոլորած աշակերտներուն համար ծնողները պարտին խնամակալութեան վկայագիր մը յանձնել դասընթացքին արձանագրուած չափահաս անձի մը:

Դասընթացքին մասնակցութեան սակն է մէկ միլիոն իտալական լիռ բոլոր երկիրներուն համար, ներառեալ կեցութեան եւ սննդեղէնի ծախքերը:

Արձանագրութեան վերջնական թուականն է Մայիս 15:

Այլ մանրամասնութիւններ թիւ 2 հաղորդագրութեամբ:

ՎԱՐԶՈՒԹԻՒՆ
Ս· ՂԱԶԱՐՈՒ ԱԿԱԴԵՄԻԱՑԻ
Թղթակցութեան համար·

Direction Arménologie
Académie Arménienne de St. Lazare
30126 Venise — ITALIE
Tél. : (41) 52. 60. 104

ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՓՐԿԵՆՔ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աստուած մեր հոգին չառած՝
Խելբերնիս առաւ

ՄԵԾ ՄԱՅՐԻԿ ՄԸ

Դ.

Վստահ որ դարերու ընթացքին չատ յաճախ նետուած, լի ցաւ թէ ճշմարտութիւն մը եղած չըլլան այս բառերը, անէծքի համազօր, եւ մխիթարութիւնք յուսալով որ դարերու վերջին օրն ալ, ողջ մնացած սլեակ ըլլայ հայ մեծ մայրիկ մը, հոգ չէ թէ նոյնը կրկնելու վրայ:

Տխրինք՝ բայց չյուսահատինք:

Ապրի՛նք՝ սակայն արժանապատուութեամբ, որքան ալ վչտոտ ըլլայ ազատութեան երգերուն յաջորդող մեր ներկան:

Մեր ներկան, ա՜ռ, զանազան միջավայրերու, այլ եւ այլ հրամայականներու համակերպիլն է:

Միայն թէ, երբ համակերպութեան ծայրը, կամ անկէ առաջ իսկ, նպատակ մը կայ յստակ:

Մինչ այդ, ուր ջերմ հայ մթնոլորտ մը կայ, խնդումերես՝ իբարու աչքերու մէջ անխոնջ ակնարկներ փոխանակող մարդիկ կան, հարազատ, եղբայրական, հոն իբրեւ հայ քիչ մը ազատ կ'ապրիմ, այն է երջանիկ պահ մը կ'ապրիմ: Եւ ուր Հայոց լեզուն կը խայտայ հոն գրեթէ անկախ կը զգամ ինքզինքս:

Վշտի եւ ուրախութեան պահերը ապրիլ հարազատներու մթնոլորտին մէջ, անպայման ամէնէն խմաստուն լուծումն է: Որպէսզի վիշտը սպեղանի դառնէ, որպէսզի ուրախութիւնը հեզհեզաբար վերածուի եւ դառնայ սփոփարար, ապրի աւելի երկար տեւողութեամբ:

Ի՜նչ աւելի արդար է, երբ հայորդի մը, ընկճուելու վրայ հասած իր ոգին կազդուրելու համար, դառնայ իրենիներուն, իր նախնեաց ապրումներու փուլերուն:

Եւ մեր այդ պատմական դրուագները արդարեւ ունին զօտեպնդիչ օրինակներ՝ պատգամի համարժէք հրահանգներ:

Անկում, վերելք, կրկին ձախողութիւն՝ միշտ վերանորոգում:

Անշուշտ դժուար է հոն գտնել բաղդատութեան եզրեր մեր այսօրուան ձախորդութեանց նմանօրինակ, երբ զարաւոր ազգ մը կոտորուեցաւ, ցրուեցաւ ու ոտք դնելու տեղեր փնտռեց այլուր:

Ո՛չ մէկ բաղդատութեան եզր կայ զբաղդատութեան մեր առջին պատմահօր վըճռին եւ մերինին միջեւ. Արշակունեաց դահին կորուստին եւ մեր հայրենապրիւր վիճակին՝ հայրենեաց երկրին իր հարազատներէն անէացումին:

Ակներեւ է որ մեր պատմահայրը՝ Խորենացին, իր օրերու Հայոց անմխիթար վիճակէն ընկճուած (Անկախութեան կորուստը 428 թուին, Լուսաւորիչի տան իրը կրօնապետ ժառանգութեան վերջը 439-ին Սահակ Պարթեւի մահով) ինքզինքը մխիթարող ձեռնարկի մը լծուած է, ու գուշակելով գալիքը, ազգին պատմութիւնը գրած է՝ նաեւ իր վիշտը ողբալու համար:

Իր խոկ խոստովանութեամբ յիշատակելու, յարգելու համար մանուանդ արի եւ ազնիւ գործերու հեղինակները եւ ազգին նուիրեալ անձինք:

Այսօրուան մեր վիճակը աւելի դառն, բազում կէտերու մէջ ունի միակ նմանութիւն մը այդ անցեալին հետ, որ մենք ալ ականատես եղանք առաքինի գործերու, անձնազոհութեան եւ հերոսական զրուագներու՝ մխիթարող պարագաներ անտարակոյս մեր մօտաւոր երէկին պատկանող:

Ազգային առաքինութիւններու փնտրտուքը մեր տեւական մտահոգութիւնը պէտք է ըլլայ, անոնք եւ ազգերը կանգնուն պահող ազդակները:

Եկող մեր սերունդները՝ որոնց մենք ոչինչ տուինք, մեզմէ ոչինչ ատացան, հսկայական պատնէշներ ունին խորտակելիք:

Այսօր տակաւին, իրաւ է, կենդանի ենք՝ բայց ոչ կաւգուն, խելացի՝ բայց ոչ խոհական, մէկ նախահայրէ սերած՝ բայց ուծացած, յաւէտ տառապած՝ բայց ոչ զգաստ:

Նոյն պատկերը՝ բան չէ փոխուած:

Զինք կրնար ճշդել մեր ուզածը, մեր փնտռածը ի՞նչ է:

Մնայեր ենք համայնքներ, անընդհատ տարուբեր, տեղոց - տեղ ցաւքելու պատրաստ, մէկ ոտքի վրայ ապրող, անյուսօրէն ողբալի:

Ինչպէ՞ս չողբամ խոցելի կողմերդ:

Զիրենամ, չողորմիմ քեզ ազգ իմ թափառական.

Քու մէջդ ի զուր կը փնտռեմ վաղը կերտելու նկարագիրը՝ հանրային կարծիք, հաստատակամութիւն, մշակոյթիդ ծանօթ հարազատներ, կարգապահ ոգի:

Հանրային կարծի՞ք մեր մէջ:

Կայ հետեւեալ ճախճախուտը:

Կուսակցութիւն մը՝ եւ հակակուսակցութիւն մը: Կրնաք անոնց վրայ ձեր փափաքած անունը դնել: Որոշեցէք որ կողմը որ կը փափաքիք: Կայ կաթողիկոսութիւն եւ հակակաթողիկոսութիւն, հայրենիք, հակահայրենիք:

Դրօշ, հակադրօշ:

«Ռազմիկ»ները եւ «հակա-ռազմիկ»ները:

Հ. Մ. Ը. Մ. եւ հակա - Հ. Մ. Ը. Մ. -ները:

Մտացուածները թող ներողամիտ ըլլան:

Կարմիր տիկնայք, կապոյտ կանայք, եւ ուրիշներ:

Բուն սատանան կը կորսուի մեր տարտարոսին մէջ՝ անճնասպան կ'ըլլայ, բայց զայն փոխարինողները լեգէոն են: Ամէն հայ, ամէն ինչ ընելու հանգամանք ունի: Համբաւաւոր մը «եթէ հող տան գացող չկայ» կը հռչակէ, երբ փողով թմբուկով «մեր հողերը» կ'ուզուին:

Մէկ կողմին ճերմակը՝ միւսին սեւ է, միոյն սուրբը՝ միւսին սատանան:

Կայ Աստուածն ու չաստուածը:

Կարելի՞ է հանրային կարծիք ստեղծել, խառնակ ըմբռնումներով սերունդներու նկարագիրը կերտել, երբ մեր բառարաններուն նոյն բառերը, ազգ, ժողովուրդ, հայրենիք, անկախութիւն, եկեղեցի, ղբօջ, զիրար հակասող նշանակութիւններ ունին:

Եւ նոյնքան դառն է մեր օրերու հերոսներուն հանդէպ վերաբերմունքը:

Մի՞թէ նորերը ունի՞ն այսօր հերոսի մը սիպաբը:

Կէս հայաստան մամուլին մէջ այժմ, երբեմնի սիրակալներուդ զրաքննիչները չուքի մէջ ձգողներ կան: Մէկ անգամ միայն յիշուած, առանց չողչողուն ածականի, առանց զրգռիչ հանգամանքի զրուած՝ ձեռագրիդ մէջէն դուրս կը նետուի Թէհլիրեանի մը անունը:

Ի՜նչ փոքրոգութիւն:

Սակայն ի՞նչ բառ կ'ուզէք որ դործածեմ:

Հակառակո՞րդ մըն էր խեղճ Սոզոմոնը. միթէ՞ արժանի կրկնակ մահու:

Այդպէս է մեր ըմբռնած ազատութիւնը, չարքային մը իրաւունք չունի տարբեր կարծիքներ ունենալու. տարբեր տեսակէտներու ծանօթանալու:

Ո՛վ խեղճ ազատութիւն:

Կեցցէ՛ միակողմանի զարգացումը:

Նոյնը մէկ տեղ հերոս, այլ տեղ առնլուգն անպիտութեան մատնուած:

Ո՞ւր է մեր հաստատակամութիւնը ազգին ճակատագրին վերաբերեալ:

Երախան անդամ կրնայ խախտել մեր համոզումները:

Կը բաւէ որ ազահութեան կամ քաղաքապետարանի պաշտօնեայ մը, չարաճճի եւ լեզուանի, սակայն բարեմիտ լրբագործ մը, գործի մէջ ընկերը, դրացի մը, մեր փոքրիկ հայրենիքի վարչական մասին խօսք նետէ, զայն կառավարող կուսակցութեան անունը տայ, որ մենք այլայլինք, ուրանանք ամէն ինչ:

Հնուց ի վեր գործածական, իբր զինք ծառայող, սովորական միջոց մըն է հակառակորդի մը հոգեկան ուժն ու զօրութիւնը՝ ներքին միութիւնը խախտելը, զայն դարձնել երեսուն, անկայուն, աւելի սերմեր նետել անոր մէջ:

Կարծես խոչոր մեղք մըն է, քրէական յանցանք մը որ մեր հայրենիքէն մաս մը խորհրդային վարչակարգով զեկավարուի:

Ամէն սրտի եւ խելքի տէր օտարական չատ լաւ կը հասկնայ մեր պարագան, քիչ չեն վեհոգի մարդիկ որ պիտի ծափահարեն, երբ իրեն ըսուի, որ «հայ մը այլեւայլ դաղափարականներու սերմ մը չէ», արժանաւոր էակ մըն է՝ իր ինքնութիւնը պահել ձգտող, որ անոր ունեցած միակ հոդային մասնիկը, միշտ իր նախնեաց հայ-

ՄԱՍՈՒՆՔԸ

Բարձր առաստաղից կախուած ջահի տակ կանգնած աղջկայ ժպիտը Տաւրոսին վայրկեանապար տեղափոխեց այն հեռաւոր երեկոն, երբ գեղում առաջին անգամ վառուեցին էլեկտրական լամպերը: Աղջիկը տեսիլքի պէս հեռացաւ, ու սենեակում օծանելիքի թոյլ բուրմունքը մնաց:

- Աղջիկը քո ի՞նչն է, - հարցրեց:

- Իմ թոռն է, գի՛ւղ կ'ապրի, - ասաց ծերունին:

Բերանքսխվայը, բարձր գլուխ, Տաւրոսը պատկերացնում էր Հորիզոնին կուլ գնացած գիւղը:

Հսկայ թիակով բակը մաքրած, գէպի հարեւան տներն ու գիւղամէջ ճանապարհ բաց արած պապը առաւօտ վաղ, ձիւնակոլով առնամանները թափ տալով, ձայն էր տալիս.

- Ելէ՛ք, կէսօր դառաւ ...

Համատարած սպիտակի մէջ սեւին էին տալիս ցանկապատերի գլխաքարերը: Տան պատերին սառչում, քարանում էին քամու լիզած ձիւնափոչու ալիքները: Սարի թիկունքից դուրս էր պրծնում կարմրածուխ արեւը, եւ փուում, տարածւում էր առաւօտը: Արթնացած գիւղի տափակ տանիքներից երկինք էին ձգւում աթարի ծխի կապտաւուն սիւները: Երեկոյեան օդն ասես կարծրանում էր, եւ աստղերն անհնայ ծակծկում էին երկինքը...

Քաղցր գեղումից կուչ էր եկել Տաւրոսի սիրտը, ու նա բարձի հետ գրկել, կրծքին էր սեղմել Նոր տարուայ նախօրէի այդ երեկոն:

- Դու էդ գիւղո՞ւմ ես ծնուել, - հարցրեց ծերունին:

- Զէ՛, բալա, ես էրկիր եմ ծնուէ:

Հիւանդասենեակում երեքն էին: Ութսունին մօտ կինը խնամում էր ծանր վիրահատութիւն տարած ամուսնուն: Ապաքինուածները դուրս էին դրուել, իսկ թեթեւ հիւանդները բժշկից թոյլտուութիւն առել ու տուն էին գնացել:

Տաւրոսին ցերեկը բերեցին: Ծանօթ հիւանդութեան արթնացումը զգաց առաւօտեան: Որովայնի ու ազդրի սահմանագծում ոսոնեց ցաւը ու քանի գնաց սաստկացաւ: Վիթխարի մարմինը պատեպատ էր զարկւում: Կինը ամուսնու այլայլուած, քրտինքի մէջ կորած դէմքը տեսնելով, տագնապով հարցրեց.

- Ի՞նչ է եղել...

Տաւրոսն այդ պահին հապճեպ մտածում էր, որ երկրաշարժը, հատնաբար, այդպէս է լինում՝ ուժ եւ ցնցում, ուժ եւ ցնցում...

- Զե՞ս տեսնում, մարդաշարժ է, - հեգնեց Տաւրոսը: - Շատ օգնութիւն կանչը: Հայկական հանրագիտարանի ատացականը գրասեղանի դարակում է, գաշնամուրի համար հատաքուած փողը՝ դրամահարանի ներքեւում, թերթերի տակ...

Կնոջ սեւակնած դէմքին բռնկուեցին աչքերը:

- Դրա ժամանա՞կն է, - պոռթկաց նա:

Երեխաները՝ տասնամեայ տղան եւ ութ տարեկան աղջիկը, սառել կանգնել էին:

Երբ կնոջ հետ տնից դուրս էին գալիս, տղային ասաց.

- Խելօք կը լինես, մօրդ կը լսես ... եւ յաստան անունը կը կրէ, եւ հոն է որ ան կ'ապրի ու կը բարգաւաճի եւ ոչ թէ կը կոտորուի:

Եթէ ինքներդ համոզուած էք, ինչո՞ւ չէք փորձեր ձեր շրջապատը իրագէկ դարձնել ճշմարտութեան: Ընդհ. ազգայ պատմութիւնը լի է բազմաթիւ պարագաներով, որոնք ցոյց կուտան թէ երբ գոյութիւն մըն է խնդրոյ առարկայ, ոչ ոք վարանած է օգնութիւն ընտրելու մէջ գաղափարը զանց առնել:

Մենք փորձած ենք չատ յաջող կերպով:

Գիտենք որ կան բոլորովին չպարպատանուած մտքեր մեր մենախօսութիւններուն մէջ, ինչպէս կ'ըսէ չատ սիրելի բարեկամ մը: Բայց անոնք կը գրուին մեր ազգին ամէնէն աւելի ալեկոծ օրերուն մէջ, ու մանաւանդ կը խոստովանինք որ այսօրուան վիճակէն անյոյս, անոնք կը գրուին տակաւին լոյս աշխարհ չեկող հայ փոքրիկներուն համար:

Թէեւ բնաւ պիտի չվարանինք գալիքներուն մէջ աւելի յստակ ըլլալ:

Յաջողութիւն:

ՎԱՉԳԷՆ ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

մտքում չարունակեց. «Տան տղամարդը դու ես մնում...»:

Հիւանդանոցի ընդունարանում բժիշկը զննեց նրան, հարցեր տուեց: Տաւրոսը մտածում էր. «Մինչեւ ղէս, մինչեւ ղէնուչ կը լինի...»:

Թմրեցնող դեղ սրսկեցին: Երակի մէջ մխրճուող ասեղի ցաւը չզգաց: Հիւանդասենեակ տարան: Թմրել, քնել էր: Արթնացաւ: Որովայնի փքուածութիւնը անցել էր, բայց ցաւը տրոփում էր:

- Տղայ չան, լաւ էիր քնել, ցաւն անցա՞ւ, - հարցրեց հիւանդին խնամող կինը:

- Զէ, մայրիկ...

- Ոչինչ, կ'անցնի: Երէկ քեզ նման մէկին բերեցին: Դէս ու ղէն զարկուեց, ճըռճըւաց, եկան սրսկեցին՝ լաւացաւ, ղըննաց:

Տաւրոսը բարձր ծիծաղեց: Ներսում խրատանգում, տեղաշարժեր եղան, տրոփող ցաւը դանդաղ հեռացաւ:

Ճղնաժամն անցաւ: Կարող էր բժշկից թոյլտուութիւն առնել ու տուն գնալ, բայց կծկուեց, մնաց մահճակալին: Ցողնել էր օդուց, մարդկանցից: Իրենց տուն պիտի գային, ինքը ներանց տուն պիտի գնար ... Նոր տարուց փախչել էր հարկաւոր: Կը մնայ այստեղ, մի քանի օր ինքն իր հետ կը լինի...

Հեռու էր այն պահը, բայց կարծես երկկ էր: Տաներեք տարեկան էր: Գիւղի փողոցներում առաջին անգամ վառուեցին լոյսերը: Երեխաներն ազմուկ - ազաղակով անից տուն էին վազում: Ինքն էլ դասընկերուհու տուն գնաց: Նարինէն անշարժ կանգնել էր երկար հաղորդալարի ծայրինվառուող մերկ լամպի տակ: Թարթիչները ատուեր էին գցել ճերմակ երեսին...

- Երկրից ե՞րբ ես գաղթել, - կողքի չուռ գալով եւ հայեացքը ծերունուն յառելով, հարցրեց Տաւրոսը:

Մաքառած մարմնում էլ ցաւ չկար, կարող էր ազատ շարժուել, լսել: Հիմա նա լաւ գիտէր առողջութեան գինը:

- Հայը ե՞րբ է գաղթել, - ասաց ծերունին, - էն զուլումի տարին՝ 15 թուին. պատմութիւն չե՞ս կարդացէ:

- Կարդացել եմ, բայց լսելն ուրիշ է:

- Է՛, լա՜ւ, իմ պատմութիւն երկա՛ր է...

Երկիրը յիշո՞ւմ ես:

- Ինչպէ՞ս չեմ յիշէ, - հառաչեց ծերունին, - տասներեք տարեկանը չէ՞ յիշի: Մեր գիւղը՝ թիկունքը սարին, երեսը դաշտին, աշխարհէն հեռու մի տեղ էր: Գարունն էդտեղ ուշ կը գայ: Ցունիս ամսին որ կը նայես՝ ծաղկի ու կանաչի մէջ կորած է: Էդ ժամանակ սարերի ձիւները կը քանդուին, սելաւ կը գառնան ու կ'անցնին մեր գիւղի կողքով: Սելաւ չէ՝ մի գազան է: Աչքը պղտոր կը մռնչայ, քար ու դարի գլխով թռչելով՝ կ'երթայ: Ամառայ կէսին թափը կը կտրուի. էնպէս որ էդոր մէջ ձնից ծնուած ձկներ կ'երեւան: Հողը փորես՝ ապրիւր գուրս կը գայ, ջուրը պաղ՝ բերան կը դպչէ:

Հրաման եղաւ, որ մեր տուն, տեղ թողնենք: Մեր գիւղն աւերեցին, մարդկանց կոտորեցին ... Մեր գերդաստան մեծ էր՝ ութ տղայ, իմ հէրն ու մէրը, իմ պապ: Քանի՞ն եղաւ:

- Տասնմէկ, - ասաց Տաւրոսը:

- Օղորդ է: Էդքանից մենակ ես մնացի...

Հայեացքը մի կէտի յառած՝ ծերունին լռեց:

- Միւսներն ի՞նչ եղան, - հարցրեց Տաւրոսը:

Նա չարունակում էր լռել: Կարծես ուժ էր հաւաքում՝ պատմութիւնը չարունակելու համար: Վերջապէս խօսեց.

- Ութին սպաննեցին: Մինչեւ հարեւան գիւղ հասանք՝ մնացինք ես, իմ պապ, իմ փոքր ախպէր: Էդ գիւղի քիւրտ մոլլային իմ պապն ասաց.

- Աղըլ քիւրտ, կը տեսնեմ, որ մեր վերջն եկել է, գոնէ էս երկու երեխէն թող ապրեն, թէ չէ մեր օճախ կը մարի. ի՞նչ ենք արէ, մեր մեղքն ի՞նչ է:

- Հրամա՛ն է, - ասաւ մոլլան:

- Էս մէկ մատ երեխէքի կեանք խնայէ, դուռ ու դրկից ենք եղէ, աղ ու հաց ենք կերէ ... խառնէ քո թոռներին, թող ապրեն, իրենց տոհմի յիշատակ պահեն...

Մոլլան մտածեց, մտածեց ու մատը պապիս աչքի դէմ պարզեց.

- Մէկն էլ որ մնայ՝ լաւ է - ջոկէ՛:

- Քո գիւանը քանդուի, Աստուած, - երկինք նայելով լաց եղաւ պապս, ես ո՞ր մէկին ղրկեմ մահու դուռ...

- Էս մէկը, - ինձ ցոյց տալով ասաց

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՄԻՏՔԻՍ ԿԸ ԹՌՉԻ ԴԷՊԻ ՊԷՅՐՈՒԹ

—×—

Ե.

Դարձեալ Տոքթ. Տիգրան Վարժապետեանն էր, որ այդ իրիկուն դիս առաջնորդած էր դէպի Ճեմարանին այն սրահը, ուր լինքնաեռիպ ցուցահանդէս մը բացուած էր: Պէյրութահայ նշանաւոր ծաղրանկարիչ Մասիս, 34 հանրային ծանօթ դէմքերու երդիծանկարները կը հրամցնէր հանրութեան: Մեծ մասամբ պրագէտներ էին ներկայացուած այդ անձերը:

Մինչեւ այսօր լաւ կը յիշեմ, որ այդ իրիկուն բաւական չուարած էի: Ծաղրանկարներո՞ւն նայէի, թէ ոչ այդ ծաղրանկարները դիտողներուն: Այս ցուցահանդէսը լաւագոյն առիթն էր մէկ անգամէն ծանօթանալու համար Պէյրութահայ անուանի մարդոց հետ, մէկ մասը պատէն կախուած, միւս մասն ալ քովս կամ դիմացս:

Իմ պրագէտ բարեկամս Տոքթ. Վարժապետեան այստեղ բարի միջնորդի դեր կը կատարէր անձանձրոյթ դիս ներկայացնելով բազմաթիւ անձերու: Այս սրահը լեցնողներէն չատերուն ծանօթ էր անունս, իսկոյն կը չրջապատէին զիս եւ համակրանք կը ցուցաբերէին, հարցումներ կ'ուղղէին մեր այստեղ տարած մամլոյ աշխատանքին եւ մեր որպիսութեան մասին: Պաշտօնակիցներ եւ պրագէտներ էին անոնք, մօտէն կը հետաքրքրուէին մեր քաղաքէն իրենց ծանօթ դէմքերով: «Ազգակ» օրաթերթէն Երուանդ Բամպուքեան,, Տիգրան Ոսկունի, ցուցահանդէսին տէրը՝ տաղանդաւոր ծաղրանկարիչ Մասիս, փաստաբան Հրաչ Սեդրակեանը, Բարունակ Թովմասեան, Տոքթ. Փափազեան, նշանաւոր պրագէտ ու «Նայիրի» չարաթաթերթի խմբագիր Անդրանիկ Ծառուկեան, եւ դեռ բազմաթիւ ուրիշներու հետ քանի մը խօսք կը փոխանակէինք ոաքի վրայ: Լիբանահայ նշանաւոր սմոուն-քոզ՝ Յակոբ Կիւլոյեան միջոց մը մօտեցած էր եւ ըսելով որ լաւ կը ճանչնար զիս, գնահատական խօսքեր արտասանած էր զիս գործացնելով: Ու յանկարծ սրահին մէջ բան մը փոխուած էր ինծի համար, երբ դէմս մեծ ուրախութեամբ տեսած էի պատանութեանս զաղափարի ու դեղարուեստի ընկերը՝ դերասան Պերճ Ֆազլեանը:

×

Պերճ Ֆազլեան:

Ինչե՛ր պիտի չվերակենդանանային մտքիս մէջ երբ պիտի տեսնէի զինքը:

Նախ, Գնալըի մէջ բարձրադիր տուն մը՝ փայտաշէն:

Հիմա այդ տունն ալ, իր բոլոր նմանները պէս, գոյութիւն չունի անշուշտ իր տեղը զիջած ըլլալով արդիական պէթոն չէնքի մը: Բայց անոր պատկերը միշտ կ'ապրի մտքիս մէջ եւ աչքերուս առջեւ կը գոյատեւէ չատ յստակ պիծերով: Այդ տան վերնայարկի պատշգամին վրայ էր որ Պերճ Ֆազլեանին հետ ծովը կը դիտէինք մէկ կոմմ, եւ թատրոն ու դրականութիւն կը խօսէինք միւս կողմէ: Դեռ քանի տարեկան էինք այն ատեն եւ ան արուեստի կատարեալ ու խիզախ խենթ մըն էր, այդպէս ալ մնացած է մինչեւ այսօր:

Գնալըի այդ տան մէջ հիւսուած երազներն էին որ մեզ պիտի առաջնորդէին դէպի Մխիթարեան Սանուց Միութեան բեմը, որուն վրայ թատերական անմոռանալի աշխատանք մը պիտի տանէինք մինչեւ այն չրջանը, երբ ես պիտի ստիպուէի մեկնիլ զինուորական ծառայութեանս, եւ ան ալ պիտի բաժնուէր մեր երկրէն, իր բախտը փորձելու համար Լիբանանի մէջ:

Ճեմարան վարժարանի սրահին մէջ երբ նայեցայ ուրեմն ամբողջ արաբ ու լիբանահայ աշխարհի մէջ նշանաւոր դերասան դարձած Պերճ Ֆազլեանին, յիշեցի Գնալըի այդ տունը: Շատ բաներ անցած էին Ֆազլեանին գլխէն: Ուրախացայ որ պատանութեան այդ սիրելի ընկերս խարիսխ նետած էր վերջապէս թէ՛ երկրի մը մէջ, եւ թէ նախանձելի համբաւի մը մէջ: Այդ պահուն ո՞ւրկէ պիտի դիտնայի, որ ան, Պէյրութի մեր հանդիպումէն մէկ-երկու տարի վերջ, օր մը պիտի լքէր իր այդ նոր կայքն ալ եւ տարիներ վերջ օր մը դարձեալ դիմացս պիտի ելլէր այս անգամ Գանատայի մէջ:

Ողջագուրուած էինք Ֆազլեանին հետ եւ իսկոյն որոշած էինք յաջորդ օրն իսկ միասին ըլլալ, դարձեալ խօսելու համար թատրոն ու դրականութիւն, առանց սակայն այս անգամ կարենալ դիտելու Գնալըի ծովը: Այդ միջոցին է որ մեզի մօտեցած էր տիկին մը, որ ինքզինք ծանօթացուցած էր Անահիտ անունով, նախկին Պոլսեցի: Ճանչցեր էր զիս եւ ուրախութեամբ ինծի կը յիշեցնէր դեռ մէկ երկու ամիս առաջ հրատարակուած մէկ յօդուածս եւ յայտնի կ'ընէր թէ իր կապը դեռ չէր խզած իր ծննդավայրին հետ...:

Ամբողջ Պէյրութ մը կար այդ իրիկուն Մասիսի ծաղրանկարի ցուցահանդէսի սրահին մէջ: Ամբողջ Լիբանան մը, ամբողջ Միջին - Արեւելք մը, որուն անտեսանելի սահմանները կ'երկարէին դէպի չատ հեռուները, սկսելով մեր Պոլիսէն, մինչեւ Աթլանտեանի միւս կողմը: Ամբողջ անցեալ մը կ'եռեւեռէր այդ սրահին մէջ: Նաեւ անորոշ ապագայ մը, որմէ ոչ ոք լուր ունէր, ատ՛ող: Բայց եռեւեռող այդ մթնոլորտին մէջ, բոլոր ներկաներուն սիրտը կը բարախէր նոյն եւ միակ բանին համար: Մեր մշակոյթին ու մեր գեղարուեստին համար:

Ռ. Հ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԾՆՈՒՆԴԸ Հ.Բ.Ը.Մ. ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

- Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ - ...

Տօն է Ս. Ծնունդեան եւ Աստուածայայտնութեան, ըստ Առաքելական Եկեղեցւոյ դարաւոր կարգերուն, երբ քրիստոնեայ հայաչխարհը մեծաւ կ'անձկատէ զոյգ Խորհուրդները 13 օրուան միջոցով մը:

Ինչ փոյթ թէ տարաստիւռ պանդուխտներս, հիւրընկալ ափերուն տարուինք մասնակցելու այլոց զաթթոնքի խոլ ցնծութեանց, զէթ մէկ գիչերուան մռայլին մէջ խեղդելու խռովեալ աչխարհի առօրեայ արհաւիրքը...

Խորապէս սակայն հաւատարիմ մեր վաղնջական խթման, ծունկ մը ազօթքով Յիսուս մանկան չնորհը հայցելէ եռք, ընտանեկան երդիքի տակ ճաչակելու հայկական համադամները:

Վաղուց է գովքի արժանի Հ.Բ.Ը.Մ.ի տիկնանց յղացումը խթման տալու մեր ազգ. աւանդապաշտ ինքնութեան նմոյշը, նոյն առեն անոր ընծայելու խմբական ցնծաւէտ ընոյթ մը լուսածոր սրահի մը մէջ, զարդարուն սեղաններու չուրջ, ի մի բերելու հայ զաթթոնքը յարդող Փարիզի Հայերը:

Յունուար 5, Կիրակի գիչեր խթման ճաշը կը հովանաւորէր՝ Գիւտ Եպիսկոպոս Նազդաչեան, իր մօտ ունենալով Ֆրանսայի Շրջանային Յանձնաժողովի պատասխանատու՝ Պ. Ն. Ֆրէնկեան, Լիբանանի Հ.Բ.Ը.Մ.ի Շրջ. Յանձնաժողովի փոխ - նախագահը իր կնոջ հետ եւ Ֆրանսայի Շրջանային Յանձնախումբի նախագահ՝ Տոքթ. Լ.Ա. Ադամեանը:

Եպիսկոպոսին ազօթքէն եռք, Տիկին Անահիտ Սապպակ, յանուն Տիկնանց Յանձնախումբին, Նոր տարւոյ եւ Ս. Ծննդեան չնորհաւորական մաղթանքները եռք, կ'անդրադառնար Հ.Բ.Ը.Մ.ի 80-ամեակի բացառիկ հանդիսութեանց, որոնք տեղի պիտի ունենան Նոյեմբերին, Փարիզ՝ որպէս ժամադրավայր համայն Բարեգործականի մասնաճիւղերուն:

Ապա կը խօսէր Տիկնանց Յանձնախումբի գլխաւոր գործունէութեան մասին, որ էր Զորեքչաբթի օրերու հայերէն լեզուի դասընթացքները 4-էն 13 տարեկան երախաներու, փորձառու ուսուցիչներու խնամքին տակ եւ այդ՝ ի գին ամէն զոհողութեանց, համոզուած ըլլալով թէ հայապահպանութեան ամէնէն ազդու պայմանն էր, այս ճաշը, ըլլալով գլխաւոր աղբիւրը հասոյթի, առանց մոռնալու նաեւ թէ այս գիչեր հաճոյքով պիտի համտեսէր մեր տիկնանց կողմէ յատկապէս պատրաստուած ախորժաբեր ճաշերը:

Ապա խօսք առաւ Փարիզի յանձնախումբի առենապետ՝ Պ. Միչէլ Սապպակ, (Փըրանսերէն) յիչեցնելով 80-ամեակի հանդիսութեանց պատրաստութիւնները եւ թէ մասնաւորի կը չեչտէր ներկայութիւնը Լիբանանի Շրջանային Յանձնախումբի փոխ - նախագահին որ քառասուն տարիներէ ի վեր իր գործօն ծառայութիւնը բերած էր միութեան:

Կ'ուզենք յիչատակել տիկնանց անխոնջ չանքերը խիստ ճոխ ճաշերու պատրաստութեան առթիւ, զբաղելով նաեւ անթերի սպասարկութեամբ:

Մինչ սրահի էլէկթրօֆոնը հայկական երգերով կ'ոգեւորէր սեղանակիցները, կը լսէինք երգչուհի Տիկին Դանիէլեանի մի քանի մեներգները:

Ճաշի աւարտին չամփանյի բաժակներ բարձրացան Նոր տարուան եւ Ծննդեան մաղթանքներով, լոյսերու չրջուն ոլորաններով սկսան չուրջպարեր:

Ժամն էր Գիւտ Եպիսկ.ի մեկնումին, հեռեւեալ առաւօտեան պատարագի համար: Ան կատար իր ուղերձը, ըսելով, - Ծննդեան յայտարարութեան մէջ կ'ամփոփուի ամբողջ խորհուրդ մը եւ մեր կեանքի առաքելութիւնը. հակիրճ պահ մը կ'ապրինք այստեղ: Հայաստանեայց Եկեղեցւոյ իւրաքանչիւր զաւակ պէտք է գիտնայ թէ Քրիստոսի Ծնունդը պարզ խանդավառութիւն մը չէ, անոր մէջ կայ մեր բոլոր ակնկալութիւններու պատասխանը եւ բոլոր մաղթանքները, որոնք միմիանց կը փոխանցենք, ըստ Բարեգործականի ձեռք - ձեռքի գործակցութիւնն է:

Զ. ՍԱՐԵԱՆ

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՏՕՆԱԾԱՌԸ

Կիրակի, Յունուար 5, կէսօրէ եռք Ռենսելի Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի սրահը հաւաքուած էին աչակերտներու ծնողքներ եւ բարեկամներ, միասնաբար անցընելու համար հայկական համեղի ժամեր: Վարժարանին Խնամակալութիւնը ոչ մէկ չանք խնայած էր լաւագոյն սպասարկութիւն մը ապահովելու համար ներկաներուն:

Ժամը 16·30-ին արդէն դրաւուած էին բոլոր սեղանները եւ բարձրախօսէն կը հնչէր հայկական երաժչտութիւնը: Մանկապարտէզի եւ նախակրթարանի աչակերտները կը վխտային սրահին մէջ եւ անհամբեր կը սպասէին բեմէն իրենց չբնորհի ցուցադրութեան:

Ու կը հասնէր պահը: Վարժարանին տեսչուհին՝ Տիկին Սիլվա Գարակիւլեան, յանուն տեսչութեան, ուսուցչական կազմին ու խնամակալութեան չնորհաւորելով Նոր տարին ու Ս. Ծնունդը, կը բանար տօնածառի հանդիսութիւնը եւ կը վարէր յայտագիրը:

Կը բացուի բեմին վարագոյրը ու կը պարզուի հոգեթով տեսարան մը: Փոստուն մանուկներ, ամանք՝ արցունքը աչքերուն, կը մեկնաբանէին ամանորի, Ծնունդի, հայրենասիրական երգեր, որոնց դաչնակով կ'ընկերանար իրենց համբերատար ուսուցիչը՝ Գէորգ Եանպէկեան: Մէկընդմէջ կ'արտասանուէին հայերէն գողտրիկ ոտանաւորներ, կը ներկայացուէին կարճ թատերախաղեր: Հարկ է նչել, որ ներկանները՝ ընդառաչելով բեմէն կատարուած խնդրանքին, չանացին պահել յարբերական լռութիւն մը, կարենալ ունկընդրելու համար մանուկներու արտասանութիւնները: Դժբախտաբար, յաճախ չէ որ մեր ծնողքները անհրաժեչտ լրջութիւն կը ցուցաբերեն ի տես այն հսկայ աչխատանքին, զոր կը տանին ուսուցիչները մանուկներու հետ, ամիսներու փորձերով յայտագիր մը պատրաստելու համար: Ի վերջոյ պէտք է գիտնալ, որ տօնածառ եւ տարեվերջի հանդիսները մեր վարժարաններու աչակերտներու աչխատանքի պտուղը համտեսելու առիթներ են եւ ոչ՝ օղիի գաւաթներուն չուրջ զմեզ մոռնալու:

Յայտագրի երկրորդ բաժնով հանդէս կուգային նախակրթարանի աչակերտները խմբերգներով, արտասանութիւններով եւ թատերական պատկերներով: Այնուհետեւ կարգը կուգար հայկական ժողովրդական եւ ազգագրական պարերուն, որոնք, ինչպէս միչտ, այս անգամ ալ կը ստեղծէին խանդավառ մթնոլորտ մը: Մարթէն եռակնց, բեմին վրայ իր չուրջ հաւաքած վարժարանին մանուկները, հայերէն քանի մը երգերով կը խանդավառէր ներկաները:

Վերջապէս կը հասնի այնքան սպասուած պահը կաղանդ պապայի ժամանման: Մանուկներ ուրախ տրամադրութիւններով կը չրջապատեն կաղանդ պապան, որ բարեմաղթութիւններու հետ նաեւ նուէրներ կը բաչխէ բոլորին:

Հանդիսութիւնը կը չարունակուէր հայկական պարերու ներկայացումով: Խնամակալութեան, տեսչութեան եւ ուսուցչական կազմի տարած աչխատանքները արդիւնաւորուած էին:

ՇՐՋ. ԹՂԹԱԿԻՑ

ԳԱՂԱՓԱՐ ԳԱՂԱՓԱՐ

ՊԷՅՐՈՒԹի «Ազատամարտ» ակումբին մէջ դասախօսութիւն մը տուած է Արտաչէս Տէր - Յակոբեան: Հ.Ց.Դ. Լիբանանի Երիտասարդաց Միութեան «Հերայր Դժոխք» մասնաճիւղին կողմէ կազմակերպուած դասախօսութեան նիւթը եղած է «Հայ մամուլը»: Դասախօսը իր նիւթը բաժնած է երեք չրջաններու՝ 1794 - 1920, 1920 - 1980 եւ 1980-էն մեր օրերը, անդրադառնալով արեւմտահայ եւ արեւելահայ լրագրութեան, յիչելով դէմքեր եւ չեչտելով հայ մամուլին դերը: Իր խօսքի վերջաւորութեան Արտաչէս Տէր - Յակոբեան չեչտը դրած է հայ մամուլի եւ անոր բովանդակութեան լիակատար ցուցակի մը անհրաժեչտութեան վրայ, որպէսզի դիւրանայ ուսումնասիրողներուն գործը:

ԲԱՑՈՒԱԾ Է...

BOUTIQUE

TALINE

ԹԱԼԻՆ

31, rue Lamartine
75009 Paris

où vous trouverez :

Pulls,

Collants,

Cosmétiques,

Faux bijoux.

——Ouvert tous les jours de 14 à 18h30.——

ԼՕՏՕ

ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԱՍՆԱՃԻԿ

Կիրակի, Յունուար 19, ժամը 16–ին
Հայ Մշակոյթի Տան մէջ
9, rue de Madrid — 94140

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Բոլորին համար
բազմաթիւ նուէրներ — Պիւֆէ :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՓԵՏՐ. 23

Մանրամասնութիւններ՝ յետագային :

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Փարիզահայ Տիկնանց Միութեան Ընդերու Օգնութեան Մարմինը, շնորհակալութեամբ առացած է փոխան ծաղկեպսակի հետեւեալ նուէրները. - Փրոֆ. Գառնիկ Ալեխանեանի կսկծալի մահուան առթիւ. - Տիկին Ազգանոյշ Ղազարեան 1000 Ֆ., Տէր եւ Տիկին Տոքթ. Սեթեան 500, Տէր եւ Տիկին Փիէռ Պիւռթէ 500, Տիկին Պերճ Զաքըճեան 200, Տիկիններ՝ Ճերմակեան, Խուպէսէրեան, Սայեան, Գալփաքեան, Սէմէրճեան 100-ական Ֆ., Տիկին Կիւլպէնկեան 50 Ֆրանք: Միութեանս անդամուհիներէն նորոդ հանգուցեալ Տիկին՝ Ֆիմի Պարթեւեանի յիշատակին. - Տիկին Զապէլ Կիւլպէնկեան 500 Ֆ., Տէր եւ Տիկին Ազլականեան 200, Տէր եւ Տիկին Մինասեան 300, Տիկիններ՝ Սայեան, Թէլէր, Պիւռթէ, Զաքըճեան, Խուպէսէրեան, Սապակ, Ալեքսանեան 100-ական Ֆ., Տիկին Զաքըճեան Գեղամ Սայեանի յիշատակին 200 Ֆ.:

×

Կապ. Խաչի Իսիի մասնաճիւղը շնորհակալութեամբ առացած է. - Տիկին Գարամանուկեան 250 Ֆ., Պ. Գալայճեան, Տիկին Աւետեան, Պ. Խանթամուրեան 200-ական Ֆ., Տիկիններ՝ Է. Շահինեան, Շ. Գալայճեան, Մէրկէն, Ճնտոյեան, Ամիրալեան, Տէր եւ Տիկին Թորիկեան 100-ական Ֆ., Տիկիններ՝ Գարակէօզեան, Մանիսեան, Գայլիկեան, Պազտասարեան, Ոմն, Գեղոյեան 50-ական Ֆ.:

×

Լիոնի Սուրբ Յակոբ Մայր Եկեղեցւոյ Աւետաւորչութեան ծօնին առթիւ, եկեղեցւոյ պայծառութեան համար հետեւեալները Ազգային Միութեան կը նուիրեն՝ Լիոնի Տիկնանց Միութիւնը 20·000 Ֆ., Տէր և Տիկին Սերժ Միքայէլեան 3000 Ֆ., Պ. Ճէպրայէլ Պահատուրեան, Պ. Ճնկըտրեան եւ Մօրիս Ղազարեան 1000-ական Ֆրանք, Տէր եւ Տիկին Արման Պահատուրեան եւ Պ. Խրիմեան 500-ական Ֆ., Տիկին Պօղոսեան, Ժան Մասէ (Բոսթէքեան) 300-ական Ֆ., Պ. Տօնիկեան, Տիկին Կոստանեան, Փօլ Պօղոսեան (Վիէննէն) 200-ական Ֆ., Տիկին Ոսկերիչեան, Տիկին Թադէոսեան 250-ական Ֆ., Տէր եւ Տիկին Հաբէլեան 150 Ֆ., Տիկին Շնորհիկ Օհաննէսեան, Տիկին Սօմունեան, Ժան Տիւլկէրեան, Տիկին Մակէսեան, Թէրզեան ընտանիք, Տէր - Ղազարեան, Ոմն, եւ Մարի Գարագիւլահեան 100-ական Ֆ.:

Ս· ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Երեքշաբթի, Յունուար 14, Տօն Ծնընդեան Սրբոյն Յովհաննու կարապետի: Այսօր Սուրբ Յովհաննէս – Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ անուան տօնն է:

Ժամը 10–ին պատարագ կը մատուցուի: Պատարագի ատաթին՝ հոգեհանգիստ կը կատարուի եկեղեցաչէն բարերար՝

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆԻ

եւ

ՄԱՆԹԱՇԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ

բոլոր ննջեցեալներուն համար:

Հ. Բ. Ը. Մ.
ՎԻԷՆԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Նախագահութեամբ՝
ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՒԵՏԻՔԵԱՆԻ

Կիրակի, Յունուար 19, ժամը 17-ին, Ս. Աբովեան Մշակոյթի Տան մէջ:

1, Quai Pajot — VIENNE

Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը կը բերեն միօրեայ դպրոցի աշակերտները:

Մուտքը ազատ է:

L'ÉTAPE ARMÉNIENNE
au cœur de la Franche - Comté

AUBERGE
D'ARMENIE

63, Faubourg de Besançon - 25200 MONTBELIARD
Tél. : 81 - 94 - 93 - 74

ԱԻԱՆԴԱԿԱՆ

ԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՎԻԷՆԻ ՄԷՋ

Կիրակի, Յունուար 19, կէսօրէ վերջ ժամը 2·30–էն սկսեալ
Théâtre Municipal

Գեղարուեստական յայտագիրը ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ դպրոցի աշակերտներուն կողմէ, այս տարի ալ Կաղանդ Պապան իր այցելութեամբ պիտի ուրախացնէ փոքրիկները:

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉ–ի Պօմոնի մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ
Կիրակի, Յունուար 19, ժամը 14·30–ին
Պօմոնի միօրեայ Դպրոցի ծօնածառի հանդէսին, ուր ձեզ կը սպասէ հին եկեղեցւոյ կից սրահին մէջ:

——— Ճոխ յայտագիր, ջերմ մթնոլորտ, թումպոլա, եւայլն: ———

OPTIMA Tours

ARMENIE

-- 1986 --

Pâques en Arménie

— Du 29 Mars au 12 Avril (via Kiev) ..... 6.050 F

Spécial Cérémonie du 24 Avril en Arménie

— Du 19 Avril au 3 Mai
(Prix et conditions de ce voyage nous consulter).

(Nos prix comprennent — le transoprt aérien, tous les transferts, la pension complète, le logement dans des hôtels de 1ère classe A en chambre double / bain, les excursions et visites mentionnées dans notre programme, l'ASSURANCE).

(Nos prix ne comprennent pas — la chambre individuelle, les boissons et les frais de nature personnelle, frais de visa 100 F.)
(Groupe minimum 20 inscriptions accompagnateur assuré par notre agence).

Renseignements et Inscriptions:

PARIS

Madame COUMRYANTZ Sonia
OPTIMA TOURS
12, rue Vignon — 75009 PARIS
Tél. : 47 - 42 - 10 - 35

LIC A 130

4.000 m² de mobiliers
présentés en ambiance

Meubles Ghazarian
Z.I. Vitrolles
à 20km de Marseille
tél. 42. 89.27.47



"Բացուած է կեդրոնական «Ճաշակ»ի բաժնի նորութիւնները"

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
14

MARDI
14 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TEL.: 47. 70. 86. 60 — TELEX: HARATCH 280 868 F
C.C.P. PARIS 15069-82 E — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.137 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.137

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԸՆՏՐԱՊԱՅԿԱՐ

ԽՕՍՔԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ

Ֆրզանի ծագրանկարները, ամէն օր, իսկական խմբագրական մը կարելի է նկատել: Կը յաջողի մատիտի քանի մը հարուածով, ամէն բան ըսել: Երկուշաբթի առաւ, Մառիանն յուսահատ նոտած ձայնափիւռի զանազան գործիքներու առջեւ, կը արտնջար՝ «Ատուած իմ, ամբողջ չաբաթը աշխարհը կը վերաշինեն եւ կիրակին իսկ չեն հանդչիր»:

Արդարեւ, ո՞ը մէկը յիշել: Գրեթէ բոլորն ալ խօսեցան, մինչեւ իսկ Հանրապետութեան նախագահը, որ ուղղակի ընտրապայքարին մէջ մտած է, դիտակից թէ ընկերվարականները իրմէ լաւ «ընտրական գործակալ» չունին:

Ալֆորվիլի մէջ է, որ պատասխանելով Ֆրանչեսքիի հրաւէրին, Միթերան նախագահեց տարեցներու ճաշի մը: Նախագահը թռանուվ է որ ժամանեց Ալֆորվիլ, ուր, արտասանած ճառին ընթացքին, չէշտը դրաւ այն դրական արդիւնքներուն վրայ, զորս ճախը իրագործած է 1981-էն ի վեր, աւելցուց թէ միշտ հաւատարիմ պէտք է մնալ 1789-ի սկզբունքներուն եւ որքան ալ որ ազատ ըլլայ ամէն մէկ քաղաքացի իր ընտրութեան մէջ, նախագահին պարտականութիւնն է ցոյց տալ ուղիղ ճամբան: Այս առթիւ, Նախագահը յայտնեց թէ այլեւս 60 տարեկանին է որ այր մարդիկ (62 էր՝ ցարդ) կրնան օգտըւիլ վէրմէյլ քարթէն (աչքը լոյս ժիսքարին, որ քանի մը օրէն, առաջին օգտըւողներէն մէկը կրնայ ըլլալ···):

Խօսեցան նաեւ՝ Ժորժ Մառչէ, որ կիրակի իրիկուն, Եւրոպա Մէկ կայանէն, ամբողջ մաղձը թափեց ընկերվարական - ներուն վրայ, պնդելով որ «օգտակար» քուէարկելու համար պէտք է համայնավար քուէարկել, առանց կարենալ բացատրելու, (ոչ ալ յաջորդ առաւու՝ Ռոլան Լրոուա) թէ որո՞ւ հետ կրնայ կառավարել համայնավար կուսակցութիւնը, որ բոլորովին անել կացութեան մէջ է:

Ռեմոն Պառ, միշտ ինքնագոհ, հեռատեսիլի Ա· կայանէն կեղծ համեստութեամբ մը, անգամ մը եւս կ'ուզէ համոզել թէ իրմէ դուրս՝ չիք փրկութիւն:

Խռնիւ, իր կարգին, (Լիւքսանպուրկ) կ'ուզէ որ Ֆրանսացիք զիտնան թէ անցեալի մարդ չէ, այլ ապագայ ունի:

Ժոսփէնի համար օգտակար քուէն, ընկերվարական քուէն է, ինչ որ տրամաբանական է, քանի այլապէս Ֆրանսան անկառավարելի կը դառնայ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԱՐՍԷԼ ԱՌԼԱՆ, Ֆրանսական ժամանակակից գրականութեան տիրական դէմքերէն մէկը մեռաւ, առջի օր, սրտի տագնապէ մը: Ծնած էր 1899ին, Հօթ - Մառն, 20 տարեկանին Փարիզ էր եւ գրականութեան լիսանսին զուգընթաց, պատասխանատուն էր «Ինֆիվերսիթէ տը Փարի» պարբերականին: Բայց իր գլխաւոր դերը խաղացած է Կալիմարի Նուվէլ Ռըվիւ Ֆրանսէզի խմբագրութեան մէջ, ամէնէն հին անդամներէն մէկն ըլլալով: Իր առաջին վէպին՝ Թէո գ'Էթրանժէռ ձեռագիրը գրկած էր (1922) ժիսի, որ խանդավառ, տուած է Փօլհանի եւ Առլան առաջին պայմանագրութիւնը սատրագրած է Կալիմարի հետ: Էն-Էռ-Էֆ եւ Կալիմարի կապակցութեամբ է նաեւ որ թղթակցած է Շահան Շահնուրի հետ: 1952-ին ակադեմական կ'ընտրուէր Անտրէ Մօռուայի աթոռին: Կարճ վէպերու եւ նորավէպերու վարպետ մը կը նկատուէր:

ԹՈՒՐՔԻՈՅ Մորհրդարանը նոր օրէնք մը քուէարկած է Իսլամի պաշտպանութեան առընչութեամբ: Պաշտօնապէս աշխարհական այս Պետութեան մէջ, բանտարկութեան կրնան դատապարտուիլ բոլոր անոնք որոնք կը նախատեն մահմետական կրօնքը: Օրինագիծը ներկայացուցած է Անավաթան (իշխանութեան ղեկավարը զանուող) կուսակցութիւնը եւ օրինազանցը կրնայ մինչեւ 3 տարի բանտարկութեան դատապարտուիլ: Պատիժը՝ վեց ամիսէն կը սկսի պարզ նախատինքի մը համար Մոհամէտի կամ Գուրանին դէմ եւ մինչեւ 3 տարի բանտարկութեան կ'երթայ եթէ ազօթատեղի մը կը խորհրդանշէ երկրի մը մէկ, որ ըելի է ընդդիմութիւն նկատել միւս հասանքները) դէմ քուէարկած է, գլխաւորաբար սոցիեալ - դեմոկրատ կուսակցութիւնը: Երկու տարի է որ այս օրինագիծը կ'երթար - կուգար եւ այս քուէարկութիւնը իսլամական որոշ վերածնունդ մը կը խորհրդանշէ, երկրի մը մէկ, որ աշխարհականութեան բերդը կը նկատուէր Մերձաւոր - Արեւելքի մէջ:

ՔԱՏԱՖիի չուրջ զանազան լուրեր կը շրջին քանի մը օրէ, որոնք բաւական հետաքրքրական բնոյթ ունին: Նախ, մամուլի միջազգային գործակալութեանց համար, Լիբիոյ գեկավարը կը խնամուի աւստրիացի յիմարաբոյժի մը կողմէ: Քատաֆի 43 տարեկան, տասը տարի է սֆիզոֆրէնիէ կը տառապի: Տոքթ· Ֆրանց կեռչթընպրանտ, Ղզաբան եւ յիմարաբոյժ, միջազգային համբաւի տէր, որ ինսպրիւք կը մնայ, յայտնած է թէ երբեք չէ հանդիպած գնդապետին, բայց պարզ է որ յիմարաբոյժ մը, այլ բժիշկ մը աւելի պարտաւոր է տէր մնալ արհեստի գաղտնապահութեան: Զար լեզուները, ի լուր այս տեղեկութեան հարց կուտային թէ աւստրիացի բժիշկը ո՞վ կը խնամէ···: Միւս կողմէ, Երուսաղէմ լոյս տեսնող էրէվ Շաբաթ չաբաթաթերթին համաձայն ալ, Քատաֆիի մայրը Հրեայ էր: Հարուստ չէյխ մը՝ Իսն Լինճի առեւանգեր է գեղեցիկ հրեայ պարմանուհի մը՝ Զեմիրատա, որու հետ ամուսնացած է եւ բազմաթիւ զաւակներ ունեցած են, որոնցմէ անդրանիկը՝ Քատաֆին է: Այս առընչութեամբ, յիշենք «Մաթէն»ի յայտնած ծագրանկարը, Շարաթ առաու: Քատաֆի ճիփով մը գլուխը ատած կ'երթայ, անդին երկու հոգի կը խօսին, մէկը միւսին կ'ըսէ՝ «Չէի դիտեր, որ Քատաֆի Փարիզ - Տաքարը կ'ընէ», ու միւսը կը պատասխանէ՝ «Չէ, Լիբիացին կը փախի, նոր իմացաւ որ Հրեայ է···»:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ պաշտօնապէս դոյութիւն չունի Մորհրդային Միութեան մէջ, բայց նոր գործազուրկեր մէջտեղ եկած են նախարարութիւններու ջնջումով եւ այլ կառոյցներու վերածումով: 7000 պետական պաշտօնեայ փողոցն են արդէն եւ 15 հազար ուրիշներ ալ պիտի հետեւին, երբ Կոսակրոպրոմը (գիւղա - ճարտարարուեստական պետական կոմիտէ) գործի անցնի: Այս նոր գործազուրկերը, որոնք պաշտօնապէս անգործ չեն որակուիր, որովհետեւ 30-ական թուականներէն ի վեր անգործութիւն չկայ Մորհրդային Միութեան մէջ, երեք ամիս պիտի ստանան աշխատավարձը: Ծանօթ է որ, Մորհրդային ամէն քաղաքացի «աշխատանքի իրաւունքն ունի», աւելին՝ պարտաւոր է եւ մակարուծութիւնը խիստ պատիժներու կ'ենթարկուի: 1984-ին 90 հազար դատ տեսնուած է, այս ուղղութեամբ:

ՎԵՆԵՏԻԿԸ անգամ մը եւս ջուրերուն տակ է, տարւոյն առաջին «ափուա ալթա»ն երեւցած է Յունուար 10-ին եւ համբաւաւոր Փլացա Սան - Մարքօն ալ՝ ողողուած:

ԳՈՒՐԱՆԸ մեծ յաջողութիւն արձանագրած է ձայներիզով ծախուելէն ի վեր, մահմետական Սփիւռքին մէջ: Հարիւր - հազար հատ ծախուած է Եւրոպայի մէջ, գլխաւորաբար Ֆրանսա: Ամբողջութիւնը 22 ձայներիզ տուփերէ կազմուած է, իւրաքանչիւրը 90 վայրկեան տեւող:

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

ԹՈՒՐՔ - ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԵՐՏ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Առջի օր, բանի մը տողով անդրադարձած էինք թուրք - պարսկական գործակցութեան սերտացման, էօզալի գլխաւորութեամբ թուրք պատուիրակութեան մը Թեհրան այցելութեան առթիւ, մանաւանդ տնտեսական բնոյթ ունեցող համաձայնագրերով: Թուրք թերթերը այլ մանրամասնութիւններ ալ կուտան, այլապէս հետաքրքրական·

×

Թուրքիոյ վարչապետ Թ· Էօզալի Իրան այցելութեան ընթացքին երկկողմանի տեսակցութիւններու գլխաւոր նիւթ եղած է երկու երկիրներու սահմանագլխուն վրայ պարբերաբար տեղի ունեցող քրտական արարքներն ու չրջանին մէջ քրտական Պետութեան մը հիմնումի հարցը: Ահաբեկչական այս արարքները կանխարգիլելու համար երկու երկիրները վճռած են սերտ գործակցութիւն մը տանիլ: Իրանի պատասխանատու չրջանակները յայտնած են թէ ամերիկեան եւ խորհրդային աշխարհակալութիւնը տենդագին աշխատանքի լծուած են չրջանին մէջ քրտական անկախ Պետութիւն մը հիմնելու համար, եւ թէ անոնց այս գործունէութիւնը կը սպառնայ չրջանի երկիրներուն· Իրան յայտնած է նաեւ թէ ամբողջովին զօրավիդ է քրտական ուժերու դէմ կիրարկուելիք միջոցառումներու:

Խորհրդային Միութեան քրտական Պետութիւն մը հիմնելու միտումը կը բացատրուի Հաճ Ումրան չրջանի գիւղերուն մէջ խուզարկութիւններու ընթացքին ձեռք անցած 12 հազար «Քալաշնիքով» ինքնաձործ զէնքով:

Իրան, խորհրդային այս խաղերը կը մեկնաբանէ որպէս իսլամական աշխարհին մէջ երկրորդ Իսրայէլ մը ստեղծելու փորձ մը: Փորձ մը, որ յաջողելու պարագային մեծապէս պիտի ծառայէ աշխարհակալութեան չահերուն: Իրանեան իշխանութիւնները որպէս առաջին քայլ այս մարզին մէջ Թուրքիոյ հետ գործակցութեան, Թուրկութ Էօզալի յանձնած են իրենց պատրաստած քարտէսներն ու հաւաքած տեղեկութիւնները:

Խօսելով իր այս այցելութեան մասին Թուրքիոյ վարչապետը անդրադարձած է նաեւ պարսկահայերու պարագային, ան ըսած է թէ ներկայիս 300 հազարի չուրջ է անոնց թիւը ու միշտ առկայ է սպառնալիք մը այդ կողմէն, Թուրք դիւանագէտներու համար· թէեւ Իրան Թուրք դիւանագէտներու պաշտպանութեան համար դիմած է ապահովութեան ամէն տեսակ միջոցի:

ՓՈՒԹՊՈԼ

ԱՐԿԱԴԻ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ «ԿՈՏԱՅՔ»Ի ԳԼԽԱՒՈՐ ՄԱՐԶԻՉ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ

Աբովեան քաղաքի «Կոտայք» խումբի գլխաւոր մարզիչ նշանակուած է Արկադի Անդրէասեան, Հայաստանի Ֆութպոլի մարզչին ներս ծանօթ անուն մը: Անդրէասեան 1960-ական թուականներու վերջերէն հանդէս եկած է «Արարատ»ի կազմէն, որ երկու անգամ չահած է Մորհ· Միութեան բաժակը եւ մէկ անգամ ալ դարձած ափոյեան: Ան երկու անգամ դարձած է Մորհրդային Միութեան արծաթէ մետալակիր, իսկ Միւնիխի օղիմպիական - ներուն (1972) պրոնզէ մետալակիր: Աւելի քան տասը տարի խաղալէ ետք «Արարատ»ի խումբէն, հեռացած է ասպարէզէն եւ նուիրուած մարզիչի աշխատանքի: Երեք տարի (1979 - 1981) եղած է Աբովեանի «Կոտայք»ի գլխաւոր մարզիչը: Այդ տարիներուն է, որ «Կոտայք» սկսած է ձեւաւորուիլ, հետզհետէ դառնալով կազմակերպուած եւ ապագայ խոստացող խումբ մը: Այդ իրողութիւնը պատճառ դարձած է, որ Արկադի Անդրէասեանի յանձնուի «Արարատ»ի դեկը: Այնուհետեւ երկու տարի մարզած է Հոկտեմբերեանի «Սպարտակ»ը, որ անցեալ տարի Բ· դասակարգի խումբերու մրցաշարքին 3-րդ տեղը գրաւած է:

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ ՀԵՔԱՏՈՒՄ

ԵՐԵՒԱՆ
(ԱՐՄԷՆՓրԷՍ - ՅՈՒՆՈՒԱՐ 6 - 9)

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ 49-ՐԴ ԱԽՈՅԵՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ ՄԱՐՏ 1-ԻՆ

«ԱՐԱՐԱՏ»Ի ԽԱՂԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՑԸ

Մորհրդային 49-րդ ախոյենութեան մըրցումները կը սկսին Մարտ 1-ին: «Արարատ» մրցաշարքին կը մտնէ յաջորդ օրը: Մասրեւ, «Արարատ»ի խաղերու ժամանակացոյցը·

×

ՄԱՐՏ

2 Արարատ - Տորպեդօ Մ·
9 Արարատ - Կայրաթ
14 Դինամօ Կ· - Արարատ
23 Դինամօ Մինսկ - Արարատ
30 Արարատ - Ժալգիրիս

ԱՊՐԻԼ

6 Արարատ - Զէնիթ
27 Շախտեոր - Արարատ

ՄԱՅԻՍ

2 Մետալիստ - Արարատ
10 Նեֆթչի - Արարատ
18 Դինամօ Թ· - Արարատ
25 Արարատ - Տորպեդօ Ռ·

ՅՈՒՆԻՍ

1 Չերնոմորեց - Արարատ
8 Դնեպր - Արարատ
22 Արարատ - Դինամօ Մ·
28 Արարատ - Սպարտակ

Ինչպէս կը տեսնուի, ըստ նոր կանոնի, այս տարի խորհրդային ախոյենութեան կը մասնակցին 16 խումբեր:

«ԾԱՌԱՋ»Ի ԸՆԴՄԻՋԷՋԷՆ

1985-ԻՆ ԱՆՀԵՏԱՁՈՂ ԴԷՄՔԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Պատրաստեց՝ ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

1985-ին տերեւաթափը հայ աշխարհի մէջ, նոր փոսեր բացաւ քիչ մը ամէն տեղ: Անդարձ մեկնողներու հոյլին մէջ կան՝ եկեղեցականներ, դրագէտներ, պիտանականներ, քաղաքական եւ ազգային դէմքեր, ուսուցիչներ, արուեստագէտներ, բարերարներ եւ նաեւ գաղութներու ազգային կեանքին մասնակցող համեստ անձեր, ղեկավարներ, յատկապէս երէց սերունդին պատկանող: Այս վերջիններու չարքերը տարիէ - տարի կը դառնայ աւելի ցանցառ: Անխոնջարինելի սերունդ մը որ հեռը կը տանի քիչ մը հայրենի հոգ, էջ մը Հայոց պատմութենէն, ճակատագրական պատմութենէն:

×

ՍՓԻՒՌՔ

Հանգիստ Մխիթարեան երէք վաստակաւոր մշակներու:

× Յունուար 7-ին, Վիէննայի մայրապետանոցին մէջ իր մահկանացուն կնքեց՝ ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՀԷՊՈՑԵԱՆ: Հմուտ եւ բժշկապետ, հեղինակ կարգ մը գործերու, աշխատակցած «Ցառաջ»ի, Գրիգոր Վրդ. Հէպոյեան առաւելաբար վարած է առաքելական եւ ուսուցչական պաշտօնները՝ Պուվդիւ (Պուլկարիա), Պէյրութ, Քալիֆորնիա:

× Փետրուար 2-ին, Պուէնոս - Այրէսի մէջ իր մահկանացուն կնքեց՝ Հ. ՍՏԵՓԱՆ ՎՐԴ. ՖԵՐԱՀԵԱՆ: Ուսուցիչ եւ դաստիարակ՝ եղած է ուսումնապետ, տեսուչ՝ Մխիթարեան վարժարաններու եւ մանաւանդ հիմը դրած է 1956-ին Պուէնոս - Այրէսի Մխիթարեան վարժարանին: Վարիչ՝ եղած մեծաւոր Ս. Ղազարի ընծայարանին եւ ընդհ. առաջնիկայ միաբանութեան ընդհանուր վարչութեան: Մատենագիր՝ նուիրուած է պրակն աշխատանքներու եւ յատկապէս բուսաբանութեան:

× Յուլիս 8-ին, Վենետիկի մէջ, իր մահկանացուն կնքեց՝ Հ. ՅԱԿՈԲ ՎՐԴ. ՉԱՆԹԱՑԵԱՆ: Փարիզէն՝ Պուէնոս - Այրէս առաւելաբար կատարած է դաստիարակչական աշխատանք: Բայց նաեւ նուիրուած է պրակն գործերու՝ որպէս խմբագիր «Մխիթարեան ընտանիքի», պրակագարանապետ վանքին, հեղինակ նոր Սեւան գաղափարքերու չարքին: Կը հանդիսի «Ուր միաբանք վաստակեցան»:

×

Երէք հոգեւոր հովիւներ ընդմիշտ կը թողուն նաեւ իրենց հովուութիւնը:

× Յուլիս 20-ին, Ֆրէզնոյի մէջ, կը վախճանի՝ ԵՂԻՇԷ Ա. ՔՀՆԾ. ՄԽԻԹԱՐԵԱՆ: Ծանօթ եւ սիրելի դէմք մը Ֆրանսայի եւ յատկապէս Մարսէյլի հայ գաղութին: Եղած է հոգեւոր հովիւ Սէն - Լուի՝ Ս. Գէորգ եկեղեցւոյ, Պօմոնի՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ, ինչպէս նաեւ առաջնորդական փոխանորդ Հարաւային - Ֆրանսայի թեմի: Ունեցած է կուսակցական (Դաշնակցական) եւ ազգային գործունէութիւն: 1946-ին փոխադրուած է Ամերիկա:

× Փետրուար 15-ին, Հալէպ, կառքի արկածի մը զոհ կ'երթայ՝ ՀԱՅՐ ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ՇԱՏՍՈՐԵԻԵԱՆ: Հալէպի Ս. Երրորդութեան Կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, որ պաշտօնավարած է նաեւ Սան - Փաւլօ եւ Երուսաղէմ:

× Այնճարի մէջ կը վախճանի՝ Վ.Ա.ՀԱՆ Ա. ՔՀՆԾ. ՔԷՆՏԻՐՃԵԱՆ՝ որ յիսուն տարուան ծառայութիւն եւ վաստակ ունի Հայ Առաքելական Եկեղեցիէն ներս:

×

Արեւմտահայ մտաւորականութիւնը կը կորսնցնէ իր ծանօթ դէմքերէն՝ ՄԿՐՏԻՉ ՀԱՃԵԱՆ, որ հեռաւոր Մեքսիքոյի մէջ կը կնքէ իր մահկանացուն: Բազմաճիւղ տաղանդի տէր: Մկրտիչ Հաճեան կէս դար իր կեանքն ու գրիչը ի սպաս դրաւ հայ մշակոյթին: Հրապարակագիր՝ աշխատակցած է սփիւռքի հայ մամուլի չատ թերթերու եւ պարբերականներու ինչպէս՝ «Ցառաջ»ի, «Նոր Օր», «Պայքար», «Հայրենիք», «Ապագայ», «Նաւատորդ», եւն., եւ խմբագրած է «Հանդէս մշակոյթի», «Ս. Փրկիչ» պարբերականները: Բանաս - տեղծ՝ ունի հատաքածոներ «Բոցեր», «Հոգին երկինք» եւ բազմաթիւ գործեր տրուած զանազան թերթերու մէջ: Թատերա - գիր՝ գրած է, ի մէջ այլոց, «Կնատեացը»: Ուսուցիչ՝ պաշտօնավարած է կեդրոնական եւ խաւեան վարժարաններուն մէջ: Մկրտիչ Հաճեան եղած է նաեւ արուեստագէտ եւ արուեստաբան, նկարիչ, քանդակագործ եւ մանաւանդ Պոլիս ապրած չրջանին եղած է երգիչ, երգչախումբի վարիչ եւ երաժշտական քննադատ: Մկրտիչ Հաճեանով կ'անհետանայ հմուտ միտք մը, արեւմտահայերէնի երկրպագու մը, հանրային գործիչ մը:

×

1985-ը կը տեսնէ կարգ մը վաւերական արուեստագէտներու մեկնումը:

× Հռոմ, Ապրիլ 1-ին, միջազգային համբաւի տիրացած նկարիչ՝ ԳՐԻԳՈՐ ՇԻԼԹԵԱՆ կը մեռնի: Բազմաթիւ ցուցահանդէսներ ներկայացուցած է աշխարհի ամէն կողմ: Արժանացած է մրցանակներու: Աչխատանոցներ բացած է Հռոմ, Վենետիկ, Միլանօ: Գրիգոր Շիլթեան հեղինակն է Էջմիածնի Մայր Տաճարի Խորանի նկարին:

× Գերմանիայէն դէպի Զուիցերիոյ ճամբուն վրայ երիտասարդ ձայն մըն է որ կը լսէ ԳԷՈՐԳ ՊՕՑԱՃԵԱՆով, Նոյեմբեր 23-ին: Պոլսահայ երիտասարդ եւ սիրուած երգիչ: Երգած է Պոլսոյ Պետական Օփերան, արձանագրելով մեծ յաջողութիւններ: Վերջերս կ'երգէր Սէն - Կալէնի Օփերան:

× Թեհրան, Ապրիլ 28-ին, կը մեռնի բեմադիր՝ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՂԱՄԱԼԵԱՆ: Իր բեմադրութիւններէն յիշենք՝ «Գէորգ Մարզպետունի», «Սամուէլ», «Խենթը», «Մուսա լեռան 40 օրերը», «Պաղտասար Աղբար»: Իր անակնկալ մահէն երկու օր առաջ կը ներկայացնէր՝ «Մեծ լռութիւնը»: Նախապզացո՞ւմ մը:

× Փենսիլվանիա, Օգոստոս 15-ին, իր մահկանացուն կը կնքէ ամերիկահայ երգահան՝ ՌԻՉԸՐՏ ԵԱՐՏԸՄԵԱՆ: Իր գործերը նուագուած են աշխարհի ամէն կողմ: Ցօրինած է անդլերէն լեզուով առաջին պատարագը: Արժանացած ոսկէ մետալի, Միացեալ - Նահանգներու 200-ամեակի յոբնակատարութեանց առթիւ:

×

Պոլիսը, մեր երբեմնի ազգային եւ մշակութային կեդրոնը, ամէն տարի քիչ մը աւելի կը ժժգունի, կորսնցնելով իր փայլուն չրջանի վերջին վկաները: Այսպէս՝

× Ծերունազարդ դրագիտուհի՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԷՕԶԷՐ, Նոյեմբեր 23-ին: Ծանօթ դէմք մը թարգմանական դրականութեան մէջ: Աչխատակցած է «Մարմարա»ի: Զբաղած է նաեւ մանկական դրականութեամբ:

× Մարտ 22-ին, կեդրոնական վարժարանի նախկին ուսուցչուհի՝ ԱՆԱՀԻՏ ՏԻՄԻՐԵԱՆ եւ Յուլիս 27-ին նախկին ուսուցիչ կեդրոնական վարժարանի՝ ԿԱՐԱՊԵՏ ԳԶԻՐԵԱՆ:

×

Հ. Օ. Մ.ը եւս իր զանազան չրջաններուն մէջ իր տուրքը վճարեց ճակատագրին:

× Նիւ - Ճըրզիի մէջ, Փետրուար 7-ի, կը մեռնի հերոս Աբչաւիր Շիրակեանի այրին՝ ԳԱՅԵԱՆԻ ՇԻՐԱԿԵԱՆ: Հ.Օ.Մ.ի վեթերան անդամներէն, ինչպէս նաեւ Նիւ - Ճըրզիի Հ. Ց. Դ. Դրօ կոմիտէութեան:

× Լոնտոնի մէջ, Մարտ 15-ին, իր մահկանացուն կը կնքէ Ցունաստանի Հ. Կ. Եկեղեցւոյ գործօն անդամուհիներէն՝ ԱՂԱՒՆԻ ՊԵՏՐՈՍԵԱՆ: Ցուղարկաւորութիւնը կը կատարուի Աթէնք:

× Գահիրէ, Ցունիս 18-ին, Հայ Կ. Խաչը կը կորսնցնէ իր վաստակաւոր անդամուհիներէն՝ ԱԼԻՍ ՍԱՇԱ ՄԱՐԳԱՐԵԱՆ:

× Պուէնոս - Այրէս, Ցուլիս 11-ին, կը մեռնի Հ. Օ. Մ.ի վեթերան անդամուհիներէն՝ ԻՍԿՈՒՀԻ ԷՄՊԻՔԵԱՆ, որ առանձնած էր պատասխանատու պաշտօններ:

× Մոնրէալի մէջ, Մարտ 9-ին, Հ. Օ. Մ.ը կը կորսնցնէ իր ռահվիրանէն մին՝ ԱՐՈՒՍԵԱԿ ՊՈՀՃԱԼԵԱՆ: Իր վաստակը մեծ եղած է Լիբանան եւ հիմնած է Հայ կարմիր Խաչը,, Ազգքանդրիոյ մէջ:

× Նիւ - Ճըրզիի մէջ, Նոյեմբեր 30-ին, ծանօթ անուն մը եւս կ'անհետանայ, այրին ծանօթ յեղափոխական եւ հեղինակ «Զարթօնք» վէպին՝ ԱՆՆԻԿ ՄԱԼԽԱՍ: Հ. Օ. Մ.ի վեթերան անդամուհի:

×

Հոս ու հոն ծանօթ դէմքեր, յարգելի անձնաւորութիւններ կը հեռանան հրապարակէն. -

× Աթէնք, Մարտ 2-ին, ՕՆՆԻԿ ՓԱԼԱՆՃԵԱՆ՝ անդամ ազգային վարչութեան:

× Թորոնթօ, Փետրուար 5-ին, ՄԻՆԱՍ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ՝ հայ կեդրոնին եւ Հ. Օ. Մ.ի վարժարանին բարերար:

× Պէյրութ, Մայիս 26-ին, ԲԱԲԳԷՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ՝ բժշկապետ Ազունիէի ազգ. բուժարանին:

× Աթէնք, Ցուլիս 7-ին, ԱՌԱՔԵԼ ԿԻՒՐԻՒՆԼԵԱՆ՝ մասնակցած ազատագրական պայքարին, վարած պատասխանատու պաշտօններ կուսակցական եւ ազգային մարզերէն ներս, նուիրուած նաեւ ուսուցչական ասպարէզին:

× Պէյրութ, Օգոստոս 1-ին, ՉԱՒԷՆ ԿՈՍՏԱՆԵԱՆ՝ անդամ Ռ.Ա.Կ.ի կեդրոնական վարչութեան եւ Հ. Բ. Ը. Մ.եան:

× Ֆրէզնօ, Սեպտեմբեր 12-ին, ՄԵԼԻՔ ՇԱՀ՝ հանրային գործիչ, հրապարակագիր, նախկին խմբագիր «Ասպարէզ»ի, աչխատակցած «Ռազմիկ»ի, «Ազատամարտ»ի, «Արօր»ի, «Երկիր»ի, «Ցառաջ»ի, «Հայրենիք»ի, մասնակցած յեղափոխական պայքարներու:

× Լոս -Անճըլըս, Դեկտեմբեր 6-ին, Վ.Ա.ՀԱՆ ՊԷՇԿԷՕԹԻՒՐԵԱՆ՝ ամերիկահայ բարերար:

× Պէյրութ, Դեկտեմբերի ընթացքին, ԺԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ՝ ծանօթ դէմք Լիբանանի եւ ելմտական չրջանակներուն մէջ. փրոֆէսէօր ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ՝ մանկավարժ:

× Թեհրան, Ցունիս 27-ին, ՌՈՒԲԻՆ ՆԱՐԻՆԵԱՆ՝ յեղափոխական դէմք, կըրթական մշակ:

× Միացեալ - Նահանգներու մէջ, ՀՐԱՉԵԱՑ ՇԱՄԼԵԱՆ՝ Հ. Բ. Ը. Մ.եան աչքառու անդամ, յատկապէս ծանօթ Լիբանանի հայ գաղութին:

(Մնացեալը յաջորդով)

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՌԱՓԱՅԷԼ ՎԱՀԱՆԵԱՆԻ ՀԵՏ

ԽՄԲ. - Միւնսկի նոր բացուած հատրակի պալատին մէջ, Յունուար 8-ին կը սկսէր աշխարհի ախոյեանութեան տիտղոսի յաւակնորդներ՝ 34-ամեայ Ռափայէլ Վահանեանի եւ 22-ամեայ Անդրէյ Սոկոլովի կէս - աւարտական մրցաշարքը: Ամանորի շեմին, «Սովետական Հայաստան» օրաթերթի թղթակիցը՝ Վարազդատ Գրիգորեան, հարցազրոյց մը ունեցած է հատրակի հայ կրոսմայսթէոնի հետ, իրազեկ դառնալու համար անոր տրամադրութիւններուն, մրցաշարքի նախօրեակին: Ստորեւ՝ հարցազրոյցը, պահելով լեզուն:

×

- Ձեր տրամադրութիւնը հիանալի է: Ասում են, եթէ մարզիկը պատասխանատու մրցելոյթից առաջ լաւ տրամադրութիւն ունի, ուրեմն լաւ է նախապատրաստուել:

- Ճիշդ է ասուած, բայց՝ ոչ լրիւ: Որքան էլ լաւ նախապատրաստուես, մրցաշարքում անակնկալները չեն բացառուում: Այս փուլում ամենակարեւորը ֆիզիքական պատրաստութիւնն է, որովհետեւ, ինչպէս ցոյց է տալիս փորձը, այն վճռական նշանակութիւն է ունենում նրման մրցամարտերի ժամանակ: Իսկ նման մրցամարտի ընդհանրապէս լաւ նախապատրաստուելու համար ժամանակը իրօք քիչ է: Միջազգային կրոսմայսթէոններ Արչակ Պետրոսեանի, Սմբատ Լպուտեանի եւ փորձառու վարպետ՝ Օլէգ Դեմենտեւի հետ հանդամանօրէն վերլուծում ենք Ա. Սոկոլովի խաղացած պարտիաները, փորձարկում սկզբնախաղային տարբերակները:

- երկու խօսք ձեր մրցակցի՝ Ա. Սոկոլովի մասին:

- Երկրի նախկին ախոյեան Անդրէյ Սոկոլովը, անկասկած, տաղանդաւոր եւ համարձակ չեմպիոնատ է, վերջին տարիներին միշտ կայուն եւ բարձր արդիւնքներ է ցոյց տալիս: Մրցաշարից մրցաշար երիտասարդ կրոսմայսթէոնի խաղը յղկւում է, դառնում աւելի բովանդակալից: Անդրէյը պաշտպանւում է մեծ հնարամտութեամբ, իսկ երբ յարձակւում է, պարզապէս անկասելի է դառնում: Ցնայած մասնագէտներից չատերը իմ հնարաւորութիւնների աւելի բարձր են դնահատում, բայց կարծում եմ, որ ըսպասւում է յամառ ու հետաքրքիր պայքար:

- Վերջին տարիներին շատ հետաքրքիր, նաեւ կայուն խաղ էք ցուցադրում...

- Եթէ ոեւէ մէկը փորձում է դնալ չարքորուած ճանապարհով եւ չակել սեփական «ձեռագիր»ը, ստեղծագործական որոնումների ճանապարհին անպայման ունենում է սայթաքումներ, նոյնիսկ՝ անկումներ: Զէ՞ որ պրպտողներ են ստեղծում ինքնատիպ, գեղեցիկ, մնայուն գործեր: Ժամանակի ընթացքում բացայայտւում են չեմպիոնատի հնարաւորութիւնները, նա սկսում է աւելի կայուն արդիւնքներ ցոյց տալ: Իմ կարծիքով նրման մի բան կատարուեց նաեւ ինձ հետ:

- Ինչպէ՞ս կը բնութագրէիք ձեր խաղաոճը:

- Թերեւս դա աւելի լաւ արել է աշխարհի նախկին ախոյեան Մ. Տալը. «Վահանեանի խաղում, - ասել է նա, - ստեղծագործական կողմը մեծ աւելցուկով է, մարզականը՝ որոշ չափով, իսկ ահա գիտականը զրեթէ բացակայում է»:

Բնականաբար այժմ, երբ պայքարում եմ համաչխարհային թագի համար, աւելի չատ ուչադրութիւն եմ դարձնելու խաղի թէ՛ մարզական, թէ՛ գիտական կողմին:

- Նախմատը ի՞նչ դեր է ունեցել ձեր անհատականութեան ձեւաւորման գործում:

- Այդ հինաւուրց խաղը իմ մէջ դաս-

ՏՈՒՆԿ ՎԵՐԱԴԱՐՁ ՀԵՐՈՍԻՆ

ՀԱՅՐԱՊԱՏՈՒՄ

Ծննդավայրս Աղստևի ձորի մի ընդարձակ գյուղն է՝ Աղստև: Վերին Աղստև, որ ոչ մի կապ չունի Ներքին Աղստևի հետ, որ ոչ մի ընդհանուր բան չունի նրա հետ, ոչ մի ընդհանուր սահման: Ներքին Աղստևը ձգվում է Ղազանչիի ձորի հարավային ծայրից մինչև Ղազանչի գետի ափերը, իսկ Վերին Աղստևը ձգվում է Ղազանչիի ձորի հյուսիսային ծայրից մինչև Ղազանչի գետի ակունքները: Ներքին Աղստևը ունի 1200 տուն բնակչություն, Վերին Աղստևը՝ 300 տուն: Ներքին Աղստևը ունի երկու դպրոց, Վերին Աղստևը՝ մեկ դպրոց: Ներքին Աղստևը ունի երկու ջրաղաց, Վերին Աղստևը՝ մեկ ջրաղաց: Ներքին Աղստևը ունի երկու ակոսաջուր, Վերին Աղստևը՝ մեկ ակոսաջուր: Ներքին Աղստևը ունի երկու ճանապարհ, Վերին Աղստևը՝ մեկ ճանապարհ: Ներքին Աղստևը ունի երկու եկեղեցի, Վերին Աղստևը՝ մեկ եկեղեցի: Ներքին Աղստևը ունի երկու գերեզմանատուն, Վերին Աղստևը՝ մեկ գերեզմանատուն: Ներքին Աղստևը ունի երկու ...

— Ներքին Աղստևը ունի երկու ...

— Ներքին Աղստևը ունի երկու ...

—

ԻՍԻ ... Տէր եւ Տիկին Սարգիս Տէրտէրեան եւ զաւակները,

Տէր եւ Տիկին Ժերար Տէրտէրեան եւ զաւակները,

եւ ընտանեկան բոլոր պարագաները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց հօր եւ մեծ - հօր՝

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Յունուար 9-ին, 80 տարեկանին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Երեքշաբթի, Յունուար 14-ին, ժամը 14-ին Իսի Ս. Մարիամ - Ասուածածին Եկեղեցին, 6 Ավընիւ Պուտկէն, ուրկէ մարմինը կը փոխադրուի տեղւոյն գերեզմանատունը:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

Ըստ ողբացեալին փափաքին, ոչ ծաղիկ, ոչ ծաղկեպսակ, նախընտրաբար՝ նուէրներ հայկական կազմակերպութեանց կամ հաստատութեանց:

«ՅԱՌԱՋ». - Մեր ցաւակցութիւնները Տէրտէրեան ընտանիքներուն:

Տիկին Հերմինէ Փելիճեան, զաւակներն ու թոռները,

եւ ընտանեկան բոլոր պարագաները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց քրոջ, մօրաքրոջ եւ ազգականին՝

ՏԻԿԻՆ ԱՏՐԻՆԷ ՇԵԽԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Յունուար 10-ին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Չորեքշաբթի, Յունուար 15, ժամը 10·30ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Եկեղեցին, 15 ռիւ Ժան - Կուժոն, եւ մարմինը կը փոխադրուի Մարսէյլ, ուր թաղումը կը կատարուի Հինգշաբթի, Յունուար 16, ժամը 14·30-ին Սէն - Ժիւլիէնի գերեզմանատունը:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ՎԱՂՈՒՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

ՄԱՐՍԷՅԼ. - Տէր եւ Տիկին Ալպէր Պոդոսեան 2000 Ֆ.:

ՍԷՆ - ԿՐԱՄԻԷՆ. - Տիկին Մէտէֆ 200 ֆրանք:

«ՅԱՌԱՋ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՄԱՐՍԷՅԼ. - Օր. Մոնիք Լալայեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ իր մօր՝ Տիկին Շահանդուխտ Լալայեանի:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապ. Խաչի Վիէնի մասնաճիւղը իր ցաւակցութիւնները կը յայտնէ, ընկերուհի՝ Հայկանոյշ Թաշճեանի եւ Տէր եւ Տիկին Յովհ. Ղազարեանի, իրենց զաւկին եւ եղբօր՝ Փօլ Թաշճեանի դառնադէպ մահուան առթիւ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ պայծառութեան համար հետեւեալները Ազգ. Միութեան կը նուիրեն.-

Հայկ Տէյիրմէնճիօղլուի մահուան առթիւ. - Տէր եւ Տիկին Ճէպրայէլ Պահատուրեան 1000 Ֆ. Եկեղեցւոյ, Տէր եւ Տիկին Արման Պահատուրեան 1000 Ֆ. Եկեղեցւոյ, Սերոբեան ընտանիք 600 Ֆ. Եկեղեցւոյ, Տէր եւ Տիկին Հայրապետ Պաշար, Տէր եւ Տիկին Կղեմէս Օհանեան 300-ական Ֆ., Տէր եւ Տիկին Գեղամ Մխանօղլու, Տէր եւ Տիկին Ստեփան Եօրկանճեան, Էթիէն Քօլէ ընտանիք, Տէր եւ Տիկին Արտաւազդ Ապեան, Տէր եւ Տիկին Պավիէրա 200 -ական Ֆ.:

ՅԵՏԱՁԳՈՒԱԾ Է

ԳԷՈՐԳ ՊԱՏԼՐՃԵԱՆԻ ի պատիւ արուեստի ճաշը (Յունուար 19) յետաձգուած է Սերֆլը ռեփիւպլիքէնի խոհանոցին հրդեհին հետեւանքով:

Մօտ օրէն՝ նոր թուականն ու վայրը:

Ի ՑԻՇԱՏԱԿ

Տիկին Լիւսի Նշանեանի մահուան քառասունքին առթիւ, Արիս Ադամեան 1000 ֆրանք կը նուիրէ Դպրոցասէր Տիկնանց վարժարանին (ստանալ «Յառաջ»էն) եւ 1000 Ֆ. «Յառաջ»ին:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հայ Նախկին Դիմադրականներու Բարեկամական Միութեան աւանդական հոգեճաշը՝ փետրուար 23, Կիբակի, Միսաք Մանուչեանի եւ իր ընկերներու նահատակութեան 42-րդ տարելիցին առթիւ:

×

Մարսէյլի Սահակ - Մեսրոպ երգչախումբի հիմնադրութեան 8-րդ տարեդարձին հանդիսութիւնները փետրուար 2, Կիբակի:

Հ. Բ. Ը. Մ.
ՎԻԷՆԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Նախագահութեամբ՝
ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՒԵՏԻՔԵԱՆԻ

Կիբակի, Յունուար 19, ժամը 17-ին, Ս. Աբովեան Մշակոյթի Տան մէջ:
1, Quai Pajot — VIENNE

Գեղարուեստական բաժինն իրենց մասնակցութիւնը կը բերեն միօրեայ դպրոցի աշակերտները:

Մուտքը ազատ է:

LOTO

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

Կիբակի, Յունուար 19, ժամը 16-ին
Հայ Մշակոյթի Տան մէջ
9, rue de Madrid — 94140

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Բոլորին համար
բազմաթիւ նուէրներ — Պիւֆէ:

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ՅՕՓԻՄԷՆԻԶՄԸ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Աչխարհի բոլոր եկեղեցիները Միութեան համար Ազօթքի Շաբաթ մը կը կազմակերպեն Յունուար 18-էն մինչեւ 25: Այս տարի եկեղեցիները կ'ազօթեն «Դուք պիտի ըլլաք վկաներս» նիւթին չուրջ:

Այս առթիւ Լիոնի յարանուանութեանց պատասխանատուները նախատեսած են հետեւեալ արարողութիւնները. -

- Շաբաթ, Յունուար 18, ժամը 18-ին. - Պատարագ՝ Քրուա - Ռուսի Սէն - Տընի Եկեղեցւոյ մէջ:

Պատարագը կը մատուցանէ Լիոնի Արքեպիսկոպոս՝ կարդինալ Ա. ՏԸՔՈՒՐԹԻԷ:

Օրուան քարոզը կը խօսի Հայ Առաքելական Եկեղեցւոյ պատասխանատուն՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՔԱՐԵԱՆ

- Կիրակի, Յունուար 19, ժամը 10-ին. - Պատարագ՝ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ:

Պատարագը կը մատուցանէ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՔԱՐԵԱՆ

Հայածէս պատարագին իր ներկայութիւնը կը բերէ Լիոնի Արքեպիսկոպոս՝ կարդինալ՝

Ա. ՏԸՔՈՒՐԹԻԷ

որ կը խօսի քարոզ յաւուր պատշաճի:

Այս հոգեպարար արարողութիւններուն սիրով կը հրաւիրուի մեր ժողովուրդը հոգեպէս ներշնչուելու օրուան Սուրբ Խորհուրդով:

GALERIE DE LA CULTURE ARMENIENNE

HAY DISC

Un grand choix de
— DISQUES
— CASSETTES
— VIDEOCASSETTES
— FOULARDS
— BRIQUETS
— PLAQUETTES
— VERRES DECORES
— GADGETS ETC. ETC.
— LIVRES D'ARTS, ALBUMS, VITRAUX

TOUT EST ARMÉNIEN

DES NOVEAUTES A COUPER LE SOUFFLE

LOCATION DE VIDEOFILMS

ՀԱՅ ՏԻՍԿ

ԶԱՁՆԻ ՈՒ ԳԻՐԻ ԿԵԴՐՈՆ ՄԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

HAY DISC
35, rue Lamartine
Tél. 48 78 22 79 75009 Paris
M° Notre Dame de Lorette ou Cadet

OUVERT DU LUNDI AU SAMEDI DE 14H — 19H

CONCERT A L'OPERA DE MARSEILLE

Samedi 25 Janvier à 20 heures 45

par

SIPAN - KOMITAS
(Chœur mixte Arménien de Paris)

et

l'ORCHESTRE PHILHARMONIQUE DE MARSEILLE

Direction

GARBIS APRIKIAN

avec le concours de
SONIA NIGOGHOSSIAN (Mezzo-Soprano)

« Solistes de Chœur »
Thérèse DEYRMENDJIAN (Alto)
Meguerditch BOGHOSSIAN (Tenor)
René MARTAYAN (Tenor)

Au programme les œuvres de
K. ALEMSHAH, P. GANATCHIAN, G. APRIKIAN, A. TIGRANIAN

Concert organisé par la Croix Bleue des Arméniens de France
— MARSEILLE VILLE —

Pour réservation, contacter les numéros suivants :

91 93 89 83 — 91 90 21 60
42 45 05 36 — 91 66 09 06
91 91 48 85 — 91 50 68 71
91 41 74 89

PERMANENCE
Maison de la Jeunesse et de la Culture Arménienne
12 - 14, rue Saint Bazile — 13001 MARSEILLE
LUNDI - VENDREDI de 17h00 à 19h30 — JEUDI de 15h00 à 19h30
TELEPHONE : 91 50 15 09
Et à partir du 20 Janvier location Opéra de Marseille

ԱԻԱՆԴԱԿԱՆ

ԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՎԻԷՆԻ ՄԷՋ

Կիրակի, Յունուար 19, կէսօրէ վերջ ժամը 2·30–էն սկսեալ
Théâtre Municipal

Գեղարուեստական յայտագիրը ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ դպրոցի աշակերտներուն կողմէ, այս տարի ալ կազանդ Պապան իր այցելութեամբ պիտի ուրախացնէ փոքրիկները:

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉ–ի Պօմոնի մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ
Կիրակի, Յունուար 19, ժամը 14·30–ին
Պօմոնի միօրեայ Դպրոցի տօնածառի հանդէսին, տեղւոյն եկեղեցւոյ կից սրահին մէջ:

——— Ճոխ յայտագիր, ջերմ մթնոլորտ, թոմպոլա, եւայլն: ———

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ, ՄԻՍԱՔԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

«ՅԱՌԱՋ»Ի ԸՆԴՄԻՋԷՆ

1985-ԻՆ ԱՆՀԵՏԱՁՈՂ ԴԷՄՔԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Պատրաստեց՝ ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

(Բ. եւ վերջ)

ՖՐԱՆՍԱ.

Փարիզի հայ գաղութը, 1985-ին, կորսընցուց առաջին սերունդին պատկանող ծանօթ եւ յարգելի դէմքեր։

× *Երիցագոյնը, հաւանաբար, այդ դէմքերէն՝ Բժ. ԽԱՉԻԿ ՏԱՄԼԱՄԵԱՆ, Յունուար 27-ին։ Ա. Աչխարհամարտին եղած է Փարիզ, պինդ գաղարին մեկնած է Կիլիկիա, ապա Հայաստան՝ ըլլալով երեւանի հիւանդանոցին բժշկապետ։ 1922-ին անցած է Պալկան, հուսկ Ֆրանսա։ Բժիշկ Խաչիկ Տամլամեան տասընեակ տարիներ գործօն դեր ունեցած է գաղութի կեանքին մէջ եւ յատկապէս Կեսարիոյ Հայրենակցականի գլուխը։*

× *Փարիզի՝ ծագումով Հայ Նախկին Ռազմիկներու Միութիւնը կորսնցուց իր տարիներու արժանաւոր դրօշակիրը՝ ԳՐԻԳՈՐ ԱԴԱՄԵԱՆ, Փետրուար 27-ին։ Հայրենասէր, խանդավառ նկարագրի տէր, մշտնջենական ներկան հայկական հանդէսներուն։ Եղած է հիմնադիրներէն Ֆրանսահայ լսարանին։*

× *Կեսարիոյ Հայրենակցական Միութիւնը այլ կորուստ մը եւս կ'արձանագրէ, իր նախագահը՝ ՅԱԿՈԲ ԳՐԻԳՈՐ ՃՐՃՐԵԱՆ, Օգոստոս 23-ին։ Մասնագէտ, գաղութին ներս ունի մշակութային վաստակ։ Աչխատակցած է հայ մամուլին։ Ըրած է թարգմանութիւններ։ Հեղինակն է «Ծանօթ եւ անծանօթ Հայեր» գրքին, Ֆրանսերէն լեզուով։*

× *Այլ ծանօթ դէմք մը Փարիզի հայ գաղութին՝ ՀԱՅԿ ԹՕՓԱՔԵԱՆ որ կը կնքէ իր մահկանացուն, Օգոստոս 26-ին։ Եղած է Հ. Մ. Ը. Մ.ական, պատասխանատու պաշտօններ վարած է Հ. Բ. Ը. Մ.ի մէջ։ Աչխատակցած է «Յառաջ»ի։ Ջեռնհաս անձնաւորութիւն Ֆրանսական առեւտրական շրջանակներուն մէջ։*

× *Մի չա Փարիզ, Փետրուար 19-ին, կը մեռնի Աբչակ Ջամալեանի պատակը՝ ԱՐՄԻԿ ՋԱՄԱԼԵԱՆ, որ եղած է միջազգային իրաւաբանական խորհրդատու։ Մասնակցած է հայ կեանքին մասնաւանդ երիտասարդ տարիներուն, Հայ Աբիներու Միութեան մէջ յատկապէս։*

× *Փարիզէն Քանն անցնելով, կ'արձանագրենք նահատակ դրագէտ՝ Ռուբէն Զարդարեանի զաւկին՝ ՌԱՓԱՅԷԼ ՉԱՐԴԱՐԵԱՆԻ մահը, Յունուար 24-ին։ Օժտուած բանաստեղծական եւ գրական ձիրքերով։ Ունի քնարական շունչով գրքոյկ մը՝ «Դու եւ ես»։ Աչխատակցած է «Հայրենիք ամսագրի»՝ «Յառաջ»ի։ Ռափայէլ Զարդարեան ապրած է Թիֆլիս, Երեւան եւ Փարիզ։*

×

Հ. Ը. Դաշնակցութիւնը եւս կորսնցուց կարգ մը երէց չարքայիններ, որոնք դիմագիծ մը տուին կուսակցութեան եւ առաջին հերթին՝

× *ԱՇՈՏ ԻՍԱՀԱԿԵԱՆ, որ իր մահկանացուն կնքեց Փարիզ, Մայիս 31-ին։ Կանուխէն մտած է դաշնակցութեան չարքերը, մասնակցած է Փետրուարեան ապըստամբութեան, գործած է Պարսկաստան, Սուրիա, Լիբանան։ 1931-ին անցած է Ֆրանսա ուր տասնեակ տարիներու բեղուն գործունէութիւն ունի որպէս կուսակցական գործիչ, կեդրոնական կոմիտէի անդամ։ Աչխատակցած է «Յառաջ»ի։ Աչատ Իսահակեանով բախտորոշ մէկ շրջանի վերջին վկաներէն մէկը եւս կը մեկնի։*

ՊԵՏՐՈՍԵԱՆ։ *Ջեռներէց, կազմակերպիչ եւ առանդուն ղեկավար։ Եղած է դասախօս Երեւանի բազմարուեստից հիմնարկը։ Հեղինակն է պետական բազմաթիւ աչխատանքներու։*

× *Նախկին նախարար՝ ԳԱՌՆԻԿ ՍԵՐԳԷՅԻ ԴԱՐԲԻՆԵԱՆ, որ մեծ դեր ունեցած է Հայաստանի հիւսուածեղէնի արտադրութեան զարգացման մէջ։*

× *Հայաստանի քաղաքական աչխարհին պէտք է կապել նաեւ ԵԴՈՒԱՐԴ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ, անդամ Հելսինքիի Հայաստանի խումբին։ Ձերբակալուած էր 1982-ին եւ երեք տարի բանտարկութեան դատապարտուած։ Զոհ մը վարչակարգին։ Իր մահուան առիթով հրատարակուած դիկոյցը կը չեշտէ որ «անոր մահը կ'աւելնայ երկար թափօրին այն տեսակի բանտարկեալներուն, որոնք մեռան խորհրդային արգելարաններուն մէջ, ի հեճուկս մարդասիրական տարրական կանոններուն»։*

×

Գրական աչխարհի կորուստներ.-

× *Երիտասարդ եւ խոստմնալից բանաստեղծ՝ ԱՇՈՏ ԱՒԴԱԼԵԱՆ, խմբագիր «Պիւռեր կանչ» թերթին։ Իր առաջին գործերը «Նաւասարդ», «Արծաթէ օր» կը յայտնաբերէին հասունցող տաղանդ մը։*

× *Ակադեմիայի թղթակից անդամ՝ ԱՇՈՏ ԱՐՍԷՆԻ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ։ Մասնագէտ գրաբարի, հայերէն լեզուի պատմութեան եւ արդի հայերէնի կառուցատեքի, որոնց մասին ունի կարեւոր դիտական ուսումնասիրութիւններ։*

× *Թարգմանիչ՝ ՀՐԱՉ ԲՈՒՋԻԿԵԱՆ։ Անգլերէնն եւ ֆրանսերէնն բազմաթիւ վէպեր թարգմանած է հայերէնի, ինչպէս՝ «Քեռի Թոմասի խրճիթը» կամ Պալզաքի՝ «Հովտաչուշանը»։*

× *Բանասէր՝ ՍԱՀԱԿ ԲԱՋԵԱՆ։ Հրատարակած է հայ գրականութեան պատմութեան վերաբերեալ յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ։*

× *Բանաստեղծ եւ թարգմանիչ՝ ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ։ Հրատարակած է «Մէկօրէն» բանաստեղծութիւններու հատորիկ մը։ Թարգմանած է մասնաւորաբար Շելլէյը, Լեսինկի, Էքերման։*

× *Արձակագիր՝ ՄԻՔԱՅԷԼ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՇԱԹԻՐԵԱՆ։ Բազմավաստակ անձնաւորութիւն՝ դրագէտ, լրագրող, Գ. Սունդուկեան Թատրոնի անօրէն, չարժարուեստի գլխաւոր վարչութեան պետ, Գրողներու Միութեան քարտուղար, «Գրական Թերթ»ի խմբագիր։ Իր ծանօթ վեպերէն՝ «Զինուորներ», «Աչք արմատինու մասին», «Յեղափոխութեան գինեբոլը», «Արծաթէ դար»։*

× *Վաստակաւոր ուսուցիչ եւ թարգմանիչ՝ ՎԱՐՍԵՆԻԿ ԵՍԱՅԵԱՆ։*

Գիտական աչխարհի կորուստներ.-

× *Երեւանի Ակադեմիայի անդամ՝ ԲԵՆԻԱՄԻՆ Ե. ՄԱՐԳԱՐԵԱՆ։ Իր գործօն մասնակցութիւնը բերած է Բիւրականի աստղագիտական կազմակերպական գործին մէջ։ Հեղինակն է բազմաթիւ գիտական աչխատանքներու։ Անդամ էր միջազգային միութեան։*

× *Երեւանի բժշկական հիմնարկի վիրաբուժութեան ամպիոնի վարիչ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՃՈՂԱՐԵԱՆ։ Իր գիտական հետազօտութիւնները ամփոփուած են տասընեակ հրատարակութիւններու, մենագրութիւններու եւ ուսումնական ձեռնարկներու մէջ։ Անդրանիկ ճաղարեան եղած է նաեւ վաւերական մանկավարժ։*

× *Երեւանի Ակադեմիայի անդամ՝ քիմիագէտ՝ ՄԱՆՈՒԿԼ ՄԱՆՈՒԿԼԵԱՆ։ Մեծ նպաստ բերած է Հայաստանի մէջ անօրգանական քիմիայի եւ քիմիական գիտարուեստի զարգացման մէջ։*

ԻՐԵՆՑ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԵՐԸ

Նկարիչ - բանաստեղծ Սալվատոր Ռոզա (1615 - 1673), ռոմանթիկ՝ իր պատառներով, սակայն լուսամիտ՝ իր անձնական կեանքին մէջ, մինչեւ վերջին պահը կը մերժէ ամուսնանալ իր սիրուհիին հետ որմէ բազմաթիւ զաւակներ ունի։ Կրօնաւոր մը կը չանայ համոզել զայն, խօսելով դրախտին դռները փակ գտնելու հաւանականութեան մասին, եթէ չարունակէ յամառիլ։

- Էհ, լաւ, կը պատասխանէ հեղնանքով ան, եթէ դրախտ մուտք գործելու համար պէտք է կոտոշներ ունենալ, կը հաւանիմ ամուսնութեան։

Զուարթ՝ իր սովորութեան համաձայն, շանսոնիէ էմիլ Կուտօ երբ կը տեղեկանայ թէ բարեկամները արտասուալից այցելութեան եկած են, կ'ըսէ։

- Հոս չէ իրենց տեղը։ լսէք որ սրճարան երթան ինծի սպասելու եւ սկսին պրիճը...։

Հրամանատար Լէսթիկիէր (1543 - 1626) կ'ըսէ իր խոստովանահօր, վերջին ծայր քաղաքավարութեամբ։

- Մնաք բարով վարդապետ, չնորհակալ եմ։

- Պարոն, բազմաթիւ հիւանդներ տեսած եմ որոնք առողջացած են, կը պատասխանէ Աստուծոյ պաշտօնեան։

- Թերեւս, կ'ըսէ հրամանատարը սակայն անոնք ինծի պէս ութսուներեք տարեկան չէին։

Իսկ արքայ Վուազլոն բերել կուտայ կապարէ իր դագաղը ու խօսքը ուղղելով իր ծառաներէն մէկուն, կ'ըսէ։

- Ահաւասիկ, ուրեմն, վերջին ոչտանկոթիս, յուսամ այս մէկին ալ դոզնալու փափաք չես ունենար։

Համբաւաւոր Կուլիւն որուն դիմանկարները ուրուագծած է Թուլուզ - Լօթրէք եւ զոր հնահաւաքներ փոզոցը դռած ու հիւանդանոց փոխադրած են, ութ օր առք կ'ըսէ։ «Գէշութիւն չըրի, գժոխք պիտի չերթամ» ու աչքերը կը փակէ յաւիտեան։

Պետրոս Ա. ցարը մահամերձ է ու կը փափաքի բաներ մը դրել։ դժուարութեամբ կը սկսի։ «Բոլորը յանձնեցէք...»։ Երբեք չի դիտցուիր թէ ով էր ցարին կը տակակառարը, որովհետեւ յաջորդ օրը կը մահանայ ան։

Մառի Թիւտոր թագուհին որ երբեք չ'կրցած մարսել Քալէի պարտութիւնը, մեռնելէ առաջ կ'ըսէ։ - «Եթէ սիրտս բանայիս, հոն փորագրուած պիտի գտնէիր Քալէի անունը»։ Իր խորթ քոյրը Էլիզապէթ թագուհին կը մերժէ լքել իր վարչական պարտականութիւնները։

- Տիկին, ժողովուրդին գոհունակութիւն պատճառելու համար պէտք է անկողնին մտնէք, կը պնդէ խորհրդատուներէն մէկը։

- Պարոն, «պէտք է» բացատրութիւնը չի գործածուիր երբ իշխանաւորներու խօսք կ'ուղղեն։

Սակայն չի տեւար իր մարմինը, կը տկարանայ, չորս օր եւ չորս գիշեր անչարժ ու լուռ կը մնայ, մէկ մատը բերնին։

Բողոքներու կարգին է Թէօֆիլ ոը Վիօ։ Բարձր ըերմութիւն ունենալով հանդերձ կ'ուզէ ... ձուկ ուտել։ Բժիշկը կը մերժէ. կառաղութենէն քերթողը կը կորընչէնէ իր խօսելու կարողութիւնը, յետոյ տեսողութիւնը եւ վերջապէս լսողութիւնը։ Նոյն երեկոյեան կը մեռնի։ Երեսունվեց տարեկան է։ Երեք տարի առաջ իր անհաւատութեան պատճառաւ մինչեւ իսկ ողջակիզումի դատապարտուած էր, յետոյ փրկուած։

Ռուս վիպագիրը Կոկոլ, առեղծուածային այդ տիպարը, վերջին չունչին կը զոչէ։

- Սանդուխ մը... չուտ, սանդուխ մը։

Այս տարօրինակ պահանջին բացատրութիւնը թերեւս պահուած ըլլայ իր նամակագրութեան մէջ, ուր կայ հետեւեալ նախադասութիւնը։ «Թերեւս արդէն պատրաստ է երկինքէն մեզի ձգուելիք սանդուխը, եւ այն ձեռքը որ պիտի օգնէ անկէ վեր մագլցելու, արդէն երկարած է մեզի»։

Զղասպառ՝ վան Կոկ ատրճանակը կը պարպէ ինք իր վրայ։ Հոգին աւանդելէ առաջ եղբօրը՝ Թէոյին թեւերուն մէջ, որ կը վստահեցնէ թէ պիտի փրկուի, ան կը մրմնջէ։

- Տխրութիւնը ամբողջ կեանք մը պիտի տեւէ։

Իր հօրը մահուան օրը, նկարիչը արդէն ըսած է։ «Մեռնիլը դժուար է, սակայն ապրիլը աւելի՛ եւս դժուար»։

Տիկին Քիւրի կը մերժէ բժիշկը որ կ'ուզէ ներարկում մը ընել իրեն։

- Չեմ ուզեր, կ'ուզեմ որ հանգիստ ձգեն զիս։

Պարուհի Աննա Փաւլովայի վախճանը

ՀԻԿԷԹ ԱԺՏԵՐԵԱՆ ՖՐԱՆՑ ԼԻՍԹԻ ԳՈՐԾԵՐՈՎ

Այս տարի մահուան հարիւրամեակն էր հունգարացի մեծանուն դաշնակահար եւ յօրինող Ֆրանց Լիսթի, որուն դաշնակի համար յօրինած գործերը թէքնիք տեսակէտով ամենադժուարին եւ իրենին ըբականութիւն մը կը ներկայացնեն, ինչպէս Բականինի եղած է ջութակի համար:

Գործադրութիւնը այս հեղինակութիւններուն կը պահանջէ ոչ միայն ռօմանթիք երաժշտութեան մը յայզերը դրսեւորելու դիտակցութիւն, այլ մանաւանդ ունենալ ֆիզիքական ուժեղ կազմուածք եւ կարողութիւն եւ շատ զօրաւոր թէքնիք:

Մեր դաղութին հանրածանօթ դաշնակահարուհին Հիւկէթ Աժէտէրեան որ տիրացած է վերոյիշեալ յատկութիւններուն, իր վերջին ըհսկիթալը ամբողջութեամբ նուիրած էր Ֆրանց Լիսթի հեղինակութիւններուն, իր կողմէ եւս նչելու համար այս հարիւրամեակը:

Դժուարահաճ ընարութիւններու եւ անկարելին կարելի դարձնելու համար իր յարատեւ աշխատանքներուն մօտէն տեղեակ եմ: Իր ամենամեծ դոհացումն է յաղթահարելը աննուաճելի կարծուած գործ մը:

Զէի կրցած ներկայ ըլլալ նուագահանդէսին, բայց, տակէ աւելի մեծ հաճոյքը ունեցայ, յետոյ, ունկնդրելով յայտագրին ամբողջութիւնը որ ձայներիզի վրայ առնուած էր:

Աւելի մեծ հաճոյք նկատեցի, որով ձայներիզը կարելիութիւն կուտար լսելու իւրաքանչիւր կտոր մէկ քանի անդամ:

Հիւկէթ Աժէտէրեան Լիսթի գործերուն յայտ մեկնաբանող մըն է, հակառակ իր փոքրամարմին եւ նիհար կազմուածքին, արտակարգ ուժգնութիւն ունին իր դաստակներն ու մատները:

Բազմաթիւ են դաշնակահարներ, որոնք վարանումով պիտի մօտենային այն գործերուն զոր Աժէտէրեան նուագած էր անվերապահ ինքնավստահութեամբ եւ տիրապետող ուժականութեամբ:

Ցիշենք Լէժանտը, Քոնսոլատիոնը, Պալլատը, այլ մանաւանդ սադայելական մեքենականութիւն եւ ուժգնութիւն պահանջող համբաւաւոր Մածէթթան:

Այս կտորին ունկնդրութիւնը հասարակութեան մօտ առեղծած էր մեծ ու անկեղծ խանդավառութիւն, ապացոյց՝ անվերապահ եւ երկարատեւ ծափահարութիւնները:

Թէքնիք կարողութեան առընթեր Հիւկէթ Աժէտէրեան կրնայ բանաստեղծական դարձնել իր նուագը երբ կը մեկնաբանէ չատ ծանօթ Ռեվ տ'Ամուր:

Կիսախաւար սենեակի մը մէջ առանձնացած ձայներիզ մը ունկնդրելը ինքնամփոփ ու նոյնիսկ դոց աչքերով, նոյնքան եւ թերեւս աւելի չահեկան է, երբ առանձինն ես նուագին հետ, աչքի առջեւ չունենալով բազմութիւն մը եւ աւելորդ բաներ:

Նուագահանդէսին ներկայ չըլլալս ոչ մէկ կերպով զրկանք մը եղած էր, ընդհակառակն ձայներիզը ունկնդրելով միանդամայն աչքի առջեւ ունեցայ սրահին մէջ տիրող խանդավառութիւնը:

Ա. Պ.

Մեր Ծնունդը

Տարիները անողոքաբար կը թաւալին ու իրարու կը յաջորդեն աւանդական տօները: Ուրիշներու կարգին մենք ալ կամայ - ակամայ տօնեցինք հայկական Ծնունդը, Յունուար 4-ին, Շաբաթ յեսմիջօրէին Մոնմորանսիի Հանգստեան Տան մէջ:

Պաշտօնական անձնաւորութեանց յամանումէն եաք Ֆրանսական փառերդով ու Բան Փորոտանի յոտնկայս ունկընդրութեամբ հանդիսին բացումը կատարուեցաւ: Դաշնակը կը նուագէր Տիկին Արփինէ Առաքելեան:

Ներկաներուն մէջ էին Ենթանախարար Պ. Ժոզէֆ Ֆրանչեսքի, Գիւտ Եպիսկոպոս, Գերապայծառ Կապրոյեան, Վալ'Ուազի նահանգապետը եւ ուրիշ դէմքեր:

Աղքատախնամի նախագահը Պ. Ժ. Գալճեան հակիրճ վերաքաղով մը անդրադարձաւ սկիզբէն մինչեւ այսօր այս հաստատութեան գործունէութեան: Ան իր խօսքերը աւարտեց չնորհակալութիւն յայտնելով Ենթանախարարին, որուն միջամտութեան չնորհիւ արդէն բարձրացած է երեք - յարկանի յատելեալ նոր չէնքը:

Պ. Ժոզէֆ Ֆրանչեսքի իր խօսքերուն մէջ տուաւ թիւերը Ֆրանսայի մէջ ապրող տարեց սերունդին. զանոնք նմանցուց ճոխ մատենադարանի մը, որմէ կ'ակնկալուէր չատ մը գիտելիքներ, փոխանցելի յաջորդ սերունդներու: Ան ըսաւ թէ երկրին մէջ 600 հազար տարեց թոշակառուներ կան այսօր, որոնց թիւը 2000 թուականին պիտի բարձրանայ մինչեւ 2 միլիոնի:

Պ. Ժոզէֆ Ֆրանչեսքի իր խօսքերը վերջացուց հետեւեալ հայերէն մաղթանքով.

- «Շնորհաւոր Նոր տարի եւ բարի Ծնունդ բոլորիդ»:

Ապա գործադրուեցաւ գեղարուեստական բաժին մը, որուն ընթացքին Ստեփան եւ Վարուժան Վարդանեանք (ջութակ եւ թաւ - ջութակ), Օր. Դաւիթեանք (դաշնակ) եւ Պ. Օլիվիէ Պոլտոնիէ (սրընդին) բաղկացած քառեակը նուագեց եւրոպական ու հայկական դասական եղանակներ:

Ընդառաջելով ընդհանուրին փափաքին Ռոզի Արմէն երգեց «Անոյշ Երեւան» եւ Կոմիտասի «Գարուն ա, ձիւն ա առել»ը:

Մեր տան ներկայ տնօրէնուհիին մայրը Տիկին Միչէլ Եավէր, ծնունդով Ֆրանսուհի, հարազատ հայկական առողանութեամբ ու ապրումով արտասանեց Սիլվա Կապուտիկեանի «Խօսք Իմ Որդուն»ը, հիացում պատճառելով բոլոր ներկաներուն:

Պ. Ժոզէֆ Ֆրանչեսքի խանդավառուած այս արտասանութենէն, խնդրեց որ այդ բանաստեղծութիւնը թարգմանուի իրեն համար:

Հանդիսութիւնը վերջ գտաւ խանդավառ մթնոլորտին մէջ տօնական այդ օրուան, որուն ընթացքին մեր մեկուսացեալ մանիկներն ու պապիկները մասամբ դուրս եկած էին իրենց ամէնօրեայ միապաղաղ հոգեվիճակէն:

Բ. Հ.

ԳԱՂԱՒԻԹԷ ԳԱՂԱՒԻԹ

ՊՈԼՍՈՑ կեդրոնական Սանուց Միութեան սրահին մէջ, Դեկտեմբեր 12-ին, տեղի ունեցած է Արփի Պիւլպիւլի երգահանդէսը, հոծ բազմութեան մը ներկայութեամբ: Յայտագրի առաջին բաժնին երգչուհին մեկնաբանած է Պրամսէն եւ Հ. Պէրպէրեանէն հինգական երգեր: Երկրորդ բաժնին ներկայացուած է Կոմիտասի երգերէն վեցնջ մը՝ կանչէ կռունկ, Գարուն ա, Քէլէր ցոլէր, Շողեր Լան, Անտունի, Կռունկ եւայլն:

×

ԼԻԲԱՆԱՆԻ Հայոց առաջնորդը՝ Արամ Եպիսկ. Քէշիշեան, Ազգ. Իշխանութիւնը ներկայացնող պատուիրակութեամբ մը, Նոյեմբեր 30ին, գացած է Տրիպոլիս պաշտօնական քանի մը այցելութիւններ տալու համար: Նոյն օրը, ժամը 11-ին Առաջնորդը այցելած է վարչապետ Ռաշիտ Քարամէի եւ դնահատած անոր հետեւողական ճիգերը՝ Լիբանանի միութեան եւ խաղաղութեան համար: Ռաշիտ Քարամէ իր կարգին չեչտած է քրիստոնեայ - իսլամ դոյակցութեան պահպանումը եւ առաւել զօրացումը եւ անդրադառնալով հայ համայնքի դերին՝ ըսած է. «Մեր կապը մեր սիրելի հայ համայնքին հետ հին է և չարունակական, հիմնուած ամուր սկզբունքներու վրայ: Այն ինչ որ կը բխի սկզբունքէ մը՝ կը մնայ ամուր եւ չազդըւիր պատահական փոթորիկներէ»:

Ժամը 12·30-ին, Առաջնորդն ու պատուիրակութիւնը այցելած են նախկին նախագահ Սուլէյման Ֆրէնճիէի, Զգարթայի մէջ: Կէսօրէ եաք Առաջնորդը այցելած է քաղաքապետին եւ չնորհակալութիւն յայտնած Հայութեան նկատմամբ ցուցաբերած իր հոգածու վերաբերումին համար: Քաղաքապետը դնահատելով Հայութեան պարկեշտ ու հաւատաւոր քաղաքացիութիւնը ըսած է. «Հայերը այնքան սերտօրէն կապուած են այս քաղաքին, որ վերջին ռմբակոծումներու ընթացքին չատեր փախան, բայց Հայերը մնացին»: Նոյն օրը Առաջնորդը այցելած է նաեւ Հ. Մ. Ը. Մ.ի ակումբը, Մարոնի համայնքի առաջնորդին եւ նահանգապետին:

Յաջորդ օրը՝ առաւօտեան, Ս. Հոգեգալստեան Եկեղեցւոյ մէջ պատարագ մատուցած է: Քարոզած է Արամ Եպիսկ.: Ցաւարտ պատարագի, դպրոցի սրահին մէջ տեղի ունեցած է ընդունելութիւն մը, որուն ներկայ եղած է նաեւ նահանգապետը: Խօսք առած են Ազգային Նուագարանի - Արիմեան վարժարանին տնօրէնը՝ Վաչէ Հարմանտայեան, քաղաքական ժողովի առենապետ տօքթ. Միսաք Արզումանեան եւ Առաջնորդը: Ապա թաղական խորհուրդը ճաշ մը տուած է ի պատիւ Առաջնորդին եւ պատուիրակութեան: Ներկայ եղած են երեք կուսակցութեանց եւ բարեսիրական կազմակերպութեանց ներկայացուցիչները: Կէսօրէ եաք Առաջնորդը հանդիպում ունեցած է Թաղական նուիրեան հետ եւ դիչերը վերադարձած Պէյրութ:

×

ՊԼԻՑՐՈՒԹի «Ռապիէ քլապ»ի մէջ, Նոյեմբեր 30-ին, բացուած է Լ. Օ. Խաչի ձեռարուեստի աշխատանոցին կողմէ պատրաստուած գործերու ցուցահանդէսը, որ տեւած է չաբաթ մը: Դեկտեմբեր 4-ին ցուցահանդէսը այցելած է Լիբանանի նախագահին կինը՝ Ճոյս Ճէմայէլ:

L'ARMÉNIE EST AU FAUBOURG

Վերոյիշեալ խորագրին տակ, Նոյեմբեր 28-ի «Էսթ ռեփիւպլիքէն» օրաթերթը արձագանգ կը հանդիսանայ հայկական ճաշարանի մը բացման, շրջանին մէջ (Մոնպելիառ): Կը յիշէ թէ անոր նախաձեռնողն է յոգնիլ չզիջացող «Քուիսին տ'Ալզասի» տէրը՝ Միչէլ (Մուշեղ) Տէրեղիայեան, որ բացման օրը, յայտած էր ստեղծել տեղական քնոյթ ունեցող ելոյթի մը կողքին, հայկական զուարթ մօնակատարութիւն մը: Այս բացման ներկայ եղած են մեծամասնութեան թէ ընդդիմութեան պատկանող շրջանի քաղաքական անձնաւորութիւններ:

Թերթը հրատարակած է նաեւ խոհարարին նկարը, իր պատրաստած ճաշերով...

ԶԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՃԱՇ Ի ՊԱՏԻՒ ԵՐԷՑՆԵՐՈՒ

ԼԻՈՆ. - Ծննդեան տօնը առիթ է, ամէն տարի, Լիոնի Հայ Տիկնանց Միութեան իրարու քով բերելու զաղութին մամիկներն ու պապիկները եւ հրամցնելու անոնց ճոխ ճաշ մը:

Այսպէս, Յունուար 6-ին, եկեղեցական արարողութիւններէն վերջ՝ որոնք տեղի ունեցան հոծ բազմութեան մը ներկայութեան, ինչ որ Նորվան Եպիսկոպոս, իր քարոզին մէջ, ուրախութեամբ նկատեց - այդքան ժողովուրդ անսպասելի էր Երկուչաբթի օրուան մը համար - Զբօրհնէքէն վերջ, ուրեմն, ներկայ ժողովրդին մէկ մասը տեղ բռնեց Հայ Տան սրահին մէջ, ծաղկազարդ սեղաններու չուրջ:

Կազմակերպիչ մարմինը դնահատելի զաղափարը ունեցած էր ճաշին հրաւիրելու նաեւ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Ազգ. Միութեան նախագահ Պ. Ղազարեանը եւ իր գործակիցները, Եկեղեցւոյ հոգաբարձութեան անդամները: Հրաւիրուած էր նաեւ կաթոլիկ համայնքին հովիւ՝ Մալճեան վարդապետ եւ Աւետարանական Հայերու ներկայացուցիչը, որ բացակայ էր սակայն: Պատուոյ սեղանին չուրջ, Նորվան Եպիսկոպոսի կողքին, տեղ բռնած էր, նմանապէս, Պոլսոյ Պատրիարքարանի անձնակազմէն՝ Պ. Եդ. Մոմճեան, եւ իր տիկինը՝ որոնք Ֆրանսայի մէջ չրջապտոյտ մը կը կատարեն:

Սեղաններուն կը սպասարկէին, բնականաբար, մխութեան տիկիններն ու օրիորդները՝ միշտ ժպտուն: Տիկնանց Միութիւնը - նախագահ՝ Տիկին Մատըլէն Պասմաճեան - ներկայիս ունի չիսունեւերկու անդամուհիներ՝ բոլորն ալ պատրաստ գործակցելու, երբ կայ ընելիք մը՝ յօգուտ Եկեղեցիին, յօգուտ զաղութին, յօգուտ հիւանդներու, անկարներու:

Հաւաքոյթը անցաւ ուրախ մթնոլորտի մէջ: Տիկիններ՝ Հէլէն Միքայէլեան եւ Ժաքլին Պետրոսեան, փոխ - նախագահուհի, փոխն ի փոխ միջոցներ գտան արձարծելու ոգեւորութիւնը սրահին մէջ: Ոմանք հրաւիրուեցան խօսք առնելու:

Զատիկ արեղայ յիշեց թէ առաւօտուն, Նորվան Եպիսկոպոս չէշտը դրաւ Տօնը յատկանշող երեք բաներու վրայ՝ մտերմութիւն, սէր, բարեկամութիւն, եւ ըսաւ թէ ներկայ հաւաքոյթը առանց հաճելի մէկ երեւոյթն է:

Մալճեան վարդապետ ընդգծեց զպրոցի մը գոյութեան կարեւորութիւնը եկեղեցիին քով: Եկեղեցին եւ զպրոցը, քով քովի, եղած են միշտ, դարերու ընթացքին, հայութեան տեւականութեան յենակէտը: Յայտարարեց որ՝ Լիոնի մէջ ամէնօրեայ հայ վարժարան մը ունենալը անհրաժեշտութիւն մըն է:

Պ. Մոմճեան առաւ լուրեր Պոլիսէն՝ ուր բաց են չուրջ երեսուն հայ եկեղեցիներ, եւ նոյնքան թիւով զպրոցներ: Յայտնեց իր զոհունակութիւնը տեսնելով որ, ինչպէս հոն, Ֆրանսայի մէջ ալ Հայը կը ջանայ Հայ մնալ:

Կատարուեցան երգեր, արտասանութիւններ ներկաներուն կողմէ, մինչ ուրիշ ներկաներ, երբեմն, դժուարութիւն ունէին լուռ մնալու, ունկնդրելու: Իրաւ է որ երբորդ եւ չորրորդ տարիքի անձերը, եթէ նոյնիսկ չապրին ալ առանձին, ընդհանրապէս կը տառապին խօսակիցի մը բացակայութենէն, ու այսպիսի հաւաքոյթ մը՝ ուր քով - քովի եկած են հին կամ նոր ծանօթներ, փնտռուած առիթ մըն է լուռ չմնալու ... լայնօրէն կ'օգտուէին առիթէն:

Վերջակէտը դնելէ առաջ, հաճելի է մեզի ըսել թէ Տիկնանց Միութիւնը յաջողութեամբ սկսաւ 1986 տարուան իր ձեռնարկներուն չարքը: Ի՞նչ ուրիշ ձեռնարկներ: Կը յուսանք ունենալ առիթներ զրելու այդ մասին:

ՎԱՂԻՆԱԿ ՄԻՍԻՔՃԵԱՆ

իրական կարապի երգ մը կ'ըլլայ: «Կարապի Լիճը»ի մեկնաբանը մահուան վայրկեանին կը հրամայէ. «Կարապի զգեստները պատրաստեցէ՛ք»:

Մինչդեռ օփէռէթներու թագուհին Հօրթանս Շնայտէր կը չիջի խաղաղութեան մէջ. «մոռացումի լռութիւնը կ'ուզեմ մինայն»:

Քլօտէլ ամենայն հանգստութեամբ կը վատահեցնէ.

- Զզեցէք զիս առանձին մեռնիմ, չեմ վախնար:

Անարէ փիտ, որպէս թէ ուզէր ինքզինքը համոզել, կ'ըսէ.

- Վատահութիւն ունիմ:

Որո՞ւ: Ի՞նչ բանի: Ան դրած է. «Թէ հոգիին կեանքը կը չարունակուի մարմնին քայքայումէն եաք, ինձի համար անընդունելի է, անկարելի բան մը, որուն դէմ կը բողոքէ տրամաբանութիւնս:

Փրուսթ կը փափաքի Բիլի զարեջուրը խմել, որուն հաւատարիմ յաճախորդն էր. մարդ կը ղրկէ բերել տալու, յետոյ կ'ըսէ. «մնացածն ալ զարեջուրին պէս է. չատ ուշ պիտի հասնի»:

Խոմոն Ռոսթան վարակուած է սպանական կռիւէ. յաղթական կը զոչէ իր կնոջը. «մի՛ լար, ես վայելեցի յաղթանակը»: Նախապէս, ան վերջին վայրկեաններուն քովը գտնուած է Հանրի Պէքի, որ անկարկելով Սիրանօ տը Պէրժըրաքի արձանագրած յաջողութեան կ'ըսէ. «Զեր յաղթանակը մեծ է Ռոսթան, սակայն աւելի պիտի մեծնայ. ան պիտի լեցնէ ամբողջ դարը»:

Ռոսթան հպարտ է մինչեւ այն պահը ուր դրագէտ Մ'լեֆէլ նախանձով դիտել կուտայ, «խեղճը սկսաւ զառանցել»:

Քսանմէկ տարեկանին Արծուիկը՝ Նափոլէոնին տղան կ'ըսէ. «Պիտի մեռնիմ, մայրս կանչեցէք»: Նոյն փափաքը կ'ունենայ Անաթոլ Ֆրանս, որ կը վախճանի թէեւ ութսուն տարեկանին:

Շարլոթ իշխանուհին, Անգլիոյ պահապետառանդը կ'ուզէ ոչ թէ մայրը, այլ մուսինը, որ կը սպասէ քովի սենեակին մէջ: Ան ծնունդ տուած է մեռած երեխայի մը, ինք ալ մահամերձ է. դայեակը ինքզինքը պատասխանատու նկատելով այս դժբախտութեան անձնասպան կ'ըլլայ, երեքի բարձրացնելով մեռեալներու թիւը:

- Եւ մա՞յրս. կը հարցնէ Շառլ Թ. ինչպէս թուլուզ Լօթրէք.

- Մայր ... միայն դուն:

Ուրիշ մը, Ռոզ Պէօրէ, «չնորհակալ եմ պարոն Ռոսէն», կը մրմնջէ երբ կը տեսնէ թէ ան կ'ընդունի վերջին պահուն իր մատը անցընել մատանին. այս կերպով Ռոսէն երախտապիտութիւնը կը յայտնէ աւելի քան չիսուն տարուան լաւ, ուղղամիտ ծառայութեան:

Ա Ղ Ո Տ Ք

Ես ալ ինկայ ագոտքի,
Ինկայ ագոտքի ես ալ,
Ինկայ ագոտքի ես ալ,
*Ինկայ ագոտքի ես ալ

ՏԻԿԻՆ ԱՐՈՒՍԵԱԿ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

յուղարկաւորութիւնը կը կատարուի Հինգշաբթի, Յունուար 16, ժամը 15·45ին Փարիզի Ս· Յովհաննէս - Մկրտիչ Եկեղեցին:

Մահազդին մանրամասնութիւնները՝ մեր յաջորդ թիւով:

Le Club Franco-Arménien d'Antony

présente la troupe
« LES BALLETS ARMENIENS »
sous la présidence de
Patrick DEVEDJIAN
maire d'Antony
le Vendredi 17 Janvier à 20h30 précises
au Théâtre Firmin Gémier
place du Marché d'Antony

Pour se procurer les billets, s'adresser en téléphonant :
46 68 31 13 à Arménag MOVSESSIAN
46 66 07 95 à Anahid MOMDJIAN
42 46 05 58 à CRDA - 36, rue de Trévise 75009 Paris

—— Pas de vente de billets à l'entrée ——

ԼՕՏՕ

ԿԱՊՈՑ ԽԱԶԻ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Կիրակի, Յունուար 19, ժամը 16–ին
Հայ Մշակոյթի Տան մէջ
9, rue de Madrid — 94140

ՎԻՃԱԿԱԿԱՆ ՀԱՆՈՒԹԻՒՆ

Բոլորին համար
բազմաթիւ նուէրներ — Պուֆէ:

Այրի Տիկին Ալիս Տէր - Մինասեան (Ծնեալ՝ Մանուկեան) զաւակներն ու թոռները,

Տէր եւ Տիկին Ալպէր Մանուկեան, զաւակներն ու թոռները,

Տիկին Տիրուհի Գալֆայեան, զաւակներն ու թոռները,

Տէր եւ Տիկին Յակոբ Մայաքեան, զաւակներն ու թոռները,

Այրի Տիկին Մարկրիթ Մանուկեան - Թուխուգեան, զաւակներն ու թոռները,

Այրի Տիկին Սիրանոյշ Յակոբեան (Քալիֆորնիա) զաւակներն ու թոռները,

Այրի Տիկին Մեհրիւպէ Թանկիքեան զաւակներն ու թոռները,

Այրի Տիկին Մաղաքեան, զաւակներն ու թոռները,

ցաւով կը ծանուցանեն իրենց մօր, մեծ - մօր, տալոջ, հօրաքրոջ՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՍԱՆԴՈՒԽՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
(Ծնեալ՝ Գալֆայեան)

մահը, որ պատահեցաւ Դեկտեմբեր 25-ին:

ՇԱՐՎԻԷՕ — Ս. ՆՇԱՆ

Փօն - մը - Շէրիի Շարվիէօյի Ազգային Միութեան վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ կիրակի, Յունուար 19, Եկեղեցւոյս մէջ տեղի պիտի ունենայ հանդիսաւոր պատարագ:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՎՐԹԱՆԷՍ ԱՒԱԳ ՔՀՆԱ· ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատարագի երգեցողութիւնը կը կատարէ Եկեղեցւոյս երգչախումբը, ղեկավարութեամբ՝ Յակոբ Աբրահամեանի:

Պատարագ, ժամը 10-ին:

×

ԾԱՆՕԹ· Ս· Նշան Եկեղեցւոյ վարժարանի Ամանորի հանդէսը տեղի պիտի ունենայ նոյն օրը ժամը 15-ին Եկեղեցւոյ կից՝ Ազգային Տան ձէպրայէլ Պահատուրեան սրահին մէջ:

Սիրով կը հրաւիրուին մեր բոլոր ծնողքները իրենց զաւակներով եւ հատուցեալ ժողովուրդը ներկայ ըլլալու սոյն հանդէսին:

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՍԱՆԴՈՒԽՏ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
(Ծնեալ՝ Գալֆայեան)

մահը, որ պատահեցաւ Դեկտեմբեր 25-ին:

ԿՈՉ ԼԻՈՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

ԿԵՆՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԸ ՀԱՄԱՐ

1985 - Մեծ եղեռնի 70-ամեակի, Հայր Կոմիտասի մահուան 50-ամեակի եւ Բարեզ Կանաչեանի ծննդեան 100-ամեակի երթեակ տաբեդարձներու առիթով՝ Ֆրանսայի մէջ ձեռնարկուած է խիստ կենսական արշաւի մը· ան կը մտի ի մի հաւաքել, մեկտեղել եւ կորուստէ փրկել հայկական՝ հին գաւառա - գեղջկական ժողովրդական երգերը, ինչպէս նաեւ բնորոշիչ մանրավէպեր՝ նախա - 1915-ի թրքահայոստանի գաւառական եւ գիւղացիական կեանքը յատկանշող: Այս եռ-գահաւաքումի աշխատանքը, ինչպէս նաեւ յարակից հաւաքումները որոնք կը քաղուին վերապրող մեր մամիկներու ու պապիկներու բերնէն, ստոյգ մահէ ազատել կը ջանան այն նշխարները, որոնք տակաւին կը յամենան մեր հայրերու յիշողութեան մէջ: Ասոնք պիտի ըլլան վերջին մասունքները եւ անկարելի պիտի ըլլայ զանոնք գտնել երկու - երեք տարի վերջ, այսինքն 1915-ի սերունդի վերջին ներկայացուցիչներու անհետացումէն ետք:

Այս վիթխարի եւ անյետաձգելի գործը կը կատարուի արդէն Ֆրանսայի ամբողջ տարածքին ապրող 250 հազարէ աւելի հայ բնակչութեան տարեցներու մօտ: Ուստի վստահ ըլլանք որ մեր Լիոնի հայ երեցներն ու ծերունիները - նոյնիսկ աւելի երիտասարդները, որոնք սորված են իրենց ծնողներէն նմանօրինակ հին երգեր - պիտի հաճին իրենց ներգործական մասնակցութիւնը բերել այս սրբազան փրկութեան գործին՝ հեռաձայնելով Տէսինի Մշակոյթի Տան եւ իրենց անուն - մականունը ու հեռաձայնի թիւը տալով պատասխանատուին՝ Տիկին Զօպոեանին: Հեռաձայն· - 78 - 49 - 42 - 97, - նախընտրելաբար կէսօրէ ետքերը, (բացի կիրակի ու Երկուշաբթի օրերէն):

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Դրամատուն կարապետ Ալեքսանեան ծնած 1918-ին՝ Օհանավան գիւղը, (նախկին Հովանավան), աշխարհագրութեան ուսուցիչ՝ զինուոր դացած է կրասեր Լեօզընան 1942-ին, զերի ինկած՝ 326 Շտալֆոյ Լակերը: Յելինոկ քաղաքը եղած է: 1945-ին փախած է Լակերէն: Եղած կ'ըլլայ Ֆրանսա Բօն - Ալփ չրջանները: Ունէր եղբայր մը՝ Սարգիս, ծնած՝ 1916-ին, որ կորսուած է պատերազմի ատեն: Փնտռողներն են՝ երեք քոյրերը՝ Հայկանոյշ, Վարդանոյշ եւ Վարդիշաղ:

Լուր ունեցողներէն կը խնդրուի որ տեղեկութիւններ տան հետեւեալ հասցէին:

Mlle. OHANIAN Anahid
99 ex 20, Ch. de la Costière
Résid. «Les Coteaux de la Madeleine»
Bât. L - Appt. 461 — 06000 NICE

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել:

Հ. Բ. Ը. Մ.
ՎԻԵՆԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Նախագահութեամբ՝
ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱՑ ԱԻԵՏԻՔԵԱՆԻ

Կիրակի, Յունուար 19, ժամը 17-ին, Ս· Աթոռեան Մշակոյթի Տան մէջ:
1, Quai Pajot — VIENNE

Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը կը բերեն միօրեայ դպրոցի աշակերտները:

Մուտքը ազատ է:

imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

A L'OCCASION DES PAQUES ARMENIENNES
(le 04 Mai, selon le calendrier ancien)

PELERINAGE A JERUSALEM

avec la participation de
Monseigneur NORVAN ZAKARIAN
et accompagné par VAROUJAN *SARKISSIAN*

du 28 avril au 05 mai

*

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԳԷՊԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՏԿՈՒԱՆ ԱՌԹԻՒ
(Մայիս 4–ին, ըստ հին տոմարի)
մասնակցութեամբ՝ ՆՈՐՎԱՆ եպիսկ· Զ Ա Կ Ա Ր Ե Ա Ն – ի
ընկերակցութեամբ՝ Վարուժան ՍԱՐԳԻՍԵԱՆ – *ի*

ԱՊՐԻԼ 28 - ՄԱՅԻՍ 05

Renseignement, Programme détaillé et inscription :

Levon BAGHDASSARIAN
SABERATOURS
31, rue d'Argenteuil
75001 PARIS
Tél. : 42. 61. 51. 13

Varoujan SARKISSIAN
SEVAN VOYAGES
48, cours de la Liberté
69003 LYON
Tél. : (16) 78. 60. 13. 66

VIENT DE PARAITRE

H. PASDERMADJIAN

HISTOIRE DE L'ARMÉNIE

4e Edition

1 vol gr.in - 8e, 437 pages avec 1 carte se dépliant

120 Frs. + 20 Frs. de frais d'envoi

Pour les commandes adresser un chèque à la
LIBRAIRIE ORIENTALE H. SAMUELIAN
51, *rue Monsieur le Prince* — 75006 *PARIS*
où le livre est en vente.

ԱԽԱՆԴԱԿԱՆ

ԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՎԻԵՆԻ ՄԷՋ

Կիրակի, Յունուար 19, կէսօրէ վերջ ժամը 2·30–էն սկսեալ
Théâtre Municipal

Գեղարուեստական յայտագիրը ԿԱՊՈՑՏ ԽԱԶԻ դպրոցի աշակերտներուն կողմէ, այս տարի ալ կաղանդ Պապան իր այցելութեամբ պիտի ուրախացնէ փոքրիկները:

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

ԿԱՊՈՑՏ ԽԱԶ–ի Պօմոնի մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ
Կիրակի, Յունուար 19, ժամը 14·30–ին
Պօմոնի միօրեայ Դպրոցի տոնածառի հանդէսին, տեղւոյն եկեղեցւոյ կից սրահին մէջ:

—— Ճոխ յայտագիր, ջերմ մթնոլորտ, թոմպոլա, եւայլն: ——

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ· ԽԱԶԻ Սէն - Ժէռօմի մասնաճիւղը ընդհանուր ժողով կը գումարէ Յունուար 17-ին, Ուրբաթ, կէսօրէ վերջ ժամը 15-ին Թաղիս Եկեղեցւոյ կից սրահին մէջ:

Բոլոր անդամուհիներէն կը խնդրուի ներկայ ըլլալ: Օրակարգ՝ տեղւոյն վրայ:

×

ԿԱՊ· ԽԱԶԻ Փարիզի մասնաճիւղի վարչութիւնը ընդհ· ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամուհիները, Շաբաթ, Յունուար 18, ժամը 15-ին, Մշակոյթի Տունը, 17 rue Pleyel: Կարեւոր օրակարգ: Պատգամաւորի ընտրութիւն, անդամուհիներու մեծամասնութիւնը անհրաժեշտ է:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապ· Խաչի Սէն - Ժէռօմի վարչութիւնս կ'ողբայ վարչական նախկին ընկերուհի՝ Այրի Տիկին Սանդուխտ Մանուկեանի մահը եւ այս տխուր առթիւ բոլոր ընկերուհիները իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն իր զաւակներուն, թոռնիկներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

Այս տխուր առթիւ Սէն - Ժէռօմի մասնաճիւղը ի նպաստ կայանին կը նուիրէ 250 Ֆ·: Նոյն առթիւ ստացած է հետեւեալ նուէրները· - Խօրէն Քեան ընտանիք 100 Ֆ·, Տէր եւ Տիկին Խաչատուրեան Ռօժէ 50, Տէր եւ Տիկին Սվազլեան 50, ղրկացնել Մուրատ Հօրճանեանի մահուան առթիւ՝ Այրի Տիկին Նուարդ Թախթալեան կը նուիրէ 100 Ֆ·:

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
16

JEUDI
16 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.139 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.139

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԺԻՍՔԱՐ Տ'ԻՄՔԻՆ մամուլի ասուլիս մը տուաւ եւ բացատրեց համակեցութեան իր ըմբռնումը: Ինչ որ լաւ է 1958ի կոլեան Սահմանադրութեան պարագային, այն է որ ամէն մարդ զայն իր ուզածին պէս կը մեկնաբանէ եւ իր գործին եկածին պէս կը հասկնայ: Այսպէս, Պառ անկարելի կը նկատէ համակեցութիւնը (կամ համաքաղաքակեցութիւնը *(cohabitation)*, որովհետեւ կ'ըսէ, ըստ Սահմանադրութեան իշխանութիւնը նախագահին ձեռքն է: Ժիսքար եթէ նախագահը ճամբու չի դներ, ոսկեձաղիկներու բացումներու կը ղրկէ եւ նոր բանաձեւ մըն ալ կը ներկայացնէ՝ նախարարապետը տեղէն կարելի չէ հանել (փորձառութեամբ կը խօսի), Ֆրանսերէն բառ մը կը դործածէ, որ ինչպէս իր նախկին բանաձեւերը բերնէ բերան պիտի անցնի.. էնտէպուլոնապլը: Զախի նախագահի մը եւ ալ մեծամասնութեան մը անպատեհութիւնը կ'ուզէ լուծել Ֆրանսայի տալով քաղաքական քաղաքակրթութեան մը նոր դիմագիծը, քիչ մը անգլիական լուծում մը: Առ այժմ իր երեք գլխաւոր առաջարկներն են ընտրութիւններու վաղորդայնին. - Նոր նախարարապետը վըստահութեան քուէ կ'ուզէ նորընտիր Ազգ. ժողովէն, Սահմանադրական բարեփոխում մը կ'առաջարկուի նուազեցնելու համար նախագահին պաշտօնավարման ըրջանը, թէեւ չի ճշդեր թէ եօթնի տեղ՝ 6 թէ 5 տարի կ'ուզէ: Հուսկ՝ վերադարձ ընտրական նախորդ (մեծամասնութիւն, երկու ըրջանով) դրութեան: Կը ճշդէ թէ ոչ մէկ աթոռի թեկնածու է:

ՓԱՐԻԶԻ ԱՌԵՒՏՈՒՐԻ ԴԱՏԱՐԱՆԸ ընթացք չտուաւ դատական իշխանութեան դիմումին Փրոկիւէ տը Լիոնի կապակցութեամբ եւ չնչանակեց դատական մատակարար մը, ինչպէս կը պահանջուէր: Սոխպղաբար (ռեֆէրէ) քննելով կացութիւնը, դատարանը յայտնեց թէ «Հանրապետութեան դատախազը հարկ եղած փաստը չի բերեր» որ անհրաժեշտ դարձնէ նման նշանակում մը: Ուրեմն, երեք ամսուան համար, դատարանը լիազօր մը նշանակեց, որ կրնայ մասնակցիլ վարչական խորհուրդի նիստերուն: Ընդհ. ձեւով հակոդի պաշտօն մըն է: Պիտի հետեւի անցուդարձին եւ տեղեկագիր մը պատրաստէ դատարանին համար, եթէ թերիներ տեսնէ: Այս ըրջանին Հերսան հիմնական ոչ մէկ որոշում կրնայ տալ, ոչ իսկ թերթը ետ տալ...:

ՓԱՐԻԶԻ 16-ՐԴ Թաղամասը, ուր տիւ Տոֆթէօր - Պլանշ, արիւնալի հոլտ - ափ կատարուեցաւ երեքշաբթի օր, Քրէտի - Լիոնէ դրամատան մը դէմ: Անցքի - կանչ ոսոխականներ կազմակերպատրաստ կը սպասէին, որպէսզի բռնեն դրամատունէն ելլող աւազակները, որոնց դէմ թակարդ մը լարած էին, բայց նախատեսած ձեւով չեղաւ եւ երկու հոգի ալ - մէկ չարագործ, մէկ ոսոխական - սպաննուեցան փոխադարձ հրացանաձգութեան ընթացքին: Միւս դաղերը յաջղած են փախիլ:

ՃԵՄԱՑԻ չսորացրեց երեք քաղաքզօրքերու կնքած համաձայնագիրը, երկու օր խորհրդակցելէ ետք նախագահ Ա. սատի հետ: Առանց ատոր ալ արդէն, քըրիստոնեաներու միջեւ կռիւները չատ սուր բնոյթ առած են:

ՈՒԶԲԵԿԻՍՏԱՆԻ դեկավարութիւնը ամբողջութեամբ պաշտօնանկ եղած է: Կեդրոնական Ասիոյ այս Հարապետութիւնը

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ ՀԵՌԱՑՈՒՅՑ

ԵՐԵՒԱՆ
(ԱՐՄԷՆՓՐԷՍ - ՅՈՒՆՈՒԱՐ 9 - 13)

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»Ի ՏՆՕՐԷՆԸ
ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ

Լրագրութեան մարզին մէջ ունեցած իրենց վաստակին ի գնահատութիւն, Հայաստանի Գերագոյն Խորհուրդի պրեզիտիումի հրամանագրով վաստակաւոր լրագրողի կոչում շնորհուած է «Արմէնփրէս»ի տնօրէն Մարտունի Խաչատրեանի եւ նոյն հիմնարկի թարգմանիչ Յակոբ Ստեփանեանի ու մեկնաբան Ալեքսա Խաչատրեանի: Երկու աշխատակիցները ալ՝ Հերքեր Բազդասարեան եւ Տատեանա Գլադչենկօ, պարգեւատրուած են պրեզիտիումի պատուոյ դիրքով:

×

ԳԵՂԱՄ ՍԵԻԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ

Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհուրդի պրեզիտիումի հրամանագրով պըրդող Գեղամ Սեւան պարգեւատրուած է ժողովուրդներու բարեկամութեան շքանշանով, ի գնահատութիւն խորհրդային գրականութեան զարգացման իր բերած նպաստին եւ իր ծննդեան վաթսունամեակին առթիւ:

×

«ՁԱՏՐԱԿԻ ՕՍՔԱՐ»Ը
ԳԱՐԻ ԳԱՍՊԱՐՈՎԻ

Զաղրէպի «Վիեսնիկը» թերթը ամէն տարի «Ձատրակի Օսքար» մրցանակը կը շնորհէ տարուոյն լաւագոյն վարպետին: Թերթին հարցարաններուն արդիւնքներով 1985-ի ձատրակի տասը լաւագոյն վարպետներու ցանկին մաս կազմած են Գարի Գասպարով, Անատոլի Կարպով, Արթուր Եուսուպով, Ռաֆայէլ Վահանեան, Անդրէյ Սոկոլով, Միխայիլ Տալ եւ այլն: «Ձատրակի Օսքար» մրցանակը տրուած է աշխարհի ախոյեան Գարի Գասպարովի, որ երկրորդ անգամն է որ կ'արժանանայ այդ մրցանակին:

կը մեզադրուի կաշառակերութեան եւ իշխանութեան չահագործման համար:

ԹՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ նոր արշաւի մը ձեռնարկած են Քիւրտերուն դէմ, իրենց որակումով՝ անջատողականներու դէմ: Ասոնց անցած չրջանները - արեւելեան Թուրքիա (Տիարպէքիր եւ այլն) - մեծաքանակ թռուցիկներ կը բաժնուին, վերջերս՝ թռուններով, ուր հրաւէր կը կարդացուի չրջանի քնակիչներուն որ ոչ միայն չքաջալերեն՝ այլեւ կռուին անոնց դէմ, վասնզի, կը չեշտուի թռուցիկին մէջ. - «Պաքարա Սուրաթին 190-րդ դլուխին մէջ կ'ըսուի՝ ձեզի դէմ պայքարողներուն դէմ դուք ալ կռուեցէք յանուն Ալլահի: Ատոնք նախայարձակները չի սիրեր»: Ինչպէս կը տեսնուի «աչխարհական» արդի Թուրքիան բաւական «յառաջդիմական» բանաձեւերու կը դիմէ իր ժողովուրդը դաստիարակելու համար: Այդ թռուցիկներով, կրկին հրաւէր կ'ըլլայ մատնութեան, դալով բուն «յանցապարտներուն», կ'առաջարկուի դղջում յայտնել, քանի՝ այդ պարագային ներողամիտ աչքով պիտի նային իրենց (այս մասին, հաւանաբար կրնան վկայել Տիարպէքիրի բանտին խուցերուն մէջ խոնուած Քիւրտերը):

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԼՈՒՐԵՐ

ԱՐՏԱԿ ԱՐՔ.Ի ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

ՈՒՍՈՒՄՆԱ - ԴԱՍՏԻԱՐԱԿԶՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՀԵՏ

Թեհրանի Հայոց առաջնորդ Արտակ Արք. Մանուկեան, ընկերակցութեամբ երեսփոխան Վարդան Վարդանեանի եւ Թեմական Խորհուրդի անդամներ Լեւոն Ահարոնեանի ու Վազրիկ Մանուկեանի, Յունուար 4-ին հանդիպում մը ունեցած է ուսումնա - դաստիարակչական նախարար Ա.քրամիի հետ:

Արտակ Արք. նախ չնորհաւորած է նախարարը իր պաշտօնին մէջ վերահաստատման առթիւ, ապա նշած՝ թէ նախարարին հետ իր ունեցած վերջին հանդիպումէն ետք հայկական վարժարաններու դժուարութիւններու լուծման ուղղութեամբ ոչ մէկ յառաջդիմութիւն արձանագրուած է: «Մեր ժողովուրդը, - ըստած է Արտակ Արք., - մտահոդուած է այն հարցով, որ հայկական դպրոցները հարկ եղած չափով իրենց առաքելութեան վրայ չեն գտնուիր. հայերէնը, այն ալ կարգ մը դասարաններու մէջ, կը դասաւանդուի չարաթական միայն երկու ժամ, իսկ կըրօնք՝ բոլորովին չի դասաւանդուիր»: Առաջնորդը չարունակելով իր բողոքը յայտնած է, թէ կարգ մը դպրոցներու մէջ ամանորի նչումը չէ արտօնուած եւ ընդհանրապէս հայկական վարժարաններու մէջ տիրող մթնոլորտը չի համապատասխաններ քրիստոնէական եւ հայկական աւանդութիւններուն ու սովորութիւններուն, աւելցնելով. «Լխայոյս ենք, Պ. Նախարար, որ իբրեւ անդամ այն յանձնախումբին, զոր Մշակութային Յեղափոխութեան Գերագոյն Խորհուրդը կեանքի կոչած է հայկական վարժարաններու հարցերը քննելու համար, եւ յատկապէս որպէս նախարար՝ բարեացակամութեամբ դրական կարգադրութիւն մը կ'ընէք յիշեալ դժուարութիւններու լուծման ուղղութեամբ, որով մեր ժողովուրդը հայկական դպրոցներու բոլոր հարցերը լուծուած տեսնելով, իր մտահոդութենէն վերջապէս կը ձերբազատի»:

Պատուիրակութեան անդամները ներկայացուցած են հայկական դպրոցներու բոլոր դժուարութիւնները, այդ կարգին՝ իրենց պաչտօնէն հեռացուած հայ ուսուցիչներու եւ տեսուչներու պաչտօններու վերահաստատման, ինչպէս նաեւ աղջիկներու դլուխները ծածկելու հարցերը:

Նախարար Ա.քրամի յիչեալ բացատրութիւնները լսելէ ետք չեչտած է, թէ Իսլամ Հանրապետութիւնը մեծ արժէք կուտայ «աստուածային կրօնքներուն եւ անոնց հաւատացեալներուն», աւելցնելով, որ ներկայիս երեք նախարարութիւններ՝ ուսումնա - դաստիարակչութեան, դիտութեանց եւ բարձրագոյն ուսման, առաջնորդութեան, հայկական վարժարաններու հարցերու չուրջ ուսումնասիրութիւններ կը կատարեն, որոնց աւարտին դրական լուծում կը տանեն հայկական հարցերը: Նախարարը նչած է նաեւ, թէ իր կարծիքով կրօնքի դասաւանդումը հայերէնով եւ հայերէն լեզուի ու դրականութեան ուսուցումը հայկական վարժարաններուն մէջ որեւէ արդելք պէտք չէ ունենայ եւ կը յուսայ, որ Մշակութային Յեղափոխութեան Գերագոյն Խորհուրդը եւս դրական լուծում կուտայ հարցին: Պատուիրակութեան անդամները խօսած են նաեւ նոր դպրոցներ կառուցելու հարցին մասին:

Նախարարը խոստացած է չանալ արծարծուած բոլոր հարցերուն բարւոք լուծում մը տալու համար, որպէսզի «Իսլամ ու հայ եղբայրները եղբայրական սիրով լծուին Իրանի վերելքին ու զարգացման աչխատանքին»:

×

ԱԼԲԵՐ ԲԵՐՆԱՐԴԻ
ԿՐՆԱՑ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ
ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԻՐ ԳՈՐԾԸ

Թեհրանի մեր պաչտօնակից «Ալիք»ի Յունուար 5-ի թիւէն կ'իմանանք, թէ Թեհրանի իսլամական յեղափոխութեան դատարանը ընդած է ծանօթ իրաւաբան Ալբեր Բերնարդիի իրաւաբանական արտօնագրի բեկանման վճիռը, որ նոյն դատարանի կողմէ՝ ի չարս 57 այլ իրաւաբաններու՝ տրուած էր երկուքուկէս տարի առաջ:

×

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ
ՀԱՑ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ

Թեհրանի Հայոց առաջնորդ Արտակ Արք. Մանուկեանի կարգադրութեամբ, այս տարի ալ քահանաներ այցելած են Թեհրանի եւ Քարաճի բանտերու հայ բանտարկեալներուն, կրօնական արարողութիւն կատարուած եւ հաղորդագրութիւն տուած:

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Akaby NASSIBIAN

BRITAIN AND THE ARMENIAN QUESTION 1915 - 1923 *

Գրեց՝ Ա. ՊԷՅԼԷՐԵԱՆ
(Պատմ. Գիտ. Տոքթէօր)

Անցեալ տարի Անգլիոյ մէջ լոյս տեսաւ Ագապի Նասիպեանի տոքթորայի աւարտաճառը որ վերոյիշեալ խորագրով, եթէ չենք սխալիր 1981-ին, Օքսֆորտի համալսարանը ներկայացուելով ժիւռիին բարձրը դնահատանքին արժանացած էր: Միջին - Արեւելքի առհասարակ, մեր ժողովուրդի ժամանակակից պատմութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններուն մանաւանդ գրեթէ բոլորին անդեակ ըլլալով, արդարացիօրէն կրնանք ըսել թէ Նասիպեանի ուսումնասիրութիւնը լաւագոյններէն է:

*Նախքան գրքին մասին արտայայտուիլը, կ'ուզենք հոն մէջբերումով մը կարեւոր լուսաբանութիւն մը տալ ընթերցողներուն: Վերջին երեք տասնեակ տարիներուն տասնի մօտ ծագումով հայ ուսանողներ Ջանացին Օքսֆորտի համալսարանը տոքթորայի աւարտաճառ մը ներկայացնել: Մինչեւ 1981 տարին, երբ Նասիպեան իր աշխատութիւնը յաջողութեամբ ներկայացուց, բոլորն ալ ձախողեցան: Ըստ Օքսֆորտի համալսարանի կանոնագրին անոնցմէ ոչ մէկուն պատրաստած ուսումնասիրութիւնը Օքսֆորտի պատուաբեր տոքթորայի (D. Phil.) մակարդակին չէր համապատասխանած եւ բոլորն ալ «մխիթարական» վկայական մը առնելով մեկնեցան: Մօտ 15 տարիներ առաջ, պատմական պրպտումներու առթիւ մեր Օքսֆորտ այցերէն մէկուն ընթացքին, ծանօթացած էինք, ծագումով հայ, շատ ուշիմ համալսարանականի մը, որ ոչ թէ միայն անդլերէնի կը սիրապետէր կատարելապէս, այլեւ՝ հմուտ էր բազմաթիւ ուրիշ օտար լեզուներու: Իրեն թելադրեցինք իր նիւթին համար առնուազն երեք ամիս Փարիզի դրադարանները եւս պրպտումներ ընել, որպէսզի կարենար նորութիւններ բերել իր աշխատութեան համար: Առաջարկեցինք այս առթիւ մեր ծանօթութիւնները իր տրամադրութեան տակ դնել: Հակառակ մեր պնդումներու նախընտրեց միմիայն Օքսֆորտ կատարած իր պրպտումներով գոհանալ: Զոհողութեան ոգին կը պակսէր իր մօտ: Արդիւնքը այն եղաւ որ հակառակ իր ինքնավստահութեան, իր ուսումնասիրութիւնը արժանի չգտաւ Օքսֆորտի վկայականին: Հետեւաբար երբ Ագապի Նասիպեան 1981-ին յաջողեցաւ այդ վկայականը առնել, ըստ Օքսֆորտի տարեգիրքին, ան առաջին Հայն է որ արժանի նկատուած է Օքսֆորտի համալսարանին փիլիսոփայութեան տոքթորի ոլորտին: Ագապի Նասիպեան Սեպտեմբեր 1985-էն ի վեր Կիպրոսի Մեզոնեան ազգային վարժարանի **մէջ կը** պաշտօնավարէ իբր անօրէնուհի, ուրկէ տարիներ առաջ շրջանաւարտ եղած էր:*

Նասիպեանի գիրքը անտարակոյս հայկական հարցին վերաբերեալ կարեւոր աշխատութիւն մըն է: Հեղինակը մեծ համբերութեամբ եւ եռանդով մի առ մի թղթատած է անգլիական դիւանագիտական եւ այլ թղթածրարներու մէջ գտնուած բազմաթիւ անտիպ փաստաթուղթեր: Ասոնցմէ զատ, ան ըստ բաւականի օգտագործած է նաեւ այժմ Պոսթըն պահուած Հ. Յ. Դաշնակցութեան արխիւները, եւ կրկին Միացեալ - Նահանգներ գտնուող եւ միքրոֆիլմի վերածուած Պօղոս - Նուպար Փաշայի գլխաւորած ազգային պատուիրակութեան վաւերաթուղթերը:

Մեր դրախօսականին մէջ պիտի չկարենանք ըսել թէ գրքին սա կամ նա գլուխը աւելի կարեւոր, կամ աւելի հետաքրքրական է, քանի որ ամբողջ գիրքը հետաքրքրական փաստաթուղթերով լեցուն է եւ բնաւ տարակոյս չունինք թէ ընթերցողը մեծ յափշտակութեամբ գայն պիտի կարդայ սկիզբէն մինչեւ վերջը: Բայց ինչ որ մեր կողմէ յատկապէս գնահատանքի արժանի գտանք, այն է թէ Նասիպեան յաջողած է ոչ թէ միայն պատմաբանի անաչառ մօտեցումով եւ տրամաբանութիւնով մեկնաբանել, այլ նաեւ իսկական պրպտողի մը յատուկ ճաշակով վաւերաթուղթերը ընտրել եւ զանոնք արժեւորել:

×

Նասիպեանի գրքին նախաբանը կը սկսի Հայաստանի նախապատերազմեան պատմութիւնով եւ համառօտ կերպով մը հանգի մինչեւ Ա Թ. դար: Յետոյ հեղինակը յատկապէս կը ծանրանայ անցեալ դարու զարթօնքի շրջանէն մինչեւ 1914 թուականը, երբ հայկական հարցը իր վերջին հանդերձեալի անկիւնադարձին հասաւ: Գրքին բուն նիւթն է, ինչպէս խորագիրը ցոյց կուտայ արդէն, Արեւմտահայաստանի, կամ աւելի ճիշդ իր պատմական որակումով «Հայկական Հարց»ի հանդէպ անգլիական կառավարութեան քաղաքականութիւնը Ա. համաշխարհային պատերազմէն մինչեւ Լօզանի ախորհուրդ դաշնագիրը (1923, Յուլիս 24): Ինչպէս ծանօթ է, մեծ Պետութիւնները, ընդ որս «Եննդամիա Ալպիոնը», Պիզմարքի նման, Լօզանի մէջ, իրենց ձեռքերը լուալով նախամեծար նկատեցին Հայկական Հարցը փակուած համարիլ ու զայն պատմութեան փոշոտ էջերուն մէջ թաղել քան թէ Հայաստանի ազատագրութեան մասին իրենց բազմիցս տուած հրապարակային խոստումները յարգել:

Նասիպեան ներածականի բաժնին մէջ անդրադառնալով անցեալ դարու 90-ական թուականներուն հայ յեղափոխականներու մօտ տիրող քաղաքական տհաս համոզմունքին, զանոնք կ'որակէ, մեծամասնութեամբ, «ռոմանթիկ իտէալիստներ» որոնք իրենց ժողովուրդին տարեց պահպանողական դասակարգին գործակցութիւնն իսկ չէրցան ունենալ (տե՛ս էջ՝ 19): Եւ արդարեւ պէտք չէ մոռնալ եւ աւելորդ չէ հոս յիշել թէ այդ նոյն պահպանողական դասակարգն էր որ իր չափազանց խոհեմութիւնով եւ շատ անգամ ալ մեծ զիջումներով յաջողեցաւ աւելի քան հինգ դար համայն Թրքահայութիւնը, զէշ կամ ազէկ, Օսմանեան կայսրութեան վարչակարգին նման այլամերժ եւ կեղեքիչ լուծի մը թաթերուն տակ կանգուն պահել մինչեւ անցեալ դարու վերջին տասնամեակը:

Իրր իրաւես եւ անաչառ պատմաբան, հեղինակը հաշուեյարդարի կ'ենթարկէ հայ յեղափոխականներու գործունէութիւնը: Ան իրաւամբ կը չեշտէ թէ անոնք ոչ թէ միայն իրենց ժողովուրդին լրիւ աջակցութիւնը չգտան այլ նաեւ Եւրոպայի կողմէ ամենադոյզն օժանդակութիւն մը իսկ չունեցան: Բայց եւ այնպէս կ'եզրակացընէ Նասիպեան «անոնք (հայ յեղափոխականները) միամտաբար եւրոպական քաղաքականութեան եւ դիւանագիտութեան հաւատացին»: Նասիպեան հարց կուտայ թէ պէ՞տք է արդեօք 1894 եւ 1897ի միջեւ Փոքր Ասիոյ մէջ տիրող խառնակութիւններէն հայ յեղափոխականները պատասխանատու նկատել: Անտարակոյս դիտել կուտայ ան, հայ յեղափոխականները որոշ դեր մը ունեցան այդ դէպքերուն մէջ: Բայց, կը թուի թէ կը չարունակէ, «Օսմանեան կառավարութեան ցանկութիւնն էր անոնց (յեղափոխականներուն) չարժումները չափազանցել որպէսզի օրինական իրաւունք եւ պատրուակ մը ունենար ոչ թէ պատասխանատուները պատժելու, այլեւ բովանդակ հայ ժողովուրդը»: Եւ իրօք այս է իսկական եղելութիւնը (1):

Արդարեւ, շատ ճիշդ ու տեղին է տոքթէօր Նասիպեանի վերոյիշեալ եզրակացութիւնը: Օսմանեան կայսրութեան պատասխանատուները, հայկական հարցի ամբողջ տեւողութեան եւ այս մանաւանդ 1890-էն յետոյ, միշտ այս սկզբունքով չարժած են:

Ատանայի Ջարդերը (Ապրիլ, 1909), որ 20·000 զոհեր խլեցին (եւ ոչ թէ 30·000 ինչպէս յաճախ կը յիշուի) որպէսզրուած նոյն սկզբունքին հետեւանքն էր: Գրգռել Հայերը, եւ եթէ անոնք ինքնապաշտպանութեան որեւէ փորձ մը կատարեն, ատենապատիկով վոխադարձել:

Գլուխ Բ·ի մէջ (էջեր՝ 33 - 66), Նասիպեան ընթերցողին կը ներկայացնէ Անգլիոյ այն հայասէր անհատները, որոնք առանձին կամ զանազան կազմակերպութիւններու անդամ ըլլալով դեր խաղացին հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեան ծանրակշիռ դէպքերու զարգացումին ընթացքին: Առոնցմէ ոմանք արդէն մեզմէ չատերուս ծանօթ են, ինչպէս կլատսթընը, Ճէյմս Պրայս, Պաքթընը եւայլն:

Առհասարակ, երբ անգլիացի պատմաբան մը հայկական հարցի կ'անդրադառնայ, էլ փափաքիը Անգլիոյ դիրքը Հայաստանի հանդէպ, իր բովանդակ մերկութեամբ ներկայացնել: Այս պարագան աւելի դիտակցութեամբ է եւ ոչ թէ տգիտութեամբ· ինչ որ մեր հայրենակիցներէն չատեր պիտի չուզեն թերեւս հաւատալ: Նասիպեան յենուած բազմաթիւ անտիպ փաստաթուղթերու, մերկապատնոց կը քօղազերծէ կարգ մը «հայասիրական» նկատուած դիւանագէտներու կեղծ ու նենգամիտ քաղաքականութիւնը: Իրօք չատ հետաքրքրական է իմանալ թէ, երբ 1913 տարւոյ աշնան հայկական նահանգներու ճակատագիրը ուռս - թուրք բանակցութիւններուն օրակարգին վրայ էր, անգլիական կառավարութեան պատասխանատուները աւելի պատշաճ կը գտնէին բարձր Դրան լոկ, ձեւակերպական բողոքներ ներկայացնել, քան թէ արեւմտեան Հայաստանը ռուսական դրաւման տակ տեսնել, դիտակից ըլլալով սակայն թէ Արեւմտահայաստանի նահանգներու հայ ժողովուրդի փրկութիւնը աւելի Բ. լուծումի եղանակով կարելի էր ապահովել քան թէ առաջինով (տե՛ս էջեր՝ 52 - 53): Իսկ երբ Թուրքիա «կեդրոնական տէրութիւններու» կողքին համաձայնականներու դէմ պատերազմի ձեռնարկեց այդ նոյն անգլիացի դիւանագէտները - որոնց կարգին Լորտ Կրէյ, յետագային նաեւ Լորտ Քըրզըն - որոնք Թրքական վայրագ տիրապետութիւնը դերադաս կը համարէին Հայաստանի ռուսական դրաւումէն, բոլորն ալ մէկմէկ «իսկական» պաշտպաններ եղած էին հայ ժողովուրդին (2):

Նասիպեան Անգլիոյ մէջ հայկական դատի համակիրներուն հոյլը չորս խումբերու կը բաժնէ. -

ա)·- Անոնք որոնք մարդկային զգացումներէ տարուած եւ իբր քրիստոնեայ ժողովուրդի մը մարդկային պարտականութիւն, կ'ուզեն «հարստահարուող հայ ժողովուրդը իր դահիճներուն ճիրաններէն փրկել»:

բ)·- Ուրիշներ՝ որոնք կլատսթընի քաղաքական - աւանդական ուղեգիծին հետեւելով չեն ուզեր որ ժողովուրդ մը հիւծի վայրագ կառավարութեան մը լուծին տակ:

գ)·- Կան նաեւ ուրիշներ, որոնք Պերլինի դաշնագրին 61-րդ յօդուածի դրծադրութիւնը արժանապատուութեան հարց ըրած են եւ կ'ուզեն Արեւմտահայաստանի բարեփոխումը տեսնել:

դ)·- Ի վերջոյ կան նաեւ անձեր որոնք Հայաստանի և հայ ժողովուրդի պատմութեան եւ մշակոյթին լաւ ծանօթ ըլլալով, համոզուած են որ անոնք Փոքր Ասիոյ մէջ պատմական դեր մը ունէին կատարելու, հետեւաբար անհրաժեշտ է զանոնք ճնշող տարրերէն փրկել:

Ամէն պարագայի մէջ, աւելորդ չըլլար եւ կ'ուզենք հոս մեր կողմէ մէջբերում մը ընելով յայտնել թէ, թէ՛ մին եւ թէ միւս խումբերուն պատկանող այս անձնաւորութիւններու գործունէութիւնը իրականութեան մէջ գործնական ըլլալով ոչինչ բերաւ Արեւմտահայաստանի ճակատագրին: Որքան որ մեր երկարատեւ պըրպտումներու ընթացքին իրր արդիւնք կրցած ենք հաստատել. եթէ Աբեւմուտքի խարուսիկ հետաքրքրութիւնը չըլլար, հաւանաբար հայկական դրական զարթօնքը օր մը դրական ելքի մը կրնար առաջնորդել ժողովուրդը: Ինչ որ եղաւ 1915 - 1916 տարիներուն - եւ մանաւանդ 1894 - 1896-ին ուր իրր թէ եւրոպական վերին հսկողութիւնը ներկայ էր, - պէտք չէ մոռնալ որ աւելի գէշը չէր կրնար ըլլալ:

Հայասէր օտարներու հետաքրքրութիւնը, ամանց ոչ պատասխանատու յայտարարութիւնները որոնք իրականութեան մէջ ոչինչ կրնային փոխել, դիւանագիտութեան եւ քաղաքականութեան այբուբենին անծանօթ մեր «դիւանագէտներն ու հանրային գործիչները» տարիներով սին երազներով օրօրեցին եւ խանդավառեցին: Անոնք, ակնդէտ, միշտ քրիստոնեայ արեւմուտքէն ակնկալեցին իրենց երկրին փրկութիւնը փոխանակ իրենց ժողովուրդին պտնուած երկրին օրէնքներուն եւ ընկերային ու կեանքի պայմաններուն մէջ ելք մը որոնելու, իրենց ժողովուրդը խոհեմութեամբ եւ հետեւեալութեամբ ամուր ապագայի մը պատրաստելու համար:

(*) Croom Helm Ltd. Publishers, *Beckenham (Kent)*, 1ère *édition*, 1984, £ 18.95 (220 *francs*).

(1) Տե՛ս այս առթիւ մանաւանդ մեր մէկ ուսումնասիրութիւնը, որ լոյս տեսած է Relations Internationales, *Paris, Sorbonne*, 1975 տարւոյ թիւ 3 հատորին մէջ:

(2) Չմոռնանք յիշել հոս թէ նոյնն էր կացութիւնը Ֆրանսայի մէջ:

ԱՄԲՈՂՋ ԺՈՂՈՎՐԴՈՎ, ԱԶԳՈՎԻ

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

ԽՄԲ. - Սերօ Խանզադեանի ծննդեան 70-ամեակին առթիւ Հայաստանեան մամուլը էջեր, յօդուածներ նուիրեց իրեն: Ստորեւ անոնցմէ մէկը՝ Դեկտեմբեր 20-ի «Գրական Թերթ»էն.-

×

Սերօ Խանզադեանը քայլող պատմութիւն է: Մեր ժողովրդի քայլող պատմութիւնը: Այդ պատմութեան թռիչքների ու գահավիժումների, ողբերգութիւնների ու հանդիսութիւնների, նրա աստեղային ժամերի ու մասսայական վայրէջքների քաջհմուտ տարեգրն ու վկան:

Այս խօսքիս մէջ Խանզադեանի հետ ապրած երեսունհինգ տարիներից յիշելու եւ յուշելու եմ միայն սովորական ժամ...

Մի քանի տարի առաջ էր: Սխխանում էինք: Մի առաւօտ Խանզադեանն արթնացաւ եւ հրամայելու պէս առաջարկեց:

- Այսօր գնում ենք Ձից քարեր:

Ձից քարերը այսօրուայ Սխխան քաղաքից երկու քիլոմեթր հեռաւորութեան վրայ, հիւսիս - արեւելքում գտնուղ անդեր ժամանակների բնակավայրն է: Առեղնայն հատանականութեամբ, նախապատմական բերդաքաղաք՝ հարուստ եւ հարթ - արեւելքից վիթխարի ժայռաբեկոր ցից քարերով, հիւսիսից վեհատուր, մթին կիրճով, արեւմուտքից՝ բնական ժայռապղնձ պարիսպներով պաշտպանուած:

Գնացինք: Մօտեցանք հարաւային սահմանին: Խանզադեանի մէջ արթնացաւ հնագէտը: Շօշափեց սահմանապահ ժայռաբեկորները, հայեացքով չափեց սահմանը: Հայեացքը կանգ առաւ մի կէտի վրայ· «Մայր գարպասը պիտի եղած լինի»: Բայ գարպասից մտանք բնակավայրը· «Կանդնիր, - ասաց Խանզադեանը, - Նայիր, հողի վրայ պարզ է երեւում քաղաքի նախապիծը»: Քայլում ենք կենտրոնական փողոցով: «Տեսնում ես, - ասում է Խանզադեանը, - այստեղ էլ են հարուստ ու ազքատներ եղել, կարգապրող ու ենթականեր եղել, տաւարպողներ ու վաչկատուներ եղել, խորտակուած աւերակների դիրքն ու տարածքը յուշում են այդ բոլորը»:

Իջնում ենք բնակավայրի հիւսիսային սահմանը, Ծորաբերանը, որտեղ հազար մամուռ մաշած ու նորից մամռակալած տոլմեններ են: Խանզադեանը նայում - չօշափում է...: Ափսոս, եղծուած գրեր չկան, որ նա յաղուրդ տայ իր վերծանելու կրքին: Վերծանելու նրա մոլուցքը յայտնի է, խաչքարեր շատ է վերծանել եւ միշտ անսխալ:

Յետոյ նա սողում է Ջորաբերանից: Կիրճն արձապանգ է տալիս: Կանչում է, կիրճն արձապանգ է տալիս, երգում է, կիրճն արձագանգ է տալիս:

Յետոյ տեսնում եմ, որ իմ ներկայութիւնը մոռացել է, ինձ տեսնում է, չի

բենին անծանօթ մեր «դիւանագէտներն ու հանրային գործիչները» տարիներով սին երազներով օրօրեցին եւ խանդավառեցին: Անոնք, ակնդէտ, միշտ քրիստոնեայ արեւմուտքէն ակնկալեցին իրենց երկրին փրկութիւնը փոխանակ իրենց ժողովուրդին պտնուած երկրին օրէնքներուն եւ ընկերային ու կեանքի պայմաններուն մէջ ելք մը որոնելու, իրենց ժողովուրդը խոհեմութեամբ եւ հետեւեալութեամբ ամուր ապագայի մը պատրաստելու համար:

(*) Croom Helm Ltd. Publishers, *Beckenham (Kent)*, 1ère *édition*, 1984, £ 18.95 (220 *francs*).

(1) Տե՛ս այս առթիւ մանաւանդ մեր մէկ ուսումնասիրութիւնը, որ լոյս տեսած է Relations Internationales, *Paris, Sorbonne*, 1975 տարւոյ թիւ 3 հատորին մէջ:

(2) Չմոռնանք յիշել հոս թէ նոյնն էր կացութիւնը Ֆրանսայի մէջ:

նկատում: Խօսում է աներեւոյթ էակների հետ, խօսում է ձեռքերով, աչք - ունքով, գլխով հաստատում եւ ժխտում է նրանց իր լսածները, ինչ նախնական լեզուով է խօսում, չգիտեմ: Ես թողնում եմ նրան իր «զրուցակիցներ»ի հետ ու հեռանում: Նայում եմ իր երկից կախուած եւ իր երգն ի վեր մղլցող արտոյտին, սահմանապահ «ցից քար» ժայռին նստած չուհն Բաղէի անհանգիստ հայեացքին, Զորաբերանին չորորող կաքաւին, քարերի տակից կկոցած աչքերով լեռ նայող ամէնուր ծաղիկներին, նայում եմ, եւ մէջս բանաստեղծական տողեր են բողբոջում...:

Մէկ էլ մօտենում է Խանզադեանը. «Գնացի՛նք»: Հարցնում եմ. «Ո՞ւմ հետ էիր խօսում»:

- Իմ քաղաքի պես - մօրուքով, մազակալած մարդկանց հետ:

- Ի՞նչ, նրանց ժամանակակի՞ցը դարձար, - հարցնում եմ:

- Դու էլ ես նրանց ժամանակակիցը, նրանք էլ են արտոյտ սիրել, բազէ սիրել, կաքաւ սիրել, ծաղիկ սիրել ու սիրոյ տողեր են մրմնջացել:

Այսպէս, ցից քարերից վերադարձանք Սիսիան:

- Բա չտեսա՞ը, - ասում է Սերօն, - որ նրանք մեզ հետ գալիս էին:

- Չէ, - ասում եմ, - ես մենակ նրանց ժամանակակից Սերօ Խանզադեանին տեսայ:

- Գալիս էին: Եկան, - ասում է Սերոն:

- Եկան, մտան այս հրաշալի նորաճ Սիսիանը կառուցող քարտաշների, որմնադիրների, ճարտարապետների կերպարի մէջ եւ զարձան մեր՝ իմ եւ քո ժամանակակիցները:

Այսպիսին է մեր իմաստուն գրող, - հնազէտ, պատմաբան Սերօ Խանզադեանի էութիւնը, ապրելու կերպը, նաեւ աշխատելու եղանակը. լցուել կեանքով եւ զատարկուել թղթերի վրայ:

Կէս ժամ առաջ, երբ դուրս եկանք ցից քարերից, նա ոչ թէ եօթանասուն, այլ եօթ հազար տարեկան էր: Հիմա մեզ հիւրընկալողի առաջին դասարանցի երեխան եկել է դպրոցից, Խանզադեանը նրա հետ միասին կարդում է այբուբենը, հարցեր է տալիս, պատասխանում է նրա հարցերին, զարձել է եօթ տարեկան: Չէ, մեծ գրողը տարիք չունի, նա հասակակիցն է իր ժողովրդի, նրա ապրած կեանքի, նաեւ նրա երազանքների:

ԿԱՐԴԱՑԵՔ «ԾԱՌԱՋ»Ը ՏԱՐԱԾԵՑԵՔ

ՓՐՈՖ. ԱՒԵՏԻՍ ՍԱՆՃԵԱՆ Ի ՊԱՏՈՒԻ

Փրոֆ. Աւետիս Սանճեան, դասախօս՝ ԻՒ - ՍԻ - ԷԼ - ԷՅ համալսարանի Նարեկացի Հայագիտական ամպիոնին եւ խմբագիրը Սոսայլըթի օֆ Արմինիըն Սթաթիզ-ի (Հայագիտական Ուսումնասիրութիւններու Ընկերակցութիւն) պարբերաթերթին, 1985 Դեկտեմբեր 28-ին ստացայ մրցանակ մը, որ պատիւ կը բերէ թէ՛ իրեն, թէ՛ ՍԱՍ-ին:

Ամերիկայի գրականութեան փրոֆէսէօրներու միութիւնն է Մատըրն Լանգուէճզ Ասոսիէյշընը (ՄԼԱ), որուն անդամ արձանագրուած են համայն Ամերիկայի 32·000 գրականութեան ուսուցիչներէն՝ 23·000-ը: Ինչպէս ամէն տարի, այս տարի ալ կազմակերպութեան համագումարը տեղի ունեցաւ Ծնունդի եւ Նոր-Տարուան միջեւ, Շիքակոյի մէջ, մօտ 8000 փրոֆէսէօրներու մասնակցութեամբ: ՄԱԿ-ի մաս կը կազմէ Ուսումնասիրական Պարբերաթերթերու Խորհուրդը, որուն անդամ են 197 մասնագիտական հրատարակութիւններու խմբագիրներ: Այս խորհուրդը, ամէն տարի կը քննէ այն 15 - 20 նոր պարբերաթերթերը՝ որոնք հրատարակուած են զանազան համալսարաններէ: Կը քննէ անոնց պարունակութիւնը, ոճը, լրջութիւնը, ապա նաեւ տպագրական, էջադրական մակարդակը, ու անոնցմէ մէկուն կը շնորհէ «տարուան ամենալաւ նոր ուսումնասիրական պարբերաթերթ»ի մրցանակը: Ահա այս մրցանակն է որ այս տարի արուեցաւ ՍԱՍ-ի պաշտօնաթերթին Ձըրնըլ օֆ տիր Սոսայլըթի օֆ Արմինիըն Սթաթիզ-ի: Անոր խմբագիրը, փրոֆէսէօր Սանճեան, իրրեւ զըլխաւոր պատասխանատու թերթին, հրաւիրուած էր Շիքակօ, առանալու համար այս մրցանակը:

Փրոֆ. Ուիլիըմ Պրէսֆըրտ Քլարք ներկայացուց փրոֆէսէօր Սանճեանը, եւ մրցանակի դատական յանձնախումբին կողմէ խօսք առնելով՝ ըսաւ որ հայագիտական պարբերաթերթերը «ունեցաւ բազմաթիւ բարձրորակ մրցակիցներ», սակայն ստացաւ ամենաբարձր գովեստները՝ արժեւորելի բոլոր մարզերուն մէջ» (Իր ըրնտ թրիմէնտըս էխէյմ օն էվրի էֆաուընթ էնտ փոր օլ ասփէէց): Այս բոլորը՝ 30-է աւելի ծանօթ խմբագիր - դիտնականներու ներկայութեան: Ներկայ էին նաեւ Շիքակոյի հայ գաղութէն Կարպիս Մկըրեան (քիմիագէտ) եւ այս տողերը ստորագրողը:

Կը մնայ չնորհաւորել փրոֆէսէօր Սանճեանը եւ խմբագրական կազմի բոլոր անդամները, եւ յուսալ որ հայ համայնքն ալ կարենայ նոյն լրջութեամբ գնահատել ՍԱՍ-ի ձըրնըլը, որուն հրատարակութեան ծախքերը հոգացած է Ալեք եւ Մարի Մանուկեան Մշակութային Հիմնարկը:

ԽԱՉԻԿ ԹԻՕԼԻՕԼԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԶ, ՁԵՌԱԳՈՐԾ ԵԻ ԾԱՂԻԿ

ՄԱՐՍԻԼ. - («Յառաջ»). -

Մարսէյլի Հայ Մշակոյթի Տան Տարօն սրահին մէջ, Յունուարի առաջին շաբաթը տեղի ունեցաւ լինքնատիպ ցուցադրութիւն մը՝ Հայ Կանանց տարազներու ներկայացուած Պուպրիկներու վրայ, հայկական ձեռագործներու եւ մետաքսէ ծաղիկներու:

Հայ կանանց տարազներու պատրաստութիւնը գործն է՝ Մանոյշ Շահմիրեանի: Արդէն երկու տասնեակներով Մարսէյլ (1982, Յունիս 26) եւ Փարիզ (1985, Մայիս 11-ին) բեմերու վրայ ներկայացուած ու գնահատուած աշխատանք մըն է: Հայկական պատմական եւ գեղջկական տարազներն են Ուրարտական շրջանէն Արտաշէսեան եւ Արշակունեաց հարստութիւններէն, Կիլիկեան թագաւորութենէն, Նոր - Ջուղայէն մինչեւ 19-րդ դար: Իւրաքանչիւր շրջան իր յատկանիշներով: Արդ, երեսուներեք Պուպրիկներ տարբեր ժամանակներու պատկանող, տարբեր երկիրներ կամ շրջաններ ներկայացնող, տարբեր ընկերային դասակարգեր բնորոշող գոյներու ներդաշնակութեան մը մէջ կը կազմեն ամբողջութիւն մը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ պատմութիւն, աշխարհագրութիւն, աւանդութիւն եւ բարք Հայոց: Այսպէս, հետաքրքրական է տեսնել Ախլցխայի նորահարսը (19-րդ դար), որուն գօտիին վրայ կարուած է ինքնութիւնն ու ամուսնութեան թուականը: Եղեսիոյ նորահարսի տարազը (19-րդ դար) իր բարձր գլխարկով, Զէյթունի աղջկայ տարազը եւ սպիտակ դրօշը՝ խորհրդանիշ ազատութեան եւ խաղաղութեան: Մանոյշ Շահմիրեան որպէս աղբիւր օգտագործած է հնախոյզներու, բանասէրներու ուսումնասիրութիւններ, մանրանկարներ, թանգարանի նմոյշներ եւ հայկական տարազներու նուիրուած զանազան հատորներ: Արդ, ձեռնարկ մը որ պէտք է դանէ լայն արձագանգ:

Օր. Սաթենիկ Թասլաքեան մասնակցեցաւ ցուցադրութեան իր ձեռագործներով: Ձեռագործութիւնը ինքնին արհեստ ու արուեստ մըն է: Ինքնաչխատութեամբ սորված եւ զարգացուցած, Օր. Սաթենիկ Դասլաքեան ներկայացուց զանազան զործեր՝ ասեղնագործ, մաքուքի գործ, Մարաշի գործ, Այնթափի գործ եւայլն...: Իրապէս, համբերատար աշխատանք որ կը պահանջէ շատ մը ձիրքեր եւ յատկութիւններ, ի մէջ այլոց, ճաշակ, մատներու ճկունութիւն: Օր. Սաթենիկ Թասլաքեանի նպատակն է այս առիթով, յատկապէս հետաքրքրութիւն արթնցնել հայ երիտասարդ կանանց մօտ: Մանօթացնել, սիրցնել եւ ի հարկին սորվեցնել որպէսզի չկորսուի հայկական ձեռագործութեան արուեստը, որ արուեստէն անդին է նաեւ պատմութիւն, աւանդութիւն, այսինքն հայկական հարստութիւն մը: Այս միտումով արդէն Հայ Կանանց արհեստանոց մը կը գործէ Հայ Մշակոյթի Տան մէջ, Շաբաթ օրերը, ժամը 15-էն՝ 18: Հայ ձեռագործութեամբ հետաքրքրող եւ նաեւ առանձնութենէ նեղուող կիներու համար ահաւասիկ սքանչելի պատեհութիւն մը, արդիւնաւորելու համար իրենց ժամանակը:

Ցուցադրութեան երրորդ բաղկացուցիչ տարրը՝ մետաքսէ ծաղիկներն էին, աշխատուած Սօսի Պէզիրճեանի կողմէ: Հոս եւս գոյներուն, ձեւերուն տեսակներուն մէջ կայ փնտռտուք մը, որոշ ներդաշնակութիւն մը ստեղծելու եւ իրականութեան մօտենալու: Գործ մը որ կը պահանջէ ամէն բանէ առաջ ճաշակ: Սօսի Պէզիրճեան առանց արուեստի մը մօտենալու յատկնութեամբ, ներկայացուց իր աշխատանքը եւ վաստակը կազմող բազմաթիւ եւ բազմազան ծաղիկներ, որոնք նաեւ ցուցահանդէսին բերին յատուկ դեղեցկութիւն մը:

Ցուցադրութիւն մը որ կրնայ որպէս առաջնորդ ծառայել աւելի կարեւոր ցուցադրութեան մը հայ ժողովրդական արուեստի վրայ:

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԳԵՂՈՒԹԻՒՆ ԳԵՂՈՒԹԻ

ՊՈԼՍՈՑ Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի 200 պատուարեալներուն հետ, Դեկտեմբեր 29-ին, տեղի ունեցած է ամանորեան խրախճանք մը, որուն ներկայ եղած են Շնորհք Պատրիարք եւ համայնական ներկայացուցիչներ: Ողջոյնի ուղերձ մը արտասանած է տոքթ. Օննիկ Զալըքեան: Երգ, արտասանութիւն եւ նուագ տեղծած են ջերմ մթնոլորտ մը: Խօսք առնելով Շնորհք Պատրիարք ի մէջ այլոց ըսած է. - «Հիւանդանոցը մեր գլխաւոր տուներէն մէկն է: Համայնքին սրտին մէջ չատ լայն տեղ ունի այս հաստատութիւնը: Տարիները կ'անցնին կ'երթան, բայց մեր համայնքին սէրը այս հաստատութեան վրայ մնայուն կ'ըլլայ միշտ»:

×

ՊՈԼՍՈՑ Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի բժշկապետութեան հրաւէրին ընդառաջելով, Դեկտեմբեր 31-ի կէսօրեան, հայ բժիշկներ հաւաքուած են հիւանդանոցին մէջ եւ միասնաբար տօնած Ամանորը: Ներկայ եղած են բազմաթիւ երիտասարդ հայ բժիշկներ, որոնք Եւրոպայի զանազան քաղաքներու մէջ կը պաշտօնավարեն եւ Ամանորի առթիւ գացած էին Պոլիս:

ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՏԱՐԱԶՆԵՐՈՒ ՊՈՒՊՐԻԿՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Հայ Կանանց տարազներու պուպրիկներու ցուցադրութիւնը տեղի ունեցաւ Մարսէյլի Հայ Մշակոյթի Տան Տարօն սրահին մէջ, Յունուարի առաջին շաբաթը: Ցուցադրութեան կազմակերպիչն էր Մանոյշ Շահմիրեան, որ արդէն երկու տասնեակներով Մարսէյլ (1982, Յունիս 26) եւ Փարիզ (1985, Մայիս 11-ին) բեմերու վրայ ներկայացուցած է իր աշխատանքը: Հայկական պատմական եւ գեղջկական տարազներն են Ուրարտական շրջանէն Արտաշէսեան եւ Արշակունեաց հարստութիւններէն, Կիլիկեան թագաւորութենէն, Նոր - Ջուղայէն մինչեւ 19-րդ դար: Իւրաքանչիւր շրջան իր յատկանիշներով: Արդ, երեսուներեք պուպրիկներ տարբեր ժամանակներու պատկանող, տարբեր երկիրներ կամ շրջաններ ներկայացնող, տարբեր ընկերային դասակարգեր բնորոշող գոյներու ներդաշնակութեան մը մէջ կը կազմեն ամբողջութիւն մը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ պատմութիւն, աշխարհագրութիւն, աւանդութիւն եւ բարք Հայոց: Այսպէս, հետաքրքրական է տեսնել Ախլցխայի նորահարսը (19-րդ դար), որուն գօտիին վրայ կարուած է ինքնութիւնն ու ամուսնութեան թուականը: Եղեսիոյ նորահարսի տարազը (19-րդ դար) իր բարձր գլխարկով, Զէյթունի աղջկայ տարազը եւ սպիտակ դրօշը՝ խորհրդանիշ ազատութեան եւ խաղաղութեան: Մանոյշ Շահմիրեան որպէս աղբիւր օգտագործած է հնախոյզներու, բանասէրներու ուսումնասիրութիւններ, մանրանկարներ, թանգարանի նմոյշներ եւ հայկական տարազներու նուիրուած զանազան հատորներ: Արդ, ձեռնարկ մը որ պէտք է դանէ լայն արձագանգ:

Օր. Սաթենիկ Թասլաքեան մասնակցեցաւ ցուցադրութեան իր ձեռագործներով: Ձեռագործութիւնը ինքնին արհեստ ու արուեստ մըն է: Ինքնաչխատութեամբ սորված եւ զարգացուցած, Օր. Սաթենիկ Դասլաքեան ներկայացուց զանազան զործեր՝ ասեղնագործ, մաքուքի գործ, Մարաշի գործ, Այնթափի գործ եւայլն...: Իրապէս, համբերատար աշխատանք որ կը պահանջէ չատ մը ձիրքեր եւ յատկութիւններ, ի մէջ այլոց, ճաշակ, մատներու ճկունութիւն: Օր. Սաթենիկ Թասլաքեանի նպատակն է այս առիթով, յատկապէս հետաքրքրութիւն արթնցնել հայ երիտասարդ կանանց մօտ: Մանօթացնել, սիրցնել եւ ի հարկին սորվեցնել որպէսզի չկորսուի հայկական ձեռագործութեան արուեստը, որ արուեստէն անդին է նաեւ պատմութիւն, աւանդութիւն, այսինքն հայկական հարստութիւն մը: Այս միտումով արդէն Հայ Կանանց արհեստանոց մը կը գործէ Հայ Մշակոյթի Տան մէջ, Շաբաթ օրերը, ժամը 15-էն՝ 18: Հայ ձեռագործութեամբ հետաքրքրող եւ նաեւ առանձնութենէ նեղուող կիներու համար ահաւասիկ սքանչելի պատեհութիւն մը, արդիւնաւորելու համար իրենց ժամանակը:

Ցուցադրութեան երրորդ բաղկացուցիչ տարրը՝ մետաքսէ ծաղիկներն էին, աշխատուած Սօսի Պէզիրճեանի կողմէ: Հոս եւս գոյներուն, ձեւերուն տեսակներուն մէջ կայ փնտռտուք մը, որոշ ներդաշնակութիւն մը ստեղծելու եւ իրականութեան մօտենալու: Գործ մը որ կը պահանջէ ամէն բանէ առաջ ճաշակ: Սօսի Պէզիրճեան առանց արուեստի մը մօտենալու յատկնութեամբ, ներկայացուց իր աշխատանքը եւ վաստակը կազմող բազմաթիւ եւ բազմազան ծաղիկներ, որոնք նաեւ ցուցահանդէսին բերին յատուկ դեղեցկութիւն մը:

Ցուցադրութիւն մը որ կրնայ որպէս առաջնորդ ծառայել աւելի կարեւոր ցուցադրութեան մը հայ ժողովրդական արուեստի վրայ:

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՁՕՆ ԱՌ ՄԱՍԻՍ

ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Բնութիւնը կարողանում է այնպէս միահիւսել, այնպէս մօտեցնել իրեն՝ մարդուն, ինչպէս մայրն է երեխային սեղմում իր կրծքին:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ

×

Իմ մանկութեան առաջին եւ ամենագեղեցիկ յուշը, կապուած բնութեանը, մի յորդառատ անձրեւ է: Պատուհանի դոդում նստած դուրս էի նայում եւ տեսայ, թէ ինչպէս բակում անձրեւաջուրը լճացաւ, ու այդ լճակի վրայ կաթիլները պար եկան:

Մեր պատուհանի դոդին դրուած էր մի ծաղիկ, որին մայրս «ականջօղ» էր ասում. ծաղիկները վարդագոյն ականջօղերի էին նման եւ զանգուլակների պէս օրօրւում էին տերեւների արանքում:

Անձրեւի խոշոր կաթիլներից բակում ճի՛շդ այդպէս «ականջօղեր» էին գոյանում:

Մայրս ասաց. «Դանակի վրայ աղ լըցրէք, դրէք դրան առաջ, անձրեւը կը կըտրուի»: Ահագին ժամանակ անցաւ՝ անձրեւը չարունակում էր: «Ինչո՞ւ չի կտրւում»: «Որովհետեւ մենք խաչերկաթ չունենք. աղը օրէնքով պէտք է խաչերկաթի վրայ լցնել»: «Իսկ ո՞ւր է մեր խաչերկաթէ, - հարցրի ես»: «Մնացել է երկրում», - պատասխանեց մայրս:

Այդ օրուանից շատ տարիներ անցան: Այն ամէնը, ինչ ծնողներս թողել էին երկրում, զրոյցներով փոխանցեցին ինձ, իսկ ամենաթանկագին ու ամենագեղեցիկը՝ Արարատ լեռը, ահա իմ աչքի առջեւ է: Եւ տարիների ընթացքում ես այնքան նայեցի ու այնքան սքանչացայ, որ ի վերջոյ, որոշեցի օրագրումս նրանից մի քանի պատկերներ պահել:

Հիացումն ու հետաքրքրութիւնը Հայոց մեծահռչակ լերան հանդէպ ինձ տարան դէպի մեր անցեալը, չնորհաչատ մեր պատմիչների ու գիտնականների մատեանները, որոնք ըստ հարկի անդրադարձել են Արարատին՝ նախ որպէս բնութեան հրաշագործութեան, ապա նաեւ՝ թէ պատմական ինչ դէպքեր են առընչուել նրան:

Ահա այդպէս, աստիճանաբար, ես վանեցի անհամարձակութիւնը եւ փորձեցի դրիչը ձեռքիս պատուել Մեծ ու Մթամած մեր լերան չուրջը: Արդիւնքը եղաւ՝ «Ձօն առ Մասիս»:

17 Մայիսի, 1979 թ.

Անձրեւի չփչփոցն ու երեխաների ձայնը միաժամանակ լսեցի.

- Արե՛ւ, - արե՛ւ, անձրե՛ւ, - անձրե՛ւ:

Դուրս նայեցի. մի մանչուկ կռացել էր ջրյորդանին, եւ ականջ էր դնում խշշոցին: Մէկ - երկու վայրկեան, եւ տղան ետ թռաւ, որովհետեւ առաւօրէն դուրս յորդեց անձրեւաջուրն ու փրփրեց մայթին: Այդ ժամանակ դեռ սովորական անձրեւ էր: Քիչ յետոյ նորից ձայներ հասան ականջիս.

- Արե՛ւ - արե՛ւ, անձրե՛ւ - անձրե՛ւ:

Նորից մօտեցայ պատուհանին: Շլացուցիչ տեսարան էր: Թուխ ամպերը համատարած պատել էին երկինքը. կենտրոնում միայն, կարծես մէկը դիտմամբ հատել էր ամպէ տանիքը՝ կլոր երդիկ էր բացել, եւ այդ կապոյտ շրջանակից արեւն առատօրէն լուսաւորում էր հեղեղի պէս թափուող անձրեւը: Երկնքից ջրահիւս պարաններ էին կախուած, որոնցով սահում են արեւով ներկուած կաթիլները: Ցածում՝ ծառերի տուտուզ սաղարթներն իրար են հիւսուել եւ ջրափայլուն տերեւներին ամմուկով փչրւում են կայծկլատացող կաթիլները: Միածանանձրեւ էր: Այնքան դեղեցիկ ու այնքան առատ, որ թուում էր վերջ չի ունենալու: Ափսո՛ս, սակայն, ինչն է անվախճան: Քիչ անց ամպերը խտացան, երկնքի կապոյտ պատուհանը փակուեց. հրաշք - անձրեւը այլափոխուեց, դարձաւ մանրահատիկ ու սովրական:

Ցաջորդ օրը, նրանք, ում պատուհանից երեւում է Արարատ լեռը, մէկ այլ «հըրաշք»ի մասին էին խօսում: Երբ արեւանձրեւը դադարել էր, երկնային մի պատուհան էր բացուել Մասիս լերան կատարին: Համատարած ամպամածութեան մէջ, ստորոտից մինչ գագաթ, չողչողացել էր Հայոց աշխարհի Աւագ լեռը, ցուցադրելով իր եզակիութիւնը:

×

8 Հոկտեմբեր, 1979 թ.

Երեւան - Գառնի: Գեղամայ լեռները մանիշակագոյնի նրբերանգների ներկայնակ լինեն կարծես: Սարեանի չքնաղ կտաւները նոյնիսկ բնութեան՝ արուեստանոց բերուած պատառներ են ընդամէնը: Արարատի մեծ եւ փոքր գագաթները բաց - ազատ այդ տարածութեան մէջ այնպիսի՛ վեհութեամբ են բազմել: Նիւթակա՞ն են, թէ երազային: Ստորոտը կապոյտ է հիմա, դէպի վեր արծաթաւուն, իսկ աւելի վեր՝ արեւի կիզիչ ճառագայթները հալեցրել են գագաթը:

(Շար. 1)

Տիկին Արեգնազ Պուռէ, աղջիկներն ու թոռները,
Տէր եւ Տիկին Թագէոս Սողոմոնեան զաւակներն ու թոռները,
Տէր եւ Տիկին Ժորժ Սողոմոնեան, զաւակներն ու թոռը,
Տէր եւ Տիկին Մարսէլ Սողոմոնեան զաւակն ու թոռները,
Օր. Մարկրիթ Սողոմոնեան,
Տէր եւ Տիկին Ռոժէ Լօնէ, զաւակներն ու թոռը,
Տիկին Վարդանոյշ Եղիազարեան, զաւակներն ու թոռները (Հայաստան),
Տիկին Ռոզա Եղիազարեան, զաւակներն ու թոռները (Հայաստան),
Տիկին Մարի Ղազարեան, զաւակներն ու թոռները,
Տիկին Վարդանոյշ Փայլակեան եւ զաւակները,

եւ համայն Եղիազարեան ընտանիքը ցաւով կը ծանուցանեն իրենց մօր, մեծ - մօր, քրոջ, մօրաքրոջ եւ ազգականին՝

ԱՃԻԻ ՏԻԿԻՆ ՂԱԶԱՐ ՍՈՂՈՄՈՆԵԱՆԻ

(Ծնեալ՝ Արուսեակ Եղիազարեան)

մահը, որ պատահեցաւ Յունուար 13-ին, 91 տարեկանին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Հինգշաբթի, Յունուար 16, ժամը 15·45ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Եկեղեցին, ուրկէ մարմինը կը փոխադրուի Արքէօյլի գերեզմանատունը, ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը։

«ԾԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ՎԱՔՈՒՆԱՄԵԿԻ ԱՒՐԻՔ

ՊՈՐՏՕ·· Պետրոս Քէնտէրեան 300 Ֆ·։
ՄԱՐՍԷԼ· - Արսէն Տէր - Զաքարեան 500 Ֆ·։
ՄԱՐՍԷԼ· - Թագուոր Պապանեան 100։
ՄԱՐՍԷԼ· - ՊՕՄՈՆ· - Գրիգոր Պօյաճեան 200 Ֆ·։
ՎԱԼԱՆՍ· - Ալպէր Գասեան 200 Ֆ·։
ԿՐԸՆՈՊԼԸ· - Պետրոս Մանուկեան 200 ֆրանք։
ՊՐՈՆ· - Պ. Զ. Փեհլիվանեան 150 Ֆ·։
ՆԻՕՑԼԻ· - Տիկին Պերճ Զաքըճեան 250 ֆրանք։
ՆԻՄ· - Տիկին Լիւսի Կարապետեան 100 ֆրանք։
ԼՒ. ԿԱՎՈՒ· - Մխիթար Նաճարեան 200 ֆրանք։

ՆՈՒԷՐ

ՌՈՄԱՆ· - Այբի Տիկին Զաթըեան 250 ֆրանք կը նուիրէ Կապ. Խաչի կայանին (առանձ «Ծառաջ»էն) եւ 250 Ֆ· «Ծառաջ»ի բարգաւաճման։

Յակոբ Ապրիեան եւ զաւակը (Փաթրաս, Յունաստան),
Տէր եւ Տիկին Լեւոն Ապրիեան (Փաթրաս),
Տէր եւ Տիկին Շաւարշ Փերանեան եւ զաւակները (Մարսէյլ),
Այբի Տիկին Հերմինէ Ամիրխանեան եւ զաւակները (Փարիզ),
Տէր եւ Տիկին Խաչատուր Ինճէեան եւ զաւակները (Փաթրաս),
Տիկին Մարի Ինճէեան (Փաթրաս),

սրտի խոր կսկիծով կը ծանուցանեն իրենց քրոջ եւ ազգականին՝

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԱՄԻՐԽԱՆԵԱՆԻ

(Ծնեալ՝ Ապրիեան)

մահը որ պատահեցաւ, Մարսէյլ, Յունուար 5-ին, 75 տարեկանին։

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Յունուար 9-ին, Սրբոց Թարգմանչաց Սուրբ Սահակ - Մեսրոպ Եկեղեցին եւ մարմինը ամփոփուեցաւ Սէն - Ժիւլիէնի գերեզմանատունը։

«ԾԱՌԱՋ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՄԻՐԻՊԷԼ· - Տիկին Ազաւնի Սիանի մէկ տարեկան «Ծառաջ» կը նուիրէ իր ծնողքին Տէր եւ Տիկին Տօնիկ Ղամպարեանի։

×

ՄԱՐՍԷԼ· - Օր· Ազնիւ Արապեան մէկ տարեկան «Ծառաջ» կը նուիրէ իր մեծ - հօր՝ Պ· Արիտակէս Պետրոսեանի։

Y A N' S

——x—x—x—x—x—x—x—x—x——

Tournoi Mixte de Tavlou - Nardi

——x—x—x—x—x—x—x—x—x——

OUVERT A TOUS

Le Y A N' S organise son premier trophée YAN'S, édition 1986

Le Dimanche 26 Janvier
à 16 heures
5, ave. Reille, 75014 Paris

Réservation tous les jours de 11 *heures à* 14 *h* 30
au : 45 89 20 48
Inscription : 40 Frs.

imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

CONCERT A L'OPERA DE MARSEILLE

Samedi 25 Janvier à 20 heures 45

par

SIPAN-KOMITAS
(Chœur mixte Arménien de Paris)

et

l'ORCHESTRE PHILHARMONIQUE DE MARSEILLE

Direction
GARBIS APRIKIAN

avec le concours de
SONIA NIGOGHOSSIAN (Mezzo-Soprano)

« Solistes de Chœur »
Thérèse DEYRMENDJIAN (Alto)
Meguerditch BOGHOSSIAN (Tenor)
René MARTAYAN (Tenor)

Au programme les œuvres de
K. ALEMSHAH, P. GANATCHIAN, G. APRIKIAN, A. TIGRANIAN

Concert organisé par la Croix Bleue des Arméniens de France
— MARSEILLE VILLE —

Pour réservation, contacter les numéros suivants :

91 93 89 83 — 91 90 21 60
42 45 05 36 — 91 66 09 06
91 91 48 85 — 91 50 68 71
91 41 74 89

PERMANENCE
Maison de la Jeunesse et de la Culture Arménienne
12 - 14, rue Saint Bazile — 13001 MARSEILLE
LUNDI - VENDREDI de 17h00 à 19h30 — JEUDI de 15h00 à 19h30
TELEPHONE : 91 50 15 09
Et à partir du 20 Janvier location Opéra de Marseille

ԱՒԱՆԴԱԿԱՆ

ԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՎԻԷՆԻ ՄԷՋ

Կիրակի, Յունուար 19, կէսօրէ վերջ ժամը 2·30–էն սկսեալ
Théâtre Municipal

Գեղարուեստական յայտագիր ԿԱՊՈՑ ԽԱՋի դպրոցի աշակերտներուն կողմէ, այս տարի ալ կազանդ Պապան իր այցելութեամբ պիտի ուրախացնէ փոքրիկները։

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

ԿԱՊՈՑ ԽԱՋ–ի Պոմոնի մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ
Կիրակի, Յունուար 19, ժամը 14·30–ին

Պոմոնի միօրեայ Դպրոցի ոռնածառի հանդէսին, տեղւոյն եկեղեցւոյ կից սրահին մէջ։

——— Ձոխ յայտագիր, ջերմ մթնոլորտ, թոմպոլա, եւայլն։ ———

ԷՕՓԻՄԷՆԻԶՄԸ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Աչխարհի բոլոր եկեղեցիները Միութեան համար Աղօթքի Շաբաթ մը կը կազմակերպեն Յունուար 18-էն մինչեւ 25։ Այս տարի եկեղեցիները կ'աղօթեն «Դուք պիտի ըլլաք վկաներս» նիւթին չուրջ։

Այս առթիւ Լիոնի յարանուանութեանց պատասխանատուները նախատեսած են հետեւեալ արարողութիւնները։ -

- Շաբաթ, Յունուար 18, ժամը 18-ին։ Պատարագ՝ Քրուա - Ռուսի Սէն - Տընի եկեղեցւոյ մէջ։

Պատարագը կը մատուցանէ Լիոնի Արքեպիսկոպոս՝ կարդինալ Ա. ՏԸՔՈՒՐԹՐԻ։

Օրուան քարոզը կը խօսի Հայ Առաքելական եկեղեցւոյ պատասխանատուն՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՔՈՐԵԱՆ

- Կիրակի, Յունուար 19, ժամը 10-ին։ Պատարագ՝ Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ։

Պատարագը կը մատուցանէ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՔՈՐԵԱՆ

Հայածէս պատարագին իր ներկայութիւնը կը բերէ Լիոնի Արքեպիսկոպոս՝ կարդինալ՝

Ա. ՏԸՔՈՒՐԹՐԻ

որ կը խօսի քարոզ յատուր պատշաճի։

Այս հոգեպարար արարողութիւններուն սիրով կը հրաւիրուի մեր ժողովուրդը հոգեպէս ներշնչուելու օրուան Սուրբ Խորհուրդով։

ՇԱՐՎԻԷՕ — Ս. ՆՇԱՆ

Փոն - տը - Շէրլի Շարվիէօյի Ազգային Միութեան վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Կիրակի, Յունուար 19, Եկեղեցւոյս մէջ տեղի պիտի ունենայ հանդիսաւոր պատարագ։

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ՎՐԹԱՆԷՍ ԱՒԱԳ ՔՀՆԱ· ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատարագի երգեցողութիւնը կը կատարէ եկեղեցւոյս երգչախումբը, ղեկավարութեամբ՝ Յակոբ Աբրահամեանի։

Պատարագ, ժամը 10-ին։

×

ԾԱՆՕԹ·· Ս. Նշան եկեղեցւոյ վարժարանի Ամանորի հանդէսը տեղի պիտի ունենայ նոյն օրը ժամը 15-ին եկեղեցւոյ կից՝ Ազգային Տան ձէպրայէլ Պահատուրեան սրահին մէջ։

Սիրով կը հրաւիրուին մեր բոլոր ծնողքները իրենց զաւակներով եւ հատատացեալ ժողովուրդը ներկայ ըլլալու սոյն հանդէսին։

Le Club Franco-Arménien d'Antony

présente la troupe
«LES BALLETS ARMENIENS»
sous la présidence de
Patrick DEVEDJIAN
maire d'Antony
le Vendredi 17 Janvier à 20h30 précises
au Théâtre Firmin Gémier
place du Marché d'Antony
Pour se procurer les billets, s'adresser en téléphonant :
46 68 31 13 à Arménag MOVSESSIAN
46 66 09 75 à Anahid MOMDJIAN
42 46 05 58 à CRDA - 36, rue de Trévise
75009 Paris
—— Pas de vente de billets à l'entrée ——

G. I. A.
GROUPEMENT INTERPROFESSIONNEL ARMENIEN

CONFÉRENCE COCKTAIL

le 24 JANVIER — à 19 heures
Philippe GURDJIAN
un homme de communication

Philippe GURDJIAN, 40 ans, sportif accompli, fondateur du groupe GEMAP : 630 MF de chiffre d'affaires en 1985, 18 agences régionales et 2 à l'étranger. Parmi ses clients BMW, PERNOD-RICARD, LONGINES... Il possède aussi des sociétés parapublicitaires dont NOSCAR spécialisée dans le sponsoring automobile et organisatrice du GP de France de F1 en 1985.

Le GIA se devait de l'inviter. Philippe GURDJIAN président du groupe GEMAP nous présentera : «*l'Importance de la communication dans le futur*» le Vendredi 24 Janvier dans les salons de l'Hôtel GEORGE V à Paris.

Ceux qui sont attentifs aux nouvelles techniques de «management» captivés par ceux qui les appliquent, séduits par une réussite exemplaire nous retrouveront le 24 Janvier.

Réservation:
GIA: BP 120 - 75763 PARIS CEDEX 16
Tél : 46 - 03 - 52 - 63

Հ. Բ. Ը. Մ.
ՎԻՆԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Նախագահութեամբ՝
ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՒԵՏԻՔԵԱՆԻ

Կիրակի, Յունուար 19, ժամը 17-ին, Ս. Աբովեան Մշակոյթի Տան մէջ։
1, Quai Pajot — VIENNE

Գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը կը բերեն միօրեայ դպրոցի աշակերտները։

Մուտքը ազատ է։

ԼՕՏՕ

ԿԱՊՈՑ ԽԱՋի ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Կիրակի, Յունուար 19, ժամը 16–ին Հայ Մշակոյթի Տան մէջ
9, rue de Madrid — 94140

ՎԻՃԱԿԱԿԱՆ ՀԱՆՈՒԹԻՒՆ

Բոլորին համար
բազմաթիւ նուէրներ — Պիւֆէ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ· ԽԱՋի Սէն - Ժէռմէի մասնաճիւղը ընդհանուր ժողով կը գումարէ Յունուար 17-ին, Ուրբաթ, կէսօրէ վերջ ժամը 15-ին Թաղիս եկեղեցւոյ կից սրահին մէջ։

Բոլոր անդամուհիներէն կը խնդրուի ներկայ ըլլալ։ Օրակարգ՝ տեղւոյն վրայ։

×

ԿԱՊ· ԽԱՋի Փարիզի մասնաճիւղի վարչութիւնը ընդհ· ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամուհիները, Շաբաթ, Յունուար 18, ժամը 15-ին, Մշակոյթի Տունը, 17 ռիւ Պլէօ։ Կարեւոր օրակարգ։ Պատշամաւորի ընտրութիւն, անդամուհիներու մեծամասնութիւնը անհրաժեշտ է։

ՈՒՐԲԱԹ
ՅՈՒՆՈՒԱՐ
17
VENDREDI
17 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՀԱՐԱՉ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.140
Fondateur : SCHAVARCH MISSAKIAN
61e ANNÉE — No 16.140

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
ՀԵԹԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ
(ԱՐՄԷՆՓՐԷՍ - ՅՈՒՆՈՒԱՐ 10 - 13)

ՅՈՒՇԱՏԱԽՏԱԿ
ԶՕՐ· ՍԱՐԳԻՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ
ՏԱՆ ՊԱՏԻՆ

Երեւանի Աբովեան փողոցին մէջ գտնուող՝ զօր· Սարգիս Մարտիրոսեանի բնակած տան պատին յուշատախտակ մը փակցուած է: Սարգիս Մարտիրոսեան ծանօթ անուն մըն է Խորհ· Միութեան ռազմական կեանքին մէջ: Բ· Աշխարհամարտին զօրավար Մարտիրոսեանի տաղանդը երեւան եկած է Եասի - Քիշնեւի, Սանդոմիրի, Պեռլինի, Զեխոսլովաքիոյ ճակատներուն վրայ: Ողբացեալ զօրավարը Աբովեան փողոցի յիշեալ տունը ապրած է 1956 - 1984 թուականներուն: Յուշատախտակին հեղինակն է ճարտ· Ստեփան Քիւրքճեան:

×

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՐԿԵՐԸ
ԼՈՑՍ ՏԵՍԱԾ

Ռուբէն Սեւակի (Զիլինկիրեան) պրակն ժառանգութիւնը Ի· դարու հայ գրականութեան փայլուն էջերէն է: Ամէն անգամ երբ կը յիշենք գարապակիզքի արեւմտահայ բանաստեղծութեան մեծերը՝ Մեծարենց եւ Սիամանթօ, Վարուժան եւ Թէքէեան, անոնց կողքին միշտ կը դնենք Սեւակի անունը: Սակայն պարագաներու բերմամբ, անոր գործերուն կարեւոր մասը մինչեւ վերջերս անծանօթ էր ընթերցողներու լայն շրջանակին, հակառակ անոր որ Ռուբէն Սեւակի փոքր ժառանգութիւնը, քաղաքատած նահատակ միւս բանաստեղծներու՝ Վարուժանի եւ Սիամանթոյի ժառանգութեան հետ, աւելի լաւ պահպանուած է, սակայն բազմաթիւ պատմուածքներ, բանաստեղծութիւններ ու նամակներ դուրս մնացած են դանազան տարիներ տպագրուած հատորներէն, իսկ մէկ մասն ալ անտիպ կը:

«Սովետական Գրող» հրատարակչական-ը լոյս ընծայած է ծաւալուն հատոր մը, որուն ճաշակով ձեւաւորուած կողքին վրայ կը կարդանք· «Ռուբէն Սեւակ, երկեր»: Շուրջ 500 էջերէ բաղկացած գիրքը լոյս տեսած է 20 հազար տպաքանակով· կազմած եւ ծանօթագրած է պրակեան քննադատ Ալեքսանդր Թօփչեան, իսկ յառաջաբանը գրած է Ստեփան Թօփչեան, որ մանրամասնօրէն վերլուծած է Ռուբէն Սեւակի արձակ եւ չափածոյ երկերը, անոր ստեղծագործութեան ակունքներն ու ազդեցութիւնները փնտռելով ոչ միայն հայ, այլեւ ժամանակի արեւմտա - եւրոպական մշակոյթին մէջ: Բացի այդ, յառաջաբանին հեղինակը կրցած է օրկանական կապ ստեղծել բանաստեղծին բացառիկ ճակատագրի, թարոյական բարձր իտէալներու եւ անոր գործերուն միջեւ:

Հրատարակչութեան կողմէ եղած ծանօթագրութեան մէջ կ'ըսուի, թէ «բանաստեղծի գրական ժառանգութիւնն առաւել ամբողջութեամբ ընթերցողին ներկայացում է առաջին անգամ: Ի մի են բերուած ոչ միայն ժամանակի մամուլում ցրուած երկերը, այլեւ անտիպները»: Այս հաւաքածոն թէ՛ նիւթերու քանակով, թէ՛ ծաւալով անհամեմատ աւելի մեծ է քան բանաստեղծին նախորդ բոլոր գիրքերը:

Ռուբէն Սեւակի նոր հաւաքածոն կազմուած է հետեւեալ բաժիններէ՝ «Կարմիր գիրքը», Մամուլի էջերից, Անտիպներ, Թարգմանութիւններ, Արձակ էջեր եւ Նամակներ:

«Կարմիր գիրքը» պոէմներու հաւաքածոն բանաստեղծին ողջութեան լոյս տեսած միակ գիրքն է: Ծանօթ է, որ Ռուբէն Սեւակ կը պատրաստուէր լոյս ընծայել նաեւ «Վերջին Հայերը», «Սիրոյ Գիրքը» եւ «Քառս» հաւաքածոները: Անծանօթ պատճառներով այդ գիրքերը լոյս չեն տեսած, սակայն պահպանուած են այդ բանաստեղծութիւնները, որոնք հիմք պիտի դառնային յիշեալ հաւաքածոներու համար: Անոնք առնուած են գրքի «Մամուլի էջերից» բաժնին մէջ, որ կազմուած է արեւմտահայ եւ Սիփիւռքի հայ մամուլի մէջ տարբեր տարիներ լոյս տեսած բանաստեղծութիւններէ: Մինչեւ հիմա լոյս տեսած կարգ մը հաւաքածոներու մէջ Ռուբէն Սեւակի բանաստեղծութիւնները ներկայացուած են անոր չհրատարակուած գիրքերու վերնագրերուն տակ՝ ենթադրաբար զանոնք բաժնելով ըստ թեմաներու՝ սիրային («Սիրոյ գիրքը»), հայրենասիրական («Վերջին Հայերը») եւ ընկերային («Քառս»):

«Մամուլի էջերից» եւ միւս բաժինները կազմուած են առաւելաբար ժամանակագրական սկզբունքով: «Անտիպներ» եւ «Թարգմանութիւններ» բաժինները աւելի քան հարիւր բանաստեղծութիւն կը ներկայացնեն ընթերցողին, որոնք մինչեւ հիմա ոչ մէկ անգամ հրատարակուած էին կամ առնուած բանաստեղծին ոչ մէկ հաւաքածոյի մէջ: Անոնց մէջ կան իսկական գլուխ - գործոցներ: «Առջի Հայերը», «Երազներ», «Ոչ», «Ձօն», «Նահապետը» բանաստեղծութիւնները, որոնք ոչ միայն Սեւակի, այլեւ ի· դարու հայ բանաստեղծութեան փայլուն էջերու շարքին կրնան դասուիլ:

Մօտաւորապէս նոյն պատկերը կը պարզեն բանաստեղծին արձակը եւ նամակները ներկայացնող բաժինները: Սեւակ ծանօթ էր որպէս նուրբ, հոգեբանական պատմուածքներու հեղինակ: «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» ընդհանուր խորագրին տակ արեւմտահայ մամուլի եւ զանազան հաւաքածոներու մէջ լոյս տեսած են բազմաթիւ պատմուածքներ, ակնարկներ ու յօդուածներ, սակայն առաջին անգամն է, որ այդ «էջերը» հաւաքուած են գիրքի մը մէջ: Բանաստեղծ Ռուբէն Սեւակ նոյն տարեն ծանօթ բժիշկ Ռուբէն Զիլինկիրեան էր, կամ ինչպէս ընդունուած էր ըսել այն տարեն՝ տոքթոր Զիլինկիրեան: Այս հանդամանքը կարեւոր դեր խաղացած է Սեւակի արձակին մէջ. պատմուածքներու մեծ մասը անդրած է յստակ նպատակներով՝ բժշկական գիտելիքներ տարածել զանգուածներու մէջ: Այս առումով ուշադրութեան արժանի է յատկապէս «Այլասերումը» ակնարկը, ուր, կարծէք նախազգալով մեծ եղեռնի արհաւիրքները, Սեւակ կը ձգտի արիւնթափ արթնցնել ժողովուրդին եւ բարձր գիտակցութիւն մտաւորականութեան մէջ:

Նոր հաւաքածոյի յայտնութիւններէն մէկն ալ թերեւս բանաստեղծին նամակներն են, որոնցմէ յատկապէս կ'արժէ առանձնացնել Ռուբէն Սեւակի եւ իր կնոջ՝ Եաննի Արէլի ընդարձակ նամակագրութեան քանի մը նմոյշները: Գիրքին լայն ծանօթագրութիւնները ոչ միայն մանրամասն տեղեկութիւններ կուտան Սեւակի գրեթէ իւրաքանչիւր գործի մասին, այլեւ կ'օգնեն ընթերցողին խորանալու տուեալ երկի եւ ընդհանրապէս բանաստեղծին գրական ժառանգութեան մէջ:

1986 Դեկտեմբերին: Այլ խօսքով, Դեկտեմբերէն սկսեալ Թուրքերը միւս Եւրոպացիներուն հետ, նոյն իրաւունքները պիտի ունենան եւ ոչ օք - օրինակ՝ Արեւմըտեան - Գերմանիա - պիտի կարենայ զանգուածային կերպով ետ դրկել: Այս իսկ պատճառով է, որ Արեւմտեան - Գերմանիա կը փորձէ կրկին բանակցիլ այդ յօդուածին շուրջ եւ միւս երկիրներն ալ զօրավիզ են իրեն: Թուրքիա չընդունիր որ ընկերութեան այս համաձայնագիրը «սառած» ըլլալով պետական հարուածին պատճառաւ Եւրոպական Խորհրդարանին կողմէ, այդ յօդուածն ալ «սառի»: Կ'առարկէ որ այդ յօդուածը ի գործու կը մնայ: Խօզալ տրամադիր է բանակցելու, նոյնիսկ ջնջումը կամ յետաձգումը ընդունելու: Փոխարէ՞ն՝ մի քիչ փող, մի քիչ դէնք···:

ԹՈՒՐՔԻՈՑ ՆԱԽԱԳԱՀԸ երեք օրուան պաշտօնական այցելութիւն մը պիտի կատարէ Եգիպտոս, Շաբաթ օրուընէ ըսկսեալ: Էվրէն եւ Մուպարաք խօսակցութիւններ պիտի ունենան, ինչպէս նաեւ Թուրք եւ եգիպտական պատուիրակութիւններ, ապա Էվրէն Լուքսոր պիտի անցնի եւ Երեքշաբթի օր ալ՝ Քաթար:

ՄԱՐՏԻՆԻ ԵՒ ՍՂԵՐԴԻ մէջ, Թուրքերը չորս «անջատողական» սպաննած են:

ԿՈՐԲԱՋՈՎ կ'առաջարկէ որ հիւլէական բոլոր զէնքերը մէջտեղէն վերնան մինչեւ 2000 Թուականը: Ռեակըն դրական կը գտնէ առաջարկը:

ՄԻԱՑԵԱԼ ՉԻԳԵՐՈՎ

Գրեց՝ ԱՒՕ ՊՈՂԻԿԵԱՆ

Այս նոր տարուան մեր համազգային օրակարգի ամէնէն հրատապ հարցերէն մէկը Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան տնտեսական ծանր տագնապին նպաստաւոր լուծում մը գտնելն է:

Ներկայ պայմաններու տակ, չնորհիւ Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէի «երկու տարիներու դըժուար, լուռ եւ յամառ աշխատանքներուն», այդ նպաստաւոր լուծումը կը հանդիսանայ 5 միլիոն տոլարի գոյացումը՝ ամէնէն ուշը մինչեւ 1986-ի կիսուն:

Միջազգային Կոմիտէն արդէն իսկ այս ուղղութեամբ առած է առաջին քայլը· համայն հայութեան ուղղուած կոչով մը, Կոմիտէն ձեռնարկած է համազգային հանգանակութեան, որպէսզի «ոչ մէկ գիշում (կատարուի) անցեալի մեր աւանդներէն թէ դարերու ընթացքին հայու լումաներով հաւաքուած ժառանգութենէն»:

Վստահաբար Սիփիւռքի որեւէ գաղութի եւ կամ ոեւէ հատուածի համար առանձինն դժուար, եթէ ոչ անհնար պիտի ըլլայ այդ գումարը հանգանակել:

Նոյնիսկ եթէ կարելի ըլլայ ընել այդ, աւելի ճիշդ ու խորհրդանշականօրէն իմաստալից պիտի ըլլայ սիփիւռքեան բոլոր կողմերու ու հոսանքներու ճիգերու միացումը՝ պահանջուած գումարը գոյացնելու գործին համար:

Իւրաքանչիւր Հայ, անկախ իր դաւանական ու գաղափարական համոզումներէն, մտահոգ է Վենետիկի մշակութային դարաւոր կեդրոնի ճակատագրով ու անվերապահօրէն թեւ ու թիկունք կը կանգնի Ս· Ղազարու մշակութային գանձերն ու ընդհանրապէս վանքապատկան հարըստութիւնները փրկելու աշխատանքներուն:

Մխիթարեան Միաբանութեան այս կեդրոնը, բացի իր ներկայացուցած պատմական արժէքէն, անփոխարինելի դեր կը կատարէ նաեւ այսօր, իբրեւ հայագիտական ուսումնական - հետազօտական կեդրոն, իբրեւ 1843-էն ի վեր արժէքաւոր «Բազմավէպ» ամսագրի եւ բազմաթիւ այլ բանասիրական ու հայագիտական երկերու հրատարակիչ, իբրեւ Սիփիւռքի զանազան շրջաններու մէջ բազմաթիւ վարժարաններ հովանաւորող հաստատութիւն:

Կը մնայ, որ իւրաքանչիւրս, իր կարելիութեան համեմատ, արձագանգէ Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէի կոչին ու մասնակցի ձեռնարկուած հանգանակութեան:

«Ասպարէզ», Յունուար 3
Քալիֆորնիա

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Akaby NASSIBIAN

BRITAIN AND THE ARMENIAN QUESTION 1915 - 1923 *

Գրեց՝ Ա. ՊԷՅԼԷՐԵԱՆ
(Պատմ. Գիտ. Տոքթէօր)

(Բ. եւ վերջ)

Ծանօթ է թէ Թուրքիա զաշնակիցներու միջեւ մրցակցութիւնը եւ անվստահութիւնը հրահրելու նպատակաւ Անգլիոյ նախարարութիւն տուաւ եւ 1918 Հոկտեմբեր 30-ին Մուդրոսի զինադադարը կնքեց: Ինչպէս զիտել կուտայ Նասիպեան, զինադադարի պայմանները երկու հիմնական պայմաններէ զուրկ էին ինչ որ առաջին մէկ օրէն յետ - պատերազմեան հայկական պահանջները անելի կը մատնէին (տե՛ս էջ՝ 57): Ասոնք էին. -

1.- Արեւմտահայաստանի՝ վեց նահանգները միւս Օսմանեան սիրապետութեան տակ կը մնային:

2.- Անգլիա նոյնիսկ պարտեալ Թուրքիոյ չէր պարտադրած որ տարապրութենէն վերապրողները իրենց երկիրը վերադառնալով իրենց տուներուն եւ առաջուծքին տիրանան:

Աւելցնենք Գ. պայման մը, որ Նասիպեան չի յիշեր: Մինչ համաձայնականները Գերմանիոյ եւ Աւստրիա - Հունգարիոյ զինաթափումը պահանջեցին, բոլոր Թուրք ժողովուրդը մինչեւ իր ակռաները զինուած մնաց: Ոչ թէ ան զինաթափ չէր եղած, այլ՝ Պրէսթ - Լիթովսքի դաշնագիրէն յետոյ երբ ռուս զինուորը բոլոր զինամթերքը ձգած չտապելով հայրենիք վերադարձաւ, Թուրքը առանց փամփուշտ մը արձակելու այդ բոլորին տիրացաւ:

Իր ուսումնասիրութեան դիմաւոր նիւթը անգլիական քաղաքականութեան հայկական հարցի նկատմամբ որդեգրած քաղաքականութիւնը ըլլալով Նասիպեան քանի մը տողի մէջ միայն կ'ամփոփէ հայկական ցեղասպանութեան դործադրութիւնը երիտթուրք իշխանութիւններու կողմէ: Մենք պիտի փափաքէինք որ աւելի տեղեկութիւն տրուած ըլլար տարապրութեան մասին, եւ ըլլայ քաղաքական նպատակը, ու ըլլայ տնտեսական կողմերը աւելի բացայայտ կերպով յայտնաբերուէին: Ծանրանալով անգլիական նենդամիտ քաղաքականութեան վրայ, հեղինակը խիստ հետաքրքրական փաստերով կ'ապացուցանէ թէ «նենդամիտ Ալպիոնը» ինչպէս հայ ժողովուրդին օրհասական կացութենէն առաւել եւս օգուտներ քաղելու հետամուտ եղաւ 1915-էն 1916 տարուան ընթացքին: Ջոր - օրինակ հետաքրքրքրական է իրօք իմանալ թէ ռուս Արտաքին Գործոց նախարար՝ Սազոնոֆի թելադրութիւնով ռուս դեսպան կոմս Պէնքէնտորֆ անգլիական կառավարութեան կ'իմացնէ թէ «Ռուսական կառավարութիւնը պատրաստ է մէկ միլիոն Ֆրանք տրամադրելու Մէյազետքի եւ Սուրիոյ անապատներուն մէջ անօթի ու ծարաւ մեռնող հայ տարագիրներու օգնելու համար, եթէ այդ դումարին կէսը անգլիական կառավարութիւնը կ'ուզէ ըստանձնել»: Անգլիական Արտաքին Գործոց նախարարութիւնը տրամադիր չըլլար, որովհետեւ Պէնքէնտորֆ առաջարկած էր որ այս օգնութիւնը ամերիկացի միսիոնարներու միջոցաւ եւ զաղտնի ըլլայ որպէսզի ուզղակի տարապեալները օգտուին, մինչ անգլիական կառավարութեան պատասխանատուները կ'ակնկալեն որ եթէ «Ապլիա այդքան մեծ դումար (3) մը պիտի տրամադրէ, պէտք է որ հրապարակաւ ծանուցուի այդ որպէսզի իր մարդասիրական ժէտթէն արար աշխարհ տեղեակ ըլլայ»: Բնականաբար առաջարկը ջուրը կ'իյնայ: Բայց միշտ աշխարհի, - եւ նամանաւանդ Միացեալ - Նահանգներու, - հանրային կարծիքը իրենց դաւին չահելու նախանձախնդրութեամբ, անգլիացի դիւանագէտները կը թելադրեն Լորտ Պրայսի որ երիտասարդ պատմաբան Թոյնպիի հետ միասին Կապոյտ գիրք մը պատրաստեն ուր հայկական կոտորածներու վկայութիւնները պիտի ներկայացուին (տե՛ս էջեր՝ 79 եւ 80):

Ըստ Նասիպեանի, Անգլիոյ այս ձեռնարկը երկու նպատակ կը հետապնդէր: Նախ համաշխարհային հանրային կարծիքը (ի մասնաւորի Ամերիկան համոզել) որ «արդար դատը համաձայնականներունն է»:

Յետոյ «սիրաշահիլ նաեւ Հայերու համակրանքը», թէեւ անոնց հոգեմասը այլեւս Անգլիոյ համար նոյն կարեւոր հանդամանքը չէր ներկայացներ ինչպէս պատերազմէն առաջ:

Պրայսի զիրքը որ 1916 Նոյեմբեր 23-ին Անգլիոյ Խորհրդարանի ժողովին ներկայացուեցաւ մինչեւ մեր օրերս ալ հայկական ցեղասպանութեան փաստաթուղթերու վերաբերեալ կարեւոր քանի մը հրատարակութիւններէն մին կը նկատուի: Մեր կարծիքով քիչ մը չափազանցուած պիտի ըլլայ եթէ ըսենք թէ այս զրքին հրատարակութիւնը Ամերիկայի արտաքին քաղաքականութեան մէջ հիմնական դեր ունեցաւ եւ անոր պատերազմի մտնելու ազդակներէն մին եղաւ, ինչպէս զիտել կուտայ Նասիպեան: Դեռ նոյն տարւոյ Սեպտեմբերին, այսինքն Պրայսի եւ Թոյնպիի կապոյտ գրքին հրատարակութիւնէն մօտաւորապէս երկու ամիս առաջ Ֆրանսայի Ամերիկայի դեսպան Ժիւսըրան Փարիզ կը զրկը արդէն թէ Միացեալ - Նահանգներու զրեթէ բոլոր եկեղեցիներուն մէջ հայ զոհերուն յիշատակին համար արարողութիւններ տեղի պիտի ունենան: Պրայսի զրքին պատրաստութեան նպատակին մէջ ուրիշ յետին միտք մըն ալ կայ որ իրօք խիստ հետաքրքրական է եւ կ'ուզենք հոս «Յառաջ»ի ընթերցողներուն ներկայացնել: Երբ 1915-ի գարնան Ռուսաստան կը լսուէր նահանջել, Լիթուանիա - Լեհաստան սահմանագլուխի չրջանին մէջ բնակող Հրեաներուն հանդէպ ռուս զինուորները խժդուժութիւններ կը կատարեն (էջ՝ 81): Գերման կառավարութիւնը առիթը չի փախցներ ու կը հրաւիրէ ծագումով հրեայ ամերիկացի լրագրողներ, որոնք տեղւոյն վրայ այցելելով քննութիւններ կը կատարեն ու յետոյ Ամերիկայի մամուլին մէջ կը ձադկեն անգլիական կառավարութիւնը որ «բարբարոս» միապետական Ռուսաստանի դաշնակիցը եղած է եւ սակայն կը յայտարարէ թէ «մարդկային իղձի ազատութեան եւ յանուն արդարութեան կը կռուի»:

Հետեւաբար 1915-ի Հայկական Եղեռնը անգլիական կառավարութեան համար լուսաղոյն առիթն է որ կը ներկայանայ պերմանն կառավարութիւնը պարսաւելու ու պայն հայ ժողովուրդի բնաջնջման թրքական ծրագրին մեղսակից հռչակելու համար անգլիական կառավարութիւնը այսքանով ալ չի բաւականանար, եւ ըստ Նասիպեանի նչած փաստաթուղթերուն, Ալպիոն Գերմանիան կը նկատէ բուն պատասխանատու հայկական կոտորածին: Կարծես երկու միլիոնէն աւելի Հայութիւնը Գերմանիոյ մէջ ապրէր եւ ոչ թէ Օսմանեան կայսրութեան մէջ ու անոնք Գերմանիոյ կողմէ Միջագետքի անապատները աքսորուած ըլլային:

Հակառակ դաշնակից ատրութիւններու «ջերմ» արտայայտութիւններուն, եւ խոստումներուն, դժուար չէր արդէն 1919 տարուան սկսան իսկ կռահել Հայաստանի վիճակուած փոթորիկը: Դաշնակիցներու խաղաղութեան ժողովներու մէկ նիստին Վլէմանսոյի մէկ յայտարարութիւնը խիստ ուշագրաւ է: Ան կ'ըսէ. - «...Ֆրանսա ոչինչ կրնայ ընել (Հայաստանի համար), Իտալիա ոչինչ կրնայ ընել, Անգլիա ոչինչ կրնայ ընել, հիմակուհիմա Ամերիկա եւս ոչինչ կրնայ ընել, հարկ է ուրեմն այս պայմաններու տակ տեսնել թէ ուեւէ հայ պիտի ուզէր մնալ (Հայաստան)»: Արդարեւ Հայաստանի Հանրապետութիւնը 1919 տարւոյ աշունէն սկսեալ տագնապալի պահեր կ'ապրի: Շրջապատուած թշնամի դրացիներէ, ծանրաբեռնուած կէս միլիոնի մօտ դաղթականներով, տնտեսապէս անապահով եւ անբաւարար զօրքով ու ռազմամթերքով, իր զոյութեան ապաւէնը դաշնակից մեծ պետութիւններն են: Մինչ Պալֆուրի յաւտարարութիւնը ամենայըս - տակ կերպով ցոյց կուտայ Անգլիոյ դիրքորոշումը: «Անգլիա Հայաստանի մէջ ոչինչ ունի» կը յայտարարէ ան այլ միայն մարզասիրական հետաքրքրութիւն մը որ կը բաժնէ Ամերիկայի հետ (էջ՝ 173)»:

Արդարեւ Սեւրի դաշնագրի նախօրեակին Հայաստանի կացութիւնը աւելի քան վտանգաւոր է: Ամերիկա արդէն եւրոպացին քաշուած ըլլալով դաշնակից երեք մեծ պետութիւնները (Անգլիա, Ֆրանսա եւ Իտալիա), դիտել կուտայ Նասիպեան, մեծ պատասխանատուութիւն մը ստանձնած են մանաւանդ Միջին - Արեւելքի մէջ ուր բազմաթիւ փոքր ժողովուրդներ Օսմանեան կայսրութեան փլուզումով իրենց ապագային համար արդար լուծումի մը կը սպասեն:

Վարչապետ Լոյտ Ճորճ կ'առաջարկէ որ դաշնակիցները զինեն Հայերը, եւ այս վերջիններս իրենց դասը իրենք զինքի ուժով լուծեն: «Եթէ Հայերը չեն կըրնար իրենց երկիրը պաշտպանել» կ'ըսէ անգլիացի դիւանագէտը, չարժեր այսպիսի ազգի մը ճակատագրով զբաղիլ: Ամերիկ մեծանուն անգլիացի դիւանագէտին լուծման եզանակը, որուն ամէն մէկ դովասանական խօսքը մեծ յոյսերով եւ երախտագիտութիւնով կը լսուէր պատերազմի ընթացքին հայ ժողովուրդի միամիտ «դիւանագէտ առաջնորդներուն» կողմէ:

1920 Յունիսին ամերիկեան Ծերակոյտը մերժեց Հայաստանը Ամերիկայի պաշտպանութեան տակ առնել: Երբ Օգոստոսի սկիզբը (1920) Սեւրի դաշնագիրը ստորագրուեցաւ, Թուրքիա (4) եւ միւս տէրութիւնները ընդունեցան որ Հայաստանի սահմաններու մասին նախագահ Ուիլսընի առաջարկը նկատի առնուի: Իսկ երբ Հայաստանի սահմանները մինչեւ որ համամասնութեամբ զծուեցան արդէն Նոյեմբեր ամիսն էր, եւ ազգայնական Թուրքիոյ զօրագունդերը Երեւանի դռները հասած էին (էջ՝ 188): Սեւրի դաշնագիրը կը զրէ տոքթէօր Նասիպեան, եւրոպական ատրութիւններուն առիթ տուած էր որպէսզի իրենց խոստումներուն անկեղծութիւնը ապացուցանեն, բայց ասոր փոխարէն ան ոչ մէկ ապահովութիւն բերած էր Հայաստանի ապագային համար: Ընդհակառակն եթէ սուլթանական Թուրքիոյ կառավարութիւնը ստիպուած էր այդ դաշնագիրը ստորագրել ազգայնական Թուրքերը ասոր փոխարէն կատղած էին: Սեւրի դաշնագիրը որ Հայոց համար առաջին կարեւոր դաշնագիրն էր որ միջազգային հանդամանք ունենար, ազգայնական Թուրքերուն համար դրգռութեան փաստաթուղթ մը եղած էր:

Այս վերջին տասնամեակին երբ մեր հայրենակիցներէն չատեր գիտցողն ու չդիտցողը Սեւրի դաշնագրին մասին կը խօսի, եւ կարծիք կը յայտնէ, կ'արժէ որ ուշի ուշով նախ կարդայ Նասիպեանի գիրքը: Տեսնել պէտք է թէ դաշնակիցները ի՞նչ ակնկալութիւններ ունէին եւ նախ իրենք կը հաւատայի՞ն թէ ան գործադրելի պիտի մնար, եւ կամ կրնար մնալ:

Իխտ հետաքրքրական լուսաբանութիւններ պարունակող այս գիրքը կրնանք յանձնարարել մեր այն բոլոր հայրենակիցներուն, որոնք անգլերէն լեզուին տեղեակ են եւ կը հետաքրքրուին հայ ժողովուրդի ժամանակակից պատմութեամբ:

Վերջացնելէ առաջ կ'ուզենք նաեւ կարգ մը պատմական ճշդումներ կատարել. -

1.- Էջ 3. Նասիպեան կը զրէ թէ ռուս - Թուրք պատերազմը 1876 - 1877-ին տեղի ունեցած էր, մինչ ծանօթ է թէ 1877 - 1878-ին էր: Արդէն էջ 6-ի վրայ ան կը զրէ թէ պատերազմը 1878-ի գարնան վերջացաւ:

2. - 1914 Փետրուար 8-ի ռուս - Թուրք համաձայնագիրով Օսմանեան կայսրութիւնը ընդունեցաւ որ Արեւմտահայաստանի դաւառները հիւսիս եւ հարաւ ըլլալով երկու վարչական բաժանումներ ունենան: Հիւսիսի չրջանը երեք նահանգներէ կը բաղկանար, Էրզրում, Սեբաստիա եւ Տրապիզոն: Այս վերջին նահանգը թէեւ Հայաստանի մաս չէր կազմեր, բայց եւրոպական Թուրքիոյ կառավարութիւնը կարգ մը նկատումներով պահանջած էր, մինչ Նասիպեան իր քարտէսին մէջ Տրապիզոնը մոռցած ըլլալ կը թուի (տե՛ս էջ՝ 4):

3.- էջ՝ 67-ի վրայ, ան կը զրէ թէ Գերմանիոյ ազդեցութիւնը Թուրքիոյ մէջ 1883-ին սկսաւ, մինչ 1880-ին է: Երբ Կոնստանդնի Ազատական կուսակցութիւնը Թուրքիոյ դէմ լուրջ միջոցներու ձեռնարկեց Պերլինի դաշնագրի չգործադրուած պայմանները պարտադրելու համար, Սուլթանը Պիսմարքի դիմեց (1880-ի ամառը):

4.- Նասիպեան կը զրէ թէ Թուրքիա որոշած էր Հոկտեմբերին (1914), Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ կռուիլ (էջ 69): Թուրքիա դեռ ընդհանուր պատերազմը չսկսած Գերմանիոյ հետ դաշնքի համաձայնութեան մը բանակցութիւնները կը կատարէր: Համաձայնութիւնը կնքուեցաւ 1914 Օգոստոսին սկիզբը, եւ տեւեալ օրը Թուրքիա պատերազմի պատրաստութիւնները սկսաւ զօրաշարժի ենթարկելով 20-էն 45 տարեկան այրերը: Ան պատերազմի մտաւ երբ իր բոլոր պատրաստութիւնները լրացուցած էր:

Նասիպեանի զիրքը կը պարունակէ ընտրեալ զիրքերու ցրացուցակ մը, եւ խնամքով պատրաստուած յատուկ անուններու անուանացանկ մը որ կը դիւրացնէ ընթերցողին պրպտումները:

Մեր ջերմ չնորհաւորութիւնները:

---

(3) 20·000 անգլիական ոսկիի համարժէք գումար մը:

(4) Պոլսոյ կառավարութիւնը անշուշտ, եւ ոչ թէ ազգայնականներու Անգորայի կառավարութիւնը:

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԷՋԵՐԷՆ

Ազգային Երգը

... Աչնան մի պայծառ առաւօտ կր. Արարատեան դաշտի հրաշագեղ աչունը. փոշոտ ցանքերի ծիլէից փայլփլում էին խաղողի ոսկեդէն ողկոյզները, նուռն ու խնձորները, ասես, հրեղէն գնդակներ լինէին. յուրթի այդիներից լիութեան անոյշ բուրմունքն է խնկում. վերեւ, բաց կապոյտում, հաւքերի չղթան էր ձգում, ներքեւ, ցօղաթուրմ արահետներով տայ պեղչուկի սայլերն ու ձիերն էին անցնում՝ բարձուած աչնան հազար ու մի բերքերով:

Երկու ընկերով գնում էինք հինաւուրց Արմաւիրի բլրի տակով. մեր գլխի վրայ ծփում էր մեհենական սօսիների խորհրդաւոր սօսափը. երկուսս էլ լուռ էինք, տարուած մեր տեսիլներով:

Մեր ցուպերը՝ հովիւների պէս մէջք. ներիս լայնքով զրած արմունկներիս մէջ, քայլում էինք Երասխի հին հունով դէպի մի գիւղ՝ Երասխի ձախ ափին:

Սքանչելիք է Արարատեան դաշտը:

Մասիսը ուղղակի գիմացներս էր. այն պէ՛ս պարզ ու վճիտ էր, որ նրա ոտքերից մինչեւ գագաթը մէկ - մէկ կարելի էր դիտել: Մի հսկայ սպիտակաբաշ առիւծի է նման նա, նստած յետի ոտքերի վրայ, ալեւոր գլուխը անհունի մէջ, հանդիստ եւ անվրդով:

Աչնան քաղցր ու մեղմ արեւը Մասիսի վերից վար եւ Արարատեան երկրի լայնքին ու երկայնքին իր տարածուն ծիրանին էր փռել:

Մտանք մեր նպատակադրուած գիւղը:

Յաջորդ օրը, մեկնելուց առաջ գնացինք գիւղական դպրոցի դպրոցը այցի. ուսուցչի հետ արդէն երեկոյեան ծանօթացել էինք. նա նոյն գիւղից մի կրակոտ երիտասարդ էր:

Ցարական կառավարութիւնը փակել էր հայկական դպրոցները՝ քաղաքների եւ գիւղերի, դրաւել էր դպրոցների պատկան չէնքերն ու եկամուտ բերող կալուածքները: Հայ ժողովուրդը զրկուել էր ազգային կրթութիւն տալու մէջից. ներից եւ հնարաւորութիւններից: Հայ ժողովրդի զգայուն մասը պիտակում էր Հայութեանը հասած ծանր հարուածը, եւ հայրենասէր անհատներ ինքնաբերաբար մտածում էին կարելի չափով հակազդել պետական այլասերող քաղաքականութեանը: Հայկական դաւառներում տեղ - տեղ տակաւին տակաւութիւ դիւղերում, սկսին դործել դպրոցներ համեստ միջոցներով:

Նախկին դպրոցների ուսուցիչներից ոմանք մնացին իրենց դիւղերում՝ նուիրուելով մանուկ սերնդի ազգային կրթու-

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆ

ՀՈՒՇԵՐ ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՈՒՇԱՏԵՏՐ

Ա

Ա՛յ, բե՛ղ, գիտ,
Դի՛, եր, զա՛, զա՛,
Է, բբ, բօ...

Ես ծնվել եմ Ալաշկերտում, Ալաշկերտի ձորերում, ուր ամեն տարի գարնանը ծաղկում են վայրի նռնենիները, ուր ամեն աշնանը հասունանում են ոսկեգույն խնձորները, ուր ամեն ամառ ոսկեհունչ ցորենի արտերի միջից ծվարած գյուղերի տանիքներին ոսկեզօծ արև է ժպտում։ Ես ծնվել եմ Ալաշկերտում, ուր ամեն գարնան ծաղկում են վայրի նռնենիները, ուր ամեն աշնան

Այբի Տիկին Ազաքսի Փելիկեան, զաւակները՝ Վարդուհի, Թիրայր, Մկրիք, Ալիս եւ թոռը, ինչպէս նաեւ բոլոր ընտանեկան պարագաները ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ - հօր՝

ՂՈՒԿԱՍ ՓԻԼԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Յունուար 9-ին։

Ըստ ոպրացեալին փափաքին թաղումը կատարուեցաւ զուտ ընտանեկան շրջանակի մէջ, Հինգշաբթի, Յունուար 16-ին։

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՒԷՐ

Դպրոցասէր Տիկնանց Ընկերակցութեան տարեկան ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յունուար 25, ժամը 15-ին, Ժան - Կուժոնի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ սրահին մէջ, Փարիզ 8-րդ։

Օրակարգ՝

Ա. - Հաշիւներու քննարկում եւ վաւերացում։

Բ. - Գնահատում բարոյական դործունէութեան։

Գ. - Վաւերացում ելմտական տեղեկագրի։

Դ. - Ապագայի հեռանկարներ։

Ե. - Զանազան։

Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի։

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կազմակերպուած Փարիզի Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ, Կիրակի, Յունուար 26, ժամը 15·30-ին։

CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN
118, Rue de Courcelles — 75017 Paris
Métro : Courcelles

Դասախօս՝

ՏՈՒՔ. ԺԱՆ - ՄԻՇԵԼ ԹԻԼՐԻ

Նիւթ՝ Նոր յայտնաբերումներ Հայաստանի մէջ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ ՍԷՆ - ԺԷՈՄի մասնաճիւղը ընդհանուր ժողով կը գումարէ Յունուար 17-ին, Ուրբաթ, կէսօրէ վերջ ժամը 15-ին Թաղիս եկեղեցւոյ կից սրահին մէջ։

Բոլոր անդամուհիներէն կը խնդրուի ներկայ ըլլալ։ Օրակարգ՝ տեղւոյն վրայ։

×

ԿԱՊ. ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամուհիները, Շաբաթ, Յունուար 18, ժամը 15-ին, Մշակոյթի Տունը, 17 rիւ Պլէօ։ կարեւոր օրակարգ։ Պատշամաւորի ընտրութիւն, անդամուհիներու մեծամասնութիւնը անհրաժեշտ է։

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տիկին Մարիամ Բաբաջանեանի յիշատակին, Հայ Արիներու Միութեան նախկին խմբապետուհի մը 500 Ֆ. կը նուիրէ Հայ Արիներուն եւ 100 Ֆ. «Ցարաջ»ին։

ՑԱԻԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Հայ Մշակոյթի Տան վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկին Շաւարշ Փիրանեանին եւ զաւակներուն, Ապրիեան, Ամիրխանեան եւ Ինճէեան ընտանիքներուն, Տիկին Տիրուհի Ամիրխանեանի (ծնեալ՝ Ապրիեան) մահուան առիթով։

Հ. Բ. Ը. Մ.
ՎԻՆԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Նախագահութեամբ՝
ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱՑ ԱԻԵՏԻՔԵԱՆԻ

կիրակի, Յունուար 19, ժամը 17-ին, Ս. Աբովեան Մշակոյթի Տան մէջ։
1, Quai Pajot — VIENNE

Գեղարուեստական բաժինին իրենց մասնակցութիւնը կը բերեն միօրեայ դպրոցի աշակերտները։

Մուտքը ազատ է։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տիկին Զապէլ Թէլլէեր կը նուիրէ 100 Ֆ. Փարիզի Հայ Ուսանողներու Տան Արշակ Ալեքսանեանի մահուան առթիւ։

×

Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է 500 Ֆ. Տիկին Հռիփսիմէ Գըլըճեանէ։

×

Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ պայծառութեան համար հետեւեալները կը նուիրեն. - Յովսէփ Մկրտիչեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի (Լիոնէն) խումբ մը տիկիններ 650 Ֆ.։

×

Կապոյտ Խաչի Առնուվիլ - Սարսէլի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուէրները. - Տէր եւ Տիկին Նիկողոս Նիկողոսեան 400 Ֆ., Այբի Տիկին Զարուհի Թէհլիրճեան եւ զաւակները 200 Ֆ., Այբի Տիկին Մարի Մանուկեան եւ զաւակները 200 Ֆ., իրենց ներոջ և ազգականի Տիկին Ազնիւ Նիկողոսեանի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի։

Տէր եւ Տիկին Ժաք Գալճեանէ 100 Ֆ.։

LOTO

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Կիրակի, Յունուար 19, ժամը 16–ին
Հայ Մշակոյթի Տան մէջ
9, rue de Madrid — 94140

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Բոլորին համար
բազմաթիւ նուէրներ — Պիւֆէ։

ՅՕԲԻՆԻ ՄԷՋ

Աչխարհի բոլոր եկեղեցիները Միութեան համար Աղօթքի Շաբաթ մը կը կազմակերպեն Յունուար 18-էն մինչեւ 25։ Այս տարի եկեղեցիները կ'աղօթեն «Դուք պիտի ըլլաք վկաներս» նիւթին շուրջ։

Այս առթիւ Լիոնի յարանուանութեանց պատասխանատուները նախատեսած են հետեւեալ արարողութիւնները. -

- Շաբաթ, Յունուար 18, ժամը 18-ին. Պատարագ՝ Քրուա - Ռուսի Սէն - Տընի եկեղեցւոյ մէջ։

Պատարագը կը մատուցանէ Լիոնի Արքեպիսկոպոս՝ կարդինալ Ա. ՏԸՔՈՒՐԹՐԷ։

Օրուան քարոզը կը խօսի Հայ Առաքելական եկեղեցւոյ պատասխանատուն՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՔԱՐԵԱՆ

- կիրակի, Յունուար 19, ժամը 10-ին. Պատարագ՝ Լիոնի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ։

Պատարագը կը մատուցանէ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱՔԱՐԵԱՆ

Հայածէս պատարագին իր ներկայութիւնը կը բերէ Լիոնի Արքեպիսկոպոս՝ կարդինալ՝

Ա. ՏԸՔՈՒՐԹՐԷ

որ կը խօսի քարոզ յաւուր պատշաճի։

55ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

կազմակերպած՝
ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՓԱՐԻԶԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ
կողմէ
մասնակցութեամբ՝ ԼԻՈՆԻ ՇՐՋԱՆԻՆ

Կիրակի, Մարտ 2, կէսօրէ վերջ ժամը 14·30–ին
SALLE DE LA CHIMIE
28 bis, rue Saint Dominique — Paris 7e
(métro : Invalides)

մասնակցութեամբ՝ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

պետերուն եւ խումբերուն եւ օտար սկաուտ հիւրերու

——— Սկաուտական ճոխ յայտագիր ———

Արեւոյշներուն, Արիներուն, Թեւիկներուն եւ Գայլիկներուն կողմէ հայերէն ներկայացումներ, հայկական երգեր եւ նոր պարեր Թեւիկներէն եւ Արեւոյշներէն, հայերէն կատակերգութիւններ՝ Սկաուտներուն եւ խմբապետերուն կողմէ։

Մուտք՝ 40 Ֆրանք — Փոխրիկներուն՝ ձրի

ԱՒԱՆԴԱԿԱՆ

ԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՎԻԵՆԻ ՄԷՋ

Կիրակի, Յունուար 19, կէսօրէ վերջ ժամը 2·30–էն սկսեալ
Théâtre Municipal

Գեղարուեստական յայտագիր ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ դպրոցի աշակերտներուն կողմէ, այս տարի ալ Կաղանդ Պապան իր այցելութեամբ պիտի ուրախացնէ փոքրիկները։

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ–ի Պօմոնի մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ
Կիրակի, Յունուար 19, ժամը 14·30–ին
Պօմոնի միօրեայ Դպրոցի տօնածառի հանդէսին, տեղւոյն եկեղեցւոյ կից սրահին մէջ։

——— Ճոխ յայտագիր, ջերմ մթնոլորտ, թռմպոլա, եւայլն։ ———

Irma fourrures

SUR MESURE
— REPARATIONS —
TRANSFORMATIONS

Ժամ առաջ զննեցէք ձեր մուշտակէ վերարկուն վստահելով՝

ՀԱՅԿ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ

ԶԱՓԻ ՎՐԱՁ - ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ
ԵՒ ՎԵՐԱՓՈՒՈՒՄ

ԲԱՑ Է ԱՄԷՆ ՕՐ
ԲԱՑԻ ԿԻՐԱԿԻԷ

44, avenue du Général de Gaulle
94700 Maisons-Alfort
tél. : 43 - 68 - 55 - 99

Métro: École Vétérinaire-Alfort (direction CRÉTEIL)

ԷՕՓԻՄԷՆԻԶՄԸ
ԼԻՈՆԻ ՄԷՋ

ԲԱՑՈՒԱԾ Է...

BOUTIQUE
TALINE

ԹԱԼԻՆ

31, rue Lamartine
75009 Paris

où vous trouverez :

Pulls,

Collants,

Cosmétiques,

Faux bijoux.

Ouvert tous les jours de 14 à 18h30.

4.000 m² de mobiliers présentés en ambiance

Meubles Ghazarian

Z.I. Vitrolles
à 20km de Marseille.

tél. 42. 89.27.47



" Բացառիկ. զեղչ «Ցարաջ»ի քաժանորդներուն "

ՇԱՐՎԻԷՕ — Ս. ՆՇԱՆ

Փոն - տը - Շէրթի Շարվիէօյի Ազգային Միութեան վարչութիւնը կը ծանուցանէ թէ՝ Կիրակի, Յունուար 19, եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ հանդիսաւոր պատարագ։

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՎՐԹԱՆԷՍ ԱՒԱԳ ՔՀՆԱ. ՏԷՐՏԷՐԵԱՆ

Պատարագի երգեցողութիւնը կը կատարէ եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ՝ Յակոբ Աբրահամեանի։

Պատարագ, ժամը 10-ին։

×

ՇԱՆՕԹ. Ս. Նշան եկեղեցւոյ վարժարանի Ամանորի հանդէսը տեղի պիտի ունենայ նոյն օրը ժամը 15-ին եկեղեցւոյ կից՝ Ազգային Տան ձէպրայէլ Պատուբեան սրահին մէջ։

Սիրով կը հրաւիրուին մեր բոլոր ծնողքները իրենց զաւակներով եւ հատուցեալ ժողովուրդը ներկայ ըլլալու այդ հանդէսին։

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55635

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
18-19
SAMEDI-DIMANCHE
18-19 JANVIER
1986
LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian
Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.141
Fondateur: SCHAVARCH MISSAKIAN
61e ANNÉE — No 16.141

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՇԻՐԱՔ – ԼԸՔԱՆԻԼԷ ԿՈՂՔ ԿՈՂՔԻ...
ԳՈՆԷ ՄԻՆՉԵՒ ՄԱՐՏ

Շիրաքի ՀՀՀ-ն (համախմբում Հանրապետութեան համար) եւ Լըքանիւէի նախագահած «Միութիւն Ֆրանսական ժողովրդապետութեան համար» կուսակցութիւնը, ձեռք ձեռքի եւ «ընտրական» ժըպիտներով ներկայացան հեռատեսիլի քամերաներուն առջեւ, կնքելէ ետք քաղաքական համաձայնագիրը մը, այն ապատրուելիքը ձգելու համար թէ ընդդիմութիւնը պառակտուած չէ, դոնէ երեւութապէս:

Ծրագիրը նախ չատ լիխատ հաշուեկշիռ մը կը ներկայացնէ, այն եզրակացութեան յանգելու համար, որ «ընկերվարութիւնը միայն ձախողութիւն մը եղած է», ապա, երեք գլուխներու մէջ կը պարզուին «նորապատակ ամոլին» առաջարկները, հետեւեալ խորագրերուն տակ· – Ապահովել անտեսութիւնը ապահովելու համար ընկերային յառաջդիմութիւնը:

Ազատութեանց ընկերութիւն մը պատրաստել:

Ֆրանսայի կրկին տալ իր իսկական տեղը:

Այս նպատակաւ, կողմերը քանի յանձնառութիւններ կը սահմանեն, բայց մինչեւ համաձայնութեան մը յանգիլը բանակցութիւնները բաւական դժուար եղած են: ՀՀՀ-ն, օրինակ, կ'ուզէր «ազգայինները» վերապահել ընկերային այն նպաստները որոնք ազգադրական նպատակ ունին» (այսինքն՝ երրորդ զաւակէն սկսեալ որուելիք պարգեւներէն միայն Ֆրանսացիք պիտք է օգտուին): ՀՀՀ-ն ի վերջոյ տեղի տուած է եւ մինչեւ ճամբայ մը զըտնուած է, այսինքն կ'ըսուի թէ «ընտանեկան քաղաքականութիւնը պիտք է քալէրէ Ֆրանսայիները որ զարկ տան ծնունդներուն»: Այլ ծրագիրներու մէջ կան.–

– Վերադարձ ընտրական մեծամասնութեան դրութեան:

– Բոլոր դիներու անմիջական ազատութիւն:

– Լումայափոխութեան ամբողջական ազատութիւն:

– Ապազգայնացում դրամատուներու, ապահովութեան ընկերութեանց, ձայնլսողականի, Փէչինէի, Թոմսընի, Ռոն-Փուլէնքի, Սէն – Կոպէնի, Էլեկտրականութեան եւ Պուլի:

– Հացերու դեղչ:

– Արհեստներու տուրքի հիմնական բարեփոխում:

– Եկամուտի տուրքի սահմանաբաժիններու դեղչ, բարձրագոյն սահմանաբաժինը 50%–ի կը բերուի:

– Մեծ հարստութեան վրայ տուրքի ընդում:

– Ընկերային Ապահովութեան պահպանում:

– Ոստիկանութեան ունեցած միջոցնե-րու ամրապնդում:

– Պայքար զաղանի դաղթողներու դէմ:

Առնք են գլխաւոր գիծերը, որոնց իրագործման համար, կ'ուզեն իշխանութեան դլուխ վերադառնալ ՀՀՀ եւ ՄԾԺ (Լո – Փէ – Լո, Իւ – Տէ – Լֆ): Յիշենք որ այս վերջինը՝ «Միութիւն Ֆրանսական ժողովրդապետութեան համար»ը հիմնուած է 1978 Փետրուար 1–ին եւ կը համախմբէ· – Հանրապետական կուսակցութիւնը, ընկերային դեմոկրատներու կեդրոնը, ընկերվարական–արմատական կուսակցութիւնը, «Հեռանկարներ եւ Իրականութիւններ քլէօպը» եւ Ֆրանսայի ընկերվարական դեմոկրատ չարժումը: Նպատակը եղած է քաղաքական հաւաքական յառակագիծ մը մէջտեղ դնել և հաւաքական թեկնածութիւններ ներկայացնել ընտրութեանց:

×

ԼԻԲԱՆԱՆ

ՁԵՄԱՑԻԼ՝ ԻՆՉ ՑԱՂԹԱՆԱԿ

Երկու հարիւր մեռեալ, 600 վիրաւոր եւ նոր աքսորեալ մը, որ ըստ աւանդութեան չունչը փարիզ առաւ, Հինգշաբթի իրիկուն: Արդարեւ, քրիստոնեայ քաղաքազօրքերու այն պետը՝ էլի Հոպէյքա, որ սաստրապած էր Դամասկոսի համաձայնագիրը, պատասխեցաւ Ձեմայէլի եւ ժաժայի ուժերէն: Հանդարտութիւնը վերադարձած էր, դոնէ առժամեայ, թոյլ տալու համար որ մեռելները թաղուին: Հարցն հոն է որ Քաթայէպ եւ ժաժա ալ համաձայն չեն, բայց միացած են քչելու համար «քոսոա ոչխարը»: Ցետոյ կը տեսնեն...:

Մինչեւ այս վախճանը, կուսիները առաւելաբար սաստիկ եղած են Քարանթինայի չրջանը, ուր ապաստանած էին Հոպէյքայի մարդիկը: Ժաժայի եւ Քաթայէպներու ուժերը յարձակման անցած են ձեռք անցընելու համար Ամալի կեդրոնատեղին: Էչրէֆիէի մէջ, բախում չէ եղած, որովհետեւ կողմերը համաձայնած էին «չէզոք» գօտի հռչակել:

× Պէյրութ եւ իր հարաւային ու հիւսիսային արուարձանները Զորեքշաբթի եւ Հինգշաբթի ջուրէ զրկուած էին, կրնիներու հետեւանքով:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԺԱՆ ՔԱՍՈՒ, գրագէտ, դիմադրական, մեռաւ 88 տարեկանին Փարիզ: Ծնած էր Պիլպաօ, պէարնցի հօրմէ եւ սպանացի մօրմէ: 1936–ին հանրային դաստիարակութեան մէջ մտած է եւ դիրք բռնած՝ հակաֆաչիստ մտաւորականներու հետ հանրապետական Սպանիոյ ի նպաստ: Ազատամիտ, անկախ մտայնութեան տէր, իր ամբողջ գործը փաստը կուտայ իր խառնուածքին:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԻՒՆԸ զգալապէս նուազած է, Ֆրանսայի մէջ, Դեկտեմբերին:

ՓԱՐԻԶԻ մէջ, տարւոյն սկիզբէն ի վեր 6–րդ ծեր կինն է որ սպաննուած դտնուեցաւ 12–րդ թաղամասի բնակարանը: Միշտ նոյն ձեւով կը պատահի՝ հետապնդում, ապա՝ դրամի դողութիւն բնակարանին մէջ:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ պաշտօնապէս ընդունեցաւ նոր ընտրեալներէն մէկը՝ փրոֆ. Ժան Համպուրժէրը, որ կը զբաղի Փիէր Լմմանուէլի աթոռը: Նոր անմահը դրուատիքն ըրաւ իր նախորդին, որ ինչպէս ինք՝ քանաստեղծութիւնը դատ էր Վալերիի ընդմէջէն: Զինքը ընդունելով, ուրիշ մեծ բժիշկ մը՝ փրոֆ. Ժան Պերնար յիշեց որ արուեստական երիկամունքը կատարելագործուած է փրոֆ. Համպուրժէրի կողմէ ինչպէս նաեւ երիկամունքի փոխարկումը:

ԵՐԵԽԱՆ ↔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵԽԱՆ
(ԱՐՄԷՆՓրԷՍ - ՅՈՒՆՈՒԱՐ 10 - 13)

ՍԵՐՕ ԽԱՆԶԱԴԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԵԿՈՅԹ ԳՈՐԻՍԻ ՄԷՋ

Գորիսի դրամատիկ թատրոնին մէջ տեղի ունեցած է յոբելենական երեկոյթ մը, նուիրուած Սերօ Խանզադեանի, անոր ծննդեան եօթանասունամեակին առթիւ: Խօսք առնելով դրօղներ նչած են, որ Սերօ Խանզադեանի բոլոր գործերը՝ պատմըւածք թէ նորավէպ, ակնարկ թէ պատմավէպ, կեանքի այլազան դրուագներ նկարագրող ուրիչ գործեր, աչքի կը զարնեն բարձր արուեստով ու խորութեամբ: Սերօ Խանզադեանի «Մեր դնդի մարդիկ», «Հողը», «Մխիթար Սպարապետ» ծանօթ վէպերն ու այլ գործեր նաեւ իր կենսագրութեան վառ ու անջնջելի էջերն են: Երեկոյթին հանդէս եկած են նաեւ թատրոնի եւ չարժանկարի դերասանները, ընթերցելով Խանզադեանի գործերէն էջեր: Հուսկ, չնորհակալութեան խօսք արտասանած է յոբելեարը:

×

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՑԱՑՏՆԱԲԵՐՈՒԱԾ ՄԱՑԱԿՈՎՍԿԻ ԳԻԻՂԻ ՄՕՏԵՐԸ

Ապուեան քաղաքի մօտ Մայակովսկի դիւղի մերձակայ բլրալանջին հողաչինարարական աշխատանքներ կատարելու ընթացքին յայտնաբերուած են հնագիտական կարգ մը առարկաներ՝ կաւաշէն դաւաթներ, սափորներ, թասեր, պրոնզէ ապարանջաններ: Հայաստանի հնադիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի գիտնականներու կարծիքով հողափոր մեքենան «պեղած է» չուրջ 3300 տարուան հնութիւն ունեցող դամբարանադաշտի մէկ հատուածը: Գտնուած առարկաները ուշադրութիւն կը դրաւեն նաեւ հետաքրքրական զարդանախչերով, երկրաչափական պատկերներով եւ կը վկայեն հնագոյն ժամանակներուն արհեստագործութեան զարգացման բարձր մակարդակին մասին:

×

ԿԱՐՕՏԻ ՈՒ ՍԻՐՈՑ ԵՐԳԻՉԸ ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ

Կեսարիայէն եկած ու Կ. Պոլիս հաստատուած հիւսն Գրիգորի ու անոր կնոջ Թուրվանտայի որդին՝ Պաղտասար, թերեւս ամբողջ կեանքի ընթացքին կօշկակարութեամբ զբաղէր, եթէ բախտը չժըպտար ու ան չյայտնուէր ժամանակի ուսումնական անձերէն մէկուն՝ Ամասիացի Յարութ Ջուղայեցիի դպրոցին մէջ: Ան վեց տասնամեակ անձնուիրաբար զբաղած է տպագրական գործով, իրագործելով կարգ մը կարեւոր ու չահեկան հրատարակութիւններ, ինք ընտրելով ձեռագիր մատեաններ եւ զանոնք բաղդատելով այլ դրչագրերու հետ եւ սրբագրելով տպագրական էջերը:

Ու այսպէս լոյս աշխարհ կուգան քանի մը տասնեակ դիրքեր, որոնց կարգին՝ Գրիգոր Նարեկացիի «Մատեան ողբերգութեան»ը, Դաւիթ Անյաղթի «Գիրք սահմանաց»ը, Առաքել Սիւնեցիի «Պատմագիրք»ը, Գրիգոր Տաթեւացիի «Գիրք հարցմանց»ը, Սիմէոն Ջուղայեցիի «Գիրք տրամաբանութեան»ը, «Գիրք պատմութեան երկրին Տարօնոյ, որ կոչի Զէյնոբ» մատեանը եւ չատ մը այլ գիրքեր: Այս հրատարակութիւններու յիշատակարանները ու դիտական ցանկերը կը վկայեն անոր իմացական բարձր մակարդակին մասին:

Պաղտասար Դպիր ըրաղած է նաեւ կըրթական – մանկավարժական գործունէութեամբ, լայն համբաւ վայելելով ժողովուրդին մէջ իբրեւ Կ. Պոլսոյ Գումգափու արուարձանի մայր դպրատան գլխաւոր վարիչ եւ ուսուցիչ: Իրեն աշակերտած են ժամանակի մշակութային անուանի դէմքերէն չատեր: Պաղտասար Դպիրի դործունէութեան մէջ մեծ դեր վերապահած էր մայրենի լեզուին: Ան համոզուած էր որ կրթական էր եւ քերականութիւնը իրեն համար ունէր չատ գործնական նչանակութիւն: Ահա թէ ինչու իր գրած մայրենի քերականութեան երկու հատորները, որոնք լոյս տեսան 1736–ին՝ Պոլիս, եւ յետագային ունեցան երկու հրատարակութիւններ եւս, տարիներ ծառայեցին հայ դպրոցին ու մանկավարժութեան: Սակայն տեսնելով, որ մանուկները դժուարութեամբ կ'իւրացնեն դրաբարը, անոնց օգնելու նպատակով գրեց «Գիրք քերականութեան» ձեռնարկը՝ աշխարհաբար լեզուով: Ինքնատիպ հրատարակութիւն էր 1752–ին լոյս տեսած «Օրինակք բարեւարք–դըրոց»ը, որ, բովանդակելով առաւելապարագրներ, նպատակ ունէր նամակ գրել սորվեցնել:

Այս բոլորի կողքին եւ առաջին հերթին ան բանաստեղծ ծնած էր: 1720–ական թուականներէն սկսան տպագրուիլ տաղարանները: Ան այդ տաղերուն մէջ կը ձգէր իր տրտմուն ու սիրահար սրտի մէկ մանրիկը, իր յոյզերն ու քնքուշ զգացումները եւ մաքուր անկեղծութիւն մը: Ան սիրոյ, կարօտի, բարութեան ու գարնան գարթօնքի բանաստեղծն էր· եւ իր սէրն ու կարօտը պատմելու համար կը դտնէր նոր արտայայտութիւններ, այդ բոլորը կ'արտայայտէր ընտիր ու մաքուր հայերէնով: 85 տարի ապրեցաւ Պաղտասար Դպիր տաղասացը, քերականը, ուսուցիչը, երաժիշտն ու մատենագիրը: Իր ամբողջ կեանքը նուիրեց հայ ժողովուրդին, անոր յառաջդիմութեան ու մտաւոր գարթօնքին: Որպէս երախտագիտութիւն, «Սովետական Գրող» հրատարակչականը «Հայ քնարերգութիւն» մատենաչարով եւ 20 հազար տպաքանակով լոյս ընծայած է հատաքածոյ մը, ուր տեղ գտած են Պաղտասար Դպիրի սիրոյ, կարօտի, բնութեան, խրատական ու բարոյական – փիլիսոփայական տաղերը, քանի մը նամակներ ու քառեակներ:

ՊԱԼԸՔԼԻԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԷՋ ԲԱԶՄԱԹԻՒ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ ԽՈՐՏԱԿՈՒԱԾ

Պոլսոյ թերթերը հետեւեալ մանրամասնութիւնները կուտան այս դէպքին մասին, որ պատահած է Ցունուար 3–էն 4, ուրբաթ գիշեր:

«Անծանօթներ» մտնելով Պոլսոյ արուարձաններէն՝ Պալըքլըի գերեզմանատունը քարուքանդ ըրած են կարգ մը խաչքարեր եւ դամբարաններու մարմարներ փճացուցած են, երեք – չորս միլիոն թրքական լիրայի վնաս հասցնելով:

Շաբաթ օր իսկ, գերեզմանատան պատասխանատուները դլխաւորութեամբ անօրէն՝ վարուժան Սայաճեանի ոստիկանութեան դիմած են եւ քննութիւն պահանջած: Ապահովութեան սպասարկութիւնները մանրակրկիտ քննութիւն կատարած են, տեղեկագիր պատրաստած եւ միջոցներ (?) ձեռք առած այս սրբապղծութեանց հեղինակները դտնելու համար:

Այս անոպայ յարձակումները պատճառ եղած են, որ երբ քանի մը օր ետք (Ցունուար 7) Մեռելոցի առթիւ, ընտանիքներ գերեզմանատուն փութան, անակնկալն ունենան քարուքանդ չիրխմներ տեսնելու:

Նման մոլեռանդ արարքներ ցոյց կուտան թէ դեռ կան չյագեցած ախորժակներ...:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՔԱՐԴԱՐԱՆ

«ԳՈՒՆԱՐ»

Կ 2 - Յունուար 18 - 19, 1986

ՎԵՊԻ ՍՈՓԻԱՆ ՀԱՅԵՐԸ

Ինչպես հայտնի է, Վեպի Սոֆիան հայերը ունեցել են իրենց ազգային դպրոցը, որը գործել է 1913-1914 ուսումնական տարիներին: Դպրոցի տնօրենն է եղել Գրիգոր Ալեքսանդրի Ալեքսանդրյանը, որի մասին մեզ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդել նրա թոռնուհին՝ Ալեքսանդրա Ալեքսանդրյանը, որ ապրում է Վանաձորում:

Գրիգոր Ալեքսանդրյանը ծնվել է 1880 թ. Վեպի Սոֆիան գյուղում: Նրա հայրը՝ Ալեքսանդր Ալեքսանդրյանը, եղել է գյուղի ամենահարուստ մարդկանցից մեկը: Գրիգորը ստացել է տեղի ծխական դպրոցի և Ներսիսյան դպրոցի կրթությունը: Ավարտելուց հետո նա ուսուցչություն է արել Վեպի Սոֆիայում, Ռուսաստանում, Ռումինիայում, Բուլղարիայում: Ուսուցչական աշխատանքի հետ զուգահեռ նա զբաղվել է նաև գրական գործունեությամբ: Նրա հոդվածները տպագրվել են «Մուրճ», «Արձագանք», «Ազգ» և այլ պարբերականներում:

1913 թ. Գրիգոր Ալեքսանդրյանը հրավիրվում է Վեպի Սոֆիայի հայոց դպրոցի տնօրեն: Նրա ղեկավարության տարիներին դպրոցը ծաղկում է ապրում: Աշակերտների թիվը հասնում է 200-ի, ուսուցչական կազմը՝ 10 հոգու: Դպրոցը ունենում է հարուստ գրադարան, որի համալրման գործում մեծ ներդրում է ունենում Գրիգոր Ալեքսանդրյանը: Նա գրքեր է ուղարկում Ռուսաստանից, Ռումինիայից, Բուլղարիայից, Կ. Պոլսից, Թիֆլիսից, Մոսկվայից, Վենետիկից, Վիեննայից, Փարիզից, Լոնդոնից, Ամերիկայից:

Դպրոցում դասավանդվում էին հայոց լեզու, հայոց պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, երգեցողություն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, բուլղարերեն, ռումիներեն լեզուներ: Դպրոցում կազմակերպվում էին ներկայացումներ, համերգներ, որոնք մեծ հետաքրքրություն էին առաջացնում ոչ միայն հայերի, այլև բուլղարների շրջանում:

Գրիգոր Ալեքսանդրյանը մահացել է 1914 թ. հունվարի 21-ին: Նրան հուղարկավորել են Վեպի Սոֆիայի հայոց գերեզմանատանը: Գրիգորի մահից հետո դպրոցի տնօրենի պաշտոնը ստանձնել է նրա կինը՝ Ալեքսանդրա Ալեքսանդրյանը, որը ղեկավարել է դպրոցը մինչև 1918 թ.:

Ալեքսանդրա Ալեքսանդրյանը ծնվել է 1890 թ. Վեպի Սոֆիայում: Նա ստացել է տեղի ծխական դպրոցի կրթությունը, ապա ավարտել է Ներսիսյան դպրոցը: Ուսուցչական աշխատանքի հետ զուգահեռ նա զբաղվել է նաև գրական գործունեությամբ: Նրա հոդվածները տպագրվել են «Մուրճ», «Արձագանք», «Ազգ» և այլ պարբերականներում:

1918 թ. Ալեքսանդրա Ալեքսանդրյանը ամուսնանում է Վեպի Սոֆիայի հայոց դպրոցի ուսուցիչ Գևորգ Ալեքսանդրի Ալեքսանդրյանի հետ: Նրանք ունենում են երեք երեխա՝ Գրիգոր, Ալեքսանդր և Աննա: Ալեքսանդրա Ալեքսանդրյանը մահացել է 1960 թ. Երևանում:

Գրիգոր Ալեքսանդրյանի ընտանիքի անդամները մեծ հետաքրքրություն են ցուցաբերել Վեպի Սոֆիայի հայերի պատմության նկատմամբ: Նրանք հավաքել են բազմաթիվ նյութեր, լուսանկարներ, որոնք պահվում են ընտանեկան արխիվում: Այդ նյութերի հիման վրա Գրիգոր Ալեքսանդրյանի թոռնուհին՝ Ալեքսանդրա Ալեքսանդրյանը, պատրաստել է մի գիրք, որը նվիրված է Վեպի Սոֆիայի հայերի պատմությանը: Գիրքը կոչվում է «Վեպի Սոֆիայի հայերը»: Այն հրատարակվել է 1982 թ. Երևանում:

Գրքում տեղ են գտել նաև Վեպի Սոֆիայի հայերի մասին հուշեր, նամակներ, լուսանկարներ: Հեղինակը գրքում պատմում է Վեպի Սոֆիայի հայերի կյանքի, կենցաղի, մշակույթի, կրթության մասին: Գիրքը մեծ հետաքրքրություն է առաջացրել ոչ միայն Վեպի Սոֆիայի հայերի, այլև Բուլղարիայի հայության շրջանում:

Գրիգոր Ալեքսանդրյանի ընտանիքի անդամները շարունակում են հավաքել նյութեր Վեպի Սոֆիայի հայերի մասին: Նրանք նախատեսում են հրատարակել նոր գիրք, որը կներառի նոր նյութեր, լուսանկարներ, հուշեր: Այդ գործում նրանց մեծ օգնություն է ցուցաբերում Վեպի Սոֆիայի հայ համայնքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՓԻԱՆ

Հայկական Սոֆիան գտնվում է Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում: Այն հիմնադրվել է 1913 թ.: Սոֆիայի հայերի մեծ մասը գաղթել է Թուրքիայից, Ռումինիայից, Հունաստանից:

Սոֆիայի հայերը մեծ ներդրում են ունեցել Բուլղարիայի տնտեսության, մշակույթի և գիտության զարգացման գործում: Նրանց մեջ են եղել նշանավոր գիտնականներ, արվեստագետներ, գրողներ, երաժիշտներ:

Սոֆիայի հայերը ունեն իրենց եկեղեցին՝ Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը կառուցվել է 1914 թ.: Նաև ունեն դպրոց, որտեղ սովորում են հայ և բուլղար երեխաներ: Դպրոցում դասավանդվում են հայոց լեզու, հայոց պատմություն, աշխարհագրություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, օտար լեզուներ:

Սոֆիայի հայերը ունեն իրենց թերթը՝ «Հայկական Սոֆիա» անունով: Թերթը լույս է տեսնում շաբաթական մեկ անգամ: Այն պատմում է Սոֆիայի հայերի կյանքի, կենցաղի, մշակույթի մասին:

Սոֆիայի հայերը մեծ հետաքրքրություն են ցուցաբերում իրենց պատմության նկատմամբ: Նրանք հավաքում են հին լուսանկարներ, փաստաթղթեր, որոնք պատմում են նրանց նախնիների կյանքի մասին: Այդ նյութերի հիման վրա գրվել են բազմաթիվ հոդվածներ, գրքեր:

Սոֆիայի հայերը մեծ ներդրում են ունեցել Բուլղարիայի տնտեսության զարգացման գործում: Նրանց մեջ են եղել հաջողակ գործարարներ, որոնք հիմնադրել են մեծ ձեռնարկություններ: Նրանք նաև մեծ ներդրում են ունեցել Բուլղարիայի մշակույթի զարգացման գործում:

Սոֆիայի հայերը ունեն իրենց ակումբը, որտեղ կազմակերպվում են տարբեր միջոցառումներ: Ակումբում գործում են նաև տարբեր խմբակներ, որտեղ մարդիկ կարող են զբաղվել իրենց սիրելի գործով

նակ, ժամը 16-ին համերգի մը երթալ, իսկ գիշերը ընթրիքի մը, թատերական երաժշտական կամ չարժանկարի երեկոյթի մը: Փարիզեան թատրոնները, օփերեթները իրենց ջրպատոյտի ծրագիրէն երբեք չեն զեղչեր Տօվիլը: 1879-ին հոն Սառա Պէռնար կը ղիտեն «Քամելիազարդ կինը» ներկայացումով: Պատերազմէն առ մէկուկէս - հոլերու ներկայացումներ կը զրաւեն բեմը. 1922-ին Մխիթարեան եղանակին թաղուհին է հոն, հոյակապ ապարանքի մը մէջ հաստատուած, իր ծառայութեան մէջ 17 սպասաւորներով: Վերջապէս եւ մանաւանդ պարն է գլխաւոր զբօսանքը. քաղաքներ, մզուրքաներ, փոլքա եւ վալս 1910-ի չուրջ իրենց տեղը կը թողուն Թանկոյին, որ իր կարգին զահազուրկ կ'ըլլայ, պատերազմէն առ ամերիկեան պարերու մուտքով:

Նորաձեւութիւնները կը փոխուին, պարը կը մնայ ամառնային կեանքին անփոխարինելի համայքը: Ելոյթներու մեծ մասը տեղի կ'ունենայ խաղարանին մէջ. այս է պատճառը որ քաղաքը հմայութիւն կ'ըլլայ մեծապէս, 1895-ին, երբ ան կը փակուի: 1912-ին նոր հաստատութիւն մը կը փոխարինէ զայն, կառուցուած՝ Ժ. Վիլպոյի կողմէ: Մանօթ անուններ կուգան հոն իրենց հարստութիւնը մսխելու. առանցքին մէկն է Հանրի տը Ռոչիլտ որ կը խաղայ փոքր գումարներով, զուարճանալու համար. ուրիշներ չունին նոյն իմաստութիւնը: Ցոյն նաւատէր Զողրաֆոս վեց միլիոն կը կորսնցնէ մէկ գիշերուան մէջ, կոտրելով Անտրէ Սիթրոէնի մէկ միլիոն ֆրանքի մրցանիշը: Կիներն ալ նուազ յափշտակուած չեն. անոնք ամբողջ օրը կը քնանան իրենց գիշերները նուիրելու համար խաղին, որ երբեմն գիրենք կը պարտադրէ անձայն անչչուկ սպրդելու պանդոկէն առանց նոյնիսկ վճարելու հաշուեցոյցը:

Տօվիլի ամառազնացներուն մէջ մեծ թիւ մը կը ներկայացնեն օտարականները. Անգլիացիները, Ամերիկացիները, նաեւ Գերմանացիները եւ Ռուսեր (գոնէ մինչեւ յեղափոխութիւն):

Պատերազմը, համաչխարհային այդ ահարկու բախումը կը պայթի 1914-ի ամրան: Վեհանձն ու խաղաղասէր Տօվիլը կը փոխակերպուի հսկայական բուժարանի մը. ապարանքներն ու պանդոկները ապաստան կուտան թշուառներու եւ երէկուան զուարճասէրները կը վերածուին հիւանդապահներու: Սակայն կիրքերու բոցը չիջած չէ. 1915-էն իսկ զուարճութիւնները կը վերսկսին, թէեւ զգոնօրէն: Իսկ անմիջապէս պատերազմի աւարտին Տօվիլ ամբողջովին անձնատուր կ'ըլլայ խօլ տարիներու դժոխային թափին: Առաջին դեղեցիկ օրէն իսկ Փարիզցիները արհամարհելով նոյնիսկ կառաքրձումը, կը փութան 21-րդ թաղամասը: Մորնիի երազը անվթար է ու կը չարունակուի հարիւրամեայ քաղաքին կեանքը:

Թ. Օ. Մ.

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՎԻԼԷՕՐՊԱՆ

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ՝ ԱԲՈՎԵԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՀԵՏ

Ծնունդի առթիւ Վիլէօրպանի Հայ Մշակութային Միութիւնը կազմակերպած էր հաւաքոյթ մը՝ որուն մասնակցեցաւ նաեւ քաղաքապետը՝ Շարլ Էրնիւ, Ազգային Պաշտպանութեան նախկին նախարարը:

Պ. քաղաքապետը՝ որ ինչպէս ծանօթ է, ընկերվարական կուսակցութեան տպաւորիչ դէմքերէն մէկն է, խօսեցաւ քաղաքական չեշտերով Հայ Դատին մասին, ընդգծեց Ֆրանսական ներկայ կառավարութեան այդ հարցին թիկունք կանգնած ըլլալը, խօսեցաւ ալ տեղական ինդիրներու չուրջ, ինչպէս անապահովութեան, որ կը մտահոգէ նաեւ շրջանին հայ առեւտրականները:

Վիլէօրպանի մէջ յառաջիկային բացուելիք պիտի կառուցուի «ռիւ տ'Արմէնի»ի մը, յուսալի է նոյնպէս որ քաղաքապետութիւնը նիւթական յատկացում մը ընէ Մշակութային Միութեան, հայերէնի ուսուցման համար:

Հաւաքոյթին ընթացքին, յիշուեցաւ նաեւ Վիլէօրպանի եւ Հայաստանի Աբովեան քաղաքի միջեւ բարեկամութեան դաշինք մը ստորագրելու ծրագիրը: Այս նպատակին համար Վիլէօրպան ունի մասնաւոր յանձնախումբ մը՝ նախագահութեամբ՝ Պ. Էմիլ Թէպուլի: Փոխ - նախագահն է՝ Պ. Գրիգորեան, որ այս ծրագրին գլխաւոր նախաձեռնարկողն է եղած:

Վարուժան Գրիգորեան Թաղապետական Ժողովին անգամ է երկու ընտրաշրջաններէ ի վեր եւ յարատեւ ու լաւ յարաբերութիւններ կը պահէ ոչ միայն քաղաքապետ՝ Շարլ Էրնիւի հետ, այլ՝ նաեւ չրջանին մէկէ աւելի քաղաքական մարդոց հետ:

Ուզեցինք իրմէ քանի մը տեղեկութիւններ վերեւ յիշուած ծրագրին մասին: Մեր խօսակիցը վստահեցուց մեզի թէ այլեւս ոչ մէկ կարեւոր արգելք կայ Վիլէօրպան - Աբովեան բարեկամական դաշինքին ստորագրութեանը, այս տարուան ընթացքին: Ինքը, քաղաքապետութեան կողմէ, անցեալ տարի, երկու անգամ ղրկուած է Հայաստան այս խնդրին առընչութեամբ. պաշտօնապէս ընդունուած է հայրենի կառավարութեան եւ համայնավար կուսակցութեան ղեկավարներու կողմէ: Բոլորն ալ համաձայն են: Փարիզի խորհրդային դեսպանատունը եւս ուսած է իր վիզան: Կը մնան ճշդուելիք քանի մը մանրամասնութիւններ ու ձեւակերպութիւններ՝ որոնց լուծումը քիչ մը ձգձգուած է, որովհետեւ, ինչպէս Հայաստանի վարչական զանազան մարզերուն մէջ, Աբովեան քաղաքին վարչութիւնն ալ անձնակազմի փոփոխութիւն կրած է, - անցեալ աշնան:

«Աբովեանի նոր քաղաքապետը եւ կուսակցութեան առաջին քարտուղարը, երկուքն ալ, կը կոչուին Աւագեան» ըսաւ մեզի Վարուժան Գրիգորեան. - Բայց ոչ մէկ ազգականական կապ ունին: Երկուքն ալ համամիտ են Վիլէօրպան - Աբովեան դաշինքին՝ որ առիթ պիտի տայ երկու քաղաքներու միջեւ դիտական մշակութային եւ մարզական փոխ - յարաբերութիւններու»:

Աբովեանը Երեւանէն 16 քիլոմեթր հեռու՝ հեռզհեռէ ընդարձակուող քաղաք մըն է, չորրորդը Հայաստանի մէջ իր բնակչութեան քանակով: «120·000 բնակիչ» հաւաստեց Պ. Գրիգորեան: Վիլէօրպանի բնակչութիւնն ալ նոյնքան է, կամ մէկ - երկու հազար աւելի, ներկայիս:

Ընդգծելու համար Աբովեանի ընդարձակման թափը, ճշդենք որ 1971-ին հրատարակուած «Հ. Ս. Ս. Հ.եան վարչական - տերիտորեալ բաժանումը» ըրած է երկրորդ հանդիսութիւն մըն ալ տեղի ունեցած է նոյն սրահին մէջ: Գուրգէն Մովսիսեանի ղեկավարութեամբ երգչախումբը մեկնաբանած է 14 գործեր՝ եկմալեանէ, Կոմիտասէ, Պախէ, Մոցարթէ, Պրամսէ: Երկրորդ բաժնին մեկնաբանած է Մենտելսոնի Ջութակի քոնչերթօն, Յակիկ Բարայեանի մենանուագով:

×

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՑ Պօղոսեան Ազգ. վարժարանի եւ Մելգոնեան Ազգ. Մանկապարտէզի վերանորոգուած եւ բարեզարդուած սրահին պաշտօնական բացումը տեղի ունեցած է Դեկտեմբեր 7-ին: Սրահին բարերարն է քաղաքական ժողովի անդամ Լեւոն Գաղթացեան: Հանդիսութիւնը վարած է Վահան Գալուստեան: Խօսք առած են Պօղոսեան վարժարանին տնօրէնը՝ Մանուկ Գալփաքճեան, յանուն Ազգ. Իշխանութեան Վրէժ Սէֆէրեան եւ առաջնորդ Զաւէն Արք. Զինչինեան, անդրադառնալով վարժարանի անցեալին, ուսումնական մակարդակին եւայլն: Գեղարուեստական յայտագրին մասնակցած են «Ցառաջդիմասէր» Մշակ. Ընկերակցութեան «Արմէնեան» պարախումբը, Հ. Բ. Ը. Մ.ի «Կռունկ» երգչախումբը (Գահիրէէն), արուեստագիտուհի Շաքէ Յովակիմեան:

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ՊՈԼՍՈՑ ՍԷն ԹԱՆԹուան Լատին եկեղեցւոյ մէջ, Դեկտեմբեր 28-ին, տեղի ունեցած է Ս. Ծննդեան առթիւ մէջ - եկեղեցական արարողութիւն մը, որուն մասնակցած են Հայ Կաթողիկէ եկեղեցին, Հայոց Պատրիարքարանը, Գերման Աւետարանականները, Սէն Թէնսիրի եկեղեցին եւայլն: Հանդէս եկած է Ֆէրիքիւզի Ս. Վարդանանց եկեղեցւոյ երգչախումբը, որ Վահէ Իշխմէճեանի ղեկավարութեամբ մեկնաբանած է «Այսօր ձայնն հայրական», «Ով զարմանալի», «Մեծացուսցէ» չարականները եւ «Սուրբ Սուրբ»ն ու «Հայր Մեր»ը: Հայոց Պատրիարքարանի անունով Աւետարան կարդացած է փոքրիկն Նայիրի Յակոբեան:

×

ԹԵՀՐԱՆի «Վահտաթ» սրահին մէջ, Դեկտեմբեր 26-ին, տեղի ունեցած է հանդիսութիւն մը, նուիրուած քրիստոնեայ փոքրամասնութիւններու, կազմակերպութեամբ Իրանի իսլամական առաջնորդութեան նախարարութեան: Յայտագրի առաջին բաժնին հանդէս եկած է «Արարատ» կազմակերպութեան երգչախումբը, որ ղեկավարութեամբ՝ Ռազմիկ Օհանեանի մեկնաբանած է հայկական տասը երգեր, որոնց դաշնակով ընկերացած է Իմելդա Պետրոսեան: Ծննդեան տօնին առթիւ երկրորդ հանդիսութիւն մըն ալ տեղի ունեցած է նոյն սրահին մէջ: Գուրգէն Մովսիսեանի ղեկավարութեամբ երգչախումբը մեկնաբանած է 14 գործեր՝ եկմալեանէ, Կոմիտասէ, Պախէ, Մոցարթէ, Պրամսէ: Երկրորդ բաժնին մեկնաբանած է Մենտելսոնի Ջութակի քոնչերթօն, Յակիկ Բարայեանի մենանուագով:

×

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՑ Պօղոսեան Ազգ. վարժարանի եւ Մելգոնեան Ազգ. Մանկապարտէզի վերանորոգուած եւ բարեզարդուած սրահին պաշտօնական բացումը տեղի ունեցած է Դեկտեմբեր 7-ին: Սրահին բարերարն է քաղաքական ժողովի անդամ Լեւոն Գաղթացեան: Հանդիսութիւնը վարած է Վահան Գալուստեան: Խօսք առած են Պօղոսեան վարժարանին տնօրէնը՝ Մանուկ Գալփաքճեան, յանուն Ազգ. Իշխանութեան Վրէժ Սէֆէրեան եւ առաջնորդ Զաւէն Արք. Զինչինեան, անդրադառնալով վարժարանի անցեալին, ուսումնական մակարդակին եւայլն: Գեղարուեստական յայտագրին մասնակցած են «Ցառաջդիմասէր» Մշակ. Ընկերակցութեան «Արմէնեան» պարախումբը, Հ. Բ. Ը. Մ.ի «Կռունկ» երգչախումբը (Գահիրէէն), արուեստագիտուհի Շաքէ Յովակիմեան:

ՎԱՂԻՆԱԿ ՄԻՍՔՃեԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՁՕՆ ԱՌ ՄԱՍԻՍ

ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Հայոց բնաշխարհի, հայ ոգու, Հայոց հաւատի՝ անձեռակե՛րտ արձան:

Բարձրի, հզօրութեան, յաւերժական սառոյցների պատկե՛ր ու վկայ:

Այս տողերը գրում եմ Հայկական հանրապետարանի «Արարատ» յօդուածը կարդալուց յետոյ: Առաջին պահ զարմանքը պատեց ինձ: Արարատը վերլուծուում էր որպէս, քար, հող, հրաբուխ, սառցադաշտ, վիհեր ու խորխորատներ, որպէս աշխարհագրական մի՛ջավայր: Տարիներով մեր մէջ ներծծուած ոգեղէնն ու երազայինը, կապուած լերանը, այնքան ուժեղ է, որ իրականութեան հետ միանգամից հաշտուելը դժուար է:

Օրեր անց միայն ես նորից վերադարձայ այդ յօդուածին, որովհետեւ դա եւս մտահոգելու էր լերանը:

×

4 Ապրիլի, 1980 թ.

Մեծ եւ Փոքր Արարատների լանջերն արեւով են ողողուած, մինչդեռ ցաւագինները սուզուել են փոթորկայոյզ ամպերի մէջ: Միայն թէ՝ հողմերի չառաչը չի հասնում մեզ: Զինասպիտակ, ամպեղէն մաքրութիւն, որից վերեւ երկնքի մի երկար, կապոյտ երիզ գնում, գնում է անվերջ: Արեւոտ լանջերին՝ ամպերի ըստուերները: Օդը՝ լերան վրայ: Մի՞թէ մի՛այն մաքուր է ու սառը. եւ մի՞թէ իւրայատուկ բուրմունք չունի:

×

5 Ապրիլի, 1980 թ.

Արարատի չուրջը ամպերի բարդ - բարդ կուտակներ. գագաթները չեն երեւում: Մի՛ջին լանջերում լոյսի ու ստուերի խաղ է:

Լեռը կարծես ձգողական ուժ ունի. այլապէս ինչո՞ւ է ամէնից թանձր ամպակուտակներն իր գլխին հաւաքում: Զրօսայգում, մարմարէ ցայտաղբիւրի պըռունկներից ջուրը ծորում է ցած, իսկ այնտեղ՝ մի՞թէ ճնհալից սնուող աղբիւրներն են խոխոջում: Այստեղ ուսանողները փորում են հողը. եւ ժամանակ առ ժամանակ նրանցից մէկը խոնարհւում է աղբիւրին: Այս ու այն կողմ թփերն են ծաղկել, բռնկուելով դեղին բուրմունքով: Եւ մի՞թէ մարդն ի վիճակի է աւելի չքեղ խարոյկ վառել, քան բնութեան անտես ուժը՝ ցածրիկ թփերի վրայ: Մասիսի լանջերին հիմա ձնծաղիկների ու մանուշակների գորգ պէտք է փռուած լինի:

×

7 Ապրիլի, 1980 թ.

Մեղմ առաւօտ է: Արեւ ե՛ւ կայ, ե՛ւ չկայ: Արարատը փակ է: Բայց չէ՞ որ ես գիտեմ՝ նա այնտեղ է:

Այս գարնան գեղեցկութիւնը զժուեցնող է: Հիմա արեւը նորից սկսեց իր պահմտոցին: Եւ ամպե թարթիչների խաղով մէկ ժպտում է ու մէկ էլ մռայլ հայեացք է նետում ծաղկած ծիրանին: Եւ ինչո՞ւ մենք բնութիւնը դիտելով չենք զրաղւում, որի իւրաքանչիւր պահն անկրկնելի բանաստեղծութիւն է, անլսելի երաժշտութիւն: Երիտասարդներն էլ այս գարնանը արտակարգ գեղեցիկ են. պայծառ - դոյնզդոյն հագուստներով: Ուռիներն էլ նուրբ, դեղին ճիւղերին արդէն կանաչ են մանում, եւ օր - օրի, ժամ - ժամի, նկատելի է բնութեան փթթումը:

Արարատը փակ է, սակայն, եւ այս ամէնին՝ անտես:

Իսկ նրանք, որ դարերով ապրում էին լերան հիւսիսակողմը, այսինքն՝ Արարատեան դաշտում, նրանց համար հարազատը Մասիսն էր: Եւ աշխարհի չորս կողմերը թուարկելիս, նրանք ասում էին Արեւելք, Արեւմուտք, Հիւսիս, Մասիս:

12 Ապրիլի, 1980 թ.

Արարատը դիտում եմ էրեբունի բլրից: (Նկատել եմ, որ բնութեան նկարագրութիւնը յիշողութեամբ շատ աղքատ է ըստացուում: Ամէն ինչ այլ է, երբ աչքիդ առաջ են լեռը, դոյները, ամպերը, օրն ու ժամը):

Յուշագրութիւնը սկսելուց յետոյ այսօր առաջին անգամ Արարատը տեսայ սառոտից մինչեւ գագաթ: Այստեղից լաւ է երեւում նաեւ Արագածը:

Արագածը դիտելիս, զգացի, թէ ինչպէս է երկիրը խառնուում երկնքին: Զիւնաղո՛րդ գագաթներ, որոնց վրայ առագաստանաւերի նման յուշիկ սահում են ամպերը: Այստեղից մեր առջեւ բացւում է ընդարձակ մի համայնապատկեր. Հայկական լեռնաշարը մեծ աղեղով կարծես իրար է կապում Արարատն ու Արագածը:

Արարատ. յաւերժական լեռ: Հզօրութեան ու վեհութեան խորհրդանիշ: Ինչո՞ւ ես այդքան լուռ: Գագաթների լռութիւնը: Մօտ լինէի ու լսէի այդ լռութիւնը: Եւ իմանայի, թէ ամենաարքերը ինչ չառաչուն երգեր են երգում քո չուրջը: Եւ կամ մեղմ հովիկը չնկճնկո՞ւմ է քո ճորակներում:

(Շար. 3)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՆԻՄ . - Պ . Գեղամ Խոսրովեան 200 Ֆ . *թէրթին 60-ամեակին առթիւ* :

ՊՐՈՆ . - Կարապետ Յովակիմեան 200 *Ֆրանք Ամանորի առթիւ* :

ՓԱՐԻԶ . - *Տիկին Աղաւնի Թորոսեան* 100 Ֆ . :

Ի ՅԻՇԱՏԱԿ

Այրի Տիկին Վարդուհի Ուշապլեան իր վաղամեռիկ զաւակին՝ Հրայր Ուշագլեանի մահուան 9-րդ , եւ իր ամուսնոյն՝ Արտաշէս Ուշագլեանի մահուան 7-րդ տարելիցներուն ի յիշատակ 500 Ֆ . *կը նուիրէ «Յառաջ»ին* :

Հ. Բ. Ը. Մ.

Հ . Բ . Ը . Մ ԻՒՈՒԹԻՒՆ – ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Ուրբաթ , Յունուար 24 , ժամը 20·30-*ին՝*

Ալեք Մանուկեան Մշակութային կեդրոնի սրահին մէջ :

118, rue de Courcelles, 75017 PARIS

Նախագահութեամբ՝

ՏՈՔԹ . ԷՏՈՒԱՐ ԱՂԱՄԵԱՆԻ

Ատենապետ

Ֆրանսայի Շրջ . Յանձնաժողովի

Կը խօսի՝

ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍԵԱՆ

«Հերոսական Ոգին Պայքարնի Գրականութեան Մէջ»

բնագաւառով

Հատուածներ բանաստեղծին «Կորնթոսի Պաշարումը»էն և ձայներիզի վրայ «Սարգանապաղի Տեսիլք»էն, ընկերակցութեամբ՝ Տիկին Անի Զաքըրեանի : Վրոյը Մազմանեան ձայներիզի վրայ կ'ողեկոչէ հեղեն գրադէտ՝ Սեփերիտէն Թրիքուրիսի դամբանականը :

Մուտքը ազատ է :

MARSEILLE

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE

12-14, rue Saint Bazile

VENDREDI 24 JANVIER

A 19 HEURES

GERARD CHALIAND

Fondateur du Groupement pour les Droits des Minorités

Ecrivain politique

Professeur à l'ENA

présente

LE SEL DE LA VENGEANCE

de James T. HASHIAN

Ancien haut fonctionnaire auprès du Département d'Etat

——— Roman rappelant le génocide d'un peuple. ———

..... *Entrée libre* .....

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ . ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղի վարչութիւնը ընդհ . ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամուհիները , Շաբաթ , Յունուար 18 , ժամը 15-ին , Մշակոյթի Տունը , 17 rue Պէօ : Կարեւոր օրակարգ : Պատգամաւորի ընտրութիւն , անդամուհիներու մեծամասնութիւնը անհրաժեշտ է :

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կազմակերպուած Փարիզի Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ , կիրակի , Յունուար 26 , ժամը 15·30-ին :

CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN

118, Rue de Courcelles — 75017 Paris

Métro : Courcelles

Դասախօս . -

ՏՈՔԹ . ԺԱՆ - ՄԻՇԷԼ ԹԻԼՐԻ

Նիւթ . - Նոր յայտնաբերումներ Հայաստանի մէջ :

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՒԻՐ

Դպրոցասէր Տիկնանց Ընկերակցութեան տարեկան ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ Շաբաթ , Յունուար 25 , ժամը 15-ին , Ժան - Կուժոնի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ սրահին մէջ , Փարիզ 8-րդ :

Օրակարգ . -

Ա . - *Հաշիւներու քննարկում եւ վաւերացում :*

Բ . - *Գնահատում բարոյական գործունէութեան :*

Գ . - *Վաւերացում էմոտական տեղեկագրի :*

Դ . - *Ապագայի հեռանկարներ :*

Ե . - *Զանազանք :*

Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ֆրանսահայ Գրողներու Ընկերակցութեան տարեկան ճաշը եւ «Էլիզ Գասուքհան – Այվազեան» Գրական Մրցանակներու յանձնումը՝ Փետրուար 9 , կիրակի օր , Ազֆորվիլի «Սեւան» ճաշարանին մէջ : Մանրամասնութիւնները յետագային :

×

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի , Առնուվիլ - Սարսէլի մասնաճիւղի տարեկան մեծ պարահանդէսը՝ Մարտ 22-ին :

Մանրամասնութիւնները յետագային :

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

COLLECTE

POUR LES PRISONNIERS ARMENIENS D'EUROPE

A l'occasion des fêtes de Noël, une collecte au profit de tous les prisonniers arméniens d'Europe a lieu à l'Eglise Arménienne Catholique d'Arnouville

69, ave. Henri Barbusse - 95400 Arnouville lès Gonesse

Cet argent sera adressé directement aux prisonniers pour leurs besoins personnels, cela avec l'accord des trois comités siégeant à Paris.

Encouragée par le succés de cette initiative et devant les nombreuses demandes, la paroisse arménienne catholique d'Arnouville lès Gonesse, informe que la collecte sera prolongée jusqu'au 31 janvier.

Cet appel s'adresse à tous les Arméniens et aux organisations arméniennes.

— Libellez vos chèques à l'ordre de :
Paroisse Arménienne Catholique
CCP 1844 93. S. Paris
— Les adresser à :
Eglise Arménienne Catholique
69, ave. Henri Barbusse
95400 Arnouville lès Gonesse
— *préciser pour les prisonniers arméniens*

CONCERT A L'OPERA DE MARSEILLE

Samedi 25 Janvier à 20 heures 45

par

SIPAN-KOMITAS

(Chœur mixte Arménien de Paris)

et

l'ORCHESTRE PHILHARMONIQUE DE MARSEILLE

Direction

GARBIS APRIKIAN

avec le concours de

SONIA NIGOGHOSSIAN (Mezzo-Soprano)

« Solistes de Chœur »

Thérèse DEYRMENDJIAN (Alto)

Meguerditch BOGHOSSIAN (Tenor)

René MARTAYAN (Tenor)

Au programme les œuvres de

K. ALEMSHAH, P. GANATCHIAN, G. APRIKIAN, A. TIGRANIAN

Concert organisé par la Croix Bleue des Arméniens de France

— MARSEILLE VILLE —

Pour réservation, contacter les numéros suivants :

91 93 89 83 — 91 90 21 60

42 45 05 36 — 91 66 09 06

91 91 48 85 — 91 50 68 71

91 41 74 89

PERMANENCE

Maison de la Jeunesse et de la Culture Arménienne

12 - 14, rue Saint Bazile — 13001 MARSEILLE

LUNDI - VENDREDI de 17h00 à 19h30 — JEUDI de 15h00 à 19h30

TELEPHONE : 91 50 15 09

Et à partir du 20 Janvier location Opéra de Marseille

ՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

կը կազմակերպէ

ՄԵԾԱՐԱՆՔ – ՃԱՇ

ի պատիւ

ԳԷՈՐԳ ՊԱԳԸՐՃԵԱՆ ի

Հայրենասիրական գործունէութեան առթիւ

Հովանաւորութեամբ երեք յարանուանութեանց

եւ ներկայութեամբ Գալիֆորնիոյ կառավարիչ Պ . ՏԻՕՔՄՃԵԱՆ – ի

ներկայացուցիչ՝ Պ . ՍԷՐԱՑՏԱՐԵԱՆ – ի

կիրակի , Փետրուար 2 , ժամը 14–ին

HOTEL INTERCONTINENTAL

3, rue de Castiglione — Paris 1er

— Գեղարուեստական պատշաճ բաժին —

Տոմսերը ապահովելու համար հեռախօսել ժամը 8–էն 10

42–96–09–82 *թիւին , կամ ճաշի ժամերուն՝* 43–29–54–31 / 46–42–45–25

Թիւերուն , մինչեւ Յունուար 30 :

OPTIMA Tours

ARMENIE

-- 1986 --

Pâques en Arménie

— **Du 29 Mars au 12 Avril** (via Kiev) ..... **6.050 F**

Spécial Cérémonie du 24 Avril en Arménie

— **Du 19 Avril au 3 Mai**

(Prix et conditions de ce voyage nous consulter).

(Nos prix comprennent — le transoprt aérien, tous les transferts, la pension complète, le logement dans des hôtels de 1ère classe A en chambre double / bain, les excursions et visites mentionnées dans notre programme, l'ASSURANCE).

(Nos prix ne comprennent pas — la chambre individuelle, les boissons et les frais de nature personnelle, frais de visa 100 F.)

(Groupe minimum 20 inscriptions accompagnateur assuré par notre agence).

Renseignements et Inscriptions:

PARIS

Madame COUMRYANTZ Sonia

OPTIMA TOURS

12, rue Vignon — 75009 PARIS

Tél. : **47 - 42 - 10 - 35**

LIC A 130

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
21

MARDI
21 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ, ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TEL.: 47. 70. 86. 60 — TELEX: HARATCH 280 868 F
C.C.P. PARIS 15069-82 E — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.142

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

61e ANNÉE — No 16.142

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՍՊԱՆԻ ՄԵԿՆՈՒՄ, ՔԻՒՐՏԵՐԸ, ՀԱԿԱԹՈՒՐՔ ԱՐԱՐՔՆԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

«ՁՈՒՄՀՈՒՐԻՑԷԹ»· - (Յունուար 16)· -

Թուրքիոյ Արտաքին Նախարար Վ· Հալէֆօղլու Ֆրանսայի աւագ դեսպան Ֆ· Ռուիյոնի ի պատիւ հրաժէշտի ճաշ մը տուած է, որուն ներկայ գտնուած են նաեւ Հոլանտայի, Նորվեկիոյ, Շուէտի, Դանիոյ ներկայացուցիչները· այն երկիրներուն, որոնք Ֆրանսայի հետ բողոք ներկայացուցած էին Թուրքիոյ դէմ, Եւրոպայի Մարզկային Իրաւանց Ցանձնախումբին: Հալէֆօղլուի ճաշը չատ «նշանակալից» նկատուած է Թուրքեւեւրոպական փոխ - յարաբերութիւններու մեղմացումին տեսակէտէն:

Հալէֆօղլու ճաշէն եառ դրուատալից արտայայտութիւններ ունեցած է Ռուիյոնի հասցէին եւ ի միջի այլոց ըսած· - «Մեզք որ Անգարայէն կը բաժնուիք ճիշդ այն ըրջանին, երբ կը յուսայինք լաւագոյն արդիւնքներ ունենալ մեր երկիրներու մերձեցումի քաղաքականութեան մէջ»: Պատասխանելով Հալէֆօղլուի խօսքերուն, Ռուիյոն ալ իր կարգին ըսած է· - «Հակառակ յայտնուած բոլոր խոչընդոտներուն, ժամանակը ցոյց տուած է թէ որքան ամուր են Թուրքիոյ եւ Ֆրանսայի կապերը:

×

«ՄԻԼԼԻՑԷԹ»· - (Յունուար 16)· -

Իրանի քիւրտ ղեկավար Ա· Կասէմլու կոչ ուղղած է Թուտէհ-ի (Իրանի համայնավար կուսակցութիւն) եւ Քոմալա-ի (Իրանի կեղեքուած Քիւրտերու միութիւն) որպէսզի դիմադրական միացեալ ճակատ յարդարեն Խոմէյնիի դէմ:

Իրանի քրտական ռահվիրայանը, որուն հաղորդումներուն կարելի է հետեւիլ Թուրքիոյ հարաւ - արեւելեան ըրջաններէն, հետեւեալ տեղեկութիւնը տուած է Կասէմլուի կոչին մասին:

«Պատերազմը վհատութիւն պատճառած է Իրանի ժողովուրդներուն· Խոմէյնի եւ իր համաճիկները բռնի պատերազմի դաշտը կը մղեն Իրանի ժողովուրդները, առանց տարիքի խտրականութեան: Ներքին ընդդիմադրութիւնը օրէ - օր կը մեծնայ: Ա· Կասէմլու կոչ ուղղեց Թուտէհի եւ Քոմալա-ի, որպէսզի միացեալ ճակատ յարդարուի տապալելու համար Իրանի վարչաձեւը: Արդէն իսկ կը գործակցինք «Ժողովուրդին մարտիկները» կազմակերպութեան հետ: Քոմալայի վարիչները տակաւին չպատասխանեցին մեր կոչին, իսկ Թուտէհ, որպէս նախապայման այս միութեան, կ'առաջարկէ մեր կուսակցութեան զոհողութիւններ յանձն առնել: Մենք պատրաստ ենք ամէն տեսակ զոհողութեան որ ի նպաստ է Իրանի ժողովուրդներուն»:

Միւս կողմէ չահադրդիռ ըրջանակներ կը յատնեն թէ Իրան եւ Իրաք իրարու դէմ կը գործածեն Քիւրտերը: Իրաք նիւթական օժանդակութիւն կը կատարէ Իրանի Քիւրտերուն, իսկ Իրան կ'օգնէ քիւրտ ղեկավար Պարզանիի, որուն ազդեցութեան գօտին մէջ է Իրաքի հիւսիսային ըրջանը: Քաղաքական դէմերու համաձայն, եթէ աւելի երկարաձգուի պատերազմը, երկու երկիրներու զլխուն փորձանք պիտի դառնայ քրտական հարցը:

ՃԱՏՐԱԿ

ԴԱՍՊԱՐՈՎ – ԴԱՐԲՈՎ
ՓՈԽ–ՎՐԷԺԻ ՄՐՑՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ
ՀԱՆՐԱՔՈՒԷ

Դասպարով – Դարբով հանդիպումը կը չարունակէ մեզի հոսեցնել ճատրակի աշխարհին մէջ: Քամփոմանէս՝ ճատրակի միջազգային Դաշնակցութեան նախագահը, Ցունուար 7–ին եւ 8–ին Մոսկուայի մէջ իր ունեցած չփումներու ընթացքին չէր կրցած նոյնիսկ հանդիպիլ Գարի Գասպարովի, այս վերջնոյն մերժումին պատճառով: Հետեւաբար, Մոսկուայի Դաշնակցութիւնը դիմած է հանրաքուէի՝ ճատրակի միջազգային Դաշնակցութեան անդամ բոլոր երկիրներու մօտ, որպէսզի անոնց կարծիքը առնուի Գասպարով – Դարբով փոխ–վրէժի մրցումին մասին:

Ինչ կը վերաբերի Ֆրանսայի ճատրակի Դաշնակցութեան դիրքին, անոր նախագահը՝ Ժաք Լամպէր, «Ֆիկարօ»ի Թղթակցին ըսած է, ի մէջ այլոց· «Անմիջապէս պատասխանեցի, թէ փոխ–վրէժի մրցում մը, այս պայմաններու տակ, առնուազն անտրամաբանական է»:

երկու երկիրներու զլխուն փորձանք պիտի դառնայ քրտական հարցը:

×

«ՁՈՒՄՀՈՒՐԻՑԷԹ»· - (Յունուար 15)· -

Կերմանիոյ մէջ նոր - նացիներու հակաթուրք արարքները սաստկացած են վերջերս ու հարցը օրակարգի նիւթ դարձած է Համպուրկի Պերլամոյին մէջ: Այնպէս կը թուի թէ ածիլուած զլուխներով, ցեղապաշտ ու ծայրայեղ ազակոմականներ այս երիտասարդներուն նպատակն է Կերմանիան Թուրքերուն համար անտանելի երկրի մը վերածել: Անոնք Ցուլիսին ծեծերով սպաննած էին երիտասարդ Թուրք մը· նոր տարուան գիշերը Համպուրկի մէջ բազմաթիւ հակաթուրք յարձակումներ ծրագրած էին: Մինչեւ մօտ, Հոհէնպրիւնի մէջ Դեկտեմբեր 20-ին ծառէ մը կախուած Թուրքի մը դիակը գտնուած էր, որ կը կարծուի թէ դարձեալ զոհ գացած է նոյն խումբին ցեղապաշտ մէկ ոճիրին: Կերման մամուլը լայն տեղ կը յատկացնէ եւ տալ այս երիտասարդներուն ու անոնց արարքներուն:

Նոր - նացի կուսակցութիւններու հետ սերտ յարաբերութեան մէջ է այս կազմակերպութիւնը, որ մինչեւ վերջերս չատ լուրջի չէր առնուած ապահովութեան ուժերու կողմէ: Կը կարծուի թէ Կերմանիոյ մէջ քանի մը հազար է անոնց թիւը· անոնց կարելի է հանդիպիլ զլխաւորաբար Համպուրկի, Պէրլինի, Ֆրանքֆուրթի մէջ եւ Միւնիխի շրջակայքը:

Նոր - Նացի այս խմբակին առաջին թիրախը կը հանդիսանան օտարականները· որպէս օտարական անոնք նկատի ունին յատկապէս Թուրքերը: Արդարեւ «Շթեռն» շաբաթաթերթին կողմէ կատարուած հարցազրոյցի մը ընթացքին անոնք ըսած են· - «Իտալացիներու, եւյլն դէմ չենք, սակայն պէտք է Թուրքերը վտարել»: Թուրքերը, ըստ իրենց, Կերմանիոյ մէջ դրաւած են այն տեղը, զոր ունէին անցեալին Հրեաները: Իրենց կողմէ ցրուած գրութեան մը մէջ կ'ըսուի· - «Հիթլէրի շրջանին չկային ասոնք· ժամանակը հասած է: Բնաջնջենք օտարականները»:

Ընկերային հոգեբաններու համաձայն այս երիտասարդներու երեւումը արդիւնք է ծաւալուն անգործութեան մը: Կատարուած պրպտումներ կը յանդին այն արդիւնքին, թէ անոնց մեծ մասը անպործ է, մոլին դարձած է ոգելից ըմպելիներու, ու անոնք իրենց զայրոյթը կը թափեն ընկերութեան տակաւ փոքրամասնութեան խումբերուն վրայ:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԵՄԷՆ

ՀԱԶԱՐԱՒՈՐ ՄԵՌԵԱԼՆԵՐ

ՕՏԱՐՆԵՐԸ ՄԵԿՆԵՑԱՆ

Արաբական միակ մարքսիստ երկիրը, զոր կը չրջապատեն հիւսիսային եմէնն, Օման, Սաուտի Արաբիա: Տարածութիւն՝ 332·968 ք· քիլոմեթր, 2 միլիոն 200 հազար բնակիչ: Իսլամական այս ժողովրդական Հանրապետութիւնը, միակ կուսակցութիւնով մը օժտուած, հիմնուած է 1970-ին, Մեծն - Բրիտանիայէն իր անկախութիւնը ձեռք ձգելէն երեք տարի ետք: 1979-ին, բարեկամական եւ գործակցութեան դաշինք մը ստորագրած է Խորհրդային Միութեան հետ: Երկրին զեկավարը դարձած էր Ալի Նասր Մոհամմէտ, 1980-ին, միաժամանակ ընտրուելով Պրէզիտիումի նախագահ եւ կուսակցապետ: Օրէնսդիր իշխանութիւնը 111 անդամներէ բաղկացած խորհուրդի մը ձեռքն է:

Ներկայ կացութեան մէջ, չատ յայտնի չէ թէ ի՞նչպէս եւ ինչո՞ւ ծագած են բախտումները, որոնք սաստկացած են օրերու երեւոյթին, քանի որ հակամարտ երկու կողմերն ալ Մարքսէն կը ճառեն: Հարցն այն է որ ըմբռոտական չարժումին եառին Մոսկուան կա՞յ թէ ոչ: Արդարեւ, ան որ Ցունուար 13-ին, պետական հարուածը փորձեց, նախկին նախագահ Իսմայիլն է, որ հեռացուած էր 1980-ին եւ քանի մը տարի աքսորական կեանք ապրելէ ետք Մոսկուա, վերադարձած էր Աէնն, անցեալ տարի: Եթէ չարժումին գլուխն անցաւ, կրնայ նշանակել թէ Խորհրդային Միութեան նեցուկը կը վայելէ, իսկ եթէ ինքնագլուխ չարժած է, Մոսկուա ինչո՞ւ անմիջապէս չդատապարտեց այս «հակայեղափոխական» արարքը: Ցետոյ, իր չարժումը, որ կը պարզուի թէ տարածուած ճիւղաւորումներ ունի, ի՞նչպէս աչքի չէ զարկած: Յարդ նաեւ Իսմայիլի ո՞ւր ըլլալը յայտնի չէ: Սկիզբը ըսուած էր որ երեք մեղսակիցներու հետ զնդակահարուած է, բայց յետոյ ողջ ըլլալուն լուրը տարածուեցաւ:

Մինչ կռիւները անհամար զոհեր պատճառած են (7000-էն 9000 մեռեալի խօսք կայ), խորհրդային, Ֆրանսական եւ բրիտանական նաւեր կը պարպեն օտարները, որոնք խումբ խումբ ճիպուռի հասան:

Մոսկուա մտահոգութիւն կը յայտնէ եւ կ'ուզէ որ քաղաքական լուծում գտնուի եւ հրադադար ըլլայ, բայց լսող չկայ: Ցետոյ խորհրդային հպատակները ամէնէն առաջ հեռացան երկրէն, ինչ որ նաեւ յատկանշական է:

Եօթը օրերու բուռն կռիւներէ ետք, կացութիւնը անորոշ կը մնայ: Արտասահման հասած օտարները սարսափով կը նկարագրեն փողոցի բախտումներու վայրագ բնոյթը:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԼՄ. Հիի մէջ է, որ Սպանիոյ եւ Իսրայէլի ներկայացուցիչները հաւաքական զեկոյցով մը, հաստատեցին պաչտօնական յարաբերութիւններ: Սպանիա, ցարդ միակ եւրոպական երկիրն էր որ չէր ճանչցած Իսրայէլը: Պատմական կարեւոր քայլ մը, որ տեսակ մը վերադարձ է սպանական պատմութեան աղբիւրներուն: Ամէն հրեայ, առանձնաչնորհեալ կապ մը ունի Սպանիոյ հետ, որ երբայերէն՝ Սեֆերատ կ'ըսուի եւ այդ է որ արեւելքցի Հրեաներուն անունը - Սեֆարատ - տուած է, այն օրէն, 1492-ին, երբ կաթոլիկէ Թագաւորները արտաքսած են զիրենք Սպանիայէն (200 հազար): Աստղմէ ոմանք դաւանափոխ եղած են, բայց դաղտնօրէն չարունակած իրենց կրօնական ծիսակատարումները, ուրիշներ անկեղծօրէն դաւանափոխ եղած են եւ այդպէս նաեւ մեծ մտաւորականներ տուած Սպանիոյ, օրինակ Սէնթ - Թէրէզ մ'Ավիլայի մեծ - հայրը հրեայ է (Սէնթ - Թէրէզ պաչտպան սրբուհին է Սպանիոյ)· իսկ մեծամասնութիւնը աքսորի ճամբան բռնած է, Միջերկրականի չուրջ: Ըստ իսրայէլացի պատմաբանի մը, ներկայիս 100էն 200·000 սեֆարատ Հրեայ կայ, սպանական ծագումով, չաուխիզը արտաքսուած Հրեաներուն, ցրուած հիւսիսային - Աֆրիկէի, Թուրքիոյ, Պալքաններու, Միացեալ - Նահանգներու (ուր առաջին խումբ մը հաստատուած է 1654-ին), Մեքսիքայի, Քանատայի եւ Իսրայէլի մէջ:

ԱՆԳԼԻԱ պիտի դադրի կղզի մը ըլլալէ .. 1994-ին: Արդարեւ վերջապէս որոշուեցաւ փապուղիի մը կառուցումը Մանչի տակ: Միթերան եւ Տիկին Թաչըր ի վերջոյ երկաթուղիի ծրագրին է որ նախընտրութիւն տուին, բայց ամէն ոք համամիտ չէ:

ՄԻԹԵՐԱՆ, ճիշդ է, ընտրական գործակալի վերածուած է ինչ որ չատ չի համապատասխաներ իր հանգամանքին, բայց նաեւ այլ եղք չունի, իր կուսակցութեան լաւագոյն քարոզչութիւն մը ա-

(Շար·ը Դ· էջ)

ԺՈՊԷՐ ԵՒ (ՀԱՅԿ.) ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆԸ

«Ֆիկարօ - Մակազին»ի մէջ (Ցունուար 18 / 19) երեք հարցումներ տրուած են Արտաքին Նախկին Նախարար (Փոմփիտու) եւ Արտաքին առեւտուրի Նախկին Նախարար (Միթերան) Միշել Ժոպէրի, ան որ «ուրիչ տեղ է»: Առաջին հարցումը կը վերաբերի արտաքին քաղաքականութեան, այսինքն՝ Նախագահ Միթերանի կարգ մը հանդիպումներուն: Այս առընչութեամբ, Ժոպէր կը գտնէ որ նախագահութիւն կը տրուի չուքին ի վնաս՝ լոյսին ու կը պատմէ որ Քատաֆիի հետ, 1985-ին հետեւեալ խօսքերը փոխանակած են: Քատաֆի կ'ըսէ իրեն· - «Ղեճամտօրէն հաւատարիմ պիտի մնամ այն յանձնառութեանց, զորս առած եմ Միթերանի հետ»: Ու Ժոպէր կը պատասխանէ· - «Ոչինչ կը վտանգէք, քանի որ մեզի դուք պիտէք թէ իրարու ի՞նչ ըսած էք»:

Երկրորդ հարցում մը կը վերաբերի Վիէննայի, Հռոմի ոճրաւորձերուն եւ ընդհանրապէս ահաբեկչութեան ու Ժոպէր կը պարզէ իր տեսակէտը·

- Պէտք չէ ընդունիլ (իմա՛ ահաբեկչութիւնը)· Բայց զայն կասեցնելու առաջին ձեւը սա է՝ դիտնալ թէ ինչո՞ւ կը պատահի եւ չափել բուն պատճառները: Ահաբեկչութիւնը, երբ վերլուծուի, կը տեսնուի որ միշտ չլուծուած հարցերէ կը ծագի: Կարելի է որոշել կարգադրել կարգ մը կացութիւններ կամ երբեք չկարգադրել: Բայց այդ պարագային պէտք չէ զարմանալ ահաբեկչական հակազդեցութիւններէ· - Իրլանտական ահաբեկչութիւնը կը բացատրուի, որովհետեւ հարցը երկու դարէ թուխս նստած էր, Հայ դատը կուգայ նաեւ միջազգային հաւանականութեան անտարբերութենէն: (Ընդգծումը՝ մեր կողմէ) եւայլն, եւայլն:

ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՓՐԿԵՆՔ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«ԼԱՆՔ ՈՒ ԵՐԹԱՆՔ»

Ե.

Մեր արտայայտութիւնները, կրկնենիք, նպատակ ունին խոչընդոտներ հարթելու տակաւին աշխարհ չեկած հայորդիներու առջեւ, որպէսզի անոնք զէթ, դառնան ազգային առողջ, գօտեպնդիչ հանրային կարծիք եւ կարգապահ ոգի, ուստի չեն դնեն տոկալու:

Մինչդեռ, հակառակ մեր բնածին լաւատեսութեան, մեզ կը թուի, դառելով մեր բնած ուղիէն-թէ, Հայը ամէնուրեք, զգուած է իր ինքնութիւնը պահելու պայքարէն:

Ափսոսալու օրինակները ամէն մարզի մէջ այդ պարագան կը մատնանշեն, թէեւ անոնք երեւութապէս կենսունակութիւն ցոյց տան:

Արդարեւ, ինչպէ՞ս չողբամ քեզ՝ եկեղեցիս Հայաստանեայց:

Երկիւղկուած ես դո՛ւ, եւ նոյն դառնանքով, ուրեմն մատնայատուկ հաչիւնեբու զոհ:

Ունեցեր էիր երբեմն զանազան ազանդներ, բորբորիաններ, պաւղիկեաններ...:

Ի՞նչ անուն տանք այսօրուաններուն:

Շատ չանցան այն օրերուն վրայէն, երբ արհամարհանքի առարկայ էիր, զէթ պաշտօնեաներդ կամ պաշտօններդ:

Գանձ մըն ես ուրեմն այսօր, ժառանգ ձգող: Դուն կը մնաս յոյսը մեր ժողովուրդին:

Այժմ բանկալոզ չէ հարուստն ու համալսարականը հրապուրողը: Միայն եբեւնա՞լ: Երբ դուն կը ներկայացնես կորսուած հայրենիքը, մեր հողերը, մեր լեզուն ու մշակոյթը, մեր հոգիներուն խազաղութեան բաներն ես:

Արդար է որ զաւակներդ՝ անխտիր, դուրդուրան վրադ, գլուխնին լեցուն՝ վրկայականներով հարուստներ, ինչպէս միշտ նաեւ նիւթապէս բախտաւորուածներ:

Ի ցիւ թէ ոմանք, քեզ պայծառացնելու ցանկութենէ մղուած մօտենան քեզի ոչ թէ իրենց ձանձրոյթը փարատելու համար, ու քու ծոցիդ մէջ փառամոլութիւն եւ ակրակալութիւն յաղեցնելու մտօք:

Ինչ ալ ըլլայ անհատներու երկար ծառայութիւնները բաղձալի չեն, ու Փարիզ այդպիսիներու կողմէ խոշոր ձախողութիւն ունեցաւ իր կեդրոնին մէջ ղըպրոցի փառաւոր շինութեան մը կորուստով (*):

Հայաստանեայց Եկեղեցին միշտ պիտի մնայ բեւեռ տարապիր մեր ժողովուրդին, անհրաժեշտ է հսկել որ անոր հոգեբարձութեան մէջ մասնակի խմբաւորումներ չստեղծուին, կանխել այդ փորձութիւնները, որ մարդկային են, կարճ ժամանակ տեւող ժողովրդական ընտրեալներով, խուսափիլ նշանակովի ձեւերէն:

Ո՛հ, որքա՜ն էական է ուրեմն, որ մեր կրօնաւորները ըլլան բարձր՝ նկարագրով նախ ու գիտութեամբ:

Մեր փոքրաթիւ համայնքները կ'ապրին թափանցիկ պատերու ետին, մեր առաջնորդները, մանաւանդ կրօնաւորները համեմատաբար աւելի ամբասիր կեանք վարելու յաւելեալ երդումի են ենթակայ:

Ո՛վ դու Հայաստանեայց Եկեղեցի՝ օծեալք, թաղական, հոգաբարձու, հաւատացեալ, դուն պիտի ըլլաս պահապանը Հայոց ղպրոցին, քանզի հայ ղպրոցն է քու պահապանդ:

Դո՛ւն էիր նախակրթարանը՝ օրրանը հայ լեզուին, հայութիւնը դրոշմողն ու կնքողը՝ երբ մէկ հոգի մէկ մարմին էիք, մեր վազուան երաչխիքն էիք:

Ապրած մէկը միւսով՝ զո՛ւք ազգը ապրեցուցիք:

Ի՞նչ ճակատագիր կ'ունենայ ազգ մը, երբ իր նորահասներուն չրթները մայրենի լեզու չթոթովեն:

Մի՛թէ լեզուն չէ՛ էական ապացոյցը ազգի մը ինքնութեան, կենդանութեան, յաւիտենականութեան:

Ո՞ւր կը նետենք մեր հետ բերած միակ գանձը, ամէն կարօտ արտայայտող, Հայուն սիրոյ վերազանց արտայայտիչը՝ մայրենի բարբառը:

Զայն սորվիլը անկարելի, անպէտք, աւելորդ սեպող երիտասարդին ու հասուն Հայը ի՞նչպէս կրնայ յաւակնիլ մեր վերականգնումի դժուար գործը ստանձնել եւ գլուխ հանել· իր յաջորդութեան փոխանցել:

Լեզուն մեր ոսկեղէն կամուրջն է, մեզ միաւորող զօրութիւնն է, մեր զէնքն ու զրահը:

Տարբեր լեզուով կարդացուած Հայոց պատմութիւնները մեր հոգիներուն մէջ արձագանգ չեն ստեղծեր, ուստի չեն դրոշմեր մեր ազգային կեանքը, չեն արթընցներ ոգի, չեն կերտեր բնազդ՝ ինքնապաշտպանութեան այդ յանպատրաստից չտեմարանը:

Ո՛վ տակաւին բախտաւոր նախորդները մեր, որոնք ողբացին զրաբարը աշխարհաբարի փոխանցումը, խղճացէք զմեզ, մեր ոսկեղինիկ լեզուին սպառնացող վտանգը ահաւոր է:

Ան դուրս նետուեր է արդէն մեր ժամանդորդներու բերնէն:

Ողբամ զձեզ, երիցս ու բազմիցս հէգ ուխտադաւորները, համալսարանականները, պարապ է ձեր հոգին, դո՛ւք, ձեր մայրենի լեզուն սորվելու անկարող՝ դըժբախտ տղաք, գոբտէն եզի մեծութեան ձգտող զառնացողներ միայն պիտի մընաք դուք: Ձեր ըրջապատի անտարբերութեան մէջ ընկղմած դուք ձեր ծնողներն անգամ հպարտ պիտի չթողուք:

Մանաւանդ քե՛զ, ո՛հ ինչքան կ'ողբամ քեզ Հ· Մ· Ը· Մ·:

Վերածնունդի սիրուն պատանին, առաջին յայտարարը մեր յարանուանութիւններուն քու ծոցիդ մէջ անվերապահ միութեան ու հպարտ գործակցութեան, կոչումովդ եղբայրական, բոլոր մեր ցիրուցան համայնքներուն միջեւ նետուած նոյնքան ոսկեղէն կամուրջը՝ յոյսը, նեցուկը մեր պայքարին:

Ո՞ր անդունդ միտքը քայքայեց նաեւ քեզ՝ բզքտեց:

Որպիսի՞ յաւակնոտ, փառամոլ էակներ քեզ վերածեցին հակառակորդ փշրանքներու:

Ո՛հ, որքա՜ն մեծ եղաւ հմայքդ, երբ ամէն պատանի հպարտ կը զգար քեզմէ ըլլալ ան, դուրս մնացողը՝ մեզաւոր:

Տակաւին այնքա՜ն մեծ է վարկդ, որ քեզմէ բաժնուած փշրանքներուն վրայ կ'ուզեն անպատճառ որ քու անունդ փայլի:

Հ· Մ· Ը· Մ· - Փարիզ:
Հ· Մ· Ը· Մ· - Ֆրանս:
Հ· Մ· Ը· Մ· - Արժիւ:
Հ· Մ· Ը· Մ· - Նուպար:

Այլ Հ· Մ· Ը· Մ·-ներ: Նոյները Միացեալ – Նահանգներու մէջ, Գանատա, Միջին - Արեւելք:

Ի՞նչ ահաւոր մեղք, մատաղ հոգիներուն մէջ ազգի միութեան հաւատքը խախտել:

Ո՞ւր է հոս, ողջմտութիւն, ազգասիրութիւն, հայրենասիրութիւն, ժառանգութեան մը տիրանալու ուժականութիւն, անկախութեան ձգտումի հաւատամք:

Պարզեցիր ներքին եղբայրակցութեան եւ մարդոց բարեկամութեան դրօշը:

Ինչո՞ւ այլայլեցին քեզ, ո՛վ Հ·Մ·Ը·Մ·:

Ողիմպիականներ՝ հատուածական նոյնպէս:

Եթէ Հ· Մ· Ը· Մ· մէկ չէ՝ Հ· Մ· Ը· Մ· չկայ:

Մեղք է զայն սեփականացնելը՝ ամօթ:

Պատկերը աւելի մխիթարական չէ այլուր:

Կը կարեկցիմ եւ կ'ողբամ ձեզ նահատակներ՝ մեծ - հայր, մեծ - մայր, քոյրեր եղբայրներ:

Տառապեցաք ճամբաներու եւ անապատներու մէջ միասնաբար, ուր ձեր ամբիոնները ի մի ամփոփուեցան՝ կոթող զպաստութեան: Փշրուեցա՞ն անոնք ալ:

Ձեր յիշատակին ոգեկոչումներն ալ խեղկատակութիւններու առիթ են, մնացորդացի տխուր հոգեվիճակի ցոյցեր են, այլապէս ամօթալի օտարներու աչքին առջեւ, մանաւանդ մեզ կոտորողներուն հրճուանք պատճառող:

Ի՞նչ անօրինակ սրբապղծութիւն:

Այսօր վերջացնենք յիշելով նաեւ «Հայ նախկին ռազմիկներու» փլատակները:

Մարդ կը տատամսի ըսելու որ անոնք պատերազմի արհաւիրք տեսած, վտանգ դիմագրած զինուորներ եղած ըլլան ու եղբայրացած:

Ինչո՞ւ են բաժան - բաժան: Ի՞նչը չեն կրնար բաժնել:

Անցեալ Ապրիլին մայր հոգին վրայ ամօթալի պատկեր ցոյց կուտան՝ զաղութի հոգեբանութեան աւերը:

Որքա՜ն անկում արժանապատուութեան:

Աղքատ հոգիներու փառամոլութեան պատկեր:

ՎԱՉԳԻՆ ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

(*) Ցաւալի է որ վերջերս գումարուած Փարիզի Շրջանային Կրօնական Ժողովը նախապէս մամուլին տուած չէր կանոնագրի մէջ առաջադրուած փոփոխութիւնները, անոնց մասին արտայայտուիլ խնդրելով, ինչ որ օրինաւոր կերպ է, մանաւանդ մեր պայմաններուն մէջ, երբ կարգապահութիւնը **պարտադրող ո՛չ հեղինակութիւն** մը կայ, ո՛չ ալ հանրային կարծիքի ուժը. մի միայն անհատներու դաստիարակութեան ձգուած:

Այդ նոր կանոնագրութիւնը ժողովէն վաւերացուած· տակաւին հրատարակուած չէ: Մաղթենք որ ան մեր Եկեղեցւոյ ոգիին դէմ մեղանչումներ չպարունակէ:

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԳՈՐԾՆԵՐԸ

Խորհ· Միութիւնն ալ սկսած է գործազուրկերու հարցով մտահոգուիլ: Հարց մը զոր ցարդ չէր ունեցած: «Լը Մոնտ»ի Մոսկուայի թղթակիցը կ'անդրադառնայ նոր կացութեան: Ստորեւ՝ ամփոփումը:

×

Էլէնա վաճառորդուհիներէն մէկն էր մայրաքաղաքին մէկ շատ ծանօթ վաճառատան մը: Ամերիկանուհիւնը բազմաթիւ անդամներ եկած էր հոն, կասկածելով որ ցուցափեղկին լիւքս ապրանքները ներսը ձեռքի տակէ կը ծախուէին: Էլէնա որ անձնապէս ոչինչ ունէր գատապարտելի, միջավայրը անհանդուրժելի նկատելով նախընտրած էր հրաժարիլ: Վեց ամիսէ ի վեր անդործ է ան:

Նոյն կացութեան մէջ կը գտնուին հարիւր հազարաւոր խորհրդային քաղաքացիներ: Բոլորը ուղղակի կամ անուղղակի զոհերը չեն կաշառակերութեան դէմ բացուած պայքարին, սակայն կը կազմեն կարեւոր թիւ մը, որուն մասին կը նախընտրեն լռել եւ անպիտանալ ընկերային կեանքի պարագրւթիւնները: Իսկ ենթակաները իրենք իսկ, չատ լաւ գիտեն թէ երեք ամիս անգործ մնալէետք ապօրէն կացութեան մէջ կը գտնուին: Զիրենք կը մտահոգէ պետական պլանաւորման կոմիտէն երբ կը պատրաստէ իր վիճակագրութիւնները· կը մտացուին տակաւին կուսակցութեան կողմէ, որ 1930-ական թուականներուն արմատէն ջնջած է անպործութիւնը:

Խորհրդային անգործներու մեծ մասը կամաւոր կերպով թողած է աշխատանքը: Պարզ է ատոր գործընթացը· կը բաւէ դըրսել պետին (գործատուն կամ վաճառատան անօրէնին եւայլն), եւ խնդրել որ ազատ արձակէ ձեր պարտականութենէն· նախընտրելի է հոն ակնարկութիւն մըն ալ ընել ուրիշ գործի մը անցնելու ծրագրի մը մասին: Քանի որ հոն թոշակները կը վճարուին տասնեւհինգ օրը անգամ մը, կը բաւէ երկու չաթաթ առաջ լուր տալ թէ կ'ուզէք ձեր պաշտօնէն բաժնըւիլ· այս ժամանակամիջոցը անցնելէ ետք ազատ էք: Շատ պարզ են այս մասին ձեւակերպութիւնները: Գործատէրը կը վերադարձնէ հրաժարող պաշտօնեային *աշխատանքի դրքոյկը*, հոն արձանագրելէ ետք աշխատանքի սկսած ու հեռացած թուականները:

Կայ անշուշտ քաղաքացիներու դասակարգ մը, որուն արգիլուած է նման կարելիութիւններ· նախ՝ կուսակցական անդամներ· անոնք առանց կուսակցութեան հաւանութեան չեն կրնար ձգել իրենց պաշտօնը: Յետոյ, ռազմարդիւնական մարզին մէջ աշխատողներ եւս, որոնք ենթակայ են պարտադիր օրէնքներու, չեն կըրնար չանկարծ հրաժարական ներկայացնել կորիզային հետազօտութեան մը կեդրոնի անօրէնութեան:

Կոլխոզականներն ալ իրենց կարգին անջատ պարագայ մը կը ներկայացնեն: 1977-էն ի վեր իրաւունք ունին երկրին մէջ տեղափոխուելու, ուրեմն հեռանալու իրենց գիւղէն, սակայն պէտք է հաւանութիւնը առանան այլ կոլխոզականներու: Ընդհանրապէս հարկաւոր է ընդհ· ժողով մը: Ժողովը դիւրութեամբ կ'արձանագրէ որ մեկնին ծերերն ու ալքոլամոլները, սակայն մեկնիլ փափաքողներու մեծամասնութիւնը կը կազմէ երիտասարդ տարրը:

Իշխանութիւնները կանոնաւոր կերպով կը խօսին «թափառամոլ»ներու մասին· այսպէսով ընդունած կ'ըլլան «կամաւոր» անգործութեան մը գոյութիւնը: Երիտասարդ Ռուս մը կրնայ փափաք յայտնել ժամանակ մը չրջելու Ուկրանիոյ հարաւային մասը· այսպէս ծովը տեսնելու համար պարզապէս...: Իրարու նման, սակայն երբեմն իրարմէ հազարաւոր քիլոմեթր հեռաւորութեամբ երկու պաշտօներու միջեւ երբեմն ան իրաւունք կուտայ ինքզինքին, թափառելու ճամբանրու վրայ: Երեւոյթը կը ծաւալի յատկապէս Սիպերիոյ մեծ շինութիւններով: Հոն վճարումները կրկինն են երկրին սրեւմտեան չրջաններու թոշակներուն: Որոշ խնայողութենէ մը ետք եւ Ուրալեան չրջանի արեւմտեան կողմերը ընտանիք մը կազմելէ առաջ, կարելի է ժամանակ մը առանց որեւէ բան ընելու ապրելու փորձութիւնն ունենալ:

Վերջապէս Խորհրդային Միութեան մէջ ստեղծուած է անդործներու նոր դասակարգ մը, որ անծանօթ էր մինչեւ այսօր: Հոզադործական վեց նախարարութիւններու խմբաւորումի աշխատանքը, պատճառ դարձած է բազմահազար պաշտօնեաներու գործազրկումին, ինչ որ թերեւս աննախընթաց է Խորհրդային Միութեան մէջ: Ասոնք, որոնց մէջ երբեմն կը դըտնըւին նաեւ բարձրաստիճան պաշտօնատարներ, (փոխ – նախարար մը եւ չրջանային բազմաթիւ ղեկավարներ խնդրոյ առարկայ են) երեք ամիս պայմանաժամ ունին նոր գործ մը գտնելու, ինչպէս միւս քաղաքացիները: Այս ժամանակի ընթացքին վճարուած են (այսինքն՝ մինչեւ Փետրուար 23), ինչ որ դարձեալ աննախընթաց կը թուի:

Փոքր հաւանականութիւն մըն է որ անոնք ներկայանան «յանձնախումբեր»ու, որոնք գործ կը հայթայթեն անգործնեբու, խորհրդային քաղաքացի մը ժամտախտ նման խոյս կուտայ անոնցմէ: Մոսկուայի մէջ իրեն պիտի առաջարկուի օրինակի համար փողոցներու ձիւնը աւրել, կամ նման աշխատանք մը: 1977-ի Սահմանադրութիւնը կ'ըսէ թէ աշխատանքը «իրաւունք» մըն է, սակայն նաեւ պարտականութիւն մը: Հանգստեան կոչելու տարիքը կիներու համար յիսունը հինգ է եւ այրերու՝ վաթսուն: Այս տարիքէն վար ամէն առողջ, սակայն անգործ քաղաքացի օրէնքին դէմ չարժած կ'ըլլայ. բացի այն մայրերը, որոնք մէկ կամ աւելի զաւակներ ունին լինը տարեկանէն վար:

Անգործութեան այս արգիլեալ հարցը քիչ մը աւելի ազատօրէն ձեռք առնուած է խորհրդային «բարեներսպիչ» անտեսպէտներուն կողմէ:

Անոնք (ամէնէն ծանօթ անունն է Ազանպէկեան) անշուշտ խնդրոյ առարկայ չեն պարծներ լիաժամ աշխատանքի պարտադրութիւնը, սակայն յարդելով հանգիպած դէն կը խօսին գործնական բաներու մասին:

Բացայայտ է որ անոնք կը փափաքին քիչ մը աւելի լայն ազատութիւն տալ ձեռնարկներու տնօրէններուն, անձնակազմի ղեկավարութեան հարցին մէջ: Ոչ մէկ տեղ բսուած է թէեւ թէ գործէ հանելու գործնական կարելիութիւնը պիտի վերաբերի իրենց: Այդ կ'ենթադրուի: Անցեալ ամառ «Նովի Միր» թերթին մէջ վերոյիշեալ անտեսապէտներէն Սէլիւնին կ'արտայայտուէր այս մասին. «մոռցած ենք, կը զրէր ան, թէ ինչ կը նշանակէ անգործութիւն բառը. բայց արդար չէ՞ երբեմն իր կարողութեան կէս չափով միայն աշխատիլ»:

Ուրիշ մը, իր կարգին կը ցաւի որ հաղուագէպ են գործազրկելու պարագաները. «հազուագէպ օրէն միայն զէշ աշխատող մը կը պատժուի գործնականապէս, նոյն վճարումի նուազումով, ապա գործազրկութեամբ» կ'ըսէ ան: Իր յօդուածը յատկացուած էր ընդհանուր առմամբ «ծուլութեան» եւ ասպարէզի դիտակցութեան պակասին:

Էականը այլուր է սակայն: Խորհրդային Միութեան հարցը անգործութիւնը չէ, այլ ձեռային աշխատանքի պակասը: Ռուսերը հետզհետէ աւելի նուազ պատրաստ կ'ունենան, իսկ ոչ - Ռուսերը՝ ընդհակառակն: Սակայն այս վերջիններս կ'ուզեն աշխատիլ միայն իրենց երկրին մէջ, յատկապէս Վրաստան ու մահմետական հանրապետութիւնները: Խորհրդային Միութիւն կառուցումի ընթացքի մէջ երկիր մըն է որ ոչ թէ միջոցներու, այլ մարդկային բազուկներու պէտք ունի: Վերոյիշեալ յօդուածին հեղինակը նկատել կուտար· «արդիական արտադրութեան մէջ վճռական է մարդկային տարրին դերը, ու անոր կարեւորութիւնը պիտի աւելնայ ժամանակի ընթացքին»: Սթալին եւս ուրիշ բան չէր ըսեր արդէն...:

Թ· Ա· Թ·

ՅՕՐ ՆՈՐ ՈՎՈՏԱՆ

ՊՐՈՖ. ՏԻԳՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Վիտիտուց հատվածներ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՑԵՄՅԱՆԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԻՆՈՖՈՏՈԱՐԽԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՆՉԱԳՐԱՄԱՏԱԿԱՆ ԱՐԽԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄ

(Շար. Ա. Էջէն)

պահովելու համար: Կռան - Քէվիյիլի մէջ ալ կրկնեց թէ մեկնելու միտք չունի: Եթէ ընդդիմութիւնը չահի, ըսաւ Միթերան՝ «Դերս կը փոխուի, բայց ոչ՝ պաշտօնս»: Միթերանի համար, բաւական բան ձեռք ձգուած է, հարկ է ժամանակ տալ ու այս առընչութեամբ հետեւեալը կը պատմէ. - Ճամբորդ մը հրապարակ մը կը հասնի, ուր խճողում կայ եւ բանուորներ իրար անցած են: «Ի՞նչ կ'ընէք, կը հարցնէ ճամբորդը, երկու բանուորներու»: Առաջինը կը պատասխանէ՝ քար մը կը դնեմ ուրիշ քարի մը վրայ: Իսկ դո՞ւք, կ'ըսէ ճամբորդը միւսին. - Ես տաճար մը կը կառուցանեմ»: Ու Միթերան, պնդելով թէ ոչ մէկ կազմակերպութեան միացած է, բայց՝ «կը սիրէ» ընկերվարականները, կ'աւելցնէ. - «Անոնք ուրնք կ'ուզեն տաճարը բարձրացնել բարի եկան: Երբ վերջանայ, տաճարը ուրիշներուն կ'ըլլայ»: Այս այցելութեան եւ ոճնախմբութեան, ամբողջ սպայակոյտն ալ փութացած էր, ընտանեկան պարապանքերն ալ անշուշտ եւ ամոլներն ալ (Ֆապիուս, լանկ) nnf կը պարէին:

ՖՐԱՆՍԱՅԻ արտաքին առեւտուրը դէպ արդիւնք տուաւ Դեկտեմբերին 24 միլիառ ֆրանքի բացով:

ՅՈՒՆՈՒԱՐ 20-Ը լուր օր հռչակուեցաւ Մխացեալ - Նահանգներու մէջ, ի յուշ պատուելի Մարթին Լութըր Քինկի, 1983-ին քուէարկուած օրէնքով մը, որ այս տարի առաջին անգամ կը դործադրուի: Սեւ պատուելին, զոր սպիտակամորթերու մեծ մասը կ'ատէր, երբ ողջ էր, ինք ալ պիտի զարմանար, եթէ յանկարծ անդենականէն գար ու տեսնէր: Յունուար 20-ը ծննդեան թուականն է Քինկի, որ 57 տարեկան պիտի ըլլար, եթէ չսպաննուէր 18 տարի առաջ:

ՊԼՅՐՈՒԹի մէջ, կացութիւնը անորոշ է եւ բոլոր անոնք որոնք Սուրիոյ կողմնակից են, կը խզեն Ճեմայէլի հետ, որու հրաժարումն ալ կը պահանջեն մահմետական ները: Ճումպլաթի համար «դաւաճան» է այն Լիբանանցին որ կը դործակցի լիբանանեան իշխանութեան հետ: Միւս կողմէ, սպանական դեսպանատան 3 անդամներ առեւանգուած են, հատնաբար Սպանիա - Իսրայէլ յարաբերութեանց հաստատման առթիւ, որոնց դէմ մահուան սպառնալիք ալ կայ: Արեւելեան-Պէյրութի կռիւներուն զոհերու թիւը բաւական մեծ է: 200 մեռեալ կայ, չուրջ 1000 վիրաւոր, բայց, ըստ կարմիր Խաչի 161 վիրաւոր չատ ծանր վիճակի մէջ են: Անգամ մը եւս, բոլորին աչքերը Դամասկոս դարձած են: Ի՞նչ պիտի ընէ Ասատ:

ՄԱՏՐԻՏի ընկերվարական քաղաքապետը մեռաւ 67 տարեկանին, խլիրգի հետեւանքով: Էնրիքուէ Թիէրնօ Կալվան քաղաքական մեծ դէմք մըն էր, անոնցմէ նաեւ որ վճռական դեր խաղացին Սպանիոյ ժողովրդավարութեան վերադարձի ճամբուն վրայ:

CONFÉRENCE

du Dr. JEAN - MICHEL THIERRY
le Dimanche 26 Janvier à 15 h 30
au
CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN
118, Rue de Courcelles — 75017 Paris
Métro : Courcelles

«NOUVELLES DECOUVERTES EN ARMENIE»

organisée par le Comité des Dames de l'Eglise Arménienne de Paris

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ֆրանսահայ կապոյտ Խաչի, Առնուվիլ - Սարսէլի մասնաճիւղի տարեկան մեծ պարահանդէսը՝ Մարտ 22-ին:

Մանրամասնութիւնները յետագային:

Ֆէրիգիւղցիներու ընժակի օրը


ՅՈՒՆՈՒԱՐ 31-ԻՆ,
ԺԱՄԸ 21-ԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՌԱԻՕՏ

Ներկայ կ'ըլլայ Իսիի Քաղաքապետ
ԱՆՏՐԷ ՍԱՆԹԻՆԻ

Միրով կը հրաւիրուին Ֆէրիգիւղի նախկին սաներն ու բարեկամները, բաժակ բարձրացնելու մեր սիրելի վարժարանին բարգաւաճման համար:

Restaurant LA CAPPADOCE
67 bis, Quai Blanqui, ALFORTVILLE

ՖԷՐԻԳԻՒՂԻ ՍԱՆՈՒՑ ԵՒ ԲԱՐԵԿԱՄՄԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ



ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE DECINES
15, rue du 24 Avril 1915 — 69150 Decines
Salle H. SAMUEL

SAMEDI 25 JANVIER
à 20 heures 30

UNE SOIREE EXCEPTIONNELLE
DIAPORAMA
«L'EPOPEE DES FILS DU SOLEIL»
Réalisation : Alexandre VARBEDIAN
Musique . Aved DERDERIAN
Un retour aux anciennes croyances arméniennes : Est-il vrai que le Dieu - SOLEIL (AREV ou AREK) a donné son nom aux AR - men (Arméniens) ?
RENCONTRE et SIGNATURE
Alexandre VARBEDIAN signera son livre «ARPIAGAN : SOLARIUS»
un poème épique
dédié à l'esprit combatif du Peuple Arménien.

Հ. Բ. Ը. Մ.

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ – ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Ուրբաթ, Յունուար 24, ժամը 20·30-ին՝
Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոնի սրահին մէջ:
118, rue de Courcelles, 75017 PARIS
Նախագահութեամբ՝
ՏՈՔԹ. ԷՏՈՒԱՐ ԱԴԱՄԵԱՆԻ
Ատենապետ
Ֆրանսայի Շրջ. Ցանցաժողովի
Կը խօսի՝
ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍԵԱՆ
«Հերոսական Ոգին Պայքարի Գրականութեան Մէջ»
քննարանով
Հաւուրածներ բանաստեղծին «Կորնթոսի Պաշարումը»էն և ձայներիզի վրայ «Սարդանապալի Տեսիլք»էն, ընկերակցութեամբ՝ Տիկին Անի Զաքըրեանի: Վրոյր Մազմանեան ձայներիզի վրայ կ'ողեկոչէ հեղն պրազիլ՝ Սփիրիտոն Թրիքուբիսի դամբանականը:
Մուտքը ազատ է:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ Վիէննի մասնաճիւղի վարչութիւնը ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները՝ Յունուար 26, կիրակի, կէսօրէ վերջ ժամը 14·30-ին Մշակոյթի Տուն: 9 ռիւ տիւ Սիռֆ:

Օրա-կարգ. - Տեղեկատուութիւն եւ պատգամաւորի ընտրութիւն:

Offre d'emploi

Cherche jeune chauffeur - livreur - manutentionnaire, ayant permis de travail.
Se présenter :
VANBEL
144, rue du Chemin Vert
75020 Paris
Métro Père - Lachaise

«ԾԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ՎԱՖՈՒՆԱՄԵԱՊԻ ԱՌԹԻԻ

Վիէննա. - Տիկին Սոնա Պարսամեան 400 Ֆ.:

ՕՐՄԵՍՈՆ. - Գր. Թահանեան 200 Ֆ.:

ՄԱՐՍԷԼ. - Պ. Սերոբ Աղճայեան 200 Ֆրանք:

MARSEILLE
MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE
12-14, rue Saint Bazile
VENDREDI 24 JANVIER
A 19 HEURES
GERARD CHALIAND
Fondateur du Groupement pour les Droits des Minorités
Ecrivain politique
Professeur à l'ENA
présente
LE SEL DE LA VENGEANCE
de James T. HASHIAN
Ancien haut fonctionnaire auprès du Département d'Etat
Roman rappelant le génocide d'un peuple.
..... *Entrée libre* .....

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

CONCERT A L'OPERA DE MARSEILLE

Samedi 25 Janvier à 20 heures 45
par
SIPAN-KOMITAS
(Chœur mixte Arménien de Paris)
et
l'ORCHESTRE PHILHARMONIQUE DE MARSEILLE
Direction
GARBIS APRIKIAN

avec le concours de
SONIA NIGOGHOSSIAN (Mezzo-Soprano)

« Solistes de Chœur »
Thérèse DEYRMENDJIAN (Alto)
Meguerditch BOGHOSSIAN (Tenor)
René MARTAYAN (Tenor)

Au programme les œuvres de
K. ALEMSHAH, P. GANATCHIAN, G. APRIKIAN, A. TIGRANIAN
Concert organisé par la Croix Bleue des Arméniens de France
— MARSEILLE VILLE —
Pour réservation, contacter les numéros suivants :
91 93 89 83 — 91 90 21 60
42 45 05 36 — 91 66 09 06
91 91 48 85 — 91 50 68 71
91 41 74 89
PERMANENCE
Maison de la Jeunesse et de la Culture Arménienne
12 - 14, rue Saint Bazile — 13001 MARSEILLE
LUNDI - VENDREDI de 17h00 à 19h30 — JEUDI de 15h00 à 19h30
TELEPHONE : 91 50 15 09
Et à partir du 20 Janvier location Opéra de Marseille

VIENT DE PARAITRE

H. PASDERMADJIAN

HISTOIRE DE L'ARMÉNIE

4e Edition

1 vol gr.in - 8e, 437 pages avec 1 carte se dépliant

120 Frs. + 20 Frs. de frais d'envoi

Pour les commandes adresser un chèque à la
LIBRAIRIE ORIENTALE H. SAMUELIAN
51, *rue Monsieur le Prince* — 75006 *PARIS*
où le livre est en vente.

Cabinet TERZIYAN
TOUTES ASSURANCES — TOUTES COMPAGNIES
21, rue Lamartine, 75009 Paris
tél. 42 82 01 41 +

Ապահովագրական Ձեր հարցերուն համար մի՛ վարանիք դիմելու մեզի

ՀԱՐԱՒԱՏ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925

83, Rue d'Hauteville — 75010 Paris

Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F

C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·

Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
22
MERCREDI
22 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.143

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

61e ANNÉE — No 16.143

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Լեզոթոյի (հարաւի - Ափրիկէի մէջ պարփակուած փոքր Պեասութիւն մը) մէջ պարբերական ուժերը տապալեցին վարչապետը, որ երկրին անկախութենէն (1966) ի վեր այդ պաշտօնը կը վարէր: Լեզոթօ տափնապի մէջ էր Յունուար 1-էն ի վեր, երբ Հարաւի - Ափրիկէն փակեց իր սահմանը այն պատճառաբանութեամբ թէ հոն ապաստան գտած են ափրիկեան Ազգ· Քոնկրէսին խռովարար տարրերը:

Լեոնար Պաւլասիւր (ծագումով՝ Հայ) որ նախկին խորհրդատուն էր նախագահ Փոնթիատի եւ այժմ՝ ժաք Շիրաքի, երրորդն է ժաք Թուպոնի ցանկին վրայ, Փարիզի ընտրութեանց: Այս առընչութեամբ է որ «Ֆիկարօ» երեքշաբթի օր դրուատելից տողեր կը նուիրէր այս Փրովանսալին, որ հօրենական արհեստին դիպուածով ... *իշմիր ծներ է*»:

Լիլի մէջ է, որ Նախագահ Միթերան եւ Տիկին Թաչըր պաշտօնականացուցին Մանչի փապուղին եւ այս առթիւ Տիկին Թաչըր այնքան անոյշ (ուրկէ՞ ո՞ւր ...) չէզոով Ֆրանսերէն մը խօսեցաւ, որ բոլոր Ֆրանսական մեխանները հրապուրած է: Անգլիացիները, ծանօթ է, դոհ չեն այս կարգադրութենէն: Եթէ նոյնիսկ կարգ մը Անգլիացիներ համակերպած են իրենց «հրաշալի կղզիացումէն» դուրս ելլելու, ուրիշներ կը տրտնջան որ այդ «իւղոտ ծակը» Անգլիա պիտի բերէ «ահաբեկիչ, պոռնկապրութիւն, հիւանդութիւն եւ չնախս»: Փապուղիին երկարութիւնը 50 քիլոմեթր պիտի ըլլայ եւ միայն երկաթուղի՝ (Անգլիացիները կը նախընտրէին՝ կառուղի) Թի - Ժի - Վի-ն է որ պիտի օգտագործուի եւ ամէն ինչ պատրաստ պիտի ըլլայ 1993-ին: Պիտի արժէ 27,3 միլիառ Ֆ· Ֆ·: 40 հազար հոգիի աշխատանք պիտի հայթայթուի:

Թիճլիզի դատարանը չորս տարի «խիստ զրկութեան արդելափակման» դատապարտած է Խուաար Կուտավա, վրացի այլախոհ մը «հակախորհրդային խռովարարութեան եւ ոճրային խուլիկանութեան համար»: Եղբայրն ալ մեղադրանքի տակ է եւ կրնայ 12 տարի «ազատութեան զրկանքի» դատապարտուիլ:

Սիվվիօ Պեռլուսկոնի որ քանի մը ամսուան համար Փարիզ տեղաւորուած է 5-րդ կայանին պատճառաւ, մամուլի ասուլիսով մը պարզեց իր ծրագիրներն ու յայտագրերը: Սկզբունքով 5-րդ կայանը ճամբայ կ'ելլէ Փետրուար 20-ին եւ յայտագրերը առաւելաբար իտալական պիտի ըլլան, սկիզբը՝ միայն չորս ժամ (19·30 - 23·30) խաղեր, չարժանկար, թերթօն, ամբողջն ալ կտրատուած ծանուցումներով: Ամէն մարդ չի կրնար չգուշակել «սփակէթի - հեռատեսիլ» մը, բայց ոչ ոք կրնար գուշակել թէ նման նուէր մը ընդդէ կրնայ ... ձախն ըլլալ:

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

ԹՐՔԱԿԱՆ ԴԱՌՆՈՒԹԻՒՆ ՈՒԱՇԻՆԿԹՐՆԻ ՀԱՆԴԷՊ

«Հիւրընկալութիւն»ի եւ «Ճոմհուրիյէթ»ի այս արձագանգները ցոյց կուտան թէ Անգարա երկու չափ երկու կշիռ կը տեսնէ Ամերիկացիներուն մօտ եւ չի ծածկեր իր դառնութիւնը:

×

«ՀԻՒՐՐԻՅԷԹ»· - (Յունուար 20)· -

Անգարա գացած է Միացեալ - Նահանգներու Արտաքին նախարարի օգնական Ջ· Ուայթհէտ, որպէսզի Թուրքիոյ կառավարութեան փոխանցէ իր կառավարութեան Լիբիոյ դէմ տնտեսական ամպարկօ կիրարկելու կոչը ու տեսակցութիւն ունենայ միջազգային ահաբեկչութեան հարցերուն մասին:

Անգարայէն բաժնուելէ առաջ օգակայանին մէջ, մամլոյ ասուլիս մը տալով Ջ· Ուայթհէտ ի միջի այլոց ըսած է ... «Թուրքիա ամէնէն աւելի տառապած երկիրներէն մէկն է արիւնարբու ոճրագործներու արարքներուն պատճառով, որոնք կը կարծեն թէ անմեղ մարդիկ սպաննելով պիտի ծառայեն իրենց քաղաքական դաւին: ԱՄՆ ինչպէս բոլոր ահաբեկչութիւնները, ամէնուրեք, միշտ դատապարտած է նաեւ հայկական ահաբեկչութիւնը: ԱՄՆ ու Թուրք կառավարութիւնները վճռած են միասին պայքարիլ այս սպառնալիքին դէմ»:

Մինչ միւս կողմէ Ճումհուրիյէթ»ը կը գրէ թէ զօրավար Էվրէնն պատասխանելով ԱՄՆ-ու Նախագահ Ռեյկընի Լիբիոյ դէմ գործակցելու առաջարկին, անցեալի հայկական ահաբեկչական արարքներուն ակնարկելով ըսած է թէ ահաբեկչութեան դէմ պայքարը պէտք է մղուի ոչ թէ «ընտրովի», այլ առանց որեւէ նկատումի: Էվրէն իր պատասխանին մէջ չեշտած է ահաբեկչութեան դէմ պայքար մղելու անհրաժեշտութիւնը ու այս մասին Թուրքիոյ համամտութիւնը, սակայն անդրադառնալով հայկական ահաբեկչութեան, դիտել տուած է թէ Օրլիի եւ Անգարայի էսէնպոզա օգակայաններուն դէմ գործուած յարձակումներուն նոյն մտահոգութիւնը չարտայայտուեցաւ:

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
ՀԵՔԱԹՈՒՄ

ԵՐԵՒԱՆ
(ԱՐՄԷՆՓՐԷՍ - ՅՈՒՆՈՒԱՐ 10 - 16)

ԲՈԳԴԱՆ ՍԱԼԹԱՆՈՎ
ՎԷՊԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ
ԼՈՑՍ ՏԵՍԱԾ

Երեւանի մէջ լոյս տեսած է «Բոգդան Սալթանով» վէպին երկրորդ հատորը, որով կ'աւարտի նկարիչ Ամոսածատուր Սալթանեանցի առասպելական կեանքի պատումը: Նոր Ջուղայեցի նկարիչը 1666-ին, Ալեքսէյ Միխայլովիչի հրաւէրով գացած է Մոսկուա եւ դարձած Ռուսիոյ ամէնէն ծանօթ արուեստագէտը, ապա առացած է ազնուականի տիտղոս եւ ստանձնած կրեմլինի Գեղարուեստական արուեստանոցի գեկավարի պաշտօնը: Սալթանով եղած է նաեւ Պետրոս Մեծի դաստիարակը եւ անոր կողմէ Ազովի գրաւման ի պատիւ կառուցած յաղթական առաջին կամարը Ռուսիոյ մէջ: Բացած է նկարչական առաջին դպրոցը, որուն աշակերտները յետագային մեծ արուեստագէտներ դարձած են: Բոգդան Սալթանով Կրեմլինի տաճարները զարդարած է որմնանկարներով, նկարած է սրբապատկերներ, ձեւաւորած գիրքեր:

Վէպը գրած է Յովհաննէս Ղուկասեան, որուն հետաքրքրութիւններու եւ ներշնչման աղբիւրը հայ մշակոյթի խոնարհած էջերը, արուեստի ու դպրութեան մշակներու վարքն է, վարք մեծաց: Ասկէ առաջ գրած էր Ոսկան Երեւանցիի կեանքը, աւելի վաղ՝ «19 պատմուածք» հատորը, ծոյլի մանրաքանդակներու պատմական դէմքերը՝ տպագրիչներ, նկարիչներ, ծաղկողներ, բանաստեղծներ: Գրողը Թաւրիզէն ներգաղթած է Հայաստան: Հեղինակն է բազմաթիւ գործերու՝ արձակ թէ չափածոյ:

ԿՈՉ ԶՕՐԱՎԻՓ ԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

«Արմենիա»յի այսօրուան երրորդ էջին վրայ տեղ կուտանք Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէին նորագոյն մէկ կոչին, որով Կոմիտէն հայ հանրութեան կը ներկայացնէ տնտեսական - հաշուեական այն արգիլքը, որուն յանգած են շուրջ երկու տարիներու իր հետեւողական եւ կորովի աշխատանքները:

Բնորոշելէ ետք Մխիթարեան Միաբանութեան ծանր եւ աննախընթաց տագնապը եւ այնուհետեւ պարզելէ ետք երկու այն հիմնական համաձայնութիւնները, որոնց յանգած են մէկ կողմէ պարտատէր դրամատուները եւ միւս կողմէ Ս· Ղազարի չհերը պաշտպանող Կոմիտէն, հաղորդագրութիւնը կոչ կ'ընէ ըսփիւռքի հայ հանրութեան նպաստելու զօրավիգ կանգնիլ Միաբանութեան, փրկելու համար հայ մշակոյթի, կրթութեան եւ քաղաքակրթական մեր արժէքներու պահպանման նուիրուած դարաւոր այս հաստատութիւնը:

Ինչպէս կը յիշուի, Մխիթարեաններու տնտեսական - կալուածային ծանրակշիռ տագնապը հայ մամուլին եւ հասարակութեան ծանօթ եղաւ 1984-ի ընթացքին, եւ Սփիւռքը առեղին լրջօրէն մտահոգուեցաւ անանկացած տեսնելու մշակութային կարեւոր կեդրոն մը, որ վերջին աւելի քան երկու հարիւր տարիներուն, ո՛չ միայն եղաւ մեր մտաւոր զարգացման, դպրութեան, հայագիտութեան եւ հայակրթութեան կարեւոր վառարաններէն մէկը, այլեւ եղաւ արուեստի գործերու եւ հնագիտական արժէք ներկայացնող թանկագին առարկաներու ապահով վայր մը:

Այժմ, յայտնի կը դառնայ, որ Կոմիտէն իր բանակցութիւններով յաջողած է գոյացնել հետեւեալ երկու հիմնական համաձայնութիւնները· -

ա) Զվաճառել Միաբանութեան պատկանող ոչ մէկ կալուած կամ գեղարուեստական արժէք ներկայացնող իրեղէն:

բ) Հաստատութեան սկզբնական 32·7 միլիառ լիրի պարտքը (ներառեալ տոկոսները) նուազեցնել 8·3 միլիառ լիրի (շուրջ 5 միլիոն տոլար):

Այլ խօսքով, Պ· Վ· Ճագմաեարեանի գլխաւորութեամբ գործող Կոմիտէն յաջողած է մէկ կողմէ անձեռնմխելի պահել Ս· Ղազարի մշակութային - գեղարուեստական հարստութիւնները եւ միւս կողմէ չուրջ 75 առ հարիւր համեմատութեամբ նուազեցնել Միաբանութեան նիւթական պարտաւորութիւնը, որ ինչպէս ծանօթ է, արգիլնք է Մխիթարեան միաբաններու բարեմտութեան անպարկեշտ չարաշահումին:

Կը մնայ աւելցնել որ, միշտ ըստ հաղորդագրութեան, Միաբանութիւնը պարտաւորութեան տակ կը գտնուի համաձայնուած յիշեալ 5 միլիոն տոլար դրամը գոյացնել եւ հատուցել մինչեւ 1986-ի կէսերը:

Անցնելով գործնականին, Կոմիտէն կը ծանուցանէ, որ պաշտօնապէս պիտի ձեռնարկուի համազգային հանգանակութեան մը, որպէսզի գոյացնելէ ետք վերոյիշեալ գումարը, Մխիթարեան Միաբանութիւնը կարենայ չարունակել ազգային, մշակութային, կրթական, հրատարակչական եւ այլ ազգօգուտ բնոյթի իր առաքելութիւնը:

Մխիթարեաններու տագնապի սկզբնաւորութենէն ի վեր, սփիւռքահայ մամուլը, անխտիր, ինչպէս եւ բոլոր կազմակերպութիւնները չծածկեցին իրենց խոր մտահոգութիւնը եւ համակրական խօսքերով անդրադարձան Ս· Ղազարի դերին ու վաստակին՝ հայ մտքի, գրականութեան, մատենագիտութեան, դաստիարակութեան եւ այլ կալուածներու ծաղկումին մէջ: Միջազգային մամուլը եւս խօսեցաւ տագնապին մասին, եւ լուսեցան զօրակցութեան ձայներ օտարներէ:

Ազգային - մշակութային իր ծառայութեանց մէջ՝ Մխիթարեան Միաբանութիւնը անցեալի ժառանգութիւն չէ միայն, այլեւ մանաւանդ գրաւական մը ապագայ ծառայութեանց, որքան առեն որ հայ Սփիւռքը իր մշակութային ինքնութիւնը պահպանելու նպատակը ունի: Այս իմաստով ալ, Ս· Ղազարը Սփիւռքի ամէնէն ժրաջան եւ արդիւնաշատ հաստատութիւններէն մէկն է եւ պէտք է կարենայ չարունակել իր դերակատարութիւնը:

Կարեւորութեամբ պէտք է ընդգծել, որ տնտեսական տագնապի յառաջացման մէջ դեր ունեցած են այն անպարկեշտ գործակատարները կամ ընկերութիւնները, որոնց մխրան հայրեր վստահած են կալուածային իրենց գործերու չանճառումը, բարեմտութեամբ եւ առեւտրական - տնտեսական խնդիրներու մէջ իրենց անփորձութեամբ կամ չափազանցեալ վստահութեամբ:

Աառնն է կը կարծենք, որ Սփիւռքի հայութիւնը, մասնաւորաբար ունեւոր խաւերը գործնական չահագրգռութիւն մը ցուցաբերեն եւ օժանդակութեան ձեռք մեկնեն Միաբանութեան, նպաստաբեկումէ փրկելու համար հաստատութիւն մը, որ նուիրուած է ստեղծագործ աշխատանքի համար հայ մշակոյթի ու քաղաքակրթութեան:

Հանգամանքները աւելի ստիպողական կը դարձնեն այս պահանջը: Արդարեւ, 5 միլիոն տոլար գումարը կը ներկայացնէ նախընթաց չունեցող հանգանակութիւն մը Սփիւռքի մեր կեանքին մէջ, եւ երկրորդ՝ ճշդուած ըստ երեւոյթին՝ դատական պայմանաժամը խիստ կարճ:

Այսուհանդերձ, յոյս աշխարհին (նկատի ունենալով որ հարցը առարկայ դարձած է միջազգային հանրային կարծիքի ուշադրութեան) թանկ է եւ բարոյական նշանակութիւն ունի մշակութային դարաւոր հաստատութեան մը թիկունք կանգնելու համազգային կեցուածքը:

Մխիթարեանները չատ ծառայութիւններ մատուցած են հայութեան, այժմ ժամն է փոխադարձութեան: Շօշափելի գնահատութեան:

Խմբագրական
Արմենիա-ի (Դեկտ· 18)
Պուէնոս - Այրէս

×

ԽՄԲ· - «*Ճառաջ*»ի· - Ինչպէս կ'ակընկալուէր «Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէ»ի հաղորդագրութիւն - կոչը («*Ճառաջ*», Դեկտեմբեր 13), լայն արձագանգ գտաւ եւ կը շարունակէ գտնել, գաղութէ գաղութ: «*Ասպարէզ*»ի (Քալիֆորնիա) «Օրը Օրին»էն ետք, զոր արտատպեցինք առջի օր, Հարաւային - Ամերիկայի մեր պաշտօնակիցին խմբագրականը կը փաստէ - եթէ հարկ էր - այն համազգային եւ անվերապահ ժողովրդականութիւնը զոր կը վայելեն Մխիթարեանները եւ որուն հանդէպ, ժամն է, որ հայ ժողովուրդն ալ, իր կարգին, իր երախտիքը յայտնէ, շօշափելի ձեւով:

Ինչպէս ըսինք, հանգանակիչ մարմիններ պիտի կազմուին, ի մօտոյ: Մինչ այդ, անգամ մը եւս շեշտելով ստանձնուած յանձնառութեանց ստիպողական բնոյթը, կ'ընենք որ դրամական առաքումները կատարուին անյապաղ հետեւեալ հասցէին· -

Libellez vos chèques bancaires à l'ordre de :
C. I. C. A. M.
et les expédier à
C. I. C. A. M.
c/o Crédit Suisse
92, Champs-Elysées — 75008 PARIS

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՐԱՆՏԱՒՈՐՆԵՐԸ

ՈՎ ԷՐ ՄԻՔԱՅԷԼ ՄԻԱՆՍԱՐԵԱՆՑԸ

Ա.

1876 - 77 թուականներին Ռուսաստանի մամուլը շատ էր զբաղած Մ. Միանսար - եանցի ու նրա «Կովկասի եւ Անդրկովկասի մատենագիտութիւնը» աշխատութեան մասին՝ այն համարելով եզակիօրէն մեծարժէք գործ: Այնուհետեւ, ռուս նշանաւոր մատենագէտները Վ. Մեժովը, Ս. Վենգերովը, Ն. Զդորնովը իրենց հիմնարար աշխատութիւններուն պատուաւոր տեղ յատկացուցին Մ. Միանսարեանցին ու նրա մատենագիտութեանը:

Մինչ այդ, Հայոց մշակութային կեանքում Մ. Միանսարեանցը ճանաչուած էր իր «Քնար հայկական» ծաւալուն երգարանով եւ Հայոց մամուլում հրապարակած յօդուածներով: Նրա մատենագիտութիւնը Հայոց մէջ գրեթէ անուշադրութեան մատնուեց: Եւ միայն մեր ժամանակներում, հրապարակումից 100 տարի յետոյ, երբ գրւում էր հայ մատենագիտութեան պատմութիւնը, պարզ դարձաւ, որ Միանսարեանցը իր այդ աշխատութեամբ հայ նոր գիտական մատենագիտութեան սկզբնաւորողն ու հիմնադիրն է:

Միքայէլ Միանսարեանցը ապրել է չիսուն տարի: Ահա այդ տարիների ընթացքը սեղմ պատկերով. ծնուել է 1830-ին, Թիֆլիսում՝ երեւանից փոխադրուած ընտանիքում: Սովորել է տեղի Ներսիսեան դպրոցում, ապա՝ Մոսկուայի Լազարեան ճեմարանում եւ յետոյ՝ Պետերբուրգի համալսարանում, որի իրաւաբանական բաժինն աւարտելով ստացել է իրաւաբանութեան թեկնածուի աստիճան: Այնուհետեւ սովորել է Պետերբուրգի վիճաբանական բարձրագոյն ուսումնարանում, որը 1857 թ. աւարտելով վիճաբանական ծառայութեան է անցել: Մինչեւ կեանքի վերջը մնացել է վիճաբանական, հասել փոխ - պետական խորհրդի: Ծառայել է հայրենիքից հեռու՝ վիսաւորապէս Լիտվայում եւ Պետերբուրգում:

Միանսարեանցի կեանքում ուշագրաւն ամէնից առաջ այն է, որ չարունակաբար լինելով վիճաբանական ծառայութեան մէջ, հեռաւոր վայրերում՝ ամենագործուն մասնակցութիւնն է ցուցաբերել հայ հասարակական - մշակութային կեանքին: Թերթելով անցած այն օրերի Հայոց մամուլը, զվիսաւորապէս Մոսկուայի «Հիւսիսափայլ»ը եւ Թիֆլիսի «Մեղու Հայաստանի»ն, հանդիպում ենք Միանսարեանցի տրամաբանուած, պայծառ երազանքով լի ու կրքով գրուած յօդուածներին: Նոյն տրամաբանութիւնն ու կիրքն այսօր զգում ենք նրա գրքերի էջերից, այլ գրութիւնների մէջ: Եւ որքան շատ ենք ճանաչում այդ մարդուն, այնքան աւելի ենք հասկանում, որ նա մէկն է եղել այն հայ գործիչներից, ովքեր առանց որեւէ չահի, զոհելով իրենց նիւթական միջոցները նաեւ բարեկեցիկ կեանքի անդորրը, ջանում էին որեւէ կերպ օգտակար լինել իրենց ժողովուրդին: Այս տեսակէտից Միանսարեանցը նման է իր ժամանակակից Միքայէլ Նալբանդեանին:

Ձիւղ հասկանալու համար Միանսարեանցի գիտական - մշակութային գործունէութիւնը պէտք է թեկուզ համառօտակի ծանօթ լինել նրա հասարակական հայեացքներին, որոնց հիման վրայ նա իր համար մշակել էր գործունէութեան ընդարձակ ծրագիր:

Միանսարեանցի կարծիքով Հայութեան եւ՛ յաջողութիւնների, եւ՛ ձախողումների գլխաւոր պատճառը հէնց Հայոց մէջ է գտնւում: Նա կարեւորապէս զէմ էր Հայութեան անյաջողութիւնների, զժուար կացութիւնների պատճառը արտաքին պայմանների, ուրիշ ժողովուրդների մէջ որոնելուն: Աւելորդ էր համարում նաեւ հայ ժողովրդի դէմ ուղղուած մեղադրանքներին պատասխանելը: «Նախ մենք պէտք է բարելաւուենք» - այսպէս կարեւի է ամփոփել Միանսարեանցի այդ մտածումները: - Որպէսզի օտարը մեզ յարգի, նախ մենք պէտք է յարգենք մեզ, յատկապէս մեր լեզուն, նաեւ մշակոյթը, պատմութիւնը, - գրում էր նա եւ աւելացնում. «Մենք կարծում ենք, որ մեզ սիրել ու յարգել տալը, մեր առաջ գնալը, մեր ամենայն բարօրական եւ իրական բարեաց հասնելը ըստ մեծի մասի մեզնից է կախուած», եւ ապա՝ «եթէ մենք, մեր ամենամեծից մինչեւ ամենափոքրը, իրապէս սիրենք եւ յարգենք մեր լեզուն եւ ազգութիւնը, վարուենք միշտ ճշմարտապէս՝ յարգելով թէ մեր անձնական եւ թէ այլոց՝ մեծից մինչեւ փոքրի մարդկային պատիւը, անկարելի է, որ ամենայն մեզ տեսնող եւ ճանաչող չյարգէ մեզ, անկարելի է, թէ օտարը չտարածէ իւր ազգայնոց մէջ յարգանք առ մերազնեայք»:

Ապա՝ գրում էր, որ հայ ժողովուրդը իրաւունք ունի եւ կարող է կանգնել աշխարհի ամենաքաղաքակիրթ ազգերի չարքում, եւ որ դրան հասնելու միակ ճիշդ ճանապարհը ազգային ինքնակատարելագործումն է, որն, ըստ Միանսարեանցի, ամէնից աւելի նշանակում էր լուսաւորութիւն, ժողովրդական կրթութեան ծաւալում: Միանսարեանցը նկատի ունէր ամբողջ աշխարհի Հայութեանը: Եւ ահա նա յանգեց մի եզրակացութեան, որ աշխարհի բոլոր Հայերի համար լուսաւորութիւնը պէտք է լինի ազգային լեզուով, քանի որ Հայութիւնը միաւորողը եւ պահպանողը Հայոց լեզուն է: Նա կոչ հրապարակեց՝ «Ազգային տարրերից ամենահզօրը եւ կենդանապահը լեզուն է», եւ այդ խօսքը իրրեւ բնաբան դնում էր իր հրատարակութիւնների ճակատին:

Մ. Նալբանդեանի նման ժողովրդի զարգացման, քաղաքակրթման սկիզբը, ակունքը համարելով մանուկների կրթութիւնն ու դաստիարակութիւնը նորագոյն եղանակներով, Միանսարեանցը ուշադրութիւնը կենտրոնացրեց հայկական ղբաղրոցի վրայ, որի աւանդները դալիս էին Մաշտոցից: Նա իր միտքն ու եռանդը նուիրելով ժողովրդական կրթութիւնը ճիշդ կազմակերպելու գործին, մշակեց իր գործունէութեան ծրագիրը, որը երեք մաս ունէր. - 1) զարգացնել ազգային ղպրոցը որպէս հայ երեխաների կրթութեան միակ ասպարէզ, 2) հայագիր կրթութեան զանազան միջոցներով ուծացումից փրկել աշխարհի տարբեր վայրերում թնակուող այն հայ ընտանիքները, նաեւ մեծահասակներին, որոնք օտարացման ուղին են բռնել, 3) կանոնաւորել հայ գրքի հրատարակումն ու վաճառքը ամբողջ աշխարհում, քանի որ հայ գիրքը էական դեր ունի ժողովրդական կրթութեան բնագաւառում, նաեւ ստեղծել հայ գրքի համընդհանուր մատենագիտութիւն, որպէսզի աշխարհի ամէն կողմում բնակուող Հայերն իմանան, թէ ընդհանրապէս ի՛նչ կայ հրատարակուած ազգային լեզուով:

Իր ծրագրի իրագործման ճանապարհին նա հրատարակում էր հայերէն թարգմանուած մանկավարժական աշխատութիւններ, Հայոց պարբերական մամուլում տպագրում էր իր մանկավարժական յօդուածները՝ հետեւողականօրէն պաշտպանելով ուսուցման այն սկզբունքը, որն արծարծում էին նաեւ Մ. Նալբանդեանը, Կ. Ուշինսկին եւ մանկավարժական առաջաւոր մտքի միւս ներկայացուցիչները. այն է՝ երեխան պէտք է կրթուի իր ազգային լեզուով: Միանսարեանցը մանաւորապէս գրում էր. - «Առանց ազգային լուսաւորութեանը կանոնաւոր ուղղութիւն եւ միջոցներ տալու, մենք միշտ կը թափառենք այն վէտերի մէջ, որոնց մէջ այժմ ընկղմել ենք, եւ ապագայում այն վէտեր առաւել եւս կ'աւելանան»:

Միանսարեանցը Նալբանդեանի նման հասկանում էր, որ մի ժողովրդի իրական ծաղկման համար էական է նրա ապատագրումը. նա գրում էր. «Մէկ ազգ, որ չունի անկախութիւն, ինքնագլխութիւն, չէ կարող զարգանալ ուղիղ ճանապարհով, եւ էս պատճառով այսպիսի ազգը եւս կը մնայ»: Սակայն լինելով իրապաշտ՝ նա խօսում էր հայ ժողովրդի այն ժամանակ եղած փաստական վիճակը նկատի առնելով եւ գլխաւոր դերը տալիս էր ժողովրդի ազգային կրթութեանը:

1868 թ. Միանսարեանցը որոշակիօրէն առաջադրում է պարտադիր ուսում սահմանելու եւ համատարած ազգային բրագիտութեան հարցը. նա գրում էր, որ աշխարհի բոլոր կողմերում ամէն հայ երեխայ պէտք է կարողանայ հայերէն ազատ կարդալ ու գրել: Դրա համար առաջարկում էր Թիֆլիսում, Կ. Պոլսում եւ Զմիւռնիայում ստեղծել, իր խօսքով ասած, վարժապետական ղպրոցներ, այսինքն՝ մանկավարժական ուսումնարանները՝ հայկական ղպրոցների ուսուցիչներ պատրաստելու համար: Միանսարեանցը մեծ յոյսեր էր կապում այդ ուսումնարաններում հայկական ճիշդ կրթութիւն ստացած երիտասարդների հետ. «Նոքա սովորած լինելով հայրենեաց լեզուն՝ օտար երկրի մէջ, որքան էլ որ այլեւայլ օտար ազգեցութեանց տակ լինէին, միշտ կը մնային հոգով հաւատարիմ որդի հայրենեաց եւ ազգին»:

Միանսարեանցը նաեւ առաջարկներ էր անում հայկական ղպրոցները նոր, եւրոպական սկզբունքներով վերակառուցելու համար: Նա կարեւանապէս մերժում էր ծեծն իրրեւ դաստիարակութեան միջոց եւ բերում լուրջ հիմնաւորումներ: Շատ կարեւոր էր համարում ղպրոցներում մարմնամարզութեան դասընթաց հիմնելը, երեխաների նպատակասլաց խաղեր կազմակերպելը: Նա եղաւ Վիէննայի Մխիթարեանների մօտ եւ Հ. Արսէն Այտընեանի օգնութեամբ կազմեց հայերէն վարժչարդութեան օրինակելի տետրեր ու 1873-ին տպագրեց Լայպցիգում: Գրեց ու հրատարակեց մանկավարժական յատուկ ձեռնարկ հայկական ղպրոցների համար՝ «Կանոնաւոր եւ վայելուչ դրութեան պատմութիւնը եւ տեսութիւնը» (1872 թ.):

ՌԱՖԱԷԼ ԻՇԽԱՆԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏ

ԲՈՒՆԱԿԱԼԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հին Հռոմի մեծ դէմքերէն ոչ մէկը անկասկած այնքան նոզկանք ու սարսափ պատճառած է որքան Սիլլա, բռնակալը: Հին գարերու պատմիչներ խօսած են արիւնարբու բռնապետներու, «խելագար կայսրեր»ու մասին, ինչպէս Կալիգուլան, որոնք չէին վարաներ իրենք իսկ չարչարանքներ կիրարկելու, սպաննելու. սակայն որովհետեւ անոնք «խելագար» անուանուած են, Սիլլայի համբաւը կը մնայ դրեթէ առանձին:

Հին աղբիւրներ կ'ըսեն թէ ան նոյնիսկ իր տունը կը տանէր իր հակառակորդներուն դլուխները, զանոնք քննելու, ապա ցուցադրել տալու համար Ֆորումի ամէնէն աչքառու մէկ անկիւնը: Կ'ըսուի նոյնիսկ, թէ ան կ'ուտէր աչքերը...:

Պղուտարքոս կը պատմէ թէ կատաղ տանջանքէ տարեկանին այցելութիւն տալով Սիլլայի ու տեսնելով թէ փայլուն անձնաւորութիւններու գլուխը կը բերէին իրեն ընդհանուրին ապշած ակնարկներուն տակ կը հարցնէ իր տարեց դաստիարակին թէ ինչո՛ւ ոչ ոք չի սպաններ այնքան ոճիրներու այս պատասխանատուն. «կը վախնան անկէ զաւակս, իրենց վախը աւելի հզօր է քանատելութիւնը» կը պատասխանէ ան: «Ինչո՞ւ ուրեմն չենծի հատու սուր մը չտուիր որպէսզի Հռոմը փրկէի անկէ»: Այս պատասխանին վրայ դաստիարակը խոհեմութիւն կը նկատէ իր աշակերտը աչքէ հեռու պահել:

Սիլլայի չրջանին, ինչպէս իր նախորդներուն ու յաջորդներուն, ընկերութենէն վտարումը պատժական յաճախադէպ միջոցառում մըն էր: Մեծ վարձատրութիւն կը տրուէր այն անձերուն որոնք կը դիւրացնէին վտարեալի մը ձերբակալութիւնը կամ կը բերէին անոր գլուխը. իսկ անմիջապէս կը պատժուէին անոնք, որոնք այդ դժբախտներուն ապաստան կուտային, կամ կ'օգնէին:

Կը հաստատուի թէ զոհերու մարմինները կանոնաւոր կերպով կտրատուած են այն անձերուն կողմէ որոնք կը հսկէին դիակներու տարուելուն: Այդ դիակները կը քաշկռտուէին փողոցներու երկայնքին, մինչեւ որ նետուէին Տիբերիսի յորձանքին մէջ: Իսկ ձերակուտականներու եւ ասպետներու գլուխները կը ցուցադրուէին Ֆորումի մէջ մինչեւ որ սկսէին կազմալուծուիլ: Այս բոլորը կը կատարուէին որպէսզի մեռեալին ինքնութիւնը կարելի չըլլար ճշդել ու ան զրկուած ըլար նուիրական եւ անդենականի մէջ պատուաւոր տեղ մը ունենալէ: Հին օրերու ընկերութիւններու մէջ մեռեալի մարմնին անվթարութեան սկզբունքը հիմնական կէտ մըն էր ահա թէ ինչու, Հոմերոսի պատմածին մէջ Աքիլլէս Հեկտորի դիակը կը կապէ իր սայլին ու քարշ կուտայ, այսպիսով դինքը ենթարկելով «ծայրագոյն անարգանքներու»:

Հալածանքի ենթարկուածները կը զրկուէին նաեւ իրենց սեպհականքին. Պետութիւնը կը զրաւէր ինչ որ ունէին: Երբ ըսել թէ Հռոմէական կայսրութիւնը հիմնուած էր դրութեան մը վրայ ուր հպատակները զասակարգերու կը բաժնուէին իրենց հարստութեան համեմատ: Աւելի հարուստներու դասակարգը աւելի չատ խօսքի տէր էր քաղաքական իշխանութեան մարզին մէջ, սակայն նաեւ անոնք աւելի ծանր հարկեր կը վճարէին: Նման ընկերութեան մը մէջ ստացուածքի պրաւում կը դատապարտէր ամբողջ ընտանիքը մութին մէջ խամրելու:

Այս միջոցառումն իսկ բաւարար չթուացաւ Սիլլայի, քանի որ կը պատահէր որ իրաւազրկուած ծնողներու զաւակները յետագային միջոց կը գտնէին որոշ հարըստութիւն մը դիզելու եւ կրկին տիրանալու քաղաքական ասպարէզի մը: Ահա թէ ինչու, Սիլլա օրէնք մը հրապարակելով արգիլեց դատապարտուածներու յաջորդ սերունդներուն եւս Հռոմ եւ մինչեւ իտալիա բնակութիւն հաստատել:

Ծանօթ չէ որոշ թիւը այն ընտանիքներուն, որոնք այս ձեւով անյայտացան: Հակասական տեղեկութիւններ կուտան աղբիւրները: Ամենարարձր թիւը կը հասնի 4700 հոգիի:

Մահապատիժներու դործադրութիւնը այնպիսի վայրագ տեսարաններ կը պարզէր որ Հռոմէացիները չէին կրնար մոռնալ: Մահապատիժները երբեք պարզ պատառումով չէին դործադրուեր. ժողովուրդը կ'ուզէր ոչ միայն դիտել մահապատիժը, այլ հրճուիլ նաեւ մահապարտին հոդեվարքի տեսարանով: Այսը հնարաւոր զոհը կ'առաջնորդուէր դործադրութեան վայրը, հետեւելով աւանդական կարգին. հոն ներկայ կ'ըլլար գատաւոր մը, գլուխը սեւ քօղով ծածկուած, որպէս սուգի նշան: Դատապարտեալը կը մերկացնէին իր զգեստներէն ու կը կապէին ձողի մը, յետոյ երկար ատեն կը խարազանէին զայն. այդ հարուածներուն տակ բառաչիօրէն կը բզկտուէր մարմինն ու դէմքը: Ցետոյ զայն կ'երկնցնէին գետնին վրայ իջեցնելու համար տապարը: Այս արարողութեան կ'ընկերանար փողհարութիւնը, լինչ որ աւելի ազդեցիկ հանդիսաւոր կը դարձնէր վայրագութեան կիրարկումը: Սպաննուածները դիակները ապա կը քաշկռտուէին մինչեւ Հռոմի արեւելեան չրջանը, դիակները լքելու վայրը:

Երբեմն կը պատահէր որ Հռոմի բնակչութիւնը աւելի զործօն մասնակցութիւն բերէր մահապատիժի դործադրութեան: Դատապարտեալը վիզէն պարանով մը կապուած կը չրջէր ամբողջ քաղաքին մէջ, ամէնուն նախատական խօսքերուն, ու չարժումներուն թիրախ դառնալով. կը հայհոյէին, կը թքնէին, կը խարազանէին, վրան կղկղանք կը նետէին, մինչեւ որ առաջնորդուէր մահուան վայրը: Հոն ողջ - ողջ կ'անդամահատէին զայն, դլխատելէ առաջ:

Սիլլա բռնակալը զոր կ'ամբաստանէր պաղարիւն հրէշ մը ըլլալով, զպայտն եւ զպացական տիպար մըն էր: Ագնուական ծագումով, յունական եւ լատինական բացառիկ զարգացումի տէր, ան հաւատէր մէկն էր. կը սիրէր վայելքները, դինին, արուեստագիտուհիները. թատրոն կ'երթար դաւեչաներ դիտելու, քանի որ կը սիրէր խնդալ: Ինքն իսկ գրած է թատերգութիւններ:

Դժուար է ենթադրել որ այս զարգացած միտքը, բացառիկ ճառախօսը, վարպետ դիւանագէտը, յանկարծ փոխակերպուի արնածարաւ տիպարի մը: Սակայն այդպէս կը վկայեն նախկին պատմագիրները:

Առեղծուածը բոլորովին կը կնճռոտի երբ նկատի առնուի թէ Պետութեան դործերը կարգի դնելու անհրաժեշտ բացառիկ բռնակալութենէն ետք ան լքած է իշխանութիւնը. իշխանութիւն մը, որուն իրմէ առաջ ոչ ոք տիրացած էր, ոչ իսկ կնասրը: Այսպէս, ան Իտալիան ու Հռոմը արիւնով ներկելէ ետք, վերադարձած է իր ուսումնասիրութիւններուն, եւ հաճոյքներուն:

Ան կը ներկայացնէ իսկական դեկավարի

մը նախատիպարը, գինուորականի իր ձիրքով: Իր մասին պատմուած կարգ մը մանրավէպեր կը վկայեն այս մասին: Անոնցմէ մէկն է հետեւեալը. պատերազմի մը ընթացքին իր զօրքը բանակած է թշնամիին՝ Միհրդատի ուժերուն դէմ - յանդիման: Ան ակը է եռապատիկ զօրքի մը ուժեղի պերազանց հեծեալներու: Որպէսզի արգելք ըլլայ իր գինուորներուն կորուստին, ան իրենց ու թշնամիի դիրքերուն միջեւ փորել կուտայ երեք մեթր լայնքով խրամատ մը. սակայն թշնամին յարձակումով մը արգելք կ'ըլլայ այս ծրագրին: Վտանգաւոր կացութիւն մը կը ստեղծուի. խուճապը կը սպառնայ ծաւալիլ զօրքին մէջ ու հակառակորդ բանակը նման առիթ մը պիտի չփախցնէ:

Սիլլա կը խթանէ իր ձին ու առաջքն անցնելով փախչողներու կը դիմէ դէպի թշնամին, գոչելով. «Հռոմէացինե՛ր, ինծի թողէք հոս մեռնելու փառքը. իսկ դուք, եթէ հարցնեն թէ ո՛ւր դաւաճանեցիք ձեր զօրավարին, մի մոռնաք պատասխանելու. «Որքամենո՛ս»: Իրենց զեկավարին այս վճռակամութիւնը Հռոմէացիները կը մղէ չարքերը ամրացնելու. կը դրոհեն ու կը ցրուեն թշնամին: Այս միջադէպը ամէնէն ծանօթներէն մէկն է իր զինուորականի ասպարէզին. բոլորը վրկայած են իր մասին թէ երբեք չէր ընկրկեր վտանգներու առջեւ. այս էր ահա պատճառը, որ բանակին կողմէ այդքան լայն ժողովրդականութիւն կը վայելէր:

Գիտէր զեկավարել իր մարդիկը. միշտ հոգածու անոնց բարօրականին, արդարօրէն կ'որոշէր տրուելիք պատիժն ու վարձատրութիւնը: Կարելի չէ հիացում չունենալ զեկավարի իր կարողութեան, որով կը յաղթէր Ասիա թէ Յունաստան, ճակատիլ աւելի բազմապատիկ բարբարոս ուժերու դէմ, ու միշտ յաղթանակը տանիլ:

Զօրավարի մը բաւական չեն քաջութիւնն ու ժողովրդականութիւնը: Ան պէտք է նաեւ ձեռնհաս ըլլայ. պէտք է գիտնայ փոխարինել թուական աննպաստ կացութիւն մը, զօրքը պատրաստել հոգեբանօրէն ու վախ ազդել թշնամիին: Պէտք է նաեւ կարող ըլլայ արագօրէն վճռելու: Իր գինուորականի կեանքը ցոյց տուած է թէ Սիլլա տէր էր այս բոլոր տուեալներուն, բարձրագոյն աստիճանի մը վրայ:

Իր զեկավարած բանակները չեն սխալած ու գինքը երկու անգամ պսակած են «կայսր» կոչումով:

Հռոմի մէջ կարգ կանոնը հաստատելէ ետք Սիլլա բռնեց արեւելքի ճամբան, ճակատելու համար Միհրդատին հետ. այս միջոցին էր որ Հռոմ դարձեալ բեմ հանդիսացաւ խառնակութեան, մինչեւ իսկ իր հակառակորդները գինքը ժողովուրդի թշնամի հռչակեցին, հալածանքի ենթարկեցին իր բարեկամներն ու մերձաւորները:

Վերջապէս, երբ ան ասիացի իր հակառակորդին յաղթեց, պատգամաւորներ ղրկեց, տեղեակ պահելու համար ժողովուրդը իր յաղթական վերադարձին: Մեծ էր թիւը անոնց որոնք չէին յօժարեր իրեն վերադարձնել նախկին իշխանութիւնը, հարստութիւնն ու արժանաւորութիւնը: Անոնց եւ իր միջեւ բախումները տեւեցին տասնութ ամիս ու աւարտեցաւ 82 տարուան Նոյեմբերին, Հռոմի պարիսպներուն տակ:

Հասկնալու համար թէ ինչպէս նման անձ մը կը դառնայ սարսափի խորհրդանիշ մը, պէտք է նկատի ունենալ ընկերութեան մը խղճահարութիւնը. ընկերութեան մը, որ բռնուած է անգթութեան, վայրագութեան աքցանին մէջ եւ որ կ'ուզէ ինքզինքը արդարացնել, ամբողջ պատասխանատուութիւնը բեռցնելով մէկու մը, զոր ողջունած է որպէս նախախնամական պարգեւ մը: Պէտք է հասկնալ տակաւին թէ վարչաձեւի փոփոխութիւն մը պատճառաբանութեան կը կարօտէր ու այս տեսակէտէն Սիլլայի համար ի նպաստ էր ներկայացում մը թէ՛ որպէս ռահվիրայ, եւ թէ որպէս մէկը որուն պէտք էր խնայել Հռոմը:

Իսկ այսօրուան պատմագիրները այլեւս պէտք չունին Սիլլան դործածելու ժողովրդավարութեան տիպար մը ստեղծելու համար: Ժողովրդավարութիւնը բանական ամուր հիմերու վրայ է Եւրոպայի մէջ ու ժամանակակից պատմութիւնը աւ՛ղ - մեզի կը հայթայթէ բռնապետներու բանականաչափ տիպարներ որպէս զի այսուհետեւ կարելի ըլլայ Սիլլային մասին կարծիքներ փոխանակել, գինքը յանձնելու համար պատմութեան:

Թ. Պ. Մ.

ՁԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ ԼԻՈՆԻ ՄԷՋ

ԼԻՈՆ. - («Յառաջ»). - Կիրակի, Յունուար 12, կէսօրէ ետք Լիոնի ազգային տան սրահին մէջ տեղի ունեցաւ Մանուկներու Օրը: Տարիներու աւանդութիւն դարձած այս օրնախմբութիւնը կազմակերպած էր Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղը: Սրահը լեցուն էր ծայրէ ծայր: Ներկայ էին հոգեւորական դասը, Ազգային Միութեան անդամներ, Կապոյտ Խաչի աշխատանքները դնահատողներ:

Ժամը 16-ին, Նորվան Եպիսկոպոս Զաքարեանի Տէրունական աղօթքով կը բացուէր հանդիսութիւնը: Խօսք առնելով մասնաճիւղին նախագահուհին՝ տիկին Լիւսի Թուլէեան, նախ շնորհաւորեց Նոր տարին եւ Ծնունդը, ապա անդրադարձաւ Կապոյտ Խաչի աշխատանքներուն, յիշեցնելով նաեւ տասնեակ հայ երիտասարդները, որոնք Նոր տարին կ'անցընեն բանտերուն մէջ, յանուն արդար դատի մը: «Հայ մանուկը, - ըսաւ Տիկին Թուլէեան, - որ պիտի կազմէ ապագայ սերունդը, մեզի համար ունի իր յատուկ տեղը եւ մեր հոգածութեան առարկան եղած է միշտ. փաստ՝ օգափոխութեան մեր կայանը, ուր անցեալ Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն ընդունուեցան 311 մանուկներ, որոնցմէ քսանը եկած էին Ամերիկայէն, Լիզպոնէն, Վենեսիկէն եւ Զուիցերիայէն: Աւելին, այս անդամ Կապոյտ Խաչը գեղեցիկ դաղափարը ունեցաւ Լիբանանէն բերելու 13 երախաներ, որպէսզի գոնէ ամիս մը անոնք ապրին ահ ու սարսափէ հեռու»: Տիկին Թուլէեան կարդաց այդ երախաներէն մէկուն չնորհակալութեան նամակը, ուղղուած Կապոյտ Խաչի, յուզելով ներկաները:

Գեղարուեստական բաժինը ճոխ էր ու այլազան: Նախ ցուցադրուեցաւ շարժանկար մը փոքրերուն համար: Խումբ մը պարմանուհիներ տոհմիկ տարազներով ներկայացուցին հայկական ժողովրդական պարեր, քանի մը տասնեակ մանուկներ խմբերգներով, արտասանութիւններով եւ նուագով հաճելի պահեր ստեղծեցին սրահին մէջ:

Դադարին, ներկաները հիւրասիրուեցան Խաչուհիներու կողմէ պատրաստուած կարկանդակներով եւ օշարակով: Խանդավառ մթնոլորտի մէջ եղած նուէրներէ գոյացաւ 6·700 Ֆրանքի դումար մը, ի նպաստ Կապոյտ Խաչի:

Ի վերջոյ կը ժամանէր Կաղանդ պապան եւ կ'ուրախացնէր մանուկները, անոնց բաչխելով խաղալիքներ:

Ցոյժ գնահատելի է Խաչուհիներու աշխատանքը եւ անոնց ցուցաբերած նուիրումը:

ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

×

ՖՈՒԹՊՈԼ

ՇՐՋԱՆԱՑԻՆ ԱԽՈՑԵՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԱՆ

Տարեգլխի դադարէն վերջ, ֆութպոլի շրջանային ախոյեանութիւնները վերսկսան Յունուար 12-ին: Բացառութիւն՝ Ռոն - Ալպ շրջանը՝ ուր, մանաւանդ Ալպեաններու մէջ, Յունուար ամսուն խաղադաշտերը ընդհանրապէս ձիւնածածկ կ'ըլլան: Հոն, Փետրուարին պիտի վերսկսին մրցաշարքերը:

Այսուհանդերձ, Լիոն - Տէսինի Հ. Մ. Ը. Մ.ը՝ որ Ֆրանսայի բաժակախաղերուն իր մասնակցութեանը պատճառաւ, յետաձգուած ախոյեանական հանդիպում մը ունէր, պիտի խաղայ այդ մըրցումը Յունուար 26-ին: Պիտի խաղայ Տէսինի մէջ Կրընոպլի «Նորքափ» խումբին դէմ:

Հ. Մ. Ը. Մ. Լիոն - Տէսին ներկայիս կը գրաւէ պատուոյ ախոյեանութեան դասաւորումին 7-րդ տեղը, մինչ «Նորքափ» երկրորդ է: Տեղին է յիշել նաեւ որ այս ախոյեանութեան առաջնութեան համար պատուոյ յաւակնորդը վալանսի Հայ Մարզականն է՝ որ սկիզբէն ի վեր առաջատարի դիրքն է բռնած, ամուր կերպով կառչած է անոր:

Յունուար 12-ին, Մարսէյլի մեր երկու դլխաւոր խումբերը կը խաղային հակառակորդի դաշտին վրայ: Հ. Մ. Ը. Մ. - Արծիւ յոյս չէր կրնար տածել Քաննի մէջ յաղթելու տեղւոյն արհեստավարժներու ակումբին պահեստի կազմին: Պարտուեցաւ 2 - 0-ով: Սէն - Թ'Անթուան աւելի բախտաւոր, յաղթեց Անտումի, նուազագոյն տարբերութեամբ, ինչ որ կը բաւէր իրեն ամրապնդելու իր տեղը դասաւորումին 8-րդ աստիճանին վրայ:

Միջերկրական լիկին պատուոյ դասակարգի այս ախոյեանութիւնը իրարու դէմ կը հանէ 14 ակումբներ, մինչ ուրիշ լիկերու մէջ, նոյն մակարդակի մրցաշարքերուն համար մասնակիցներու թիւը ընդհանրապէս 12 է: Միջերկրականի եզրին, մրցակցութիւնը քիչ մը աւելի ճիգ կը պահանջէ ուրեմն քան՝ այլուր:

Հ. Մ. Ը. Մ. - Արծիւ - չկրցաւ դէռ բարւոքել իր կացութիւնը կը մնայ դասաւորումին վերջին գծին վրայ: Տակաւին կան սակայն 15 մրցումներ եւ Հ. Մ. Ը. Մ.ի յառաջդիմութիւնը պէտք չէ անկարելի նկատել:

Նոյն կիրակին, Քոթ տ'Ազիւրի ախոյեանութեան ի հաշիւ, Նիսի Հայ Մարզականը պարտուեցաւ Մոնաքոյի մէջ (2 - 1). Ռոնի մէջ, Վիէն հաւասար արդիւնք մը ձեռք բերաւ Ուլէնի հետ (1 - 1), մինչ Լիոն - Տէսինի երկրորդ կազմը լայն յաղթանակ մը (3 - 0) տարաւ Սէնթ Ֆուայի դէմ:

Լիոն - Տէսինի երիտասարդական կազմերը մանաւանդ միեւնոյնները (14 - 15 տարեկան), արդիւնաւոր մրցաշրջան մը բոլորելու վրայ են: Ակումբը, ամէն կիրակի, տարիքի զանազան դասակարգերով, կրնայ դաշտ հանել 12 խումբեր՝ չնորհիւ անձնուիրութեանը նախկին խաղացողներու, վեթերաններու՝ որոնք մարզիչի դեր կը ստանձնեն, կ'ընկերանան խումբերուն, կը հսկեն կարգապահութեան, որպէսզի Հ. Մ. Ը. Մ.ի համբաւը մնայ կարելի եղածին չափ անբիծ:

ՎԱՂԻՆԱԿ ՄԻՍԻՃԵԱՆ

ՀԱՅՑԱՄՏԱՆ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԲԱՑՑ ԻՐԱՒ

ԼՈՒԱՑՔԻ ՊԱՐԱՆԸ ԿԸ ՓՐԿԷ ՊԱՏԱՆԻԻՆ ԿԵԱՆՔԸ

Քաղարանի պղինձի գործատան վարիչներէն մէկուն տղան՝ 16-ամեայ Վահիկ, իր դասընկերոջ հետ բարձրացած է վեց յարկանի շէնքի մը տանիքը, հոնկէ պիտելու համար քաղաքը:

Ու պատահած է անսպասելին: Վահիկ անզգուշաբար սահած է եւ վար ինկած: Երկանիկ դիպուածով մը ան զարնուած է 3րդ յարկի պատշգամին դուրս երկարած լուացքի պարանին. ապա անկման իր ընթացքը կասեցուցած է 2-րդ յարկի լուացքի պարանը, որմէ յաջողելով կախուիլ, պատանին աքրոպաթիք ցատքով մը վայրէջք կատարած է 2-րդ յարկի հարթակին վրայ: Երբ ականատեսներու սարսափահար հայեացքին տակ ոտքի կեցած է, նոր միայն զգացած է, թէ ինչ պատահեցաւ...

Յաջորդ օրը Վահիկ սովորականին պէս ընկերներուն հետ զպրոց գացած է:

×

ՅԱԿՈԲ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ ՄԱՀԸ

«Սովետական Հայաստան» օրաթերթի Յունուար 5-ի թիւէն կ'իմանանք, թէ իր մահկանացուն կնքած է Հայաստանի արհեստակցական միութիւններու չրջանակէն ներս ծանօթ դէմք մը՝ Յակոբ Մկըրտիչի Նալբանդեան: Ծնած էր 1903-ին՝ Ղարաքիլիսա (այժմ Կիրովական): Նախակրթութիւնը ստացած է իր ծննդավայրին մէջ: 1939-ին նուիրուած է արհեստակցական միութենական գործի, նախ եղած է նախակրթարաններու եւ մկրչնակարգ դպրոցներու պաշտօնէութեանց արհեստակցական Միութեան կեդրոնական կոմիտէի նախագահ, ապա՝ չուրջ 32 տարի, նախագահ՝ անտառի, թուղթի և փայտամշակման արդիւնաբերութեան բանուորներու արհեստակցական միութեան: Յակոբ Նալբանդեանի գործունէութեան հետ կապուած է Կիրովականի «Հայկական Արտեկ» ճամբարի, Լենինականի, Սեւանի, Իջեւանի մանկական բուժարաններու կառուցումը:

ՀԱՅՑ ԵՒ ՏԻՐՈՒՀԻ ՍԷՐԷՆԿԻՒԼԵԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայկ եւ Տիրուհի Սէրէնկիւլեան գրական մրցանակի դատակազմը չարունակելով իր գործունէութիւնը այս տարուան մրցանակը տուաւ Պ. Հրանդ Աճէմեանի Սոռպոն ներկայացուցած իր աւարտաճառին, (Ֆրանսերէն լեզուով), որուն նիւթն է «Աշչատուր Աբովեանի կեանքն ու գրականութիւնը», որ գնահատանքով ընդունուած է քննիչ յանձնախումբին կողմէ:

Այս առթիւ ըսենք թէ դատակազմս կարգ մը փոփոխութիւններ մտցուց իր ծրագիրը - կանոնադրին մէջ: Նկատելով որ ուսանողներ երբ աւարտաճառ (թէզ) մը կը ներկայացնեն դժուարութիւններ կը կրեն ներքնապէս իրենց աւարտաճառը ընդունուելէ եաք զայն տպագրել տալու:

Այսուհետեւ Հայկ եւ Տիրուհի Սէրէնկիւլեան մրցանակի դատակազմին կարեւի է ներկայացնել նաեւ աւարտաճառեր. երբ անոնք մրցանակի արժանանան, դատակազմս պիտի ստանձնէ անոնց տպագրութիւնը: Համաձայն դատակազմի ծրագիրը - կանոնադրին՝ մրցանակը կը տրուի հայկական կեանքի եւ գրականութեան հետ առընչութիւն ունեցող արժէքաւոր գործի մը. գրուած հայ կամ օտար հեղինակի մը կողմէ: Նմանապէս ուսանողին աւարտաճառն ալ պէտք է կապ ունենայ հայ կեանքի եւ գրականութեան հետ:

Ինչպէս ուրիշ առթիւ ալ ըսուած է ցարդ դատակազմը հրատարակած է գրական մրցանակի արժանացած հետեւեալ հեղինակներուն գործերը. -

1. - Քարլ Պրէֆինի «Քրիստոս ինքնակալ կամ Առաւծարքային Հայոց Տրդատէս (թարգմ. Երուանդ Տէր - Աղբէկեան):

2. - Ց. Ճ Սիրունիի՝ «Նիքոլոս Եորկսի հետ»:

3. - Յովհաննէս Գազանճեանի «Պատմութիւն հայ գրականութեան»:

4. - Երուանդ Հայրապետեանի «Անմահների երթը»:

5. - Կարապետ Փօլատեանի «Հայ ըմպիւռքը իր դերակատարներով», եւ «Զբոյց Ե. հատոր»:

6. - Կարօ Մեհեանի «Ալեծուփ ջուրեր»:

7. - Լիւք Անտռէ Մարսէլի եւ Կարօ Փօլատեանի՝ «Եղիչէ Զարենցի բանաստեղծութենէն հատընտիրներ» (Ֆրանսերէն):

8. - Վեհափառ Գարեգին Բ. Կաթողիկոսին՝ «Հող, մարդ եւ դիր»:

Դատակազմ՝
ՀԱՅԿ ԵՒ ՏԻՐՈՒՀԻ ՍԷՐԷՆԿԻՒԼԵԱՆ
ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ

Նախագահ՝
ՅՈՎԻԿ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Քարտուղար՝
ՎԱՀԷ ԽԱՉԵՐԵԱՆ

Արտասահմանի մամուլէն կը խնդրուի արտատպել:

ՏԱՏԱՍԱՆՔ

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԱՆՃԱՐԸ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Բովանդակութիւն. - Բացատրական - Կոմիտասի հանճարը - յաւելուած - կրօնական երգեր - մանկական երգեր - քնութեան երգեր - հայրենասիրական երգեր - հերոսական երգեր - երգիծական երգեր - պարեր - հարսանեկան երգեր - սիրոյ երգեր - պանդուխտի երգեր - թատերական երգեր - աշխատանքի երգեր:

630 Second avenue, New-York, NY 10016
U. S. A.

ԼԻՈՆ · -

Տէր եւ Տիկին Եփրեմ Տէմիրճեան եւ զաւակները,
Օր · Շաքէ, Օր · Հռիփսիմէ,
Պ · Կարապետ Տէմիրճեան,
Տէր եւ Տիկին Վարուժան Վարդանեան եւ զաւակները,
Տէր եւ Տիկին Աւետիս Արզարեան եւ զաւակները,
Տէր եւ Տիկին Կարապետ Տէմիրճեան եւ զաւակները (Հալէպ),
Այրի Տիկին Մարի Տէմիրճեան եւ զաւակները (Ամերիկա),
Այրի Տիկին Ագնիւ Տէմիրճեան եւ զաւակները (Հայաստան),
Տէր եւ Տիկին Ղազար Շահպազեան եւ զաւակները (Վալանս),
Այրի Տիկին Դեզձանիկ Քիւրքճեան եւ զաւակները (Քալիֆորնիա),
Այրի Տիկին Հելէն Ֆէսճեան եւ զաւակները (Ամերիկա),
ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր պարագաները յաւուղ կը ծանուցանեն իրենց հօր, մօրեղբօր, քեռայրին, հօրեղբօր, տագրոջ, խնամիին՝

ՍԱՐԳԻՍ ՏԷՄԻՐՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Յունուար 19-ին, 76 տարեկանին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Շաբաթ, Յունուար 22, ժամը 15-ին Լիոնի Ս · Յակոբ Եկեղեցին, եւ մարմինը կը փոխադրուի Քիւրէի նոր գերեզմանատունը։

Մահագդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։

Հ. Բ. Ը. Մ.

Հ · Բ · Ը · ՄԻՈՒԹԻՒՆ – ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Ուրբաթ, Յունուար 24, ժամը 20·30-ին՝
Ալեք Մանուկեան Մշակութային կեդրոնի սրահին մէջ։
118, rue de Courcelles, 75017 PARIS
Նախագահութեամբ՝
ՏՈՔԹ · ԷՏՈՒԱՐ ԱԴԱՄԵԱՆԻ
Ատենապետ
Ֆրանսայի Շրջ · Յանձնաժողովի
Կը խօսի՝
ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍԵԱՆ
«Հերոսական Ոգին Պայքարի Գրականութեան Մէջ»
քննարանով

Համոյնածներ բանաստեղծին «Կորնթոսի Պաշարումը»էն և ձայներիզի վրայ «Սարդանապաղի Տեսիլք»էն, ընկերակցութեամբ՝ Տիկին Անի Զաքարեանի։ Վրոյր Մազմանեան ձայներիզի վրայ կ'ողեկոչէ հեղեն պրազէտ՝ Սիփրիտէան Թրիքուրիսի դամբանականը։

Մուտքը ազատ է։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչէ, Առնուվիլ - Սարսէլի մասնաճիւղի տարեկան մեծ պարահանդէսը՝ Մարտ 22-ին։

Մանրամասնութիւնները յետագային։

ԼԻՈՆ · -

Պ · Գարեգին Հարեքեան,
Պ · Շաւարշ Հարեքեան,
Տէր եւ Տիկին Միշէլ Փիոլա,
Տէր եւ Տիկին Յովհ · Հարեքեան,
Տէր եւ Տիկին Յարութիւն Հարեքեան եւ զաւակները (Թառառ),
Տէր եւ Տիկին Գրիգոր Հարեքեան (Պոլիս),
Տէր եւ Տիկին Վազգէն Զինարլի եւ զաւակը (Փարիզ),
Այրի Տիկին Մարի Թորոսեան եւ զաւակները (Հայաստան),
ցաւով կը ծանուցանեն իրենց կնոջ, մօր, հարսին եւ աղջականին՝

ՏԻԿԻՆ ԱԶԳԱՆՈՑԾ ՀԱՐԵՔԵԱՆԻ
(Ծնեալ՝ Թորոսեան)

մահը, որ պատահեցաւ Յունուար 21-ին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի, Հինգշաբթի, Յունուար 23, ժամը 10·30ին Լիոնի Ս · Յակոբ Եկեղեցին, ուրկէ մարմինը կը փոխադրուի Կիւօթիէրի գերեզմանատունը։

«ԾԱՌԱՋ» · - Մեր գաւակցութիւնները Հարեքեան ընտանիքներուն։

Ս · ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Շաբաթ օր, Յունուար 25, ոտն է Սբրոցն Սարգսի Զօրավարին եւ Որդւոյ Նորին Մարտիրոսին եւ Զօրեքառասն Զինուորացն։

Այս առթիւ, Փարիզի Ս · Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ ժամը 10-ին պատարագ կը մատուցուի։

G. I. A.
GROUPEMENT INTERPROFESSIONNEL ARMENIEN

CONFÉRENCE COCKTAIL

le 24 JANVIER — à 19 heures
Philippe GURDJIAN
un homme de communication

Philippe GURDJIAN, 40 ans, sportif accompli, fondateur du groupe GEMAP : 630 MF de chiffre d'affaires en 1985, 18 agences régionales et 2 à l'étranger. Parmi ses clients BMW, PERNOD - RICARD, LONGINES... Il possède aussi des sociétés parapublicitaires dont NOSCAR spécialisée dans le sponsoring automobile et organisatrice du GP de France de F1 en 1985.
Le GIA se devait de l'inviter. Philippe GURDJIAN président du groupe GEMAP nous présentera : «*l'Importance de la communication dans le futur*» le Vendredi 24 Janvier dans les salons de l'Hôtel GEORGE V à Paris.
Ceux qui sont attentifs aux nouvelles techniques de «management» captivés par ceux qui les appliquent, séduits par une réuissite exemplaire nous retrouveront le 24 Janvier.
Réservation:
GIA: BP 120 - 75763 PARIS CEDEX 16
Tél : 46 - 03 - 52 - 63

ՅԻՇԱՏԱԿԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՍ

Կիրակի օր, Յունուար 26, Բ · Կիրակի Ջկնի Ծննդեան։

Այսօր, յաւարտ պատարագի, մասնաւոր հոգեհանգիստ կը կատարուի Փարիզի Ս · Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ, ի յիշատակ հոգւոյն դուիցերիացի հայասէր հոգեւորական՝

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ
ՓՐԱՖԹ ՊՈՆԱՐԻ

որ Մեծ Եղեռնի հետեւանքով որբացած մեր զաւակները հաւաքեց ու անոնց որպէս հայր՝ պաշտպան, դաստիարակ եւ օգնական եղաւ։

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Այս Ուրբաթ օր, Յունուար 24, ժամը երեկոյեան 8·30-ի եկեղեցիներու Միութեան Աղօթքի Շաբաթուան չարքին մէջ, Սէն Փիէր Տը Շայօ կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, 31 Աւրնիւ Մարսօ, Փարիզ 16-րդ, Միջեկեղեցական Պաշտամունք կը կատարուի, որուն կը մասնակցի նաեւ Փարիզի Ս · Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ երգչախումբը՝ յատուկ Շարականներու կատարողութեամբ։

Communiqué

En attendant le 3ème Festival du Film Arménien en automne 1986, L'ASSOCIATION AUDIOVISUELLE ARMENIENNE envisage de prolonger cette expérience avec *la création d'un CINE - CLUB SCOLAIRE ARMENIEN.*

Du 29 janvier au 11 juin 1986, 6 programmes de film en version originale sous-titrés français précédés d'un court-métrage seront proposés aux jeunes de 8 à 16 ans.

Ces séances seront présentées par un animateur; une conférence - débat sur le Cinéma Arménien est prévue en cours d'année.

Prix des places . 15 frans par séance
Abonnement pour 6 séances : 60 francs.

Ce projet a pu se concrétiser grâce à la participation de l'U.G.A.B. (Comité Régional de France) et de la FONDATION NOURHAN FRINGHIAN, et nous espérons que vous serez nombreux à soutenir cette initiative.

Pour tous renseignements, vous pouvez contacter :
Madame Ayda TANYKIAN (tous les jours jusqu'à midi au 48. 74. 00. 37) ou prendre contact avec l'ASSOCIATION AUDIOVISUELLE ARMENIENNE au 42. 23. 51. 50 tous les jours sauf le samedi, de 14h30 à 18h30.

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

CONCERT A L'OPERA DE MARSEILLE

Samedi 25 Janvier à 20 heures 45

par

SIPAN - KOMITAS
(Chœur mixte Arménien de Paris)

et

l'ORCHESTRE PHILHARMONIQUE DE MARSEILLE


Direction
GARBIS APRIKIAN
avec le concours de
SONIA NIGOGHOSSIAN (Mezzo-Soprano)

« Solistes de Chœur »
Thérèse DEYRMENDJIAN (Alto)
Meguerditch BOGHOSSIAN (Tenor)
René MARTAYAN (Tenor)

Au programme les œuvres de
K. ALEMSHAH, P. GANATCHIAN, G. APRIKIAN, A. TIGRANIAN

Concert organisé par la Croix Bleue des Arméniens de France
— MARSEILLE VILLE —
PERMANENCE
Maison de la Jeunesse et de la Culture Arménienne
12 - 14, rue Saint Bazile — 13001 MARSEILLE
LUNDI - VENDREDI de 17h00 à 19h30 — JEUDI de 15h00 à 19h30
TELEPHONE : 91 50 15 09
Et à partir du 20 Janvier location Opéra de Marseille

MARSEILLE
MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE
12-14, rue Saint Bazile
VENDREDI 24 JANVIER
A 19 HEURES
GERARD CHALIAND
Fondateur du Groupement pour les Droits des Minorités
Ecrivain politique
Professeur à l'ENA
présente
LE SEL DE LA VENGEANCE
de James T. HASHIAN
Ancien haut fonctionnaire auprès du Département d'Etat
Roman rappelant le génocide d'un peuple.
..... *Entrée libre* .....



ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ
MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE DECINES
15, rue du 24 Avril 1915 — 69150 Decines
Salle H. SAMUEL
SAMEDI 25 JANVIER
à 20 heures 30
UNE SOIREE EXCEPTIONNELLE
DIAPORAMA
«L'EPOPEE DES FILS DU SOLEIL»
Réalisation : Alexandre VARBEDIAN
Musique . Aved DERDERIAN
Un retour aux anciennes croyances arméniennes : Est-il vrai que le Dieu - SOLEIL (AREV ou AREK) a donné son nom aux AR - men (Arméniens) ?
RENCONTRE et SIGNATURE
Alexandre VARBEDIAN signera son livre
«ARPIAGAN : SOLARIUS»
un poème épique
dédié à l'esprit combatif du Peuple Arménien.

ՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
կը կազմակերպէ
ՄԵԾԱՐԱՆՑ – ՃԱՇ
ի պատիւ
ԳԷՈՐԳ ՊԱԳԸՐՃԵԱՆԻ
հայբենասիրական գործունէութեան առթիւ
հովանաւորութեամբ երեք յարանուանութեանց
եւ ներկայութեամբ Գալիֆորնիոյ կառավարիչ Պ · ՏԷՕՄՏՃԵԱՆ – ի
ներկայացուցիչ՝ Պ · ՍԷՐԱՑՏԱՐԵԱՆ – ի
Կիրակի, Փետրուար 2, ժամը 14–ին
HOTEL INTERCONTINENTAL
3, rue de Castiglione — Paris 1er
— Գեղարուեստական պատշաճ բաժին —
Տոմսերը ապահովելու համար հեռախօսել ժամը 8–էն 10
42–96–09–82 *թիւին, կամ ճաշի ժամերուն՝* 43–29–54–31 / 46–42–45–25
Թիւերուն, մինչեւ Յունուար 30։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ · ՄԱՋի Վիէնի մասնաճիւղի վարչութիւնը ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները՝ Յունուար 26, Կիրակի, կէսօրէ վերջ ժամը 14·30-ին Մշակոյթի Տուն։ 9 ռիւ տիւ Սիռճ։

Օրա-կարգ · - Տեղեկատուութիւն եւ պատգամաւորի ընտրութիւն։

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
23

JEUDI
23 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.144 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.144

ՊԷՅՐՈՒԹ

ՆՈՐ ՌՃՐԱՓՈՐՁ՝ 30 ՄԵՌԵԱԼ, 132 ՎԻՐԱՒՈՐ

Դեկտեմբերի վերջին օրերուն էր, որ նոր յոյսեր կը ծագէին, առնուազն անոնց համար, որոնք հակառակ տասնէ աւելի տարիներու փորձառութեան, դեռ կ'ուզեն հաւատալ թէ օր մը, իսկապէս, վերջակէտի պիտի յանգի այս անորակելի պատերազմը: Ձորեքշաբթի առաւօտեան մամուլը, Պէյրութի պլխաւոր օրաթերթերը ահաւոր նկարներ կը հրատարակեն՝ սարսափ, զժոխային տեսարաններ: Երեքշաբթի օր, առաւօտեան 11-ի չուրջ է, որ արեւելեան - Պէյրութի մէջ (քրիստոնեայ գոտի) ռեթայէպներու մէկ դրասենեակէն քանի մը մեթր անդին կը պայթէր 250 քիլօ պայթուցիկ կրող Մերսեդէս մը: Բազմամարդ այս թաղամասին մէջ, ահաւոր պատկեր մը պարզուած է, ամէն կողմ աւեր, արիւն, դիակ, վիրաւոր եւ տարածուող հրդեհներ: Ձորեքշաբթի առաւօտ, հաշուեկշիռը ծանր էր՝ 30 մեռեալ եւ 132 վիրաւոր, որոնց մէկ կարեւոր մասը՝ ծանր վիճակի մէջ:

Ոչ ոք տէր եղած էր արարքին, բայց այնքան դժուար չէ գուշակել թէ ո՞վ ղրկած է այս ազգարարութիւնը: Նոյնիսկ եթէ Հոպէյքայի կողմնակիցներն ըլլան բուն գործադրողները, Դամասկոսի մաը չի կրնար բացակայ ըլլալ, թէեւ սուրիական մայրաքաղաքին մէջ չատ չի խօսուիր համաձայնագրին ձախողութեան մասին: Կը կարծուի թէ Սուրիոյ ներկայ ջանքերը կը կայանան կարելիին չափ լայն ճակատ մը կազմել Դամասկոսի Դեկտեմբեր 28-ի համաձայնագրին շուրջ եւ բոլորովին կղզիացնել Ձեմայէլը եւ իր վերջին պինակիցը՝ Ժաժա: Զինուորական գործողութիւն մըն ալ անկարելի չի նկատուիր: Սուրիական զօրքերու համախմբում կայ Տհուր - Շուէյրի շրջանը եւ սուրիական հակազդեցութեան մը կը սպասուի Պիքֆայայի կողմերէն:

Մթնոլորտը կրկին չատ ծանր է եւ ռճրախորհրդներու, թակարդ - կառքերու եւ պինեալ բախումներու սաստկութեան սարսափը տարածուած է:

× Միւս կողմէ Նապլհ Պէրրի յայտարարած է թէ սպանացի երեք պատանդները ազատ կ'արձակուին եթէ Սպանիա ազատ արձակէ այն երկու շիիները, որոնք Մատրիտի բանտն են:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՑԻ մէջ, դեղագրով, պիտի ծախուի ծխախոտիով (նիֆոթին) ծամօն մը, Նիֆոքէ անունով, որու նպատակն է ծխելու փափաքը հետզհետէ կորնդնել տալ մեծ ծխողներուն, որոնց կազմը վարժուած է թոյնին եւ «դերին» են ծխախոտի: Այս ծամօնը, ինչ նիֆոթին կը պարունակէ, բայց ոչ՝ միւս թոյները եւ ուրեմն ծխիկի մը փոխարէն պէտք է ծամօն մը առնել, որպէսզի ժամանակի ընթացքին ծխելու փափաքը մեռնի: Դանդաղօրէն պէտք է ծամել դեղահատը, 30 - 40 վայրկեան եւ ծխելը բոլորովին դադրեցնել: Օրը՝ 20 ծամօնը պէտք չէ անցնել: 96 կրամնոց տուփը 103 ֆրանքի կը ծախուի: Յարդ Ամերիկայի մէջ, 47% է յաջողութեան համեմատութիւնը: Դեղի հանդամանքը չի բաւեր սակայն որ ընկերային ապահովութիւնը վճարէ:

ԼՅՕՆԻ աշտարակը «տեղի տուաւ» ոստիկանութեան առջեւ, երեքշաբթի իրիկուն եւ հեռատեսիլի 5-րդ կայանին (Պերլուաքոնիի կայանին) համար եկած աշխատողները կրցան բարձրանալ, գործի ձեռնարկելու համար: Ծանօթ է, որ աշտարակը Փարիզի քաղաքապետարանին կը պատկանի եւ այս վերջինը ապօրինի գանելով ամէն ինչ, արգելք կը հանդիսանար որ աշտարակը օգտագործուի:

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ
(ԱՐՄԷՆՓՐԷՍ - ՅՈՒՆՈՒԱՐ 14 - 20)

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ԵԶՐԵՐՈՒ ԲԱՌԱՐԱՆ

«Հայաստան» հրատարակչականը լոյս ընծայած է մարմնամարզական եզրերու տեղեկատու բառարան մը, որ կը պարունակէ չուրջ 1400 բառ, որոնք կը վերաբերին մարմնամարզութեան, պարարւեստի եւ երաժշտութեան մարզերուն: Բառերը պլխաւորարար դասաւորուած են ոչ թէ այբբենական, այլ առարկայական կարգով՝ ըստ մարմնամարզական վարժութիւններու դասակարգումին: Բառարանը՝ զոր կազմած է Կարլէն Բաբայեան, սահմանուած է մասնագէտներու, ինչպէս նաեւ ընթերցող լայն շրջանակներու համար:

×

ՍԵՐԳԷՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆԻ ՆՈՐ ՇԱՐԱԿԱՆԿԱՐԸ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ ԳՏԱԾ Է

Սերգէյ Իսրայէլեանի «Ձերմակ անուրջներ» չարժանկարի անդրանիկ ցուցադրութիւնը Երեւանի մէջ մեծ յաջողութիւն արձանագրած է: Բեմադիրը ժապաւէնը պատրաստած է Վահան Թոթովենցի «Ադաներ» պատմուածքի հիման վրայ, ուր կը խօսուի գաւառական փոքր քաղաքի մը դարասկիզբի կեանքի, տարբեր համոզումներու ակր մարդոց մասին: Սերգէյ Իսրայէլեան աւելի քան 30 տարուան փորձառութիւն ունեցող արուեստագէտ է: Տասնեակ մը ժապաւէններու նկարահանման համար պարգեւատրուած է մրցանակներով: Յովհաննէս Թումանեանի նոյնանուն պատմուածքի հիման վրայ նկարահանուած իր «Գիքոր» ժապաւէնը՝ Տարտու (Էստոնիա) տեղի ունեցած չարժանկարի համամիութենական փառատօնին Բ. մրցանակի արժանացած էր:

×

ՍԻՍԻԱՆԻ ՄԷՋ ՆՈՐ ՕԴԱՆԱՒԱԿԱՅԱՆ ՄԸ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ

Սիսիանի մէջ կառուցուած է նոր օդանաւակայան մը: Երեւանէն լեռնային հեռաւոր շրջանի կեդրոնը թռիչք կը կատարեն «Ան - 28» օդանաւները, որոնք ճամբորդները 30 վայրկեանէն (նախկին մէկ ժամուան փոխարէն) կը հասցնեն Սիսիան: Շինարարները հարթեցուցած են 500 հազար խորանարդ մեթր հողային տարածութիւն մը: Ճարտարապետական յատուկ ոճով աչքի կը գարնէ օդանաւակայանի պազալթակերտ եռայարկ չէնքը, ուր տեղ գտած են զանազան սպասարկութիւնները՝ պանդոկ, բուժման կէտ, մօր եւ մանուկի համար սենեակներ եւայլն: Կառուցուած են նաեւ կարգ մը օժանդակ չինութիւններ, այդ կարգին նաեւ 7 քիլոմեթր երկարութեամբ ասֆալթապատ խճուղի մը, որ շրջանը կը կապէ նոր օդանաւակայանին հետ:

×

ՄԻԱՍՆԻԿԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆՈՐ ԳԻՐՔԵՐԸ

Ալեքսանդր Միասնիկեան գրադարանի աւելի քան եօթը միլիոնոց գիրքերու պահեստը ճոխացած է արտասահմանէն ըստացուած նոր հրատարակութիւններով: Միացեալ - Նահանգներու, Արեւմտեան - Գերմանիոյ, Անգլիոյ, Իրանի, Եգիպտոսի եւ կարգ մը այլ երկիրներու զանազան կազմակերպութիւններէ եւ անհատներէ ստացուած են չուրջ երեք հարիւր արժէքաւոր գիրքեր, որոնց կարգին՝ Բաֆֆիի «Խենթը» վէպի 1913-ին Պոլիս կատարուած հրատարակութիւնը: Ստացուած է Ց. Զաքմաքճեանի «Ընդարձակ պատմութիւն Հայոց» ստուար աշխատութիւնը, լոյս տեսած 1917-ին՝ Պոսթըն: Օտար դրականութենէն ստացուած գիրքերու շարքին է Օքսֆորտի համալսարանի հրատարակչականէն լոյս տեսած Ուիքըզըրի ուսումնասիրութիւնը Եոհան Սեբաստիան Բախի քանթաթներու մասին: Ստացուած հրատարակութիւններու ցանկը կ'ամբողջացնեն բազմաթիւ ամսագրեր, կերպարուեստի եւ քարէօգրական նիւթեր, դասագիրքեր: Գրադարանը ներկայիս գիրքի փոխանակութիւններ կը կատարէ 34 երկիրներու 85 կազմակերպութիւններու հետ: Արդիւնաւէտ են կապերը Միացեալ - Նահանգներու, Անգլիոյ, Արեւմտեան - Գերմանիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ, Եգիպտոսի, Սուրիոյ, Յորդանանի, Լեհաստանի, Չեխոսլովաքիոյ, Հունգարիոյ, Ռումանիոյ, Պուլկարիոյ, Արեւելեան - Գերմանիոյ, Վիէթնամի, Մոնկոլիոյ, Քուպայի եւ այլ երկիրներու գրադարաններու, համալսարաններու, հրատարակչականներու, դրախանութներու, հայագիտական կեդրոններու եւ անհատներու հետ:

×

ՊԱՐՈՂ ԾԱՌ

Խանլարի (Ադրբեջան) շրջանի Քոլայիր գիւղին ծայրը դանուող հսկայ սօսիի բունը չեն կրնար ընդգրկել վեց հոգի: Այդ ճիւղաւորած ծառին տակ, որ աւելի քան 1500 տարեկան է, կրնան անձրեւէ եւ արեւու կիզիչ ճառագայթներէն պատսպարուիլ 200 հոգի: Ներկայիս հսկայ սօսին բնութեան յուշարձան յայտարարուած է: 1500-ամեայ դեղեցիկ սօսին կոչած են «պարող ծառ»: Անոր ճիւղերը տարիներու ընթացքին այնպէս միահիւսուած են, որ հեռուէն կը թուի, թէ հսկայ ծառը կը պարէ: Հսկայական հովանոցի պէս կանգնած է ծառը այն արահետի մօտ, ուրկէ միջին դարերուն քարաւանները երթուղիները անցած են: Սօսին հինէն ի վեր իբր հովանի ծառայած է ճամբորդներու համար աղբիւրին մօտ, որոնք հանդստանալու համար խօսքի ու զրոյցի կը բռնուէին: Ներկայիս ալ հոն պտնուող թէյարանը հանդիպումներու սիրուած վայր մը դարձած է: Իսկ հսկայ սօսիի ստորոտին ընդարձակ տարածութեան վրայ տեղի կ'ունենան բերքի, երգի եւ աշխատանքի տօնախմբութիւններ:

ՄԱՐԶԱԿԱՆ

«ԿՈՏԱՅՔ» ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ 49-ՐԴ ԱԽՈՅԵՆՈՒԹԵԱՆ Ա· ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ

Աբովեան քաղաքի «Կոտայք» խումբի մարզիկները Դեկտեմբերի վերջերը զացած էին Զորաղբիւր, մարզուելու եւ ֆիզիքապէս պատրաստուելու համար խորհրդային յառաջիկայ ախոյեանութեան Ա· դասակարգի խումբերու մրցաշարքին: Մարզիկները օրը երկու անգամ հետեւած են բազմարնոյթ վարժութիւններու, մարզանքի, որոնց ընթացքին գլխաւոր մարզիչ Արկադի Անդրէասեանի օգնած է ծանօթ մարզիկ Նազար Պետրոսեան:

«Կոտայք»ի տղաքը մինչեւ Յունուարի վերջը կը մնան Զորաղբիւր եւ ապա կը մեկնին Ագլէր՝ Սեւ ծովու ափին, բացօթեայ մարզումներու համար: Հոս աւելի ուշադրութիւն կը դարձուի փութպոլի, թաքթիքի տարբերակներու մշակման: Քննական խաղերու ընթացքին է, որ կը պարզուի «Կոտայք»ի հիմնական կազմը:

Հարկ է նշել, որ «Կոտայք»ի կազմը մեծ մասամբ պահպանուած է, եթէ նկատի չառնենք այն՝ որ որակազրկուած Ա· Փարսադանեան եւ Գ· Եղիազարեան, հեռացուած են խումբէն: Ցիշենք որ այս որակազրկումը հետեւանքն է «Կոտայք» - «Կոլոս» հանդիպումին, որ տեղի ունեցած էր անցեալ տարի՝ Նոյեմբեր 5-ին: Երկրորդ կիսախաղին, «Կոլոս»ի մարզիկներէն մին վնասուելով, խաղը դադրած էր· «Կոտայք»ի խումբ մը մարզիկներ դիմած էին իրաւարարին, որպէսզի կեցնէ ժամացոյցը: Գլխաւոր մարզիչը՝ Ֆելիքս Վերանեան, ձայնակցած էր իր տղոց: Ա· Փարսադանեան վիրաւորական արտայայտութիւն ունեցած էր իրաւարարին հանդէպ, որ զինք հեռացուցած էր դաշտէն· Գ· Եղիազարեան սպառնացած էր իրաւարարին՝ «հաշիւը մաքրել»: Հարցը քննուած էր Հայաստանի մարզական կոմիտէի Նոյեմբեր 28-ի նիստին եւ որոշուած որակազրկել Ա· Փարսադանեանը եւ Գ· Եղիազարեանը, որոնց արգիլուած է վարպետներու խումբերէն հանդէս գալ: Խումբին գլխաւոր մարզիչը եւս՝ Ֆելիքս Վերանեան, կը հեռացուէր իր պաշտօնէն եւ «Կոտայք»ի գլուխը կ'անցնէր Արկադի Անդրէասեան:

«Կոտայք»ի կազմը ամբողջացած է նոր մարզիկներով: Այսպէս, «Արարատ»էն վերադարձած է միջնապահ Գագիկ Յովհաննիսեան, Հոկտեմբերեանի «Սպարտակ»էն հրաւիրուած են բեռդապահ Արմէն Աւագեան, յետսապահ Սամուէլ Դերձեան, միջնապահներ Մարտիրոս Խաչատրեան, Էրիկ Յովսէփեան, Արմէն Աւետեան, յառաջապահներ Ռաֆայէլ Յակոբեան եւ Բագրատ Սաֆարեան: Իրենց զինուրական ծառայութիւնը աւարտած են միջնապահներ Սամուէլ Նիկոլեան եւ Հրաչիկ Պօղոսեան, որոնք մաս կը կազմեն «Կոտայք»ի:

Խօսելով «Կոտայք»ի մնայուն կազմին մասին, գլխաւոր մարզիչը՝ Արկադի Անդրէասեան, ըսած է· - «Կոտայք»ի կազմում հաստատուն տեղ ունենալու համար թեկնածու ֆութպոլիստների միջեւ օգտակար մրցակցութիւն է դնալու, իսկ մենք նախապատուութիւնը կը տանք աւելի կարգապահ, իրօք ուժեղ, արժանի խաղացողների, որոնք ունակ կը լինեն յաջողութեամբ տանելու տեւական մրցակցութեան ամբողջ ծանրութիւնը»:

«Կոտայք» Մարտի կէսերուն կը սկսի խորհրդային 49-րդ ախոյեանութեան մրցաշարքը: Կը յուսանք, որ չնորհիւ լաւ պատրաստութեան եւ խումբին մէջ տիրող համերաշխ մթնոլորտին, ան կ'արձանագրէ յաջողութիւններ:

ՀՐԱՆԴ ԱՃԷՄԵԱՆ

ՀԱՅՑ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՐԱԽՏԱԽՈՐՆԵՐԸ

ՈՎ ԷՐ ՄԻՔԱՅԷԼ ՄԻԱՆՍԱՐԵԱՆՑԸ

(Բ. եւ վերջին մաս)

Իր մանկավարժական ծրագրի համակարգում նա կարեւոր տեղ էր յատկացնում աղջիկների կրթութեանն ու դաստիարակութեանը: «Քնար հայկական»ի վերջաբանութիւնը, որ Մխիթարեանցի մանկավարժական ծրագիրն է, սկսում է կանանց դերի գնահատմամբ: Կրթական ասպարէզում նա կանանց եւ տղամարդկանց լիակատար իրաւահաւասարութեան հարցն է առաջադրում, գրելով. «Կանայք այն պատճառով էլ ունին միեւնոյն սըրբազան եւ անհերքելի իրաւունքը՝ ստանալ այնքան դաստիարակութիւն, որքան առանում են տղայքը, որ կանայքը միեւնոյն մեզ պէս մարդիկ են՝ մենք տղամարդիկ, նոքա կին մարդիկ»: Ապա՝ Մխիթարեանցը խորաթափանցօրէն գըրում էր, որ մի ժողովրդի բարոյական վերելքի կամ անկման գործում կանանց դերը վճռական է: «Երբ կին մարդը ընդունեց, սեփականացրեց իւրեան մի գաղափար, իմէա, այդ գաղափարը միրա-պետում է բոլոր նորա կազմուածքը եւ միաքը, նա անդադար հետամուտ է լինում, պնդում այդ գաղափարի մտածմունքի եաին, նա հանգստութիւն չէ տալիս ոչ ոքի՝ ոչ էրիկին, ոչ զաւակներին, ոչ ծանօթներին, չէ լսում ոչինչ բանաւոր, իրաւացի խորհրդի, տանում է ամենայն վիշտ եւ զրկանք, մինչեւ տանջանք եւս եւ վերջը յաղթում է, հասնում է իր նպատակին ... Պիտոյ է օգուտ քաղել եւ ազգի օգտի համար գործածել այն հզօր, հոգեւոր զօրութիւնը, որ պարունակում է իւր մէջ կանանց սեռը»: Ուստի նա առաջարկում է. «Աչքատենք պատրաստել որքան կարելի է բարի, կրթուած եւ ազգասէր մայրեր, որ ունենանք բարի, կրթուած, ազգասէր զաւակներ»:

Ներկայացնելով աղջիկների հայկական դպրոցներ հիմնելու եւ նրանց ազգային լեզուով կրթելու իր առաջարկները, Մխիթարեանցը նաեւ հեռատեսօրէն չէր տում էր. «Զի մոռանանք միշտ եւ հանապազ, անդադար ի մտի ունենանք, որ եթէ հայազգի կանայքը մեր օգտին օտար ուղղութիւն տանան, այն ժամանակ մեր սեփական տանը օտար ուղղութիւն տացած աղջկունք եւ կանայք կը դառնան ցեցեր, որոնք օրէց օր կը քանդեն մեր ազգութեան հիմունքը»:

Հայ երեխաների կրթութեան ու դաստիարակութեան գործում Մխիթարեանցը չափազանց կարեւոր էր համարում հայ երգի դերը: Նա տարիների ընթացքում հսկայական աշխատանք է կատարել՝ հաւաքելով տարբեր վայրերում, տարբեր ժամանակ ստեղծուած հայերէն երգերը եւ կազմել հայ երգերի այն ժամանակներում առաջին ամենաարժէքաւոր ժողովածուն՝ յայտնի «Քնար հայկական»ը, եւ ինքն էլ այն հրատարակել է 1868-ին: Երգը նա համարում էր վեհ զգացմունքներ արթնացնող եւ բարոյական ու ազգային դաստիարակութեան անփոխարինելի միջոց: Ապա ահմանելով հայ երգը՝ Մխիթարեանցը ամենէականն էր համարում երգի հայերէն խօսքը, առանց որի, նրա կարծիքով, չկայ հայ երգ: Նա գրում էր. «բոլոր այս վեհ եւ սրտաչարժ զգացմունքները հասունանում են կատարեալ աստիճանի, երբ որ այդպիսի պատուական ձայնով եւ կանոնաւոր կերպով երգած երգը մեր ազգային, մեր պատուական լեզուով ասած եւ գրած երգն է»: Նա համոզուած էր, որ երեխայի մայրենի լեզուով երգային դաստիարակութիւնը պէտք է սկսուի օրօրոցից:

Մխիթարեանցը չատ է գրել նաեւ այն միջոցների մասին, որոնք պէտք է դէպի հայացում վերադարձնեն այլախօս հայ ընտանիքներին: Այդպիսի ընտանիքները վերջնական ուծացումից փրկելու վերաբերեալ նա մի շարք ուշագրաւ դատողութիւններ է արել: Օրինակ, առաջարկում էր տանը, սենեակների պատերին հայերէն բառեր կրող ցուցանակներ փակցնել: Դա այլախօսներին պիտի օգնէր Հայոց լեզուին ընտելանալուն: Ապա առաջարկում էր նաեւ այդպիսի ընտանիքների անդամներին ջանալ տանը առօրեայ խօսակցութիւնները վարել հայերէն: Նա գրում էր. «Եթէ այսպէս ամենայն Հայ իւրեան համար կանոն դարձնէ վերոյիշեալ կամ այլ կերպ այնքան ուսանիլ իւր լեզուն, որ իւր տանը, ծնողաց, կնոջ, զաւակների, ազգականաց եւ ամենայն հայ լեզու պիտացողի հետ միշտ պարզ հայերէն խօսի, օտար բառերը չգործածելով, այն ժամանակ նորա զաւակները կամայ - ակամայ կը պիտենան հայերէնը, իւրեանց բնութիւնը կը դարձնեն հայերէն խօսիլը եւ կը սիրեն հայ լեզուն»:

Մխիթարեանցի ուշադրութիւնից չէն վրիպել նաեւ այլազգիների հետ ամուսնացած Հայերը. այդպիսիներին նա առաջարկում էր իրենց երեխաների հետ սկզբից եւեթ հայերէն խօսել, նրանց համար օրօրոցից սկսած հայերէն երգեր երգել, «այդպիսի դիպուածում, - գրում էր նա, - անկարելի է, թէ երեխայն եւ նայնիսկ մայրը եւ օտար դայեակը չսովորին հայերէն»:

Իր ծրագրի երրորդ մասի իրականացմանը նպաստ բերելու համար Մխիթարեանցը մի շարք էական ձեռնարկումներ է անում: Նա յօդուածներ է գրում հայ դրքի եւ մամուլի հրատարակումն ամբողջ աշխարհում նպատակասլաց դարձնելու վերաբերեալ: Պետերբուրգում հիմնում է իր հրատարակչութիւնը եւ լոյս ընծայում մի շարք հայերէն դրքեր (1867 - 1872 թթ.): Ապա՝ հայկական դպրոցների համար տարբեր առարկաների դասագրքեր ստեղծելու եւ տպագրելու վերաբերեալ Մխիթարեանցը ընդարձակ առաջարկներ է մշակում ու հրապարակում «Հիւսիսափայլ»ի էջերում (1861, Օգոստոս): Գրում է եւրոպացի նշանաւոր մի շարք գիտնականների, խմբագիրների, մանկավարժների երկերը հայերէն հրատարակելու անհրաժեշտութեան մասին:

Սակայն հայերէն արժէքաւոր դրքեր հրատարակելը, ըստ Մխիթարեանցի, գործի սկիզբն է, առաւել կարեւորը հրատարակուածները աշխարհի տարբեր մասերում ապրող Հայերին հասցնելն է, այդ գրականութեան վերաբերեալ մանրամասն եւ սպառիչ տեղեկատուութիւն հրապարակելը: Նրա կարծիքով, նոր հրատարակուած հայերէն դրքերի վերաբերեալ կարեւոր է պարբերաբար տեղեկութիւններ հրապարակելը եւ գրավաճառութեան միջոցով դրքերը հասցնել տարբեր վայրեր ըստ պահանջի: Ապա՝ անհրաժեշտ է համարում անցեալում հրատարակուած հայերէն գրականութեան մի ընդհանուր ցուցակ ստեղծելը:

Այդպէս, Մխիթարեանցը հայ գիրքն ընթերցողին հասցնելու ուղիներ որոնելիս՝ յանգում է հայերէն տպագիր դրքերի եւ մամուլի ամբողջական մատենագիտութիւն կազմելու գաղափարին եւ իրեն յատուկ մեծ եռանդով լծւում է այդ գործին: Իր ձեռքի տակ, իրեն մատչելի գրքատարաններում եղած գրքերի եւ բազմաթիւ վայրերից ստացած տեղեկութիւնների օգնութեամբ տարիների ոգնչան աշխատանքով նա ստեղծում է այդ մատենագիտութիւնը: Աշխատութիւնը ընտացւում է չատ մեծածաւալ: Մխիթարեանցը չէր կարող հոգալ հրատարակման ծախսերը:

Այդ ժամանակ Ռուսաստանում կազմըւում էին կայսրութեան տարբեր երկրամասերին նուիրուած երկրագիտական մատենագիտութիւններ: Շուտով Կովկասի մատենագիտութեան կազմումը Ռուսաստանի ռազմագիտական կոմիտէն յանձնարարեց Մխիթարեանցին:

Աշխատութիւնը պէտք է տպուէր Պետութեան հաշուին: Այս առիթն օգտագործելով՝ Մխիթարեանցը հայ տպագիր դրքի իր կազմած մատենագիտութիւնը դարձնում է կազմուող Կովկասի մատենագիտութեան հիմնական մասը: Աշխատութիւնը լրացնելով Կովկասի այլ ժողովուրդներին վերաբերող գրականութեամբ՝ առաջին ծաւալուն հատորը (804 էջ) լոյս է ընծայում Պետերբուրգում 1874 - 76 թթ. ընթացքում՝ «Կովկասի եւ Անդրկովկասի մատենագիտութիւն» վերնագրով: Հատորը հրատարակուել էր 1876-ին Պետերբուրգում դամարուելիք արեւելագիտական գիտաժողովի առիթով:

Այս մատենագիտութիւնն ընդգրկում է Կովկասի տարբեր ժողովուրդների վերաբերեալ եղած բոլոր լեզուներով գրքերը, յօդուածները: Նիւթերի գլխի մասը մանրամասն ծանօթագրուած են հեղինակի կողմից:

Առաջաբանում Մխիթարեանցը գրում է, որ իր կազմած մատենագիտութեան կարեւոր նպատակներից մէկն այն է, որ մարդիկ ճիշդ տեղեկութիւններ ստանան Կովկասի ժողովուրդների վերաբերեալ, եւ վերջ արուի այդ ժողովուրդների մասին տարածուող սուտ ու սխալ լուրերին:

Մատենագիտութեան հիմնական մասը հայալեզու գրականութիւնն է (ներկայացուած է բնագրի լեզուով). ընդգրկուած են հայ պատմիչների երկերի հրատարակութիւնները, հայագիտական բազմաթիւ ուսումնասիրութիւններ եւայլն: Միխիթարեանցը 30 տպագիր էջում ռուսերէն ներկայացրել է նաեւ Հայոց պատմութիւնը՝ ցոյց տալով հայ ժողովրդի քնիկ լինելը Հայկական լեռնաշխարհում, ծանօթութիւն տալով հայկական հին պետութիւնների մասին եւայլն: Այդ կերպ նա ներկայացրել է նաեւ Վրաց պատմութիւնը: Զգացւում է, որ Մխիթարեանցը նպատակ է դրած եղել ցոյց տալու, որ այդ դարաւոր հարեւան ժողովուրդները ունեցել են հարուստ պատմութիւն եւ մշակոյթ:

Երկրորդ հատորը դրեթէ ամբողջութեամբ պէտք է ընդգրկէր հայ տպագիր գրքը, եւ նրա մի մասն արդէն տպագրուել էր: Բայց 1880 թ. Ապրիլի 5-ին վրայ հասած մահը անաւարտ թողեց այդ հատորի հրատարակումը, ինչպէս եւ անհնար դարձրեց առանձին գրքով «Հայկական մատենագիտութեան» հրատարակման գործը ու առհասարակ Մխիթարեանցի ունեցած ծրագրերի իրականացումը:

Ռուսերէն, Ֆրանսերէն չատ գրախօսութիւններ հրապարակուեցին «Կովկասի եւ Անդրկովկասի մատենագիտութեան» վերաբերեալ: Բոլորը ամենաբարձր գնահատականն էին տալիս Մխիթարեանցի գործին: Հայ իրականութեան մէջ, ցաւօք, միանդամից չէ, որ հասկացուեց այդ աշխատութեան, ինչպէս եւ Մխիթարեանցի ամբողջ գործունէութեան մեծ արժէքը: Թէեւ առանձին հասկացողներ կային: Այսպէս. Մխիթարեանցի մահուան առթիւ Ստ. Մալխասեանցը գրեց. «Մխքայէլ Մխիթարեանց այն հազուագիւտ անձերից էր, որոնց մէջ գաղափարական բարի առաքինութիւնները անկորուստ միանում են, առանց մէկ - մէկի ոչնչացնելու: Նա իւր մանկութեան հասակից մինչեւ իր վերջին շունչը ազատ հոգի եւ ազատ հայեացք ունէր. նա վերին աստիճանի մարդասէր համաչխարհաքաղաքացի էր, նորա առաքինութիւնից օգտւում էին անխտիր կարօտեալք, բայց օր չէր անցնում, որ նա իւր սիրելի ազգին վերայ չմտածէր»:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

«ՀԱԻԱՏԱԼ Կ'ՈՒԶԵՄ»

Երկար տարիներէ ի վեր կը ճանչնայի այդ բարեկամս եւ չատ կը սիրէի զինքը: Եթէ տեսնէի խմբագրատունէն ներս մըտնելը, ուրախութեամբ կը ցատքէի: Հաճոյք կ'առնէի հետը խօսելէ, զինքը մտիկ ընելէ: Զինքը կը սիրէի, որովհետեւ ամէնէն առաջ կը հաւնէի իր նկարագրին: Բարի ու ազնիւ մարդ էր, քանիցս փաստուած էր առիկա: Ամուր կեցուածքով, սեղրունքի տէր, անկաշառ, մանաւանդ մարդասէր:

Օր մը այնպէս պատահեցաւ որ իմ այդ բարեկամին մասին անխառն հիացումով խօսիմ մէկու մը հետ, որ չատ կուզայ համբաւատուն: Խօսակիցս անտարբեր ու պաղ նայուածքով մտիկ ըրաւ զիս եւ ի վերջոյ ուսերը թօթուեց:

- Ձէկ այդ մարդը, ըսաւ, աննկարագիր է, քանի հոգիի մուխը մարեց:

Այդ պահուն կարծեցի որ մէկը սիրտս երկուքի բաժնեց: Ահաւոր ցաւ մը զգացի: Լռեցի, բան մը չկրցայ ըսել:

Ցաւս կուգար ո՛չ թէ անկէ, թէ հաւատաքս կը ցնցուէր հանդէպ բարեկամիս մը, որուն վրայ մեծ համարում ունէի: Ո՛չ: Հաւատաքս չէր ցնցուած, որովհետեւ չատ լաւ կը ճանչնայի զինքը եւ գիտէի որ ան պահուն անոր հոգեկին չարախօսողը չատեւելի աննկարագիր մէկն էր, քան թէ այն որուն մասին կը չարախօսէր: Ցաւս կուգար անկէ, որ իմ անխարդախ վստահութեանս մէջ մէկը կը փորձէր կասեցնել թոյնի կաթիլ մը, որ այդ օրէն վերջ միշտ պիտի մնար բարեկամիս հանդէպ ունեցած վստահութեանս մէկ անկիւնը:

Այդ օրէն վերջ տարիներ անցան եւ այդ տարիներու ընթացքին բարեկամս երբեք չըրաւ չարժում մը, որ արդարացնէր իր հոգեկին չարախօսած մարդուն պնդումը: Բայց, ի՞նչ մեղք, երբեք ալ չկրցայ մոռնալ այն չարաչուք նախադասութիւնը, որ սիրտս երկուքի բաժնած էր.

- Ձէկ այդ մարդը, աննկարագիր է ան:

×

Կաղանդէն քանի մը օր առաջ ծանօթ, ներկս չնորհալի փոքրիկ մը, ինքնիրեն խօսելու պէս բնական ու պարզամիտ, ասպէս կ'ըսէր իր մօրաքրոջ.

- Գիտե՞ս մօրաք, առաջին դասարանի էի, երբ ուսուցիչս ինծի ըսաւ որ Կաղանդ Պապան ատա է, այդպիսի մէկը գոյութիւն չունի: Երբ՞ւէն թէ ըսած չըլլալու գնով իսկ, հաւատալ կ'ուզենք: Առանց հաւատալու, առանց մեր նմանները հանդէպ վստահութիւն ունենալու, կրնա՞ք հաճոյք առնել այս կեանքէն: Մեղք որ մէյ մը պիտի պտնուին չարամիտներ, որոնք թոյնի քանի մը կաթիլ պիտի կաթեցնեն մեր բոլոր հաւատքներուն մէջ: Եւ ոչ ոք պիտի կարենայ անհետացնել թոյնի այդ կաթիլը:

×

Ուսուցիչ մը իրաւունք ունի՞ առաջին դասարանի աղուն ըսելու որ Կաղանդ Պապան ատա է, զեղծարար մըն է, տղաքը խաբելու համար ստեղծուած խաղ մըն է: Եթէ ան ունենար այդ իրաւունքը, մարդկութիւնը չէր ստեղծեր Կաղանդ Պապան: Կաղանդ Պապան միայն տգէտներուն ու անհաւատներուն, մարդատեացներուն ու չարերուն կարծիքով ատա է: Որովհետեւ իրականութեան մէջ Կաղանդ Պապան կայ ու գոյութիւն ունի բոլորին համար, միայն չեւ իսկ չափահասներուն ու նոյնիսկ ծերունիներուն համար: Ան այն բարի ու ազնիւ մարդն է, որ կ'երջանկանայ բարիքներ բաշխելով իր չուրջ: Եւ ո՞վ կըրնայ ըսել որ գոյութիւն չունի այդ բարի մարդը: Այդ բարի մարդը մեր կարծածէն ալ աւելի չօշափելի գոյութիւն մըն է, մեր կարծածէն ալ աւելի յաճախ իր ձեռքը կը դնէ մեր ըլլուն վրայ եւ կ'օրհնէ մեզ իր տեսանելի ու անտեսանելի նուէրներով: Ան է որ մեր սիրտը կը լեցնէ սիրով ու խաղաղութեամբ, ան է որ մեր ներաշխարհը կը զօրացնէ ազնիւ հաւատքով ու լաւին հանդէպ վստահութիւն ունենալու կամքով:

×

Հաւատալ կ'ուզենք, ինչպէս կաղանդ Պապային հաւատալ կ'ուզէր մեր փոքրիկ ու իրատես աղջնակը: Երբեմն յուսախաբ ըլլալու գնով իսկ, հաւատալ կ'ուզենք: Առանց հաւատալու, առանց մեր նմաններուն հանդէպ վստահութիւն ունենալու, կրնա՞ք հաճոյք առնել այս կեանքէն: Մեղք որ միշտ պիտի պտնուին չարամիտներ, որոնք թոյնի քանի մը կաթիլ պիտի կաթեցնեն մեր բոլոր հաւատքներուն մէջ: Եւ ոչ ոք պիտի կարենայ անհետացնել թոյնի այդ կաթիլը:

Բ. Չ.

ՃԱՇ
Ի ՊԱՏԻՒ ԳԻՒՏ ԵՊԻՍԿ.Ի

- ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ -

Ջորեքշաբթի, Յունուար 15-ին, Փարիզի Սէրբլը էնթէռնալիէի մէջ հաւաքուած էին հարիւրէ քիչ մը աւելի «առանձնաշնորհեալներ», մասնակցելու համար այն ճաշին որ կը տրուէր ի պատիւ Գիւտ Եպիսկոպոսի, իր քահանայութեան երեսնամեակին առթիւ: «Առանձնաշնորհեալ» ըսինք, վասնզի, բացի պաշտօնական քանի մը հիւրերէ, հարկ էր բարեկամական կամ խնամիական յարաբերութիւններ ունենալ կազմակերպիչներուն հետ, տեղեակ ըլլալու համար թէ նման հաւաքոյթ մը կար: Չհասկցանք թէ ինչո՞ւ Փարիզի Հայոց առաջնորդին ի պատիւ ձեռնարկ մը ան fաթխմիճի պիտի ըլլար: Գաղտնիք Փարիզու ... Հայոց Եկեղեցւոյ:

×

Այս ճաշը, իր բարձր ներկայութեամբ կը պատուէր Փարիզի Արքեպիսկոպոսը՝ կարդինալ Լիւսթիժէ: Հիւրերու կարգին յիշենք՝ Ֆրանսայի հայ կաթողիկէ էկզարք Գրիգոր Եպիսկ. Կապրոյեան, Աւետարանական եկեղեցւոյ պետ՝ վերապատուելի Էմոնեան, յոյն - օրթոտոքս եկեղեցիին՝ դերպ. Ժերէմի, փարիզեան շրջանի հայկական եկեղեցւոյ հոգեւոր հովիւները, ինչպէս նաեւ Անթոնիի, Շաւիլի, Իսիի եւ Անտուվիլի քաղաքապետները: Հաւաքոյթը կը վարէր Գեղամ Թորոսեան, որ ճաշի սկիզբին խօսքը տուաւ Եկեղեցւոյ վարչութեան նախագահին՝ Սուրէն Գործունեանի:

Պ. Ս. Գործունեան ընորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք եկած են յարգելու եւ ոգեւորելու Գիւտ Եպիսկ.ի քահանայութեան 30-ամեակը, ապա հոգեւոր հովիւի մը թողլով անոր կեանքին անդրադառնալու պարտականութիւնը, մաղթանքներով վերջացուց իր քանի մը խօսքերը՝ ուժ եւ կարողութիւն Գիւտ Եպիսկոպոսի չարունակելու համար իր պաշտօնը:

Ճաշի աւարտին Ներսէհ Ծ. վրդ. Բապուեան ողջունեց օրուան յորելեարին կրօնական կենսագրութիւնը, այն օրէն երբ Անթիլիասի դպրեվանքը, 1948 Հոկտեմբերին կը հանդիպէր՝ Ծովհաննէս Նազդաչեանի, բարեպաշտ ընտանիքի մը զաւակ, մեծցած Հալէպ: Գիւտ Եպիսկոպոսի մօտ, իր ուշադրութիւնը գրաւած են գլխաւորաբար 3 բաներ՝ ծառայասիրութիւնը, եկեղեցասիրութիւնը եւ քաջ արարած մը ըլլալու հանգամանքը: Կը յիշէր թէ ան քահանայ կը ձեռնադրուէր 1955 Նոյեմբերին, Փարիզ կը ժամանէր 1960-ին, եպիսկոպոս կը ձեռնադրուէր 1973 Հոկտեմբերին եւ կ'եզրակացնէր իր խօսքը փարիզեան շրջանի հոգեւոր դասուն մաղթանքները ներկայացնելով:

Մէթր Արմէն Բարսեղեան ճառէ աւելի վկայութիւն մը կ'ուզէր բերել, որպէս հինգերէն մէկը եկեղեցւոյ կրօնական ընկերակցութեան, երբ փարիզ կը ժամանէր երիտասարդ հոգեւորական մը եւ որու կրակոտ նայուածքին մէջ՝ կը տեսնէր թէ ան՝ մէկն է որ իր դերը պիտի խաղայ: Շուտով արդէն, աշխատելով Սերովբէ Աբգ.ի կողքին, կը գառնար անոր հոգեւոր զաւակը: Ապա, Արմէն Բարսեղեան, կը բացատրէր Հայաստանեայց Եկեղեցւոյ ժողովրդավար կառոյցը, ուր կարեւոր դեր կը խաղան աշխարհականները:

Վերապատուելի Էմոնեան, հատատութ - լով էֆիւմէնիէ շրջապատը, ուր կը գտնուէր, կը յայտնէր թէ հարկ եղածին չափ ծանօթ չէր Գիւտ Եպիսկոպոսի գործունէութեան կարենալ արտայայտուելու համար անոր արդիւնքներուն մասին, բայց կ'աւելցնէր թէ Գիւտ Եպիսկոպոս շատ բան կը ներկայացնէր իրեն համար, թէ Հայերը շատ բան կ'ակնկալեն իրմէ:

Ներկայացնելով Մելէթիոս Եպիսկոպոսը՝ Գերպ. Ժերեմի կը շեշտէր թէ իր ուրախութիւնն ու յուզումը մեծ են, կը յիշէր թէ երկու հին եկեղեցիները միշտ լաւ յարաբերութիւններ մշակած են ու կը փոխանցէր իր եղբայրական զգացումները:

Գերպ. Գրիգոր Կապրոյեան, յանուն Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ, կը յայտնէր թէ եթէ Գիւտ Եպիսկոպոս սրտեր կար - դար, պիտի տեսնէր թէ ինք սէր ու յարգանք կը տածէր իրեն հանդէպ, մաղթելով թէ ինչ որ հայ ժողովուրդը տուած է Գիւտ Եպիսկ.ի, ան վերադարձնէր հայ ժողովուրդին՝ իր ժպիտով, իր սրտով, իր պատրաստակամութեամբ, ու կը յիշէր Անտիոքի Եպիսկոպոսի՝ Ս. Իգնատիոսի եօթը նամակները Փոքր - Ասիոյ եկեղեցիներուն ուր կ'ըսէր՝ Եկեղեցին հո՛ն է, ուր եպիսկոպոսը կը գտնուի: Իր խօսքը կը վերջացնէր մաղթելով որ միացած ըլլան ինչպէս տաւիղի մը լարերը:

Փարիզի Արքեպիսկոպոսը՝ կարդինալ Լիւսթիժէ իր ելոյթին սկիզբը յայտնեց թէ չատ բան կարելի է հասկնալ երբ լեզուն չի հասկցուիր, այդ չէշտը, այդ դաղտնի երաժշտութիւնը կը ապաւորէն եւ ինք բնազդով կը հասկնայ, չնորհիւ ատոր: Ծանօթ է արդէն հայկական ծէսին եւ երգին: 1954-ին ուխտագնացութեան գացած է Երուսաղէմ եւ հոն Հայոց Պատրիարքարանը ներկայ եղած է ազօթքի եւ պատարագի եւ ամէն անգամ որ Երուսաղէմ գացած է մասնակցած է արարողութեանց: Երեսուն տարի քահանայութիւն, ըսաւ կարդինալ - արքեպիսկոպոսը, չատ դեղեցիկ ձեւ մըն է կեանքը նուիրելու: Ապա, յայտնեց այն մեծ յարգանքը զոր կը տածէ Հայ ժողովուրդին նկատմամբ, քանիցս մարտիրոս, այնքան անողոք կերպով ցրուած, որ գոհարներէն մէկը կը ներկայացնէ քրիստոնեայ պատմութեան: Շեշտեց այն իւրայատուկ յատկանիշը հայ ժողովուրդին, որու մօտ պատմութիւնը, լեզուն, մշակոյթը կը խառնուին քրիստոնէական աւանդութեան: Գալով հայ ժողովուրդի տառապանքին եւ ինչ որ կը կոչեն Սփիւռքին, պէտք է փնտռել հոգեւոր նշանակութիւն մը եւ թէ՝ կա՛յ անպայման այդ ողբերգական, անարդար, անողոք, անհեթեթ պարագաներու մէջ հարստութիւն մը: Ծանօթ է որ եկեղեցւոյ ամէն հալածանք ծնունդ տուած է անոր բեղնաւորման: Կարդինալ Լիւսթիժէ կը պիտակէր թէ մտահոգութիւններէն մէկն է, երբ այս կացութեան մէջ, մշակոյթին, ծիսական աւանդութեան պահպանումը, երբ ժողովուրդը ցրուած է եւ արդէն երեք սերունդ կայ, եւ յիշատակին յիշատակը կը մնայ: Կը խորհիմ, կը շեշտէ կարդինալը, որ ան որ փնտռէ համեմատութիւնը մշակոյթին եւ հաւատքին միջեւ, հաւատարակչռութիւնը կը գտնէ հաւատքին մէջ: Կարելի չէ հիմա գարգացնել այս գաղափարը, բայց ըսենք որ քրիստոնէական աւանդութիւնը է՝ մշակոյթին, ինչ որ հոգին է՝ մարմնին: Եւ ան որ կորսնցնէ մշակոյթը՝ ծնած քրիստոնէութենէն, կը կորսնցնէ իր հոգին եւ կը դատապարտուի անյայտանալու: Անշուշտ, պէտք չէ եկեղեցի մը նոյնացնել ազգի մը հետ կամ ազգ մը եկեղեցիին, բայց ձեր իւրայատուկ պարագային մէջ, եկեղեցին եւ ազգը միշտ զօրած են իրարու: Գիտցէք ձեր հարստութիւնները փոխանցել ձեր զաւակներուն:

Հուսկ խօսք կ'առնէր Գիւտ Եպիսկոպոս, նախ Ֆրանսերէն, ու կ'ըսէր կարդինալին, որ իրենց ամէն մէկ հանդիպումին կարդինալը ազօթք մը կը հայցէր իրմէ եւ այսօր՝ ինք է որ ազօթք մը կ'ուղէ Փարիզի արքեպիսկոպոսէն: Ապա, հայերէն, շնորհակալութիւն կը յայտնէր ներկաներուն, որոնք եկած են ուժ տալու Եկեղեցւոյ սպասաւորի մը եւ ինք այդ ուժն առնելով, կ'երթայ երեսուն տարի եաք ու կը յիշէ Խադ Աբգ.ի Մաշտոցէն առած մէկ հարցումը: Գիւտ Եպիսկոպոս ըսելէ եաք թէ Աստուծոյ ծառայել կը նշանակէ Եկեղեցին սիրել ու ինք ալ սորված է իր ծնողքէն, իր ուսուցիչներէն, իր հոգեւոր առաջնորդներէն Աստուծոյ նուիրուիլ: Ու իր խօսքը վերջացուց ըսելով՝ այսօրուան այս հաւաքոյթը ձեզի կը վերագարձնեմ ըսելու համար թէ Եկեղեցին սիրեցի, Եկեղեցին իմ սիրան է, սէրը Աստուծմէ ստացայ, սէրը Աստուած դրաւ ամէնուս սրտին մէջ, զայն ձեզի կը մատուցանեմ, որպէսզի մէկտեղ երթանք ծունկի այն բոլոր կոթողներուն եւ ըսենք Աստուծոյ խօսքը: Եկէք սիրտս առէք եւ ձեր սրտին խառնեցէք: ... Աղօթեցէք ինծի համար»:

Յիշենք որ այս հանդիպումի ընթացքին կարդացուեցան Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհաւորական հեռագիրը եւ Փարիզի քաղաքապետին՝ Ժաք Շիրաքի նամակը:

Մէջընդմէջ գործադրուեցաւ նաեւ գեղարուեստական բաժին մը, որու ընթացքին Տիկին Մուրատեան (դաշնակ) նուագեց Բարաջանեանէն եւ Շոփէնէն, Միւռոն վրդ. երգեց (Հայաստան, տէր կեցո՛) եւ Աստղիկ արեղայ արտասանեց իր մէկ քերթուածը:

Հաւաքոյթը փակուեցաւ «Հայր Մեր»ով:

Ա. Մ.

ԳԱՂՈՒԹՔ ԳԱՂՈՒԹ

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ Ազիբեան ակումբի «Ատուր Գալպէնեան» սրահին մէջ, Դեկտեմբեր 4-ին, տեղի ունեցած է դասախօսութիւն մը՝ «Ամուսնալուծումները, անոնց պատճառները եւ պատճառներուն ծագումը» նիւթին շուրջ, կազմակերպութեամբ Լ. Օ. Ա. Դասախաւականի Յանձնախումբին: Դասախօսութիւնը բաժնուած է երկու մասերու: Առաջին բաժնին տոքթ. Յակոբեան անդրադարձած է սեռային չեղումներու, ներկայացնելով սեռային ըմբռնումներու հոլովոյթը յունա - հռոմէական դարաշրջանէն սկսեալ, ապա քրիստոնէութեան կեցուածքն ու խօսքը անոր հանդէպ: Անցնելով Լիբանանի ընկերային ընտանեկան կացութիւններու, դասախօսը լուսաբանած է, թէ պատերազմի տասնամեակին ամուսնալուծումներու թիւը կրկնապատկուած է, թմրեցուցիչներու, ալքոլի չռայլ գործածութեան, երկրին մէջ իսկ Լիբանանցիին դաղթական վիճակին, արտագաղթին, դրամ չահելու համար դրացի երկիրներ ամուրիներու դաղթին, անգործութեան, եկամուտի աղբիւրի նուազումին, դրամի արժեզրկումին եւ այլ պատճառներով, պատճառներ՝ որոնք իւղ թափեցին բարոյական խախուտ հիմերու վրայ չնչող ընտանիքներու հիւանդագին բազմանքին: Երկրորդ դասախօսը՝ տոքթ. Յօր Կիտանեան, անդրադարձած է ամուսնալուծումներու այլազան պատճառներուն՝ անհանդուրժողութիւն, չհամոզութիւն, անձնասիրութիւն, ընչաքաղցութիւն, գոռոզութիւն եւայլն: Դասախօսութեան աւարտին ներկաներու հարցումներուն պատասխանելով երկու բժիշկները ամուսնալուծման գլխաւոր պատճառներէն մին նկատած են արտաքին միջամտութիւնը նոր պսակուած - ներու ընտանեկան եւ անձնական ներքին գործերուն:

×

ԼՈՆՏՈՆԻ մէջ, Դեկտեմբեր 15-ին, տեղի ունեցած է թէյասեղան մը, ի պատիւ Հ. Բ. Ը. Մ.ի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան նոր կազմուած պասքէթպոլի խումբի չուրջ քառասուն անդամներուն: Խօսք առնելով Բարեգործականի Լոնտոնի մասնաճիւղի առենապետը՝ Յարութիւն Մուրթաֆեան, անդրադարձած է պասքէթպոլի Ա. խումբին Լիկայի առաջին կարգի մրցաշարքին մէջ արձանագրած յաղողութիւններուն: Կարպիս Եսայեան չեշտը դրած է Լոնտոնի հայ երիտասարդական կեդրոնի մը հիմնադրութեան ծրագրին առընչուող աշխատանքներուն վրայ: Սեւան Մուրթաֆեան պասքէթպոլի ակումբի նախագահ ընտրուած է:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻԻՆ

ՁՕՆ ԱՌ ՄԱՍԻՍ

ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍԵԱՆ

«Մի փոքր ժամանակամիջոց եւս առաջ ընթանալով՝ առիթ ներկայացաւ մեզ համբուրելու ձիւնաթաղ լերան փէշը եւ նոյն ընթացքով բարձրանալով դէպի վեր, հասանք մի տեղ, որ յիրաւի, մարդկային ուժերն անզօր կ՚ւ լինէին, եթէ մեզ օգնութեան չէին եկել մեր Մասիսի մայրական զորավանդները»:

Իսկ աւելի բարձրում, երբ վերելքի առաջապանքները մնացել էին քարէ ծովերում, ձիան ու առոյգի մէջ, եւ գագաթը տեսանելի էր արդէն, Աբովեանն ասում է. «Կարծես թէ դէպ երկինք թեւածելով էինք բարձրանում բլուրն ի վեր, ուր լերան գագաթն էր ... համայն աշխարհի ծննդատեղին»:

Ապաւինել լերանը. ուրիշ ի՞նչ կարող էին անել լեռնագնացները, երբ արդէն նրա իշխանութեան տակ էին: Դեռ երէկ, ցածից նրանք լսում էին բարձունքներից գահավիժող ձիան հիւսքերի ու հսկայ առոյգաբեկորների ղրրտիւնն ու բոմբիւնը: Իսկ այսօր, 1829 Թուականի Սեպտեմբերի 27-ն է: «Ժամանակամիջոց առանձնահատուկ ոչինչ չանցաւ մեր աչքի առաջ, միայն ձիերի ոտքերի տակ ընկած ձիւնը սկսեց ամրանալ, ինչպէս ասում են լեռնագնացները, եւ ձիերի ոտքերը չէին խրվում ձիւնի մէջ»:

Ամրանալ ձիւնը, ամրանալ ոտքերի տակ, ամրանալ ոգին, ամրանալ կամքը, ամրանալ հաւատը, ամրանալ յոյսը, ամրանալ սէրը, ամրանալ ամրանալ ամրանալ ... Ամրանալ ամրանալու համար ինչ չի տալիս մարդ, ինչ չի զոհաբերում, ինչ չի անում, ինչ չի տառապում, ինչ չի տանջւում, ինչ չի ... ամրանալ ամրանալու համար:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Այրի Տիկին Նոյեմի Տէրտէրեան եւ զաւակները իրենց հօր եւ մեծ - հօր՝

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

մահուան քառասունքին ի յիշատակ, 2500 ֆրանք կը նուիրեն Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէին (առաջ «Ծառաջ»էն)։

«ԾԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ՎԱՐՈՒԺՈՒՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԽ

ՄՈՆՐԷԱԼ - Տէր եւ Տիկին Վարուժան Մինասեան 50 ֆ. Տ.։

ՓԱՐԻԶ - Տէր եւ Տիկին Ժիրայր Մուրատեան 500 ֆ.։

ՄԱՐՍԷՅԼ - Պ. Պերճ Կարապետեան 500 ֆ.։

ԻՍԻ - Տիկին Ե. Պօղոսեան 300 ֆ.։

ՄԱՐՍԷՅԼ - Պ. Ոսկանեան 200 ֆ.։

ՊԱՆԷԵՕ - Տիկին Մուսայեան 200 ֆ.։

ՓԱՐԻԶ - Պ. Կ. Թուլումճեան 250 ֆ.։

ՄԱՐՍԷՅԼ - Տիկին Տէր - Մինասեան 100 ֆ.։

ԿՈՒԱՆԺ ԼԻ ՎԱԼԱՆՍ - Տէր եւ Տիկին Լեւոն Տէր - Սարգիսեան 100 ֆ.։

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Շաբաթ օր, Յունուար 25, ժօն է Սբբոցն Սարգսի Զօրավարին եւ Որդւոյ Նորին Մարտիրոսին եւ Զորեքտասան Զինուորացն։

Այս առթիւ, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ ժամը 10-ին պատարագ կը մատուցուի։

Հ. Բ. Ը. Մ.

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ – ՓԱՐԻԶ

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Ուրբաթ, Յունուար 24, ժամը 20·30-ին՝

Ալէք Մանուկեան Մշակութային Կեդրոնի սրահին մէջ։

118, rue de Courcelles, 75017 PARIS

Նախագահութեամբ՝

ՏՈՔԹ. ԷՏՈՒԱՐ ԱԴԱՄԵԱՆԻ

Ատենապետ

Ֆրանսայի Շրջ. Յանձնաժողովի

Կը խօսի՝


ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍԵԱՆ

«Հերոսական Ոգիի Պայքարնի Գրականութեան Մէջ»

բնաբանով

Համոյածներ բանաստեղծին «Կորնթոսի Պաշարումը»էն և ձայներիզի վրայ «Սարգանարաղի Տեսիլք»էն, ընկերակցութեամբ՝ Տիկին Անի Զաքարեանի։ Վրայր Մազմանեան ձայներիզի վրայ կ'ոգեկոչէ հեղեն պրագէտ՝ Սփիւռիռէոն Թրիքուրիսի դամբանականը։

Մուտքը ազատ է։



ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE DECINES

15, rue du 24 Avril 1915 — 69150 Decines

Salle H. SAMUEL

SAMEDI 25 JANVIER

à 20 heures 30

UNE SOIREE EXCEPTIONNELLE

DIAPORAMA

«L'EPOPEE DES FILS DU SOLEIL»

Réalisation : Alexandre VARBEDIAN

Musique . Aved DERDERIAN

Un retour aux anciennes croyances arméniennes : Est-il vrai que le Dieu - SOLEIL (AREV ou AREK) a donné son nom aux AR - men (Arméniens) ?

RENCONTRE et SIGNATURE

Alexandre VARBEDIAN signera son livre «ARPIAGAN : SOLARIUS»

un poème épique

dédié à l'esprit combatif du Peuple Arménien.

ՅԻՇԱՏԱԿԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կիրակի օր, Յունուար 26, Բ. Կիրակի Զկնի Մնոդեան։

Այսօր, յաւարտ պատարագի, մատնաւոր հոգեհանգիստ կը կատարուի Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ, ի յիշատակ հոգւոյն զուիցերիացի հայասէր հոգեւորականի՝

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ

ՔՐԱՖԹ ՊՈՆԱՐԻ

որ Մեծ Եղեռնի հետեւանքով որբացած մեր զաւակները հաւաքեց ու անոնց որպէս հայր՝ պաշտպան, դաստիարակ եւ օգնական եղաւ։

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

ST. PIERRE DE CHAILLOT
31, ave. Marceau

Այս Ուրբաթ օր, Յունուար 24, ժամը Երեկոյեան 8·30-ի Եկեղեցիներու Միութեան Ազօթքի Շաբաթուան չարքին մէջ, Սէն Փիէր Տը Շայօ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ, 31 Ավրնիւ Մարսօ, Փարիզ 16-րդ, Միջեկեղեցական Պաշտամունք կը կատարուի, որուն կը մասնակցի նաեւ Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ երգչախումբը՝ յատուկ Շարականներու կատարողութեամբ։

ԿԱՊՈՑՏ ԽԱՉ

Ֆր. Կապոյտ Խաչի պատգամաւորական ժողովը տեղի կ'ունենայ Փարիզ, Շաբաթ եւ Կիրակի, Փետրուար 1 եւ 2։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՄԱՐՍԷՅԼ - Սէն - Թ'Անթուանի Ս. Թադէոս Եկեղեցւոյ Թաղականութիւնը շնորհակալութեամբ առած է վոխան ծաղկեպատկի հետեւեալ նուիրատուութիւնները - Յարութիւն Քէշիշեանի մահուան առթիւ՝ Տէր եւ Տիկին Ղազարոս եւ Երջանիկ Գաբրիէլեան 100, Տիկին Մանուշակ Թրիկեան 50 ֆրանք, Մխիթար Սարկ. Քէյլիչեան 100 ֆ.։

Բարսեղ Գամպուրեանի մահուան առթիւ՝ Տէր եւ Տիկին Եղուարդ Եարամեան 50, Տէր եւ Տիկին Ժիրայր Սիրաբեան 50, Տիկին Մարիզ Արթինեան եւ զաւակները 50 եւ 50 Դպրաց դասին, Տէր եւ Տիկին Սամուէլ Գամպուրեան 50, Տէր եւ Տիկին Աբրահամ Շահպազեան 50, Տէր եւ Տիկին Օհաննիկ Գամպուրեան 100 ֆ. 50 երգչախումբին, 50 դպրոցին, Տէր եւ Տիկին Գրիգոր Գալուստեան 100, 50 երգչախումբին, 50 դպրոցին, Տիկին Զարդար Աճէմեան 50, Պ. Կարպիս Գամպուրեան 50 դպրոցին, Տէր եւ Տիկին Վարդան Էլմասեան 50 եւ 50 ֆ. դպրոցին։

Տիկին Վարդ Ներսիսեանի (Մնեալ՝ Եազըճեան) մահուան առթիւ՝ Տիկին Եղիսաբէթ Գոլոյեան 100, Տիկին Միշէլ Եավէր 200, Տիկին Զապէլ Գուլումճեան 100 ֆ.։

Տիկին Փերուզ Մուրատեան (Մնեալ՝ Մոսկոփեան) մահուան առթիւ՝ Տիկին Անժէլ Պոնաթի (Մնեալ՝ Խաչատուրեան) 200 ֆ., Տէր եւ Տիկին Անդրանիկ Մուրատեան 100, Տէր եւ Տիկին Արթագին Յակոբեան 100, Փիւլիւր ընտանիք (Փարիզէն) 200 ֆ.։

Տիկին Գոհար Ձէյնէդդրոսեանի (Մնեալ՝ Մարկոսեան) մահուան քառասունքին առթիւ՝ Տէր և Տիկին Արթին Թորոսեան եւ զաւակները 700 ֆ., Տիկին Նուրիձա Մարկոսեան եւ զաւակները 100, Տիկին Կիւլիւզար Թորոսեան 50 ֆ., Տիկին Լուսաբեր Շոսյեան 50, Տէր եւ Տիկին Հարուն Թաշհան 50, Տէր և Տիկին Գրիգոր Մարկոսեան 150, Տէր եւ Տիկին Սիմոն Զէօրթիւքեան 50, Պ. Նիկողոս Թորոսեան 100 ֆ. 50 երգչախումբին։

Պ. Սիրական Շամիրեանի մահուան 10-րդ տարելիցի հոգեհանգստեան առթիւ՝ Տէր եւ Տիկին Նուարդ Շամիրեան եւ զաւակները 150, Տէր եւ Տիկին Յակոբ եւ Եսթեր Կարապետեան 30, Տէր եւ Տիկին Պաղտասար եւ Ասուիկ Պաղտիկեան 50։

imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

ARMENIE 1986

Tous nos départs sont effectués jusqu'à Moscou sur les vols réguliers d'AIR FRANCE et nos groupes sont encadrés par des accompagnateurs qualifiés et dévoués.

DEPART	RETOUR	DUREE
28 MARS	06 AVRIL	10 JOURS
18 AVRIL	02 MAI	15 JOURS
08 MAI	19 MAI	12 JOURS
23 MAI	06 JUIN	15 JOURS
27 JUIN	11 JUILLET	15 JOURS
11 JUILLET	25 JUILLET	15 JOURS
01 AOUT	15 AOUT	15 JOURS
15 AOUT	29 AOUT	15 JOURS
29 AOUT	12 SEPTEMBRE	15 JOURS
12 SEPTEMBRE	26 SEPTEMBRE	15 JOURS
03 OCTOBRE	17 OCTOBRE	15 JOURS
07 NOVEMBRE	21 NOVEMBRE	15 JOURS
26 DECEMBRE	09 JANVIER 87	15 JOURS

— Nous sommes en mesure d'organiser vos voyages individuels avec avion, hôtel, accueil et transfert pour un séjour maximum de 15 jours.

— Tarif aérien très avantageux sur les dates de nos groupes ou en individuel de 1 à 4 semaines, pour tout détenteur d'un visa d'invitation (certificat d'hébergement).

KԵԴՐՈՆԱԿԱՆԻ 100ԱՄԵԱԿԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

SOUS LE PATRONAGE DES ANCIENS DU LYCEE GUETRONAGAN

VOYAGE EN ARMENIE

du 18 Avril au 02 Mai

POUR LA COMMEMORATION DU CENTENAIRE DU LYCEE GUETRONAGAN A EREVAN

Lic. A. 1037

Levon BAGHDASSARIAN	Varoujan SARKISSIAN	Jacques CHELELEKIAN
SABERATOURS	**SEVAN VOYAGES**	**VOYAGE WASTEELS**
31, rue d'Argenteuil	48, Cours de la Liberté	87, La Canebière
75001 PARIS	69003 LYON	13001 MARSEILLE
Tél. 42 - 61 - 51 - 13	Tél. 78 - 60 - 13 - 66	Tél. 91 - 95 - 90 - 12

AIR FRANCE · RNTVPNCT · Intourist · AEROFLOT · AV · APS

MARSEILLE

MAISON ARMENIENNE DE LA JEUNESSE ET DE LA CULTURE

12-14, rue Saint Bazile

VENDREDI 24 JANVIER

A 19 HEURES

GERARD CHALIAND

Fondateur du Groupement pour les Droits des Minorités

Ecrivain politique

Professeur à l'ENA

présente

LE SEL DE LA VENGEANCE

de James T. HASHIAN

Ancien haut fonctionnaire auprès du Département d'Etat

Roman rappelant le génocide d'un peuple.

..... *Entrée libre* .....

CONFÉRENCE

du Dr. JEAN - MICHEL THIERRY

le Dimanche 26 Janvier à 15 h 30

au

CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN

118, Rue de Courcelles — 75017 Paris

Métro : Courcelles

«NOUVELLES DECOUVERTES EN ARMENIE»

organisée par le Comité des Dames de l'Eglise Arménienne de Paris

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պօմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Թաղականութիւնը շնորհակալութեամբ առած է։

Այրի Տիկին Մարգրիտ Քիւփէլեանի (Մնեալ՝ Օպոզեան) մահուան առթիւ, վոխան ծաղկի՝ Այրի Տիկին Մ. Եփրէմեան, Տէր եւ Տիկին Սահակ Շահինեան, Տէր եւ Տիկին Ժ. Մեքճեան, Տէր եւ Տիկին Տուրնայեան, Պ. Գրիգոր Վանանեան, Տէր եւ Տիկին Մեքիրեան, Տիկին Մարի Շօվիթեան, Պ. Երեմեան եւ քոյրը 100-ական ֆ., Այրի Տիկին Ն. Զարագեան, Այրի Տիկին Շահինեան, Տիկին Ազատուհի Տիրատուրեան, Այրի Տիկին Աւիկեան, Պ. Հայկ Մարգարեան, Քլըճեան ընտանիք, Տիկին Ազատի Ձինեան 50-ական, Պ. Պետրոս Մարգարեան 30, Պ. Ինէգեան 25 ֆ.։

(Շար.)

ԾՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ Վիէննի մասնաճիւղի վարչութիւնը ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները՝ Յունուար 26, Կիրակի, կէսօրէ վերջ ժամը 14·30-ին Մշակոյթի Տուն։ 9 ռիւ տիւ Սիոռֆ։

Օրա-կարգ - Տեղեկատուութիւն եւ պատգամաւորի ընտրութիւն։

YAN'S

Tournoi Mixte de Tavlou - Nardi

OUVERT A TOUS

Le YAN'S organise son premier trophée YAN'S, édition 1986

Le Dimanche 26 Janvier

à 16 heures

5, ave. Reille, 75014 Paris

Réservation tous les jours de 11 heures à 14 h 30

au : 45 89 20 48

Inscription : 40 Frs.

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի, Առնուվիլ՝ Սարսէլի մասնաճիւղի տարեկան մեծ պարահանդէսը՝ Մարտ 22-ին։

Մանրամասնութիւնները յետագային։

ՈՒՐԲԱԹ
ՅՈՒՆՈՒԱՐ
24
VENDREDI
24 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.145
Fondateur : SCHAVARCH MISSAKIAN
61e ANNÉE — No 16.145

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԺՈՐԺ ՄԱՒՐԵԼ «Ճշմարտութեան ժամուն» ընթացքին պատասխանեց լրագրողներու հարցումներուն», առանց մասնաւոր նորութիւն մը ըսելու : Ընտրութեանց առթիւ, կը խորհի որ համայնավար կուսակցութիւնը ձայներու 10%-ը կ'անցնի եւ երեսփոխան կ'ունենայ բոլոր նահանգներու մէջ, բացի, Թերեւս, Պա - Ռիզէն : Համոզուած է որ անհեսական այլ քաղաքականութիւն մը կրնայ արդիւնաւոր ըլլալ գործազրկութեան դէմ պայքարելու համար : Զարկ պէտք է տալ անհատ ձեռնարկատիրոջ, մինչդեռ կան, դրամ կայ, բայց քանի մը հոդիի ձեռքն է : Համակառակ լրագրողներու ջանքերուն, կարելի չեղաւ ըսել տալ իրեն որ բուն թշնամին ինքը չէ այլ՝ ընկերվարական կուսակցութիւնը : Շատ հանդարտօրէն, պնդեց թէ թշնամին՝ ինքն է : Բայց կրկնեց թէ պայքարելու համար առիթ դէմ՝ «օգտակար քուէ»ն՝ համայնավար քուէն է : Անկարելի չէ կրկին գործակցիլ ընկերվարականներուն հետ, պայմանաւ որ քաղաքականութիւնը փոխուի : Ներկայիս կիրարկուած քաղաքականութիւնը այն չէ, զոր ճախր խոստացաւ 1981-ի նախօրեակին :

ԻՆՏԻՐԱ ԿԱՆՏԻի մարզասպանները, երեք սիխ պահակներ, մահուան դատապարտուեցան, ութ ամսուան դատավարութենէ մը ետք : Կախաղան պիտի հանուին :

ԳԱՍՊԱՐՈՎ - ԳԱՐԲՈՎ ճատրակի (փոխ - վրէժի) հաղիպումը տեղի պիտի ունենայ ամրան վերջաւորութեան : Բուն թըրւականը եւ վայրը պիտի ճշդուին յետոպային : Երեքշաբթի օր է, որ Մոսկուայի մէջ, կողմերը եւ խորհրդային դաշնակցութիւնը այս եղրակացութեան յանգած են : Ինչ կը վերաբերի վայրին, Գարբով Լենինկրադ կը նախընտրէ, Գասպարով իր նախընտրութիւնը չէ յայտնած : Երկու թեկնածու քաղաքները՝ Լենինկրադ եւ Լոնտոն են :

ՆՈՐ - ՏԷԼՀիի Քոնթինանթալ հսկայ պանդոկին մէջ հրդեհ մը ծագած է Հինդչարթի առտու : Առաջին հաշուեկշռի մը համաձայն 44 մեռեալ կար եւ շուրջ 50 ծանր վիրաւոր : Պանդոկը ծայրէ ծայր լեցուն էր օտարականներով : 350 հոգի կրնայ ընդունիլ : Անկարելի չէր նկատուիր որ ոճրավորձի մը հետեւանքով ծագած ըլլայ հրդեհը :

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ «ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ», այսինքն՝ «Պրաւդա»ն մասնելի դարձաւ Ֆրանսախօսներուն, Հինդչարթի օր, փորձի մը համար ամբողջ թիւ մը տասնոյի կերպով թարգմանուած ըլլալով : Ցունուարի մէկ թիւն է, զոր Ֆիլիփ Ժոսթ թարգմանել տուած է եւ հրապարակ հանած, եղածին պէս, առանց որեւէ մեկնաբանութեան : Հետաքրքրական է այն տեսակէտով թէ գաղափար մը կարելի է ունենալ, թէ ինչ կը կարդան թերթին 45 միլիոն ընթերցողները :

ԻՐՋՐԱՒՄի մէջ ցուրտը սաստկացած է եւ ջերմաչափը վերոյէն վար 32 աստիճանի իջած է : Ամբողջ արեւելեան Անատոլուն ձիւնի հաստ շերտերու տակ է, տեղ - տեղ երկու մեթրի հասնող : Խորհ. Միութեան եւ Պարսկաստանի սահմանակից Համբանները կտրուած են եւ բազմաթիւ գիւղեր՝ կղզիացած :

ՊՐԻՒՍԷԼ

ՀԱՅԿ· ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՁԵՒԸ ՓԱՂԱՓԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԱՌՋԵՒ

ՆՈՐ ՆԻՍՏ ՄԸ՝ ՓԵՏՐՈՒԱՐ 26 - 27ԻՆ ԱՄԲՈՂՋԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

ԹՐՔԱԿԱՆ ԶՕՐԱՒՈՐ ՃՆՇՈՒՄ ԵՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Շորեքշաբթի օր է, Ցունուար 22-ին, որ Եւրոպայի Խորհրդարանի քաղաքական յանձնախումբը անդամ մը եւս (նախապէս Սեպտեմբեր 25-ին), իր օրակարգին նիւթ կը դարձնէր Վանտէմէլպրուքի տեղեկագրին հարցը : Ծանօթ է որ Ֆլաման եւրեսփոխանը տեղեկագիր մը պատրաստած է, որ կ'առաջադրէ քաղաքական լուծում մը հայկական հարցին եւ ճանաչումը ցեղասպանութեան Եւրոպայի Խորհրդարանին կողմէ : Առ այդ քաղաքական յանձնախումբը պէտք է քուէարկէր այդ ուղղութեամբ ներկայացուած բանաձեւը (տես՝ քիչ անդին) :

Օրուան մէջ տեղի ունեցած են երկու նիստեր, առաւօտուն ժամը 10·30-էն 12·30 եւ 15-էն 18 :

Վիճաբանութիւնները շատ բուռն եղած են եւ պարզուած է, որ այս անգամ թըրքական ճնշումները շատ աւելի զօրաւոր եղած են եւ ըստ երեւոյթին՝ ազդու : Եւրոպայի Խորհրդարանի բոլոր անդամները նամակներ ստացած են, ինչպէս նաեւ չորս պետութեանց՝ (Անգլիա, Ֆրանսա, Արեւմտեան - Գերմանիա, Իտալիա) դեսպանատուները : Նամակներն զատ, Թուրքերը չեն վարանած նաեւ սպառնալիքներ կատարել :

Պարզուած ընդհ· պատկերը ցոյց կուտայ որ հայկական հարցին, ցեղասպանութեան ճանաչման, կողմնակից կը մնան դէմոկրատ - քրիստոնեայ Իտալացիներն ու Սպանացիները :

Աւելորդ չէ չեշտել անընդունելի դիրքը Գերմանացիներուն, որոնք չեն վարանիր խնդրոյ առարկայ իսկ ընել Հայերու ցեղասպանութիւնը : Արտայայտուողները՝ Հանչ, Քլեփչ, Փրակ եւ Հալսպուրկ կը յայտարարեն թէ հարկ եղած փաստերը չկան, որոնք հաստատած են թէ Հայերը իսկապէս ցեղասպանութեան մը զոհերը եղած են (ըստ երեւոյթին, այս երանելիները Լեփսիուս ալ չեն կարդացած) : Այս՝ մէկ դրդապատճառ : Ապա, կ'առարկուի որ այս յանձնախումբը լիազօր չէ պատմութեամբ զբաղելու, իր դործը չէ : Երրորդ՝ ոմանք կ'ուզեն որ Վանտէմէլպրուքի տեղեկագիրը ընդարձակուի եւ անդրադառնայ նաեւ խորհրդային Հայաստանի եւ Իրանի Հայութեան : Հոն մարդկային իրաւունքները կ'ոտնակոխուին եւ այսպէս՝ միայն Թուրքիան չըլլար խնդրոյ առարկայ : Իտալացիք եւ Սպանացիք կողմնակից են այս առաջարկին, բայց համամիտ չեն Գերմանացիներուն, այսինքն ցեղասպանութեան իրողութիւնը խնդրոյ առարկայ չեն ըներ : 4-րդ պատճառաբանութիւն մը՝ ընդունիլ այս ցեղասպանութիւնը նախընթաց մը կը ստեղծէ եւ ուրիշներ ալ կը դիմեն, իսկ հոլանտացի Տանքերթ ուրիշ «վախ» մը ունի, որ այս քարոյական պահանջներուն կրնան յաջորդել նիւթական պահանջներ :

Կողմնակիցները (Ֆրանսացի, յոյն) կը խորհին թէ ճանչնալ ցեղասպանութիւնը վերջ կրնայ տալ ահաբեկչութեան, թէ հարցը այժմէական է : Ֆրանսացի խօսողներն են՝ Սապիէ, Մալէ, Սուքրա : Կը չեշտեն թէ կարելի չէ ընդունիլ որ պատմութիւնը խեղաթիւրուի եւ թէ ճանչնալով ցեղասպանութիւնը Թուրքիա ընդունած կըլլայ Եւրոպայի ժողովրդավար արժէքները : Կ'ուզեն որ ժամ առաջ Խորհըրդարանին ներկայացուի եւ այլեւս յանձնախումբը այս հարցը չծծէ : Ձեն յաջողիր : Ի վերջոյ կ'ընդունուի քուէարկել այն առաջարկը որ կը վերաբերի ընդլայնելու տեղեկագիրը իր ամբողջութեան մէջ եւ անդրադառնալ խորհրդային Հայաստանի եւ Իրանի : Գերմանական միւս առարկութիւնները նկատի չեն առնուիր : Ուրեմն քուէարկութիւն մը կը կատարուի միայն տեղեկագիրը ընդարձակելու առաջարկին վրայ, հետեւեալ արդիւնքով՝ 25 թիւր, 14 դէմ (Ֆրանսացիք, Յոյներ), 6 ձեռնպահ :

Վանտէմէլպրուք կը խոստանայ աւելցընել իր տեղեկագրին մէջ խորհրդային Հայաստան եւ Իրան, անփոփոխ պահելով եղածը : Յաջորդ նիստը՝ Փետրուար 26 / 27 : Այլ մանրամասնութիւններ՝ յետագային :

PROPOSITION DE RESOLUTION
sur une solution politique de la question arménienne

A. rappelant
— la proposition de résolution de M. Jaquet et consorts sur la situation du peuple arménien (doc. 1- 782/81),
— la proposition de résolution de Mme Duport et M. Glinne sur une solution politique de la question arménienne (doc. 1-735/83) et
— la question écrite de Mme Duport sur la question arménienne (J. O. no C 216 du 16.8. 1984, p. 10),
— vu la proposition de résolution de M. Saby et consorts sur une solution politique de la question arménienne (doc. 2-737 / 84),

B. convaincu que la reconnaissance de l'histoire même du peuple arménien en Turquie implique la reconnaissance de son identité en tant que minorité ethnique, culturelle, linguistique et religieuse,

C. rappelant la conclusion relative au génocide des Arméniens perpétré par le «gouvernement jeune-turc», qui a été formulée par le Tribunal permanent des Peuples, réuni à Paris, à la Sorbonne, du 13 au 16 avril 1984, et qui constate que le crime de génocide est «imprescriptable et international» et que les populations arméniennes constituaient et constituent un peuple dont les droits fondamentaux doivent être respectés,

D. prenant acte du rapport de la «souscommission de la lutte contre les mesures discriminatoires et de la protection des minorités» (des Nations Unies) sur la prévention et la répression du crime de génocide, établi par l'expert britannique Benjamen Whitacker et dont le paragraphe 24 qualifie expressément de génocide les événements de 1915 dont la population arménienne a été victime en Turquie (doc. E/CN. 4/Sub. 2/1985/6),

E. constatant que jusqu'à ce jour, le gouvernement turc, par son refus de reconnaître le génocide arménien de 1915, nie la réalité historique de l'Arménie et continue ainsi à priver le peuple arménien du droit à sa propre histoire,

F. considérant que la reconnaissance du génocide arménien par le gouvernement turc n'entraînerait, en droit internatinal, aucun nouvel effet juridique contraignant, puisque le droit international ne peut être invoqué qu'à l'égard des Etats souverains, statut qui est certes celui de la Turquie en tant que sujet de droit, mais non celui du peuple arménien,

G. considérant que la reconnaissance du génocide arménien par la Turquie doit dès lors être vue comme un acte profondément humain de réhabilitation morale envers les Arméniens qui ne peut, le cas échéant, que faire honneur au gouvernement turc,

H. ayant pris acte, par ailleurs, du

(Շար·ը Դ· էջ)

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ ԳԱՐԵԳԻՆ Բ. Ի ՄՕՏ

Լիբանանի Անգլիոյ դեսպանը՝ ձոն Ուոլթըն կրէ այցելութիւն մը տուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երկուշաբթի, Ցունուար 20-ին :

Քաղաքավարական այս այցելութեան ընթացքին, որու ներկայ եղած է Լիբանահայոց առաջնորդը՝ Արամ Եպիսկ· Քէշիշեան, Գարեգին Բ. եւ բրիտանացի դեսպանը քննարկած են երկրին կացութիւնը :

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Հայաստանի Գերագոյն Խորհուրդի պըրեզիտիումը գիւղա- տնտեսական արդիւնաբերութեան պետական կոմիտէի նախագահի առաջին տեղակալ Վլադիմիր Ազատեանը նշանակած է նախարար :

ՏԵՐՈՒՆԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Մարսէյլի մէջ, Ցունուար 22-ին, իր մահկանացուն կնքած է գաղութի հին դէմքերէն՝ Յովհաննէս Վարժապետեան : Ծնած Պոլիս 1904-ին, ըրջանաւարտ Պզազեան վարժարանէն, ողբացեալը 1924ին հաստատուած էր Մարսէյլ : Սկիզբէն ունեցած է հարային գործունէութիւն, ուսուցչական պաշտօն վարելով Ազգ· Վարժարանը : 1929-էն 1939 հրատարակած է Հայուն տարեցոյցը, նաեւ «Ուղեցոյց Մարսէյլի» (1930) եւ մինչեւ 1936 աշխատակցած է Թոլայեանի «Կավռօչ»ի Ց· Ց· ստորագրութեամբ : 1944-էն 1960 լոյս ընծայած է գրպանի օրացոյց մը : Միշտ կը շարունակէր աշխատակցել հայ մամուլին («Զարթօնք», «Ժամանակ», «Պայքար») թղթակցութիւններով թէ յօդուածներով :

Մեր ցաւակցութիւնները մէթր Վարժապետեանի եւ ընտանեկան պարագաներուն :

ԽՄԲԱՎԱՐ - ԵՐԳԱՀԱՆ

ՎԱՐԴԳԷՍ ՏԱԼԵԱՆ

Ի. դարու սկիզբը տապարկզ իջած խումբ մը հայ երգահաններու լաւագոյն ներկայացուցիչներէն մէկն է մանկավարժ եւ երաժիշտ Վարդգէս Տալեան:

Վարդգէս Գրիգորի Տալեան ծնած է 1896-ին՝ Ալեքսանդրապոլ, աշուղական աւանդութիւններով հարուստ Գուսան Շերամի ընտանիքին մէջ: Նախակրթութիւնը ստացած է պետական առեւտրական ուսումնարանին մէջ, ապա յաճախած Թիֆլիսի նոյնանուն ուսումնարանը: 1918-ին ընդունուած է Անդրկովկասեան Համալսարանի բժշկական լսարանը: Ուսանողական տարիներուն Վարդգէս Տալեան ստրված է արիւնդ նուագել եւ մանակցած աշակերտական նուագախումբերու փորձերուն եւ հանդէսներուն: Ցետագային այնքան կը տարուի փողային այդ նուագարանի կախարդիչ արուեստով, որ կը սկսի հանդէս գալ որպէս սոլիսթ: Ընդհատելով բժշկական ուսումը, Տալեան կը մտնէ Թիֆլիսի պետական երաժշտանոցը: կարճ ժամանակ ետք, նիւթական ծանր պայմանները ստիպած են երիտասարդ, անփորձ երաժիշտը աշխատելու օփէրէթի մէջ որպէս խմբավար եւ զեղարուեստա - կան բաժնի վարիչ: Հոս է, որ ան կը սկսի գաշնաւորել տարբեր ոճի գործեր: Այդ տարիներուն կը գրէ կարգ մը գործեր արիւնդ եւ նուագախումբի համար, որոնք կը մեկնաբանուին տեղւոյն թատրոնին մէջ: Շարունակելով ուսումը արիւնդի դասարանը, Տալեան կը հետեւի նաեւ տեսական նիւթերու դասընթացքին եւ մաս կը կազմէ երաժշտանոցի սէնֆոնիք նուագախումբին, որուն վարիչն էր Թիֆլիսի երաժշտանոցի տնօրէն, պրոֆ. Ն. Չերեպնին:

1920-ին, հինգ գործողութեամբ «Գիւլիզար» երաժշտական թատերախաղի համար գրուած երաժշտութիւնը ներկայացնելով նոյն երաժշտանոցի ստեղծագործական բաժնին, Տալեան կ'ընդունուի Չերեպնինի դասարանը:

1922-ին, ընդհատելով երաժշտական կրթութիւնը, Վարդգէս Տալեան կը տեղափոխուի Դոնի Ռոստով եւ կ'աւարտէ տեղւոյն համալսարանի բժշկական լսարանը, իսկ 1926-ին՝ շրջանաւարտ կ'ելլէ Թիֆլիսի երաժշտանոցի ստեղծագործա - կան բաժինէն:

Վարդգէս Տալեան խմբավարական գործունէութիւնը սկսած է 1921-ին, Թիֆլիսի 70-րդ աշխատանքի դպրոցէն, ուր կը դասաւանդէր երգ - երաժշտութիւն, եւ կը վարէր երգչախումբը: Ցետագային ան կը վարէ Հայ Արուեստի Տան արուեստանոցի երգչախումբը, նոյն ատեն դասաւանդելով երաժշտական տեսական նիւթեր:

1924-ին Տալեան այդ երգչախումբով համերգ մը կուտայ, մեկնաբանելով երկուեւ երգչախումբի համար գրուած իր Նոթթիւռնը: Արմէն Տիգրանեան, բարձր գնահատելով երիտասարդ Տալեանի խմբավարական գործունէութիւնը, գրած է. «Վարկավարելով Հայարատան երգեցիկ խումբը՝ Տալեանը գրսեւորել է խմբերգային կուլտուրայի բարձր տուեալ - ներ»:

Վ. Տալեան իր գործերուն մէջ մեծ տեղ յատկացուցած է երգարուեստին, մանաւանդ՝ խմբերգին: Անկիւ գիպուածի արդիւնք չէ, քանի որ երաժիշտը միշտ ըզբաղած է խմբավարութեամբ: Անոր խմբերգային երկերու բովանդակութիւնը այլազան է՝ կենցաղային, յեղափոխական, հայրենասիրական: Երգահանին «Գերանդի», «Հոկտեմբերին», «Կոմունի արտում», «Երիտասարդ զվարդիա», «Տրակտորի տարին ա», «Զորս դիւցազուններ», «Երգ Հոկտեմբերեան» եւ այլ խմբերգներ աչքի կը զարնեն յատուկ լեզուով, հայ ժողովրդական երաժշտութեան ղեացումով ու թարմութեամբ:

Իր գործերով Տալեան հարստացուց հայ խմբերգային երաժշտութիւնը նոր թեմաներով, նոր մտքերով ու ղեացումներով:

Վարդգէս Տալեան մեծ աշխատանք տարած է հայկական երաժշտական արուեստը Վրաստանի ժողովրդական լայն խաւերու մէջ տարածելու ուղղութեամբ: Ան եղած է Վրաստանի Երաժիշտներու Միութեան հայկական բաժնի նախագահ: Աշխատած է նաեւ Թիֆլիսի Թիւ 3 երաժշտական ուսումնարանը՝ սկիզբը իբրեւ տեսական նիւթերու դասատու, այնուհետեւ տնօրէնի տեղակալ եւ տնօրէն: 1930 - 1934 թուականներուն Սերգէյ Բարխուդարեանի մօտ ուսումնասիրած է հայկական ժողովրդական երգը, եւրոպական դասական երաժշտութիւնը, ծանօթացած է լենինգրադեան դպրոցի դասաւանդման ոճին: 1934-ին Վարդգէս Տալեան կը հրաւիրուի Հայաստան եւ պաշտօնի կը կոչուի պետական երաժշտանոցին մէջ:

Մեծ է Տալեանի երախտիքը Հայ երաժշտական մանկավարժութեան մարզին մէջ, յատկապէս վարիչներու պատրաստութեան գործին մէջ: Իր աշակերտանե - րէն շատերը այսօր Հայաստանի եւ Խորհրդային Միութեան մէջ անուանի դէմքեր են՝ Ալեքսանդր Յարութիւնեան, Առնօ Բաբաջանեան, Եղուարդ Միրզոյեան, Ղազարոս Սարեան, Աշոտ Սաթեան, Սդամ Խուդոյեան, Ռոբերտ Ամատեան եւ շատ ուրիշներ:

Վարդգէս Տալեան, կոփուելով երգի արուեստի սեռին մէջ, պահանջ կը զգայ մեծ կտաւի գործեր յօրինելու: Կը գրէ բազմաթիւ սենեկային - նուագարանային, ձայնի եւ նուագախումբի եւ այլ գործեր, որոնց գլխաւոր յատկանիշը կը հանդիսանան կերպարներու եւ երաժշտական թեմաներու սուր յարաբերութիւնները:

Մեծ կտաւի գործերէն են «Կոլխոզական» ձայնի եւ սէնֆոնիք նուագախումբի պատկերը, Ջութակի սոնաթը, գաշնակի երրեակը, «Ռուշանի քարափը» անուանի օփերան, քառեակը եւ այլ երկեր, որոնք ունենալով բարձր մակարդակ, իրենց բովանդակութեամբ արտայայտելով ժամանակաշրջանի յառաջադէմ զաղափարները, իրաւամբ ցոլացնելով ժողովուրդին կեանքը, անոր մտքերն ու զգացումները, հարստացուցած են հայ դասական երաժշտութեան գանձարանը:

Բացի ինքնուրոյն յօրինումներէ եւ աշուղական մշակումներէ, Տալեանի կը պատկանին նաեւ մանկական երգեր, ռոմանսներ, ժողովրդական գեղջկական երգերու մշակումներ:

Վարդգէս Տալեան դիմած է Շերամի եւ Սայաթ Նովայի երգերուն, մշակած ու հրատարակած է զանոնք: Հօրը երգերու ձայնագրութեան եւ մշակման գաղափարը, ինչպէս կը դրէ ինք, տուած է Ալեքսանդր Սպենդիարեան:

Վարդգէս Տալեան մշակումներու առեն հաւատարիմ մնացած է աշուղական արուեստի հնչողութեան, անոր ոճային յատկանիշներուն եւ լեզուական երանգներուն: Հայաստանի մէջ Վարդգէս Տալեան երաժշտական եւ մանկավարժական գործունէութեամբ թէեւ կարճ, բայց արդիւնաւէտ ու բուռն կեանք մը ապրեցաւ: Ան հիմնեց ազգային կոմպոզիտորական դպրոց մը, ստեղծեց ինքնուրոյն ոճ, սերունդներուն թողուով երգի արուեստի լաւագոյն նմոյշներ:

Վարդգէս Տալեան մեռած է 1947-ին, Երեւան, ստեղծագործական ծաղկուն շրջանին մէջ:

Ա. ՇԵԿՈՒՆՑ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԸ. ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՄԱՐ

(ՎԵՐ. ԴԱՆԻԷԼ ՍԱՀԱԿԵԱՆԻ ԳԻՐՔԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ*)

Վեր. Դանիէլ Սահակեան, որդին Վեր. Վահան Սահակեանի, եւ Նախագահ Փըրանսահայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան, մեզի կը հրամցնէ լաւ սերտուած եւ հաճելի պզտիկ գիրք մը, Ֆրանսերէն լեզուով, «Հայ Աւետարանական Շարժումը սկիզբէն մինչեւ մեր օրերը»:

Այս հրատարակութիւնը անհրաժեշտութիւն մըն էր, որովհետեւ եթէ Հայերը լաւ կը ճանչնային իրենց կաթոլիկէ «փոքրամասնութիւնը» նուազ տեղեակ են իրենց աւետարանական «փոքրամասնութեան» մասին:

Հեղինակը, հետաքրքրական ճոռոմաբանութենէ միշտ առարկայական կը մնայ եւ չի խուսափիր հարցերէն. օրինակի համար լեզուական ճոխութեան հարցը. (ինչպէս կը յայտնուի մասնաւոր կերպով Ամերիկայի մէջ, պաշտամունքի ընթացքին) եւ պատմութիւնը չի խեղաթիւրեր (օրինակի համար, կը յիշէ Հայ Աւետարանական Շարժումին դանդաղեցման նշանները Ա. համաշխարհային պատերազմին նախօրեակին): Այս կը նշանակէ որ կարելի է այս գիրքը կարդալ ամենայն վստահութեամբ, եւ նաեւ հետաքրքրութեամբ եւ նոյնիսկ հաճոյքով, քանի որ ընդհանուր հանրութեան ուղղուած է ան:

Հեղինակին հետեւելով, մարդ երախտապարտութիւն կը զգայ հայ աւետարանականներուն հանդէպ, որ անոնք մեր ժողովուրդին մէջ աւելի տարածեցին Սուրբ Գիրքին ընթերցումը, աշխարհաբար Հայերէն եւ նոյնիսկ թրքերէն եւ քրտերէն թարգմանութիւններով, չարունակելով գործը յետոյ Սուրբ Թարգմանչաց գործը:

Օսմանեան կայսրութեան կառավարութեան մօտ կարգ մը հայկական շրջանակներու անհասկացողութիւնը Աւետարանականները ստիպեց իբր ինքնուրոյն եկեղեցի կազմուիլ 1846 թուականին: 1894 - 1896-ի ջարդերուն ընթացքին անոնցմէ չատեր մարտիրոսացան, իրենց առաքելական եւ կաթոլիկէ եղբայրներուն կողքին: Որոշ հասկացողութեան հոգի մը կը յայտնուի այդ ժամանակ, որ կը յայտնուի առաջադէմ կերպով միացեալ պաշտամունքներով կարգ մը տեղեր:

Յայտնութիւն մըն է նաեւ Հայ Աւետարանականներուն կատարած գործին մեծութիւնը զպրոցներու նկատմամբ (անոնք ռահվիրաներ են Արեւելքի մէջ իպարական սեռի ուսման մարզին մէջ), Եփրատ Գոլէճի ճառագայթումը, հաւատացեալներու ջերմեռանդութիւնը (3000 ներկաներ ամէն Կիրակի Ազնթապաղ Աւետարանական եկեղեցիներէն մէկուն մէջ), առանց մոռնալու ամերիկացի միսիոնարներուն որոնք սկզբնական շրջանին մանաւանդ Աւետարանականներուն նեցուկ եղան՝ մարդկայնական կոչումը իրենց բացած հիւանդանոցներով եւ որբանոց - ներով. ջարդերէն վերապրողներուն համար: Անխոնջ ճամբորդներ, հայ հովիւները կը շրջին ամբողջ Անատոլուի մէջ եւ կ'անցնին նոյնիսկ ռուսական Հայաստան, ուր Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսը, 19-րդ դարուն կէսէն առաջ, լաւ ընդունելութիւն ըրաւ այս չարժումին առաջին քայլերուն:

Հայ Աւետարանական Եկեղեցին 60.000 անդամէ՝ 15.000-ի կ'իջնէ 1915-ի ցեղասպանութեան ժամանակ, եւ վերապրողները մեծամասնութեամբ հայրենի հողէն հեռու կը գրուին:

Անոնց ներկայութիւնը զգալի է անկախ, յետոյ խորհրդային Հայաստանի մէջ Երեւան, Լենինական, գաղթականներուն, յետոյ ներպաղթողներուն շրջանորհիւ, բայց անոնց մեծամասնութիւնը եղեռնէն յետոյ, Սուրիա եւ Լիբանան կը հաստատուին: Անոնց եկեղեցիներէն եւ աստուածաբանական դպրոցներէն զատ, պէտք է յիշել անոնց ընկերային եւ դպրոցական հաստատութիւնները:

«Ներ Իսթ Բրիճ»ի առաջադեռնութեան շնորհիւ նախապէս բացուած որբանոցներուն յաջորդեցին հանգստեան տուները, կուրանոցները:

Ամենափայլուն յաջողութիւնը անկասկած զպրոցական մարզին մէջ է. Պէյրութի Հայկազեան Գոլէճը միակ համալսարանական հաստատութիւնն է Սփիւռքի մէջ:

Ամերիկայի Միացեալ - Նահանգները

ՏՕՆԱԾԱՌ

ՄԱՐՍԷՅԼԻ

ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ ՄԻՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԻ

Մարսէյլի Սբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ հայկական լեզուի միօրեայ դպրոցի Տօնածառի հանդիսութիւնները այս տարի տեղի ունեցան Յունուար 5-ին կրօնական ու աշխարհիկ հանդիսութիւնով:

Կիրակի, Յունուար 5, Ծննդեան ձրադպրոցին էր: Արդէն ժամը 15-էն սկսեալ Մայր Տաճար փութացած էր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու ձրադպրոցի հոգեպարար արարողութիւններ.

եւ չեն մնար «Աւետարանչական»ով (հայ միսիոնարական կազմակերպութիւն մը) որ անցեալին մէջ ցեղասպանութեան հետեւանք եղող վէրքերը դարմանելէ առաջ (որբանոցներու օժանդակութիւն, նոր հովիւներու պատրաստութիւն) այսօր բազմաթիւ ընկերային հաստատութիւններու եւ դպրոցներու իր օգնութիւնը կը բերէ: Լոս - Անճելըս, Մերձաւոր - Արեւելքէն ներպաղթողներուն օգնելու համար ստեղծուած իր «Ընկերային կեդրոն»ով, առաջադէմ գիրքի մը վրայ կը գտնուի:

Ֆրանսան ալ հետ չի մնար, քանի որ Իսի - լէ - Մուլինոյի Եկեղեցին է որ 1981-ին ընդունեցաւ վերջին նախապատրաստական ժողովը Հայ Աւետարանական եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին, (եկեղեցիներ որոնց կարեւոր մասը կը պատկանի Մերձաւոր - Արեւելքի, Ամերիկայի եւ Ֆրանսայի երեք Միութիւններուն):

Երիտասարդական գործին մասնաւոր ուշադրութիւն կը տրուի, երկու արձակուրդի վայրեր («Վա - Ֆոնթմանէլ» եւ «Լա Սուրս»), պաշտօնաթերթ մը («Լը Լիմմինիոն»): Այդպէս բողոքականներուն օժանդակութեամբ է որ 1934-էն սկսեալ առաջին հովիւները սկսած են գործել Մարսէյլի եւ Լիոնի մէջ նախ: Հեղինակը անձնապէս քաջատեղեակ է Ֆրանսայ Աւետարանական Եկեղեցիներու պատմութեան:

«Աւետարան եւ արդիւնաւորութիւն», այս կրնար ըլլալ մեր աւետարանական եղբայրներուն նշանաբանը: Որքան իրագործումներ եկեղեցիի մը համար որ ամբողջ աշխարհի մէջ, 40.000-է աւելի հաւատացեալներ չունի: Անոնք մեր Դատին չահեցան միջազգային բողոքականութեան բարձր անձնաւորութիւններ, ինչպէս վերմանացի Վերատատուելի Լէվեսխուսը, կամ՝ զուիցերիացի Վերատատուելի Քրաֆթ - Պոնտոը, որ գաղթականներու ընդունելութեան գործին հսկեց:

Իրենց «փոքրամասնութիւնները» չեյերը այլեւս պէտք չէ տեսնեն իբր բաժանուած հատուածներ, հապա համայնքը ճոխացնող հատուածներ: Հիւանդ Օսմանեան կայսրութեան մը յատուկ պատմական պայմաններն են որ կարելի դարձուցին կաթոլիկէներուն դէմ հալածանքները 18-րդ դարուն. իսկ աւետարանականներուն դէմ 19-րդ դարուն: Լըմփիանի կաթոլիկոսութիւնը, Պոլսոյ Պատրիարքութենէն աւելի, այդ ժամանակ Հայ Առաքելական Եկեղեցին աւանդական հանդուրժողութեան հոգին կը մարմնացնէ: Անոր հայրապետները անկասկած Թոյլատրած պիտի ըլլային որ կաթոլիկները եւ նոյնիսկ աւետարանականները ազգային եկեղեցիին ծոցը մնային, իրր հոսանքներ: Պատմութիւնը ուրիշ կերպ որոշեց. բայց անցեալ դարերու մէջ կարգ մը նեղմիտ անձնաւորութիւններու յանդուգն արդելքներէն անդին, զանազան յարանուանութիւններու պատկանող Հայերը պէտք է վերակգին ամէն մէկուն հարստութեան մասին, եւ թէ որքան մեծ առաւելութիւն մըն է այս մեր համայնքին համար:

Շնորհակալ պէտք է ըլլալ Վեր. Դանիէլ Սահակեանի, որ իր ջերմեռանդ եւ անկեղծ վիրքով կը դիւրացնէ այս եղբայրական մօտեցումը:

ԺԵՐԱՐ ՏԻՏԻՑԵԱՆ

(*) Կարելի է «Հայ Աւետարանական Շարժումը սկիզբէն մինչեւ մեր օրերը» գիրքը ձեռք ձգել զանազան հայ աւետարանական եկեղեցիներուն դիմելով, ինչպէս նաեւ հայկական գրավաճառանոցներուն:

րուն: Ցակոբ Եպիսկոպոս Վարդանեանի նախագահութեան ներքեւ արարողութեանց ընթացքին դպրոցական աշակերտներու կողմէ նախ կարզացուեցան օրուան ընթերցուածները: Եկեղեցւոյ հովուերը հովիւն ու դպրոցի տեսուչը՝ Գարեգին Վրդ. Պեքճեան մատուցանեց պատարագը, որու ընթացքին ըստ սովորութեան իր բոլոր աշակերտներուն տուաւ Ս. Հաղորդութիւն:

Պատարագի աւարտին, ըստ նախապէս եղած կարգադրութեանց, Ցակոբ Եպիսկոպոս Վարդանեան ընդունեցաւ պաշտօնական առաջին այցելութիւնը Գերպ. Գոֆֆիի, որ քանի մը ամիսներէ ի վեր պաշտօնի կոչուած է Մարսէյլի իբրեւ առաջնորդ՝ առնելով իր նախորդը՝ կարգինալ Էշակառայի տեղը:

Բարձրաստիճան հիւրը հրաշափառով մուտք գործեց Մայր Տաճար, առնելով հայկական չուքջառ, խոյր եւ եպիսկոպոսական գաւազան եւ իր չքախուժով առաջնորդուեցաւ դաս: Այստեղ Ցակոբ Եպիսկոպոս Վարդանեան արտասանեց իր բարի գալուստի խօսքը յանուն հայ համայնքի ներկայացուցիչներուն եւ ժողովուրդին, եւ ըրաւ բարեմաղթութիւններ նորընտիր առաջնորդին:

Ցակոբ Եպիսկոպոս իր խօսքին մէջ անդրադարձաւ նաեւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ համառօտ պատմականին եւ այն եղբայրական յարաբերութեանց, որոնք տարիներէ ի վեր գոյութիւն ունին երկու քոյր եկեղեցիներու միջեւ:

Գերպ. Գոֆֆի պատասխանելով այս արտայի խօսքերուն, յայտնեց իր շնորհակալութիւնները ու ջնորհաւորութիւնները Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ բարձրադոյն իշխանութեան եւ ժողովուրդին: Ան իր խօսքը աւարտեց ըսելով, թէ ամէն եւք երկու քոյր եկեղեցիները աւելի պիտի զօրացնեն իրենց եղբայրական յարաբերութիւնները համապատասխան քրիստոնէական սիրոյ:

Պատարագէն եւք բոլոր ներկաները անցան եկեղեցւոյ Մշակութային Տունը, ուր իրենց կը սպասէր Ծննդեան հիւրասիրութիւն: Ապա խումբերամ բազմութիւն մը ներկայ եղաւ «Ա. Զրբաչեան» սրահը, ուր տեղի ունեցաւ Սահակ - Մեսրոպ դպրոցի Տօնածառի հանդիսութիւնը:

Այս տարի դպրոցի աշակերտները տեսուչ Գարեգին Վրդ. Պեքճեանի առաջնորդութեամբ եւ չորս ուսուցիչներու օգնութեամբ պատրաստած էին «Քրիստոսի Ծնունդը» անուն թատերական ներկայացում մը: Աւետարանի տուեալներուն հետեւելով մանուկ Յիսուսի ծննդեան աւետումը, ծնունդը եւ մկրտութիւնը կենդանի պատկերներով ներկայացուցին դպրոցի աշակերտները, որոնք չատ սահուն հայերէնով յաջողութեամբ կատարեցին խաղարկութիւնը: Նկատելի յաջողութիւն էր նաեւ այն աշակերտներուն խօսակցութիւնները խաղին մէջ, որոնց ծննդեանքերէն մէկը օտար է եւ որոնք առաջին անգամ կը յաճախէին հայկական դպրոց մը: Ներկայացումը վերջ գտաւ մանկանց երգչախումբին երգեցողութեամբ, որ երգեց ծննդեան չարականը, ղեկավարութեամբ դպրոցի ուսուցիչ՝ Աշիկ Եըմազեանի:

Ներկայացումին յաջորդեց կազանդ Պապուկին ժամանումը, որ եկաւ նուէրներով բեռնաւորուած, որոնք բաժնեց բոլոր երախաներուն:

Եկեղեցւոյ վարչութեան եւ տիկնանց միութեան գնահատելի կազմակերպչական աշխատանքը ընդունեցաւ խանդավառ ծափահարութեամբ բոլոր ներկաներուն կողմէ, մինչ որ Մայր Եկեղեցւոյ արժանավայել Տօնածառ մը ըլլալը կը հաստատէր:

Դպրոցի տեսուչը իրեն վերջաբան շնորհակալութիւն յայտնեց նախ Ցակոբ Եպիսկոպոս Վարդանեանի, եւ ապա ծնողքներուն, որոնք իրենց ներկայութեամբ քաջալերած էին հանդիսութիւնները: Իսկ գնահատական խօսքեր արտասանեց նաեւ դպրոցի յանձնախումբի անդամներուն եւ մանաւանդ նորակազմ տիկնանց միութեան հասցէին՝ տիկիններ. - Սոնա Պաժան, Մարի Պապայեան, Տընիզ Գաբրիէլեան, Էլիզ Ցակոբեան, ինչպէս նաեւ ուսուցիչներ՝ Տիկին Ալիս Խամէը, Ալին Ցովսէփեան, Հերմինէ Պօղոսեան, Օր. Արաքսի Քէօսէեան եւ Աշիկ Եըմազեանի:

ՆԵՐԿԱՑ ՄԸ

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ

Մամավառութեան ոճնահանդէսը կեսարական համբաւաւոր քէթէյով եւ թէյով մեծ յաջողութեամբ անցաւ Հ. Բ. Ը. Մ. «Ալեք Մանուկեան» մշակոյթի մեծ սրահին մէջ:

Օրուան նախագահուհի՝ Տիկին Սոնա Մատուկեան արժանավայել նախագահուհի մը եղաւ իրեն յատուկ պերճախօսութեամբ:

Երբեմնի կեսարիայի եւ Թոմարզայի զովքը հիւսելով, իր մօրմէն ու հօրմէն լսածները յիշելով հաճելի զրուցներ պատմեց նաեւ ինքը Թոմարզացիի զաւակ ըլլալով Թոմարզայի բարբառով մէկ-բերումներ ըրաւ պահ մը ծննդավայրին փոխադրելով մեզ:

Ցետոյ երկու տարիէ Պէյրութէ Փարիզ տեղափոխուած ընտանիքի մը մայր, կարօտով Պէյրութ վերադառնալու փափաքը յայտնեց, ապա՝ աննման երեւանի պեղեցկութիւններէն հայրենասիրութեամբ նկարագրեց ... եւ զմայլելիօրէն արտասանեց «Խօսք իմ որդուն»՝ Սիլվա Կապուտիկեանէ:

Հանդիսութեան վարիչ՝ Ցակոբ Վէզիրեան 1985 թուականին անհետացող հայրենակիցներ՝ ամերիկահայ՝ Աբշալոյր Քազըրունիի, Արամ Բալըրատունիի, Ռոզի Կիւլպէնկեանի, Ֆրանսահայ՝ Ցակոբ - Գրիգոր Ճրճրեանի, Ֆիմի Պարթեւեանի, Ազաթոն Վէզիրեանի, Ստեփան Պառաւեանի, Արամ Խաչատուրեանի, անունները կարգալով ներկաները հրաւիրեց ոտքի մէկ վայրկեան լռութեամբ յարգել անոնց յիշատակը:

Օրիորդ Լիլիան Սեթեան կարգաց ծերունազարդ հայրենակից՝ Մխրան Եփրեմեանի ուղերձը, որ կը յայտնէր թէ բացակայութեան պատճառը հիւանդութիւնն է, եւ անմիջապէս «Յաւիտենական պայքար» գիրք - ալպոմը բաժնեց ներկաներուն իբրեւ կազանդի նուէր:

Վարիչը՝ քէթէյի եւ մոմավառութեան աւանդական սովորութեանց մասին խօսելով Գէորգ Սաատէթեանի չինած մեծակակ քէթէյին վրան մոմ անկեց եւ մէջտեղ դրաւ ու փնտռեց կնքահայր մը, Տիկին Արշալոյս Միւթէվէլեան երկու հազար ֆրանք նուիրելով այդ պատուաւոր տիտղոսին տիրացաւ եւ առաջին մոմը վառեց, այս անգամ բոլոր ներկաները հրաւիրուեցան իրենց մոմերը առնել եւ վառել ամէն մարդ սրտաբուխ նուէրներ տալով, ունեցան քէթէյներ եւ մոմեր: Երբ մոմերը ամբողջ վառիլ սկսան ելեկտրական լոյսերը մարեցան այս միջոցին խորհրդաւոր ձայնով Շնորհաւոր Նոր Տարի ըսուեցաւ եւ Անահիտ Սվաճեան նուագեց դաշնակի վրայ, իսկ՝ Մխրան Էմմաեան չատ հաճելի ձայնով միասնաբար երգեցին Կոմիտասեան ընտրուած երգեր, պահ մը վերջ ժողովրդական եւ հայաստանեան երգերով խանդավառութիւնը դազաթնակէտին հասցուցին:

Ցայտարարուեցաւ որ մուտքէն եւ նուիրատուութիւններէն ղոյացած է 9150 ֆրանք:

Գեղարուեստական բաժինը չարունակուեցաւ փոքրիկն՝ Սօֆի Համբարձումեան համարձակ ու յստակ առոգանութեամբ Անդրանիկ Ծառուկեանէն երկու հայերէն արտասանութիւններ ըրաւ եւ երգեց ու պարեց՝ խլելով երկարատեւ ծափահարութիւններ: Մէջ ընդ մէջ խօսք ուղեցաւ Կարպիս Սարաֆեանի եւ Միսաք Կիւլպէնկեանի, առաջինը՝ մեր միութեան կողմէ Նոր Կեսարիոյ եղած օժանդակութիւնները, եւ երկրորդը՝ Նոր Կեսարիոյ ապագայի մասին չատ լաւատես յիշատակութիւնները ընելով իրենց ուրախութիւնները յայտնեցին:

Եւ Տիկին Ռոզի Նաւասարդեան՝ երգեց, Գէորգ Ֆէրմանեան՝ արտասանեց Օմար Խայեամէն, Պօղոս Կառավարեան՝ Շիրազէն, Հռիփսիմէ Վէզիրեան՝ Գառնիկ Ցովհաննիսեանէն, այնպէս որ մթնոլորտը միշտ համեմուեցաւ պէսպիսութիւններով:

Կարգացուեցան երկու նամակներ՝ Տիկին Եւգինէ Պօղոսեանի եւ Ցակոբ Մելէմէթճեանի Իսթ - լէյ - Մուլինոյէն եւ Մարսիլիայէն գրուած, որոնք կը շնորհաւորէին Նոր տարին եւ իրենց նուէրները կը ղրկէին, այսպէս՝ 16 հոգի նուէրներ ղրկած են նոր տարուան նախօրեակին:

Այս նուիրատուներուն, ինչպէս սրահին մէջ գտնուողներուն սրտագին շնորհակալութիւններ յայտնուեցան կեսարիոյ եւ շրջանի Հայրենակցական Միութեան անունով:

Վերջապէս հանդիսավարը կարգաց կեսարացի համբաւաւոր գիտնականներու, մտաւորականներու, պետական եւ զինուորական ու յեղափոխական անձնաւորութիւններու անունները:

Ընդհանուր զոհունակութեամբ եւ խանդավառութեամբ փակուած յայտարարուեցաւ այս հայրենասիրական օգտաշատ հաւաքոյթը: Եւ մասնաւոր շնորհակալութիւն յայտնուեցաւ Եփրեմեան ընտանիքին ու Պ. Արտաշէս Գարտաշեանի:

ՄԱԺԱԿԵՑԻ

ԳՈՂՈՒԹԸ ԳՈՂՈՒԱԾ

ՊՈԼՍՈՑ հեռաւոր թաղամասերէն Գարթալի Ս. Նշան Եկեղեցւոյ հանդիսաւոր սրբագործումն ու վերաբացումը կատարուած է Յունուար 12-ին: Նախընթաց օրը, Շնորհք Պատրիարք օծած է Ս. Սեղանները, ապա կիրակնամուտի ժամերգութիւն կատարուած է: Կիրակի առաւօտ, պատարագած է Շնորհք Պատրիարք եւ քարոզով մը նշած, թէ քրիստոնէութիւնը գժուար կրօնք մըն է, բծախնդիր ու դժուարապահանջ, զոր Հայը միշտ գիտցած է իրագործել արժանաւորապէս: Ցաւարտ արարողութեանց, Գարթալի թաղապետական սրահին մէջ տեղի ունեցած է ճաշ մը: Սեղանը վարած է Արման Մարաշլեան: Ցանուն կարգադիր Ցանձնախումբին կարպիս Սէմէրճեան կարգացած է տեղեկագիր մը, որմէ պարզուած է, որ 68 տարի է առաջին անգամն է որ նման հիմնական նորոգութեան մը ենթարկուած է Եկեղեցին: Գործադրուած է զեղարուեստական յայտագիր մը եւ եղած են նուէրներ, մեծ մասամբ թեթեւցնելով Թաղական Խորհուրդին բեռը: Հուսկ բանքը արտասանած է Շնորհք Պատրիարք դրուատելով Պոլսոյ Հայութեան չինարար ոգին, կենսունակութիւնն ու այն դուրգուրանքը, զոր կը ցուցաբերէ միշտ իր հանրային հաստատութիւններուն հանդէպ:

×

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՑ Միւզէ տէ Պօ զ'Ալէ սրահին մէջ, Դեկտեմբեր 8-ին, տեղի ունեցած է գաշնակի նուագահանդէս մը, կազմակերպութեամբ Երաժշտանոցին եւ Ֆրանսական Մշակութային Կեդրոնին: Հանդէս եկած է գաշնակահար Զաւէն Խաչատուրեան, մեկնաբանելով գործեր Սեզար Ֆրանքէ եւ Լիսթէ: Արուեստագէտը ծնած է Աղեքսանդրիա. երաժշտական ուսումը առած է Գերմանիա եւ Զուիցերիա. ներկայիս հաստատուած է Միացեալ - Նահանգներ:

×

ԹԵՀՐԱՆԻ «Արարատ» կազմակերպութեան «Կոմիտաս» սրահին մէջ, Յունուար 9-ին, տեղի ունեցած է Սեւան երգչախումբի համերգը: Ցայտագրի առաջին բաժնին մեկնաբանուած են Կոմիտասէն, կարա Մուրզայէն եւ Էդ. Ցովհաննիսեանէն երգեր, երկրորդ բաժնին «Անոյշ», «Դաւիթ Բէկ» եւ օտար օփերաներէ հատուածներ: Երգչախումբի ղեկավարն է Գուրգէն Մովսիսեան. դաշնակով ընկերացած է Գագիկ Բարայեան: Համերգը, նոյն յայտագրով, հինգ անգամ կրկնուած է յաջորդող օրերուն:

×

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ մէջ Դեկտեմբեր 27 -29, հանդէս եկած է Թեհրանի Հայ Կին Միութեան կողքին «Արմենուհի» Միութեան «Նազանք» պարախումբը, մեկնաբանելով հայկական ժողովրդական եւ ազգագրական պարեր:

ստեփանոս նաճարեանի

ԲԱՐսեղ ԿԱՆԱՉԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Ուրբաթ, Դեկտեմբեր 27-ին Հալէպ արժանաւոր չուքով ոճնեց հայ ժողովուրդի տաղանդաւոր զաւակներէն՝ երգահան - խմբավար՝ Բարսեղ Կանաչեանի ծննդեան 100-ամեակը: Հանդիսութիւնը կազմակերպուած էր Համազգայինի կողմէ եւ կը վայելէր Բերիոյ Թեմի Հայոց առաջնորդ՝ Սուրէն Արք. Գաթարոյեանի հովանաւորութիւնը: Ցոբելենական երեկոյթը տեղի ունեցաւ Հ. Բ. Ը. Մ.ի սրահին մէջ, ներկայութեամբ Բարսեղ Կանաչեանի աղջկան Տիկին Սեդա Թիւթիւճեանի եւ աւելի քան՝ 500 հրաւիրեալներու:

Յարղանքի քանի մը խօսքերով հանդէսը բացաւ Տիկին Անժէլ Պօչիկէզկեան, անդրադառնալով Կանաչեանի բերած նպաստին հայ երաժշտութեան բարգաւաճման մէջ:

Նախ եղերգ ունեցաւ «Զուարթնոց» քառաձայն երգչախումբը, Պօղոս Ապաճեանի ղեկավարութեամբ, մեկնաբանելով Կանաչեանի «Նանօր»ը, ժողովրդական երգերու վրայ հիմնուած տրամադրիկ ընդարձակ երաժշտական պատկեր մը, որ մեզ կը տանի Տարօնի աշխարհը, Մուշ ու Ս. Կարապետ վանքը: Արդարեւ, երգչախմբային զանազան ձայները՝ չաղկապուած ու միաձուլուած, կը պատկերեն մեծ ու փոքր խումբերով ուխտաւորներու չարքեր, որոնք ապաւինած մեծ սուրբին անեզրական բարութեան, ճամբայ կ'ինկած են հասնելու համար Ս. Կարապետի լայնանիստ տաճարին: Բնաբաւառի խանդավառ աւանդութիւններով ու հարուստ յիշատակութիւններով լի ուխտագնացութիւնը կը չարունակուի երկար, հեռաւոր փախաքներու սիրակարօտ տենչերովը յուսավառ, մինչեւ որ ստեղծուի եթերային ասուպ մը, ու Ս. Կարապետի դիւրեայրին խաղաղութիւնը տարածուի բոլորին վրայ:

«Նանօր»էն եւք, երգչախումբը հանրութեան հրամցուց «Գորանի»ն, Տարօնի աշխարհէն քաղուած երկու տարբեր երգերու չաղկապումը եղող գործ մը, որ հոգեվիճակն է ցանուած հողէն բերք չբսաց հողագործի մը: Հուսկ՝ «Սօսի»ն (մեներգող՝ Շուշիկ վարդապետեան) եւ «Ինձոյք»ը, զոր մեներգեց Լուսին Պէրպէրեան:

Երգչախմբային եղերգի աւարտին, հանդէսավար՝ Հրանդ Գէորգեան պատմեց հետաքրքրական յուշ մը, 1930-ին Կանաչեանի հետ ունեցած իր հանդիպումներէն, որուն աշակերտած է ինք 50 տարիներ առաջ, Կիպրոսի Մելգոնեան կրթ. հաստատութեան մէջ: Ապա, Պ. Հրանդ Գէորգեան եւ Օր. Թագի Քէհեայեան միասնաբար ներկաներուն հրամցուցին դաշնամուրային քառաձեռն կատարում մը՝ «զանգակներու պարը»:

Տիկին Արաքս Զէքիճեան, շրջանային Երեւանի Կոմիտաս երաժշտանոցէն, մեներգեց Կանաչեանէն երկու երգեր՝ «Օրօր» եւ «Ցայդերգ», դաշնակի ընկերակցութեամբ՝ Տիկին Մարուշ Եըմեանի:

Օրուան բանախօսը՝ Պ. Գէորգ Գանտահարեան, յատկապէս այս առիթով հրաւիրուած Պէյրութէն, ներկայացուց յոբելեարի մեծարժէք գործի սքանչելի դէրը: Անդրադառնալէ եւք Կանաչեանի թատերական կեանքին՝ Ռուսոսթոյէն Պոլիս, Պուլկարիա եւ Փարիզ, Պ. Գանտահարեան յիշեց, թէ Բարսեղ Կանաչեան առաջին տեղը կը գրաւէ Կոմիտասի հինգ սաներուն մէջ, թէ՛ երաժշտական մարզին մէջ իր ցուցաբերած յարատեւ աշխատանքով, թէ՛ իր ձգած արժէքաւոր յօրինումներով: Առաւել եւս, ան է, որ մեր երգերը հասցուց կառուցողական վերելքի: Հուսկ, յիշելէ եւք, թէ 40 տարիներ առաջ Կանաչեան իր առաջին համերգը կուտար Հալէպի մէջ, այսօր դարձեալ Հալէպ կը մեծարէ իր արժանաւոր զաւակը:

Հանդիսութեան վարման խօսքը կատարեց թեմակալ առաջնորդ Սուրէն Արք. Գաթարոյեան, որ Բարսեղ Կանաչեանի նուիրուած այս ձեռնարկը նկատեց հայ առհմիկ երգարուեստի պանծացման քաքանչելի առիթ մը, ապա անդրադառնալէ եւք մեծարեալի աղջկան՝ Տիկին Սեդա Թիւթիւճեանի ներկայութեան, դրուատիքը ըրաւ հայ ժողովրդական երգին ու զայն մշակող Բարսեղ Կանաչեանին:

Լ. ՇԱՒՈՑԵԱՆ

(Շար· Ա· էջէն)

terrorisme absurde et condamnable de groupements arméniens responsables,entre 1973 et 1985, de la mort violente de 54 personnes innocentes, des blessures causées à 205 personnes et de 68 attentats à la bombe;

1. s'associe aux conclusions du rapport de la «sous-commission de la lutte contre les mesures discriminatoires et de la protection des minorités» des Nations Unies, en particulier pour ce qui a trait au génocide arménien tel qu'il est mentionné au paragraphe 24 de ce rapport;

2. invite le Conseil des ministres se réunissant dans le cadre de la coopération politique à reconnaître comme génocide le préjudice historique causé en 1915 à la population arménienne par le régime des Jeunes-Turcs, afin que le rapport de la «sous commission de la lutte contre les mesures discriminatoires et de la protection des minorités» des Nations Unies, y compris son paragraphe 24, soit adopté par la«commission des droits de l'homme» des Nations Unies, dans l'espoir que cette adoption ouvre la voie à un dialogue pacifique entre le gouvernement turc et les délégués représentatifs du peuple arménien;

3. s'élève avec fermeté contre tous les actes de violence et de terrorisme commis par des groupes arméniens;

4. charge son Président de transmettre la présente résolution à l'Organisation des Nations Unies, au Conseil et au gouvernement turc.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պօմոնի Ս· Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ թաղականութիւնը շնորհակալու - թեամբ առացած է· -

Ստեփան Արզումանեանի *մահուան առթիւ· - Ոմն՝* 50 *Ֆ·, Օր· Քէսթէլեան* 100 :

Տաճատ Շալճեանի *մահուան առթիւ· - Շաքարեան ընտանիք, Մանոյեան ընտանիքներ, Տէր եւ Տիկին Վրոյր Շալճեան, Զաքարեան ընտ·, Տիկին Հերմինէ Միքէրճեան - Շալճեան* 200-*ական Ֆ·, Ֆրէտերիք Շալճեան եւ Օր· Քաթրին* 500 *Ֆ·, Տէր եւ Տիկին Սերժ Խուպիկեան* 300 *Ֆ·, Տէր եւ Տիկին Ղազարոս Խուպիկեան* 200, *Տէր եւ Տիկին Տէր - Պօղոսեան, Տէր եւ Տիկին Տէր - Զաքարեան, Սէմերճեան եղբ·, Վասպուրական Հայր· Միութիւն* 100*ական Ֆ·, Մաշոյեան ընտանիք* 50 *Ֆ·:*

Հայկ· Օրթագպարակէօզեանի *մահուան առթիւ, փոխան ծաղիկի, Մինաս Իսքէնտէրեան, Նուրեան ընտանիք, Ժամկոչեան ընտանիք* 100-*ական Ֆ·, Գալուստեան ընտանիք* 200 *Ֆ·, Գալչնաէրեան* 50 *Ֆ·:*

Այրի Տիկին Աճէմեանի *մահուան առթիւ· - Մաղաքեան, Տիկին Նատիա, Տիկին Սոնիա* 100-*ական Ֆ·:*

ՄԱՐՍԷՅԼ· -

Տէր եւ Տիկին Յակոբ Վարժապետեան եւ զաւակները,

Տիկին Մաթիլդա Լօէշ - Վարժապետեան եւ զաւակը,

ինչպէս նաեւ Կիւրճիկեան, Կիւմիւշեան, Մեսարեան, Շիրինեան, Գալայճեան, Տէմիրճեան եւ Գոլանճեան ընտանիքները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց հօր, պճեծ - հօր, աներհօր, եղբօր, քեռայրին եւ ազգականին՝

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Յունուար 22-*ին,* 81 *տարեկանին :*

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Ուրբաթ, Յունուար 24, *ժամը* 10-*ին Մաքսէյլի Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցին,* 339 *ավրնիւ տիւ Փրատօ :*

Ընտանիքը ցաւակցական այցելութիւն չընդունիր :

×

Այս մխուր առթիւ Տէր եւ Տիկին Յակոբ Վարժապետեան 500-*ական Ֆ· կը նուիրեն «Ծառայ»ի եւ «Աչխարհ»ի :*

ՅԻՇԱՏԱԿԻ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կիրակի օր, Յունուար 26, *Բ· Կիրակի Զկնի Ծննդեան :*

Այսօր, յաւարտ պատարագի, մանաւոր հոգեհանդիստ կը կատարուի Փարիզի Ս· Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ, ի յիշատակ հոգւոյն զուիցերիացի հայասէր հոգեւորականի՝

ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ

ՓՐԱՖԹ ՊՈՆԱՐԻ

որ Մեծ Եղեռնի հետեւանքով որբացած մեր զաւակները հաւաքեց ու անոնց որպէս հայր՝ պաշտպան, դաստիարակ եւ օգնական եղաւ :

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Շաւիլի մասնաճիւղը ցաւակցութիւնները կը յայտնէ ընկերուհի Լուիզ Գարաօղլանեանի եւ ընտանիքին իրենց եղբօր՝ Պ· Թաշճեանի մահուան առթիւ, ընկերուհի՝ Սապաթիէեանի եւ ընտանիքին, իրենց հօր՝ Պ· Պարսըղոյի մահուան առթիւ, եւ ընկերուհի՝ Վարդուհի Փիլիկեանի իր հօր մահուան առթիւ :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ· ԽԱՉԻ Վիէնի մասնաճիւղի վարչութիւնը ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները՝ Յունուար 26, *Կիրակի, կէսօրէ վերջ ժամը* 14·30-*ին Մշակոյթի Տուն :* 9 *ռիւ տիւ Սիռֆ :*

Օրա-կարգ· - Տեղեկատուութիւն եւ պատգամաւորի ընտրութիւն :

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ՝ ՄԱՐՍԷՅԼ

Ձ Ա Շ Ա Ր Ա Ն
-ՇԻՐԱԶ-

RESTAURANT
LE CHIRAZ
SPÉCIALITÉS ARMÉNIENNES

Ouvert tous les jours
midi et soir, sauf le dimanche

52, rue Edmond-Rostand
13006 MARSEILLE Tél : 91. 37. 78. 36

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՒԻՐ

Դպրոցասէր Տիկնանց Ընկերակցութեան տարեկան ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Յունուար 25, *ժամը* 15-*ին, Ժան - Կուժոնի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ սրահին մէջ, Փարիզ* 8-*րդ :*

Օրակարգ· -

Ա· - Հաշիւներու քննարկում եւ վաւերացում :

Բ· - Գնահատում բարոյական գործունէութեան :

Գ· - Վաւերացում ելմտական տեղեկագրի :

Դ· - Ապագայի հեռանկարներ :

Ե· - Զանազանք :

Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի :

ԼՈՒՑՍ ՏԵՍԱՐ

ՊԱՐԱՊ ԷՋԵՐ

Հեղինակ՝

ԱՒԼԻԷՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Ծաղկաթաղ «Ծառայ»ի մէջ լոյս տեսած յօդուածներու

Աւլէն Փափազեանի յիշատակին նուիրուած այս հատորը սիրով կը տրամադրուի բոլոր անոնց՝ որոնք զինքը ճանչցած ու սիրած են կամ պիտի ուզէին ծանօթանալ իրեն այս էջերով :

Սահմանափակ տպաքանակ

Փափազողները կրնան անձամբ դիմել «Ծառայ»ի խմբագրատունը կամ Հրանտ Սամուէլեան գրատունը :

— THEATRE ARMENIEN —

Salle Rossini
Hôtel de Ville — 6, rue Drouot — 75009 PARIS

TIMAG
La Troupe Théâtrale de Hamaskaïne
présente

«GORDZANVADZE»

Pièce en quatre actes de CHIRVANZADE

Dimanche :
23 Février à 15h45 - levée du rideau à 16h

Lundi :
24 Février à 20h45 - levée du rideau à 21h

Pour tous renseignements: Tél:42-37-60-10

Irma fourrures

SUR MESURE
— REPARATIONS —
TRANSFORMATIONS

Ժամ առաջ զննեցէք ձեր մուշակի վերաբերեալ վստահելով՝

ՀԱՅԿ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ

ԶԱՓԻ ՎՐԱՁ - ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

ԲԱՑ Է ԱՄԷՆ ՕՐ
ԲԱՑԻ ԿԻՐԱԿԻ

44, avenue du Général de Gaulle
94700 Maisons-Alfort
tél. : 43 - 68 - 55 - 99
(Métro: École Vétérinaire-Alfort (direction CRÉTEIL)

ԿԱՊՈՑՏ ԽԱՉ

Ֆր· Կապոյտ Խաչի պատգամաւորական ժողովը տեղի կ'ունենայ Փարիզ, Շաբաթ եւ Կիրակի, Փետրուար 1 *եւ* 2 :

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՓԵՏՐ. 23

Մանրամասնութիւններ՝ յետագային :

4.000 m² de mobiliers
présentés en ambiance

Meubles
Ghazarian
Z.I. Vitrolles
à 20km de Marseille
tél. 42. 89.27.47



"Բացուն ենք զեղչ «Ծառայ»ի բաժանորդներուն"

CONCERT A L'OPERA DE MARSEILLE
Samedi 25 Janvier à 20 heures 45
par
SIPAN-KOMITAS
(Chœur mixte Arménien de Paris)
et
l'ORCHESTRE PHILHARMONIQUE DE MARSEILLE
Direction
GARBIS APRIKIAN
avec le concours de
SONIA NIGOGHOSSIAN (Mezzo-Soprano)
« Solistes de Chœur »
Thérèse DEYRMENDJIAN (Alto)
Meguerditch BOGHOSSIAN (Tenor)
René MARTAYAN (Tenor)

Au programme les œuvres de
K. ALEMSHAH, P. GANATCHIAN, G. APRIKIAN, A. TIGRANIAN
Concert organisé par la Croix Bleue des Arméniens de France
— MARSEILLE VILLE —
PERMANENCE
Maison de la Jeunesse et de la Culture Arménienne
12 - 14, rue Saint Bazile — 13001 MARSEILLE
LUNDI - VENDREDI de 17h00 à 19h30 — JEUDI de 15h00 à 19h30
TELEPHONE : 91 50 15 09
Et à partir du 20 Janvier location Opéra de Marseille

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
25-26
SAMEDI-DIMANCHE
25-26 JANVIER
1986
LE NUMERO : 3,00 F

ՀԱՐԱՁ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.146
Fondateur: SCHAVARCH MISSAKIAN
61e ANNÉE — No 16.146

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱԿՆԱԾԱՆՔՈՎ

(Ի ՅՈՒՇ Շ. ՄԻՍԱՔԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ 29ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ)

- 1957, ՅՈՒՆՈՒԱՐ 26 -

Այսօր, մենք կը նշենք, երախտապիտութեամբ եւ ակնածանքով Շաւարշ Միսաքեանի մահուան 29-րդ տարելիցը:

«Մենք»ը Ֆրանսայի Հայութիւնն է:

Արդարեւ, Սփիւռքի մէջ, եզակի երեւոյթ մըն է տեսնել թէ որքան անձ մը իր կնիքը դրոշմած է գաղութի մը վրայ: Այո, Շաւարշ Միսաքեան գաղութ կազմեց: Տարագիր, մոլորած, խոցելի բազմութիւնները վերածեց կազմակերպուած հաւաքականութեան: Եղաւ մեր նորագոյն պատմութեան ճակատագրական մէկ շրջանին՝ գաղութի մը մեծ նաւավարը: Գիտցաւ խօսիլ: Սիրտեր ու հոգիներ ջերմացնել, խանդավառել: Ամբոխներ առաջնորդել: Հայուն հաւատքը վերարծարծել, ինքնավստահութիւն ներշնչել: Եւ մանաւանդ Հայուն սորվեցնել՝ տոկալ բայց լծորդել:

Անցեալի դասերով զրահուած, ապիմաստ օրուան մտահոգութիւններն ու հրամայականները, եւ ողջմտութեամբ, անաչառութեամբ, պայծառատեսութեամբ պատրաստեց վաղուան կառոյցը: Շաւարշ Միսաքեան կորսուած տարրերով սերունդ ստեղծեց: Իր դպրոցը բացաւ: Փնտռեց կոչումները: Քաջալերեց երիտասարդ տաղանդներ: Ուսուցանեց: Եւ այդպէս, քանի ու քանի վաւերական դրչէներ իրեն մկրտարան ունեցան «Ցառաջ»ը: Քանի - քանիներ «Ցառաջ»ով միայն արտայայտեցին իրենց ապրումները: Իսկ անթիւ է բանակը բոլոր անոնց որոնք «Ցառաջ»ը գործածեցին նախ որպէս դասագիրք:

Ի՞նչպէս երախտապարտ չըլլալ անոր որ գուրգուրաց հայութեան համբանքին վրայ: Ամէն ճակատի վրայ պայքար մղեց պահելու, պաշտպանելու եւ արժեւորելու համար համբանքը: Եւ համբանքը իր մտքին մէջ հայապահպանում էր, ընսփիւռք էր, Ֆրանսայի Հայութիւն էր:

Ի՞նչպէս ակնածանքով չմօտենալ անոր որուն կեանքը եղաւ պարզութեան յաղթանակը: Շաւարշ Միսաքեան, նկարագրով պարզ եւ հաղորդական, երբեք չգոռոզեց, այլ համոզեց: Մնաց ողջմիտ եւ անաչառ: Իր հանրային մարդու, կուսակցական զեկավարի, խմբագրի արտայայտութիւններուն մէջ չափի եւ հաւասարակշռութեան զգացումը միշտ տիրապետեց: Հաւաքական չահերը դասեց ամէն բանէ վեր: Չվհատեց նպատակ եւ միջոց:

Արդ, Սփիւռքի մէջ, չկայ գաղութ մը որ այնքան երախտապարտ ըլլայ մէկու մը որքան Ֆրանսայի Հայութիւնը Շաւարշ Միսաքեանին: Ֆրանսայի Հայութեան ժամանակակից պատմութիւնը կարելի չէ գրել ու երեւակայել առանց իր չունչին, առանց իր գլխագիր Շ.-ին: Երէկուան իր կարճ եւ յստակ խօսքերը նաեւ այսօրուանն են: Կը պահեն իրենց ամբողջ այժմէականութիւնը, որովհետեւ Շաւարշ Միսաքեան ոգեշնչաւ եւ համակ կեանք մը նուիրեց վաղուան Հայը պատրաստելու համար:

Կ. Ց.

ԻՐ ԽՕՍՔԸ

Մխիթար Սեբաստացի

... Ո՞ւր հասած կ'ըլլար հայկական մշակոյթը, եթէ Սեբաստացի Մխիթարը վենետիկ չհետեւէր 1717-ին, խումբ մը աշակերտներով: Դառնութեամբ թօթվելով Պոլսոյ փոշին:

Պիտի ունենայի՞նք այսքան մտաւոր գանձ ու վաստակ եւ ժառանգութիւն – մինչեւ անգամ գաղափար հայկական մշակոյթի հարըստութեանց մասին – առանց Մխիթարեան միաբանութեան:

Համեստ վանական, Մխիթար կ'որոճար, կը գործէր տեսակ մը մարգարէական ներշնչումով: Իբրեւ նոր առաքեալ:

Կրօնական չերմեռանութեան հետ, մշակոյթի սէրը կը խոռվէր իր միտքը:

Հոգեւոր տաճարէն դուրս, մտքի տաճար մը կ'երազէր ան: Եւ առաջին հոգն եղաւ հարթել արդի աշխարհաբարի ճամբան:

Իր հայկազեան բառարանն ու քերականութիւնը մինչեւ այսօր ալ կը մնան թանկագին վաւերագիրներ, հում նիւթեր՝ լեզուի գարգացման ճամբուն վրայ:

Իր հաստատած Միաբանութիւնը, թէեւ երկնիւղ, միշտ մնաց պատնէշին վրայ:

Ամբողջ սերունդներ նուիրուեցան պատմական, բնական, բանասիրական, գիտական եւ գրական բեղուն գործունէութեան մը:

Աչքի եւ մտքի հիւթեր համուեցան, երակներու արիւնը պարպուեցաւ դեղնած, փոշոտած թուղթերու վրայ:

Գիշերաչաւ տճնութիւններ եւ անխոնջ պրպտումներ՝ այս կամ այն վանքին, դիւանատան նկուղներուն մէջ, տաղարանի մը կամ ձեռագրի մը գաղտնիքները կորզելու համար:

Թափառումներ՝ իրական աւերակներու մէջ, ի սփիւռս Հայաստան աշխարհի: Ու նաեւ երեւակայութեան թռիչքներ՝ աշխարհագրութեան եւ պատմութեան արահետներուն վրայ: «Ցուշիկք հայրենեաց»:

Եւ իրական ստեղծագործութիւններ՝ բանասիրական – պատմական խրթին ուսումնասիրութեանց հետ:

Սովորական անուններ չեն Հիւրմիւզները, Այտընեանները, Ալիշանները: Զամչեանն ու Դաթրեանը, Տաշեանն ու Ակինեան, Հացունին եւ Ղազիկեանը: Բագրատունի՞ն:

Եւ ահաւասիկ յաջորդական աւերունդներ, որոնք ջահը ամուր բռնած՝ անընդհատ կը շարունակեն վարուցանը:

Հարկ է ետ երթալ երկու հարիւր, նոյնիսկ հարիւր տարի առաջ, ըմբռնելու համար կատարուած աշխատանքին ծաւալը եւ խորութիւնը: Իրաւամբ արժանի՝ ընդհանուր երախտագիտութեան:

Շ.

1949, Ապրիլ 30

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

ՊՐԻՍԷԼԻ ՆԻՍՏԷՆ ԵՏՔ

ԹՈՒՐՔԵՐԸ ԼԱՒԱՏԵՍ...

Երէկ, լայնօրէն արձագանգած էին Եւրոպայի խորհրդարանին ֆաղաքական յանձնախումբին նիստին եւ այն եզրակացութեան որու յանգած էին ժողովականները՝ տեղեկագրին աւելցնել խորհրդային Հայաստանի եւ Իրանի Հայերու պարագան: Ի դէպ, ոչ մէկ կապ կայ, անշուշտ, ցեղասպանութեան, հայկական հարցին եւ Հայաստանի ու Պարսկաստանի Հայերու կացութեան միջեւ, բայց հետապնդուած նպատակը եւ լարուած թափարդը շատ բացայայտ են եւ կը բաւեն, որպէսզի Թուրքերը լաւատես ըլլան տեղեկագրին ապագային կապակցութեամբ..

×

Յունուար 24-ի Թուրք մամուլը ընդհանրապէս կը գոհանայ տալով պարզապէս վանահմէօլպրուքի տեղեկագրին քաղաքական յանձնախումբին մէջ քուէարկուած մին արդիւնքը. կ'ըսուի թէ տեղեկագրին վրայ պիտի աւելցուին Հայաստանի եւ Պարսկաստանի Հայերու կացութեան մասին բաժիններ եւս, եւայլն:

«Թէրճիւման» (Յունուար 24) կ'աւելցընէ թէ այս որոշումը արդիւնք է Թուրքիոյ կողմէ կատարուած ֆոլիսայինն աշխատանքներուն: Հոն կ'ըսուի, թէ Նորհ. Մխիթեան Հայերու վիճակին խնդրոյ առարկայ դարձուիլը նեղ կացութեան պիտի մատնէ համայնավարներն ու ընկերվարականները: Այսպէսով կը զօրանայ տեղեկագրին մերժուելու հաւանականութիւնը, քանի որ համայնավարներն ու ընկերվարականները առարկութիւններ պիտի ընեն Նորհ. Մխիթեան դէմ արտայայտուած աննպաստ կարծիքներու առթիւ:

Վանահմէօլպրուք նիստէն ետք ըսած է. «Քանի մը էջ պիտի աւելցնեմ տեղեկագրիս վրայ ու տեսակցիմ Թուսերու հետ. կրնամ աշխատանքս վերջացնել Փետրուարի նիստին համար»:

Քաղաքային դէտեր ըսած են, թէ «Վանահմէօլպրուք Հայերու ազդեցութեան ենթարկուելով նեռեց - բռնեց Թուրքիոյ դէմ. չի կրնար նոյն բանը ընել Թուսերուն: Եւրոպայի Նորհրդարանին համայնավարները քուէ չեն տար Թուսիոյ դէմ տեղեկագրի մը. իսկ ընկերվարականները կը վարանին. այս տեղեկագրին վախճանը յայտնի է»:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀՈՊԼԻՑԿԱ, քրիստոնեայ այն քաղաքագէտին դէկավարը, որ առարկած էր Դամասկոսի երբեակ համաձայնագիրը, բայց պարտուած ճեմայէլի ուժերէն չուներ փարիզ առած էր, Դամասկոսի ճամբան բռնեց, ուրկէ կը յուսայ Պէյրութ անցնել: Հոպլիցկա տեսնուած է Սուրիոյ փոխ - նախագահին հետ, ինչպէս նաեւ ճումպլաթի եւ Պէրրիի: Պիտի ջանայ Պէյրութ անցնել ճեմայէլի դէմ քրիստոնեայ չարժումի մը գլուխն անցնելու համար: Տեղւոյն վրայ, Լիբանան, հրացանաճգութիւնը կը չարունակուի: Մթնոլորտն ալ չատ լարուած է եւ նոր ծանր դէպքերու սարսափը կը տիրէ ամէն կողմ:

ԺԱՔ ԼԱՆԿ փլաս ատ Վոժի իր գեղեցիկ յարկաբաժինէն պատասխանեց «Հարցումներուն» (հետաքրքիր Ա. կայան), նախ խոհանոցը ընդունելով լրագրողները, քանի Մշակոյթի նախաբարը լաւ ճաշեր պատրաստող վարպետ մըն է: Ընկերվարական վարչակարգի ամէնէն ժողովրդական նախաբարը, թէեւ կէս - բերան, բայց հասկցուց թէ Պերլուսքոնիի 5-րդ կայանը չատ չի խանդավառեր զինքը, սպասենք՝ ապա դատենք ըսաւ, խուսափելով իր բուն զգացումները արտայայտել: Յայտնեց թէ չատ մօտ ապագայի (ժամի հարց է, ըսաւ Հինգշաբթի իրիկուն) պիտի բանի 6-րդ - երաժչտական - կայանը: Ժաք Լանկ այնքան ճախաւեր կը գտնէ աջին (Շիրաք - Լըքանիւէ) քաղաքական ծրագիրը, որ որոշած է լայն քարոզչութեան մը ձեռնարկել, որպէսզի ամէն Ֆրանսացի անպայման կարդայ:

ՌՈՔԱՐ քաղաքական չահեկան վերլուծումով մը («Մոնտ», Յունուար 24), կը ճաղկէ ընդդիմութեան քաղաքական ծրագիրը հաստատելու համար որ «ազատականութիւնը ժամանակավրէպ է»:

ՍԱՒՕՐՈՎԻ կինը, որ կամբոմի (փոնթաժ) գործողութեան մը ենթարկուած էր Պոսթընի հիւանդանոցը, կրկին հիւանդանոց փոխադրուեցաւ կարգ մը բարդութիւններու պատճառաւ: Էլէնա Պոնէր, որ Ալիխանեանի աղջիկն է, Ամերիկա էր գացած սրտի քննութեան համար:

ԱՊՈՒ ՆԻՏԱԼԻ դէմ ձերբակալման միջազգային հրամանագիր հանեց Իտալիոյ դատական իշխանութիւնը: Հետեւանք կը նկատուի այն քննութեան որ կը վերաբերի Հոմո - Ֆիումիչինօ օդակայանի ոճրափորձին (Դեկտեմբեր 27):

ԱՄՐԱՆ պատահած ծանր արկածներու պատճառաւ (84 մեռեալ, 314 վիրաւոր) Ֆրանսական երկաթուղիի տնօրէնութիւնը հակարկած ծրագիրը մը մէջտեղ դրած է, որպէսզի նման դէպքեր չկրկնուին:

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՄԻՆԻ մէջ, բախումնե - րու հետեւանքով, մեռեալներու թիւը 11 հազար է, իսկ նիւթական վնասները չորս միլիառ տոլար կը հաշուուի: Ֆրանսական դեսպանատան բոլոր անդամները կրցած են մեկնիլ:

ՖՐԱՆՍԱԳԻՐ ՊՐԱԻԴԱ. աննախընթաց յաջողութիւն արձանագրեց Ֆրանսա: 100 հազար օրինակ հացի պէս ծախուած են եւ բոլորին գոհացում չէ տրուած...:

Ի ՅՈՒՇ ԻՐ ՄԱՀՈՒԱՆ 29-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ

ՇՐՋԱՆ ՄԸ ԻՐ ՅՈՅՋԵՐՈՎ ԵՒ ՏԵՆԴԵՐՈՎ

(«Ազդակ» երիտասարդ շաբաթաթերը)

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

... Երկար տեւած էին վիճաբանութիւնները՝ անունի, համապրութեան եւ ուղղութեան մասին: Վիճողներէն մէկն էր ողբացեալ Դեւը (Թադէոս Պաշմանեան) որ Թիֆլիսէն Պոլիս եկած էր լրջիւ թըղթակից Կովկասեան թերթերու: Բնիկ Սեբաստացի եւ աշակերտ Ղալաթիոյ նախակրթարանին, 1895 - 96-ի ջարդերէն վերջ Կովկաս զացած եւ բոլորովին փոխուած էր: Համբաւ կը վայելէր լրջիւ կրակոտ հոգեոր, մանաւանդ ռուսերէն տեղեակ խօսուածքի համար:

Դեւը լրջիւ անուն կ'առաջարկէր «Կռան» որ քիչ մը խորթ երեւցաւ մեզի: Ես դէմ մը անուններ չարեցի եւ կարծեմ կանգ առի «Մուրճ»ին վրայ: «Ազդակ»ը Գեղամին դիւան էր, - բառ մը զոր չէի սիրած, իմաստն ալ ազէկ չհասկնալով: Ի վերջոյ համաձայնեցանք:

Եւ արդէն պատրաստ էր ճակատը - Շաբաթաթերթ գրական, հասարակական, քաղաքական: Համակրողներ՝ Է. Ակնունի, Ա. Ահարոնեան, Ա. Եարճանեան, Ռ. Զարդարեան, Մ. Զաւարեան, Ց. Շահրիկեան, Փիէռ Քիւրեան: Խմբագիրներ՝ Գ. Բարսեղեան, Տիկին Զապէլ Եսայեան, Վ. Թաթուլ, Շ. Միսաքեան: 1908 Դեկտեմբեր 16 - 29: Ա. տարի, թիւ 1:

Խմբագրութեան համար, երեք համաձայն էինք արդէն - Գեղամ Բարսեղեան, Վ. Թաթուլ եւ ես: Զապէլ Եսայեանը առաջարկեցինք իրրեւ ծանօթ գրագիտուհի, թէեւ մեր սերունդին չէր պատկաներ ո՛չ զաւանդով, ո՛չ ալ խառնուածքով: «Համակրողներ»ու չքախումբն ալ չարած էինք հետեւողութեամբ եւրոպական թերթերու, գոյն եւ ուժ տալու համար մեր չարժումին: Չէ՞ որ անծանօթ «պլան - պէք»ներ էինք:

Ո՛չ որեւէ վճարում կար, ո՛չ ալ աթոռ: Այս վերջինը տատապէս: Իրրեւ խմբագրատուն պիտի ծառայէին «Արծիւ» ժողովրդական գրավաճառանոցը, որ փողոցէն կը բաժնուէր սեմով մը եւ խեղճուկրակ տպարան մը, ուր, ի հարկին, աթոռ մը կը ճարէին գրաշարին քով, ձեռագիր հասցնելու կամ փորձ սրբագրելու համար մարմարին վրայ:

Ուղղութի՞ւնը, - առաջին թիւին համար, երկար որոճալէ, դրել - աւրելէ, յօտել - յղկելէ վերջ հրատարակուեցաւ ճախրասլաց յայտարարութիւն մը, որմէ քանի մը հատուածներ կ'արտագրեմ ատրեւ իրրեւ նմոյշ լեզուի եւ դաւանանքի: Իրրեւ ժամանակի նշան.

- «Ցեղափոխութիւնը մեր եաին, եւ Ցեղափոխութիւնը մեր առջեւ:

«Ահաւոր, դիւցազնական ու կարմիր Ցեղափոխութիւնը Երկի՝ որու միլոգին երիտասարդութիւնը իր թանկագին ուժին լիութեանը մէջ այնքան գեղեցիկ ու այնքան պատմական դեր մը ունեցաւ եւ տարբեր միլոգներով, տարբեր պայմաններու տակ, անխուսափելի Ցեղափոխութիւնը վազուան, որու ընթացքին կը հաւատանք դարձեալ թէ Երիտասարդութեան վիճակուած է իր գործը չարունակել:

... «Այո՛, դէպի Աշխատանք, դէպի իսկական Վերածնունդ:

«Այո՛, եւ դարձեալ Երիտասարդութիւնը՝ իր առոյգ եւ աշալիր կանքով, յաւիտենական զաղափարին կարմիր դրօշակն ի ձեռին:

... «Առանց յաւակնութիւնն ունենալու՝ դերազանց յանձնառութիւններու գործադրումին, «Ազդակ» պիտի ըլլայ մէկ չեզոր նոյնազգաց, նոյնախոհ Երիտասարդութեան մը, օրկան մը որ պիտի ուզէ Նոր Օրերու մուտքին առջեւ լսուղ ձայներու եւ ազմուկներու զանազանութեան մէջ Երիտասարդ Ժողքը հնչեցնել», եւայլն:

Նոյն թիւին մէջ բաժիններն ալ ճշդուած էին: Մէկ խօսքով «Ազդակ»ը պիտի դառնար օրկան մը «Պայքարի եւ Գրականութեան», համաձայն չարաթաթերթի մը պայմաններուն:

Հակառակ այս եւ ուրիշ բոցավառ ու ճոռոմաբան արտայայտութեանց, «Ազդակ» իր առաջին քայլերը նետեց տոտիկ - տոտիկ, աստիճանաբար փրփրելու եւ կրակ տեղալու համար:

Անդրանիկ թիւը եղաւ ժպտուն ծագկումունջ մը զանազան յօդուածներու, առաջինը՝ Փիէռ Քիւրեան, որ Օսմանեան Սահմանադրութեան հռչակման առթիւ Պոլիս եկած էր (Հայ երիտասարդութեան, Ֆրանսերէն եւ հայերէն դէմ դիմաց): Երկրորդը՝ (Միութիւն)՝ Պէկէրխանպատ՝ Ահմէտ Սիւրէյա պէյի առորագրութեամբ: Արտատպում մը՝ է. Ակնունիէ (Փրօ Արմենիա): Մնացեալ բովանդակութիւնը կազմած էին խմբագիրները. - բանաստեղծութիւն, գրախօսական, թատրոն, ընկերային չարժում, քաղաքական կեանք եւայլն 16 էջ:

Անողոք իրականութիւնը լախաի պէս կը ճնշէր խմբագրութեան վրայ: Թէեւ չաբաթաթերթ, «Ազդակ» ստիպուած էր օրագրի մը դերն ալ կատարել, հանրային կարծիք վարել, քանի որ չկար ուրիշ օրկան՝ միեւնոյն հասկացողութեամբ: Ուրեմն բոլոր թիւերուն մէջ կը տիրապետէր հանրային - քաղաքական մտահոգութիւնը: Մանաւանդ որ, դեռ նոր կը կազմաւորուէր սահմանադրական կարգուսարքը, ազգային թէ պետական կեանքի մէջ: Պէտք էր հետեւիլ, վերլուծել, գարնել կամ ոգի ներշնչել:

Իրրեւ անաբոյս, նորափետուր ընկերվարականներ, չատ կը վախնայինք որ յանցանք մը գործած կ'ըլլանք, եթէ բան մը վախցնենք ընկերային չարժումէն, կամ անոր հակառակ բան մը ապենք:

... Ո՛րքան թղթակցութիւններ, ինքնագիր եւ թարգմանածոյ յօդուածներ ու ոտանաւորներ՝ ընկերվարութեան, նոյնիսկ անիշխանական եւ առհասարակ ընկերային չարժումներու մասին (Կրապոտկին, Բակունին, Ժան Կռաւ): Մինչեւ անգամ հայերէնի թարգմաններ էինք «Ինթէրնասիոնալ»ը - Աչխատամարտի Երգը, Մայիս 1-ի առթիւ:

... Առ հասարակ թարմութիւն, ոգի եւ ըմբոստ գիծ մը կը փնտռէինք թարգմանութեանց մէջ անգամ: Առոր համար ալ, նախապատուութիւն կուտայինք բանտինուեան, այլ մանաւանդ ռուսական դրականութեան, - այս վերջինը իմ նախասիրութիւնս էր. - Կորքի, Զեխով, Անտրեյեւ եւայլն: Նիցչէն ալ շատ ոգեւորած էր մեզ, «Այսպէս խօսեցաւ Զրադաշտ»ով: Բանաստեղծ ընկեր մը Շահէն Յովհաննէսեան, որ յետոյ Ամերիկա մեկնեցաւ թարգմանած էր սկանտինաւեան բանաստեղծ Հելկեր Տրախմանի հոյակապ քերթուածը, «Անգլիացի Ընկերվարականներ». դեռ յիշե՞մ Վեհհառնի «Թխարաններըը», Մեթերլինկի «Անմեղներու կոտորածը» եւ «Բռունցքին փառքը», Օսկըր Ուայլտի «Դատաստանատունը» եւ «Իմաստութիւն Սորվեցնողը» (թարգմ. Մ. Մեծարենց), ու վերջապէս Ու. Հուլթմընի սքանչելի «Ողջո՛յն Աչխարհին»ը ուր Հայերն ալ իրենց տեղը ունին. -

... «Դուք մտախոհ Հայ, որ կը խորհրդածէք եփրատի մէկ գետակին մօտ: Դո՛ւք որ Նիւնուէի աւերակները կը դիտէք, դո՛ւք որ Արարատն ի վեր կը բարձրանաք»:

Տիրող մթնոլորտը, ամէն բանի հասնելու պահանջը, ո՛չ թոյլ կուտային, ո՛չ ալ տրամադրութիւն կը ձգէին լայնօրէն ծառայելու գրականութեան: Մնաց որ կարճ տեւեց «Ազդակ»ի կեանքը, - ո՛չ իսկ մէկ տարի (41 թիւ): Եւ սակայն ինչ որ կրցաւ տալ այդ պայմաններուն մէջ, մինչեւ այսօր ալ կը պահէ իր ինքնուրոյն արժէքը:

Այսպէս, «Ազդակ»ի միջոցաւ էր որ Դ. Վարուժան կը ծանօթանար լայն հասարակութեան, իր հնչեղ բանաստեղծութեանց կցելով մարտաշունչ նամակներ: Ողբացեալ բանաստեղծը այն տանն պելժիա կը գտնուէր, իրրեւ ուսանող եւ իր առաջին առաքումը եղաւ «Վահագն»ը.

Ո՛վ աստուածն իմ հայրերուս...

Այնուհետեւ ղրկեց «Արեան Ցաղթանակը», «Դիւցազնի մը սուրին», «Կիլիկեան Մոխիրներուն», «Վիրաւորը», «Պատուէր» եւ «Փիրքերուն մէջ»: Այս վերջինը գրած տանն Պոլիս էր արդէն եւ 1909 Սեպտեմբերին մեկնեցաւ իր ծննդավայրը, Բրգնիք: Իր առաջին նամակը որ նոյնպէս հրատարակուեցաւ, կը յայտնէր ջերմ խանդավառութիւն՝ «Ազդակ»ի հրատարակութեան առթիւ: Երկրորդը, գրուած Կիլիկիոյ տաք, արիւնազանգ մոխիրներուն ազդեցութեան տակ, կ'արտայայտէր ո՛չ միայն իսոր յուզում այլ եւ ընդվզում:

... «Լուրերը այնքան գէշ ազդած են վրաս՝ որ կը ցաւիմ Ատանա չգտնուելուս (երկու տող կախման կէտ՝ խմբագրութեան ձեռքով) կովկասի հայ - թաթարական ընդհարումները օրինակ մեզի: Եթէ այդ ոճով շարժինք, խուժանը ինք պիտի գայ մեզ եղբայրութիւն բարոզելու: Կը-ռապաշտ է խուժանը. բոցին առջեւ միայն կը խոնարհի»:

Եւ ի՜նչ խոր հաւատք, ապագայի մասին. -

... «Բայց Հայը պիտի ապրի՛, հակառակ դահիճներուն եւ հակառակ իր առիւծի աչքին տակ բուսած կոբեկին: Հայը պիտի ապրի ժողովուրդներու սիրազօդ շղթային մէկ ոսկի օղակն ըլլալու համար: Այ՛ս է մեր բոլորիս յոյսը զոր մուրճով կոեցինք, ինչպէս մեր պապերէն մէկուն նիզակը՝ որ նպատակին կը դիմէր օդին եւ արեւուն մէջ երգելով»:

Մէկ տարի վերջը լոյս կը տեսնէր երիտասարդ բանաստեղծին առաջին գիրքը Պոլսոյ մէջ, «Ցեղին Սիրտը», իրրեւ Գ. հատորը «Մատենաչար Ազդակ»ի:

Նոյնպէս տեւական աչխատակից մը դարձաւ միւս տարաբախտ բանաստեղծը, Ռ. Սեւակ, որ կը դրէր Լօզանէն, նախ չարք մը, «Չհասկցուածները», յետոյ ուրիշ կտորներ: Երիտասարդ թժիշկն ալ իր կարգին ըմբոստ ազազակ մը կ'արձակէր Կիլիկիոյ չարդին առթիւ (1909 Ապրիլ) իր «Ուսանողի նամակներ»ով.-

«Գոնէ սա յուսահատեցուցիչ, ծայրայեղօրէն յոռետես, ջլատ, տրտում դամբանականները չգրէին: Անոնք որ մեռան, գիտակցօրէն, դիւցազնօրէն, անոնք ո՛չ արցունքի պէտք ունին, ո՛չ վարձու կեղծ լալկանիներու, ո՛չ խրատի: Դամբանականները պէտք է կարդալ դամբանական խմբագրողներու գլխուն: Ժողովուրդները իմաստնացանք, երբ իր թուղթերուն մէջ գտանք ըմբոստ «երգ» մը, հինգ տուն: Այն տանն գոց ըրած էինք վերջին տունը.

Ո՛յր, մօտեցուր իմ ձեռքին
Աստուածաքոցն հըրացան,
Զի ամէն բան ինձ կրկին
Կը յիշեցնէ վրէժն արեան...

Աւելի վերջը կուգար Ահարոնը, որ արդէն անուն մը չինած էր «Անահիտ»ի մէջ դեռ վէնեւիկէն, ինչպէս Վարուժանը իր առաջին հատորով, «Սարսուռներ»:

Գալով արձակ արտադրութեանց, «Ազդակ»ով չորաց Թիւ 5-էն իսկ Ցակոբ Տէրմիրճեանի որ յետոյ պիտի դառնար քալածանօթ Մնձուրին: Կը սկսէր պատմուածքով մը, «Հին Օրեր» գիւղական կեանքէ չարք մը որ չարունակուեցաւ այնուհետեւ մինչեւ իր գիւղ վերադառնալը (Արմաան):

Այդ օրերուն քանի՞ հոգի լսած կ'ըլլային Սուլթանահնամ Սթամպոլին մէկ ժողովրդական երգեր, օրինակ՝ մեռնիլ մը վրայ.

Լացէ՛ք, մարեր, լացէ՛ք ֆուրեր, հա
Մարդ չկայ որ չէ մեռ
... Այս գիշեր ես դուրս ելայ,
ողորմուկ ձայն մի կուգա
Ցածցայ ու ականջ դրի որդեկիս
Ձայնն էր կուգա

Եւ դեռ քանի՛ այսպիսի երգեր Ցակոբ Տէրմիրճեանի հայրենի պատկերներուն մէջ, ամօթխած ու թրթռուն ինչպէս ինք:

Իր առաջին բարեւը «Ազդակ»ին կուտար միւս Ցակոբն ալ՝ ապազայ Օշականը:

Թղթատարը պատմուածք մը կը յանձնէր. - «Պառաւին Անկեղբը», փակագիծ մէջ՝ գիւղի կեանքէ, տակն ալ՝ անունս առորագրութիւն մը Ցակոբ Քիւֆէեան:

Գիւղի կեանք, նոր աչխատակից, - ըսաւ վրայ: Բայց կը վայլէ՞ր, երիտասարդ, արդիական, չարաթաթերթի մէջ տեղատուել սա գռեհիկ մականունը - Քիւֆէեան: Եւ Ցակոբն ալ կողովը նեղով իրրեւ առորագրութիւն դրինք մէջ բառ, - Գեղջուկ (1909 Օգոստոս 28, թիւ 35):

Իրմէ յօդուած մը եւս երեւցաւ «Ազդակ»ի վերջին թիւին մէջ (1909 Հոկտեմբեր 16), «Նոթեր ռուսահայ գրականութեան վրայ», այս անգամ իր իսկ անուն - ազգանունով: Ու երբ մտերմացանք, երբեմն ամէն չարթու Սէօյլէօղէն Պոլիս կ'իջնէր եւ գրասուն կամ խմբագրատուն կը հանդիպէր՝ Փրանսերէն գիրքեր եւ պարբերականներ, մասնաւորապէս «Մերքիւր տը Ֆրանս»ը տանելու եւ կարդալու վերջ վերադարձնելու համար, Քիւֆէեան արդէն չալկած էր գրական բազմազան կոզմանի կողով մը, այնքան բիրա եւ ինքնուրոյն ու անսպառ:

Ցիշեմ՞ միւս աչխատակիցները: Բայց «Ազդակ»ի պատմութիւնը չէ որ կ'ընենք այլ փորձ մը չրջանին միջավայրը, մթնոլորտը, հեւքը պարզելու:

Թղթատարը պատմուածք մը կը յանձնէր. - «Պառաւին Անկեղբը», փակագիծ մէջ՝ գիւղի կեանքէ, տակն ալ՝ անունս առորագրութիւն մը Ցակոբ Քիւֆէեան:

Գիւղի կեանք, նոր աչխատակից, - ըսաւ վրայ: Բայց կը վայլէ՞ր, երիտասարդ, արդիական, չարաթաթերթի մէջ տեղատուել սա գռեհիկ մականունը - Քիւֆէեան: Եւ Ցակոբն ալ կողովը նեղով իրրեւ առորագրութիւն դրինք մէջ բառ, - Գեղջուկ (1909 Օգոստոս 28, թիւ 35):

Իրմէ յօդուած մը եւս երեւցաւ «Ազդակ»ի վերջին թիւին մէջ (1909 Հոկտեմբեր 16), «Նոթեր ռուսահայ գրականութեան վրայ», այս անգամ իր իսկ անուն - ազգանունով: Ու երբ մտերմացանք, երբեմն ամէն չարթու Սէօյլէօղէն Պոլիս կ'իջնէր եւ գրասուն կամ խմբագրատուն կը հանդիպէր՝ Փրանսերէն գիրքեր եւ պարբերականներ, մասնաւորապէս «Մերքիւր տը Ֆրանս»ը տանելու եւ կարդալու վերջ վերադարձնելու համար, Քիւֆէեան արդէն չալկած էր գրական բազմազան կոզմանի կողով մը, այնքան բիրա եւ ինքնուրոյն ու անսպառ:

Ցիշեմ՞ միւս աչխատակիցները: Բայց «Ազդակ»ի պատմութիւնը չէ որ կ'ընենք այլ փորձ մը չրջանին միջավայրը, մթնոլորտը, հեւքը պարզելու:

Թող արձանագրած ըլլամ չարք մը նուններ ալ մասնաւորապէս անոնք որ պահեցին ու չեկան, - Է. Ակնունի, Ռ. Զարդարեան, Ց. Շահրիկեան (Ատոմ), Ռ. Շահպազ, Մարզպետ, Վրթանէս Փափազեան, Ֆէրիտ Ճէմիլ (Տիգրան Ծամուրճեան), Ցակոբ Շահպազեան, Տիգրան Եսայեան (Զապէլ Եսայեանի անունը, նկարիչ եւ անիշխանական), Գրիգոր Եսայեան, Լեւոն Խառճանեան եւայլ, իսկ ողջերէն Վ. Փափազեան (կոմս), Գասպար Իփէկեան, Ցակոբ Տէր - Ցակոբեան), Մկրտիչ Պարսամեան, Վահրանգ Բերունի (Սիմոն Ցակոբեան), Եզ. Գալանճեան, Ասլան Շիրակունի (Մարտիրոս Ցարութիւնեան), Վաթան (Ղ. Մելոյեան), Զիթունի, Զարխի Ֆալաք, եւն.

Ճիշդ է որ զանազան արտատպումներ զգալի տեղ մը կը բռնէին «Ազդակ»ի էջերուն մէջ:

Նիւթի սո՞վ: Ընդհակառակն: Մեզի չրջանակ մը կազմած ըլլալով, միշտ որոշ գիծ ու գոյն եւ անկոխ գետին փնտռելով, բաւական դժուարահաճ էինք եթէ ոչ ամբարտաւան, եւ ամէն գրագիտ կամ խմբագրի բարի եկար չէինք ըսեր: Հաւաքնաիր կտորներ կ'արտատպէինք նախ իրենց՝ հեղինակներուն թելադրութեամբ, յետոյ՝ կանխորոշ ծրագրով մը, - հրատարակութիւններ կային որոնք արտատպութեան մէջ տպուած ըլլալով, բոլորովին անծանօթ էին մեր հասարակութեան: Ուրեմն, կ'արժէր որ մեր ընթերցողներն ալ կարդային, ճաչակէին ինչպէս եթէ նոր գրուած ըլլային:

Թերթին չուրջ փոթորիկը պայթեցաւ 7-րդ թիւէն, երբ ազդանշանը տուինք դարձակերական, նոյնիսկ հակակրօնական պայքարի մը, մասնաւոր խորհրդակցութեամբ:

Համաձայն տրուած որոշման, 1909 Փետրուար 6-ին Գեղամը կը առորագրէր «Սեւ փորձանքը», ազդարարելով. - «Հնչած է մահավճիռներու ժամը»: Ես այ «Սեւ Թաթը»: «Ո՛րքան գրուեցինք ու համբոյրներով տաքցուցինք գայն»:

Զուգադիպութեամբ մը, նոյն թիւին մէջ կ'երեւար նաեւ Վարուժանի «Վահագն»ը, այնքան հեթանոսական արտատպութեամբ:

Ո՛չ միայն «ճահիճը չարժուեց» ինչպէս կ'ըսէին այն տանն, այլ եւ մեր առջեւ բերները, համակրողներն ու հովանաւորները զանգատեցան որ պատկերները զանգատեցան որ պատկերները

տում կը սերմանենք: Մասնաւորապէս վրդոված էր մեր սիրելի Զաւարեանը եւ կը պահանջէր իր անունը վերցնել հանգրուաններու ցանկէն: Մօտաւորապէս կը յիշեմ իր դիտողութիւնը.

- Եթէ կարծում էք որ նոր բան էք ասում, յեղափոխական խօսք, շատ էք սխալւում. էդ պայքարը առ նուազն քառասուն տարուայ պատմութիւն ունի մեր մէջ...

Կրնաք երեւակայել թէ ի՛նչ կը զբէին կամ կ'ընէին հակառակորդները:

Մթնոլորտը երթալով պղտորեցաւ: Թերթը պատռտղներ եղած էին չոգենաւին մէջ, վառոդներ ժամուն բակը: Բողոքի նամակներ հասան պատւոյն ալ:

... Այնուհետեւ ուրիշ պայքարներ ալ ունեցանք «Մեր խօսք»ով - խմբագրական - Մամուլի բաժինով եւ մանաւանդ յօդուածներով: Ներելի՞ էր նահանջել «Հայկական Շէրլոք»ին առջեւ: «Յեղափոխութիւնը մեր եաին եւ Յեղափոխութիւնը մեր առջեւ»:

Աւազ ընկերները մեծ մասով կը պընդէին որ սրբենք իրենց անունները: Ս. Զաւարեան պրաւոր ալ յայտնած էր իր բողոքը: Իրրեւ մէկին ճամբայ, առիպուեցանք հետեւեալ ազդը հրատարակել 1909 Ապրիլ 24-ին (թիւ 17):

- Փարատելու համար զանազան թիւրիմացութիւններ, միանգամ ընդ միշտ կը յայտարարենք թէ «Ազդակ» կը հրատարակուի Դաշնակցական ընկերներու անհատական նախաձեռնութեամբ, բայց կազմակերպական - պաշտօնական հանդամանք չունի»:

Քանի մը ամիս վերջը, երբ Վանի «Նոր Սերնդական» չարժումին պատմութիւնն ալ սկսեր էինք հրատարակել, նորէն արտունչ: Այլեւս վերցուցինք համակրողներու ցանկը եւ 1909 Օգոստոս 7-էն սկսեալ ճակատը կ'երեւար «Երիտասարդ Շաբաթաթերթ», գրական եւ հասարակական: (Այս խառնածին բառը, «հասարակական» որ մինչեւ հիմա կը գործածուի մեքենաբար եւ որու վրայ խաչ քաշեր եմ 1920-էն ի վեր, մեր ղլուխը գամուած էր Կովկասեան թերթերէն իրրեւ համազօր «սոսիալ»ի (ընկերային):

«Ազատամարտ»ը լոյս տեսած էր արդէն (1909 Յունիս), տիրապետելով հրապարակին: Իրրեւ պայքարի թերթ՝ «Ազդակ»ը այլեւս անիմաստ կը դառնար: Իրրեւ զուտ գրական թերթ ալ դժուար էր շարունակել: Գեղամը «Ազատամարտ»ին անցած եւ խրած էր սեւ աշխատանքի մէջ. ես կլանուած՝ հրատարակչական - կուսակցական գործով:

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

«Զուարթնոց», 1944

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՁԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՀՍԿԱՅ ԲԱԽՕՌՈՒՄԸ

Մօտաւորապէս 4 ամիսէն, այսինքն՝ ճիշդ Յունիս 1-ին, պիտի վերսկսի, 4 տարիներ անգամ մը գործադրուող ոռնադնդակի փառատօնը, իմա մրցումները՝ աշխարհի բաժակին, այս անգամ հեռաւոր Մեքսիկայի մէջ: Ոռնադնդակը ունի բազմազան նպատակներու ձգտող մրցախաղեր: Կան նախ, ամէն տարի տեղի ունեցող, իւրաքանչիւր երկրի ներքին ախոյենական հանդիպումները. կան զարձեալ ներքին խումբերու մէջեւ կատարուած ազգային բաժակի մարանչումները:

Աւելի կարեւոր պայքարներ կը հանդիսանան, Եւրոպայի բաժակին համար մղուածները, զանազան մակարդակներով: Առանցքէ դուրս կը կիրարկուին բարեկամական խաղեր, որոնք թերեւս կը կատարուին նուազ աստկութեամբ, չուներնալով բաժակի մը կամ ախոյենութեան տիրանալու միտք բանին: Սակայն աշխարհի բաժակին մրցաշարքը, ամէնէն աւելի զգայացունց հետաքրքրութիւնները կը ստեղծէ, քանի որ աշխարհի բոլոր երկիրներու ազգային խումբերն են որոնք կը մասնակցին, բացի անշուշտ անոնցմէ, որոնք նախապատրաստական մրցմանց մէջ, կրկնակի պարտութիւններ կրելով, չեն կրցած ձեռք բերել մասնակցութեան իրաւասութիւնը:

Քառանեւչորս խումբեր են որոնք պիտի երեւին Մեքսիկայի ինը քաղաքներու մարզադաշտերուն վրայ: Անոնցմէ ամէնէն անուանիներն են. - Պրազիլ, Արժանթին, Խորհրդային Միութիւն, Սպանիա, Ֆրանսա, Արեւմտեան - Գերմանիա, Լեհաստան, Անգլիա, 1982-ի յաղթականը Իտալիա, առանց անտեսելու՝ Հունգարիա, Սկովտիա, Պուլկարիա, եւայլն: Անբախտօրէն առ ի չգոյէ հայկական ազգային խումբի մը, բնականաբար մեզի, Ֆրանսայի մարզասէր Հայերուս ամէնէն հետաքրքրութիւն պատճառողը ֆրանսական խումբն է, որ իր իսկապէս չատ վարպետ խաղացողներով, գլուխն ունենալով անզերազանցելի Փլաթինին, - ինչպէս էր երբեմն աշխարհահռչակ կախարդիչ Փէլէն Պրազիլի համար - այս անգամ եւս անժխտելի հաւանականութիւնները կը խոստանայ մեծ յաջողութիւններ արձանագրելու. ինչպէս 1982-ին, երբ մասնաւոր էր մնացած որ դաշտ իջնէր վերջնականին համար, երբ կէս վերջնականին ընթացքին, խաղին վերջաւորութեան ընդդէմ Գերմանիոյ, դեռ կը յաղթանակէր, երբ յանկարծ, հակառակորդը դրեթէ վերջին վայրկեաններուն, կը գտեանէր զայն անակնկալ նշանակէտերով:

Որքան զոհունակութիւն պիտի պարգեւէր մեզի, երբ եռագոյններուն մէջ, դէթ որպէս փոխարինող ընտրուէր երեւանցի մեր հայրենակիցը՝ Նանթի արժէքաւոր յետապահը՝ Միքայէլ Տէր - Զաքարեան, որ այնքան գովեստներու կ'արժանանայ Ֆրանսայի ախոյենութեան համար տարուած մրցումներու մէջ: Նկատի ունենալով իսկ, մարզական աշխարհի մէջ ստեղծուած անակնկալները, - դեռ երէկ էր որ տեսանք Նիւ - Եորքի մէջ, թենիսի մրցումներուն, առաջին հերթին իսկ պարտութիւնը աշխարհի թիւ մէկ՝ Մաք Էնրոյի, որ կրկնակի յաղթանակողն էր եղած նախապէս այդ «մասթերներու» բախումներուն:

Պիտի համարձակէի որպէս դէթ երեք հաւանական յաղթականներ ներկայացնել, Արժանթին, Անգլիա, Ֆրանսա, եւ անմիջապէս վերջ ուրիշ երեքներ՝ Գերմանիա, Իտալիա, Պրազիլ:

Յունիս 29-ին, որքա՜ն զմայլելի պիտի ըլլար սակայն, հանդիսատես ըլլալ - հեռատեսիլին մէջ անշուշտ - սա թատերական տեսարանին, երբ բաժակը խլողները ըլլային, կամ Արժերիա, կամ Իրաք եւ կամ Քորէա...տեղին պիտի ըլլար գոչել՝ անհաւատալի, բայց ... իրաւ:

ԳԵՂԱՄ ՏԻՐ - ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

ԼԻՈՆ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ ԵՐԿՐՈՐԴ ՁԵՌՆԱՐԿԸ

Այս տարի ալ, ինչպէս 1985-ին, Լիոնի Կապոյտ Խաչի մասնաճիւղը չզոհացաւ կազմակերպելով միայն Մանուկներու Օրը, այլ նաեւ, քանի մը օր վերջ, խնամուած ճաշ մը հրամցուց Հայկազեան միօրեայ վարժարանի աշակերտներուն:

Ուրախալի է տեսնել, թիւով ութսուն - հարիւր, վեց - տաս տարեկան մանչուկներ, -աղջնակներ՝ որոնք, հետեւելով իրենց ուսուցչուհիներուն հրամաններուն, սեղան կը նստին արտասանելէ յետոյ միայն, հաւաքաբար, ճաշի աղօթքը, ան ալ դրաբար ... Այդպէս եղաւ Շորեքշաբթի, Յունուար 15-ին, կէս օրին, ազգային ատեան մեծ սրահին մէջ:

Այս առթիւ, Կապ. Խաչի վարչութիւնը հրաւիրած էր նաեւ Լիոնի հոգեւորական դասը, մասնաճիւղին վեթերան ընկերուհիները, համայնքին գլխաւոր միութիւններուն ներկայացուցիչները: Ազգային Միութեան վարչութեան կողմէ ներկայ էր Պ. Փօլ Ագըճեան, փոխ - նախագահ:

Աւելի քան հարիւր հոգի սեղաններու շուրջ. կը սպասարկէին խաչուհիները: Լսել թէ «խաչը ելան» չափազանցութիւն կ'ըլլայ անշուշտ, բայց յոգնեցան, անկասկած: Նախագահուհի, վարչականները, պարզ անդամուհիներ, բոլորն ալ չանք չխնայեցին զոհացնելու համար իրենց պզտիկ ու մեծ հիւրերը: Ու յաջողեցան:

Յունուար ամսուան մէջ, կազանդ Պապան չէր կրնար անտեսել այսպիսի հաւաքոյթ մը: Պ. Ճեպրայէլ Պահատուրեան եւ Տիկինը փափաքեցան անձամբ, միասնաբար, բաժնել նուէրները, ի մեծ ուրախութիւն երախաներուն:

Երբ աշակերտները մեկնեցան իրենց դասարանները չարունակելու համար մըտերմանալ Մեսրոպեան լեզուին հետ, եկաւ պահը տուրճին, երգին, խօսքին ... Երգեց Տիկին Տէյիրմէնճեան՝ որուն տաղանդը կը մնայ անխախտ, հակառակ տարիներու թաւալումին: Արտասանեց Տիկին Սարըկարապետեան: Մանաճիւղին նախագահուհի, Տիկին Լուսին Թուխլըեանի չնորհակալական խօսքերէն վերջ, արտայայտուեցան յաջորդաբար՝ Նորվան Եպիսկ. Զաքարեան, Պ. Գեղամ Կանանեան, մէկը լիոնահայ կեանքին լաւագոյն սպասարկողներէն, նախագահ կրթական յանձնախումբին, Կղեմէս վրդ. Մալճեան, հովիւ՝ կաթողիկէ համայնքին, Մովսէս աւագ քահանայ Գալէնտէրեան: Զորսին ալ խօսքերուն առանցքը Լիոնի մէջ ամէնօրեայ հայ վարժարան մը հիմնելու անհրաժեշտութիւնն էր:

Հարցը յառաջանալու վրայ է, հիմա - կուհիմա՝ գոնէ միտքերու մէջ: Պէտք ունի անկասկած հասունցնալու: Ներկայիս Հայկազեան միօրեայ վարժարանը ունի շուրջ հարիւր աշակերտներ՝ որոնք հինգ հոգիներէ բաղկացած Ազգային Միութենէն բիած յանձնախումբի մը հովանաւորութեան եւ նուիրեալ ուսուցչուհիներու չունչին տակ, կ'իւրացնեն, ինչ որ կարելի է իւրացնել չաբաթը քանի մը ժամ տեւող դասընթացքներու ընթացքին:

Խօսք տրուեցաւ նաեւ Տիկին Հիլտա Զօպոյեանի: Տէսինի Արշակ Զամալեան Մշակոյթի Տան տնօրէնուհին ըսաւ որ իր հաստատութիւնը պատրաստ է զօրավիղ կանգնելու, բարոյապէս եւ նիւթապէս, Լիոնի մէջ հայ վարժարանի մը: Այս առթիւ, յայտնեց որ երբ ինքը եւ իր գործակիցները կը չանան հայկականութիւն չամբել Մշակոյթի Տան գործունէութիւններուն մասնակցող տղոց եւ աղջիկներու, կուգայ մակարդակ մը՝ ուրասոնց հայերէն չգիտնալը կը դառնայ անանցանելի պատնէշ մը աւելի յառաջ երթալու:

ՎԱՂԻՆԱԿ ՄԻՍԻՔԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՁՕՆ ԱՌ ՄԱՍԻՍ

ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍԵԱՆ

25 Ապրիլ, 1980 թ.

Այսօր նորից ինձ բախտ վիճակուեց այցելել Զարենցի կամարին՝ Մասիսի ընքանչելի «դիտարան»ներից մէկին: Ի զուր չէ, որ հեղինակը՝ ոսկեձեռիկ ճարտարապետ Ռաֆայէլ Իսրայելեանը, կամարը կոչել է Տաճարն Մասիսի: Կամարից ցած դաշտը ապրիլեան նուրբ կանաչով է ծածկուած, իսկ կանաչը՝ թեթեւ մշուշով: Եւ մշուշը վեր է բնում: Հողը կարծես չնչում է. եւ չնչառութեան ելեւէջները զգացւում են մշուշի բարձրանալով: Եւ հողի չնչառութիւնը խորհրդաւորելով ու հեռանալով հասնում է լեռնը, որի առօրեայ նոյնպէս կանաչ է, միայն դագաթում սառնամանիք է մշանջենական:

×

Ոսկի Մասիաց: Լանջք Մասիաց: Թիկունք Մասիաց:

Մինչեւ դագաթին հասնելը, պէտք է յաղթահարել այս գօտիները:

Լի՛նչն է բարձրանում, իռլանտացի հայազէտը, ճանապարհորդն ու փաստաբանը:

Եւ մա՛րդն է տարբեր, եւ ժամանակը (1893, Սեպտեմբեր): Հետաքրքրութեան առարկան նոյն է թէեւ, բայց հայեա՛ցքն է տարբեր: Ահա նա դիտում է Արարատը, որ հարթավայրի դիմաց խոյանում է վեր իրրեւ հսկայական տաճար՝ ձիւնէ զմբէթով: Եւ նրա արեւմտեան մասով ձրդուում է հայկական պարի երկար շղթան իրրեւ թաղաւորական ծիրանիի անվերջանալի քղանցատուտ: Եւ առաջին բանը, որ աչքի է խփում, լերան մարդկային բնոյթն է: Թերեւս ա՛յդ է պատճառը, որ հնուց անտի գործածուել են Ոսկի Մասիաց, Լանջք, Թիկունք Մասիաց, Գլուխ Մասիաց...:

Մինչ Խորենացին արձանագրում էր իսկ հարաւային արեգակնասլաց լեռը, սպիտակափառ գագաթով, ուղիղ բուսել էր երկրից, Լինչը հարցնում է՝ կա՞յ արդեօք, մէկ այլ լեռ, որ հարթավայրից անմիջապէս յառնի, հասնելով այդպիսի բարձրութեան: Եւ աքանչանալով ձեւի, գոյնի ու դեղակերպութեան առաջ, եւ խորապէս ծանօթ լինելով հայ ժողովրդի լեզուին, պատմութեանն ու ճակատագրին, նա գրում է. քանի որ աւանդութիւնը Հայոց աշխարհը կապում է աստուածաշնչեան դրախտի հետ՝ հէնց այդ պատճառով եւս բազում արիւնաթեղ պատերազմների է ականատես եղել:

Եւ հայեացքով ընդգրկելով լեռն ամբողջութեամբ, նա տեսնում է, որ բնութեան մեծագործութեան արդիւնք է Արարատը: Եթէ Մեծ եւ Փոքր գագաթները չափով եւ ձեւով տարբեր են, ապա հիմքը մէկն է, ամրակուռ ու հզօր. եւ դա է, որ նրան թոյլ է տալիս համեմատելու մի մեծ նաւի հետ, որն ունի մարմին, կայմ եւ առագաստ:

1893 թուի Սեպտեմբերի 16-ն է: Երեկոյ: Արարատեան դաշտը մշուշապատ է: Ամբողջ լոյսն ու փայլը կեդրոնացել է լերան արեւմտեան լանջին: «Եւ լեռների ձիւնապատ կատարները կարծես երկնքից էին կախուել մեր գլխավերեւում»: Դա արդեօք նոյն պատկե՞րն է՝ երկնքից կախուած զոյգ զանգերի, որ խենթացնում էր Պարոյր Սեւակին:

Եւ լերան փէչերով առաջ է գնում Լինչը, դիտելով աւազուտներում ածած ուղտափուշերը: Չիլ - կաքաւն է թռչում ոաքերի տակից, մողէսն է սահում տաք աւազի վրայով, եւ որոճացող ուղտերը նայում են անտարբեր հայեացքով:

Լեռները կարծես կախարդուած թագաւորութեան բնակիչները լինեն. «Այո, սա աշխարհի լայնարձակ համայնապատկերն է...»: Եւ Մեծ լերան զագաթը, յաւիտենական ձեան պատմուճանը հագեն, հեռուից այնքան երազային է, որ միայն մօտիկ քարակուտակներն են Լինչին վերադարձնում ոէալ իրականութիւն:

Դէպի զագաթ տանող ճանապարհին Լինչը հանդիպում է դիհու թփերի, վայրի վարդի, որ սրսփում է սառը քամուց: ... Ժայռերի Յառվեալ ծովից վեր, բարակ սառցաչերտերի տակ, թէեւ չի երեւում, բայց լսւում է ձնաջրերի խոխոջը: Վրանը խփում են ձեան սահմանում: Օդը նօսր է. եւ ոչ ոք չի կարողանում քնել: Միայն հայ թարգմանիչն է, որ զբլուխը դնում է մայր լերան կրծքին ու խոմփացնում:

Եւ բարձրանում է արշաւախումբը, ճամբին թողնելով յոգնածներին: Եւ քանի առաջանում են, վերջնակէտը կարծես խոյս է տալիս: Իսկ ծծմբի սուր հոտը բռնել է օդը: Եւ այն ժամանակ, երբ նրբանք հասնում են զագաթին, իջնում է թանձր մառախուղը, վարագուրելով աւետեաց երկիրը: Զնայած ձեան եւ ամպերի սահմանագծում կատաղի հողմն է չառաչում, բայց մոռացած դժուարութիւնները, հպարտ յաղթանակով, նրբանք վազում են քամուն ընդառաջ, ինչպէս Մեծն Արովեանը՝ խինդն ու արցունքը իրար խառնած: Եւ հէնց այդ պահին Լինչը մտածում է. առասպելն ինքնին այլափոխուած ճշմարտութիւն է, ինչպէս որ ամպը՝ այլափոխուած ձիւն է:

(Շար. 6)

Ի ՅԻՇԱՏԱԿ

Շաւարշ եւ Տիրուհի Միսաքեանի *յիշատակին, Արփիկ Միսաքեան 2000 Ֆ. կը նուիրէ Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէին (առանձ. «Յառաջ»էն):*

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ՎԱԹՍՈՒՆԱՄԵԱԿԻ ԱՒԹԻՒ

Վ.Օ. - Սամուէլ Ներկարարեան 300 Ֆ.:
ՄԱՐՍԷՅԼ. - Պ. Կարապետ Պօլիքեան 200 Ֆ.:
ԹՈՒՌ.- Տէր եւ Տիկին Զաքեան 300 Ֆ.:
ՓԱՐԻԶ. - Տիկին Փէչտմալճեան 200 Ֆրանք:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տիկին Ազգանոյշ Հաքելեանի յիշատակին, Փարիզէն՝ Տէր եւ Տիկին Վարդգէս Զընարլը 200 Ֆ. կը նուիրեն «Յառաջ»ին:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԸ

ԵՒ

Էլիզ Գասուբճեան - Այվազեան
Գրական Մրցանակ, կիրակի, Փետրուար 9, ժամը՝ 13-ին:

«ՍԵՒԱՆ»
Ճաշարանին մէջ:
1, boulevard Carnot
17, quai Jean-Baptiste Clément
94140 Alfortville
Métro : Ecole Vétérinaire (Maisons-Alfort) prendre le bus no. 103 et descendre Place Carnot)
կը հրաւիրէ՝
Ս. Ք. ՃԱՆԳՈՒ
1985-ի գրական Ա. մրցանակի (1500 - հազար Ֆրանք) արժանացողները են՝
Արձակագիր՝ Յակոբ ԿԱՐԱՊԵՆՑ (Նիւեորքէն), իսկ Բանաստեղծ՝ Զարեհ ԽՐԱԽՈՒՆԻ (Պոլիսէն):
Լեւոն ՍՈՓՈԿԼԵԱՆ կ'արտայայտուի՝ Յ. Կարապետցի «ԱԴԱՄԻ ԳԻՐՔԸ» վէպին, իսկ Հիլտա ԳԱԼՖԱԵԱՆ - ՓԱՆՈՍԵԱՆ՝ «ԴԻՒՑԱԶՆԱՀԱՆԴԷՍ» բանաստեղծութիւններու հատորին մասին:
Հանդէսը կը վարէ՝ Տիգրան ՊԱԼԵԱՆ:
Գեղարուեստական բաժին՝
Ծանօթ երգիչ՝ ՊԵՏԻԿ եւ իր նուագախումբը: Նաեւ զանազան անակնկալներ...
Տեղերը սահմանափակ ըլլալով, կը խնդրուի կանխաւ արձանագրուիլ, մինչեւ Փետրուար 4, երեքշաբթի երեկոյ:
Հեռաձայնելով. -
46 - 63 - 74 - 91 *ժամը՝* 9 - 14 :
47 - 80 - 82 - 58 *ժամը՝* 15 - 22 :
Թիւերուն:
Այլապէս՝ տեղերու համար ո՛չ մէկ պատասխանատուութիւն:
Ճաշագին՝ 150 Ֆ.:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի, Առնուվիլ - Սարսէլի մասնաճիւղի տարեկան մեծ պարահանդէսը՝ Մարտ 22-ին:
Մանրամասնութիւնները յետագային:

ՃՇԴՈՒՄ

Ի ՅԻՇԱՏԱԿ

Այրի Տիկին Նոյեմի Տէրտէրեան եւ զաւակները իրենց տպրոջ եւ հօրեղբօր՝
ՄԱՐՏԻՐՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ
թաղմ յիշատակին է որ նուիրած են 2500 Ֆրանք Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէին (առ՛ս՝ «Յառաջ», Յունուար 23):

Հ. Բ. Ը. Մ.

Ողեկոչում
Վարդանանց
Հերոսամարտի

Կիրակի, Փետրուար 2, ժամը 16-ին Ալէք Մանուկեան Մշակ. կեդրոնին մէջ:
118, rue de Courcelles, 75017 PARIS
Օրուան խորհուրդը կը պարզէ՝
ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՐԻՍՏԱԿԵՍԵԱՆ
Գեղարուեստական բաժին
Մուտքը ազատ է:

ՇԱՐԺԱՆԿԱՐ

Հայկական Շարժանկարի Երեկոյթ կազմակերպուած Պանեէօ - Քաշանի միօրեայ վարժարանի կողմէ, 1986 Յունուար 28, երեքշաբթի իրիկուն, ժամը «ճիշդ» 20·30-ին:
Հասցէն. -
Théâtre VICTOR HUGO
14, ave .Victor Hugo - Bagneux
1·- *Փոքրերու համար յատուկ ցուցադրութիւն:*
2·- *Տժվըժիկը·* (տէսէն աւիմէ):
3·- *Հայրիկը:*

RADIO ASK

«RADIO ASK CREE L'EVENEMENT SUR 98,5 mhz, BANDE FM»

Dans le cadre de la campagne pour les élections législatives du 16 MARS prochain, date de l'unique tour de scrutin, ALBERT KALAYDJIAN et GUILLAUME HAMALIAN questionneront les principaux leaders politiques nationaux.

Vous même pourrez poser TOUTES vos questions en direct, par téléphone, sur tous sujets vous préoccupant.

— Samedi 1er Février. Monsieur Patrick DEVEDJIAN, maire d'Antony, délégué national du RPR, 5e sur la liste RPR pour les législatives dans les Hauts de Seine.

— Samedi 22 Février. Monsieur Georges SARRE, député du 11e arrondissement de PARIS, 3e sur la liste Socialiste pour les législatives à PARIS.

— Samedi 1er Mars. Monsieur Guy DUCOLONE, Vice-Président de l'Assemblée Nationale, 1er sur la liste Communiste dans les Hauts de Seine.

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՐԷ

Երկլեզու (ֆրանսերէն - անգլերէն) փոքրաւուր քարտուղարուհի մը աշխատանք կը փնտռէ:
Հեռաձայնել. -
Օր. Անահիտ
46 - 33 - 33 - 98
43 - 54 - 13 - 90

ԿԱՊՈՑՏ ԽԱՉ

Ֆր. Կապոյտ Խաչի պատգամաւորական ժողովը տեղի կ'ունենայ Փարիզ, Շաբաթ եւ Կիրակի, Փետրուար 1 եւ 2:

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

GALERIE DE LA CULTURE ARMENIENNE

HAY DISC

Un grand choix de
— DISQUES
— CASSETTES
— VIDEOCASSETTES
— FOULARDS
— BRIQUETS
— PLAQUETTES
— VERRES DECORES
— GADGETS ETC. ETC.
— LIVRES D'ARTS, ALBUMS, VITRAUX

TOUT EST ARMÉNIEN

DES NOUVEAUTES A COUPER LE SOUFFLE

LOCATION DE VIDEOFILMS

ՀԱՑ ՏՒՄՔ

ՁԱՅՆԻ ԱՒ ԳԻՐԻ ԿԵԴՐՈՆ ՄԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

HAY DISC
35, rue Lamartine
Tél. 48 78 22 79 75009 Paris
M° Notre Dame de Lorette ou Cadet

OUVERT DU LUNDI AU SAMEDI DE 14H — 19H

OPTIMA Tours

ARMENIE

-- 1986 --

Pâques en Arménie
— Du 29 Mars au 12 Avril (via Kiev) ..... 6.050 F

Spécial Cérémonie du 24 Avril en Arménie
— Du 19 Avril au 3 Mai
(Prix et conditions de ce voyage nous consulter).

(Nos prix comprennent — le transoprt aérien, tous les transferts, la pension complète, le logement dans des hôtels de 1ère classe A en chambre double / bain, les excursions et visites mentionnées dans notre programme, l'ASSURANCE).

(Nos prix ne comprennent pas — la chambre individuelle, les boissons et les frais de nature personnelle, frais de visa 100 F.)
(Groupe minimum 20 inscriptions accompagnateur assuré par notre agence).

Renseignements et Inscriptions:

PARIS

Madame COUMRYANTZ Sonia
OPTIMA TOURS
12, rue Vignon — 75009 PARIS
Tél. : 47 - 42 - 10 - 35

LIC A 130

L'ÉTAPE ARMÉNIENNE
au cœur de la Franche - Comté

AUBERGE D'ARMENIE

63, Faubourg de Besançon - 25200 MONTBELIARD
Tél. : 81 - 94 - 93 - 74

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
28

MARDI
28 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.147 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.147

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ՞ ՄԸ ՏՈՂՈՎ

Տիկին Թաչըր երկուշաբթի օր, «հաչիւ» կատար երեսփոխաններուն եւ այնքան ալ դիւրին չէր, նոյնիսկ երբ «երկաթէ տիկին մըն է» ենթական: Ամէն պարագայի մէջ, լրագրողներուն հարցումներուն իսկ պատասխանելով, յայտնեց թէ ոչ միայն քաչուելու միտք չունի, այլեւ երրորդ շրջանի մը ախորժակ ունի: Ուեսթլանտ, ուրեմն, Ուաթըրկէյթ մը կրնայ չըլլալ Մեծն - Բրիտանիոյ վարչապետին համար, որքան ալ իր կացութիւնը աւելի փափուկ ըլլայ առեւտուրի եւ ճարտարարուեստի իր (հաւատարիմ) նախարարին հրաժարումէն ետք: Պրիթըն, որ կողմնակից էր որ Ուեսթլէնտ թռան - ներու հակակշիռը ամերիկեան Սիքորսկի ընկերութեան ձեռք անցնի պարտաւոր - ւեցաւ քաչուիլ եւ Տիկին Թաչըր չհամարձակեցաւ վար դնել: Եթէ Պաշտպանութեան նախարար՝ Հէզըլթայնի հրաժարումը չէր խախտեր կառավարութեան միասնականութիւնը, ինչպէս կ'ըսէր Տիկին Թաչըր, հարցը հիմա տարբեր է եւ երկուշաբթի օր ալ, հարցախոյզի մը համաձայն Տիկին Թաչըրի «սակը» բաւական իջած էր: Բուն հարցը, իրեն համար սա է· - Տեղեակ է՞ր, որ Յունուար 6-ին, Պրիթըն (Առեւտուրի նախարար) եւ իր գործակիցները կազմակերպուած ձեւով լուր մը մամուլին հասցուցած էին, վնասելու համար Հէզըլթայնի:

ԽՈՐՀ· ՄԻՈՒԹԵԱՆ մէջ «մաքրագործումները» կը շարունակուին, ոչ միայն Հանրապետութիւններուն ծոցը, այլեւ՝ կեդրոնը: Այսպէս, Վիտալի Ֆեոորչուք, Ներքին նախարար «ազատ արձակուած է իր պաշտօնէն» եւ իր տեղը անցած է Ա- լեքսանդր Վլադիմիրովիչ: Միւս կողմէ, Թիւրքմենիստանի կուսակցութեան կեդրոնական կոմիտէի մէջ ալ երեք պատասխանատուներու վրայ, երկուքը պաշտօնանկ եղած են:

ՓՈՐԹՈՒԿԱԼԻ նախագահական ընտրութեանց առաջին շրջանին չորս թեկնածուներուն ձայնը հասաւ՝ Ֆրէյթաս տօ Ամարալ (47%) քրիստոնեայ - դեմոկրատ, այսինքն կեդրոն - աջի թեկնածուն: Իրեն կը յաջորդեն ընկերվարական՝ Մարիօ Սուարէս (25,2), ուրիշ ընկերվարական մը, բայց այլախոհ՝ Ֆրանչեսքօ Սալկատօ Ջինհա, հուսկ անկախ ձախ մը՝ Տիկին Մառիա Փինթասիլգօ, որ ձայներու միայն 7%-ը կը ստանար: Հաւանական կը դառնայ, ինչ որ անակնկալ մըն է, որ Սարէս ընտրուի, Բ· շրջանին (Փետր· 16), եթէ ամբողջ ձախը եւ կեդրոնի ձայները կեդրոնանան իր վրայ: Պէտք ունի նաեւ համայնավարներու ձայներուն:

ՈՒԿԱՆՏԱՅի մէջ դիմադրութեան ազդանակը ճամփան մտած է, մինչ կառավարական բանակը, նախքան նահանջելը, ահաւոր ջարդերու, բռնաբարումներու եւ թալանի ձեռնարկած է: Երկրին նոր ղեկավարին՝ Մուսեվէնիի քաղաքական հակումները շատ յստակ չեն, եթէ նոյնիսկ մարքսիստ ըլլալը ծանօթ է: Ամէն ինչ դիւրին չէ տակաւին, իրեն համար, ընդդիմադիրը ունի դեմադրական բանակին մէջ իսկ և դեռ շրջաններ ալ կը մնան կառավարական ուժերուն ձեռքը:

ԼԻԲԱՆԱՆի մէջ կացութիւնը չի բարելաւուիր եւ դրամն ալ նոր անկում մը կրած է, երկուշաբթի օր: Տոլարը որ 18 լիբանանեան կ'արժէր դեռ 48 ժամ առաջ, 25 լիբանանեան կ'արժէ: Միւս կողմէ Նախարարները մերժած էին Նախարարաց Խորհուրդի ձեմայէլի առաջարկած արտակարգ նիստը, ինչ որ կը նշանակէ որ բոլորը կ'ուզեն զինքը հրաժարումի մղել:

«ՍՈՒՐԲ ԿՈԼԻՇ» կը խորագրէր «Լիպերասիոն» երկուշաբթի առտու, ինչ որ (ախուր) պատկերը կը պարզէ իսկապէս ախուր վիճակի մը: Յունուար 26-ի Կիրակին յաղթանակի օրն է այս զարճացնողին (իրա՞ւ, բարի ախորժակ), որ մեխաներու միջոցաւ հակայ դործօղութեան մը ձեռնարկած է «սրտի ճաշարանները», որպէսզի 650 հազար աղքատներ անօթի չմնան, այս ձմեռ: Համաբնակութիւնը ամբողջական էր այս առթիւ թիւքարէն՝ Միթերան, Շապանէն՝ Ռոքար, Ժոսփէն, Ժիւփէ, ապա՝ Միրէյլ Մաթիէօ, Պեռոս, Էվ Ռուճիէրի, Կի Լիւքս եւայլն, եւայլն: Ըստ երեւոյթին, հարկ եղած էր որ զբռեհկութեան մարմնացում՝ դերասան մը հրապարակ իջնէ ցնցելու համար այս հարուստ երկիրը եւ տեղեկացնելու անոր թէ՝ աղքատներ կան եւ երբ Ժիսքար ու Միթերան ալ զօրավիդ կը կենան, կը նշանակէ որ համոզուած են դոյզն իսկ մեղք չունին «նոր» աղքատներուն բազմացման մէջ...:

ՊԵՏՐՈՍ ԶԱՐՈՅԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ՓՈԽԱԴՐՈՒԱԾ

Մարսէյլէն կը հաղորդեն որ, Պետրոս Զարոյեան հիւանդանոց փոխադրուած է, եւ երկու չաբաթէ ի վեր կը դտնուի ազդու խնամքներու բաժանմունքը:

82 տարեկան, Պետրոս Զարոյեան, վերջին վերապրողներէն է (Հրաչ Զարդարեան ալ այլեւս հանդատեան տուն է) գրական սերունդի մը, որ որակ ու դիմապիծ տուաւ Ֆրանսահայ դրականութեան:

ՃԱՏՐԱԿ

Գասպարով եւ Գարբով համաձայնած են եւ փոխ - վրէժի հանդիպումը տեղի կրնայ ունենալ Յուլիսին կամ Օգոստոսին: Երկուքին համաձայնութիւնը հրապարակուեցաւ Շաբաթ օր, ԹԱՍՏ դործակալութեան կողմէ, համամիտ են նաեւ որ հանդիպումը տեղի ունենայ Լենինգրատ, բայց ուրիշ առաջարկներն ալ կ'ընդունին: Կ'ուզեն նաեւ որ ապագային աշխարհի ախոյենութիւնները երեք տարին անդամ մը տեղի ունենան եւ ոչ, ինչպէս ներկայիս, երկու տարին անդամ մը: Իրենց գրաւոր համաձայնութիւնը կ'ենթարկուի միջազգային դաշնակցութեան եւ անոր նախագահին, վերջնական հաւանութեան համար:

Այս ձեւով, կը թուի որ կարգադրուած է փոխ - վրէժի մրցումին հարցը, որ երկու ամիս է բաւական բուռն բնոյթ առած էր եւ կրնար տագնապի մը առիթ տալ:

ԿԻՊՐՈՍ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ ՈՐ ՇԱՏ ԴԺԳՈՀ ԶԳԱԾ Է ԹՈՒՐՔԵՐԸ

Յունուար 23-ի «Ճումհուրիյէթ»էն կը հատնեմ այս լուրը, որու լայնօրէն արձագանգ կ'ըլլար թրքական մամուլը, ընդհանրապէս· -

×

ՆԻՒ - ԵՈՐՔ· - Խորհրդային Միութիւն «անակնկալ» քայլ մը առնելով ՄԱԿ-ի քարտուղար տը Քուէյրի ներկայացուցած է Կիպրոսի հարցին վերաբերեալ առաջարկներու շարք մը, որուն մէջ տեղ կը գրաւէ նաեւ նոյն հարցին լուծումին համար դումարուելիք միջազգային ժողովի առաջարկը:

Խորհրդային առաջարկները կը բաղկանան հետեւեալ կէտերէն· -

1·- Կիպրոսի Հանրապետութիւնը պէտք է մնայ անկախ, միացեալ երկիր մը, որուն դերիչխանութեան տակ կը դտնուի կղզին ամբողջութեամբ:

2·- Կիպրական դաշնակցութեան մը հաւանականութիւնն ալ նկատի առնելով, ներքին հարցերը պէտք է լուծուին կիպրացիներու - յոյն եւ թուրք - կողմէ, առանց արտաքին որեւէ միջամտութեան, հաշտարար բանակցութիւններով:

3·- Ցանգելու համար լուծումի մը անխուսափելի է զինուորական ուժերու կըզձիչն հեռացումը: Օտար երկիրներու բոլոր զինուորները պէտք է հեռանան կըզձիչն:

4·- Կիպրոսի հարցը պէտք է լուծուի Միացեալ Ազգերու կազմակերպութեան մէջ:

5·- Այս հարցի հիմնական լուծումին իրագործման մէկ պայմանն է միջազգային ժողով մը կազմակերպել ՄԱԿ-ի չրջանակին մէջ:

Խորհ· Միութիւն հիւսիսային Կիպրոսի Թուրք Հանրապետութեան հիմնումը նկատած է «Կիպրոսի ներքին գործերուն միջամտութիւ ըլլալուն աչխարհակալութեան մէկ հետեւանքը»:

ԹԱՍ գործակալութիւնը պնդելով, թէ Կիպրոսի հողերուն աւելի քան մէկ երրորդը բռնագրաւումի տակ կը դտնուի, յայտնած է նաեւ թէ ՄԱԿ-ի ընդհ· քարտուղարը դրական դիրք մը ցուցաբերած է խորհրդային առաջարկներուն:

Անդարայի քաղաքական չրջանակները չատ պաղ ընդունելութիւն մը ըրած են Խորհրդային այս առաջարկ - ծրագրին: Ու Խորհրդային Միութեան տրուած պատասխանի մը մէջ ըսուած է թէ «չեն ձայնակցիր» այս առաջարկներուն:

Իսկ Յունաստանի մէջ դոհունակութիւն պատճառած է Խորհ· Միութեան այս քայլը:

Խորհրդային առաջարկը ամէնէն աւելի յուսում պատճառած է Հիւսիսային Կիպրոսի «Թրքական Հանրապետութեան» նախագահ Տէնքթաչի, որ ըսած է· - «Կիպրոս Միացեալ - Նահանգներու եւ Խորհ· Միութեան կրկէսը չէ»:

×

ՄՈՍԿՈՒԱ ԿՂ ՑԵՏԱԶԳԷ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Միւս կողմէ Խորհրդային Միութեան կողմէ միակողմանի կերպով վերջին պահուն յետաձգուած է Թուրքիոյ անտեսական ու մաքսային նախարարին Մոսկուա այցելութիւնը:

Նախատեսուած էր որ պատուիրակութիւն մը Մոսկուա ըլլար Յունուար 22 - 25 թուականներուն, մասնակցելու համար ժողովի մը, ուր օրակարգի նիւթն էր երկու երկիրներուն միջեւ բնական կազի դիծը:

Թուրքիոյ արտաքին նախարարութենէն ըսուած է որ այցելութեան նոր թուականի ճշդումին կը սպասուի Խորհրդային Միութեան կողմէ:

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ

— C. I. C. A. M. —

ԿՈՉԻՆ ԱՌԹԻԻ

Դեկտեմբեր 12-ի մեր թիւով լոյս կը տեսնէր Մխիթարեան միջազգային կոմիտէի հաղորդագրութիւնը, որու վերջին մասը կոչ մըն էր համազգային հանգանակութեան: Հոն կ'ըսուէր թէ այդ նպատակաւ հայահոծ գաղութներուն մէջ պիտի կազմուին ՍԻՒԱՄ-ի հովանաւորութեան տակ յանձնախումբեր: Մինչ այդ ղրամական առաքումները կարելի է կատարել հետեւեալ ձեւով եւ հասցէին·-

Libellez vos chèques bancaires à l'ordre de :
C. I. C. A. M.
et les expédier à
C. I. C. A. M.
c/o Crédit Suisse
92, Champs-Elysées — 75008 PARIS

Ա· ՅԱՆԿ

Պ· Գէորգ Պազըրճեան	20·000
Պ· Պ· Կէնճեան	10·000
Պ· Գր· Ալանեան	10·000
Տոքթ· Սեդա Թիւրաքեան	10·000
Ոմն (Ա· Ա·)	10·000
Պ· Ժան Տէվէճեան	5·000
Պ· Վահրամ Տէվէճեան	5·000
Պ· Ժան Զէօկիւրեան	5·000
Տէր եւ Տիկին Լեւոն Տէր - Սարգիսեան	5·000
Այրի Տիկին Ն· Տէրտէրեան	2·500
Արփիկ Մխսաքեան	2·000
Պ· Ն· Դաւիթեան	1·000
Տիկին Ա· Դաւիթեան	1·000
Տէր եւ Տիկին Գ· Խոսրովեան	1·000
Պ· Նուպար Նիկողոսեան	1·000
Տէր եւ Տիկին Զօհրապ Մուրատեան	1·000
Պ· Յակոբ Հիսայեան	1·000
Տէր եւ Տիկին Տ· Պուլտուքեան	1·000
Պ· Զարեհ Փեհլիվանեան	1·000
Տէր եւ Տիկին Ժ· Հրաչեան	1·000
Պ· Մեսրոպ Մարթայեան	1·000
Տէր եւ Տիկին Քլօտ Հրաչեան	500
Տէր եւ Տիկին Ա· Ղորղորեան	500
Տիկին Ժիւլիէթ Զապուքեան	500
Տիկին Մարիձա Մեսաքսեան	500
Պ· Պարոյր Ուճուդեան	500
Տէր եւ Տիկին Յովն· Պիլէմճեան	300
Տիկին Ա· Իփքրանեան	200
Տիկին Վարդուհի Մուսայեան	200
Տէր եւ Տիկին Ն· Մանուկեան	100

Գումար Ա· ցանկին·· 97·800 Ֆ·:

«ՅԱՌԱՋ 60»Ի ՀԱՆԴԷՍԻՑ ՅԵՏՈՑ

Պատահմամբ ձեռքս անցաւ յօդնած - դեղնած մի գրքոյկ, հրատարակուած Մարսէյլում 1930-ին, որի հեղինակն է Յովհ. Վարժապետեան, գինը՝ 3 ֆրանք, խորագիրը՝ «Ուղեցոյց Մարսէյլի»:

Էջերը թերթելիս ինչ որ չօյող մի բուրմունք առայ իմ ծննդավայրի, իմ ման - կութեան...

Այս գրքոյկը համայնապատկերն է այդ ժամանակաշրջանի Մարսէյլի հայ գաղութի, իր 14 արուարձաններով: Անկասկած, որ պարունակող տեղեկութիւնները ու այլ նկարագրութիւնները մեծապէս օգտակար են եղել ժամանակին մեր գաղթական - անցեղու հայրենակիցներին, ինչպէս որ վկայում է այս գրքոյկի երկրորդ տպագրութիւնը:

Հետաքրքրական է նշմարել թէ որքան բազմաթիւ են եղել այդ թուականին հայկական հաստատութիւնները, վաճառատունները, եւ մանաւանդ հայ արհեստաւորները: Արմատախիլ մի համայնք որի համար չկար Ընկերային Ապահովութիւն կամ ծերութեան թոշակ, արձակուրդը պարատուրիչ չէր, ոչ էլ գործազրկութեան հատուցումը արդար իրաւունք: Մեր ծնողները անպաշտպան «մեթեք»ներ էին, զրկուած «Touche pas à mon pote»ի հրեշտակ պահապանների հոգատարութիւններից ... Աչխատե՛լ եւ ապրե՛լ, այդ էր նրանց օրուայ հրամայողականը:

Աւեմ նաեւ, որ յաճախ միտքս խայթում է մեր առաջի հանդիպումը, ասպետական Ֆրանսայի հետ որ տեղի ունեցաւ ռիւ տէ Տոմինիէեն: Այդ վաստահաբաւ ու փնթի փողոցը որ դառաւ բազմաթիւ Հայերի առաջի հանդրուանը, առաջի զրկախառնումը douceur angevineի հետ...:

Խեղճ չհասկնալ մայրս չէր հասկանում ինչո՞ւ կամ ո՞ւմ են սպասում այդ փողոցում մուտքերի կանդնած կանայքը...

Կորան - գնացին գաղթականութեան այդ դառն տարիները, իրանց հետ տանելով գրեթէ բոլոր դերձակները, կօշկարները, ոսկերիչները, խանութպաններ: Անհետացան նաեւ Սէն - Շառլ կայարանի մօտ թիթեղատանկները: Ժամանակի ընթացքում կարողացանք յաղթահարել գժուարութիւնները, համակերպուել նոր ու խորթ պայմաններին հետ, որոնց ոչ միայն հարմարուել - անկախանալ: Առանց Ֆրանսական Պետութեան որեւէ օժանդակութեան:

Հիմա մեր գաղութում մեծ մասամբ գործիչները՝ բժիշկները, փաստաբանները, ինժիներները, ճարտարարուեստականները, «պիզնեսման»ները...: Ինչպէս պիտի ասէր մեծ - մայրս «Խմայ հըմեն էլլեր են վերոյով»...:

Ուրախալի է անշուշտ այս անտեսական եւ նոյնիսկ պատուարեր յաջողութիւնը, որ թաքցնում է սակայն մտահոգիչ մի նոր կացութիւն: Պարզ այն նկատմամբ որ այդ մտայլ - խառն տարիներին եթէ հայկականութիւնը ապրում - եռում էր մեր հայրենակցական միութիւններով, մեր մատուռներով կամ այլ կուսակցական ու մշակութային մասնաճիւղերով, այդ բոլոր բերդ - օճախների պատուանդանը, կրակ արձարծողը մեր հայատառ մամուլն էր:

Դիտենք 1930-ի «Ուղեցոյց Մարսէյլի» գրքոյկը ուր նշուած է Ֆրանսահայ մամուլը: Նկատում ենք որ Փարիզում լոյս էր տեսնում. -

«Անահիտ» Գրական երկամսեայ
«Ապագայ» Ռամկավար եռօրեայ թերթ
«Արձագանգ Ձմմարտութեան» Կրօնաբարոյական ամսաթերթ
«Բուժանք» Բժշկական ամսագիր
«Դրօշակ» Հ. Յ. Դ. ամսագիր
«Երեւան» Երկօրեայ
«Երկունք» Ջ. Ե. Ո. Մ. ամսագիր
«Զուարթնոց» Գրական ամսագիր
«Կաւռօչ» Երգիծական շաբաթաթերթ
«Հայ Սկաուտ» Հ. Մ. Ը. Մ. ամսագիր
«Նոր Երկիր» Ս. Դ. Հ. շաբաթաթերթ
«Le Foyer» Ֆրանսահայ կիսամսաթերթ
«Ցառաջ» Օրաթերթ:

Իսկ Մարսէյլում. -

«Բանբեր» Հոգեւոր ամսաթերթ
«Հառըն» Ամսաթերթ
«Հայ Գիր» Գրական ամսագիր
«Հայ Սիրտ» Շաբաթաթերթ
«Յոյս» Հոգեւոր ամսաթերթ:

Այսօր, 55 տարիներ յետոյ, այդ բոլորից, միակ վերապրողը «Ցառաջ» օրաթերթն է: Նաւաբեկութիւնից ազատուած միակ կանգուն կայմը, որ յամառութեամբ դիմանում է ժամանակի վայրագ - արօրիչ ալիքներին:

«Ցառաջ 60» մենաւոր, որպէս կոթողը անենթարկման:

Բնականաբար այս հաստատուածս չի վերաբերում այն բազմաթիւ լաւինատառ թերթերին, ամսագրերին որոնք հայկականութիւնը ապրում են, զրում, տարածում թարգմանուած վիճակում...

Անհամեմատելի կազդուրիչ է հաստատել որ Ֆրանսայի եւ նոյնիսկ արտասահմանի բազմաթիւ կազմակերպութիւնները, կրօնական - կրթական հաստատութիւնները ու այլ անձնաւորութիւնները ջերմօրէն չնորհաւորեցին «Ցառաջ»ի 60 դարուները: Հանրածանօթ զանազան հայ ու Ֆրանսացի մտաւորականներ արտայայտեցին իրանց գնահատանքները «Ցառաջ 60» վկայելուչ գրքոյկում: Նրանք վկայեցին այս օրաթերթի կարեւոր առաքելութիւնը հայապահպանման պայքարում, նրա դիմադրական ոգին ի նպաստ մեր լեզուի յարատեւման: Ու վերջապէս այս 60-րդ տարեդարձի հանդէսը պսակուեց Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Վազգէն Ա.ի յուզիչ, ու բովանդակալից կոնդակով:

Սակայն ինչպէս ասում է Ֆրանսացին՝ «il n'y a pas de bonne fête sans lendemain»

Այսինքն յաջորդ օրն է որ պիտի իմանանք թէ որքան իրաւունք ունեցանք ուրախանալու: Որովհետեւ հանդէսի ուրախ ժամերին արդէն միտքդ կամոտում է յաջորդ օրը: Կիրակուայ հաճելի պահերին երբեմն չես ցանկանում դիմաւորել վաղուան արշալոյսը: Քեզ անհան - դըստացնում - սպառնում է Երկուշաբթիի ուրուականը ... Այլ խօսքով մտածում ես մտահոգ՝ վաղը «Ցառաջ»ի փուռից պիտի ստանա՞նք մեր առօրեայ հացը:

Այս մասին էինք խօսում մի քանի բարեկամների հետ երբ զրանցից մէկը, յանկարծ հարց տուեց նեղուած չեչոտով.- «Իսկ մեր ինները Երեւանում ինչո՞ւ լուռ մնացին: Այմէն օր մեզ տալով Հայաստանի լուրեր, մի՞թէ այս թերթը չի նպաստում Հայրենիք - Սփիւռք ոսկէ կամուրջի զօրացման»:

Բարեկամիս դիպուկ հարցումին վարձեցի մի հանդարտեցնող պատասխան տալ.

- Սիրելիս ինչո՞ւ ես այդպէս անհամբեր: Դու չգիտես Հայաստանի օրէնքները: Ինչպէսի սեղանում ամենաթանկագին կենացը, խմում են ամենավերջի բաժակով: Այնպէս որ ուշ չէ, համբերիր.

Պատասխանս չատ համոզիչ չթուաց հրջապատիս: Բարեբախտաբար մի ուրիշ բարեկամ ինձ հասաւ օգնութեան:

- Աւելի ճիշդ կը լինի ասել որ Երեւանում 60 կամ 70-ամեակները կարեւոր տարեդարձներ չեն համարում: Նրանք կլոր թիւեր են նախընտրում: Այսինքն վաստահաբար «Ցառաջ»ը պիտի արժանանայ Երեւանի չնորհաւորանքներին դալիք 100-ամեակին...:

Այնուամենայնիւ եթէ 60 տարիներ չբռնկակ «Ցառաջ»ը եղաւ «մեր տան այն այցելուն, որ մեզ բերեց հողի ապը եւ յոյսի հացը»· ինչպէս նուրբօրէն դրել է Իվ Թերնոն, ցաւօք սրտի թւում է որ մենք ընդունակ ենք ապրել առանց «ապի ու հացի»: Ապա թէ ոչ «Ցառաջ»ը լոյս պիտի տեսնէր գոնէ 30·000 տպաքանակով:

350·000-ի հասնող մի գաղութի համար, ցնորք չէ այս 30·000 թիւը, եթէ նախ ամէն մի անվճար ընթերցող մի քիչ ամօթ զգայ ու վերջ դնի իր ձրիակերութեան: Եթէ նաեւ ամէն մի բաժանորդ պարտք համարի բաժանորդագրել մի քանի ուրիշ Հայերի, որոնք մեր լեզուի հանդէպ լրիւ կոյրեր չեն...:

Առանց այսպիսի դրական արդիւնքի հասնելու ճիգին, «Ցառաջ»ի 60-ամեակի առթիւ յղուած բազմաթիւ չնորհաւորանքներ ու բարեմաղթութիւններ կարող են համարուել քաղաքավարութեան ազնիւ արտայայտութիւններ: Այսպէս ասած՝ «pour se donner bonne conscience»(խղճմտանք հանգստացնելու մի կերպ):

Կ. ՋՐԲԱՇԵԱՆ

«ՈԶՆԻ»Ի ԷՋԵՐԷՆ

ՀՈՍՏԻԿԵԱՆԸ ՀՈՍՏԱՆՈՒՄ Է

(«ԳՈՐԾ» ԹԻՒ 55)

Նա հէնց բեմ է բարձրանում կամ երեւում պատուհանին, հանդիսատեսն իսկոյն ծիծաղում է: Դեռ ոչինչ չասած՝ դահլիճը ժպտում է: Ժողովուրդն ընդունում է նրան: Ուստի վերջերս գործաւ ժողովրդական արուեստագէտ: Իր կեանքի այս դլխաւոր պարգեւին նա արժանացաւ՝ առանց գըլխաւոր դերեր կատարելու: Երկրորդական դերերով առաջնակարդ կատակերգու գարձաւ: Նա հիմնականում էպիզոդիք դերեր է խաղացել, բայց նրա յաջողութիւնը էպիզոդիք չի եղել: Համարեա բոլոր դերերն էլ կմկմալով կատարելով (կեանքում էլ այդպիսին է), նա այնուհանդերձ, պեղպիտական հաճոյք է պատճառում: Թատրոնում ու կինոյում նա ստեղծել է իր «տիպաժը», իր ոճը, իր ձայնը: Եւ չի էլ ուզում երեւալ աւելին՝ քան կայ: Այժմ 55 տարեկան է: Իսկ ո՞վ է նա: Արմէն Հոստիկեանն է: Ուստի դատական այս «Գործը» թուադրել ենք թիւ 55: Ինչո՞ւ դատական գործ, ի՞նչ է պատահել: Վերջերս, երբ Հոստիկեանը եւ Ողնին սիրով զրուցում էին, նրանց մօտեցաւ մի քննիչ եւ միջամտեց զրոյցին, դիտաւորեալ նեղը գցելով դերասանին:

Ահա այդ անիրական զրոյցի իրական չարագրանքը:

×

Քննիչ. - Քաղաքացի Հոստիկեան, խոստովանեցէք ձեր մեղքը եւ խոստացէք այլեւս մեղք չգործել:

Հոստիկեան. - (Անմեղ տեսքով) Ներեցէք, իսկ ո՞րն է ... իմ մեղքը:

Ք. - (Զայրացած) Ձեր մեղքն այն է, որ չգիտէք թէ որն է ձեր մեղքը: Ահա (կարդում է) «Սովետական որոշ մարդկանց կերպարները ծիծաղելի դարձնելու, սովետական ազնիւ եւ աչխատասէր հիմնարկներում ելոյթներ ունենալով՝ աչխատանքային կարգապահութիւնը խանգարելու, ինչպէս նաեւ բազմաթիւ մարդկանց դիմակներով հանդէս գալու համար՝ երեւան քաղաքի բնակիչ, անորոշ դրամմունքի տէր Արմէն Մխալքի Հոստիկեանին համարել հանրայնօրէն խիստ վտանգաւոր անձ, ներկայացնել մեղադրական եզրակացութիւն եւ մեկուսացնել հասարակութիւնից...»: Պարզ է...:

Դուք միանգամայն անլուրջ մարդ էք, ուստի պատկերացնում եմ, թէ ովքեր կը լինեն ձեր ծնողները: Պատմեցէք ճշմարտութիւնը, ճշմարտութիւնը եւ միայն ճշմարտութիւնը:

Հ. - Վախենում եմ ասեմ, գարմանաք: Հայրս՝ Միսաք Թովմասի Հոստիկեանը (1881 - 1938) եղել է փիլիսոփայութեան դոկտոր, մայրս՝ Օլկա Միքայէլի Հոստիկեանը՝ պետական համալսարանի եւ բժշկական հիմնարկի ռուսաց լեզուի ատուղ դասախօս: Հայրս սովորել է Զուիցերիայում եւ Գերմանիայում, աւարտել տատուածաբանական եւ լեզուապատմական դասընթացները, 1907-ին ընտրուել փիլիսոփայութեան դոկտորի պատուան աստիճան: 1909 թուին վերադարձել է Հայրենիք, դասաւանդել Էջմիածնի Գէորգեան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսեան եւ Ժովնանեան դպրոցներում: Հայաստանում սովետական կարգեր հաստատուելուց յետոյ փոխադրուել է Երեւան՝ պատմութիւն, Հայոց լեզու, գերմաներէն ուսուցանել: Գրաբարից աչխարհաբար է թարգմանել Դաւիթ Անյաղթի աչխատանքները, եղնիկ Կողբացու «Եղծ ազանդոց»ը: Մտերիմ է եղել Կոմիտասին, Ժովհ. Ժովհաննիսեանին, Աբեղեանին, Խրիմեան Հայրիկին, Թոմանոս Մելիքեանին, Մառին, Լէոյին ... Թարգմանել է Վէմփէրի «Ընդհանուր պատմութիւն»ը, կազմել գերմաներէնի դասագիրք հայկ. դպրոցների համար...:

Ք. - (Զարմացած) Երբեք մտքովս չէր անցնի, որ ձեր ծնողներն այդպիսի լուրջ մարդիկ են եղել, իսկ նրանց որդի Հոստիկեանը, այդքանից յետոյ, ծիծաղ ու բերկրանք է չռայլում: Այնուհետեւ՝ աւելի լաւ է ձե՛ր մասին պատմէք: Որտե՞ղ էք աչխատում: Եւ, ընդհանրապէս, որ եւէ տեղ աչխատո՞ւմ էք:

Հ. - Այո, ակադեմականում:

Ք. - (Հեգնանքով) Զլինի՞ ակադեմիկոս էք:

Հ. - Ո՛չ, դերասան եմ: Ուղիղ 33 տարի է՝ աչխատում եմ Սունդուկեանի անուան պետական ակադեմական թատրոնում:

Ք. - Ախ, թատրոնո՛ւմ ... կարծեմ վերջերս ձեզ մօտ ինչ - որ գաղտնի - ռոմանտիկական բաներ եղան .... Պետրոսին ազատեցին ... լաւ չխազայ ...

Հ. - Պետրո - Մետրո չդիտեմ ... Աւելի լաւ է՝ հարցրէք, թէ ինչո՞ւ քիչ են խաղում Բադէնը, Մեսրոպեանը, Վարդուհին, Մհերը ... Իսկ ես տարին 200 անգամ խաղում եմ, պա, մեղք չէ՞մ:

Ք. - Մեղք էք, դրա համար էլ մեղաւոր էք ... Զլինի՞ այսքանից յետոյ կոչում էլ ունէք:

Հ. - Վաստակաւոր էի, գարձայ ժողովրդական:

Ք. - Ժողովրդակա՞ն ... Երեւում է՝ լաւ բարեկամներ ունէք:

Հ. - Այո՝ մի մէ՛ծ եւ խոչո՛ր բարեկամ:

Ք. - Մեծ եւ խոչո՞ր ... Ո՞վ է:

Հ. - Ժողովուրդը:

Ք. - (Ուշքը գնում է) Ժողովո՞ւրդը... Հա՛ - հա՛ - հա՛ ... Ձե՞ռ էք առնում ինձ, քաղաքացի Հոստիկեան: Ժողովուրդն ո՞վ է...

Հ. - Ժողովուրդն ամէն ինչ է: Ես նրանո՛վ եմ ապրում:

Ք. - Իսկ որոշակի՝ որտե՞ղ էք ապրում: Ընտանիք - մընտանիք ունէ՞ք:

Հ. - Երկու երեխայ, կին, զոքանչ: Սկզբում զոքանչս դէմ էր մեր ամուսնութեանը:

Ք. - Ե՞ս էլ դէմ կը լինէի: Դերասանի ... ցա՛ծր աչխատասէր ... Ի դէպ, որտե՞ղ էք ապրում:

Հ. - Թատրոնի մօտ՝ քաղաքային զրահատան եւ քաղաքային բաղնիքի միջեւ, քաղաքացի քննիչ:

Ք. - Ա՛հ ... Ուրեմն՝ դէպի թատրոն տանող ձեր ճանապարհը հեչա է եւ մօտ:

Հ. - Այնքան էլ հեչա ու մօտ չէ ... Ամէն առաւօտ նայում է չուկային ... Իսկ ես դերասան եմ...:

Ք. - Հետաքրքիր է, հլա մի երկու բան պատմէք էդ դերասանների մասին:

Հ. - Խնդրեմ: Օրինակ՝ Հորէն Աբրահամեանը երկու տարով փոքր է ինձնից, բայց վերջերս մի անծանօթ կինո տեսնելով մեզ եւ ցոյց տալով Հորէնին, դիմեց ինձ. «Ցդա չան, էս քո հա՞յրն է»: Աբրահամեանը զայրացաւ եւ ասաց. «Ո՛չ, պա՞պն եմ...»: Մի անգամ Աւետ Աւետիսեանի սրբիչը դիմամաք թաքցրի եւ ասացի.- «Աւետ Մարքիչ, սրբիչը չկայ, երեւում է՝ ձեզ գաղտնի հետեւում են» ... իսկ նա հանդիսաւ ասաց. «Հանգիստ եղիր, ես էլ ուրիշների՞ն եմ հետեւում»: ... Մի անգամ ինքնաթիռում, տասը հազար մեթր բարձրութեան վրայ, գայլացրի Վահրամ Փափազեանին: Նա գնաց օդաչուների մօտ եւ լրջօրէն բողոքեց. «Ես չեմ կրնար նոյն ինքնաթիռին մէջ լինել էս մանչուկներուն հետ ... թողէք կամ նա՝ իջնի, կամ՝ ե՛ս...»:

Ք. - Տեսնո՞ւմ էք, ինքնաթիռում էլ ձեզ լաւ չէք պահում: Ես նոր միայն սկսեցի ձեր որոշ դերերը: Օրինակ՝ «Մակդլիում» ինչո՞ւ էք կոլտնտեսութեան հորթին ասում. «Զահրումար, դուռանդ հայվան»: Երեւում է որ դուք էդ գլխից դէմ էք եղել պարենային ծրագրին: Եւ, ընդհանրապէս, ի՞նչպէս կարելի է վիրաւորել կոլտնտեսութեան անասունին: Ցիշէք՝ մարդկանց կարելի է, անասունները՝ երբե՛ք: Եւ կամ՝ «Նուագախմբի ազաներ»ում ասում էք. «Որ խմանամ՝ ինչ ասեմ, կ'ասեմ»: Դուք, իրո՞ք է, ձե՞ռ

էք առնում օրէնքի պահապաններին: Ասացէք, այդպէ՞ս է թէ՞ չէ:

Ս. - Ո՛ր լմանամ՝ ինչ ասեմ, կ'ասեմ: Բայց ե՛ս չեմ ասել...

Ռ. - Հիմա նո՛ւ ինձ էք ձեռ առնում: Լա՛ւ: Իսկ ինչո՞վ բացատրել, որ «Քանի դեռ կամ» ներկայացման մէջ ձեզ անուանում էք «ղեկավար մարմին»: Դուք ի՞նչ մարմին էք ախր: Նայե՞լ էք ձեզ վրայ: «Իմ ասունը քո ասունը չէ» ներկայացման մէջ խալխի կանանց ասում էք. «Թշիկդ ուտեմ»: Ի՞նչ է, սեւական կին - մին չունէ՞ք: Սա ի՞նչ անբարոյականութիւն է: «Քաջ Նազար»ի մէջ ասում էք. «Թալեմ - բռնեմ»: Բռնողը դո՞ւք էք, թէ՞ մենք:

Ս. - Դո՛ւք էք:

Ռ. - Կարծեմ «Ապուշ» էլ էք խաղում...

Ս. - Ապուշը ես չեմ ... Ես ուրիշ դեր եմ խաղում:

Ռ. - «Պարոն Ապուշ, - ասում էք բեմում, - եթէ պարտքով դրամ խնդրեմ, չտաք, միեւնոյն է՝ չեմ վերադարձնի»: Սա ի՞նչ է, քաղաքացի Խոստիկեան, յանցանք չէ՞:

Ս. - Բայց ե՛ս չեմ ասում, այլ իմ հերոսները:

Ռ. - Ֆլոպէրն ասել է՝ «Մատամ Պովարին՝ ե՛ս եմ...»:

Ս. - Բայց ես ... կին չեմ:

Ռ. - Այդ դեռ կը պարզե՛նք: Ինչո՞ւ վերջերս հեռուստատեսութեամբ ասացիք, թէ ուզում էք Ռոմէօ եւ Ժիւլիէթ խաղալ ... Արտասահմանում մի կին ձեզ հարցրել է. «Հայաստանում հաց կա՞յ» իսկ դուք պատասխանել էք. «Պա իմ փափուկ մարմինն ինչի՞ մասին է վկայում...»: «Հրդեհ» կինոնկարում մի լիքը տոպրակ չաքար էք ուտում: Տղամարդն այդքան չաքար կ'ուտի՞: Իրը պատուագինը քիչ է, Պետութեան հաշուին էլ չաքար էք ուտո՞ւմ: Վերջերս էլ «Ոգնի»ում ասել էք, թէ իրը «Հայֆիլմ»ում չատերը մայրենի լեզուն չգիտեն, թէ իրը պէտք է վրացերէն խօսէք, որ ձեզ նկարահանեն, թէ իրը ... ի՞նչպէս հասկանալ այս ամէնը:

Ս. - Հասկացէք այնպէս՝ ինչպէս ասել եմ:

Ռ. - Դուք իրաւունք չունէք այդպէս ասելու, որովհետեւ 30 տարում չէք աճել: «Ոսկէ գլխիկ»ում հորթատարհ էիք, 30 տարի անց՝ «Հրդեհ»ում՝ ընդամէնը ... հովիւ: Եթէ լաւ դերասան էք, ինչո՞ւ առաջ չեն քաշում:

Ս. - Ես կատարել եմ նաեւ նախաբարի դեր:

Ռ. - Հնարաւոր է որ աւելի բարձր՝ փոխ - նախարարի դեր էլ կատարած լինէք, ի՞նչ օգուտ: Իսկ ի՞նչպէս է եղել որ չունկայում մի կին ձեզ ձրի կանաչի է տուել:

Ս. - Ուրիշներին ծաղիկներ են տալիս, ինձ էլ թող կանաչի տան:

Ռ. - Միութենական անուն հանէք՝ ձե՛զ էլ ծաղիկներ կը տան:

Ս. - Թող Ռիազանովի կամ Կայտայի Ֆիլմերում մի անգամ նկարահանուեմ, կը տեսնէք թէ ի՛նչ անուն կը հանեմ ... Ի դէպ, Քիեւում մեր հիւրախաղերի ժամանակ լինում էր՝ ինձ էին ծափահարում: Մեր դերասաններն ամէն անգամ ասում էին. «Էլի Խոստիկեանի հանդիսատեսներն են եկել»: Մի օր չհամբերեցի, ասացի. «Իսկ ձե՛ր հանդիսատեսները ե՞րբ են գալու»:

Ռ. - Հաւատացած եմ որ դո՛ւք էք կազմակերպել որ ձեր ծանօթները գան: Ի դէպ, ինչո՞ւ էք ժպտում:

Ս. - Ես մի նշանաբան ունեմ. «Ժպտա նոյնիսկ ցասման պահին»:

Ռ. - Հիմա ցասման մէջ էք հա՞, իրը հումոր էք անո՞ւմ:

Ս. - Ա.Ճկմեանն ասել է՝ ով հումոր չունի, տաղանդ չունի:

Ռ. - Լսել եմ որ ժամանակին «Ազատագրում» ֆիլմի համար ձեզ հրաւիրել են՝ կատարելու Մարշալ Բագրամեանի դերը: Եթէ տաղանդ ունենայիք, կը կատարէիք:

Ս. - Տաղանդ ունեմ, բայց ցանկացայ որ Ֆիլմում մարշալը սիրուն երեւայ...: Ուստի հրաժարուեցի:

Ռ. - Չէ՛, քաղաքացի Խոստիկեան, կամց - կամց ... իմ դուրը գալիս էք: Ես էլ պիտի հրաժարուեմ ... ձեզ մեկուսացընելուց: Բայց՝ մի պայմանով, խոստացէք, ընկեր Խոստիկեան, որ այսուհետեւ ...

Ս. - Խոստովանում եմ, որ այսուհետեւ ... աւելի՛ ուրախացնեմ մարդկանց...:

ԱՐԱՄԱՑԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ

ԶԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ԼԻՈՆ

ԿԱՐԴԻՆԱԼ ՏԸՔՈՒՐԹՐԷ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՋ

Էքիմէնիք չարժման ծիրին տակ, Լիոնի մէջ, Հայ Առաքելական Եկեղեցւոյ եւ կաթողիկէ հոգեւորական դասին միջեւ, տարիներէ ի վեր, յարաբերութիւնները աւելի քան բարեկամական են: Քանի մը անգամներ արդէն, ըլլայ իր նախորդը՝ Կարդինալ Ռընար, ըլլայ ներկայ Արքեպիսկոպոսը, կարդինալ Տըքուրթրէ այցեյած են Ս. Յակոբ Եկեղեցին, ներկայ եղած արարողութեանց:

Այդ չփումները աւելի սեղմ, հաճելի երեւոյթ մը կը ստանան առենէ մը ի վեր, շնորհիւ Նորվան Եսպիսկոպոսի դիւրաբոյր յարաբերութիւններուն եւ նաեւ Լիոնի Ծիրանաւորին բարեացակամ ոգիին՝ հանդէպ Հայութեան: Կը յիշուի որ, անցեալ Ապրիլ 24-ին, Սէն - Ժան Մայր Եկեղեցիին մէջ, հայածէս պատարագին ընթացքին, Լիոնի Արքեպիսկոպոսը՝ որուն տիտղոսն է Փրիմա տէ Կոլ, իր քարոզին մէջ, ուժգնօրէն արտայայտուած էր ի նպաստ մեր դատին, առանց կանգ առնելու իր պաշտօնին բերմամբ աւելի զգոյշ դիրք մը բռնելու փորձութեան առջեւ: Մանաւանդ որ իր ծրագիրներուն մէջ էր Պոլիս այցելութիւն մը զոր ըրաւ վերջերս:

Այս անգամ, Ազօթքի Շաբաթուան առթիւ, որ դրուած էր «Պիտի ըլլաք վկաներս» բնաբանին տակ, Ս. Յակոբ Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ էր որ կարդինալը քարոզեց: Պատարագիչն էր՝ Նորվան Եպիսկոպոս Զաքարեան:

Յունուար 19-ին ուրբաթ եկեղեցին ամբողջովին լեցուն էր հայ թէ ֆրանսացի հաւատացեալներով: Պէտք էր եղած ընդունիլ ժողովուրդին մէկ մասը յարակից հանդիսասրահին մէջ՝ որ կապուած էր Խորանին հետ հեռատեսիլի ցանցով մը:

Կարդինալին քարոզը այս անգամ զուտ հոգեւոր էր, աւելի պատշաճի: Փակեց իր խօսքերը ըսելով որ աւելի քան երբեք պայմանները կը պարտադրեն յառաջացում դէպի եկեղեցիներու միութիւնը:

Նախորդ իրիկունը, Քառասնորդաց Տրնի ընդարձակ եկեղեցին մէջ՝ ուր եւս տեղի ունեցաւ էքիմէնիք արարողութիւն, ի ներկայութեան Լիոնի գանազան քրիստոնեայ համայնքներու հոգեւորականներուն, Նորվան Եպիսկոպոս չատ աւելի խորունկ, կրօնաչունչ, չուրջ քսան վայրկեան տեւողութեամբ, Ֆրանսերէն ելոյթ մը ունեցաւ ծանրանալով մասնաւորաբար Սուրբ Երրորդութիւն բացատրութեան վրայ: Յիշեց Նարեկացիին տողերը, թէ՛ Ֆրանսերէն, թէ՛ հայերէն՝ «Մի երրորդութիւն կատարեալ ի յաւձանց երից, օրհնեալ յաւիտեանս»:

Իր պատգամը վերջացուց մաղթելով որ՝ «կարենանք վկայել միասին (բոլոր եկեղեցիները) որպէսզի աշխարհ ունենայ հաւատք ի փառս Աստուծոյ, հիմա եւ յաւիտեան»:

Կարդինալին եւ Աւետարանական Եկեղեցւոյ հովիւ Պ. Վակնէրի այցելութիւնը Ս. Յակոբ Եկեղեցին, առիթ տուաւ Ազգ. Միութեան վարչութեան ճոխ ընդունելութիւն մը կազմակերպելու Հայ Տան դըլխաւոր հիւրասրահին մէջ: Հաւաքոյթը անցաւ ջերմ մթնոլորտի տակ: Վարչութեան նախագահ Պ. Կազարեան կարդինալին ներկայացուց իր գործակիցներն ու համայնքին անձնաւորութիւններէն ոմանք՝ որոնց հետ Արքեպիսկոպոսը փոխանակեց քանի մը խօսք:

Քրիստոնեայ Եկեղեցիներու Միութեան համար ազօթքի շաբաթը՝ որուն նախաձեռնարկ եղած է, երեսունական թուականներուն, լիոնցի հոգեւորական մը՝ Փօլ Ռութիւրիէ, կը շարունակուի կանոնաւորաբար տարիներէ ի վեր: Անխոհեմութիւն կ'ըլլայ անշուշտ ակնկալել, երեւակայելի ապագայի մը մէջ, իրական, բացարձակ միութիւն մը, որքան որ այդ ուղղութեամբ շարժում մը գնահատելի ըլլայ տրամաբանօրէն:

Թերեւս անտեղի չըլլայ յիշել հոս ինչ որ ամենայն Հայոց Կաթողիկոսը ըսաւ, իր դահակալութեան 30-ամեակին առթիւ, իր ունեցած ելոյթին ընթացքին, Էջմիածին, 1985 Սեպտեմբեր 30-ին:

... «Ինձ համար Եկեղեցիներու Միութեան հարցը միայն դաւանաբանական, - տեսական հարց չէ, այլ նաեւ՝ եկեղեցական ինքնիշխանութեան հարց եւ ազգային ինքնութեան պահպանման հարց: Բոլոր եկեղեցիներու միութիւնը իրակա - նանում է Քրիստոսով, բոլոր քրիստոնեաները կազմում են միասին Աստուծոյ ժողովուրդ: Ուղիղ չէ եւ ոչ էլ աւետարանական՝ այլ եւ այլ տուեալներով կամ մեկնաբանութիւններով պայմանաւորել այս պարզ ճշմարտութիւնները եւ անձնատուր լինել անպտուղ վէճերի:

... «Հայ եկեղեցին իր ժողովուրդով մէկ եւ անբաժան է, ինքնագլուխ եւ ինքնիշխան: Ու այդպէսով, նա համաքրիստոնէական եղբայրութեան, Աստուծոյ ժողովրդի մէկ հարազատ հաստատն է: Առանց այդ ինքնուրոյնութեան ու ինքնիշխանութեան, հայ ազգի հաստատքը կը խախտի, կը խամրի: Հայոց քրիստոնէական հաստատքի վաւերականութիւնը եւ վեհութիւնը, համայքը խարսխուած են նրա ուղղափառութեան վրայ, նրա եկեղեցու ինքնիշխան եւ ինքնագլուխ ղեկավարման վրայ»:

Այս է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ անխախտ դիրքը Եկեղեցիներու միութեան հարցին հանդէպ, ինչ որ ըսել չէ թէ հայ եկեղեցւոյ տարիներէ ի վեր տեւող մասնակցութիւնը էքիմէնիք չարժման անտեղի է:

Հայերը պէտք է ներկայ ըլլան քրիստոնէական հաւաքոյթներու մէջ ամէն տեղ ուր կարելի է: Այդ կը պահանջեն, կը կարծենք - ուրիշ չատ չատերու հետ անկասկած - Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին համայքը, հեղինակութիւնը:

ՎԱՂԻՆԱԿ ՄԻՍՔՃԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՁՕՆ ԱՌ ՄԱՍԻՍ

ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Եւ Լինէը խորհում է. զեզակերպ ուրուագծով, հպարտ կեցուածքով այս լեռը, որ նուաղում է մարդու հոգու նուրբ լարերի վրայ, լսում է արձագանգը բոլոր կրօնքերից, լռելով միայն նրանց վախճանի մասին: Եւ բնութեան այդ մեծ տաճարին դէմ - յանդիման ինչքա՜ն հասարակ են թւում նրանց տոկմանները: Եւ անհնար է չզգալ՝ լեռը բոլոր կրօնների մայրն է, որոնք տարբեր կածաններով իջնելով, հեռացել են ու տարածուել:

Ինչպէս որ իր ժամանակի, այսօր եւս մեզ համար կարեւոր է եւ ուսանելի Լինէի մի խորհրդածութիւնը. մեր դրամատուրքները եւ վիպագիրները պէտք է ներընչուին այս բնութեամբ: Գեղեցիկ, տղայ, անարատ բնութիւնը ոչ միայն ատողացնում է մարդու հոգին, այլեւ պայծառացնում նրա միտքը:

Վայրէջք. քարակուտակների մէջ սքանչելի ծաղիկներ, գիհու թփերին գիրկընդխառն աստղաձեւ ծաղիկներով մի բոյս. վայրի վարդերի պուրակներ, որ գոր ու դիշեր օրօրւում են լերան չնչից:

×

26 Ապրիլի, 1980 թ.

Առաւօտեան ժամը 10-ն է: Ամպերի չգեղ կուտակները բարձրանում են ստորոտից եւ մօտենալով զագաթներին, օդակում: Եւ սպիտակ - կապտաւուն ամպերի կենտրոնում Մեծ ու Փոքր զագաթները կարծես եթերային փափկութեամբ էին լցւում: Գուցէ դա՞ է երգի պատրանք ստեղծում: Թէ՞ անհաս է, եւ, միաժամանակ, այդքան աչքի առաջ:

Մեծն Արարատ, դու, որ այդքան դեղեցիկ ես, իրականում նոյնիսկ երազային - դեղեցիկ, մարդկանց երեւակայութեան մէջ առ առաւելն ես: Ձեռանչափայլ բառը քեզ համար է ստեղծուած: Եթէ որեւէ տեղ բնութեան մէջ գոյների թագաւոր ընտրէին, ապա դու սպիտակի թագաւորը պէտք է լինէիր: Սպիտակի թագաւորը, որի չուրջը պար են բռնել ծիածանի միւս գոյները եւ անդօր են իրենց բազմագունութեամբ մրցել վսեմափայլ սպիտակի հետ: Եւ երբ համոզւում եմ, որ վերջնականապէս դերուել եմ Արարատի դեղեցկութեամբ, կրկին ականջիս են հասնում երփներանգ զանգեր, որոնցով մեծ նկարիչը, Սարեան Մարտիրոսն է խօսում: «Գոյն, լոյս, երազ - ահա ինչով եմ ես այրուել»:

×

8 Մայիսի, 1980 թ.

Ծիածանի եօթ գոյն: Զայնային նրբերանգների եօթ հնչիւն: Աչխարհի եօթ հրաշալիք: Կախարդական եօթ թիւ եօթերորդ երկինք: Պարզում է նաեւ՝ ծաղիկների եօթ բուրմունք:

Բնութեան այս ի՜նչ ներդաշնակութիւն է, այս ի՜նչ փոխկապակցուածութիւն, պարփակուած խորհրդաւոր եօթի մէջ: Եւ պատկերացրէք, այդ եօթ բուրմունքներից նախապատուութիւնը տրւում է կիտրոնի թոյլ բոյրին, որը մեր լեռնաչխարհում չատուկ է չատ տեսակի ծաղիկների:

Եւ հետաքրքիր մի բան եւս. այդ եօթ բուրմունքները, որ մոլորակի տարբեր վայրերին է վերաբերում, մեր լեռնաչխարհում մի քիչ տարբեր է: Բուրմունքներն աւելի ուժեղ են եւ մնայուն: Եւ սա նոյնպէս իր բացատրութիւնն ունի՝ լեռներում արեւի ճառագայթների ուժգնութեանն ենք պարտական:

Ուրցի բուրմունքը՝ արեւից եփուած լանջերում եւ քարքարուտներում: Մանրիկ տերեւներ, մանրիկ, կապոյտ ծաղիկներ եւ մեռապալարի նման ամուր ցօղուններ ու արմատներ, որոնցով կառչում է քարին ու հողին եւ պնում է խորը՝ ջրի եռեւից. եւ արեւի տակ խարակուելով, իր մէջ է ներառնում զգլխիչ բոյրն ու բուժիչ յատկութիւնները:

Վայրի վարդի բոյրը՝ Արարատի լանջերին այնքա՜ն չատ: Մանուշակինը, համապրամինը, տերեփուկինը, մասրենու վարդը, որի աքանչելի բուրմունքին արեւի ջերմութիւն է խառնուած:

(Շար. 7)

Պ. Զարեհ Զաքմըշեան, զաւակներն ու թոռները, ինչպէս նաեւ ընտանեկան բոլոր պարագաները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց կնոջ, մօր, մեծ - մօր՝

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԶԱՔՄԸՇԵԱՆԻ
(Ծնեալ՝ Թորոյեան)

մահը, որ պատահեցաւ Յունուար 23-ին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի, երեքշաբթի, Յունուար 28, ժամը 10·30ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ եկեղեցին: Մարմինը կը փոխադրուի Մարսէյլ, ուր կը կատարուի թաղումը:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իրրեւ այդ նկատել:

«ՅԱՌԱՋ». - Մեր ցաւակցութիւնները Պ. Զարեհ Զաքմըշեանի:

ԱԷՆ - Թ'ԷԹԻԷՆ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Փետրուար 2, Կիրակի, առաւօտեան ժամը 10·30-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ, պատարագ կը մատուցուի:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Միրով կը հրաւիրուի ընթերցասէր հասարակութիւնը՝ ներկայ գտնուելու սոյն արարողութեան:

COMMUNIQUÉ

Le Comité de Défense des Prisonniers Combattants de la Cause Arménienne est heureux de vous annoncer que, grâce à ses multiples démarches auprès du consul et des instances juridiques de Yougoslavie, Haroutioun Lévonian a été transféré à l'hôpital de la prison de Belgrade, où il pourra recevoir les soins médicaux que son état éxige.

Le Comité vous demande donc d'adresser votre courrier à

LEVONIAN Haroutioun
K533-83 Zatvor Okruzno
Souda Bolnica Bacvanska
Ul 11000 - BELGRADE
YOUGOSLAVIE

Pour rappel, voici l'adresse de Raffi ELBEKIAN :
Kazneno Popravni Dom M.BR.3156
22000 - SREMSKA MITROVICA
YOUGOSLAVIE

Par ailleurs, suite à son appel, le Comité à commencé à recevoir des dons et il en remercie les donateurs.

Il rappelle, que les chèques doivent être libellés à l'ordre du
C. D. P. C. C. A.
17, rue Bleue - 75009 PARIS

Nos prisonniers ont besoin de la solidarité de tous les Arméniens.

C. D. P. C. C. A.

Հ. Բ. Ը. Մ.

Ողեկոչում Վարդանանց Հերոսամարտի

Կիրակի, Փետրուար 2, ժամը 16-ին Ալեք Մանուկեան Մշակ. կեդրոնին մէջ:

118, rue de Courcelles, 75017 PARIS

Օրուան խորհուրդը կը պարզէ՝
ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆ
Գեղարուեստական բաժին
Մուտքը ազատ է:

ՇԱՐԹԱՆԿԱՐ

Հայկական Շարժանկարի Երեկոյթ կազմակերպուած Պանէէօ - Քաչանի միջոցայ վարժարանի կողմէ, 1986 Յունուար 28, Երեքշաբթի իրիկուն, ժամը «ճիշդ» 20·30-ին:

Հասցէն. -
Théâtre VICTOR HUGO
14, ave .Victor Hugo - Bagneux

1.- Փոքրերու համար յատուկ ցուցադրութիւն:
2.- Ցժվըժիկը. (տէէն ամիմէ):
3.- Հայրիկը:

A l'initiative de FRANCE-ARMENIE
le Vendredi 31 Janvier à 18 heures 30
GERARD CHALIAND
présentera
le livre de James T. HASHIAN
«LE SEL DE LA VENGEANCE»
Ed. Stock
«Voici venu le temps de romans d'aventure sur les évènements tragiques de 1915». FRANCE-ARMENIE
Présentation et signature du livre :
à l'ESPACE ARMENIEN
40, rue d'Arménie - 69003 LYON
à partir de 18 heures 30

×

à 20 heures 30
Une SOIREE DE RENCONTRE avec...
GERARD CHALIAND
autour du roman de James T. HASHIAN
«LE SEL DE LA VENGEANCE»
— *Lecture publique* d'extraits du livre par Vahé ZEKIAN.
— *Signature* par Gérard CHALIAND.

Vahé ZEKIAN
metteur en scène
(Compagnie du Dauphiné - Théâtre de l'Ouest Lyonnais (T.O.L.) - Théâtre Arménien de la Maison de la Culture Arménienne de Décines).
Salle H. SAMUEL
Maison de la Culture Arménienne
15, rue du 24 Avril 1915 - DECINES
à partir de 20 heures 30

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ՄԱՐՍԷՅԼ. - Վասպուրականի Ճազթական Հերոսամարտի 71-րդ տարեդարձի տօնակատարութիւնը Ապրիլ 13-ին, նուիրուած Հայ Մշակոյթի Տան Վասպուրական սրահի տասնամեակին:

×

Մարսէյլի բոլոր կազմակերպութիւններն կը խնդրուի նկատի առնել Մարտ 16 եւ 23 Թուականները՝ դրաւուած օրեր Գարուն Մանկանց Երգչախումբի կողմէ:

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ

Ֆր. Կապոյտ Խաչի պատգամաւորական ժողովը տեղի կ'ունենայ Փարիզ, Շաբաթ եւ Կիրակի, Փետրուար 1 եւ 2:

INAUGURATION DU MEMORIAL ARMENIEN DE MONTPELLIER
DIMANCHE 16 FEVRIER

○ 9h . MESSE de REQUIEM (Basilique N. D. des Tables à 100 m. du Mémorial) avec la Chorale Sahak - Mesrop de Marseille.

○ 11h : INAUGURATION du MEMORIAL sous la présidence de Méliné Manouchian. Discours, bénédictions et dépot de gerbes.

○ 13h : RECEPTION à l'Hôtel de Ville. Un repas arménien sera servi (participation : adultes 100 frs. / enfants 50 frs.*).

* *Réservation obligatoire par courrier* avant le 10 février *au siège d'*«ARMENIE VIVANTE» 7, *ave. de Toulouse*
34100 *MONTPELLIER*

ՅՕՐԴ ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ
ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ

կազմակերպուած՝
ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՓԱՐԻԶԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ
կողմէ
մասնակցութեամբ՝ ԼԻՈՆԻ ՇՐՋԱՆԻՆ
Կիրակի, Մարտ 2, կէսօրէ վերջ ժամը 14·30–ին
SALLE DE LA CHIMIE
28 bis, rue Saint Dominique — Paris 7e
(métro : Invalides)
մասնակցութեամբ՝ ՖՐԱՆՍԱԿԱՆ Ս. ԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
պետերուն եւ խումբերուն եւ օտար սկաուտ հիւրերու
— Սկաուտական ճոխ յայտագիր —
Արեւոյշներուն, Արիներուն, Թեւիկներուն եւ Գայլիկներուն կողմէ հայերէն ներկայացումներ, հայկական երգեր եւ նոր պարեր
Թեւիկներէն եւ Արեւոյշներէն, հայերէն կատակերգութիւններ՝ Սկաուտներուն եւ խմբապետերուն կողմէ:
Մուտք՝ 40 Ֆրանք Փոքրիկներուն՝ ձրի

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Ֆրանսահայ կապոյտ Խաչի, Առնուվիլ - Մարսէյլի մանաճիւղի տարեկան մեծ պարահանդէսը՝ Մարտ 22-ին:

Մանրամասնութիւնները յետագային:

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

ՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ ԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
կը կազմակերպէ
ՄԵԾԱՐԱՆՈՑ - ՃԱՇ
ի պատիւ
ԳԷՈՐԳ ՊԱԳԸՐՃԵԱՆ Ի
հայրենասիրական գործունէութեան առթիւ
հովանաւորութեամբ երեք յարանուանութեանց
եւ ներկայութեամբ Գալիֆորնիոյ կառավարիչ Պ. ՏԷՕՄՏԷՃԵԱՆ - ի
ներկայացուցիչ՝ Պ. ՍԷՐԱՑՏԱՐԵԱՆ - ի
Կիրակի, Փետրուար 2, ժամը 14–ին
HOTEL INTERCONTINENTAL
3, rue de Castiglione — Paris 1er
— Գեղարուեստական պատշաճ բաժին —
Տոմսերը ապահովելու համար հեռաձայել ժամը 8–էն 10
42–96–09–82 թիւին, կամ ճաշի ժամերուն՝ 43–29–54–31 / 46–42–45–25
Թիւերուն, մինչեւ Յունուար 30:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԻՒՆ
ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՓԵՏՐ. 23
Մանրամասնութիւններ՝ յետագային:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Փրոֆ. Գառնիկ Ալեքսանեանի մահուան առթիւ, Հ. Բ. Ը. Միութեան Ֆրանսայի Շրջ. Յանձնաժողովը ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները՝ ի նպաստ և անձեռնմխելի հիմնադրամին՝ Տօքթ. և Տիկին Ժ. Ալեքսանեան 5000 Ֆ., Պ. Ղ. Գութան 1000 Ֆ., Հ. Բ. Ը. Մ. Փարիզի Տիկնանց Յանձնախումբի անդամուհիներ 1000 Ֆ., Պ. Ս. Տամլամեան 500 Ֆ.:

×

Այրի Տիկին Դէվրիզ Ֆընտըգեանի մահուան առթիւ կարմիր Խաչի Պուա-Գոլոմպի շրջանին մասնաճիւղի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները. - Տիկին Մարիամ Սարաճեանէ 100 Ֆ., Տիկին Պերճուհի Առաքելեանէ 100 Ֆ., Տիկին Սեդա Պիրսէյէն 50 Ֆ., Տիկին Սոնա Սերոբեանէ 50, Օ. Լիւսի Ղազէրեանէ 50 Ֆ.:

×

Ալֆորվիլի Հայ Մշակոյթի Տան վարչութիւնը շնորհակալութեամբ ստացաւ հետեւեալ նուիրատուութիւնները. - Պ. Վալանթէն Թիւրիէնէ 300 Ֆ., Պանէէօյէն խումբ մը տիկիններէ 400 Ֆ., Պանէէօյէն՝ Տէր եւ Տիկին Բէքմէղեանէ 200 Ֆ.:

×

Շաւիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները. - Օր. Աննիկ Էքպէրեան (դպրոցին եւ եկեղեցւոյ պայծառութեան) 700 Ֆ., Տէր եւ Տիկին Ցարութիւն Տատուրեան՝ Սարգիս Դաւիթեանի մահուան առիթով 300, Տէր - Գալուստեան եղբայրներ, Տիկին Պուլօ-ի մահուան առիթով՝ 150 Ֆ., Տէր եւ Տիկին Թէրզեան 50 Ֆ.:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԸ
ԵՒ
Էլիզ Գաւուճեան - Այվազեան
Գրական Մրցանակ, Կիրակի, Փետրուար 9, ժամը՝ 13-ին:
«ՍԵՒԱՆ»
Ճաշարանին մէջ:
1, boulevard Carnot
17, quai Jean-Baptiste Clément
94140 Alfortville
Métro : Ecole Vétérinaire (Maisons-Alfort) prendre le bus no. 103 et descendre Place Carnot)
Կը նախագահէ՝
Ս. Ք. ՋԱՆԳՈՒ
1985-ի գրական Ա. մրցանակի (1500 · ական Ֆրանք) արժանացողներն են՝
Արձակագիր՝ Յակոբ ԿԱՐԱՊԵՆՑ (Նիւ-Եորքէն), իսկ Բանաստեղծ՝ Զարեհ ԽՐԱԽՈՒՆԻ (Պոլիսէն):
Լեւոն ՍՈՓՈԿԼԵԱՆ կ'արտայայտուի՝ 3 · կարապետցի «ԱԴԱՄԻ ԳԻՐՔԸ» վէպին, իսկ Հիլտա ԳԱԼՖԱԵԱՆ - ՓԱՆՈՍԵԱՆ՝ «ԴԻՒՑԱԶՆԱՀԱՆԴԷՍ» բանաստեղծութիւններու հատորին մասին:
Հանդէսը կը վարէ՝ Տիգրան ՊԱԼԵԱՆ:
Գեղարուեստական բաժին՝
Մանօթ երգիչ՝ ՊԵՏԻԿ եւ իր նուագախումբը: Նաեւ զանազան անակնկալներ...
Տեղերը սահմանափակ ըլլալով, կը խնդրուի կանխաւ արձանագրուիլ, մինչեւ Փետրուար 4, Երեքշաբթի երեկոյ:

Հեռաձայնելով. -
46 - 63 - 74 - 91 ժամը՝ 9 - 14:
47 - 80 - 82 - 58 ժամը՝ 15 - 22:
Թիւերուն:
Այլապէս՝ տեղերու համար ո՛չ մէկ պատասխանատուութիւն:
Ճաշադին՝ 150 Ֆ.:

ՀՈՐԵՔՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
29
MERCREDI
29 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՀԱՅԿԱԿ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TEL.: 47. 70. 86. 60 — TELEX: HARATCH 280 868 F
C.C.P. PARIS 15069-82 E — 51027317 A R.C. PARIS

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.148
Fondateur : SCHAVARCH MISSAKIAN
61e ANNÉE — No 16.148

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԽԱՆԴՈՒՄ ՆԻՒ-ԵՈՐՔ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Նիւ - Եորք նահանգի կրթական մնօրէնութեան կողմէ հրապարակ հանուած են «Ողջակիզումի եւ ցեղասպանութեան ուսուցման» խորագրուած ուղեցոյցին առաջին երկու հատորները: Հոն, հայկական ցեղասպանութիւնը կը զբաւէ 26 էջնոց բաժին մը եւ կը ներկայացուի որպէս նախակարապետ ողջակիզումի:

Յունուար 15-ի «Հայրենիք»ը հետեւեալ մանրամասնութիւնները կուտայ այս մասին: Քիչ անդին ալ կուտանք թրքական հակազդեցութիւնը:

×

Ուղեցոյցի հրատարակութիւնը մօտաւորապէս տարիով մը յետաձգուեցաւ, առիթ տալու համար բազմաթիւ անհատներու, որ իրենց նկատողութիւններով եւ ցուցմունքներով բարելաւեն պարունակութիւնն ու ներկայացումը: Վերատեսութեան մասնակցեցաւ նաեւ 12 անդամներէ կազմուած խորհրդատու մարմին մը, որ կը բաղկանար Ողջակիզումի եւ ցեղասպանութեան հարցերու մասնագէտներէ: ԵՈՒ - ՍԻ - ԷԼ - ԷՖ համալսարանի պատմագիտութեան դասախօս Փրոֆ· Իչէրտ Յովհաննիսեան անդամ էր այդ մարմնին: Ա՛յս նոր հրատարակութեան մասին, Փրոֆ· Յովհաննիսեան հետեւեալը յայտնեց· - «Անշուշտ կային յաւելեալ նիւթեր, զորս կ'ուզէինք ներառել ուղեցոյցին մէջ, սակայն այս ալ կարեւոր առաջին քայլ մը պէտք է համարիլ: Ներկայիս, կը յուսանք մօտէն համագործակցիլ Նիւ - Եորք նահանգի կրթական նախարարութեան հետ՝ ուսուցիչներու աշխատանիստերու արդիւնաւէտ գործադրութեան տեսանկիւնով: Վերջ ի վերջոյ, յուսամ կը հասնինք հանգրուանի մը, ուր հարցեր պիտի չմնան Հայկական ցեղասպանութեան իրականութեան, տարողութեան եւ տալիք դասերուն առընչութեամբ»:

Այս նոր դասանիւթի մշակման ընթացքը սկսաւ 1982-ի Մայիսին, երբ Նիւ - Եորք Նահանգի Ինամակալներու Խորհուրդը քուէարկեց Ողջակիզումի եւ Ցեղասպանութեան նիւթերը նահանգի երկրորդական վարժարաններու պատմութեան եւ ընկերային դիտութեանց դասընթացքներուն մէկ մասնիկը դարձնելու ուղղութեամբ

Նոյն տարուան Նոյեմբեր ամսուան ընթացքին, 70 ուսուցիչներու մասնակցութեամբ աշխատանիստ մը կայացաւ ուղեցոյցի առաջին նախագիծը փորձարկելու համար: Հայկական Համագումարէն Սուզըն Քարլիճ մասնակցեցաւ այդ աշխատանիստին, նոյն առեն մօտէն աշխատանք տանելով Հայ մասնագէտներու եւ դասընթացքը պատրաստողներու հետ՝ չէզոքացնելու համար Հայկական նիւթերու ներմուծումը խափանելու ձգտող թրքական փորձերը:

Գոլկէյթ Համալսարանի անդլերէնի դասախօս Դոկտոր Փիթըր Պալաքեան եւ Պարնարտ Գալէճի Ուսմանց Տնօրէնուհի Դոկտ· Մարճըրի Յուսէփեան - Տապֆին Հայկական Համագումարի հետ համագործակցաբար նիւթեր հայթայթեցին եւ իրենց քննական ներդրումը կատարեցին ուղեցոյցի մշակման ընթացքին:

Նիւ - Եորք Նահանգի Կրթական նախարարութեան Դասընթացքներու Մշակման Գրասենեակի բարձրաստիճան պաշտօնեաներէն Դոկտ· Ճորճ Կրէկըրի ստանձնեց ուսուցման ուղեցոյցի պատրաստութեան գլխաւոր պատասխանատուութիւնը:

«Ողջակիզումի եւ Ցեղասպանութեան Ուսուցումը» ուղեցոյցի Ա· հատորը կը սկսի Ողջակիզումի եւ Ցեղասպանութեան տուն տուող պատճառաբանութենէ, ինչպէս նաեւ մասսայական բնաջնջումի առաջնորդող անհանդուրժողութեան եւ հալածանքի արմատներուն քննարկումով:

Հատորի երկրորդ մասով, Հայկական Ցեղասպանութիւնը ներկայացուած է իբրեւ նախակարապետ Նացիներու կազմակերպած Ողջակիզումին:

×

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

ԹՈՒՐՔԵՐԸ ՉԵՆ ՎՍՏԱՀԻՐ ԱՄԵՐԻԿԱՑԻ

«Հիւրրիյէթ»ի (Յունուար 22) դառնութեամբ լեցուն տողերը կը հաստատեն որ Թուրքերը չեն վստահիր Ամերիկացիներուն, որոնց մօտ երկդիմի կեցուածք մը կը նկատեն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՏԸ՝ ԴԱՍԱԳԻՐՔ ···

Մինչ մէկ կողմէն ԱՄՆ-ու Արտաքին նախարարի օգնականը Ուայթհիւս Անդամայի մէջ կ'ըսէ թէ «Ամերիկա կը զատապարտէ հայկական ահարեկչութիւնը», միւս կողմէ «Հայերու Ցեղասպանութիւնը» նիւթը տեղ գրաւած է Նիւ - Եորքի նահանգային կրթական անօրէնութեան հրահանգով պատրաստուած պատմութեան առաջին դասագիրքին մէջ:

26 էջնոց «Հայերու Ցեղասպանութիւն» բաժինը գրի առած են հայ վիրաբոյժներ, որոնք կը գործեն Ամերիկայի զանազան համալսարաններուն մէջ: Այս վիրաբոյժներն են՝ ԵՈՒ - ՍԻ - ԷԼ - ԷՖ համալսարանէն Ռիչըրտ Յովհաննիսեան, Գոլկէյթի համալսարանէն Փիթըր Պալաքեան եւ Պարնարտ համալսարանէն Մարճըրի Հուսա: («Յառաջ»՝ ըսել կ'ուզէ Յուսէփեան):

Գիրքին մէջ, որ գրկուած է Նիւ - Եորքի պատմութեան ու ընկերային դիտութիւններու բոլոր ուսուցիչներուն, կայ պատմականը, Հայերու չինծու ցեղասպանութիւնը· հոն կ'ըսուի թէ ան օրինակ հանդիսացած է Նացիներու որպէսզի բնաջնջեն Հրեաները:

Այս առիթով Փրոֆէսէօր Ռիչըրտ Յովհաննիսեան ըսած է·- «Նիւ - Եորքի կրթական անօրէնութեան հետ սերտ գործակցութեամբ մը պատրաստ ենք հիմա ուսուցիչներու այս նիւթին մասին բոլոր հարցումներուն պատասխանելու: Կը կարծեմ թէ կարճ ժամանակի մէջ ամէն մարդ տեղեակ պիտի դառնայ ցեղասպանութեան հարցին ու պիտի սորվի թէ ինչ է Հայերու ցեղասպանութիւնը»:

Միւս կողմէ, կը տեղեկանանք թէ Քալիֆորնիայի - որուն կառավարիչն է ծագումով հայ Տէօքմէճեանը - լիսէներուն մէջ գործածուելիք ցեղասպանութեան դասագիրքը պատրաստ պիտի ըլլայ Ցունիսին· զայն կը խմբագրեն նոյնպէս հայ դիտնականներ: Այս դասագիրքը լիսէներու մէջ պիտի գործածուի յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ:

×

ՄԱՅՐԸ՝ ՀԱՅ Է
ՀԱՅՐԸ՝ ԹՈՒՐՔ
ՈՒ ԿԸ ՄԻԶԱՄՏԷ՝ ԵՀՈՎԱ

«Միլլիյէթ»ի (Յունուար 22) այս պատմութեան ալ կ'արձագանգեն զայն բա-

HISTORAMA

LE GENOCIDE DES ARMENIENS A-T-IL EU LIEU?

Հիսթորամայի Յունիսի (16) թիւին մէջ էր, որ Փիէր Ա· Մոզէր (անկէ ի վեր՝ հանդուցեալ) յօդուած մը կը տորպեդէր «Ինչո՞ւ Հայերու ջարդը» խորագրով, ուր Թուրքական զանազան գործօններու անմեղ դիմել եւ (պումարում, հանում, բազմապատկում, բաժանում) կը դնէր - Ի՞նչ պուպազիպութիւն - ջարդուած Հայերու թրքական թիւը՝ 300 հազար: Այն ալ անուշա «ծանօթ» (պատերազմ, յոշնութիւն, սով, հիւանդութիւն, համաճարակ եւայլն) պատճառներով: Կը յիշեցնէինք այդ առթիւ (Մայիս 25 / 26) որ Մոզէր հին ծանօթ մըն է, քանի որ հեղինակն էր Հայկական ցեղասպանութիւնը ժխտող հատորի մը՝

«*Arméniens, où est la réalité*».

Պարզ է, որ Հիսթորամա-ի լոյս ընծայած այդ յօդուածը բաւական եւ բնական վրդովում պիտի յառաջացնէր եւ Սեպտեմբերի իր թիւին «Նամականի»ի բաժնին մէջ, պարբերականը կը հրատարակէր Հայ ընթերցողներէ ստացած նամակներէ մէկ քանիներու հատուածները («Յառաջ», Օգոստոս 31):

Այս անգամ, Փետրուարի իր թիւին մէջ (24) «Հայկ· Ցեղասպանութիւնը տեղի ունեցած է՞» խորագրին տակ լոյս կ'ընծայէ Իվ Թերնոնի բերած անժխտելի փաստերը, զորս քաղած է Մարտիրոս Որիմեան:

Իվ Թերնոն, այս առթիւ, կը չեշտէ որ ինք հայկական տեսակէտին մեկնաբանը չէ, այլ՝ մեկնաբանը այն պատմական ճշմարտութեան՝ որու յանգած է տասը տարուան ուսումնասիրութենէ հետ:

ւական «զուարճալի» գտնելով, բայց ի լուր ևման պարագաներու, բուն հարցը սա է՝ խնդա՞լ թէ ··· լալ:

×

17 տարեկան երիտասարդ մը, - հայրը Թուրք, մայրը Հայ - կրօնքի դասին պատճառով դասարանը կրկնելու վախով դատարան դիմած, ու քրիստոնէութիւնը ընդունած է:

Տղան չափահաս չըլլալով մայրը ստորագրած է դատարանի դիմումնագիրը, ուր կ'ըսուի·- «տղաս «Եհովայի վկաներ» կրօնքին կը պատկանի· հայրը իսլամ ըլլալուն, ինք ալ այդպէս արձանագրուած էր· այս կացութիւնը կը պարտադրէր դինքը դպրոցը հետեւելու կրօնքի դասերուն:

Այդ դասին իր ստացած տկար նիշերը կը վտանգեն իր յաջողութիւնը· կը խընդրեմ որ անձնագրին մէջ կրօնքը արձանագրուի որպէս՝ «Եհովայի վկայ»: Դատարանը ուզած է ունկնդրել հայրը, սակայն կնոջը փաստաբանները վկայագիր մը ներկայացնելով ըսած են թէ հօրը մտային կարողութիւնը խանգարուած ըլլալուն մայրն է տղուն խնամակալը: Իսկ երբ դատարանը մերժած է դիմումը, առարկելով որ վերոյիշեալ կրօնքը գոյութիւն չունի, մայրը ուզած է որ այդ պարագային տղան արձանագրուի որպէս քրիստոնեայ: Այսպէսով պատանին փրկուած է կրօնքի դասին մասնակցելու պարտաւորութենէն:

Իսկ երբ տղուն հայրը տեղեկացած է որ իր զաւակը կրօնքի դասէն փրկուելու համար կրօնափոխ դարձած է, չտկնալով այս վիշտին, յանկարծամահ եղած է:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՏԻԿԻՆ ԹԱՋԸՐ պլուխը փրկեց, ոչ այնքան իր վարպետութեան շնորհիւ, այլ մանաւանդ՝ աշխատասիրական ընդդիմութեան պարագլուխին ձախաւորութեան: Տիկին Թաջըր խոստացած էր ամբողջ ճշմարտութիւնը ըսել, մանաւանդ իր իսկ սպասարկութեանց կողմէ մամուլին յանձնուած նամակի մը կապակցութեամբ: Այդ նամակը, որ ուղղուած էր Պաշտպանութեան հրաժարեալ նախարար՝ Հէզըլթայնի եւ կը վնասէր անոր վարկին, պէտք է զգաստի մնար: Հետեւանքը եղաւ Հէզըլթայնի հրաժարումը, ապա նաեւ՝ Առեւտուրի եւ ձարտարարուեստի նախարարին: Ամէն պարագայի մէջ, Տիկին Թաջըր, եթէ նոյնիսկ չկրցաւ ամէն ինչ լուսաբանել, յաջողեցաւ իր կուսակցութեան միամտականութիւնը ապահովել եւ մինչեւ իսկ Պաշտպանութեան «իր զոհ» նախարարը ոչ մէկ ոխ ցոյց տուաւ եւ զօրավիդ կեցաւ նախարարապետին: Բոլորը՝ մէկ մարդու պէս Տիկինին կողքին եղան: Հիմա սակայն, հարկ է փրկել թռաններու ընկերութիւնը - Ուեսթլանտ - որ անանկութեան դուռը հասած էր եւ որու փրկութեան լուծումէն (արեւիկեա՞ն թէ եւրոպական) ծագում առաւ ամէն ինչ: Ամերիկեան Սիքորսքի ընկերութիւնը (միացած Ֆիաթի) այլեւս ընկերութեան բաժնետէրերուն ձայներու 75%-ին պէտք չունի, 50,1%-ը կը բաւէ: Որոշումը պիտի տրուի Փետրուար 12-ին եւ հատանական է որ Սիքորսքի - Ֆիաթ յաղթէ ընդդիմ եւրոպացի իր մրցակցին:

«ՄԵԶՄԻ ԴՈՒՐՍ՝ ԶԻՒ ՓՐԿՈՒԹԻՒՆ» կ'ըսէ Ժաք Շերաք, ձայնասփիւռի Ֆրանս - Էնթէր կայանի «Հանրութեան դիմաց» յայտագրէն, եւ քիչ մըն ալ կը ջղագրգռուի երբ տեւականօրէն հարցում կ'ըլլայ համարնակութեան մասին: Ինք կ'ուզէ պարզապէս որ յարգուին սահմանադրութեան կանոնները (հարցը հոն է որ ամէն մարդ իր ուզած ձեւով կը կարդայ Սահմանադրութիւնը: Օրինակ՝ Պաոի համար քաղաքականութիւնը վարող պատասխանատուն՝ Նախագահն է, ժիսքարի համար - որ ի դէպ ի պաշտօնէ անդամ է Սահմանադրական Խորհուրդի - միակ պատասխանատուն՝ նախարարապետն է): Ուրեմն Շերաքի համար, սա է ազդարարութիւնը· - ԵԹԷ ԷՌ - ՓԷ - ԷՌ եւ ԻՒ - ՏԷ - ԷՖ՝ «անառարկելի եւ անժխտելի մեծամասնութիւն մը ձեռք չձգեն՝ անիշխանութիւն պիտի ըլլայ»:

ԼԻԲԱՆԱՆի վարչապետն ալ՝ Ֆարամէ համամիտ չէ որ նախարարաց արտակարգ նիստ մը գումարուի, որպէսզի Դամասկոսի երբեակ համաձայնագիրը Խորհրդարանին ենթարկուի: Ֆարամէ եւ Սրդարութեան նախարարը՝ Նապիհ Պէրրի ներկայիս Սիէռա Լէոնի են: Ճեմայէլի առաջարկին դէմ է նաեւ Զբօսաշրջիկութեան նախարարը՝ Վալիտ Ճումպլաթ:

ՏԽՐՈՒՆԻ

ՏԻԿԻՆ Ռ· ՄԵՍԱՏՈՒՐԵԱՆ

Ցաւով իմացանք որ թերթիս վաղեմի աշխատակից եւ Հայ Արիներու Միութեան ընդհ· պետ՝ Տոքթ· Գուրգէն Մեծատուրեան դժբախտութիւնը ունեցած է կորսընցնելու իր կինը՝ Ֆաթիա, յետ անողոք հիւանդութեան, Երկուշաբթի, Յունուար 27-ին:

Ցուղարկաւորութեան մանրամասնութիւնները՝ յաջորդով:

Մեր ցաւակցութիւնները Տոքթ· Գ· Մեծատուրեանի եւ զաւակներուն:

ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԼԵԶՈՒ

ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ԱՆԿԻՒՆԸ

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԸ ԵՒ ՄԵՆՔ

Գրեց՝ ԾՐԱՐՈՒՆԻ

Լեզուական մե՛ր անտարբերութիւնեբուն մասին կը խօսինք այնքան յաճախ. անտարբերութիւնը՝ ընտանիէէն, դպրոցէն, հայկական զանազան հաստատութիւններէն ներս: Նման ձայն մը կը հնչէ Հայաստանէն Յունուար 14-ի «*Սովետական Հայաստան*» թերթին մէջ: Գոնէ այդ գաւառը զերծ մնար այս ախտէն:

×

Վերջին տարիներս մեր հանրապետութիւնում զգալի աշխուժութիւն է նկատւում մայրենի լեզուի դերն ու կշիռը խրատպէս արժէքաւորելու գործում, եւ դա, անշուշտ, տալիս է իր բարեբեր պտուղները: Եւ, այնուամենայնիւ պատահում է, սեղմում ես հեռատեսացոյցի կոճակը ու սրտի ցաւով ունկնդիր լինում որեւէ ճարտարապետի, երաժիշտի կամ ուրիշի ելոյթի, որն իրագործում է այնպիսի կցկտուր ու անօրնական լեզուով, այնպիսի պարզունակ ու անարտայայտիչ ոճով, որ զժուարանում ես հաւատալ, թէ խօսողը իր մասնագիտութեան հմուտ գիտակ է, բարձր պարգեւի արժանացած գործի հեղինակ: Առաւել ցաւալին այն է, որ նման թափթփուած, թոզ թոյլ տրուի ասել՝ անպատասխանատու լեզուով թէ պաշտօնատեղում եւ թէ կենցաղով արտայայտւում են յատկապէս երիտասարդ մարդիկ: Կասկած չկայ, որ այսօրուայ քաղաքային բնակչութեան մեծագոյն մասը բարձրագոյն կրթութիւն ունի: Ուրեմն ինչո՞վ բացատրել լեզուի այն ցածրագոյն մակարդակը, որ սիրում է մեր հասարակութեան որոշ շրջաններում: Ես չեմ խօսում փողոցի կամ չուկայի լեզուի մասին, չեմ խօսում խանութի լեզուի մասին, որտեղ կէս ժամ ուշացումով բացուած բաժինը մանելու համարձակութիւնդ կասեցւում է «մի՛ քիչ համբերիր, «Է՛լի» վրդովմունքով, եւ ոչ մի կերպ չես կարող հասկացնել, որ նման պարզայում վճռառուդը ամենաչատը կարող է ՄՆԴՐԵԼ յաճախորդին ՍՊԱՍԵԼՈՒԻ: Հապա այդ տնավարի ԴՈՒՆ, նկատե՞լ էք, թէ ինչպիսի արգահատանք է առաջ բերում սպասարկման ոլորտի աշխատողների մէջ ձեր քաղաքակիրթ ԴՈՒԽ-ը եւ ինչպէս էք պատժւում դրա համար: Հապա հերթերի լեզուն, ուր պատկառելի տարիքի կնոջը նոյնպիսի պատկառելի տարիքի, թոզ ներուի ասել ... աշխատանքի վեթերանի կարող է դիմել «Գնա՛ տեղից, թէ չէ դուրս կը գցեմ» խօսքով: Ես չեմ խօսում այդ ամէնի մասին: Մտէք ուզածդ արտադրամասը, հիմնարկը՝ նախագծային ինստիտուտները, գիտական հիմնարկները, մշակութային կենտրոնները, նոյնիսկ թատրոն (մայրենի խօսքի տուրը խորանը), եւ ձեր լսողութիւնը այս - այդ - այն, սա - դա - նա, էս - էդ - էն հոյակապ եռաշարի փոխարէն կը սղոցի էսիկ - էրիկ - էնիկ խժալուր այլանդակութիւնը:

Բայց չէ որ այդ մարդիկ դուրս են եկել Հայաստանի բուհերի անհամար ղրռաններից: Այո, եւ հէնց այնտեղից էլ բերել են լեզուի, խօսքը նկատմամբ անհոգ ու անհոգի իրենց վերաբերմունքը: Եթէ նման լեզուն անց է կենում բուհում, կեանքում էլ կ'անցնի, ի՞նչ կարիք կայ մտահոգուելու: Իսկ բուհերում, ուսանողների ոչ նուազագոյն հատուածի մէջ ցաւալիօրէն ակնյայտ է մայրենի լեզուի ունակութեան անկատարութիւնը: Զգէտք է աչք փակել այն իրողութեան հանդէպ, որ նրանցից շատերը չեն լինում կանոնաւոր կերպով արտայայտելու ամենահասարակ միտքը, պատահում է, որ փիլիսոփայութեան կամ իրաւաբանութեան պատրաստուողը չի զօրում ճեւակերպելու հանրայայտ ճշմարտութիւն պարունակող որեւէ բնորոշում: Նոյնը կարելի է ասել նաեւ ճշգրիտ գիտութիւնների յատկնորոշների մասին: Ցաճախ էլ զգում ես, որ ուսանողը նիւթին ծանօթ է, հասկանում է, բայց չի կարողանում ասելիքը լեզուական պատշաճ կաղապարի մէջ տեղաւորել: Էլ չեմ ասում շատերի գրագիտութեան մակարդակի մասին, որ աւելի քան մտահոգիչ է: Դժբախտաբար մեր դպրոցներում եւ բուհերում չի ուսուցանւում ճարտասանութեան արուեստը, որի սուզ ժամերն անգամ կարող էին զեղեցիկ լեզուի ճաշակ պատրաստել, ցրել կաշկանդել այն անվստահութիւնը որ կասկածի է ենթարկում սահուն ու դրաւիչ խօսելու սեփական կարողութիւնը: Աւելին, անկաշկանդ, կենդանի խօսքի դաստիարակումը պէտք է սկսել աւելի վաղ, դեռեւս մանկուց: Անուրանալի է այս գործում ընտանիքի, յատկապէս մօր դերը, մինչդեռ մեր շատ ընտանիքներում բացակայում են մանկան լեզուն կրթելու բարենպաստ պայմանները, որի հետեւանքով էլ հէնց մանկապարտէզից աղաւաղւում է ուրիշ մանուկների ընտանիքից բերած անարատ լեզուն: Պատահական չէ, որ խօսքի երանգից դատելով, երբեմն հնարաւոր է լինում կռահել այն դպրոցների շրջանաւարտներին, ուրտեղ լեզուի ու գրականութեան առարկաների ուսուցումը լաւ հիմքերի վրայ է դրուած: Սակայն բարձրագոյն ուսումնական հիմնարկները ուսանելու է գալիս մի չափազանց խայտարղէտ քանակազմ, խայտաբղէտ եւ՛ պիտելիքներով, եւ՛ կարողութեամբ, եւ՛ տարիքով, եւ՛ ծննդավայրով: Գալիս են քաղաքներից ու գիւղերից, արտադրութիւնից ու բանակից, ոմանք՝ զրքից ու զրչից տարիներով կտրուած, ոմանք՝ բաւարար չափով պատրաստուած: Գալիս են, բերելով իրենց հետ տեղական բարբառները, քաղաքային ժարգոնի տարրերով յագեցած մի խառնալեզու, որի ընդհանուր գոյնը գորշութիւնն է, բնորոշ յատկանիշը՝ ծայր աստիճան աղքատութիւնը: Եթէ նկատի ունենանք նաեւ այն հանգամանքը, որ ուսուցումը մեզանում կատարւում է արտագրութիւնից կտրուած եւ չկտրուած (երեկոյեան եւ հեռակայ ուսուցում), եւ այդ պատճառով դասաժամերի օգտագործումը չի կարող հաւասար արժէք լինել, քանի որ երեկոյեան ուսուցման խմբերում հարկ է լինում ուսումնական գործընթացի ծանրութեան կէսարանը փոխադրել լսարան՝ նկատի ունենալով, որ ուսանողներից շատերը գտած են գալիս ուղղակի աշխատավայրից, իսկ հեռակայ ուսուցման խմբերում սուզ դասաժամերը վերածել պարզապէս կոնսուլտացիաների, ապա պարզ կը լինի, թէ ինչ աստիճան դժուար լուծելի է ուսանողների խօսքը կըրթելու, լեզուն հարստացնելու, գրագիտութիւնը բարելաւելու խնդիրը:

Եւ, այդուհանդերձ, պէտք է ջանք չխնայել այդ գժուարին խնդիրը եթէ ոչ լուծելու, ապա գոնէ տեղից շարժելու համար: Այսօրուայ մեր ուսանողը վաղուայ մտաւորականն է, լինի նա բանասէր թէ կենսաբան, բժիշկ թէ ինժիներ, երկրաբան թէ իրաւագէտ, մաթեմատիկոս թէ ֆիզիկոս, մտաւորական, որ անհրեւակայելի է առանց կիրթ լեզուի, պատշաճ խօսքի: Բարձրագոյն ուսումնական հաստատութիւնը պէտք է պատրաստի եւ կեանքի ուղեկիր տայ ոչ միայն տուեալ մասնաճիւղին լաւատեղեակ, այլ մայրենի լեզուին հասու մասնագէտների:

Ինքնըստինքեան հասկանալի է, որ ապարդիւն կը լինէր այդ նպատակի իրագործման համար դեղատոմս որոնելը կամ որեւէ նոր բան յաւելելը այն միջոցներին, որոնք կիրառուել ու կիրառւում են ուսումնական հաստատութիւններում: Եւ թոզ տարօրինակ չթուայ, եթէ գործի սկիզբը (դուցէ նաեւ վերջը) համարենք մեր ուսանողների մէջ մայրենիի հանդէպ չհաղորդուածութիւն սերմանելը, նրանց խօսքը գռեհկաբանութիւնից զտելու, թէլատան արտայայտութիւններից ազատելու, նրանց դրագիտութիւնը բարելաւելու ճգտում առաջ բերելը: Չէ որ խօսքի հիւծախտի հիմնական պատճառներից մէկը անտարբերութիւնն է սեփական լեզուի եւ անգիտութիւնը նրա արժէքի ու նշանակութեան հանդէպ: Ովքեր հետեւում են «Մեր լեզուն, մեր խօսքը» հեռուստատեսութեան հաղորդաշարին, նկատած կը լինեն թէ ինչպիսի կանոնաւոր, միանգամայն ընդունելի, նոյնիսկ գեղեցիկ լեզուով են խօսում նրա մարթոնեան մրցոյթների մասնակիցները՝ վարսավիրներ, դիմայարդարներ, բանուոր - բանուորուհիներ, փոստային ծառայողներ, առեւտրի ու առողջապահութեան ասպետներ եւ այլք: Բայց արդեօ՞ք այդ նոյն մարդիկ նոյն այդ լեզուն են կիրառում կենցաղում կամ իրենց աշխատավայրում: Ի հարկէ, ոչ: Որովհետեւ չունին դրա կարեւորութեան գիտակցումը, որ առկայ է այստեղ, բազմահազարանոց հեռուստադիտողի առաջ: Այո՛, այդ պիտակցութիւնն է, առաջին հերթին, կախարդական այն զաւազանը, որի օգնութեամբ կարող է յաղթահարել մեր ուսանողներից (եւ ոչ միայն ուսանողներից) շատերի կցկտուր թոթովախօսութիւնը խօսքի ժողուռնութիւնը:

Այդ է, որ պէտք է ներշնչել մեր երիտասարդութեանը, ցոյց տալով, որ լեզուի դերը երբեք չի վերջակէտւում, այլ յարատեւում է մարդու ամբողջ կեանքում խոչընդոտելով կամ դիւրացնելով նրա ուղին, քանի որ լեզուն ու խօսքն են վերջին հաշուով նրա մտաւոր եւ հոգեկան ունակութեան անխարդախ հայելիները:

Այս պղնիւ գործին պէտք է լծուին մեր բուհերի բոլոր դասախօսները՝ անխտիր դասաւանդուող առարկայից: Հետեւողական յիշեցումներով, անճանճիր շըտկումներով, թծախնդրութեան հասնող պահանջկոտութեամբ, թափթփուած լեզուով պատասխանների գնահատականներն իջեցնելով, վերջապէս մեր իսկ անխաթար, օրինակելի լեզուով, համարեա ամէնօրեայ չփման պայմաններում, մենք, անտարակոյս, կարող ենք որոշ արդիւնքի հասնել, յամենայն դէպս, զգաստ ու յարզալից վերաբերմունք առաջացնել խօսքի հանդէպ:

Այս խնդրում մեծ հնարաւորութիւններ եւ անելիքներ ունի յատկապէս բուհերին կից նախապատրաստական բաժինների դասախօսական կազմը, մանաւանդ որ կրթական բարձրագոյն մարմինների կողմից այստեղ արտօնուած են լեզուի ու դրականութեան յատուկ ժամեր, որոնք վերջինը լինելով այլեւայլ մասնագիտութիւնների պատրաստուող ունկնդիրների համար, պէտք է առաւել չափով ծառայէն նրանց լեզուական մշակոյթը յղկելուն եւ հարստացնելուն: Ի միջի այլոց ասենք, որ այդ ժամերը աւելի արդասաբեր կը լինէին եթէ չհաշկանդէր տարեվերջի չարաղրութեան հեռանկարը, այսինքն՝ եթէ ոչ հումանիտար բուհերում ու բաժիններում քննութեանը տրուէր ոչ թէ չարագրութիւն, այլ թելադրութիւն կամ փոխադրութիւն, որը եւ աւելի ձրդբիա կ'արտացոլէր ունկնդիրների գրագիտութեան մակարդակը: Դա թոյլ կտար նաեւ հայ դասականներից բացի, որոնց այս կամ այն չափով զիտեն գրեթէ բոլոր հայ ուսանողները, ծանօթացնելու ունկնդիրներին այսօրուայ գրական անցուդարձին, որ պակաս կարեւոր չէ ապագայ մտաւորականի համար:

Բուհական ուսանողութեան խօսքի զարգացմանը կարող են նպաստել որոշ միջոցառումներ եւս՝ գրական - գեղարուեստական ցերեկոյթներ ու երեկոյթներ, պատի թերթերի հրատարակում, մրցոյթներ գուգահեռ խմբերի միջեւ, կարգացած գրքերի, դիտած կինոնկարների ու ներկայացումների, իրենց յուզող բարոյագիտական խնդիրների շուրջ զրոյց-քննարկումներ, դասախօսների հետ թանգարանների, ցուցահանդէսների այցելութիւններ եւայլն: Առաջին հայեացքից քննարկուող խնդրի հետ առընչութիւն չունենալով հանդերձ, այս ամէնը խթանում է մեր ոռներն ընդհանուր զարգացմանը, նպաստում նրանց բարեկիրթութեանը, իսկ բարեկիրթ պահուածքը, իր հերթին, պարտադրում է բարեկիրթ լեզուի ու խօսքի:

Բարձրագոյն ուսումնական հաստատութիւնները, դիտելիքների կրթարան լինելու հետ մէկտեղ, կրթարան պիտի լինեն մայրենի լեզուի ու խօսքի, որպէսզի աւելի լիարժէք իրագործեն իրենց կոչումը, որ է՝ հասարակութեան համար քաղաքակիրթ ազգային մտաւորականութիւն դաստիարակելը:

ՄԱՑՈ. ԱՒԱԳԵԱՆ

Իրենց ընդվզումին մէջ, կրակ պիտի ժայթքէին, իրենց մարմինը ի վառոռ հանոյ՝ անոպանեաու դէմ:

Այսօրուան մարդիկը սակայն, անտարբեր զարձած են, այլասերումի այս գործին հանդէպ եւ չահամոզ անձեր ալ, ի տես այս անտարբերութեան, կարծես օրէ օր աւելի կը քաջալերուին, չահագործելու համար այն հոգիները, որոնք միամտաբար իրենց ցանցին մէջ կ'իյնան միշտ: Ներկայիս, ցանցառ են անոնք, որոնք «Յո՛ երթաս մարդկութիւն» կ'ապազակեն, բայց այսքան միայն, մինչ անդին սերունդներ յաջորդաբար կ'ապականին, իրենք եւս իրենց չուրջ ապականութիւն տարածելով:

Ուրոյն աչխարհահայեացքով, երիտասարդ սերունդ մը հասած է այսօր, աչխարհի չորս ծագերուն մէջ, որ նորաբոյս «էթիք»ով մը, եթէ ուրիշին որեւիցէ վնաս ալ չպատճառէ (որ կը պատճառէ), ազատամիտ դիրքորոշումով, իր անձը մոլութիւններու, անարատութեան եւ համբերատիչներու յանձնելով, տակաւին ինքզինքը կը փճացնէ, միանգամայն իր բանաւոր մարդու պատիւն ու հանդամանքը՝ առաթուր կոխելով:

Ե՛ւ հետեւա՞նքը: Որքա՞ն տխուր է հաստատել, որ տասը հետեւանքով, մենք կ'ունենանք այսօր մաքով հիւանդ՝ երիտասարդ - ծերեր, որոնք վազը կանգի պարզ պահանջքներուն առջեւ իսկ, պիտի սահմռկին, պիտի վհատին, որովհետեւ դանոնք դիմագրաւելու, ուժ ու կարողութիւն՝ այլեւս չունին:

Բնութեան անողոք օրէնքն է այս, որ այլասերումի անձնատուր եզողները, ամէնուրեք անխղճօրէն կը պատժէ:

Երկրորդ. - ամէն ոք այսօր աչխարհի դնացքէն զժգոհ է, բայց ոչ ոք կ'անդրադառնայ, թէ աչխարհի վերիվայրումներու առիթը, մարդը ինքնին տուած է իրեն:

Դո՛ւն, կրնաքը այլեւս հնաքոյր ու թանդարանի զա՛րդ համարէ, Աստուծոյ սուրբ պատուիրաններուն դէմ ծառացիր, ազատամտութիւն, ազատ սէ՛ր քարոզէ, թմրեցուցիչի ու հաճոյքներու մէջ քու ժամանցդ ու մխիթարութիւնդ փնտռէ՛, եւ աչքերդ ալ բարոյականութեան լոյսին դոցելով, երջանիկ աչխարհ մը երազէ: Մի՛թէ ասիկա հնարաւո՞ր է արդեօք: Եւ սակայն, ա՛յս է, որ մենք կ'ընենք այսօր, եւ բնական է, որ մեր երազն ալ իրականացած չտեսնենք՝ երբեք:

Մեր նիւթին առընչութեամբ եւրոպացի անուանի գրադէտ մը, Քսաներորդ դարը այսպէս կը սահմանէ «Քսաներորդ դարը,

դարմ ըն է, հոգեկան ախտերու, հաճոյքներու եւ մակերեսայնութեան»: Այս մեծանուն գրագէտը, աւելի առաջ երթալով, կը գանգատի այս դարուն մէջ մտաւորականներու կողմէ ի յայտ բերուող կրաւորականութեան եւ մամուլի անկումի վերաբերմունքներուն ու կ'աւելցնէ. «Եթէ կ'ուզենք ինքնապանութենէ ու փճացումէ զմեզ փրկել պարտաւոր ենք փոխել մեր կեանքը եւ վերաքննել մարդկային եւ ընկերական կեանքի կառոյցին մասին, մեր կազմած զաղափարները: Ահկէզատ, խնդիր է, թէ ճի՞շդ է, որ մարդը իբր ազատ էակ, վե՛ր է ամէն օրէնքէ, կապանքէ եւ կանոնէ, եւ թէ ան, Գերագոյն էակին անպատճառ հնազանդելու՝ պարտք չունի:

Երկրորդ, արդա՞ր է, որ մարդկային կեանքը եւ ընկերային գործունէութիւնները, նիւթական չափանիշերով գնահատուին, եւ թէ ներե՞լի է արդեօք, որ չջափելի նիւթական նուաճումներու համար, ոգեկան արժէքներ անտեսուին»:

Առանց պատասխանները, մենք բազմաթիւ անդամներ, մեր անցեալի զրուցներով առած ենք: Մխայն թէ, այսօր սա կէտը չեշտելով, կ'ըսենք նաեւ, թէ նախանամութիւնը մեզի օրէնքներու մէջ եւ օրէնքներու ենթակայ ստեղծելով, մեզ սանձարձակ չէ՛ ձգած երբեք, եւ թէ, մարդ անասուններէն ա՛լ աւելի կը ստորնանայ, երբ առանց օրէնքի ապրիլ փորձէ:

Նիւթին, ու մեր առօրեայ կեանքին մէջ, այսօր այնքան միրճուած ենք, որ Աստուած, երկինք, հոգի, յաւիտենականութիւն մոռցած, ամէն ոք մամոնայ ու հաճոյք կը հոլովէ: Բայց ասիկա ալ, այսօր, մարդուն բաւարարութիւն չի տար, վանդի ան ներկայիս «զգայացունց»ը կը փնտռէ. եւ որովհետեւ եկեղեցին այս զգայացունցը չի կրնար տալ, անկէ տակաւ պաղելով, ուղի մը բռնած՝ կը քալէ:

Այս ուղին, ամէնուս ծանօթ նիւթապաշտութիւնն է, որ մարդը այնքա՛ն կը ստորնացնէ եւ իր յոռի բնազդներուն գերին կը դարձնէ: Այսօրուան երիտասարդութեան աչխարհահայեացքը ու հոգին՝ թունաւորուած են. Ան, երիտասարդը, մարդկութեան վաղուան յոյսը, այլեւս մոռցած է եւ կամ նորաբոյս գաղափարախօսներ, անոր մոռցնել տուած են, թէ մարդը միայն հացով չապրիր, այլ մշակոյթով, կրօնքով ու հոգիով ալ պարապելու կարիքն ունի, ու զանոնք ալ գոհացընել պարտաւոր է:

Ցաւալի է, որ այսօրուան մարդը չի գիտեր «Լերան Քարոզը» չէ՛ սորված երբեք սիրոյ լեզուն, կրօնական կենսական ըմկրկրունքները, կրօնի մխիթարութիւնները (թերեւս դպրոցներու մէջ աւանդուած կրօնի անբաւարար դասաւանդութեամբ) եւ կը զարմանայ, որ աչխարհ անընդհատ անլուծելի թնճուկներու մէջ կը տեսնայի եւ յոռի շրջանի մէջ ինկած է, մինչ լերան քարոզով, այս թնճուկները, որքա՛ն դիւրութեամբ կրնային լուծիլ:

Ժամանակները, զարմանալիօրէն ինչպէ՛ս կը փոխուին: Որքա՛ն ցաւալի է, տեսնել այսօր, երէկուան աղօթող ու բարոյականի տէր ժողովուրդները, որոնք ներկայիս, չարժանկարի ու հեռատեսիլի ժողովուրդներ եղած են: Կը հարցնենք անոնց. մի՛թէ այլեւս անոնցմով պիտի բարձրանանք կամ ազնուանանք: Ո՞ւր մընաց մեր Հայրերու գործնական հաւատքն ու կենցաղը, նոյնպէս եւ անոնց մաքրամաքուր հոգին:

Այդ հոգին դժբախտաբար գոյութիւն չունի այսօր, նոյնպէս եւ անոնց սրբացոյր կենցաղը: Եւ զարմանալի ալ չէ, որ ներկայիս ոճիր ու չարագործութիւն, համաճարակի մը նման, տարածուած են՝ ամէն երկինքներու ներքեւ:

Կը հետեւի, թէ բարոյական օրէնքի մը հրամայող եւ անլռելի ձայնը, ամէն դարու մէջ ալ, պէտք է նկատի առնուի մարդուն կողմէ, եթէ լրջօրէն զոյատեւել կ'ուզէ:

Ի՞նչ կը տեսնենք մեր չուրջը: Այսօր նորահաս սերունդները, իրենց ներքին հուրը, ողջմտութեան ներհակ ու սխալ միջոցներով, մարել կը չտնան, հաճոյքի այլազան վայրերու մէջ, մինչեւ իրենց վիզը ալքոլի ու թմրեցուցիչներու մէջ թաղուելով: Ատոնք իրենց աչխարհահայեացքն ալ ունին եւ նոր «էթիք» մը, որոնցմով իրենց գոյութիւնը արդարացընել կը ճգնին:

(Մնացեալը յաջորդով)

ՉԱՅՆԵՐ ԳԱԻԱՌԷՆ

ՇԱՐՎԻԷՕ - Ս. ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՆՈՐԻ ՓԱՑԼՈՒՆ ՀԱՆԴԷՍԸ

Կիրակի, Յունուար 19, առաւօտուն Ս. Նշան Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ տեղի ունեցաւ ձեռամբ՝ Վրթանէս Ա. Քհնյ. Տէրտէրեանի, իսկ կէսօրէ ետք տեղւոյն Ազգային Տան՝ ձկպրայէլ Պահատուրեան սրահին մէջ հաւաքուեցան մեծ թիւով աչակերտութեան ծնողքները եւ բարեկամներ, միասնաբար անցընելու համար հայկական հաճելի ժամեր: Տեղւոյն Ազգային Միութիւնը ամէն ջանք կը թափեր լաւագոյնս սպասարկութիւն ընելու ներկաներուն:

Ժամը 16-ին արդէն դրաւուած էին բոլոր սեղանները եւ բարձրախօսէն կը հընչէին հայկական հաճելի երգեր, աչակերտութիւնը անհամբեր կը սպասէր որ բեմէն իրենց հայերէն արտասանութիւնները կատարեն: Ու կը հասնէր ժամը, տեղւոյն վարժարանին Ուսուցիչ եւ հոգեւոր հովիւը՝ Վրթանէս Ա. Քհնյ. Տէրտէրեան՝ Տէրունական Աղօթքով բացման խօսքը ընելէ յետոյ Նորվան Եպիսկոպոս Զաքարեանի մէկ գրութիւնը կարդաց ներկայ հրաւիրեալներուն, յետոյ բարձրախօսը յանձնեց Ազգային Միութեան նախագահ՝ Պ. Արիս Պաչատուրեանի, ինչ ալ ներկաներուն բարի գալստեան խօսքերը ըրաւ եւ իր ուրախութիւնը յայտնեց:

Հանդէսը արդէն սկսած էր. աչակերտներուն արտասանութիւնները եղան յաջող կերպով, մերթ ընդ մերթ երգեր երգուեցան. տեղւոյն երգչախումբի վարիչ Պ. Յակոբ Աբրահամեան իր չնորհով կ'ընկերանար երգչախումբի մեներգիչներուն՝ Օր. Լիւսի Քէօմիւրճեան, ինչպէս նաեւ Պ. Սարգիս, որոնք իրենց քանի մը հայերէն երգերով խանդավառութիւն ստեղծեցին:

Սեղաններուն կը սպասարկէին բնակատար տեղւոյն տիկիններն եւ օրիորդները, միչտ ժպտուն, սեղաններուն բոլոր խմիչքները, ուտելիքները եւ աչակերտութեան նուէրները բոլորն ալ տրամադրուած էին Պ. Սերժ Պահատուրեանի կողմէ, հանդիսութեանց ընթացքին խօսք տրուեցաւ Պ. Ճէպրայէլ Պահատուրեանի, որ իր անսահման ուրախութիւնը յայտնեց եւ ըսաւ այս կարճ ժամանակամիջոցին ուսուցիչին տարած աչխատանքը մեծ է այս աչակերտներուն վրայ, կը չնորհաւորեմ զինքը: Նաեւ գնահատանքի խօսքեր եղան Բողոքականաց Համայնքի անդամներէն՝ Պ. Հրանդ Թիլպիեանի կողմէ, խօսք տրուեցաւ նաեւ Պ. Պ. Արման եւ Սերժ Պահատուրեանի ու անոնք ալ իրենց խոր գնահատանքը յայտնեցին տեղւոյն հոգեւոր հովիւին եւ տեղւոյն Ազգ. Միութեան, գլխաւորութեամբ նախագահ՝ Պ. Արիս Պաչատուրեանի:

Հանդիսութիւնը կը չարունակուէր ուչ ժամերու, իսկ խօսնակ Վրթանէս Ա. Քհնյ. Տէրտէրեան գնահատանքի խօսքեր ըրաւ երգչախումբի վարիչ Պ. Յակոբ Աբրահամեանի, եւ առ ի գնահատութիւն մեծ ժամացոյց մը նուէր տրուեցաւ, իսկ երգչախումբի մեներգիչներէն Օր. Լիւսի Քէօմիւրճեանի ոսկեայ շղթայակիր խաչ մը տեղւոյն Ազգային Միութեան կողմէ, սոյն նուէրները յանձնեց Միութեան նախագահը: Իսկ վարժարանի երկու աչակերտներ մէկական ծաղկեփունջ նուիրեցին բարերարուհի Տիկին Ազատուհի Պահատուրեանի եւ միւսը Տիկին Աբրահամեանի:

Շարվիէօ բնակող նկարիչ Նիքօլա Եապլաքօվի իր ձեռքով գծած Ս. Նշան Եկեղեցիին մէկ մեծ թապլօն նուէր տուաւ նոյն եկեղեցիին, ներկայ ժողովուրդը իր ուրախութիւնը յայտնեց ծափահարութիւններով:

Տեղւոյն հոգեւոր հովիւին Հուսկ Բանքէն՝ յետոյ, Պահպանիչ եւ մեաբերան երգուած Տէրունական աղօթքով վերջ գտաւ հանդիսութիւնը:

ՆԵՐԿԱՑ ՄԸ

ԳՈՂՈՒԹԷ ԳՈՂՈՒԹ

ՀԵԼԻՈՊՈՒՄՈՑ «Ցուսաբեր» ակումբի «Գարագաչեան» սրահին մէջ, Դեկտեմբեր 8-ին, տօնուած է Հ. Ց. Դ.ի 95-ամեակը, նախագահութեամբ Հայկազ Գալուստեանի: Բացումը կատարելով օրուան նախագահը անդրադարձած է Դաչնակցութեան անցեալին, չեչտը դնելով հայկական ազատագրական պայքարին վրայ: Ցանուն Հ. Ց. Դ. Եղիպտոսի Երիտասարդաց Միութեան կեդր. Վարչութեան խօսք առած է Թովմաս Կորկիսեան: Բանախօսած է Շահան Ֆարաճեան (Աթէնքէն): Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը: Հանդիսութիւնը վերջ գտած է խրախճանքով:

×

ՔԻՆԶԻՆԿԹՐՆի (Լոնտոն) կեդրոնական դրադարանի սրահին մէջ, Դեկտեմբեր 14-ին, նչուած է Վահան Տէրեանի ծնընդեան հարիւրամեակը, կազմակերպութեամբ Հ. Բ. Ը. Մ.ի Մչակութային Յանձնախումբին: Բացումը կատարած է Կարպիս Եապչեան: Գեղարուեստական յայտագրին մասնակցած են «Արարատ» երգչախումբը եւ անհատ արուեստագէտներ՝ մեկնաբանելով Վահան Տէրեանի բառերով յօրինուած երգեր եւ բանաստեղծէն քերթուածներ: Բանախօսած է Կարպիս Եապչեան անդրադառնալով Տէրեանի կեանքին ու վաստակին: Փակման խօսքը արտասանած է թեմին առաջնորդը՝ Եղիչէ Եպիսկոպոս Կիզիրեան:

×

ԱԹԷՆՔի մէջ, Յունուար 10-ին, իր մահկանացուն կնքած է Հայ Կապոյտ Խաչի բարերարուհի Տիկին Մարի Քանելոփուլու - Քէպապճեան: Ծնած էր 1910-ին՝ Իզմիր: Տակաւին մանուկ, Իզմիրի ազէտին, իր մօր եւ բազմաթիւ այլ զաղթականներու հետ ապաստանած է Փաթրաս, ուր քանի մը ամիս ետք կորնչուցած է նաեւ մայրը: Տարիներ ետք ամուսնացած է յոյն երիտասարդի մը հետ, զոր կորսընցուցած է 1972-ին: Եօթը տարի առաջ վերադարձած է հայ կեանքին եւ մօտէն հետաքրքրուած գաղութին հոգերով, յաճախ կատարելով առատաձեռն նուիրատուութիւններ: Երեք տարի առաջ ալ կալուած մը կտակած էր Կապոյտ Խաչին: Ծուղարկաւորութիւնը կատարուած է Յունուար 11-ին, Գոթինիոյ Ս. Յակոբ եկեղեցին, ուր դամբանական մը խօսած է Կարօ Մինասեան:

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՁԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՁՕՆ Ա.Ռ ՄԱՍԻՍ

ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Բնութեան մասին մեր իմացածը այնքան քիչ է, որ կարելի է խոստովանել, համարեա ոչինչ չգիտենք: Այ, հիմա կանգնած եմ ապրիլեան աղէտալի ձնաբքից խեղճացած գլխիկոր թթենիների կողքին: Մինչեւ սառնամանիքն ինչքան գեղեցիկ էին դրանք: Բողբոջները նման էին ջրի կաթիլների՝ կանա՛չ կաթիլներ: Թարմ, փայլուն, կենսունակ: Եւ յանկարծ՝ ցուրտն այրեց, մոխրացրեց այդ գեղեցկութիւնը: Մեծ աղէտի ենթարկուելուց առաջ, կարծես բնութեան փրթթումը աւելի յուռթի է: Տարտամ զգացում ունեմ. նման մի բան նկատել եմ նաեւ մարդկանց մէջ: Արտասովոր փոփոխութեան են ենթարկւում դէպի լաւը: Թւում է, մարդու էութիւնից, ներսից, դուրս են յորդում խնդութիւնն ու գոհունակութիւնը, ճառագայթում են զգացումներն ու ապրումները. թւում է, մարդը երջանկութեան գագաթնակէտին է հասել. եւ յանկարծ՝ երկնքից կրակ է թափւում. մարդը կորցնում է իր մերձաւորին. կամ այնպիսի՛ մի փորձանքի է հանդիպում: Չէ, ինչ որ կապ կայ դեռ չկատարուածի եւ այն մարդու միջեւ, որին պէտք է պատահի դէպքը:

×

Կարդում եմ Ալիչանին: Սքանչելի է: Ինչ պայծառ հոգի եւ ինչ գիտնական: Էջ առ էջ Արարատ լեռը յառնում է իմ առջեւ, ստորոտից գագաթ եւ գագաթից մինչ ստորոտ: Քար, թուփ, մատուռ, աղբիւր, մարդ, որ ապրել է լերան վրայ: Զարմանալի մեծ երեւոյթ է Ալիչանը: Հայաստանից հեռու, Վենետիկի Ս. Ղազար կղզում հազար աչքով տեսել է ու ճանաչել Հայաստանը: Կրկին մտածում եմ՝ թերեւս հնարաւոր է նաեւ այդքան հեռուից տեսնել, երբ անհրաժե՛շտ է եւ երբ չա՛տ է բաղձալի: (Այսօր, երբ Նորքից դիտում էի լեռը, մի պահ ինձ թւաց, որ ես եղել եմ նրա լանջերին: Եւ ձեռքս մեկնելով Մասեաց Վիհի կողմը, ասացի. ա՛յ, այնտեղ, Վիհի Պռնկին է եղել Ակոռի գիւղը):

Ալիչանի չունչը եւ սքանչացումը բնութեան մեծ ստեղծագործութեան հանդէպ ոգեւորեց ինձ: Մեծ նպատակ է հետապընդել նա՝ պատմութեան, բնութեան, ճարտարապետութեան, ժողովրդի հետ կապուած ամէն ինչ, որ կարելի է իմանալ զրականութիւնից, մամուլից, ականատեսներից, նամակներից, հարցուփորձից, բազմիցս սուզելուց յետոյ, շարադրել է ազնիւ գրչով եւ փոխանցել հետագայ սերունդներին:

×

Ապրում եմ լերան կեանքով: Այս օրերին ինձ ոչինչ չի հետաքրքրում, բացի լեռից: Ինչ գեղեցիկ բառ է գործածել Ալիչանը՝ լեռնակները, Մասիսի վրայ գըտնըւող փոքր լեռնաբլուրների մասին: Բառի մէջ գորովալից ջերմութիւն ես զգում: Եւ քո՛րն ես զգում աղբերաց արուն ծաղկի, որ Ֆրանսիացի բուսաբան Փիթոն որ Թուռնըֆորը մօտ երեք դար առաջ հանդիպել է Արարատի լանջերին: Եւ նրանից մեկուկէս դար յետոյ նկարագրել է գերմանացի ճանապարհորդ Վահնէրը:

Աղբերաց արուն. մանկուց չատ եմ լսել այդ ծաղկի մասին: Մայրս էր պատմում: Երբ գիւղում որեւէ մէկը հիւանդանում էր, ուղարկում էին սար, ձիւն բերելու: Իսկ մինչեւ ձեան սահմանին հասնելը, քարերի արանքից մի փունջ աղբերաց արուն էին քաղում, որ իր գեղեցկութեամբ եւ հոտով պակաս բուժիչ չէր: Մօրս կարծիքով դրանից սիրուն ու բուրեաւէտ ծաղիկ աչխարհում չկայ: «Բայց տերեւ չունէր». չեչտում էր նա: Եւ ահա Ալիչանը հաստատում է այդ, թարգմանելով գերմանացի ճանապարհորդ Վահնէրի նկարագրութիւնը: 1849-ի Յունիսի 19 - 20-ը նա անցել է ապուպաղերիս ծննդավայր Բասէնի գաւառի Դալիբաբա գիւղով եւ նկարագրել ծաղիկը:

«Ցրտագին գտանէ գառաւօտն, նուազ ծաղկունս, նուազադոյն եւս միջատս եւ լռեալ՝ զձայն գեղեցիկ արտուտկին բարձրավանդակաց Հայոց, այլ միայն հատակ կկուն արկանէր զվանդ իւր, եւ անդղն սեւաթոյր սաւառնէր ի բարձունս...»: Եւ լեռների լանջերում վակնէրը տեսնում է Հայաստանի վայրի ծաղկանց գեղեցկագոյնը՝ աղբերաց արուն, եւ ըստ նկարագրի, բայց չորուցամաք անուն տալիս՝ լերկածաղիկ, «զի անտեբեւ է, կարմրեփեան, յոյժ պայծառ եւ թաւշանման, որոյ ցօղուն է թզաչափ թխագոյն եւ ծաղիկ միակ բոլոր եւ բոսոր...»:

Հնարաւո՞ր էր, որ ժողովուրդը երգերով չպսակէր այդ չնաչխարհիկ ծաղիկը: Ահա տարբերակներից մէկը, հիւսած միջնադարում.

Ա՛յ իմ Աղբերաց արուն,
Որ բուսար ի մէջ բարերուն.
Աչուիդ ի ցարգիզ նման,
Մէկն ի բուն ու մէկն արքուն:

Ա՛յ իմ Աղբերաց արուն,
Ապառաժ բարն կենաս դուն.
Աչերդ ուռճայի նման,
Ոչ ի բուն ես եւ ոչ արքուն:

(Շար. 8)

ՀԱՄԻԼԹՈՆ. - (Քանատա). -
Այրի Տիկին Լուիզ Աբշալոյս Անթիքեան (Ծնեալ՝ Օշական),
Ժան - Լէոն Անթիքեան,
Տիկին Նուարդ Մեճիկեան,
Անթիքեան ընտանիքները (Պոլիս),
ինչպէս նաեւ Օշականեան, Մեճիկեան, Ովեան, Անթարամեան, Գավարեան, Գալիլեան, Գալայճեան ընտանիքները Միացեալ - Նահանգներ),
Մեճիկեան, Գիլնճեան, Մազմանեան եւ Փափազեան ընտանիքները (Ֆրանսա),
Շաքարեան ընտանիքը (Հայաստան),
Ազգականներն ու խնամիները ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, փեսային եւ ազգականին՝

ԳԱՌՆԻԿ ԱՆԹԻՔԵԱՆԻ

մահը, որ պատահած է Դեկտեմբեր 27-ին:

Mme L. Antikian
127 Prospect st.
South Hamilton ONT
CANADA L3M2Z3

ԲԱՑՈՒԱԾ Է...

BOUTIQUE
TALINE
ԹԱԼԻՆ
31, rue Lamartine
75009 Paris
où vous trouverez :
Pulls,
Collants,
Cosmétiques,
Faux bijoux.
——Ouvert tous les jours de 14 à 18h30.——

A l'initiative de FRANCE-ARMENIE
le Vendredi 31 Janvier à 18 heures 30
GERARD CHALIAND
présentera
le livre de James T. HASHIAN
«LE SEL DE LA VENGEANCE»
Ed. Stock
«Voici venu le temps de romans d'aventure sur les évènements tragiques de 1915». FRANCE-ARMENIE
Présentation et signature du livre :
à l'ESPACE ARMENIEN
40, rue d'Arménie - 69003 LYON
à partir de 18 heures 30

×

à 20 heures 30
Une SOIREE DE RENCONTRE avec...
GERARD CHALIAND
autour du roman de James T. HASHIAN
«LE SEL DE LA VENGEANCE»
— *Lecture publique* d'extraits du livre par Vahé ZEKIAN.
— *Signature* par Gérard CHALIAND.

Vahé ZEKIAN
metteur en scène
(Compagnie du Dauphiné - Théâtre de l'Ouest Lyonnais (T.O.L.) - Théâtre Arménien de la Maison de la Culture Arménienne de Décines).
Salle H. SAMUEL
Maison de la Culture Arménienne
15, rue du 24 Avril 1915 - DECINES
à partir de 20 heures 30

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

ՄԱՐՍԷՅԼ. - Վասպուրականի Ճարթախան Հերոսամարտի 71-րդ տարեդարձի տօնակատարութիւնը Ապրիլ 13-ին, նուիրուած Հայ Մշակոյթի Տան Վասպուրական սրահի տասնամեակին:

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՎԱՂՁԱՆԱՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑ ՀՈԳԵԼՈՑՍ
Տ. ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Կիրակի օր, Փետրուար 2, Գ. Կիրակի Զկնի Ծննդեան:

Ղեւոնդեանց Քահանայից յառաջիկայ տօնին առիթով, այսօր, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԵՊԻՍԿ. ՆԱԳԱՇԵԱՆ
(Առաջնորդ Հայոց, Փարիզի)

Պատարագի ընթացքին հոգեհանգիստ կը կատարուի՝ Փարիզի եւ Շրջանի եկեղեցիներուն մէջ ծառայած վախճանեալ հոգեւորականներուն համար:

Պատարագէն ետք՝ ժամը 13-ին, Փէռ - Լաշէզի գերեզմանատան Եւրոպայի Հայոց առաջնորդներու դամբանին առջեւ, մատուռը աղօթք՝

Վրամշապուհ Արք. Քիպարեանի, Արտաւազդ Արք. Սիւրմէեանի եւ Սերովբէ Արք. Մանուկեանի հոգիներուն համար:

×

Փարիզի եւ շրջաններուն մէջ ծառայած հանգուցեալ Առաջնորդներն ու Հոգեւորականները եղած են.

Վրամշապուհ Արքեպիսկ. Քիպարեան, Արտաւազդ Արքեպիսկ. Սիւրմէեան, Սերովբէ Արքեպիսկոպոս Մանուկեան, Գէորգ Արքեպիսկ. Իւթիւճեան, Գրիգոր - րիս Եպիսկ. Պալաքեան, Կոմիտաս վրդ. Սողոմոնեան, Սուքիաս վրդ. Պարոնեան, Համայեակ Վարդապետ Պաղտասարեան, Յովհաննէս Քհնյ. Չիւնքէրպէյճեանեան, Սահակ Քհնյ. Իւթիւճեան, Կոմիտաս Քհնյ. Սկպեան, Բառնաբաս Քհնյ. Մըն - տամեան, Աբիսողոմ Քհնյ. Թորոսեան, Մեսրոպ Քհնյ. Մեսրոպեան, Վահան Քհնյ. Յոյեան, Բարթող Քհնյ. Թաղմաճեան, Գէորգ Քհնյ. Դաւիթեան, Լեւոն Քհնյ. Արսլանեան, Գարեգին Քհնյ. Տէօվլէթեան, Մկրտիչ Քհնյ. Արսլանեան, Գէորգ Քհնյ. Նիզամեան, Ներսէս Քհնյ. Գանճեան, Գրիգոր Քհնյ. Ճէպէճեան, Յուսիկ Քհնյ. Ադամեան, Վարդան Քհնյ. Պաղտասարեան, Ցարուհին Քհնյ. Ճօր - թուլեան, Ադդէ Քհնյ. Փայլակեան, Եսայի Քհնյ. Ալթունեան, Թովմաս Քհնյ. Մինասեան, Մաշտոց Քհնյ. Թիւֆէնկճեան:

Կը հրաւիրուի մեր Ժողովուրդը աղօթելու բազում տարիներ իր եկեղեցւոյն ծառայած Հոգեւորականներուն՝ եւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ բարգաւաճման համար:

ՄԱՐՍԷՅԼ

ՅՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ

Կիրակի, Փետրուար 2-ին Մարսէյլի Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ հանդիսաւոր պատարագ եւ կրօնական արարողութիւն, Սահակ - Մեսրոպ երգչախումբի հիմնադրութեան 8-րդ տարելիցին առթիւ:

Կը նախագահէ՝
ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ
Պատարագը կը մատուցանէ՝
ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՊԵՐՃԵԱՆ
Սահակ - Մեսրոպ երգչախումբը իր ամբողջական կազմով եւ ղեկավարութեամբ՝ Խաչիկ Երզմազեանի, կ'երգէ Կոմիտասեան բազմաձայն պատարագը:

Հ. Բ. Ը Մ. - ՓԱՐԻԶ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ

Ալեք Մանուկեան Մշակ. Կեդրոնին մէջ Փետրուար 15-էն սկսեալ, Ֆրանսերէնը չգիտցող կամ կատարելագործել փափաքող Հայերու համար: Սորպոնէն վկայեալ ուսուցիչի մը կողմէ:

Տեղեկութեանց համար հեռաձայնել. - 46 - 38 - 17 - 78 Թիւին:

ԿԱՊՈՑ ԽԱՉ

Ֆր. Կապոյտ Խաչի 30-րդ պատգամաւորական Ժողովը տեղի կ'ունենայ Փարիզ, Շաբաթ եւ Կիրակի, Փետրուար 1 եւ 2:

LE RESTAURANT
YORGANTZ
PRESENTE
A PARTIR DU 1er FEVRIER 86 TOUS LES JOURS
Evelyne Altounian
AUTEUR, COMPOSITEUR, INTERPRETE
52, bd. St. Germain - 75005 PARIS
Tél : 43 26 20 68

ԱԷՆ - Թ'ԷԹԻԷՆ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Փետրուար 2, Կիրակի, առաւօտեան ժամը 10·30-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Առաքելական Եկեղեցւոյ մէջ, պատարագ կը մատուցուի:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱՑ ԱԻԵՏԻՔԵԱՆ

Սիրով կը հրաւիրուի շրջանի մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն արարողութեան:

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

Հ. Բ. Ը. Մ.

ՕՐԵՒԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԸ ՊԱՐԶԷ՝
ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆ
Գեղարուեստական բաժին
Մուտքը ազատ է:

Ողեկոչում Վարդանանց Հերոսամարտ

Կիրակի, Փետրուար 2, ժամը 16-ին Ալեք Մանուկեան Մշակ. Կեդրոնին մէջ:

118, rue de Courcelles, 75017 PARIS

Օրուան խորհուրդը կը պարզէ՝
ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆ
Գեղարուեստական բաժին
Մուտքը ազատ է:

ՀԱՅ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ
կը կազմակերպէ
ՄԵԾԱՐԱՆՔ - ՃԱՇ
ի պատիւ
ԳԷՈՐԳ ՊԱԳԸՐՃԵԱՆԻ
հայրենասիրական գործունէութեան առթիւ
հովանաւորութեամբ երեք յարանուանութեանց
եւ ներկայութեամբ Գալիֆորնիոյ կառավարիչ Պ. ՏԷՕՄԻՃԵԱՆ - ի
ներկայացուցիչ՝ Պ. ՍԷՐԱՑՏԱՐԵԱՆ - ի

Կիրակի, Փետրուար 2, ժամը 14-ին
HOTEL INTERCONTINENTAL
3, rue de Castiglione — Paris 1er
— Գեղարուեստական պատշաճ բաժին —

Տոմսերը ապահովելու համար հեռախօսել ժամը 8-էն 10
42-96-09-82 *Թիւին, կամ ճաշի ժամերուն՝* 43-29-54-31 / 46-42-45-25
Թիւերուն, մինչեւ Յունուար 30:

A L'OCCASION DES PAQUES ARMENIENNES
(le 04 Mai, selon le calendrier ancien)
PELERINAGE
A
JERUSALEM
avec la participation de
Monseigneur NORVAN ZAKARIAN
et accompagné par VAROUJAN SARKISSIAN
du 28 avril au 06 mai
*
ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ
ԳԷՊԻ
ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՏԿՈՒԱՆ ԱՌԹԻՒ
(Մայիս 4-ին, ըստ հին տոմարի)
մասնակցութեամբ՝ ՆՈՐՎԱՆ եպիսկ. Զ Ա Կ Ա Ր Ե Ա Ն - ի
ընկերակցութեամբ՝ Վարուժան ՍԱՐԳԻՍԵԱՆ - ի
ԱՊՐԻԼ 28 - ՄԱՅԻՍ 06
Renseignement, Programme détaillé et inscription :
Levon BAGHDASSARIAN
SABERATOURS
31, rue d'Argenteuil
75001 PARIS
Tél. : 42. 61. 51. 13
Varoujan SARKISSIAN
SEVAN VOYAGES
48, cours de la Liberté
69003 LYON
Tél. : (16) 78. 60. 13. 66

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՅՈՒՆՈՒԱՐ
30

JEUDI
30 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Directrice: Arpik Missakian

Tel.: 47. 70. 86. 60 — Telex: HARATCH 280 868 F
C.C.P. Paris 15069-82 E — 51027317 A R.C. Paris

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.149 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.149

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՅԵՐԱՆԱՒՈՒՆ ՊԱՅԹՈՒՄԷՆ ԵՏՔ

ՅՈՒԶՈՒՄ ԵՒ ՍՈՒԳ ՇՇՄԱԾ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԸ ՄԷՋ

ԵՕԹԸ ԱՍՏՂԱՆԱՒՈՐԴՆԵՐՆ ԱԼ ՄԵՌԱՆ

Ֆրանսական ժամով 17·38-ին էր, երեքշաբթի օր, որ կը պատահէր անկրպեսային մեծադոյն արկածը: Քափ - Քանավերալէն կ'արձակուէր ամերիկեան Զալենճըր այերանաւը, որու մէջ տեղ գրաւած էին վեց արհեստաւոր աստղանաւորդներ - մէկը կին - եւ երկրորդ կին մը՝ ուսուցչուհի, որու անկրպեսային դասընթացքներուն պիտի հետեւէին 2-ուկէս միլիոն աշակերտ: Ամէն բան հազիւ մէկ վայրկեան տեւած էր, չհմեցնելով բոլորը: Այերանաւը 20 հազար մեթր բարձրացած է, ժամական արագութիւնը 3200 քիլոմեթրի հասած է, երբ բոցավառ գունդի մը կը վերածուի: Քանի մը երկվայրկեան բաւած են, որ ամէն ինչ անհետանայ եւ եօթը հոգի, մէկ վայրկեանէն՝ հերոսներու աշխարհը մտնեն:

Այս արկածը, առաջինը չէ եւ սակայն աննախընթաց համեմատութիւններ առաւ: Ռեակըն կը հրաժարի իր խօսելիք ճառէն, ութ օր սուգ կը հռչակուի եւ կ'քսուի թէ Քենըտիի սպանութենէն ի վեր, այսպիսի ցնցիչ դէպք չէ ապրած Ամերիկան: Պատճառները այնքան ալ յըստակ չեն: Թերեւս տարիներու փորձառութիւնը աւելի ինքնավստահ դարձուցած էր բոլորը, որպէսզի չյիշուի որ 1967-ին, երեք Ամերիկացիները ողջ - ողջ այրած կին դեռ ճամբայ չելած իսկ, ափոլոյի իրենց խցիկին մէջ, նոյն տարին խորհրդային այերանաւորդ մը մեռած էր Սոյուզ 1-ի վերադարձին առեն եւ 1971-ին ալ ուրիշ երեք այերանաւորդներ խեղդամահ եղած էին Սոյուզ 11-ի մէջ:

Նախագահ Միթերան ցաւակցական հեռագիր մը ղրկեց:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԼՈՐԻՈՒ, նկարիչ եւ արձանագործ մեռաւ սրտի տագնապէ մը, 77 տարեկանին: Ծնած Պլուա, 14 տարեկանէն իսկ նկարչական յատկութիւնները ցոյց տուած էր, բայց առաւելաբար 1948-էն սկսեալ է որ ծանօթ անուն մը պիտի դառնար Ֆրանսայէն Ամերիկա: Այդ տարին է, որ Պէրնար Պիւֆֆէի հետ կը ստանար Քննադատութեան մրցանակը: Բուռն յարձակումներ գործած է վերացական արուեստին դէմ եւ երբեք չէ ծածկած իր բուռն արհամարհանքը եւ բանավէճերու մէջ մտած: Վառ գոյներու վարպետ, իր գործը յաճախ նկրչնչուած է այժմէականութենէն: Կը սիրէ նաեւ իր նկարչութիւնը տարածել ծաւալուն պատուհաններու վրայ:

ԱՀԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ դէմ կարգ մը միջոցներ ձեռք առին Եւրոպայի 12-երը, Պրիւսէլի մէջ: Առանց կարգին յիշենք որ, կը դատապարտեն ահաբեկչութեան բոլոր ձեւերը, ինչպէս նաեւ հեղինակները, մեղսակիցները ղրկողները եւ զօրավիգ կեդրոնները:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՀ՝ ԼԵՒՈՆ ՄԱՆԱՍԷՐԵԱՆԻ

«Սովետական Հայաստան» օրաթերթի Յունուար 19-ի թիւէն կ'իմանանք, թէ պաշտօնով արտասահման գտնուելու օրերուն՝ Յունուար 13-ին, յանկարծամահ եղած է Լեւոն Պետրոսի Մանասէրեան, ներդաղթող Հայերու ընդունման եւ տեղաւորման կոմիտէի նախագահը: Ծնած էր 1921-ին՝ Երեւան: 1944-ին Ադրբեջանի պետական համալսարանը աւարտելէ ետք մտած է Հայաստանի Արտաքին նախարարութիւն, վարելով պատասխանատու պաշտօնները: 1949-ին, Թղթակցութեամբ աւարտած է Խորհրդային Միութեան Արտաքին նախարարութեան բարձրագոյն դիւանագիտական դպրոցը, նոյն տարին՝ 1947 - 1953 թուականներուն գաղտնադած է Երեւանի համալսարանի միջազգային յարաբերութիւններու լսարանին մէջ: 1951 - 1955 թուականներուն եղած է արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերութեան նախագահի տեղակալ, իսկ 1959 - 1961 թուականներուն՝ բարձրագոյն եւ միջնակարգ մասնագիտական կրթութեան պետական կոմիտէի նախագահի տեղակալ:

Լեւոն Մանասէրեան 1961-ին եկած է Փարիզ եւ վարած խորհրդային դեսպանատան Ա· քարտուղարի պաշտօնը: 1965 - 1966 թուականներուն պաշտօնավարած է Խորհրդային Միութեան Արտաքին նախարարութեան մէջ, որպէս խորհրդական: 1967-էն մինչեւ 1984 Հայաստանի համայնավար կուսակցութեան կեդրոնական կոմիտէի տեղեկատուութեան եւ արտասահմանեան կապերու բաժնի վարիչը եղած է, հուսկ՝ ներդաղթող Հայերու ընդունման եւ տեղաւորման կոմիտէի նախագահ:

Լեւոն Մանասէրեանի թաղումը կատարուած է Յունուար 20-ին: Դագաղը դրուած է Տեխնիկայի Տունը: Յարգանքի վերջին տուրքը ընծայած են Հայաստանի կուսակցական եւ պետական աւագանին, կինէպայի դեսպանը, Հայաստանի գանազան հիմնարկութիւններու եւ հանրային կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ապա դագաղը փոխադրուած է Երեւանի քաղաքային գերեզմանատունը, ուր դամբանականներ խօսուած են եւ ողբացեալին մարմինը յանձնուած հողին:

×

Կինէպայի Խորհրդային դեսպանատուն այցելելով երկրի Արտաքին եւ Տնտեսութեան նախարարները ցաւակցութիւն յայտնած են Ափոյ եւ Ափրիկէի երկիրներու համերաշխութեան հայկական կոմիտէի նախագահ Լեւոն Մանասէրեանի մահուան առթիւ:

ՃԱՏՐԱԿ

ՌԱՖԱՅԷԼ ՎԱՀԱՆԵԱՆ
ՊԱՐՏՈՒԱԾ

—×—

Մինակի մէջ վերջ գտաւ ճատրակի աշխարհի ախոյեանութեան յաւակնորդներ Ռաֆայէլ Վահանեանի եւ Անդրէյ Սոկոլովի կէս - աւարտական հանդիպումը, հայ վարպետի ծանր պարտութեամբ: Ըստ նախատեսութեան տասը հանդիպում տեղի պիտի ունենար եւ յաղթական պիտի հռչակուէր ան՝ որ առաջինը չորս հինդուկէս կէտ, սակայն Սոկոլով ութ խաղերէ ետք 6 կէտ չահելով (4 յաղթանակ եւ 4 հաւասարութիւն) արդէն իսկ յաղթական հանդիսացած է եւ աւարտականը կը խաղայ Եուսուպով - Թիման հանդիպումի յաղթականին հետ: Ի դէպ, այս վերջին հանդիպումը տեղի կ'ունենայ Հոլանտա (Թիլպուրկ) եւ վեց խաղերէ ետք 3,5 - 2,5 արդիւնքով կը գտնուէր Եուսուպով:

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱԽՕՍ

ԵՐԵԻԱՆ
(ԱՐՄԷՆՓՐԷՍ - ՅՈՒՆՈՒԱՐ 20 - 27)

ՓԻՆԿ ՓՈՆԿԻ ՎԱՐՊԵՏ
ԱՆԻՏԱ ԶԱԽԱՐԵԱՆ
ԿՐԿԻՆ ՆՈՒԱՃԵՑ ԽՈՐՀ· ՄԻՈՒԹԵԱՆ
ԱԽՈՑԵԱՆԻ ՏԻՏՂՈՍԸ

1985-ը Հայաստանի փինկ փոնկի վարպետներուն համար յաջող տարի մը չեղաւ· նոյնիսկ խորհրդային ախոյեանութիւնը՝ որ տեղի ունեցաւ Երեւանի մէջ, մեռաւ չշնորհեց անոնցմէ մէկուն, եւ Խորհրդային Միութեան ախոյեանուհին Անիտա Զախարեան կորսնցուց իր տիտղոսը ու չմասնակցեցաւ Եւրոպայի ախոյեանութեան: Այսուհանդերձ ան յամառ աշխատանքով որոշեց կրկին ձեռք ձգել իր տիտղոսը: Ու յաջողեցաւ: Տալլինի մէջ տեղի ունեցան փինկ փոնկի Խորհրդային Միութեան անհատական ախոյեանութեան մրցումները, որոնց ընթացքին Անիտա Զախարեան յաղթանակէ յաղթանակ անցնելով հասաւ աւարտականի, ուր իր մրցակիցն էր Խերսոնի ներկայացուցիչ Ելենա Վեչերոկ: Բուռն պայքարէ մը ետք 3 - 2 արդիւնքով Անիտա Զախարեան նուաճեց ախոյեանի տիտղոսը:

ՏՈՄՄԵՐ

ՊԵՐՃԱԽՕՍ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Կասկած չկայ որ ամբողջ Սփիւռքը իր ազգային կազմակերպութիւններով, դըպրոցներով ու մամուլով մեծ դեր կը խաղայ հայապահպանման պայքարին մէջ: Սակայն այդ ուղղութեամբ աշխատանքները օտար միջավայրերու օտար ազդեցութիւններուն տակ օրէ օր կը դժուարանան: Կը կարծէի թէ ֆրանսահայ երիտասարդը այսօր աւելի զուրկ է ազգասիրական զգացումներէ, որովհետեւ օտարացման ազդակները հետզհետէ կ'ուժեղանան եւ կամայ - ակամայ կը գործեն իրենց աւերները:

Ի՞նչով արդեօք պէտք է դիմադրել այս հոսանքին:

Քանիցս տարեկան ֆրանսահայ երիտասարդ մը բանի մը օրէ ի վեր կ'ուզէր կապ հաստատել հետս, շաբաթը բանի մը ժամ հայերէնի դասեր առնելու համար· հետաքրքրուեցայ ու որոշուեցաւ որ շաբաթական չորս ժամը բաւարար պիտի ըլլար: Մեր խօսակցութիւնը վերաջցնելէ առաջ հարցուցի իրեն· «Բայց ինչո՞ւ կ'ուզես հայերէն սորվիլ· ի՞նչ բան ճեզ մղեց հայերէն սորվելու»: Վճռական ու կտրուկ էր պատասխանը· «Յարգելի պարոն, արդեօ՞ք կ'ուզէք որ արմատներս գտնեմ յիսուն տարեկանէս ետք, առիթը չունեցայ մանկութեանս հայերէն սորվելու, կը յուսամ խնդրանքս չէք մերժեր»:

Վերջին շաբաթներու ընթացքին նոյն պատասխանը ստացեր էի ուրիշ ֆրանսահայ երիտասարդէ մըն ալ···:

Գիտակցութեան ուրախալի եւ յուսալիր երեւոյթներ նոր սերունդի մեր երիտասարդներուն մօտ· նոր կեանք մը կ'ենթայ անոնց երակներուն մէջ· անոնք սկըսած են մտածել ու մտահոգուիլ հայրենիքով, հայերէն լեզուով, տոկալու եւ տեւելու ձգտումներով:

Մաղթենք որ երկար սպասելու պէտքը չունենանք տեսնելու համար նման գիտակից երիտասարդներ, հոգիով, նաեւ լեզուո՛վ հայ, որոնք առանց սպասելու իրենց յիսնամեակներուն, գան ու գրաւեն ներկայի կարգ մը կազմակերպութիւններուն հոգիով միայն հայ վարիչներուն մաշած բազկաթոռները:

ՄԵՍՐՈՊ

ՄԷԹՐ ԽԱՋԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԻԹԵՐԱՆԻ ՄՕՏ

Երեքշաբթի օր, Յունուար 28-ին, Նախագահ Միթերան կ'ընդունէր «Ֆրանսախօս խորհրդարանականներու միջազգային միութեան» մէկ պատուիրակութիւնը դէսպանուհութեամբ՝ մէթր Խաչիկ Պապիկեանի (Լիբանանի խորհրդարան), որ փոխնախագահն է միութեան:

Խօսակցութեան նիւթ եղած են ֆրանսախօսութեան հարցերը: Այս առթիւ, սակայն, մէթր Խաչիկ Պապիկեան անդրադարձած է Լիբանանի կացութեան: Հանդիպումին մասնակցած են այլ ֆրանսախօս խորհրդարանականներ (Քէպէք, եւայլն): Ներկայ եղած է նաեւ Ազգ· Ժողովի նախագահը՝ Լուի Մերմազ:

ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

ԱՆՅԵԱԼԻ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ ՆԵՐԿԱՅԻՑ...

ԽՄԲ. - «*Սովետական Հայաստան*» օրաթերթի Յունուար 9-ի թիւէն քաղելով կուտանք արձակագիր վահագն Գրիգորեանի ստորագրած գրախօսականը՝ «*Գրական Թերթ*»ի խմբագրապետ Նորայր Ադալեանի «կապոյտ երգնկա» գիրքին մասին:

×

Հայրենիքի թեմային Գրականութիւնը մեծագոյն երկիւղածութեամբ է անդրադառնում: Ուժեղ զգացմունքները սակաւ-ծագործական հզօր խթան են, միեւնոյն ժամանակ էլ յայտնի վտանգ են պարունակում իրենց մէջ: Գրողի խնդիրն աւելի է բարդանում, երբ նա անդրադառնում է երկրի ու ժողովրդի պատմական ճակատագրի հանգուցային անցքերին:

Նորայր Ադալեանը յաջողութեամբ եւ, որ պակաս կարեւոր չէ, իրաւացի է լուծել ստեղծագործական այդ խնդիրը «Կապոյտ Երգնկա» գրքում, որը, ընդհանրի խօսքերով ասած՝ «որքան պատմական է, այնքան էլ ժամանակակից»: Սա, թերեւս, գրքի գլխաւոր արժանիքներից մէկն է: Հայ ժողովրդի համար դարասկզբեան ողբերգական իրադարձութիւնների արձագանգները մենք լսում ենք ոչ թէ անցեալից, այլ՝ ներկայից: Շփուում ենք ոչ թէ բուն իրադարձութիւնների, այլ դրանց հետեւանքների հետ: Ամօրուում է անցեալը այսօր ապրող, աշխատող, ստեղծագործող մարդկանց հոգիներում եւ դառնում ժամանակակից իրականութիւն:

Կապոյտ Երգնկա՝ կապոյտ հայրենիք, սուզուած անթափանց մշուշների մէջ, հեռաւոր ու անհասանելի, բայց ողողուած յիշողութեան պայծառ լոյսով, միշտ մօտիկ ու ներկայ մարդկային հոգում: Ի՞նչ է ծնում այս դրամատիկ հակասութիւնը, ի՞նչ ընթացք է տալիս մարդկանց գործողութիւններին, ինչպէ՞ս է ձեւաւորում նրանց աշխարհայեացքը: Եւ այստեղ պիտի ասել, որ Ն. Ադալեանի գրքի միւս կարեւորագոյն արժանիքն էլ այն է, որ անբռնազբօս կերպով, միանգամայն բնականօրէն, սուզուելով իր հերոսների զգացմունքների ու արարքների աշխարհը, որոշակիօրէն բացայայտում է հայ ժողովրդի հոգեւոր - բարոյական վիճակի պատենցիալը, որ ազգային մեծ ողբերգութիւնից յետոյ էլ չկորցրեց բարու եւ վեհագիր իր խտէալները:

Եթէ մենք, այսպէս թէ այնպէս, պայմանականօրէն ենք կապոյտը կարօտի գոյն համարում, միանգամայն իրաւացիօրէն կարող ենք ասել, որ մեծ, խոր կարօտը ծնում է լուսաւոր հոգիներում: Եւ, իրօք, այդպիսին են գրքի բոլոր դրական հերոսները՝ լինեն նրանք ժամանակին մեծ եղեռնը ապրած ծերունիներ, թէ նրանց զաւակները ու այսօր ծնուած թոռները: Կենդանի, լիարիւն կերպարներ են դրանք, միեւնոյն ժամանակ էլ ոգեղէն մի բան կայ նրանց մէջ: Թերեւս, այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետեւ նրանց միաւորում, նրանց գործողութիւններին ու մտքերին ընթացք է տալիս անսահման կարօտը, որի աղբիւրը սէրն է, հասցէն՝ հայրենիքը: Եւ հայրենիքն այստեղ, սկսուելով Եփրատի ափից, հինաւուրց Երգնկայից, ամենատես ու ամենազգայ մարդկային հոգում աստիճանաբար ծաւալւում է, ընդարձակում իր ոչ միայն աշխարհագրական, այլեւ ժամանակային սահմանները:

Պատմական յիշողութիւնը, ազգային հոգեւոր - բարոյական արժէքների առկայութիւնը աշխարհայեացք են մշակում, մարդկային կեցութեան պարտադիր պայման են, բարձր քաղաքացիականութեան խթան: Միրանի կարուած ծառ ողբերգութիւն է Մելքոն Տէր - Պետրոսեանի համար, կուշտ ու սահմանափակ Աբոյի համար՝ ցախ («Երբ ես մեռնեմ, ուրիշները կը դան իմ տեղը» պատմուածքը): Ազգային - ազատագրական կռիւների ծեր մարտիկը, հին հրացանն առած, ներկայանում է զինկոմիսարիատ, խնդրում իրեն ուղարկեն կռուելու Փաշիսմի դէմ, իսկ անկզբունք ու կարիերիստ Վռամեանի հոգին փակ է նրա յուշառերի առաջ, ինչպէս որ փակ է սեփական չահից դուրս գնալու ամէն ինչի համար: Նախնիների

ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ԱՆԿԻՒՆԸ

ՔԱՆԵՐՈՐԴ ԴԱՐԸ ԵՒ ՄԵՆՔ

Գրեց՝ ԾՐԱՐՈՒՆԻ

(Բ. եւ վերջ)

Այս նորաբոյս «էթիք»ին զոհերն են սակայն որ այսօր Եւրոպայի պատիւը կ'պահարեն, իրենց գոյութիւնը երբեմն մայթերու վրայ քաշկռտելով, մայթեր, որոնք մեր տղոց հոգին կը վիրաւորեն: Այս դժբախտներուն համար, կրնանք ըսել, որ իրենց համար մեղք գոյութիւն չունի եւ իրենց հիւանդագին երեւակայութենէն ինչ որ կ'անցնի, բարի է իրենց համար, հոգ չէ թէ Աստուծոյ աչքէն իյնան եւ ողջամիտ մարդոցմէ չխրուին:

Պատմութեան մէջ, այսչափ հոգէախտաւորներ չեն եղած երբեք: Կայ եւ աւելին: Նինուէ, հեթանոս Նինուէ, ապաշխարեց, իսկ ասոնք «ապաշխարութիւն» բառը լսել իսկ պիտի չհանդուրժէին, եթէ քահանայ մը անոնց խօսք ուղղէր:

Այս յառաջացած դարուն, մարդիկ պատմութեան առջեւ, ինչո՞վ պիտի պարծին արդեօք· գաղափարական մեռած ճշմարտութիւնե՞րով, հոգեկան ամլութեամբ, մթնած իմացականութե՞ամբ թէ իրենց անանկացած կեանքով: Ներկայիս մեր շուրջ կը վխտան, Մամոնայի ընչաքաղց սարսուիները, եւ ամենք ալ անամօթօրէն դրամի առջեւ կը ծնրադրեն եւ անոր խունկ կը ծխեն:

Նիւթապաշտութեան աւելին, կարելի՞ է արդեօք երեւակայել:

Գալով հաճոյամոլութեան: Այսօրուան սերունդները իրենց օրը օր ընել կը ջանան, առանց նկատի առնելու, իրենց առողջութիւնը եւ ապագան: Ախորժալուր, ջլախտ յառաջացնող, միապաղաղ եւ մարդս ուժասպառ ընող երաժշտութեամբ արդեօք, սերունդներ պիտի յաջողի՞ն: Բաց խօսինք· այսօր չարժանկարի սրահներու մէջ, սերունդները ինչպէ՞ս կ'այլասերին, եւ ասո՞նք են որ վաղը մեր տուներուն մէջ իրը հայրեր ու մայրեր պիտի բնակին:

Յատկալի է, որ նոր սերունդները, ամուսնութեան սուրբ խորհուրդն ալ, լուրջի չառնելով, իրենց քմահաճոյքին համաձայն, կը միանան ու կը բաժնուին, այսպէսով նոր եղանակ մըն ալ՝ իրենց երզացանկին վրայ աւելցնելով:

*Այսօր «մեղք» բառը նոր սերունդներու կողմէ քմծիծաղով կը դիմաւորուի եւ չատեր ալ այդ բառին կարեւորութիւն չեն ընծայեր, բայց ան է որ ներկայիս աշխարհի ողնածուծը, **կը քամէ**:*

Ծեր կրօնապետ մը, եւրոպական թերթի մը մէջ, մեղքի կամ աւելի ճիշդ, ներկայիս տիրող անբարոյականութեան մասին սա պէս կ'արտայայտուի. - «Քանի-որ դարու վերջաւորութեան, այս նիւթին առընչութեամբ, մեղանչելու մէջ, այնպի՛սի արմատականութիւն, այնպիսի վայրագութիւն եւ հեթանոս ու լպիրշ բարքերու մէջ մխրճուելու, այնպի՛սի յանդգնութիւն մը կը տիրէ, որ Սոդոմ ու Բաբելոն, վերջին դատաստանին օրը, մեզմէ նուազ յանցաւոր պիտի երեւին»:

Ս. Աւետարանը, երբ անբարոյութեան մեղքը կ'արժեւորէ եւ յայտնապէս զայն կը մատնանշէ, պիտի նաեւ, թէ այդ մեղքը, հոգւոյն առնութեր, մարմինն ալ ինչպի՛սի քայքայումի ու փճացումի կ'առաջնորդէ:

Կա՛յ եւ աւելին: Երբ մարդ, իր հաճոյքին գերի դարձած բարոյականութեան ճամբէն տակաւ կը չեղի, ժամանակով, իր մէջ դոնուող բարոյական արժէքներ՝ քաջութիւն, մեծանձնութիւն, աշխատելու եռանդ, բացասրտութիւն, ողջմտութիւն, ասպետական կեցուածք, գաղափարային թռիչք եւ ապրելու ուրախութիւն, հետզհետէ կը չքանան:

Տեսնուած է, որ բարոյականութենէ զուրկ մարդիկ, գրեթէ միշտ տխուր են: Այսպիսինե՛ր, ատակ են նաեւ, գոյութիւն, մարգասպանութիւն, խարէութիւն ընելու, ընտանեկան կռիւներ յարուցանելու եւ ուրիշներու վրայ նախանձելով, զանոնք ատելու:

Ամուսնութեան Ս. Խորհուրդն ալ, աչխարհի վրայ, կարծես խաղալիք դարձած է այսօր: Ոմանք ալ համաձայնութեամբ կ'ամուսնանան, եւ չատ անգամ չնչին պատճառներով չուտով կը բաժնուին, անմիջապէս վերամուսնանալու համար: Ո՞ւր մնաց, ամուսնութեան Ս. Խորհուրդի հանդամանքը: Եւ այսպիսի հոգիներ, կը յուսա՞ն արդեօք, որ դեռ Աստուծոյ օրհնութիւնը իրենց վրայ պիտի իջնէ:

Եթէ ասիկա այլասերում չէ, հապա ի՞նչ է արդեօք:

Գալով ազատամտութեան հարցին, «վերածնունդ»ով մենք զայն հնարեցինք, բայց խնդիր է, թէ արդեօք մենք անով ի՞նչ չահեցանք դարերու ընթացքին: Գալով մեզի, այսօր, զարմանալի հոգեբանութեամբ մեղքը ուրանալով անոր եւ մեր յոռի մղումներուն, անպիտակցաբար, գերի լինած ենք, եւ այն չա՛նս ազատամտութեան եւ չանուն արդի մշակոյթին:

Մինչեւ ե՞րբ կոյր պիտի ձեւանանք, չտեսնելու համար մթագնած հոգիներով եւ իմացականութեամբ այն ամուլ անձերը, որոնք խաղալիկ եղած են այսօր՝ նիւթին եւ իրենց անկարգ կիրքերուն:

Գիտէ՞ք արդեօք, թէ ազատամտութեան առաջին պտուղը, ինչ եղաւ անցեալի մէջ: Ծրանացիք, կինը, իբր բանականութեան խորհրդանիշ, մայր եկեղեցւոյ մէջ, խոր-բան բարձրացուցին եւ անոր երկրպագութիւն ըրին:

Ողջամիտ ամէն ոք, պժգանքով պիտի դիմաւորէր ասիկա:

Այսօր ալ, ծանուցումներու մէջ, ամէն բանի խորհրդանիշը կինն է, աւելի ճիշդ ան չահագործումի առարկայ դարձած առարկայ մը նկատուած է, մինչ քրիստոնէութիւնը զինքը այնքան բարձրացուցած էր, անցեալին:

Ազատամտութիւնը, ո՛ր վարդապետութեամբ ալ արդարանալ ջանայ, մեզ անբոյժ ու ոգեբզկական վախճանի մը կ'առաջնորդէ:

Ասիկա չտեսնելու համար, մարդ կոյր ծնած պէտք է ըլլայ: Քրիստոնէական կրօնքը մեր ազատութեան սահմանը եւ չափանիշը մեզի ակնբախ դծած է: Ազատ ըլլալ, նախ մեզէ՛ ազատ ըլլալ կը նշանակէ, մեզէ՛, որ իմացականութիւնը կը մթագնէ, եւ կրքերէ, որոնք մեզ կը հիւծեն ու կը քայքայեն բացայայտօրէն:

Անսանձ ազատութեան ցանկալ, փչրիլ օրէնքներու չղթան եւ միայն վայելքի մասին մտածել, մարդը չերջանկացներ երբեք:

Օրինակները անթիւ են մեր առօրեային մէջ եւ սակայն նկատի չենք առնուիր: Մարդ ազատութիւնը այն ատեն կը վայելէ, երբ իր կրքերուն չի՛ հնազանդիր: Մնացեալը անտոհմականութիւն է լոկ եւ երեւակայութեան արդիւնք:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ 49-ՐԴ ԱԽՈՅԵՆՈՒԹԵԱՆ ՍԵԶՈՆԻՆ

«ԱՐԱՐԱՏ» ԿԸ ՄԱՐԶՈՒԻ

Խորհրդային 49-րդ ախոյենութիւնը կը սկսի Մարտ 1-ին եւ «Արարատ»ի առաջին հանդիպումը տեղի կ'ունենայ յաջորդ օր՝ Երեւանի մէջ, Մոսկուայի «Տորպեդո»ի հետ («Յառաջ»ի Յունուար 14-ի թիւով արուած էր «Արարատ»ի երթի խաղերու ժամանակացոյցը):

Մինչ այդ, սակայն, ինչպէս սովորութիւն է, խումբը մարզումներու եւ վարժութիւններու շրջան մը կ'անցընէ, բարեկամական կամ քննական մրցումներ կ'ունենայ զանազան խումբերու հետ, կը բնակամական կամ քննական մրցումներ կ'ունենայ զանազան խումբերու հետ, կը բնակ վերջնապէս որոշելու համար խաղարկութեան իր ոճը: Այս նպատակով ալ «Արարատ», նախապատրաստական աչխատանքներու շրջափակին մէջ, Դեկտեմբերի երկրորդ կէսին Լառս գնաց: Նախատեսուած երկու մրցումներու փոխարէն, տեղական մարզական կազմակերպութիւններու խնդրանքով չորս մրցում տեղի ունեցած է՝ ութ օրուան ընթացքին:

Առաջին հանդիպումը տեղի ունեցած է Դեկտեմբեր 18-ին, Վրյենտեան մարզադաշտին վրայ, (ինչպէս նաեւ միւս մրցումները), որ տասը հազար հոգի կրնայ բովանդակել, սակայն մրցումներու ստեղծած հետաքրքրութեան հետեւանքով 17 - 20 հազար մարզասէրներ հետեւած են խաղերուն, «պրաւելով» մօտակայ տուներու տանիքներն ու ծառերը... Հակառակ 22 ժամ տեւած ճամբորդութեան առթած յոգնութեան «Արարատ»ի տղաքը աքանչելի խաղարկութեամբ մը ծանր պարտութեան մատնած են Ներքին նախարարութեան խումբը (5 - 1): Կոլերը նշանակած են Զիլինգարեան, Ռաֆայել Գալստեան, Վ. Խաչատրեան եւ երկու անգամ Քոչարեան:

Երեւանցիները երկրորդ հանդիպումը ունեցած են Առողջապահութեան նախարարութեան խումբին հետ: Կոմմերը յարձակողական եւ ճկուն թաքթիքներով լեցուն խաղարկութիւն մը ցուցաբերած են եւ բերդերը անառիկ մնացած (0 - 0):

Երրորդ հանդիպումը տեղի ունեցած է Դեկտեմբեր 22-ին, Լառսի բանակի խումբին հետ, որ տասը անգամ երկրին ախոյեանը հանդիսացած է: Լառսցիները բարձր մակարդակի խաղարկութիւն մը ցուցաբերած են եւ երկու անգամ կոլ նշանակած: Թէեւ Աչոտ Խաչատրեան եւ Ռոբեր Գալստեան երկու կոլ նշանակելով կրցած են հաւասարեցնել հաշիւը, սակայն խաղի վերջաւորութեան, «Արարատ»ի յառաջապահներու մէկ սխալէն օգտուելով Լառսցիները նշանակած են յաղթանակի կոլը (3 - 2):

Դեկտեմբեր 24-ին տեղի ունեցած է «Արարատ»ի չորրորդ եւ վերջին հանդիպումը Լառսի ախոյենութեան արծաթէ մետալակիր՝ ժողովրդական կրթութեան նախարարութեան խումբին հետ: Խաղը վերջ գտած է «Արարատ»ի յաղթանակով (2 - 0): կոլերը նշանակած են Աչոտ Խաչատրեան եւ Մարզարեան:

«Արարատ»ի տղաքը Երեւան վերադառնալով հետեւած են մարզանքի եւ կարգ

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐՈՒ ՏԱԳՆԱՊԸ ԵՒ ՍՓԻՒՌՔԻ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

ԽՄԲ. - Ինչպէս ցոյց տուին մեր յաջորդական արտատպումները («Ասպարէզ», «Արմենիա») Սփիւռքի մեր մամուլը - անխտիր - լայնօրէն կ'արձագանգէ Մխիթարեան վարժարաններու միջազգային կոմիտէի կոչին: Պոսթընի մեր պաշտօնակիցը՝ «Պայքար» ռամկավար շաբաթաթերթը Յունուար 18-ի իր թիւին մեծ մասը նուիրած է այս կենսական հարցին, հրատարակելով այն հարցազրոյցը զոր պ. ե. Ազատեան ունեցած է Տիքրօյթի մէջ կոմիտէին նախագահ պ. վ. Ճագմաեանի հետ (որ յատուկ տեսակցութեան մը համար պ. Ալեֆ Մանուկեանի հետ, Տիքրօյթ փութացած էր Դեկտեմբերի վերջ) իր կողմէ ալ խմբագրականով մը զօրավիգ կեցալով եղած կոչին: Այդ նոյն թիւէն կ'արտատպենք «գործով Հայ»ու մը սա շահեկան ճամակը:

×

ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ Ս. ՂԱԶԱՐԸ

Յարգելի խմբագիր «Պայքար» շաբաթաթերթի.

Ձեր պատուարժան թերթին մէջ կարդացի վենետիկի Մխիթարեան Միաբանութեան ամտեսական տաղնապին եւ անոր բարւոք լուծումի մասին տեղեկութիւնները:

Իրրեւ գործով հայ եւ ոչ թէ՝ խօսքով, կ'առաջարկեմ հետեւեալ լուծումը:

Անճնապէս կը նուիրեմ 500 տոլար. կը յուսամ եւ վստահ եմ որ կը գտնուին նաեւ ուրիշ 9999 իրական Հայեր, որոնք պիտի ուզեն հետեւիլ օրինակիս նուիրելով նոյն գումարը, փրկելու համար Ս. Ղազարի մշակութային, պատմութեան եւ քաղաքակրթութեան նշխարները, ինչպէս նաեւ՝ Մխիթարեան Միաբանութիւնը իր ներկայ տաղնապէն: Մխիթարեանները, որոնք 300 տարիէ ի վեր կ'աշխատին հայ գրականութիւնը, հայ պատմութիւնը եւ հայ մշակոյթը բարձր պահել եւ զարգացընել:

Այս 500 տոլարը ուրիշ բան չէ, եթէ ոչ մէկ տարուան ծախսերի համար մեր վճարած գինը: Ծախելը դադրեցնելով, անոնք օգտակար եղած պիտի ըլլան նաեւ իրենց անձին, իրենց առողջութեան:

Ներկայիս, հաստատուած է որ նիքոթինը չատ զօրաւոր թոյն մըն է, մեր ֆիզիքականին եւ մեր շրջապատին համար: Մխիթարեան տաղնապը թող գտնէ առիթ մը եղած ըլլայ ինքնաթունաւորումէ փրկուելու:

Կը խնդրեմ նաեւ որ ուրիշ հայ թերթեր արտատպեն այս նամակս:

Նուիրատուութիւնները կրնան ընել հետեւեալ հասցէին. -

C. I. C. A. M.
c/o Crédit Suisse
92, Champs-Elysées — 75008 PARIS
FRANCE

ԳՈՐԾՈՎ ՀԱՅ ՄԸ

«ՊԱՅՔԱՐ». - «Գործով հայ մը» ստորագրող անձը պոստոնարնակ ծանօթ ազգային մըն է, որ այլ առիթներով նաեւ գործնապէս փաստած է ազգային կարիքներուն օգտակար ըլլալու իր ձգտումը: Այս մասնաւոր առթիւ, կը յարգենք իր «անանուն» մնալու տրամադրութիւնը:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Ամանդութիւն դարձած այս գեղեցիկ օրը, անգամ մը եւս կուգայ փաստելու մեր սիրելի մանուկներու պատրաստակամութիւնն ու սէրը, հանդէպ՝ մեր լեզուին եւ իրենց հակումը՝ դէպի մեր ազգային գիտակցութեան:

Կապոյտ Ծովի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ «Մանուկներու Օր»ը փարիզի մէջ, տեղի ունեցաւ Յունուար 12-ին, Բ. Թաղամասի Լէօվոլտ - Պէլան սրահին մէջ:

Կոկիկ սրահ մը որ բերնէ - բերան եւ ժամանակէն առաջ լեցուած էր ծնողներով, բարեկամներով, խաչուհիներով, ուսուցչուհիներով ու մանուկներով: Հոն էին նաեւ 9-րդ Թաղամասի քաղաքապետի կցորդը՝ պ. Ռիենալ եւ հոգեւոր հայրեր: Բոլորն ալ եկած էին մեր սիրելի զաւակներուն բերնէն, անգամ մը եւս լսելու, մեր Մեսրոպատառ լեզո՛ւն որ կապուտակեանի խօսքերով պիտի մանկանար անոնց անմեղ շրթներուն վրայ:

Առաջին խօսք առնողը եղաւ կապոյտ Ծովի Շրջանային Վարչութեան նախագահուհի՝ Տիկին Մարի Գալճեան, որ վեր առնելով հայ լեզուի կարեւորութիւնը մեր գոյատեւման մէջ, ներկայացուց խաչուհիներու եւ ուսուցչուհիներու տարած ջանքերն ու աշխատանքը՝ այս ուղղութեամբ: Ան ծանրացաւ նաեւ կապոյտ Ծովի գործունէութեան եւ պէլճօնթէնի կայանի կարեւորութեան վրայ: Ապա, Տիկին Հելէն Մերճանեան ներկայացուց օրւան դեղարուեստական բաժինը, պատրաստուած՝ կապոյտ Ծովի փարիզեան շրջանի միօրեայ վարժարաններու աշակերտութեան կողմէ, որոնք եկած էին Փարիզէն, Ալֆորվիլլէն, Իսի - լէ - Մուլինոյէն, Առնուվիլլէն, Սեւրանէն, Պանեէօ - Քաշանէն, Անիէր - Պուա - Քոլոմպէն եւ Շաւիլլէն: Անոնք իրենց պարերով, երգերով, արտասանութիւններով եւ ներկայացումներով եկան փաստելու թէ Հայը կայ եւ պիտի մնայ. հայ լեզուն պիտի գոյատեւէ եւ մենք պիտի չարունակենք մեր վերելքի դժուարին ճամբան, հակառակ բոլոր խոչընդոտներուն:

Բոլոր մանուկները, գեղեցիկ փունջ մը կը կազմէին բեմին վրայ: Անոնց արտասանութիւնները ու երգերը կը խանդավառէին ներկաները եւ ծափերով կը լեցընէին սրահը: Այստեղ կ'արժէ ընդգծել եւ գնահատել փարիզեան շրջանի նորակազմ պարախումբը որ տարբեր փայլ եւ համայք տուաւ հանդէսին:

Գեղարուեստական բաժնի աւարտին, Տ. վրդ. Ներսէհ Բապուճեան իր հայրական խօսքերով քաջալերեց մեր մանուկները, հաստատ մնալու եւ չարունակելու իրենց ուղին: Սորվիլ մեր լեզուն եւ զայն անաղարտ պահել: Ան իր ազօթքովն ու օրհնութեամբը տուաւ իր հայրական պատգամը:

Կարճ դադարէ մը վերջ որ հարկաւոր էր, ներկաները առիթը ունեցան ճաշակելու խաչուհիներու կողմէ պատրաստուած կարկանդակները:

Սրահ վերադարձին, անոնք, կաղանդ պապուկը գտան բեմին վրայ, որ իր ծրարները կը բաժնէր ներկայ բոլոր մանուկներուն:

Գեղարուեստական բաժնի երկրորդ մասը մանուկներու յատուկ չարժանկարի մը ցուցադրութիւնն էր:

Հանդէսը վերջ գտաւ ժամը 18·30-ին:

Ներկաները, բոլորն ալ գոհ էին ստեղծուած մթնոլորտէն, մանաւանդ մեր մանուկներու հայ մնալու հաստատակամութենէն եւ մեր լեզուն սորվելու վճռակամութենէն:

Գնահատելի է տարուած աշխատանքը եւ քաջալերելի՝ կապոյտ Ծովի Շրջանային Վարչութեան եւ բոլոր մասնաճիւղերու ցոյց տուած զոհաբերութեան ոգին:

ԱՐՏԵՄԻՍ ՓՈՒՇՈՒՃԵԱՆ

ՓՐՈՖ. ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կիրակի, Յունուար 12-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ մատուցուած Սուրբ Պատարագի աւարտին, բազմավաստակ հայ մանկավարժ, դաստիարակ, տնօրէն եւ ուսուցիչ՝ Փրոֆ. Խաչեր Գալուստեանի մահուան քառասունքին առիթով կատարուած հոգեհանգստեան արարողութեան ընթացքին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Ս. Աթոռոյ Գահակալ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս յատուկ խօսքով մը գնահատեց հանգուցեալ Խաչեր Գալուստեանի մանկավարժական վաստակը եւ այդ առիթով յայտարարեց որ հանգուցեալի ընտանիքը՝ Տիկինը եւ զաւակները, ի յիշատակ իրենց թանկագին ամուսնոյն եւ հօր, մէկուկէս միլիոն լիբանանանեան ոսկիի մեծագումար նուիրատուութեամբ մը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ հաստատեցին հիմնադրամ մը, որ պիտի կոչուի ՓՐՈՖ. ԽԱՉԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

Հիմնադրամի տարեկան եկամուտը միայն պիտի յատկացուի հայ ուսուցչի պատրաստութեան այնքան կենսական գործին, որուն ամենաջերմ հաւատացողներէն եւ գործնապէս նուիրեալներէն մէկն էր Փրոֆէսէօր Խաչեր Գալուստեան ինք:

Վեհափառ Հայրապետը օրհնելէ ետք յիշատակը բազմաջան դաստիարակ Խաչեր Գալուստեանի՝ ջերմօրէն գնահատեց իր կնոջ՝ Վանուհիի եւ զաւակներուն այս յոյժ գնահատելի եւ օրինակելի արարքը ի սէր հայ ուսուցչի պատրաստութեան զարգացման եւ ի ծառայութիւն հայ նոր սերունդի առողջ դաստիարակութեան:

ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

Անթիլիաս - Լիբանան
1986, Յունուար 13

մը վարժութիւններու: «Դինամօ» մարզասրահին մէջ ծանրաբարձութեան եւ աէրոպաթիք վարժութիւններ կատարելէ ետք Զորագրիւրի մէջ ալ Ֆութպոլի վերթերեալ մրցումներ ունեցած են: Յունուար 7-ին «Արարատ» զացած է Վառնա՝ թէ՛ հանդիսաի, թէ՛ մարզումներու եւ թէ Պուլկարիոյ երկու խումբերու հետ հանդիպումներ ունենալու համար: Յունուարի վերջաւորութեան «Արարատ»ի տղաքը կը վերադառնան Երեւան եւ կարճ հանդիսէ մը ետք կը մեկնին Սոչի, ուր տեղի կ'ունենայ խումբին մարզումներու վերջին հանգրուանը եւ կ'որոշուի մնայուն կազմը:

Ըստ նախատեսութեան, «Արարատ»ի կազմին մէջ մեծ փոփոխութիւններ չեն կատարուիր. «Կոտայք» վերադարձած է մինչեւպահ Գ. Յովհաննիսեան, որու փոխարէն «Արարատ»ի կազմին մէջ առնուած է Եդ. Վերանեան: «Ղարաբաղ» խումբին հրաւիրուած է Պ. Գալստեան: Քննութիւն կ'անցընէ նաեւ Խորհրդային Միութեան պատանեկան խումբէն անցեալ տարի հանդէս եկած Կարէն Մարկոսեան:

Այս բոլորը յարձակողները են, ինչ որ ցոյց կուտայ, թէ խումբին դեկավարներուն գլխաւոր նպատակն է զօրացնել «Արարատ»ի յառաջապահ դիծը եւ ցուցադրել իսկապէս յարձակողական խաղարկութիւն մը:

Ծանօթ է, որ այս տարի խորհրդային 49-րդ ախոյենութեան կը մասնակցին բարձրագոյն լիկայի 16 խումբեր: Ընդհանուր դասաւորման վերջին երկու տեղերը գրաւած խումբերը կը փոխադրուին Ա. դասակարգ, իսկ անոնց փոխարէն՝ առանց անցքի խաղերու, բարձրագոյն լիկայի մէջ կը մնանեն Ա. դասակարգի մրցաշարքի ընդհանուր դասաւորման առաջին երկու տեղերը գրաւած խումբերը:

Կը յուսանք, որ «Արարատ» լաւ պատրաստուած եւ բարձր տրամադրութեամբ ու մարտական ոգիով կը ներկայանայ նոր մրցաշարքին եւ արդիւնաւէտ խաղարկութեամբ մը պատուարեր դիրք կը գրաւէ լաւագոյններու չարքին:

ՀՐԱՆԴ ԱՃԷՄԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՉՈՆ ԱՒ ՄԱՍԻՍ

ՄԱՐԳՈ ՂՈՒԿԱՍԵԱՆ

1868 Թուականի անգլիացի լեռնագնացները հասնելով Ձեան սահմանին, գտան սպիտակ յակինթ ծաղիկ՝ կապոյտ բծերով, որ չատ առատ էր աճում:

Արարատը թէեւ սակաւաջուր է (ձընհալի ջրերը քարացրօններից ներծծւում են եւ ամբարւում՝ հիւսիսում Արարատեան եւ հարաւում՝ Կոզովիտի արաէզեան աւազաններում), բայց մի քանի գետին ստորոտ արօտավայրեր ունի. «Վասն մերձաւորութեան մշտաձիւն սահմանին՝ որ մեկմէկ գտապ ամարանի, եւ վասն յորդութեան ցօղոյ եւ տեղատարափաց»:

Ֆրանսիացի բնախոյզ Թուռնըֆոռը որ Արարատ լերան վրայ բացառիկ բոյսեր էր փնտռում, 1701 Թուի Օգոստոսին հասաւ մինչեւ յաւերժական Ձեան սահմանները: Վերելքի դժուարութիւնների պատճառով նա իրեն անուանեց «բուսաբանութեան նահատակ»: Ի՜նչ գեղեցիկ նահատակութիւն: Այսօր բնախոյզի չնորհիւ է, որ ստորեւ կը Թուարկուի լեռը եւ շրջապատը զարդարող ծաղիկների մի քանի կազմին անուանափունջ:

Ծիրանեծաղիկ, աչքածաղիկ. յակոբուկ. քարահերձուկ. տերեփուկ՝ դեղուդէչ եւ դեղնասպիտակ. քարածերպերում՝ չքնաղատեսն աստղիկ լեռնային եւ աստղիկ գեղուդէչ. հզօրուկ. ելակմորի. համասպրամ արեւելեան. մարեմծաղիկ. հիբիկ. Արարատեան ճարճատուկ. ոսկիխոտ. մեծամեծ կապուտակ ծաղիկներ ... նաեւ սէգն որդնաբեր, որ անուցիչն է որդանն կարմրի եւ որի մասին քիչ յետոյ:

×

11 Մայիսի, 1980 թ.

Երեկոյ է. Մասիսը դիտում եմ երի - տասարդական պալատի դիտահարթակից: Մէկ ժամ առաջ ի՛նչ ամպրոպ էր, որոտ, կայծակ: Ուժեղ քամի: Իսկ հիմա՝ կարծես ոչինչ չի պատահել: Արեւը մայր է մտել, թեք ճառագայթները թողնելով լերան գագաթի ամպերի մէջ, յատկապէս մի ամպահրաբուխի՝ Սիսի հարեւանութեամբ:

Յակոբ Կոջոյեանի գոյներն են խաղում Մեծ լերան չուրջը: Կապոյտի եւ սպիտակի բ՛նչ անթերի մաքրութիւն: Եւ գըրգըռիչը՝ Փոքր գագաթի հարեւանութեամբ նարնջադոյն ամպն է:

Լերան վսեմ հանդարտութիւնը, երկնային փոթորկից յետոյ լիքած անդորրը: Նայում եմ հարաւ ու լինճ թւում է, թէ թախծոտ ու տխուր մի երգ է հառնում ականջիս: Ամբողջերեկոյ, եւ գիշերը, եւ յաջորդ առաւօտեան ես դեռ լսում էի այդ երգը, որը եւ ստիպեց ինձ անելու այս գրառումը: Եւ ժամանակն է հաղորդելու զարմանալի մի տեղեկութիւն: Մեծ եւ Փոքր Արարատները բաժանող լեռնանցքից երկու գագաթները հասարեա միեւնոյն բարձրութիւնն ունին: Տեսողական խաբկա՞նք: Այո: Մեծի մեծութիւնն այդ կէտից ընդգրկել հնարաւոր չէ:

Եւ Լինչը, գագաթները միացնող հըրանգանում կանգնած նայում է Փոքր Արարատին, որ չա՛տ գեղեցիկ է, հսկայական մի բուրգ, որի հպին՝ նուրբ դեղնաւուն ծիրանի եւ ալիքաձեւ քգնեցատուտը անվերջօրէն փուռում է դէպ արեւելք. կարծես զայրացած ալիքները սառել են կախարդանքից:

×

14 Մայիսի, 1980 թ.

Առաւօտեան ժամը 10-ն է: Ուժեղ քամի է: Ծառերի կատարներից սկսած մոխրագունած է, այնքան որ ամպերը ցած են իջել. քամին չփչփացնում է, ճիւղերն իրար խփում, եւ աղջիկները, փչերն ու մազերը բռնած չտապում են: Հասնում եմ կամրջին ու ակնոցս դնում: Լեռը երեւում է Գագաթից վեր մի մեծ ամպակուտակ եւ նրա ստուերը՝ ձիւնոտ լանջերին: Այստեղից լերան վրայ ընկած ստուե՛րն է երեւում: Յանկարծ նկատում եմ, որ մի անցորդ կանգնում է ու նայում իմ հայեացքի ուղղութեամբ: Ցիշում եմ Արտաւազդ Փելեշեանի «Մենք» ֆիլմը: Պատչամբներից մարդիկ նայում են, պատուհաններից նոյնպէս, աւտոբուսի լուսամուտներից, փողոցից, տանիքից, այդուց՝ նայո՛ւմ են, նայո՛ւմ են, նայո՛ւմ են. հանդիսատեսն այրւում է. ո՞ւր են նայում, ի՛նչ են տեսել: Վերջապէս սպիտակ պատառին յայտնւում է փառահեղ Արարատը: Ահա թէ ո՛ւր են նայում: Ահա թէ ուր կարող էին նայել այդպէս յափշտակուած, վերացած, հիացած ու այրուած հայեացքներով: Եւ որտեղից որտեղ յիշում եմ այն ծեր Հային, որ տասներեքերորդ դարի Ֆրանսիացի ճանապարհորդ Ռուպրուկին ասել էր. «Ոչ ոք չպէտք է բարձրանայ Մասիսը: Նա աշխարհի մայրն է»:

×

Ամբողջ Արարատեան աշխարհում եւ բովանդակ Հայաստանում չկայ մէկ այլ տեղանուն առաւել նշանաւոր, քան Մեծ լեռը՝ Արարատը: Սա Ալիշանի կարծիքն է: Բայց անցեալում, թէ հիմա եղե՞լ է արդեօք մէկը, որ այդպէս չմտածի:

(Շար. 9)

Տոքթ. Գուրգէն Մեծատուրեան եւ զաւակները՝ Լօրան եւ Միշէլ,
Տէր եւ Տիկին Տըժան,
Տէր եւ Տիկին Լափթէֆ,
Օր. Շուշան Մեծատուրեան,
Օր. Մաննիկ Մեծատուրեան,
Գամէր եւ Գարեգին Մեծատուրեան
(Նիւ - Եորք, - Սոֆիա),
Բարթող Մեծատուրեան եւ զաւակը
(Պուքրէշ),
խոր կսկիծով կը ծանուցանեն իրենց կնոջ, մօր, քրոջ, հարսին եւ ազգականին՝
ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՆԷ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆԻ
(Ծնեալ՝ Բաբայեանեան)
մահը, որ պատահեցաւ Յունուար 27-ին:
Յուղարկաւորութիւնը կը կատարուի, երկուշաբթի, Փետրուար 3, ժամը 13·45-ին, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցին, 15 ռիւ Ժան - Կուժոն, ուրկէ մարմինը կը փոխադրուի Պանէես - Փարիզիէնի գերեզմանատունը ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

Մինասեան ընտանիքը (ռիւ տէ Փիռէնէ) եւ բոլոր պարագաները յաւուղ կը ծանուցանեն իրենց մեծ - մօրաքրոջ՝
ՏԻԿԻՆ ԱՂԱՒՆԻ ՏՕՆԱԿԱՆԵԱՆԻ
(Էրզրումցի)
մահը, որ պատահեցաւ Յունուար 27-ին, Մոնմորանսիի հիւանդանոցը 100 տարեկանին:
Յուղարկաւորութիւնը կը կատարուի, Երկուշաբթի, Փետրուար 3, ժամը 10·30-ին Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ եկեղեցին, ուրկէ մարմինը կը փոխադրուի Փանթէն - Փարիզիէնի գերեզմանատունը ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը:

ՄԱՐՍԷԼ

ՅՐԴ ՏԱՐԵԴԱՐՁ ՍԱՀԱԿ - ՄԵՍՐՈՊ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ

Կիրակի, Փետրուար 2-ին Մարսէյլի Մայր Եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ հանդիսաւոր պատարագ եւ կրօնական արարողութիւն, Սահակ - Մեսրոպ երգչախումբի հիմնադրութեան 8-րդ տարելիցին առթիւ:
Կը նախագահէ՝
ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆ
Պատարագը կը մատուցանէ՝
ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՊԵՐՃԵԱՆ
Սահակ - Մեսրոպ երգչախումբը իր ամբողջական կազմով եւ ղեկավարութեամբ՝ Յաչիկ Եըմազեանի, կ'երգէ Կոմիտասեան բազմաձայն պատարագը:

A l'initiative de FRANCE-ARMENIE
le Vendredi 31 Janvier à 18 heures 30
GERARD CHALIAND
présentera
le livre de James T. HASHIAN
«LE SEL DE LA VENGEANCE»
Ed. Stock
«Voici venu le temps de romans d'aventure sur les évènements tragiques de 1915». FRANCE-ARMENIE
Présentation et signature du livre :
à l'ESPACE ARMENIEN
40, rue d'Arménie - 69003 LYON
à partir de 18 heures 30

×

à 20 heures 30
Une SOIREE DE RENCONTRE avec...
GERARD CHALIAND
autour du roman de James T. HASHIAN
«LE SEL DE LA VENGEANCE»
— *Lecture publique* d'extraits du livre par Vahé ZEKIAN.
— *Signature* par Gérard CHALIAND.
Vahé ZEKIAN
metteur en scène
(Compagnie du Dauphiné - Théâtre de l'Ouest Lyonnais (T.O.L.) - Théâtre Arménien de la Maison de la Culture Arménienne de Décines).
Salle H. SAMUEL
Maison de la Culture Arménienne
15, rue du 24 Avril 1915 - DECINES
à partir de 20 heures 30

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՎԱԽՃԱՆՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑ ՀՈԳԵԼՈՑՍ
Տ. ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

Կիրակի օր, Փետրուար 2, Գ. Կիրակի Զկնի Ծննդեան:
Ղեւոնդեանց Քահանայից յառաջիկայ ոճին առթիւ, այսօր, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ԳԻՒՏ ԵՊԻՍԿ. ՆԱԳԱՇԵԱՆ
(Առաջնորդ Հայոց, Փարիզի)
Պատարագի ընթացքին հոգեհանգիստ կը կատարուի՝ Փարիզի եւ Շրջանի եկեղեցիներուն մէջ ծառայած վախճանեալ հոգեւորականներուն համար:
Պատարագէն ետք՝ ժամը 13-ին, ՓԷռ - Լաշէզի գերեզմանատան Եւրոպայի Հայոց առաջնորդներու դամբանին առջեւ, մատուռը ազօթք՝
Վռամշապուհ Արք. Քիպարեանի, Արտաւազդ Արք. Սիւրմէեանի եւ Սերովբէ Արք. Մանուկեանի հոգիներուն համար:

Հ. Բ. Ը. Մ.

Ողեկոչում
Վարդանանց
Հերոսամարտի

Կիրակի, Փետրուար 2, ժամը 16-ին Ալէք Մանուկեան Մշակ. կեդրոնին մէջ:
118, rue de Courcelles, 75017 PARIS
Օրուան խորհուրդը կը պարգէ՝
ԱՄՈՂԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆ
Գեղարուեստական բաժին
Մուտքը ազատ է:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԼ. - Վաստպրականի Հայրենակցական Միութեան կեդրոնական վարչութիւնը Տէսինի եւ Վիէնի մասնաճիւղերով ցաւակցութիւն կը յայտնէ Տէր եւ Տիկին Ժան - Ժաք Հացագործեանի եւ զաւակներուն, Տէր եւ Տիկին Րիչար Գըրիգորեանի եւ զաւկին, Տէր եւ Տիկին Օհաննէս Փանոսեան եւ զաւակներուն (Սարազպուրկ), Տէր եւ Տիկին Գառնիկ Պարէեանի եւ զաւակներուն, Այրի Տիկին Մայրանուշ Փանոսեանի եւ զաւակներուն, Տէր եւ Տիկին Մկրտիչ Հացագործեանի եւ զաւակներուն (Ամերիկա), Տէր եւ Տիկին Ժօրժիկ Հացագործեանի եւ զաւակներուն, Օր. Անահիտ Հացագործեանի, Այրի Տիկին Մարիամ Ադամեանի եւ զաւակներուն, Տէր եւ Տիկին Մարգար Դիլբարեանի եւ զաւակներուն (Հայաստան), Տիկին Սիրուն Եղիշեանի եւ զաւկին (Ամերիկա), եւ բոլոր ընտանեկան պարագաներուն, իրենց սիրելի մօր, մեծ-մօր, քրոջ, հարսին, ազգականին, խնամիին, Միութեան Տիկնանց Յանձնախումբի անդամուհիներէն՝ Օֆիկ Հացագործեանի մահուան առթիւ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հայ Աղքատախնամ Ընկերակցութիւնը ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները՝ Պ. Եդուարդ Վարդանեան 3000 Ֆ., Պ. Գրիգորեանց 2500 Ֆ., Տիկին Աբշալոյս Ճէնազեան 2000 Ֆ., Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւն 1000 Ֆ. Ծերանոցներուն: Տիկին Հիլտա Փանոսեան 1000 Ֆ. Տիկին Փեփրոնէ Զաքարեանի մահուան առթիւ Մոնմորանսիի Հանգստեան Տան համար. Պ. Մ. Զալտըրաք 500, ողբացեալ Պ. Ներսէս Հաճըլլըօղլուի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի, Պ. Սերժ Փոստաճեան 500 Ֆ.:

Հ. Բ. Ը. Մ. - ՓԱՐԻԶ

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ
Ալէք Մանուկեան Մշակ. կեդրոնին մէջ Փետրուար 15-էն սկսեալ, Ֆրանսերէն չգիտցող կամ կատարելագործել փափաքող Հայերու համար: Սորպոնէն վկայեալ ուսուցիչի մը կողմէ:
Տեղեկութեանց համար հեռաձայնել. - 46 - 38 - 17 - 78 թիւին:

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

«ԾԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Վիվիէ. - Պ. Պարգեւ Քերոսլեան 300 ֆրանք:
Վալանս. - Պ. Յարութիւն Մաղաքեան 200 Ֆ.:

×

Պ. Արսէն Տէր - Սարգիսեան 200 Ֆ.:
Պանէես. - Օր. Շ. Տէօլէկեան 100 Ֆ.:
Փարիզ. - Տէր եւ Տիկին Արամ Ղորդոռեան 250 Ֆ.:

ԱԷՆ - ԹՎԷԹԻԷՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Փետրուար 2, Կիրակի, առաւօտեան ժամը 10·30-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Աւետարանական եկեղեցւոյ մէջ, պատարագ կը մատուցուի:
Կը պատարագէ եւ կը քարոզէ՝
ՋԱՏԻԿ ԱԲԵՂԱՑ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Սիրով կը հրաւիրուի շրջանի մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն արարողութեան:

INAUGURATION DU MEMORIAL ARMENIEN DE MONTPELLIER

DIMANCHE 16 FEVRIER

○ 9h . MESSE de REQUIEM (Basilique N. D. des Tables à 100 m. du Mémorial) avec la Chorale Sahak - Mesrop de Marseille.
○ 11h : INAUGURATION du MEMORIAL sous la présidence de Méliné Manouchian. Discours, bénédictions et dépot de gerbes.
○ 13h : RECEPTION à l'Hôtel de Ville. Un repas arménien sera servi (participation : adultes 100 frs. / enfants 50 frs.*).
* *Réservation obligatoire par courrier* avant le 10 février *au siège d'*«ARMENIE VIVANTE» 7, *ave. de Toulouse*
34100 *MONTPELLIER*

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Պ. Ժ. Տալկալեանի մահուան առթիւ, Տէր եւ Տիկին Շահան Վահանեան փոխան ծաղկեպսակի 500 Ֆ. կը նուիրեն «Ծառաջ»ի բարգաւաճման:

COLLECTE

A l'occasion des fêtes de Noël, une collecte au profit de tous les prisonniers arméniens d'Europe a lieu à la paroisse arménienne catholique d'Arnouville - les - Gonesse,
69, ave. Henri Barbusse
95400 Arnouville - les - Gonesse
Cet argent sera adressé directement aux prisonniers pour leurs besoins personnels, cela avec l'accord des trois comités siègeant à Paris.
Encouragé par le succès de cette initiative et devant d'autres demandes, cette collecte est prolongée jusqu'au 31 janvier 1986.
Cet appel s'adresse à tous les Arméniens et aux organisations arméniennes.
Libellez vos chèques à l'ordre de :
PAROISSE ARMENIENNE CATHOLIQUE (préciser pour les prisonniers)
CCP 18 44 93 - 5 - Paris
les adresser à :
Eglise Arménienne Catholique
69, ave. Henri Barbusse
95400 Arnouville - les - Gonesse

— Total de la première liste publiée : 5170 Frs.
— La deuxième liste des donnateurs : E. Ajderian 750 F, Mlle L. Pierotti 500 F, une association arménienne 500 F, Paroisse d'Arnouville 2ème collecte 420 F, Père K. Athanase 400 F, Torossian, Mlle Seropian, O. Toufanian, V. Miskdjian, Nigogossian 200 F, Mlle N. Basmadjian 150 F, M. Martayan, R. Kazazian, P. Bedossian 100 F, Mme J. Azizian, Mme Andreassian 50 F ..... Total : 4120 Frs.
Le total de la collecte jusqu'à ce jour s'élève à : ..... 9290 Frs.

ARMENIE 1986

Tous nos départs sont effectués jusqu'à Moscou sur les vols réguliers d'AIR FRANCE et nos groupes sont encadrés par des accompagnateurs qualifiés et dévoués.

DEPART	RETOUR	DUREE
28 MARS	06 AVRIL	10 JOURS
18 AVRIL	02 MAI	15 JOURS
08 MAI	19 MAI	12 JOURS
23 MAI	06 JUIN	15 JOURS
27 JUIN	11 JUILLET	15 JOURS
11 JUILLET	25 JUILLET	15 JOURS
01 AOUT	15 AOUT	15 JOURS
15 AOUT	29 AOUT	15 JOURS
29 AOUT	12 SEPTEMBRE	15 JOURS
12 SEPTEMBRE	26 SEPTEMBRE	15 JOURS
03 OCTOBRE	17 OCTOBRE	15 JOURS
07 NOVEMBRE	21 NOVEMBRE	15 JOURS
26 DECEMBRE	09 JANVIER 87	15 JOURS

— Nous sommes en mesure d'organiser vos voyages individuels avec avion, hôtel, accueil et transfert pour un séjour maximum de 15 jours.

— Tarif aérien très avantageux sur les dates de nos groupes ou en individuel de 1 à 4 semaines, pour tout détenteur d'un visa d'invitation (certificat d'hébergement).

ԿԵԴՐՈՆԱԿԱՆԻ 100ԱՄԵԱԿԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ
SOUS LE PATRONAGE DES ANCIENS DU LYCEE GUETRONAGAN
VOYAGE EN ARMENIE
du 18 Avril au 02 Mai
POUR LA COMMEMORATION DU CENTENAIRE DU LYCEE GUETRONAGAN A EREVAN

Lic. A. 1037

Levon BAGHDASSARIAN	Varoujan SARKISSIAN	Jacques CHELELEKIAN
SABERATOURS	SEVAN VOYAGES	VOCA TOURS
31, rue d'Argenteuil	48, Cours de la Liberté	10, ave. du Prado
75001 PARIS	69003 LYON	13006 MARSEILLE
Tél. 42 - 61 - 51 - 13	Tél. 78 - 60 - 13 - 66	Tél. 91 - 37 - 58 - 58

AIR FRANCE · Intourist · AEROFLOT · AVIS · ARS

ՈՒՐԲԱԹ
ՅՈՒՆՈՒԱՐ
31
VENDREDI
31 JANVIER
1986

LE NUMERO : 3,00 F

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE-FONDE EN 1925
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TEL.: 47. 70. 86. 60 — TELEX: HARATCH 280 868 F
C.C.P. PARIS 15069-82 E — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 500 Ֆ· — Վեցամսեայ : 260 Ֆ·
Արտասահման : Տար· 550 Ֆ· — Հատը : 3,00 Ֆ·

61ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 16.150 | Fondateur: SCHAVARCH MISSAKIAN | 61e ANNÉE — No 16.150

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆ

—×—

Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԻ» հռչակեց 1986-ը։

Արդեօք խաղաղութիւնը վտանգուած է՞։ Քառասուն տարի է որ աշխարհամարտ չկայ։ Անհանգիստ երեւոյթ մը մարդկութեան պատմութեան մէջ։

Աշխարհամարտ չկայ, սակայն պատմութեան ամէնէն զինեալ խաղաղութեան շրջանն է, զինուածքի յառաջդիմութիւններով, հիւլէական ռումբով, անշրջեմի հետազօտութեամբ։ Աշխարհամարտ չկայ սակայն հազարներով մարզիկ, ամէն գոյնի եւ ամէն լեզուի պատկանող, դեռ կը մեռնին զինեալ բախումներու մէջ։ Աշխարհամարտ չկայ սակայն վերջին քառասուն տարիներու ընթացքին քառասունէ աւելի պատերազմներ՝ թէ անոնք ըլլան քաղաքացիական կռիւներ, ազատագրական պայքարներ, անցղոտական բախումներ, պետական հարուածներ, խաղաղացման պատերազմներ եկան ցնցեցին աշխարհը ու կը շարունակեն ցնցել զոհերով աւերներ։ Եւ դեռ ահաբեկչութիւնը որ նոր օրերու նոր պատերազմն է։ Յատուկ ռազմավարութիւն մը։ Ընդհանրապէս ճնշուածներու, անիրաւուածներու, մոռցուածներու զէնքը։

Աշխարհի չորս ծագերուն մարդիկ խաղաղութենէ կը ճառեն, համագումարներ կը կազմակերպեն, հանդիպումներ տեղի կ'ունենան, յայտարարութիւններ կ'ընեն սակայն զէպքերը կուգան անողոք եւ անվիճելի կերպով հերքելու ամէն ինչ։ Եւ ուրիշ կերպ չի կրնար ըլլալ որքան առեն որ աշխարհին մէկ ծայրը հարստութիւն է, ոտխութիւն է, առատութիւն է եւ միւս մասը աղքատութիւն, թշուառութիւն, սով։ Ուրիշ կերպ չի կրնար ըլլալ որքան առեն որ մոլեռանդութիւնը՝ ցեղային, կրօնական թէ գաղափարաբանական կը յաղթէ հանդուրժողութեան, համակեցութեան եւ փոքրամասնութիւններու իրաւունքներուն։ Դեռ մարդը պայմ մը կը մնայ մարդուն համար։

Դարերէ ի վեր, խաղաղութեան ահաւիրաններն ու պաշտպանները կը քալեն քարուքանդ եւ սպառիչ ճամբաներէ։ Ի՞նչ պէտք է ընել որպէսզի խաղաղութիւնը դառնայ իրականութիւն։ Շատ պարզ է՝ Ջնջել մարդը զերծ պահել ամէն տեսակի ցաւերէ։ Ասոր համար երեք հրամայական՝ քաղաքացիական ազատութիւն, ազգային անկախութիւն, միջազգային խաղաղ դոյակցութիւն։

Իր կտակին մէջ, Ալֆրէտ Նոպէլ կը հաստատէ Նոպէլեան Խաղաղութեան Մրցանակը հետեւեալ խօսքերով՝ «Խաղաղութեան Մրցանակը կը շնորհուի անոր որ ամենամեծ եւ լաւագոյն աշխատանքը կատարած է ի նպաստ ժողովուրդներու եղբայրութեան, մեռեալ բանակներու ջնջումին կամ նուազեցումին, խաղաղութեան համագումարներու կազմակերպութեան եւ ընդլայնման»։ Եւ Նոպէլ իր յուշերուն մէջ տեղ մը կը գրէ՝ «Պատերազմը մարդկութեան պատուհասն է»։

Կ. Ց.

ՊԷՅՐՈՒԹ

ԵՐԵՔ ՀԱՑԵՐ ԱՌԵՒԱՆԳՈՒԱԾ

—○—

ՀԱԿԱՃԵՄԱՑԷԼ ՇԱՐԺՈՒՄԸ ԿՐ ԾԱԻԱԼԻ

Կիրակի օրուան (Յունուար 26) Օդիան - լը ժուռը կը հաղորդէ որ Ուրբաթ օր, արեւմտեան - Պէյրութի մէջ վեց քրիս - տոնեաներ առեւանգուած են զինեալ տարբերու կողմէ։ Գաղափ մէջ առեւանգուածներու մէջ կան երեք Հայեր՝ Աւետիս Ժանոյեան, Ժերար Ասէրեան եւ Յակոբ Նազուզեան։

×

Միւս կողմէ, քրիստոնեայ որոշ հոսանք մը, ան որ կողմնակից է Դամասկոսի երբեակ համաձայնութեան, ամէն գնով կը պահանջէ ճեմայէլի անմիջական հրաժարումը։ Այս չարժումին գլուխն է նախկին նախագահ Ֆրանճիէ, որ Զղորթա տուած չարաթաեան իր մամուլի ասուլիսին ընթացքին, բաած է նաև թէ Ամին ճեմայէլ միշտ իր անձնական չահերը գերադասած է ազգին չահերէն։ Աւելցուցած է - «կը մտքեմ որ զինուորական լուծումը ամենավերջին ելքն ըլլայ»։

Շաման ալ կացութիւնը չատ ծանր կը դտնէ, բայց կը չեշտէ որ ճեմայէլի հրաժարման հարց չի կրնար ըլլալ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԺԻՍՔԱՐ Տ'ԷՍԹԻՆ էր որ «ճշմարտութեան ժամուն» կը ներկայանար Զորեքչաբթի օր։ Պարզ է որ իր ալ ըսածները տրամաբանական են, ինչպէս Պառի կամ Շիրաքի, ինչ կը վերաբերի յատ - ընտրական պատկերին, եթէ ընկերվարականները մեծամասնութիւն չըլլան։ Ներկայիս, համեմատականի այս դրութեամբ 30% կը նախատեսուի եւ ընկերվարականները չեն կրնար փոքրամասնութեան կառավարութիւն մը կազմել։ Պառ դէմ է համակեցութեան, նոյնիսկ վրատահութեան քուէ չի տար նման կառավարութեան մը (Ժիսքար չի հաւատար, թէեւ), Շիրաքի համար եթէ Լի-Փէ-Լիի - իի - Տէ - Լֆ մեծամասնութիւն չըլլայ, հետեւանքը՝ արշակաւան է, բայց Ֆապիիս ալ կ'առարկէ թէ քանի որ Պառիսթները դէմ են, ուրեմն մեծամասնութիւն չկայ եւ խառնակութիւն է։ Ի վերջոյ, ընկերվարականները կրնան աւելի հանդիստ մեծամասնութիւն մը ձեռք ձգել Մարտին եւ ատիկա չնորհիւ ընդդիմութեան պարագլուխներուն, որոնք համոզիչ են, երբ կ'ըսեն թէ անկառավարելի Ֆրանսա մը կրնայ ծնիլ Մարտ 17-ին։ Ամէն մարդ կը կռթնի Սահմանադրութեան վրայ, ոչ ոք կը համարձակի խոստովանիլ թէ ճիշդ այդ Սահմանադրութիւնն է մեղաւորը, որ նման կացութիւն չէ նախատեսած։ Բայց Տը Կոլ իր «չափին» վրայ պատրաստեց զայն, իրմէ եւս ապագայ չտեսնելով...։

ԵԳԻՊՏՈՍԻ նախագահը, որ եւրոպական չրջապտոյտի մը ձեռնարկած է, Փարիզ հասաւ առջի օր եւ տեսնուեցաւ Նախագահ Միթերանի հետ։ Մուպարաք կ'ուզէ որ Եւրոպան անպայման մասնակցի Մերձաւոր - Արեւելքի խաղաղեցման չանքերուն։ Ֆրանսա «տրամադրելի» է, բայց չուզեր միջնորդի դեր խաղալ։

ՊԱՊԸ իր 29-րդ ճամբորդութեան կը ձեռնարկէ, Շաբաթ օր, այս անգամ դէպի Հնդկաստան։ 14 քաղաք պիտի այցելէ, մայրաքաղաքէն սկսելով։ Դժուար ճամբորդութիւն մը երկրի մը մէջ, որու բը-

ՄԱՀ՝ ՊԵՏՐՈՍ ԶԱՐՈՅԵԱՆԻ

—×—

Յունուար 28-ի մեր թիւով հաղորդած էինք, թէ Պետրոս Զարոյեան հիւանդ - նոց փոխադրուած էր, երկու չաբաթ է։ Հինգչաբթի առաւօտ, թերթը մամուլի տակ դնելու առեն Մարսէյլէն, հեռաձայնով հաղորդեցին թէ Պ. Զարոյեան իր մահկանացուն կնքած էր Յունուար 29ին, յետ վիրաբուժական գործողութեան։

Իր կեանքին ու գործին մասին, կը խօսինք առանձին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի, Պօմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Ուրբաթ, Յունուար 31, ժամը 10ին։

ՃԱՏՐԱԿ

—×—

Գասպարով - Գարբով փոխ - վրէժի հանդիպումը տեղի կ'ունենայ Յուլիս 28-ի եւ Օգոստոս 4-ի միջեւ, փոխադարձ համաձայնութեան մը չնորհիւ։

Լիւսեռնի մէջ է, մամուլի ասուլիսի մը ընթացքին, որ միջազգային դաշնակցութեան նախագահը՝ Քամփոմանէս, կողքին ունենալով Գասպարով եւ Գարբով այս լուրը հաղորդած է։

COMMUNIQUÉ

ENTREVUE avec JEAN LECANUET

Une délégation conduite par Mgr. Kude Nakachian et composée de maître Armen Barseghian, Albert Kalaydjian et de Christian Der-Stépanian a été reçue le mercredi 29 janvier, au Sénat, par le président Jean Lecanuet, député européen.

Après avoir exposé le caractère spécifique de l'Eglise apostolique arménienne, Mgr. Kude Nakachian a souligné l'importance du rôle joué par l'Eglise dans l'histoire arménienne.

Evoquant la tragédie vécue par les Arméniens en 1915, les membres de la délégation ont pour leur part fait valoir les aspirations légitimes des Arméniens à voir ce crime contre l'humanité reconnu au plan international. Ils ont tout particulièrement insisté sur la nécesité de faire aboutir le débat sur la question arménienne actuellement en cours au Parlement Européen. Sur ce point précis, ils ont notamment fait part de l'attitude résolument hostile des parlementaires démocrates - chrétiens allemands à l'égard de la revendication arménienne.

Mr. Jean Lecanuet s'est montré réceptif au problème soulevé et tout en notant les liens politiques et stratégiques entre la Turquie et l'occident, il a manifesté sa volonté d'intervenir auprès de ses collègues allemands.

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ ԱԶՆԻՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

1984 Օգոստոս մէկէն ի վեր, «*Յառաջ*», հակառակ օրէ օր ծանրացող իր տնտեսական վիճակին, խուսափեցաւ յաւելումի դիմելու բաժանորդագրութեան իր սակերուն վրայ, մինչ տեղական թերթերը, նոյն շրջանին՝ 3 - 4 յաջորդական յաւելումներ կատարեցին։

Դժբախտաբար, բացարձակ անկարելիութեան առջեւ եմք շարունակելու նոյն պայմաններուն տակ։ 1984-էն ի վեր 4 յաւելում կրած եմք առաքման ընկերութեան կողմէ (եւ ուրիշներ նախատեսուած են մինչեւ տարուան վերջ), ասոնց կողքին աշխատավարձը, ընկերային տուրբերը, էլեկտրականութիւնը, թղթատարը, թուղթը իրենց կարգին զգալի յաւելում կրեցին օրէ օր աւելի դժուարացնելով հայերէն օրաթերթի մը ծանր բեռը, մանաւանդ երբ ան զրկուած է տեղական մամուլի առեւտրական ծանուցումներէն, որոնք գլխաւոր հասոյթն են որևէ թերթի։ Իրաց այս կացութեան մէջ, անխափան կարենալ շարունակելու համար «*Յառաջ*»ի կանոնաւոր հրատարակութիւնը, ստիպուած եմք բաժանորդագրութեան սակերու յաւելում մը նախատեսել *ՄԱՐՏ ՄԻԿԷն* սկսեալ։

Նոր սակերը կը հրատարակեմք ի մօտոյ, մինչ այդ մեր բաժանորդները կրնան օգտուիլ ներկայ սակերէն, փակելու համար իրենց առկախ հաշիւները, կամ նորոգելու համար իրենց բաժանորդագրութիւնը։

Ինչպէս ծանօթ է, իր ծննդեան օրէն ի վեր, «*Յառաջ*»ի միակ եկամուտները կ'ապահովեն բաժնեգիները, ծանուցումները, ինչպէս նաեւ բարգաւաճման փոնտին եղած իմքնաբուխ նուէրները։ Ուրեմն, կը խնդրեմք մեր հաստատիմ բաժանորդներէն, որ իրենց կանխիկ եւ կանոնաւոր վճարումներով դիւրացնեն վարչութեան ծանր գործը։

Շնորհակալութեամբ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
«ՅԱՌԱՋ»Ի

«ՓԱԿՈՒԱԾ ՎԱՐԱԳՈՅՐԻ ԱՌՋԵՒ»

Կոմիտասը եւ Շահմուրատեանը

Կոմիտասը անմահացաւ:

Շահմուրատեանը մոռացուեցաւ:

Կոմիտասը կ'ապրի իր ժողովուրդի նըման:

Շահմուրատեանը կ'ապրի միայն երաժըշտական պատմութեան մէջ: Նա մեռաւ, երբ այլեւս ապրողները չլսեցին նրա «Կռունկը», Մոկաց Միրզէն, «Անուշին» կամ «Վուշ Ալէքսան»ը: Հապա նրա «Հայաստան»ը: Նրա մահից յետոյ չատերը փորձեցին երգել այդ երգերը, բայց չկարողացան տալ այն հարազատութեամբ, ինչ տալիս էր Շահմուրատեանը: Պատճառը ... Որովհետեւ Մեծ Կոմիտասի չունչն էր տակ էր ապրել Արմենակը:

Շահմուրատեանը մե՛ծ երգիչ էր:

1933-ին, երբ գնացի Փարիզ հրաժեշտի ներկայացումս տալու, յաճախ հանդիպում էի Շահմուրատեանին: Նա տարօրինակութիւններ ունեցող մարդ էր: Շատը հիանում էին նրա ձայնի վրայ, բայց չէին սիրում նրա անձը: Ինչո՞ւ: Որովհետեւ անկեղծ խօսող մարդ էր, կծու լեզու ունէր, ճակատին դարնող, եւ ինչպէս ինքն էր ասում «Մ'չեցու թարս դամար» ունէր: Բայց երբ մտերմանում էիք հետը, տեսնում էիք, որ ազնիւ սրտի տէր է: Երբեմն միասին հրաւիրուած էինք լինում մի որեւէ ընտանիքի մօտ ընթրիքի կամ ճաշի: Սարսափելի կերպով ջղայնանում էր, երբ նրան առաջարկում էին մի բան երգել:

- Ի՞նչ է, ես «չալղի՞» եմ: Դրա՞ համար էք ինձ հրաւիրել, եւ կոպտօրէն մերժում էր երգել: Ես դրա ճարը գտայ: Երբ մեզ որեւէ տեղ էին հրաւիրում, ես ատենեցիներին նախօրօք խնդրում էի չառաջարկեն նրան երգել: Ընթրիքի կամ ճաշի պահերին ես աշխատում էի նստել նրա կողքին: Մէկ - երկու բաժակ խմելուց յետոյ, սկսալ նօթաներով, սկսում էի երգել նրա սիրած երգերից: Շահմուրատեանը, ջղայնացած գառնում էր դէպի ինձ եւ ասում էր.

- Լռի՛ր, սխալ ես երգում:

Ես ականջ չէի կախում նրա խօսքերին եւ շարունակում էի մոմոալ:

- Ես քեզ ասում եմ, որ սխալ ես երգում, մի՛ մորթիր երգը:

- Եթէ իմ երգածը սխալ է, հապա ո՞րն է ճիշդը: Սովորեցրու:

- Ի՞նչ է, դերասան եղար հերիք չէ, հիմի էլ ուզում ես երգի՞չ դառնալ:

Եւ նա սկսում էր երգել իմ «սխալ» երգածները:

Բայց երկար չտեւեց իմ հնարքը:

Հասկացաւ եւ մի օր էլ ասաց.

- Տօ՛, չարչի վանեցի, խնդի՛ր մշեցուն լաւ ձեռք ես առել: Քո օյինբազութիւնը հասկացայ, սրանից յետոյ ինչքան ուզում ես գռնչա՛, էլ չեմ երգելու:

Մի օր Գուրգէն Ալէմշահի հետ նստել էինք կաֆէ Սորբոնում: Եկաւ Շահմուրատեանը: Նստեց: Մի կաֆէ - էքեմ պատուիրեցի: Գուրգէնի հետ ծանօթ էր, բայց նա առհասարակ երիտասարդ երաժիշտներին չէր հաւանում:

- Պարոն Շահմուրատեան, ինչո՞ւ համար մեր Գուրգէնի երգերից չէք գնում ձեր երգացանկի մէջ:

- Դեռ չատ ջահել է, մինչեւ նա հասունանայ, ես արդէն ծերացած կը լինեմ: Ջահիլ երգիչներ կան, Թող նրանք երգեն: Եւ յետոյ դիտե՞ք, ես բացի Կոմիտասից ուրիշ բան չեմ երգում. չատ բացառիկ պարագաներում օտար եւ հայ մէկ - երկու երգահաններից երգում եմ:

- Բայց Ալէմշահը չատ տաղանդաւոր է:

- Ես հակառակը չեմ պնդում: Անպայման տաղանդաւոր է, քանի որ նա էլ Շահունի իր ազգանունի մէջ: Միակ տարբերութիւնն այն է, որ իմը անուան առջեւից է, նրանը՝ անուան վերջում: Սկսեց ծիծաղել: Ցետոյ լրջացաւ եւ գառնալով դէպի Գուրգէնը, ասաց.

- Սիրելի երիտասարդ, մի բան պիտի ասեմ քեզ, եթէ ուզում ես հայ երաժիշտ լինել, որ ապերախտ ասպարէզ է, բայց վաեմ ճանապարհ ... որպէս առաջնորդ ունեցիր Կոմիտասը ... մեր երգի բանալին նա է...

- Պարոն Շահմուրատեան, քանի որ յիշեցիք Կոմիտասին, չի՞ լինի մի անգամ մեզ տանէք նրան տեսնելու:

- Դժուար խնդիր է: Երբեմն պատահում է լուրջ մարդու նման խօսում է, նոյնիսկ կատակում, բայց շատ յաճախ, չի նայում այցելուներին եւ չի պատասխանում նրանց հարցերին:

- Ես ուզում եմ մեկնել Սրեւեռք, անպայման ուզում էի տեսնել նրան, պլնդեցի ես: Ուզում եմ տեսնել Մեծ հանճարին:

- Մեծ Հանճար ... որ մոռացուած է Վիլժիւիֆում: Բոլորիս վերջն էլ այդ է: Մոռացում կենդանութեան ժամանակ եւ անտեսում: Իսկ մահուանից յետոյ կուրծք են ծեծում: Թողնենք սակայն: Լա՛ւ, վաղը չէ միւս օր առաւօտեան, ժամը 9-ին, եղէք այստեղ, կ'երթանք, կը փորձենք տեսնել: Շատ անգամ ոչ ոքի չի ընդունում:

Նշանակուած օրը, նոյն ժամին, եկաւ Շահմուրատեանը: Մեզ հետ նստած էր նաեւ Օհան Կարօն. նա էլ ցանկութիւն յայտնեց մեզ միանալու:

Մեկնեցինք ղէպի Վիլժիւիֆ:

Ամբողջ ճամբի ընթացքին լուռ էինք: Կարծես թէ գնում էինք յուղարկաւորութեան: Լռութիւնը խզեց Շահմուրատեանը եւ դառնալով ղէպի Օհան Կարոն ասաց.

- Ծօ՛, վոբշիկ, - Օհան Կարօն պատմական Ռշտունեաց գաւառացին էր, Վանեցիները նրանց վոբշիկ են անուանում - բայց իսկապէս ձեր «Մոկաց Միրզէն» հրաշալի մի դիւցազներգութիւն է:

- Ճշմարիտ է, բայց այդ դիւցազները - դուքսին անմահացրիք Կոմիտասը եւ դուք, - պատասխանեց Օհանը:

- Աստմ են Վանի Իշխանը լաւ էր երգում «Մոկաց Միրզէ»ն եւ «Վուշ Ալէքսան»ը, - ասաց Շահմուրատեանը:

- Ես չեմ լսել, բայց լսողներ կան, որոնք չատ են գովում, - պատասխանեց Օհան Կարօն:

- Գիտէ՞ք ինչ ... ինձանից յետոյ այդ երգը երգող չի լինի ....

Կրկին սկսեց լռութիւն:

Հասանք. արտօնութիւն առացանք եւ ներս մտանք: Հակիչը, Կոմիտասի դուռը բանալով ասաց.

- Փաղրէ՛, Զեզ այցելողներ կան ...

- Ո՞վքեր են ... լսուեց ներսից մի թոյլ ձայն:

- Ես եմ Վարդապետ, - ասաց Շահմուրատեանը, - եւ մի քանի բարեկամներ:

- Մտէ՛ք:

Հայոց երգի «Մաշտոց»ը նիհար ծնկները ղրկած՝ նստել էր մահճակալում:

- Արմենա՛կ, այդ ինչպէ՞ս եղաւ, որ յիշեցիր ինձ: Լա՞ւ ես: Կնոջդ չե՞ս նեղացընում: Սրանք ո՞վքեր են: Ես սրանց կարծեմ մի տեղ տեսել եմ ... լաւ չեմ յիշում ... բայց Հայի դէմքեր են ... մինակ քեզ նման մեծ քիթ չունեն:

Այնքան լուրջ էր խօսում եւ կատակում Մեծ Վարդապետը, որ մենք մի րոպէ տարակուսած մնացինք, թէ ինչո՛ւ են սրան բերել այստեղ:

- Զէ՛, Վարդապետ, դու սրանց չես տեսել: Շատ փափաքեցին քեզ այցելել, չկարողացայ մերժել նրանց խնդիրքը: Այս պարոնը կոչւում է Օհան Կարօ ... Ռըշտունեաց երկրից է ... վոբշիկ է ... Գրող է ...

- Գրո՞ղ է ... ի՞նչ ես գրում ...

- Աւելի չատ գրասէր եմ, Վարդապետ. գրողի կոչումը մեծ է, արժանի չեմ այդ կոչման:

- Համեստ մարդ ես երեւում:

- Շահմուրատեանը դառնալով ինձ, ասաց.

- Սա էլ երիտասարդ դերասան է, ուսանել է Վիէննայում: Ուզում է գնալ Մինջագեաք:

- Միջագե՞ոք ... ինչո՞ւ ոչ Հայաստան ... Հայութիւն կա՞յ Հայաստանում:

- Անշուշտ: Ծագկում է մեր երկիրը, - ասաց Ալէմշահը:

- Ես ուզում էի գնալ, ասաց Կոմիտասը, բայց անցագիր չտուին:

- Ո՞վքեր, Վարդապետ, - ասաց Օհանը:

- Թուրքերը, - պատասխանեց Կոմիտասը:

- Թուրքերը ի՞նչ կապ ունեն Հայաստանի հետ...

- Կոտորածներ են սարքելու, - պատասխանեց Կոմիտասը: Հա՛, մոռացայ, այս Ջահել Թօմփուլ տղան ո՞վ է:

- Երաժիշտ է ... Գուրգէն Ալէմշահ ... Ա.արտել է ... Իտալիա ...Հնարաւոր է, - ասաց Շահմուրատեանը:

- Երաժի՞շտ է: Խատիսեանին տեսա՞ք:

- Ո՞ւր պիտի տեսնէինք Խատիսեանին:

- Կողքիս սենեակում է: Քանի անգամ ցանկացել է ինձ տեսնել: Ի՞նչ գործ ունի ինձ հետ: Անցագիր չեմ ուզում: Ոչ մի տեղ չեմ ուզում գնալ:

Վարդապետի մտքերը սկսում էին խառնուիլ: Ցանկարծ կատաղի կերպով վեր կացաւ եւ մօտենալով Ալէմշահին, գոռաց.

- Երգահան ես, հա՞ ... Ո՞ւմ համար ես գրում այդ երգերը ... գնա՛, գնա՛, գնա՛, պատուիր գրածներդ ... մենք այլեւս երգ լսող չունենք ... գնացէք, հերիք է ... ես յոգնած եմ ... ուզում եմ պառկել:

Պառկեց մահճակալին եւ երեսը ծածկեց:

- Ուրեմն գնա՞նք, - ասաց Շահմուրատեանը:

- Գնացէ՛ք ... քարթանքալանե՛ր ... Միջագե՛ոք ... Հնդկաստա՞ն, իսկ ինչո՞ւ ոչ Հայաստան ... Դէ՛, գնացէ՛ք ... գընացէ՛ք ...

Մենք դլխիկոր դուրս ելանք: Ոչ մէկս որամատրութիւն չունէինք խօսելու:

- Այսպէս լաւ երբեք չէր եղել ... սկզբում ես էլ շատ զարմացայ ... բայց յետոյ:

Ես այլեւս չտեսայ Մեծ Վարդապետին:

Սիրտս նման էր էն փլած տներին ... խախտեր էր սիւներ ... տօ՛, լաճ տնաւեր ...

1967-ին, երբ բախտ ունեցայ Հայաստան գնալու, Երեւանում տեսայ նրա պեղեզմանը եւ իր կիսանդրին ... նրա քարէ ականջին կամացուկ շշնջացի.

- Հիմա գոնեւում եմ Հայաստանում ... Եւ բերել եմ այս ծաղիկները...

Շահմուրատեանին այլեւս չհանդիպեցի: Նա էլ գրեթէ նոյն տխուր վախճանն ունեցաւ:

Հազար ափսո՛ս Մոկաց Միրզէն...:

ՄԱՆՈՒԷԼ ՄԱՐՈՒԹԵԱՆ

ՍՈՖԻԱ

Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԻՆ 60ԱՄԵԱԿԸ

ԽՄԲ. - Սոֆիայի «Երեւան» շաբաթաթերթի Յունուար 18-ի թիւէն քաղելով կուտանք հիմնական մասերը այն գրութեան, ուր կը ներկայացուի տեղւոյն «Գ. Սունդուկեան» թատերախումբի գործունէութիւնը, խումբին 60ամեակին առթիւ:

×

Հալածուած օսմանեան եաթաղանէն, Հայը ուր որ ալ ապաստան գտած է, փութացած է հիմնել իր մշակոյթի օճախները: Եւ առաջին կարգին՝ թատրոնը: Այդպէս ալ Պուլկարիա հաստատուած երիտասարդներ 1925-ին Սոֆիայի «Ճառաչ» ընթերցարանի կողքին ստեղծեցին իրենց թատերախումբը: Սիրողներու խումբ մը՝ որ տակաւին ժամանակի այլազան դժուարութիւններուն, զարգացաւ ու ծաղկունք ապրեցաւ եւ ահա այսօր՝ պարծանքը դարձած «Երեւան» կազմակերպութեան Սոֆիայի մասնաճիւղին, կը բոլորէ իր վաթսունամեակը, արժանաւորապէս կրելով թատերագիր Գաբրիէլ Սունդուկեանի անմահ անունը:

Թատերախումբի բեմէն հանդիսատեսը յուզեցաւ Շերվանդզադէի, Սունդուկեանի, Պարոնեանի, Զարեանի, Եավորովի, Սիթրաչիմիրովի, Վասիլիեւի, Օստրովսկիի, Կորնէյչուկի հերոսներով, ներշնչուեցաւ անոնց զազափարներով: Սիրող դերասաններու տաղանդաւոր համատատուիճն մը՝ Յարութիւն Ուրբաթեան, Արուսեակ Պալեան, Կարապետ Քուրպանճեան, Գէորգ Ասլանեան, Գայեանէ Տէր-Թէպէեան, Հայկ Սարգիսեան, ապա Սուրէն Յաչճեան, Սահակ Չինուլիեան, Յակոբ Չերչիեան, Բարսեղ Դաւիթեան, Մէկ Նուրիկեան...

Ներկայիս Մխիթար Պօղոսեան: Սակայն արդի թատերական արուեստի կատարելագործման մտահոգութեամբ՝ ղէմքեր ունենալու անուանի դերասաններ Հրաչեայ Ներսիսեանը, Վահրամ Փափազեանը, Դաւիթ Մալեանը:

«Սունդուկեան» թատերախումբը իր մտաղրութիւններով կ'այցելէ նաեւ Պուլկարիոյ հայաշատ քաղաքները ու կ'արժանանայ հանդիսականի հիացումին: Անմոռանալի կը մնան նաեւ իր ներկայացումները Հայաստանի մէջ:

Թատերախումբը չատ բան կը պարտական անցեալի սիրող դերասան - դերասանուհիներուն՝ Օննիկ Քեչեանի, Պետիկ Զաւէնի, Յաչիկ Պալեանի, որոնց ժառանգորդն է

ԻՄ ԱՆԿԻՒՆԷՍ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Ամերիկան հարուստ երկիր է, ունի հարստութիւններ: Միլիոնաւոր աղքատները չեն հաշուիր, որովհետեւ Նախագահ Ռէյկընի ցանկէն դուրս են: Անոնք կը պզտորեն Ամերիկայի դեղեցիկ պատկերը:

×

Ամերիկան աստուածապաշտ երկիր է. կը պաշտէ տոլար, դերասան և Աստուած, առաջնահերթութեան այս կարգով:

×

Ամերիկայի դերասանները աստղեր չեն, այլ՝ կուռքեր: Աստղերը կը ղիտուին, կուռքերը կը պաշտուին: Ամերիկացին կը պաշտէ իր դերասան - դերասանուհիները:

×

Կ'ըսեն որ Նախագահ Ռէյկընի միջակ իմացականութեամբ մարդ մըն է որ չափազանց ժողովրդական է: Ամերիկացիին համար չատ ալ կարեւոր չեն Ռէյկընի իմացական կարողութիւնները: Ան աւելի կը դնահատէ իր նախագահին դերասանական ընդհները, ժողովրդական եւ պարզ լեզուն, հովահարի նման բացուող թեւերը, թափանցիկ լաւատեսութիւնը, բարդ խնդիրները պարզ հարցերու վերածելու իր պարզամտութիւնը, ու ամէնէն աւելի՝ միշտ պատրաստ եւ զրաւիչ ժպիտը: Աւելցուցէք դերասանուհի կինը իր անպակաս չունչով, եւ կ'ունենաք մեծ պետութեան մը յարմար՝ խէալ նախագահը:

×

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Ամերիկահայ մշակութային միութիւն մը որ նուիրուած է հայ մշակոյթի սատարման ազգային գործին, իր հայախօս անդամները ժողովի կը հրաւիրէ նամակով՝ գրուած...միայն անգլերէն լեզուով:

×

Ամերիկա նոր հաստատուած Պէյրութահայը ամերիկածին երիտասարդին հետ.

- Ջարլի, ո՛ւր կ'երթաս:
- Ժողով:
- Ժողովներէն չձանձրացա՞ր:
- Ժողով կը սիրեմ:
- Հայերէն խօսի՛լ անգամ չես գիտեր, ի՞նչ տեսակ Հայ ես: Ամէն մեղքիս վրայ ժողովի ալ կ'երթայ:

Մէյ պի հայերէն չեմ կրնար խօսիմ, պըք ես հայ դատ կը հաւատամ:

×

Ամերիկահայը կապուած է հայ եկեղեցին: Ապա, Խաեան Սանուց Միութեան հաւաքավայրին մէջ տրուած է ճաշ մը: Սեղանը վարած է Խաեանի ուսուցչուհիներէն Տիկին Պերճուհի Պէրպէրեան: Խօսք առած են Սանուց Միութեան ատենապետ՝ Լեւոն Աբգարեան, Թաղական Խորհուրդի ատենապետ տոքթ. Արամ Ֆընտըք եւ տոքթ. Վարդ Շիկահեր, որ չեչաը դրած է Խաեանի դերին վրայ: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը:

×

ՄՈՆՐԷԱԼԻ Հայ կեդրոնը այցելած է (Յունուար 12-ին) Քէպէքի վարչապետը՝ Ռոպէր Պուրասա, ընկերակցութեամբ Առողջապահութեան եւ Ընկերային գործոց նախարարուհիի, Ազատական կուսակցութեան Սէն Լօրանի նախագահ Ռուսոլֆ Պրունոյի եւ այլ դեկավար դէմքեր: «Ահարոնեան» սրահին մէջ հաւաքուած բազմութեան առջեւ խօսք առնելով վարչապետը անդրադարձած է իր ընտրական ծրագրին (Յունուար 20-ի մասնակի ընտրութեանց չրջադիծին մէջ):

×

ՀԵԼԻՈՊՈԼՍՈՑ Նուպարեան ազգային վարժարանի «Պըքճեանեան» սրահին մէջ, Դեկտեմբեր 21-ին, տեղի ունեցած է Գահիրէի Հայ Աղքատախնամի տարեկան ճաշը, Միութեան հօթանասունամեակի առթիւ: Ներկայ եղած են Թեմին առաջնորդը՝ Զաւէն Արք. Զինչինեան, Շերակի թեմի առաջնորդ՝ Նարեկ Եպիսկ. Շահքարեան եւ Ազգային Իշխանութեանց անդամներ: Հանդիսութիւնը վարած է Յակոբ Բամպուքճեան: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը: Խօսք առած նուէներ ղրուատած են Միութեան աշխատանքները:

×

ՀԵԼԻՈՊՈԼՍՈՑ «Ցուսաբեր» ակումբի «Գարագաշեան» սրահին մէջ, Դեկտեմբեր 22-ին, տեղի ունեցած է ձեռագործ - ներու պազար մը, որու ընթացքին ցուցադրուած արուեստի գործերը ուշադրութիւն գրաւած են:

×

ՆԻՒ ՃԸՐՋԻ Ս. Վարդանանց Եկեղեցւոյ սրահին մէջ, Դեկտեմբեր 6-ին, տեղի ունեցած է դասախօսութիւն մը՝ հայ մամուլի մասին, կազմակերպութեամբ Համազգայինի: Բացումը կատարելով Գրական Յանձնախումբին ատենապետը ներկայացուցած է օրուան դասախօսը՝ Քանատայի «Հորիզոն» չարաթաթերթի խմբագիր Վրէժ - Արմէն Արթինեան: Ծնած 1940-ին՝ Գահիրէ, յաճախած է Գալուստեան վարժարան: Գահիրէի համալսարանէն իրրեւ ճարտարապետ վկայուելէ ետք անցած է Մոնրէալ եւ Մըքգիլլ համալսարանէն ստացած Մագիստրոսի տիտղոսը: Դասախօսը ներկայացուցած է հայ մամուլի պատմութիւնը սկսելով ԺԹ. դարէն հասնելու համար մինչեւ մեր օրերը. տուած է վիճակագրական տեղեկութիւններ եւ նշած հայ մամուլի արդի դժուարութիւնները՝ տնտեսական, անձնակազմի, աշխատակցի, սպառումի, դիւաններու, նիւթական:

×

ԱՐԺԱՆԹինի Երաժշտական Խորհուրդը, իր ընդհանուր ժողովի ընթացքին, ընտրած է իր վարչական խորհուրդի անդամները՝ 1985 - 1989 շրջանին համար: Երդհան - երաժիշտ Ալիսիա Թերզեան, իբրեւ ներկայացուցիչ միջազգային արդի երաժշտութեան հանդիպումներու Հիմնարկութեան, միաձայնութեամբ նախագահ ընտրուած է:

×

ԵՇԻԼԳԻԻՂի Ս. Սարգիսեան եկեղեցւոյ հիմնարկութեան 160-ամեակի մատաղօրհնութիւնը տեղի ունեցած է Յունուար 19-ին: Պատարագած է Յովհան Մչկրտչեան: Քարոզած է Շնորհք Պատրիարք: Յաւարտ արարողութեանց եկեղեցւոյ կից վարժարանի սրահին մէջ տրուած է ճաշ մը: Սեղանը վարած է Պարոն Նալպանտ: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը: Եղած են ի նպաստ վարժարանին նուէրներ, որոնց բացումը կատարած է Շնորհք Պատրիարք: Վարժարանը, որ հիմնուած է 30 տարի առաջ, ներկայիս 210 աշակերտ ունի: Իր հուսկ բանքին մէջ Շնորհք Պատրիարք չեչտած է, թէ «Եչիլգիւղը, ուրիչ թաղերու հետ հակապատկեր կազմելով, հետզհետէ կը բարգաւաճի թիւով: Երեսուն տարի առաջուան դիւրին ժամանակներուն լաւ գործ մը կատարուած էր վարժարանին հիմնադիրը եւ այժմ այս Սիրոյ Սեղանով վերջը կը դնենք անցեալ չրջաններու կատարուած մատաղօրհնութիւններու չարքին: Այսուհետեւ Սիրոյ Սեղաններու նուիրատուութիւնները հակակչռի տակ պիտի առնուին եւ միայն վարժարան ունեցող թաղեր պիտի արտօնուին նուիրահաւաքում ընելու: Արդէն վեց ամսուան արձակուրդի չրջան մը կը սկսի եւ յառաջիկայ Սիրոյ Սեղանը հաւանաբար պիտի չարքուի Աստուածածնի տօնէն առաջ, ու բոլոր եկեղեցիները իրենց տօնախմբութիւնը պարտին կատարել ճիշդ օրին»:

×

ԼՈՆՏՈՆի Քէնզինկթըն զրադարանին մէջ, Յունուար 11-ին, տեղի ունեցած է յուշի երեկոյթ մը, նուիրուած Յովսէփ Յովսէփեանի, կազմակերպուած Հ. Բ. Ը. Մ.ի Մշակութային Յանձնախումբին կողմէ: Բացումը կատարած է Կարպիս Եսայեան: Զաւէն Տէր - Դաւիթեան՝ մանկութեան ընկերը Յովսէփ Յովսէփեանի, խօսք առնելով չեչտած է անոր պարկեշտութիւնը, նուիրումը և յարգանքը՝ անհատին, ընտանիքին, ազգին, եկեղեցիին եւ հայրենիքին: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը: Երեկոյթը վերջ գտած է Առաջնորդին խօսքերով:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՉՕՆ ԱՌ ՄԱՍԻՍ

ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Օտարազգիների համար նոյնպէս Հայաստան աչխարհից չիք յայտնի անուն, քան լեռն Մասիս: Այդ է ահա, որ չատ հին դարերից դէպի լեռն էին ձգտում հայ, թէ օտարազգի ճանապարհորդները, պետականները, պատմիչները, քարոզիչները, վաճառականները ու լեռնագնացները: Օտար ուղեւորներից ոմանք վկայում են. լեռն այնքան ուժեղ է ազդում, որ թողչզմանան, եթէ հանդիպեն Հայերի որոնք խաչակնքում կամ ծնկաչոք համբուրում են հողը՝ Արարատին դէմ - յանդիման:

Այլազգիները խօսում են անցեալի մասին, բայց չէ՞ որ մենք տեսել ենք տեսական աչքերով: Ներգաղթող Հայերը, կամ Սփիւռքից եկող հիւրերը, երբ դէպի նոցա կանգ է առնում Մասիս կայարանումին, եւ երբ ոտքերն առնում է հայրենի հողին ու բացւում է ակնապարար տեսարանը, նրանք ծնկաչոք համբուրում են հողը: Տարիներով իրրեւ հայրենիքի խտացուած պատկեր, տենչացել են, ահա հասել է բաղձալի պահը: Նրանք չեն կարողանում աչքները դադաթից կտրել, քանի որ երեւացող բոլոր գծերն ու գոյները ձգտում են դէպ այնտեղ:

Եւ պատահական չէ, որ լոյս տեսաւ «Արարատ» ալպոմը (1984): Սքանչելի լուսանկարների հաւաքածու՝ լերանը ձօնուած բանաստեղծութիւնների ընտրանիով, իրրեւ մեզմացուցիչ սպեղանի կարօտեալների աչաց եւ իրրեւ ճաշակ՝ ձեւի, գոյնի, պահի ու ապրումի բոլոր նրբանց, ովքեր փափաքում են:

×

18 Մայիսի, 1980 Թ.

Երեւան - Սարտարապատ եւ Սարտարապատ - Երեւան ճանապարհին մշտապէս Մեծ լեռը մեզ հետ է: Շարունակ մտածում եմ Մեծն Աբովեանի մասին: Նա բարձրացել է Արարատի գագաթը: Եւ այն էլ երկու անգամ: Լերան բարձրութիւնը, մաքրութիւնը, հզօրութիւնը, զեղակերպութիւնը, ի՛նչ հիացմունք են պատճառել նրան եւ ի՛նչ լիցք հաղորդել: Եւ մանաւանդ վիտակցութիւնը, որ իր հայրենի հողի ծնունդ է բնութեան այդ հրաչքը: Որտե՞ղ է կանգնած եղել Աբովեանը: Արդեօք այն մասում, որ հիմա փայլում է իրրեւ անդրադարձնող հսկայ հայելի: Նախանձում եմ լեռնագնացներին: Այն պահին, երբ նրանք յաղթահարում են բարձրութիւնը, եւ ամէն մանրից ու հասարակից վեր են զտնում, նրանց հոգիները միայն հպարտութեամբ ու զեղեցկութեամբ կարող են լցուել: Այս բանը ես չէի հասկանայ, եթէ բարձրացած չլինէի Գեղամայ լեռները, Արագած լեռը՝ մինչեւ տիեզերագիտական կայանը, եթէ հասած չլինէի սէմանեթական լեռնաչխարհի Մեսրոպ չրջկենտրոնը:

Արարատը՝ Սարտարապատից: Մեր դիմաց է միայն Մեծ Մասիսը: Այստեղից Փոքրը չի երեւում. ամաչկոտ երեխայի նման թաքնուել է քրոջ թիկունքում: Տեսնե՛լ միայն Մեծ Արարատը, առանց նրա մշտակայ քրոջ: Մեր աչքի համար անսովոր, բայց դարձեալ ինչ փառահեղ պատկեր:

Եւ համանուն դաչտը՝ ընդարձակ, խոնամքով մշակուած: Կարծես արարիչը դիմամբ է այդ երկու տարրեր երկրաչափական կերպերը դրել իրար կողքի, իրաքանչիւրի զեղեցկութիւնը մեզ համար առաւել տեսանելի դարձնելու նպատակով:

Այսօր Արարատը թաղուհու է նման: Ոսկեհուռ թաղը չաղարճակում է, մինչդեռ փչերը փռուել են ու խառնուել Արարատեան դաչտի կանաչին: Բնութիւնը կարծես իր յաղթանակն է տօնում:

Վերադարձի ճանապարհը մի մեծ ադեղ է լերան չուրջը: Աստիճանաբար երեւաց Մասեաց Վէհը, ապա Աւազ լեռան թիկունքից դլուխն հանեց Կրտսերը:

Եւ կամաց - կամաց ամբողջացաւ համայնապատկերը, որ հարազատ է իրաքանչիւր Հայի: Եւ որն ապչեցրել է իրաքանչիւր օտարի:

×

22 Մայիսի, 1980 Թ.

Աչխատանքից վերադառնալիս, անցայ իմ զիտակէտով: Ուզում էի ծանօթ մէկին բռնել ու ցոյց տալ Փոքր Մասիսը: Գագաթն է միայն սպիտակ, որից չուրջբոլորը կախուել էին երկար ծոպերը՝ չհալուած ձեան չերտերը: Ու այդպէս սպիտակ ծոպերով մինչեւ գօտին զարդարուած հսկայուկը, հիացմունքի արժանի մի կերտուածք է, չեզոչի անթերի իր ուրուագծով: Այսօր Աւազ լեռը մըթամած է, ահա ինչու է Փոքրը ուչադրութեան կենտրոնում: Այլապէս Մեծի ձգողական ուժը կը թողնի՞ աչք կտրել ու ձախ նայիլ: Ցերեկուայ կապոյտ երկընքում լողում է սպիտակ կիսալուսինը: Ո՞ւր կորաւ առաւօտուայ ամպամածութիւնը:

«Եթէ Աւազը վսեմադոյնն է լեռների մէջ, Փոքրը՝ զեղեցկադոյնն է»: Սա լերանն այցի եկած օտարականներից մէկի կարծիքն է: Երբեմն իրօք, Փոքրը արքայադստեր ձեւ ու կերպարանք է առնում, սլացիկ, սպիտակ ու մաքուր: Օրերից մի օր տեսայ, թէ ինչպէս կուրացուցիչ արեւից պաչտպանուելու համար Սիսը մի հսկայ ամպհովանի էր պահել զլխին եւ առուերը չրջագծով եղերել էր ձիւնեղէն ծոպերը:

(Շար. 10)

Տոքթ. Գուրգէն Մեծատուրեան եւ զաւակները՝ Լօրան եւ Միշէլ,
Տէր եւ Տիկին Տըժան,
Տէր եւ Տիկին Լափթէֆ,
Օր. Շուշան Մեծատուրեան,
Օր. Մաննիկ Մեծատուրեան,
Գամէր եւ Գարեգին Մեծատուրեան
(Նիւ - Եորք, - Սոֆիա),
Բարթող Մեծատուրեան եւ զաւակը
(Պուքրէշ),
խոր կսկիծով կը ծանուցանեն իրենց կնոջ, մօր, քրոջ, հարսին եւ ազգականին՝

ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐԻՆԷ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆԻ
(Ծնեալ՝ Բարաջանեան)

մահը, որ պատահեցաւ Յունուար 27-ին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի, Երկուշաբթի, Փետրուար 3, ժամը 13·45-ին, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցին, 15 rue Ժան - Կուժոն, ուրկէ մարմինը կը փոխադրուի Պանէես - Փարիզիէնի գերեզմանատունը ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

A l'initiative de FRANCE-ARMENIE
le Vendredi 31 Janvier à 18 heures 30

GERARD CHALIAND
présentera
le livre de James T. HASHIAN
«LE SEL DE LA VENGEANCE»
Ed. Stock
«Voici venu le temps de romans d'aventure sur les évènements tragiques de 1915». FRANCE-ARMENIE
Présentation et signature du livre :
à l'ESPACE ARMENIEN
40, rue d'Arménie - 69003 LYON
à partir de 18 heures 30

×

à 20 heures 30
Une SOIREE DE RENCONTRE avec...
GERARD CHALIAND
autour du roman de James T. HASHIAN
«LE SEL DE LA VENGEANCE»
— *Lecture publique* d'extraits du livre par Vahé ZEKIAN.
— *Signature* par Gérard CHALIAND.

Vahé ZEKIAN
metteur en scène
(Compagnie du Dauphiné - Théâtre de l'Ouest Lyonnais (T.O.L.) - Théâtre Arménien de la Maison de la Culture Arménienne de Décines).
Salle H. SAMUEL
Maison de la Culture Arménienne
15, rue du 24 Avril 1915 - DECINES
à partir de 20 heures 30

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԸ

ԵՒ

Էլիզ Գասուֆճեան - Այվազեան

Գրական Մրցանակ, Կիրակի, Փետրուար 9, ժամը՝ 13-ին:

«ՍԵՒԱՆ»

ճաշարանին մէջ:

1, boulevard Carnot
17, quai Jean-Baptiste Clément
94140 Alfortville
Métro : Ecole Vétérinaire (Maisons-Alfort) prendre le bus no. 103 et descendre Place Carnot)

Կը նախագահէ՝

Ս. Ք. ՋԱՆԳՈՒ

1985-ի գրական Ա. մրցանակի (1500 - ական ֆրանք) արժանացողներն են՝

Արձակագիր՝ Յակոբ ԿԱՐԱՊԵՆՑ (Նիւ-Եորքէն), իսկ Բանաստեղծ՝ Զարեհ ԽՐԱԽՈՒՆԻ (Պոլիսէն):

Լեւոն ՍՈՓՈԿԼԵԱՆ կ'արտայայտուի՝ 3 · Կարապենցի «ԱԴԱՄԻ ԳԻՐՔԸ» վէպին, իսկ Հիլտա ԴԱԼՖԱԼԵԱՆ - ՓԱՆՈՍԵԱՆ՝ «ԴԻՒՑԱԶՆԱՀԱՆԴԷՍ» բանաստեղծութիւններու հատորին մասին:

Հանդէսը կը վարէ՝ Տիգրան ՊԱԼԵԱՆ:

Գեղարուեստական բաժին՝

Մանօթ երգիչ՝ ՊԵՏԻԿ եւ իր նուագախումբը: Նաեւ զանազան անակնկալներ...

Տեղերը սահմանափակ ըլլալով, կը խնդրուի կանխաւ արձանագրուիլ, մինչեւ Փետրուար 4, երեքշաբթի երեկոյ:

Հեռաձայնելով. -
46 - 63 - 74 - 91 ժամը՝ 9 - 14 :
47 - 80 - 82 - 58 ժամը՝ 15 - 22 :
թիւերուն:

Այլապէս՝ տեղերու համար ո՛չ մէկ պատասխանատուութիւն:

Ճաշագին՝ 150 Ֆ.:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տիկին Մարկրիթ Ինճէեան իր ամուսնոյն՝ Թաթուլ Ինճէեանի, իր ծնողաց եւ եղբօր՝ Բարգէն Թէրզեանի անմոռանալի յիշատակին՝ կը նուիրէ 200-ական ֆրանք Կարմիր Խաչին, Ախթամարեան, «Յառաջ»ին եւ 1000 Ֆ. Մխիթարեան Վարժարաններու Միջազգային Կոմիտէին (ատենալ «Յառաջ»էն):

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆ

ՓԱՐԻԶ

Հինգշաբթի օր, Փետրուար 6, տօն է Սրբոց Վարդանանց Զօրավարացն Մերոց, Հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին - 451 թուականին: -

Այսօր անուան տօնն է նաեւ՝

ՎԱՉԳԷՆ Ա.
ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Այս առթիւ, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ ժամը 10-ին հանդիսաւոր պատարագ կը մատուցուի եւ կ'ողեկոչուի Վարդանանց Յիշատակը:

Կը պատարագէ՝

ՆԵՐՍԵՀ Ծ. ՎՐԴ. ԲԱՊՈՒՃԵԱՆ

Մեր ժողովուրդին ուշադրութեան կը յանձնուի, որ. - «Պետական տնօրինութեամբ, բոլոր Հայերը - պզտրոցական, աշակերտ, պաշտօնեայ, աշխատաւոր կամ ուրիշներ - կրնան այսօր բացակայիլ իրենց զբաղումներէն՝ իրենց կրօնական պարտաւորութիւններուն համար»:

×

ԼԻՈՆ

Հինգշաբթի, Փետրուար 6, Տօն Սրբոց Վարդանանց Զօրավարացն Մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն:

Այս առթիւ ժամը 10-ին պատարագ կը մատուցուի Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ:

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Երեքշաբթի օր Փետրուար 4, տօն է Սրբոց Ղեւոնդեանց քահանայից:

Այս առթիւ Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ ժամը 10·30-ին պատարագ կը մատուցուի:

×

Ս. ՅԱԿՈԲ — ԼԻՈՆ

Երեքշաբթի, Փետրուար 4, - տօն Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից: Այս առթիւ առաւօտեան ժամը 9·30-ին Լիոնի եւ Ռօն - Ալփի քահանաներու մասնակցութեամբ կը կատարուի ժամերգութիւն Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ:

Յաւարտ ժամերգութեան հոգեհանդիստ կը կատարուի Լիոնի եւ Շրջանին Եկեղեցիներուն մէջ ծառայած՝ վախճանեալ հոգեւորականներուն համար:

Հ. Բ. Ը. Մ.

Ողեկոչում
Վարդանանց
Հերոսամարտի

Կիրակի, Փետրուար 2, ժամը 16-ին Ալեք Մանուկեան Մշակ. կեդրոնին մէջ:

118, rue de Courcelles, 75017 PARIS

Օրուան խորհուրդը կը պարզէ՝
ԱՍՈՂԻԿ ԱՒԵՂԱՑ ԱՐԻՍՏԱԿԷՍԵԱՆ
Գեղարուեստական բաժին

Մուտքը ազատ է:

Irma fourrures

SUR MESURE
— REPARATIONS —
TRANSFORMATIONS

ժամ առաջ դիմեցէք մեր մուշտակէ վերարկուն վաստհելով՝

ՀԱՅԿ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ

ՁԱՓԻ ՎՐԱՑ - ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ
ԵՒ ՎԵՐԱՓՈԽՈՒՄ

ԲԱՑ Է ԱՄԷՆ ՕՐ
ԲԱՑԻ ԿԻՐԱԿԻԷ

44, avenue du Général de Gaulle
94700 Maisons-Alfort
tél. : 43 - 68 - 55 - 99

Métro: École Vétérinaire-Alfort (direction CRÉTEIL)

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ՎԱՒԱՇԱՆՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԼԻՑ ՀՈԳԵԼՈՑՍ

Տ. ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔԵՊԻՍԿ. ՄԱՆՈՒԿԿԱՆԻ

Կիրակի օր, Փետրուար 2, Գ. կիրակի Զկնի Ծննդեան:

Ղեւոնդեանց Քահանայից յառաջիկայ օրերուն առթիւ, այսօր, Փարիզի Ս. Յովհաննէս - Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի:

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ԳԻՒՏ ԵՊԻՍԿ. ՆԱԳԱՇԵԱՆ
(Առաջնորդ Հայոց, Փարիզի)

Պատարագի ընթացքին հոգեհանգիստ կը կատարուի՝ Փարիզի եւ Շրջանի եկեղեցիներուն մէջ ծառայած վախճանեալ հոգեւորականներուն համար:

Պատարագէն ետք՝ ժամը 13-ին, Փէր. Լաշէզի գերեզմանատան Եւրոպայի Հայոց առաջնորդներու դամբանին առջեւ, մատուռը աղօթք՝

Վրամշապուհ Արք. Քիպարեանի, Արտաւազդ Արք. Սիւրմէեանի եւ Սերովբէ Արք. Մանուկեանի հոգիներուն համար:

4.000 m² de mobiliers présentés en ambiance

Meubles Ghazarian
Z.I. Vitrolles
à 20km de Marseille
tél. 42. 89.27.47



"Բացառիկ գեղչ «Յառաջ»ի բաժանորդներուն"

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապ. Խաչի Փարիզի մասնաճիւղը ընդհակալութեամբ ստացած է 100 Ֆ. Տէր եւ Տիկին Գրիգոր Եսիգարաչեանէ տոքթ. Արթինեանի մահուան առթիւ:

×

Կապ. Խաչի Սէն - Ժերմի մասնաճիւղը ընդհակալութեամբ ստացած է 100 Ֆ. Պ. Պաղտասար Տիրատուրեանէ իր քրոջ՝ Ազնիւ Ուլուսեանի մահուան Ա. տարելիցին առթիւ:

×

Դպրոցասէր Երկսեռ Վարժարանի խնամակալութիւնը ընդհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները. - Տիկին Խանտանեանէ, ամուսնոյն՝ Ազատ Խանտանեանի յիշատակին 500 Ֆ., Տիկին Ս. Մէսճեանէ, Ամանորի առթիւ 250 Ֆ., Տիկին Տ. Կիւլպէնկեանէ, ծնողներու յիշատակին 300 Ֆ., Տէր եւ Տիկին Ն. Նիկոդոսեանէ, տոքթ. Արթինեանի մահուան առթիւ 250 Ֆ., Խոտուր եւ Արման Նշանեան եղբայրներէ՝ իրենց մօր՝ Լիւսի Նշանեանի մահուան առթիւ 5000 Ֆ., Տէր եւ Տիկին Խաչամեանէ, Ամանորի առթիւ 1000 Ֆ., Պ. Վահէ Զիլինկիրեանէ 3000 ֆրանք, Փարիզահայ Տիկնանց Միութենէ որպէս յատկացում կրթաթոշակի 10·000 ֆրանք, Երուանդ Կարապետեանի յիշատակին՝ բարեկամները 500 Ֆրանք, Պ. Ճնկըլըլեան (Պոռն) 5000 Ֆ., Պ. Մ. Ոսկերիչեան 500 Ֆ., Պ. Զ. Տէկիրմէնճի 500 Ֆ., Մկրտչեան ընտանիք (Մարսէյլ) Հեֆիմեանի հոգեհանգիստին առթիւ 500 ֆրանք, Տէր եւ Տիկին Վ. Արպոեան (Մարսէյլ) Արպոեանի մահուան առթիւ՝ 250 Ֆ.:

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire : No 55935

ՄԱՐՍԷՑԼԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տիկին Կուտեան Մարիամ (Երեւանէն) 50, Օրդ. Համբարձումեան 100, Մի Անո 100, Օր. Կարապետեան (Լա Սէյն Սիւր Մէր) 1000 Ֆ. ե. պ.:

Սրբոց Թարգմանչաց Մայր Եկեղեցւոյ Մատուցօրհնութեան առթիւ. - Աստուր Սիսլեան 100, Նշան Թոփմասեան 100 Ֆ., Այրի Տիկին Բալամուտեան 500 Ֆ., Այրի Տիկին Թուզլաճեան 200, Համբարձում Մինասեան 50, Պոզոյեան ընտանիք 200, Վարդէս եւ Գէորգ Մինասեան 200, Տէր եւ Տիկին Պերճ Վարժապետեան 50 Ֆ., Տիկին Զապէլ Դուլյամճեան 100, Տէր եւ Տիկին Շաւարշ Փիրանեան 100, Տէր եւ Տիկին Արշամ Պապայեան 500 ֆրանք, Տիկին Մէհլէմճեան 200 ֆրանք, Տէր եւ Տիկին Գրիգորեան 100, Ենովք Զուլֆեան 50, Տիկին Մարիամ Պոյոյեան 50, Վասպուրականի Հայրենակցական Միութիւնը 200, Տիկին Էլիզ Զրբաչեան 500, Դաւիթ Պանտիկեան 300, Պոլսահայ Հայրենակցական Միութիւնը 500 Ֆ., Պօսնոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ վարչութիւնը 500, Սէն - Ժերմի Ս. Սահակ - Մեսրոպ Եկեղեցւոյ վարչութիւնը 1000, Օր. Համբարձումեան 100, Տէր եւ Տիկին Էրվէ Էքիզեան 300, Վահան Արպոյեան 250 Ֆ., Ժապ Վարժապետեան 200 Ֆ., Տէր եւ Տիկին Զէօրէքճեան 100, Քամփ - Ֆրէգի Ս. Կարապետ Եկեղեցւոյ վարչութիւնը 500, Տէր եւ Տիկին Պերճ Կարապետեան 200, Տէր եւ Տիկին Մահտեսեան 100, Տէր եւ Տիկին Յակոբ Թաչճեան 100, Յարութիւն Ալիքսանեան 50, Տէր եւ Տիկին Հրաչ Խաչէն 200 Ֆ., Վարուժան Պոզաճեան մատակարար ոչխար մը, Տէր եւ Տիկին Տելեմաք Զօփուրօղլու 100, Սօսի Զիլճեան 100 Ֆ., Սէն - Ժերմի Կապոյտ Խաչը 300 Ֆ. Եկեղեցւոյ դպրոցին:

(Շար.)